На взгляд автора, полезным подкреплением теоретико-методологической и методической надежности исследовательского инструментария прикладной этнополитологии может послужить приведение в монографическом исследовании так называемого "живого опыта" использования методических инструментов как для обобщений в теории среднего уровня (например, "Этнополитология вооруженного конфликта в Афганистане"), так и в конкретно-ситуационном военно-политическом анализе ("Исламские политические организации и их лидеры как новые субъекты джихада в Афганистане").

Своеобразным синтетическим результатом этнополитологических изысканий в области конфликтно-консенсусных ресурсов, взаимоотношений сторон гражданской войны в Афганистане является примерный сценарий консенсусного эксперимента, подготовленный автором в 1982 году. Приводим данный сценарий в основном тексте работы, так как он, во-первых, является как бы средоточием многих научно-практических усилий, приложенных к разработке миротворческого эксперимента среди воюющих сторон, отягощенных преступлениями друг перед другом, во-вторых, потому, что данный сценарий сам является примером комплексного инструментария этнополитологического исследования и практического этнополитического действия.

[166] "...т. Котанджян Г. С. участвовал в выездных заседаниях штаба зоны ответственности "Центр" в провинциях Бамиан, Парван, Каписа, участвовал в работе центральной комиссии по переговорам в Панджшере... По итогам данных поездок проведен ряд совещаний с афганскими коллегами, спланированы и реализуются конкретные мероприятия. Среди них следует отметить: разработку совместно с советниками других ведомств методики склонения бандформирований к сотрудничеству с народной властью; подключение министерств и ведомств ДРА к осуществлению программ комплексного обустройства бандформирований численностью в 2500 человек в уезде Мирбачакут Кабульской провинции" (фрагмент из "Отчета о работе в ДРА группы советников ЦК КПСС при ЦК НДПА по проблемам духовной сферы". г. Кабул, 14 июня 1983 г.).

4.1. Образец прикладной этнополитической разработки на базе полевого этнополитологического исследования в Хазараджате (Афганистан)

Сценарий консенсусного эксперимента[167]

Раздел I

СБОР АНАЛИТИЧЕСКОГО МАТЕРИАЛА ПО ИНТЕРЕСУЮЩЕМУ ОБЪЕКТУ С ЦЕЛЬЮ РАЗРАБОТКИ КОНТРПРОПАГАНДИСТСКОЙ АРГУМЕНТАЦИИ

1. Какие политические, социальные и другие льготы после декабря 1978 г. получили хазарейцы (анализ законодательных и предложений по других нормативных актов, обобщающий материал по сферам образования, науки и культуры, экономики, вооруженных сил и т. д.), что запланировано на будущее?

2. Аргументация позитивного отношения народного правительства к шиитской общине (представительство шиитов хазарейцев в Высшем совете улемов, Главном управлении по делам ислама, учеба в религиозных учебных заведениях, в т. ч. на богословском факультете Кабульского университета) в стране и за рубежом (хадж; материальная помощь правительства шиитской общине: ремонт, благоустройство и строительство мечетей и святых мест...).

3. Характеристика жизненного уровня хазарейского населения на территориях, контролируемых правительством и мятежниками (для аргументации того, каких льгот и положительных сдвигов в жизненном уровне хазарейцы лишаются в связи с нахождением территорий их проживания под контролем противника).

Примечание к пп. 1, 2, 3: особое внимание уделить вопросам представительства хазарейцев в партийных и государственных органах (премьер-министр Кештманд и др., а также динамика удельного веса представительства в различных сферах жизни общества).

Динамику характеристик по пунктам 1, 2, 3 целесообразно дать (наиболее выигрышные и проигрышные моменты) в разрезе этапов: до революции 1978 г., на ее новом этапе и т. д.

4. Характеристика этносоциального состава бандформирований, командиров подразделений с целью отражения в контрпропагандистских материалах интересов мятежников (в т. ч. возможной апелляции к их этнополитическим интересам...).

[167] См. *Г. С. К. (Г. С. Котанджян).* Схема ориентирования мероприятий по организационному, политическому, агитационно-пропагандистскому и военному обеспечению перехода вооруженных отрядов хазарейского населения на сторону народной власти (на примере предложений по склонению к сотрудничеству бандформирований Сайида Джаграна). Кабул, 1982 г.

5. Характеристика предпринятых в прошлом мер военного, политического, агитпропагандистского характера против бандформирований Сайида Джаграна (русские тексты листовок, вещательных программ, содержания переговоров; акты возмездия в ответ на преступления бандитов; возможные ошибочные действия: в нарушение законности, договоренностей, адатов и т. д.).

6. Анализ противоречий между бандами Сайида Джаграна и другими мятежными организациями, группами (особое внимание целесообразно уделить политическим, религиозным, национальным и межплеменным разногласиям, а также обидам, взаимным претензиям, неразрешенной мести между руководителями контрреволюционных организаций и бандформирований).

Примечание к п. 6: целесообразна систематизация фактов преступлений бандформирований друг перед другом.

Раздел II

НЕКОТОРЫЕ ПРЕДЛОЖЕНИЯ ПО ОРГАНИЗАЦИОННОМУ, ПОЛИТИЧЕСКОМУ, АГИТАЦИОННО-ПРОПАГАНДИСТСКОМУ И ВОЕННОМУ ОБЕСПЕЧЕНИЮ СКЛОНЕНИЯ БАНДФОРМИРОВАНИЙ К СОТРУДНИЧЕСТВУ С НАРОДНОЙ ВЛАСТЬЮ

1. Создание специальной группы из полномочных представителей соответствующих служб советнического аппарата вооруженных сил ДРА, а также 40-й армии для разработки программы взаимодействия по данному вопросу (наметить мероприятия по конкретным территориям со сроками и исполнителями).

Примечание к п. 1: после разработки схемы взаимодействия целесообразно задействовать подготовленных и проверенных специалистов с афганской стороны (по возможности хазарейцев или же уроженцев территорий, находящихся под контролем шиитской общины и их бандформирований).

2. Разработка текста гарантийного письма (аргументация необходимости перехода на сторону народной власти, формулирование условий перехода...).

Следует учесть аргументы, разработанные по пунктам I раздела (пп. 1–6), при этом целесообразно, ссылаясь на "Указ об амнистии", делать упор на совпадении определенных интересов хазарейского населения, шиитской общины с позицией государственной власти, бесперспективности вооруженной борьбы бандформирований.

При формулировании условий перехода на сторону народной власти следует предусмотреть резервные военные, политические, социальные, экономические (в т.ч. финансовые) условия.

Примечание к п. 2: целесообразно формулирование условий перехода на сторону народной власти предварить анализом условий, выдвигаемых противником (на основании информации от доверенных источников-посредников).

3. Комплектация групп, ведущих переговоры и другие контакты, преимущественно из авторитетных хазарейцев – полномочных представителей народной власти, вооруженных сил ДРА и других ведомств. Обратить особое внимание на паритетность (соответствие) рангов и полномочий переговаривающихся сторон, а также встречных гарантий по соблюдению договоренностей; подбор контингента посредников (авторитетность, доверие и т. д.).

Примечание к п. 3: целесообразны инструктаж по содержанию устных комментариев к гарантийному письму и процедуре ведения переговоров, а также "проигрывание" возможных вариантов их хода. С целью обеспечения безопасности хода конкретных переговоров возможна рассылка гарантийных писем также в другие бандформирования (в зонах, соприкасающихся с территорией, контролируемой Сайидом Джаграном).

4. Приведение состава местных партийных и государственных органов (их руководителей) в соответствие с национальным составом территорий, населенных преимущественно хазарейцами. Особое внимание целесообразно обратить на национальный состав оргядер по зоне влияния Сайида Джаграна.

5. Разработка конкретных (показательных) акций в области ислама (шиитской общины):

а) ремонт, реконструкция, строительство, благоустройство наиболее почитаемых шиитских мечетей и святых мест;

б) приведение представительства шиитской общины в высших религиозных органах ДРА, в НОФ*, среди преподавателей и учащихся богословского факультета Кабульского университета в соответствие с удельным весом верующего хазарейского населения;

в) обращение шиитских авторитетов, поддерживающих народную власть, к пастве (возможно также конкретное обращение к Сайиду Джаграну и Бехешти) с призывом прекратить вооруженную борьбу.

6. Проконтролировать реализацию запланированной материальной и медицинской помощи на территориях проживания хазарейского населения (особенно в зоне влияния Сайида Джаграна). При необходимости предусмотреть дополнительную помощь (с пропагандистским обеспечением).

Примечание к п. 6: с учетом того, что возможно использование мятежниками оказываемой помощи для материального поддержания, экипировки воюющих бандформирований, а также с целью оказания эмоционального воздействия

* НОФ – национально-освободительный фронт.

целесообразно помощь оказывать преимущественно в виде медикаментов, одежды и обуви для детей, женщин и стариков.

В исключительных случаях возможна более широкая материальная помощь, включая некоторые виды стрелкового оружия (при специальном решении соответствующих руководящих инстанций).

7. Предусмотреть при необходимости выезд видных хазарейцев (т. Кештманда и др.) в Газни или другой населенный пункт Хазараджата (по схеме визита т. Кармаля в Мазари-Шариф). Целесообразно поездки связывать с общепартийными или государственными мероприятиями (выполнение решений ЦК НДПА и правительства ДРА, посещение народнохозяйственных объектов и т. д.).

8. Мероприятия по демонстрации готовности оказания военной помощи со стороны народной власти. Подобную показательную акцию целесообразно провести в виде услуги Сайиду Джаграну (при наличии просьбы с его стороны) против конкретного соперничающего бандформирования.

Примечание к п. 8: подобная акция способствовала бы укреплению позиций представителей народной власти на переговорах; вместе с тем следует предпринять меры по исключению несогласованных военных действий (армии, Царандоя и ХАД)* против партнера по переговорам.

9. Разработка мероприятий по работе с джиргами хазарейцев (или подобными "советами" родо-племенных авторитетов с использованием имеющегося положительного опыта работы – Гардез и др.). Эту работу целесообразно проводить под эгидой НОФ и Министерства по делам племен и народностей.

10. Подготовка, издание и распространение по соответствующим каналам листовок, плакатов, материалов, фотовыставок, показывающих позитивные шаги народной власти по отношению к хазарейскому населению, шиитской общине (использовать аргументацию, факты по пунктам 1-3 раздела I, а также пунктам 4, 5, 6, 9 раздела II). Особое внимание уделить пропаганде "Указа об амнистии" посредством выпуска красочно и доступно оформленной листовки.

Примечание к п. 10: с учетом низкого образовательного уровня, фанатичности определенной части верующих хазарейцев, а также активного подрывного влияния иранских кругов на хазарейское население посредством радиовещания и использования полиграфически привлекательных листовок, плакатов, целесообразно в содержании печатной продукции умело использовать специфику шиитского толка, отдавая предпочтение рисункам и фотоматериалам.

Большого внимания требует решение проблемы материально-финансового обес-

* "Царандой" – Внутренние войска, "ХАД" – Служба государственной информации (безопасности) ДРА.

печения привлекательности контрпропагандистских изданий, по крайней мере соперничающих по оформлению с продукцией враждебной пропаганды.

11. Разработка программ (с учетом содержания материалов по пункту 10 раздела II) центрального и местного радиовещания.

Предусмотреть выступления видных хазарейцев по телевидению и радио, отправку на места фоно- и видеокассет с магнитофонными записями с целью использования местным радиовещанием и громкоговорящими устройствами, а также для распространения по специальным каналам среди населения и личного состава бандформирований в зоне влияния Сайида Джаграна.

12. Организовать выступления видных представителей НДПА, народной власти, армии, Царандоя, экономики, культуры, науки и образования хазарейского происхождения в органах центральной печати (с перепечаткой в местных СМИ).

13. Подготовка кино- (теле-) ролика о позитивных шагах народной власти по отношению к хазарейскому населению, шиитской общине (использовать аргументацию, изложенную в пунктах 1-3 раздела I, а также пунктов 4, 5, 6, 7, 9,11 раздела II).

Организация демонстрации киноролика по телевидению, в кинотеатрах, посредством передвижных киноустановок (особенно в местах преимущественного расселения хазарейцев).

14. Определение оптимальной дислокации на интересующий период боевых агитпропагандистских-гуманитарных отрядов вооруженных сил ДРА, советских войск (с возможным сокращением) по территории преимущественного проживания хазарейского населения (особенно в зоне влияния Сайида Джаграна).

Обеспечить укомплектованность отрядов кадрами, особенно пропагандистскими и медицинскими, соответствующим агитационно-пропагандистским материалом (магнитофонные записи выступлений видных хазарейцев, фильмы по пункту 13 раздела II; текстов и т. п. по пункту 10 раздела II, "Указа об амнистии", "Обращения к племенам на дари" и т. п.), одеждой и обувью для раздачи детям, женщинам и старикам; медикаментами и продуктами. Целесообразно, чтобы в отряд входила бы санитарно-врачебная бригада, а также концертная группа с преимущественно хазарейским репертуаром.

ПРИМЕЧАНИЯ ОБЩЕГО ПОРЯДКА

а) Целесообразно создать группу по контролю за подготовкой и осуществлением мероприятий (с выездами на места);

б) с целью усиления эмоционального воздействия на аудиторию желательно при реализации пунктов 10, 11, 12, 13, 14 наряду с другими давать материалы в пользу

прекращения вооруженной борьбы мятежников из уст "двух матерей", "двух сестер", "двух отцов" и т. п. (погибших за народную власть и за интересы контрреволюции);

в) для подкрепления доверия аудитории целесообразно при вещании и в текстах печатной продукции учитывать специфику диалекта дари-хазари.

* * *

Предыдущие выкладки служат подтверждением авторской гипотезы о концептуальной состоятельности и научной инструментальности многоуровневого этнополитологического анализа конфликтно-консенсусной динамики цивилизационных систем в процессе их модернизации. Автор на негативном опыте афганской войны показывает приоритетную роль интересов национальной безопасности в формировании и реализации внешней политики бывшего СССР, а точнее катастрофические последствия недостаточной разработанности концепции национальной безопасности. Приведенный анализ уроков текущей политической истории убеждает в непреложной истине о концептуальной, теоретико-методологической ущербности доктрины и курса государственной безопасности вокруг Афганистана, не включавшей в себя наряду с другими важными аспектами этнополитологическое видение системы защиты стратегических национальных интересов Отечества, интересов международной безопасности.

Отметим также, что реалистический анализ попыток использовать консенсусные технологии, приведенный в четвертой главе, наглядно раскрывает и границы, трудности осуществления консенсусных технологий, которые автором исследования показаны в конце предыдущей главы.

Подчеркивая важность научного понимания политической, гносеологической и процедурно-технологической ограниченности консенсусного подхода к разрешению этнополитических конфликтов, автор старался показать научную значимость и инструментальную важность цивилизационной постановки данной теоретической и практической проблемы. Результаты разноуровневой апробации авторской гипотезы об актуальности, содержании и инструментарии этнополитической теории национальной безопасности дают основание рассматривать проведенное исследование в качестве введения в рассматриваемый специальный раздел этнополитологии. Подобная постановка одной из актуальных проблем политологической, а также политической стратегии стабильности и развития, оставляет для будущих исследований ждущий своего научного осмысления круг актуальных задач цивилизационного будущего на геостратегическом пространстве, именуемом в недавнем прошлом СССР*.

* Общий список литературы см. на страницах 413–424.

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՒՍՍԱՍՏԱՆՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՖՈՆԴ
ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ
ԵՎ ՄՈԴԵԼԱՎՈՐՄԱՆ ՈՒՍՍԱՍՏԱՆՅԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ

Հ. Ս. ՔՈՉԱՆՉՅԱՆ

ՀԱՄԱՉԱՅՆՈՒԹՅԱՆ–ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԷԹՆՈՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ազգային անվտանգության քաղաքակրթական առումը

(թարգմանություն ռուսերենից)

Մոսկվա «Լուչ» 1992

Նվիրվում է

Աֆղանական պատերազմի ինտերնացիոնալ եղբայրներին.

հայեր Բասենցի Ազոյանին, Տիգրան Գասպարյանին,
Գագիկ Գրիգորյանին, Արմեն Դարբինյանին, Յուրի Խաչատուրովին,
Արտուշ Հարությունյանին, Արմեն Մխիթարյանին
և Նորատ Տեր-Գրիգորյանցին

վրացի Նոդար Գիորգաձեին

Դոնի կազակ Լեոնիդ Գեներալովին

ավար Օմար Մուրտազալիևին

ռուսներ Լեոնիդ Բոգդանովին, Լեոնիդ Շերշնևին, Վալերի Սիդորովին,
Միխայիլ Ալինկինին, Էդուարդ Սկակունովին և Վլադիմիր Չուչուկինին

ինգուշներ Ռուսլան Աուշևին, Միրաջեդդին Բեկովին
և Մագոմետ Պարագուլգովին

թաթար Ֆիկրյատ Տաբեևին

հրեա Իոսիֆ Կոբզոնին

Կուբանի կազակ Յուրի Դիբրովին

բելառուսներ Վասիլի Բորիսին, Ֆրանց Կլինցևիչին
և Սերգեյ Սևրուկին

ադրբեջանցի Սանան Մամեդովին

ուկրաինացիներ Վյաչեսլավ Դենիսենկոյին և Ստեպան Չյուբային

օս Սեմյոն Օգոռնին

տաջիկ Սայֆուդդին Նիյոզովին

քուրդ Հասո Խուդոյանին

փուշթուն Ջաֆար Խանին

ԱՖՂԱՆՍՏԱՆՈՒՄ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԷԹՆՈՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայկ Սարգսի Քոթանջյանի մենագրությունը մի փորձ է փիլիսոփայական ու քաղաքագիտական տեսանկյուններից խորապես իմաստավորելու այն ռազմական, քաղաքական ու բնական աղետների էությունը, որոնց բացասական հետևանքները նա ոչ միայն պարզապես դիտել է, այլ, լինելով վերլուծական-կառավարային գործընթացներում ներգրավված, նաև օգնել է հաղթահարելու: Տվյալ ճգնաժամների զուտ թվարկումը՝ Աֆղանական պատերազմ, Ղարաբաղյան հակամարտություն, պայքար ընդդեմ կոռուպցիայի և ղեկավար կուսակցական մարմինների բյուրոկրատիզմի, հայկական երկրաշարժ, արդեն հարգանք են ներշնչում նրա վերլուծական ու քաղաքական-կազմակերպական գործունեության նկատմամբ:

Ես հեղինակի հետ ծանոթանալու առիթ եմ ունեցել աֆղանական հակամարտության յուրահատուկ ժամանակահատվածում, երբ դրա մակերևույթին շարունակում էր մղեգնել խորհրդային ու աֆղանական կանոնավոր բանակների համընդհանուր պատերազմը՝ մահացու կռիվ տվող, սովորական ընկալմամբ ռազմաճակատներից և օրենքներից զուրկ մահմեդական սրբազան պատերազմի հետ:

Բայց հենց այդ նույն ժամանակ՝ Յու. Վ. Անդրոպովի իշխանության գալով, սկսեցին նշմարվել Աֆղանստան զորք մտցնելու նկատմամբ ձևավորված նոր մոտեցումների առաջին նշանները, որոնք աննկատ էին հին ուժային քաղաքականության անհաղորդ կողմնակիցների համար: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն փաստին, որ Աֆղանստանի զինված հակամարտության հետևում կանգնած էին, մի կողմից, քաղաքացիական պատերազմով և արյան վրեժով պառակտված աֆղանները, իսկ մյուս կողմից՝ տարբեր կերպ պատերազմի մեջ ներքաշված երկու գերտերությունները՝ ավերիչ մարտական միջոցների, ինչպես նաև սուր «գաղափարախոսական պատերազմի» իրենց հսկայական զինանոցով:

Չհայտարարված պատերազմի ձևով ագրեսիայի ենթարկված «հարևան ժողովրդին եղբայրական օգնության ցուցաբերման» մեկնակերպը ծնունդ տվեց շարակարգված քարոզչության՝ ինտերնացիոնալ բրիգադների ստեղծման փաստարկման իսպանական հակաֆաշիստական նախադեպի օրինակով: Տարիների ընթացքում միլիոնավոր խորհրդային և ոչ միայն խորհրդային մարդկանց շրջանում սկսեց արմատավորվել աֆղանական պատերազմին մասնակցության դրական ընկալման դիրքորոշում: Չնավորվեց մի մարդու կերպար, որը, անտեսելով կանոններից զուրկ մղեռանդ պատերազմի ծայրահեղ վտանգներն ու դաժանությունը, թողնում է իր օջախը, Հայրենիքը հանուն «ինտերնացիոնալ պարտքի կատարման»: Եվ հիրավի, չի կարելի ժխտել, ինչպես դա երբեմն արվում է, խորհրդային մարդկանց պարտքի և երդման պարտավորությունները իրենց Հայրենիքի առջև, պետության առջև, որը նրանց պատերազմ է ուղարկել, իսկ դրա հետ մեկտեղ Խորհրդային Միությունը կորցնում էր իր հեղինակությունը ոչ միայն ազատական-ժողովրդավարական Արևմուտքում, այլև երրորդ աշխարհի՝ անցյալում բարեկամական երկրներում:

Ժամանակի ընթացքում խորհրդային մարդկանց Աֆղանստանում մղվող պատերազմի անմիջական մասնակիցներից սկսեց հասնել նաև այլ բնույթի տեղեկույթ: Ավելի ու ավելի հիվանդագին էին ընկալվում այն կորուստները, որ կրում էին խորհրդային բանակը, Աֆղանստանի խաղաղ բնակչությունը: Նյութական, ֆինանսական առումով նույնպես երկիրն զգում էր բազմամյա անդառնալի ծախսերի չափից մեծ բեռը:

Կարճ ասած՝ երկրի նոր ղեկավարը՝ նախկինում իր վարած գործունեության ոչ միանշանակությամբ հանդերձ, ելնելով երկրի ու ժողովրդի արտաքին ու ներքին քաղաքական շահերից, կարողացավ խիզախաբար բարձրացնել ԽՍՀՄ բարձրագույն ազգային շահերի սթափ հաշվարկման հարցը: Խնդիր դրվեց վերահմաստավորելու աֆղանական պատերազմի դառը փորձը և դրա վարման ռազմաքաղաքական դոկտրինը: Այդ ամենն արվում էր այն ժամանակ ԽՄԿԿ-ում և պետությունում ընդունված գաղտնիության պայմաններում՝ վերլուծաբանների մասնագիտական խմբերի միջոցով, ընդսմին նրանց տրված էր ներգրավված դիտարկումներ կատարելու և դրանց արդյունքների հիման վրա օբյեկտիվ անկաշկանդ կարծիք տալու իրավունք (հասկանալի է, որ այդ անկաշկանդությունը հարաբերական էր):

Սկսեց ուրվագծվել հակամարտության պատերազմող կողմերի միջև փոխհարաբերությունների նոր բանակցային գիծ, կիսապաշտոնական մակարդակով զգուշավորությամբ պարզվում էր աֆղանական «մոջահեդներին» օգնելու հարցում ԱՄՆ-ի դաշնակիցների դիրքորոշումը: Ծագեցին կարգավորման առաջին հույսերը՝ կապված ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի հատուկ դեսպանորդի միջնորդական առաքելության հետ: Ռազմական և քաղաքական գործընկերներիս հետ ես առնչվել եմ ԱԺՀ-ից խորհրդային զորքերի դուրսբերման նախադրյալների ստեղծման նոր ուղեգիծը չընդունելու և դրան խոչընդոտելու զանազան փաստերի: Մի շարք զինվորական ու քաղաքացիական մասնագետների՝ լայն հասարակայնության համար անտեսանելի վերլուծական և խորհրդատվական գործունեության շնորհիվ զորքերի դուրսբերման արտաքին ու ներքին նախադրյալները ձևավորվելով՝ վերածվեցին Աֆղանստանում «ազգային հաշտության», «ազգային համաձայնության» հաստատման հայեցակարգի: Տվյալ ուղեգիծը յուրահատուկ տեսական ու գործնական փորձաքննություն էր անցնում պատերազմող կողմերի միջև համաձայնության

հաստատման առաջին իսկ ձեռնարկումներում: Տքնաջան հետազոտական և կազմակերպչական աշխատանքի հիմքի վրա ուրվագծվեցին պատերազմող ընդդիմությունը իշխանությունների հետ համագործակցությանը միտելու նախածեռնության բովանդակությունն ու գործիքարանը: Պետք է պատկերացնել մեծ թվով խորհրդային և աֆղան մասնագետների ծայրահեղ թերահավատությունը դաժան, իրար հանդեպ կատարած հանցագործությունների բեռը կրող հակառակորդների միջև հնարավոր համաձայնության նկատմամբ. զուր չէ, որ այդ ջոկատները այն ժամանակ կոչվում էին «զինված բանդկազմավորումներ» (ճիշտ է՝ դա ասվում էր հակամարտության կողմերից միայն մեկի հասցեին):

Սակայն մի շարք պատրաստված, պատերազմող կողմերի վստահությունը վայելող, համբերատար մասնագետների ջանքերի միավորման շնորհիվ ձեռք բերվեց ցեղերի բնակության ու ռազմաքաղաքական գործունեության կոնկրետ տարածքներում ծավալված «ջիհադի» ռազմական, քաղաքական, էթնոմշակութային յուրահատկության և ընդհանուր բնութագրերի ավելի լիարժեք իմացություն: Անշուշտ, ազգային հաշտեցման կարգախոսի տարածման լավագույն միջոց էին նման համաձայնության և համագործակցության կենդանի օրինակները: Հարկ է նշել, որ դա ամենևին էլ շնորհակալ աշխատանք չէր. մենք սովորաբար գործ էինք ունենում մոլագարության հասնող քաջությամբ հայտնի, խորամանկ, կասկածամիտ, դաժան գործընկերների ու հակառակորդների հետ, որոնք, ի դեպ, չափազանց զգայուն էին վտանգի և փոխհարաբերություններում կեղծիքի նկատմամբ:

1982–1983 թվականներին Հայկ Քոթանջյանը, այդ ժամանակ քաղաքականության սոցիալական հոգեբանության բնագավառի փիլիսոփայական գիտությունների տակավին երիտասարդ թեկնածուն, մեկն էր նրանցից, ում վրա դրված էր ամբողջ այդ բարդ, զգայուն և վտանգավոր աշխատանքը: Ռիսկը առաջին հերթին պայմանավորված էր այն բանով, որ սխալ հետևությունները և հանձնարարականները կարող էին նոր զոհերի ու կորուստների պատճառ դառնալ: Բայց դա չէր միայն: Ներկայացված մեծագրության հեղինակի նման մարդիկ՝ իմ գործընկերները, մի անգամ չէ, որ ստիպված էին այցելելու զորքերի, զինված ընդդիմության տեղաբաշխման վայրերը, նրանց իրական կյանքը տեսնելու կանոնավոր զինվորական ստորաբաժանումների, նահապետական ցեղային ու տոհմական եղբայրությունների, գաղափարական ռազմաքաղաքական դաշինքների և իսկական բանդկազմավորումների առօրյայում, մասնակցելու բանակցություններին: Քոթանջյանի՝ վտանգի ենթարկվածության չափը գնահատելու համար բավական է աֆղանական պատերազմի անցուդարձին քաջատեղյակ մարդկանց թվել նրա գործուղումների վայրերի որոշ անուններ՝ Հերաթ, Փանջշիր, Կապիսա, Փարվան, Բամիան, Փագման և այլն:

Հ. Ս. Քոթանջյանի աշխատության մեջ, Աֆղանստանում պատերազմի ու խաղաղության արտաքին կողմերից բացի, պարզորոշ ձևով ներկայացված է այնպիսի մի բազմաբարդ և, ինչպես համոզիչ կերպով ապացուցում է հեղինակը, ոչ միայն ռազմական ու կրոնական, այլև էթնոքաղաքական այնպիսի երևույթի բազմապլանությունը, ինչպիսին է ժամանակակից «ջիհադը»:

Բազմամակարդակ քաղաքակրթական վերլուծության մեթոդաբանությունը, որը ներկայացված է սույն հետազոտության ընդհանուր տեսական բաժիններում, հնարավորություն է տալիս խորհրդային և արտասահմանյան հասարակագիտության կողմից «ջիհադի» մշակվող մոդելը զգալի չափով լրացնելու երկու՝ ինչպես կենսատարածքային ու ազգային, այնպես էլ շարունակական միջցեղային պատերազմի էթնոքաղաքական յուրահատկության «մակարդակներում» տեղի ունեցող միջքաղաքակրթական ու ներքաղաքակրթական շփման էութենական առանձնահատկություններով:

Հարուստ արտասահմանյան էթնոքաղաքագիտական գրականության օգտագործումը, որը կատարվել է դրա քննավերլուծական վերահմաստավորմամբ ու վերամշակմամբ, հնարավորություն է տվել հեղինակին առաջարկելու «համաձայնության–հակամարտության» պրոբլեմի ավելի լայն մեթոդաբանական ըմբռնում, ճգնաժամային զարգացումների ընթացքի վրա համապատասխան էթնոքաղաքական ազդեցություն գործելու նպատակով քաղաքակրթությունների միջև կոնկրետ շփումները դիտարկելու էթնոծին ու սոցիոծին գործոնների բազմաչափության մեջ:

Ուշադրության են արժանի նաև հեղինակի մի շարք քաղաքագիտական ճեպագրերը, ելույթներն ու մշակումները, որոնցում դրսևորվում է նրա մշտական ձգտումը վերահմաստավորելու համաձայնային ռեսուրսները՝ վերջին տարիներին մեր երկրին հատուկ աղետալի բախումների լուծման համար:

Դրա հետ մեկտեղ, չցանկանալով բանավիճել Հ. Քոթանջյանի հետ, ես ըմբռնումով եմ մոտենում քննարկվող պրոբլեմների ամբողջ շրջանի նկատմամբ իր դիրքորոշումն ունենալու հեղինակի իրավունքին:

Կարծում եմ, որ Հ. Քոթանջյանի աշխատությունը օգտակար նեցուկ կլինի ազգային համերաշխության հաստատման ուղիների որոնումներում, բայց արդեն ոչ թե Աֆղանստանում, այլ մեր տանը՝ Ռուսաստանում և նախկին մյուս միութենական հանրապետություններում: Մենագրությունը, անշուշտ, մեծ հետաքրքրություն է ներկայացնում ազգային ու միջազգային անվտանգության պրոբլեմներով զբաղվող մասնագետների համար:

Ազգային և միջազգային անվտանգության հիմնադրամի նախագահ
գեներալ-մայոր Լ. Ի. ՇԵՐՇՆԵՎ

Ձեր առջև դրված է մի գիրք, ավելի ճշգրիտ՝ փոքրածավալ ինքնուրույն հետազոտությունների մի ժողովածու, որոնք միավորված են մեկ ընդհանուր գաղափարով՝ այն բազմաչարչար ուղու վերլուծությամբ, որով գարգանում էին ազգային և, հատկապես, էթնոքաղաքական հարաբերությունները: Դա է հենց այս գրքի հիմնական արժանիքը, որը միևնույն ժամանակ օրգանապես զուգակցում է ճշմարտության որոնումը ամենևին էլ ոչ միարժեք իրավիճակներում:

Բայց կասկածից վեր է, որ մենք գործ ունենք մի յուրօրինակ, ստեղծագործական հետազոտության հետ՝ որքան գրավիչ, այնքան էլ արտասովոր:

Կարծում եմ, որ ընթերցողը մեծ հետաքրքրությամբ կծանոթանա առաջին հերթին էթնոքաղաքականության և էթնոքաղաքագիտության գաղափարների սկզբնավորման գնահատումներին: Նրա առջև կբացվի ճշմարտության որոնման, ազգային ու քաղաքական պրոբլեմների սահմանագծում գտնվող դրույթների բյուրեղացման մի զարմանահրաշ աշխարհ: Արդի պայմաններում, երբ օբյեկտիվ իրականությունն ինքն է այլ կերպ դնում այդ հին և մշտապես նոր հարցերը, պահանջվեց նորովի իմաստավորել գիտական եզրահանգումներն ու գործնական կյանքը: Ազգամիջյան հարաբերությունների սրումը, թշնամանքի պոռթկումները, զենքի գործադրմանը հասնող բանավեճերը կյանքի կոչեցին նաև նոր հասկացություններ, որոնք մարմնավորեցին ռեալ կյանքի այդ նոր կողմերը:

Հեղինակը աներկյուղաբար շրջանառության մեջ է դնում և հմտորեն օգտագործում այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են էթնիկականությունը, էթնոկենտրոնությունը, էթնոազգայնականությունը, էթնոազգային, էթնոքաղաքական հակամարտությունը և այլն: Եվ գլխավորն այն է, որ դա ոչ թե պարապ մտքի վարժանք է, այլ կեցության իրողությունների մասին երկարատև մտորումների արգասիք:

Հասկանալով, որ էթնոքաղաքական համաձայնության-հակամարտության շատ հարցեր հնարավոր չէ հասկանալ՝ ելնելով բուն հասկացության բացատրությունից, հեղինակն ընթերցողի առջև բացում է մի ընդարձակ աշխարհ, որում հնարավոր լիներ գտնել այդ պրոբլեմների ավելի ճշգրիտ ու վստահելի տեղը: Դա քաղաքակրթության պրոբլեմն է, կամ, ինչպես հետազոտության մեջ է ասվում, քաղաքակրթական մոտեցման հարցը: Այստեղ կան մեծ թվով նոր հարցադրումներ՝ ինչպես արդեն որոշ լուսաբանում ստացած (օրինակ՝ Արևմուտքի դիտարկումը որպես դեպի նյութականը կողմնորոշված աշխարհի, և Արևելքի դիտարկումը որպես դեպի հոգևորը կողմնորոշված աշխարհի), այնպես էլ նոր փաստարկումներ

հօգուտ այն գաղափարի, որ դիմակայությունը «Արևմուտք–Արևելք» առանցքից շեղվել է դեպի «Հյուսիս–Հարավ» առանցքը, ինչը հաստատվում է արդի աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների տրամաբանությամբ:

Բայց դրանով ամենևին չի սպառվում քաղաքակրթության պրոբլեմների քննարկման նկատմամբ սույն մոտեցումը: Հեղինակը վերլուծում է նաև այլ տեսակետներ, դասակարգման այլ ծներ, որոնց շարքում առանձնակի տեղ ունի քաղաքակրթության ինտեգրող ու տարանջատող գործառույթների և ազգային պրոբլեմների լուծումներում դրանց համապատասխան դրսևորումների վերլուծությունը:

Վերլուծության ժամանակ հեղինակը հանգում է ներքաղաքակրթական ու միջքաղաքակրթական հարաբերությունների հարցերին, հարաբերություններ, որոնք հիմքային են «մարդու իրավունքների» պաշտպանության համար և արտացոլված են «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում»:

Ոչ ոք կասկածի տակ չի դնում այն փաստը, որ տեղի է ունենում ժամանակակից հասարակության ինտենսիվ վերափոխում: Բայց ո՞ր տերմիններով այն պետք է նկարագրվի: Առաջներում օգտագործվող «հեղափոխություն», «էվոլյուցիա», «փոփոխություններ» հասկացությունները հեղինակի կարծիքով բավարար չեն տեղի ունեցող կերպափոխումների էությունը բացատրելու համար: Այդ պատճառով նա օգտագործում է «արդիականացում» տերմինը, որն ըստ էության ավելի ստույգ կերպով է արտացոլում ավանդական հասարակությունից ժամանակակից հասարակությանն աստիճանական անցման գործընթացը: «Արդիականացում» տերմինն է, որ հնարավոր է դարձնում հասարակական հարաբերությունների ամբողջ համակարգում տեղի ունեցող բազմաչափ փոփոխություններով պայմանավորված վերափոխումների էության պարզաբանումը:

Հեղինակի կողմից տվյալ պրոբլեմների վերլուծությունը, որը կատարվել է մեծ թվով պետությունների ու ժողովուրդների և, հատկապես, ԽՍՀՄ–ԱՊՀ օրինակով, ցույց է տալիս այն ոչ տրիվիալ լուծումների հնարավորությունը, որոնք հուշել են կյանքը, գիտնականների որոնումները, զարգացման հավանական ուղիների բաղդատումն ու գնահատումը:

Անշուշտ, այդ պրոբլեմի շատ առումներ հիմնվում են իր Հայրենիքի՝ Հայաստանի փորձի ուսումնասիրության վրա, մի երկրի, որի ցավն ու ուրախությունը սրտին այդքան մոտ է ընդունում հեղինակը:

Գրքում հատկապես ուշագրավ է այն նյութը, որը լուսաբանում է էթնոս–կրոն–քաղաքականություն հանգուցակետում ծագած պրոբլեմները: Դարերով կուտակված պրոբլեմների շերտը առավել լավ է արտացոլում ոչ

միայն ժողովուրդների՝ ազգային ու քաղաքական դրոշներով սրբագործված փոխհարաբերությունների բարդությունը, այլև ազգային շահերի դերը նրանց ճակատագրում, համայն մարդկության, քաղաքակրթությունների ճակատագրում: Գիտնականին հատուկ նրբանկատությամբ հեղինակը ուսումնասիրում է երկու մեծ կրոնների՝ քրիստոնեության և իսլամի փոխգործության էթնոքաղաքական պրոբլեմները՝ ցույց տալով դրանց դերը, ազդեցությունը և նշանակությունը համաձայնության հաստատման կամ հակամարտության վրա ներգործության տեսակետից:

Մարդկային հարաբերությունների այս ծայրաստիճան նուրբ հյուսվածքը ունակ է արթնացնելու բարոյականության վսեմություն կամ հանգեցնելու հրեշավոր ոճրագործությունների, ինչը, ցավոք, բազմիցս եղել է պատմության մեջ: Հեղինակն զգուշացնում է այն պրոբլեմների անտեսման վտանգավորության մասին, որոնցում աներևակայելի ձևով միահյուսվել են բազմաթիվ ժողովուրդների և աշխարհի բազմաթիվ տարածաշրջանների կյանքի ազգային, կրոնական ու քաղաքական կողմերը: Հեղինակը իմաստավորում է Անդրկովկասում, Միջին Ասիայում և Մերձբալթիկայում տվյալ դրսևորումների ամբողջ բազմապիսությունը՝ փորձելով գտնել դրանց ընդհանրությունը, ինչը հնարավորություն է տալիս պարզելու էթնոքաղաքական գործընթացների զարգացման որոշ օրինաչափ միտումներ:

Կարելի է առանձին քննարկել Աֆղանստանին՝ էթնոքաղաքական զարգացումներում այդ չափազանց ողբերգական ու արյունալի վայրին, նվիրված նյութը: Այդ մասին չի կարելի դատողություններ անել կողքից: Հենց այն հանգամանքը, որ հեղինակն իր ուսումնասիրությունը կատարում է հենվելով անձնական փորձի վրա, մեծապես նպաստել է ժողովուրդների, երկու երկրների փոխհարաբերություններում ցավալի կորուստների պատճառ դարձած իրավիճակի ամբողջ բարդության, հակասականության ու տարիմաստության խոր ու նուրբ ըմբռնմանը: Աֆղանստան «զորքերի սահմանափակ թվակազմ մտցնելու» որոշման անբարոյականությունը, կործանարարությունը, անհեռատեսությունը քաղաքական գործիչների ու գիտնականների առջև գործնականում անմիջապես հարց դրեցին, թե ինչպես դուրս գալ փակուղուց: Սակայն ամփոփիչ որոշումները միայն սրեցին պրոբլեմը, բարդացրին ոչ միայն երկու հարևան երկրների, այլև ամբողջ համաշխարհային հանրության կյանքը:

«Աֆղանստանի դասերը». երևի այդպես կարելի էր անվանել այն գլուխը, որում հեղինակը վերլուծում է Աֆղանական պատերազմի տագնապալի փորձը, մի պատերազմի, որը անպատվություն ու խայտառակություն բերեց համաշխարհային իրողությունների դոգմատիկ ընկալման մեջ «իրենց լուման» ներդրած քաղաքական գործիչներին:

Եվ վերջապես, գրքի յուրօրինակությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ հեղինակը մշտապես փորձում է կանխատեսել էթնոքաղաքական գործընթացների զարգացումը, տեսնել ապագան, խրախուսել մարդկայինը և զգուշացնել հնարավոր ու սպասվելիք կորուստների մասին: Նրա այս եզրակացությունները ներկայացված են ինչպես առանձին գլուխներում, այնպես էլ ամփոփման մեջ:

Հեղինակի ոչ բոլոր կանխատեսումային եզրակացություններն են ընդունելի, սակայն մի բան անհերքելի է. դրանք այն զարգացումների հիմնավոր, հանգամանալից վերլուծության արգասիքն են, որոնք տեղի են ունենում էթնոքաղաքական հարաբերություններում ինչպես առանձին տարածաշրջաններում, այնպես էլ ամբողջ աշխարհում: Անհերքելի է հեղինակի այն եզրակացություն-կանխատեսումը, որ էթնոքաղաքագիտությունը դեռ գտնվում է կայացման և զարգացման սկզբնավորման փուլում: Այդ ճանապարհին մեզ սպասում են բազմաթիվ մեծ ու փոքր հայտնագործություններ, որոնք, հուսով եմ, կնպաստեն ազգային և ազգամիջյան կնճռոտ հարցերի քաղաքակիրթ լուծմանը:

Ավարտելով հոդվածը՝ ներկայացնեմ ևս երկու նկատառում:

Առաջին: Հեղինակի եզրահանգումներն ունեն ոչ միայն տեղային նշանակություն: Դրանք կիրառելի են աշխարհում առկա էթնոքաղաքական գործընթացների ավելի լայն համատեքստում:

Տեսակետների հենց այդ լայնածավալությունն է հեղինակին հնարավորություն տալիս հանգելու այնպիսի եզրակացությունների, որոնք գիտական ու գործնական նշանակություն ունեն ոչ միայն մեր երկրների՝ արհավիրքներով լի պատմության համար:

Երկրորդ: Գրախոսի անունից ընթերցողին դիմելիս ընդունված չէ խոսել հեղինակի անձի մասին: Սակայն տվյալ դեպքում պետք է անել ոչ թե բացառություն, այլ լրացում, իսկը՝ լրացում, որովհետև առանց նրա կյանքի ուղու համառոտ բնութագրման գրքից ստացված տպավորությունը նս թերի կլինի: Իսկ ինչպե՞ս կցանկանայի ներկայացնել հեղինակին, որն ունակ եղավ այսքան խիզախ, ոչ սովորական դատողությունների ու եզրահանգումների: Ո՞վ է նա:

Կիբեռնետիկոս և հասարակագետ, որը բազում տարիներ է նվիրել գիտության ու կրթության կազմակերպմանը, երիտասարդության դաստիարակությանը: Քաղաքական աշխատանքի նկատմամբ հենց այդ անկեղծ, բարեխիղճ վերաբերմունքի շնորհիվ նա դարձավ Հայաստանում արդարության համար մարտնչողներից մեկը (իշխանական շրջաններում կոռուպցիայի դեմ պայքար): Միևնույն ժամանակ, վերլուծական-կառավա-

րային աշխատանքի փորձը, որը նա ձեռք բերեց Աֆղանստանում, նրան ստիպեց պրոբլեմների իմաստավորումը կատարել ոչ թե ըստ քաղաքական գործիչների դոկտրինալ կողմնորոշումների, այլ առաջին հերթին՝ ճշմարտության դիրքերից: Նա եղել է գիտության և բարձրագույն կրթության կազմակերպիչ, ղեկավարել է Հայաստանի պրոֆտեխկրթության համակարգը, աշխատել խոշոր արդյունաբերական և գյուղատնտեսական տարածաշրջաններում, կատարել քաղաքական-դիվանագիտական և ռազմաքաղաքական առաքելություններ: Ղեկավարել է Հայկական երկրաշարժից տուժած ընտանիքների տարահանումը, բանակցություններ է վարել պատերազմող կողմերի հետ և կարգավորել զինված հակամարտությունների գոտիներից փախստականների կենցաղը: Եվ ամենուրեք՝ արգասաբեր, մարդասիրության դիրքերից:

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ժ. Տ. ՏՈՇՉԵՆԿՈ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդի աշխարհին բնորոշ են ինտենսիվ և հախուռն սոցիալական փոփոխությունները: Դրանց կարևոր դրսևորումն է ազգային և էթնիկական ինքնագիտակցության բուռն աճը: Հասարակության կյանքի ազգային-էթնիկական գործոնը դարձել է պետությունում կյանքի կայունության ապահովման կարևոր պայման, մեծ թվով ծանր ճգնաժամային երևույթների ու հակամարտությունների պատճառ: Տվյալ հանգամանքը միջազգային հետազոտական ընկերակցության ուշադրությունը կենտրոնացնում է անձնական, խմբային, պետական, ազգային անվտանգության պրոբլեմների վրա:

Կայունության, քաղաքացիական համերաշխության ձեռքբերման ու պահպանման առանձնահատկություն դարձավ այն բանի գիտակցումը, որ հակամարտությունների լուծման ժամանակ անհրաժեշտ է ի հայտ բերել և հաշվի առնել գոյություն ունեցող բոլոր տեսակետները: Օլստերյան, Մերձդնեստրյան, Ղարաբաղյան, Աբխազական, Հարավօսեթական հակամարտությունների տիպի բարդ իրավիճակներում սակավ արդյունավետ է կառուցողական լուծումների որոնումը քվեարկության ժողովրդավարական ընթացակարգի շրջանակներում, այսինքն՝ մեծամասնության կամքի պարզմամբ: Հակամարտությունների լուծման եղանակ են դառնում համաձայնության սկզբունքը, մեթոդը և մեխանիզմը:

Էթնոքաղաքագիտական պրոբլեմների լուծման համաձայնային տեխնոլոգիայի արդիականությունը երևում է ազգային անվտանգության պրոբլեմների համախմբի միջոցով: Նման մոտեցման դեպքում չպետք է անտեսվի անգամ ամենափոքր ազգի, էթնոսի անվտանգության ոչ մի ռեալ կողմ, չի կարող անտեսված լինել քաղաքացու անվտանգությունը, այսինքն՝ ցանկացած այլ ազգի անվտանգությունը համարվում է իր ազգի անվտանգության կարևոր պայման:

Ազգային անվտանգության էթնոքաղաքագիտական պրոբլեմների հետազոտման արդիականությունը պայմանավորված է նաև հետևյալ հանգամանքով: Քաղաքական կյանքի ռեալ պրակտիկայում դեռ չի արմատավորվել, օրինակ, «ազգային անվտանգություն» հասկացությունը: Ռուսաստանի Դաշնության «Անվտանգության մասին» օրենքում, որն ընդունվել է 1992 թ. մարտի 5-ին, «անվտանգություն» հանգուցային հասկացությունը սահմանվում է որպես «ներքին և արտաքին սպառնալիքներից անձի, հասարակության և պետության կենսականորեն կարևոր շահերի պաշտպանվածության վիճակ»[1]: Դրանով իսկ պահպանվում է

[1] Закон Российской Федерации "О безопасности". "Российская газета", 6 мая 1992 г., с. 5.

էթնոքաղաքագիտական պրոբլեմատիկայի միջոցով անվտանգության վիճակի համակարգված քաղաքական-սոցիալական ու քաղաքագիտական վերլուծության վրա դրված յուրօրինակ «արգելքը»: Ոխտի սոցիոլոգիական նյութի մի զգալի հատված կարող է մղվել հետին պլան, ինչպես նաև ոչ ճշգրիտ կերպով արտացոլվել քաղաքագիտության մեջ:

Ընտրված պրոբլեմի ուսումնասիրության կարևորությունը թելադրված է նաև ինքնիշխան Աֆղանստանի տարածքում ընթացող պատերազմին ԽՍՀՄ մասնակցության ողբերգական փորձով, ինչը հանգեցրեց այդ երկրի բնակչության շրջանում ծանր կորուստների և բացասական հետևանքներ ունեցավ Ռուսաստանի, նախկինում ԽՍՀՄ կազմում եղած այլ ինքնիշխան պետությունների կյանքի բոլոր կողմերի համար: Նման հակամարտությունները կանխատեսելու, դրանց լուծման օպտիմալ միջոցները պատեհաժամորեն գտնելու կարողությունը ռեալ և անհրաժեշտ հետազոտական խնդիր է:

Աֆղանստանում տեղի ունեցած պատերազմի վերլուծության հիման վրա ամբողջական քաղաքագիտական հայեցակարգի ձևավորումը հնարավոր կդարձներ էթնոքաղաքական իրողությունների վերլուծության բոլոր մակարդակների մեթոդաբանական միօրինակության ապահովումը: Դրա շնորհիվ կձևավորվեր միջքաղաքակրթական շփման պրոբլեմների բազմամակարդակ վերլուծության մոդել:

Խորհրդային հասարակության նկատմամբ այդ բազմակողմ մոդելի կիրառումը հնարավորություն կտար Խորհրդային Միությունը դիտելու որպես մի յուրահատուկ գաղափարախոսական քաղաքակրթություն, որը, միևնույն ժամանակ, չէր կորցրել իր պատմամշակութային անհամասեռությունը, մասնավորապես՝ կրոնական առումով: Այս պատճառով «վերակառուցողական արդիականացման» ընթացքում խորհրդային «քաղաքակրթությունը» տրոհվում էր «խորհրդային քրիստոնեական և իսլամական ենթաքաղաքակրթությունների», թեև նման զուգակցումը թվում է միանգամայն անհամատեղելի: Դրանցից յուրաքանչյուրի կառուցվածքը պայմանավորված է բարդ պետական-ազգային (միութենական հանրապետությունների մակարդակում) և վարչաէթնիկական (բոլոր տեսակի ինքնավարությունների մակարդակում) կազմով: Հասարակության խոր և դինամիկ վերափոխման ընթացքում տարաբնույթ՝ քաղաքական, գաղափարախոսական, տնտեսական, սոցիալական, հոգեբանական, մշակութային, հասարակական կապերի բարդ միահյուսումը էապես դժվարացնում է երկրում էթնոազգային զարգացման գործընթացների վերլուծությունը, առավել ևս՝ կանխատեսումը, ինչի վկայությունն է մեծ թվով և՛ խորհրդային, և՛ արտասահմանյան ուսումնասիրությունների ձախողումը:

Իրենց «ինքնուրույն», համընդհանուր տարբերակներով քրիստոնեական և իսլամական քաղաքակրթությունների շփման պրոբլեմի ուսումնասիրությունը, հնարավոր միջքաղաքակրթական համաձայնության որոնումը կարող են կատարվել մարդու իրավունքների հավասարության ճանաչման ու դրանց պաշտպանության հիմքում դրված արժեքների նկատմամբ իսլամական ու քրիստոնեական ավանդույթների կողմնորոշումների նմանության–տարբերության հիման վրա: Ընդհանրացնելով քրիստոնեական և իսլամական հասարակությունների՝ առաջին հերթին որպես պետական կազմավորումների միջքաղաքակրթական շփումների գերազանցապես համաձայնային զարգացման օբյեկտիվ նախադրյալները՝ մենք երևան ենք հանում աշխարհականության և արմատականության՝ որպես մահմեդական պետությունների իրավաքաղաքական տեսության մեջ ու պրակտիկայում իսլամի դերի ու տեղի նկատմամբ հիմնական բևեռային մոտեցումների դերը: Ներկայիս պայմաններում այդ կողմնորոշումներից մեկի ընտրությունից են կախված քրիստոնեական Արևմուտքի և իսլամական Արևելքի քաղաքակրթական համակարգերի զուգամիտման կամ տարամիտման գործընթացները: Աշխարհականությունը, իսլամական իրավունքի ու քաղաքականության միասնական կենսատարածքային-քաղաքակրթական (արեալային-քաղաքակրթական) համակարգը կերպափոխելով պետությունների ներքաղաքական ու արտաքին քաղաքական հարաբերությունների իրավական կարգավորման ազգային համակարգերի, հնարավորություն է ստեղծում ավանդական հասարակությունների արդիականացման գործընթացի մեջ քաղաքակրթական արժեքների փոխներթափանցման համար: Այս ուղին հնարավորություն է տալիս մահմեդական պետությունների պետական իրավունքի մեջ միջազգային իրավունքի նորմերի ներմուծմամբ յուրացնելու մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության ազատական-ժողովրդավարական ստանդարտները: Մարդու իրավական պաշտպանության հիմքում դրված համամարդկային արժեքների ըմբռնման հարցում դիրքորոշումների մերձեցումը արդիականացած արևմտյան ու արդիականացող արևելյան քաղաքակրթությունների զարգացման զուգամիտության գնահատման առավել ընդհանրացված չափանիշներից մեկն է:

Թվում է՝ քաղաքակրթական համակարգերի զուգամիտման-տարամիտման հայեցակարգի հետազոտական գործիքայնությունը բավարար լիարժեքությամբ կարող է իրացվել «անհավատների» աշխարհի հետ մահմեդական ումմայի շփումներում առավել ցայտունորեն արտահայտված հակամարտության՝ «ջիհադի», կամ «սրբազան պատերազմի», վերլուծության ժամանակ: Այսպիսով՝ բազմամակարդակ քաղաքակրթական վերլուծության մեթոդաբանության մշակումն ստանում է առանձնակի կարևորություն, քանի որ հնարավորություն է տալիս արևմտյան գրակա-

էթնոքաղաքագիտական պրոբլեմատիկայի միջոցով անվտանգության վիճակի համակարգված քաղաքական-սոցիալական ու քաղաքագիտական վերլուծության վրա դրված յուրօրինակ «արգելքը»: Ուստի սոցիոլոգիական նյութի մի զգալի հատված կարող է մղվել հետին պլան, ինչպես նաև ոչ ճշգրիտ կերպով արտացոլվել քաղաքագիտության մեջ:

Ընտրված պրոբլեմի ուսումնասիրության կարևորությունը թելադրված է նաև ինքնիշխան Աֆղանստանի տարածքում ընթացող պատերազմին ԽՍՀՄ մասնակցության ողբերգական փորձով, ինչը հանգեցրեց այդ երկրի բնակչության շրջանում ծանր կորուստների և բացասական հետևանքներ ունեցավ Ռուսաստանի, նախկինում ԽՍՀՄ կազմում եղած այլ ինքնիշխան պետությունների կյանքի բոլոր կողմերի համար: Նման հակամարտությունները կանխատեսելու, դրանց լուծման օպտիմալ միջոցները պատեհաժամորեն գտնելու կարողությունը ռեալ և անհրաժեշտ հետազոտական խնդիր է:

Աֆղանստանում տեղի ունեցած պատերազմի վերլուծության հիման վրա ամբողջական քաղաքագիտական հայեցակարգի ձևավորումը հնարավոր կդարձներ էթնոքաղաքական իրողությունների վերլուծության բոլոր մակարդակների մեթոդաբանական միօրինակության ապահովումը: Դրա շնորհիվ կձևավորվեր միջքաղաքակրթական շփման պրոբլեմների բազմամակարդակ վերլուծության մոդել:

Խորհրդային հասարակության նկատմամբ այդ բազմակողմ մոդելի կիրառումը հնարավորություն կտար Խորհրդային Միությունը դիտելու որպես մի յուրահատուկ գաղափարախոսական քաղաքակրթություն, որը, միևնույն ժամանակ, չէր կորցրել իր պատմամշակութային անհամասեռությունը, մասնավորապես՝ կրոնական առումով: Այս պատճառով «վերակառուցողական արդիականացման» ընթացքում խորհրդային «քաղաքակրթությունը» տրոհվում էր «խորհրդային քրիստոնեական և իսլամական ենթաքաղաքակրթությունների», թեև նման զուգակցումը թվում է միանգամայն անհամատեղելի: Դրանցից յուրաքանչյուրի կառուցվածքը պայմանավորված է բարդ պետական-ազգային (միութենական հանրապետությունների մակարդակում) և վարչաէթնիկական (բոլոր տեսակի ինքնավարությունների մակարդակում) կազմով: Հասարակության խոր և դինամիկ վերափոխման ընթացքում տարաբնույթ՝ քաղաքական, գաղափարախոսական, տնտեսական, սոցիալական, հոգեբանական, մշակութային, հասարակական կապերի բարդ միահյուսումը էապես դժվարացնում է երկրում էթնոազգային զարգացման գործընթացների վերլուծությունը, առավել ևս՝ կանխատեսումը, ինչի վկայությունն է մեծ թվով և՛ խորհրդային, և՛ արտասահմանյան ուսումնասիրությունների ծախողումը:

Իրենց «ինքնուրույն», համընդհանուր տարբերակներով քրիստոնեական և իսլամական քաղաքակրթությունների շփման պրոբլեմի ուսումնասիրությունը, հնարավոր միջքաղաքակրթական համաձայնության որոնումը կարող են կատարվել մարդու իրավունքների հավասարության ճանաչման ու դրանց պաշտպանության հիմքում դրված արժեքների նկատմամբ իսլամական ու քրիստոնեական ավանդույթների կողմնորոշումների նմանության–տարբերության հիման վրա: Ընդհանրացնելով քրիստոնեական և իսլամական հասարակությունների՝ առաջին հերթին որպես պետական կազմավորումների միջքաղաքակրթական շփումների գերազանցապես համաձայնային զարգացման օբյեկտիվ նախադրյալները՝ մենք երևան ենք հանում աշխարհիականության և արմատականության՝ որպես մահմեդական պետությունների իրավաքաղաքական տեսության մեջ ու պրակտիկայում իսլամի դերի ու տեղի նկատմամբ հիմնական բևեռային մոտեցումների դերը: Ներկայիս պայմաններում այդ կողմնորոշումներից մեկի ընտրությունից են կախված քրիստոնեական Արևմուտքի և իսլամական Արևելքի քաղաքակրթական համակարգերի զուգամիտման կամ տարամիտման գործընթացները: Աշխարհիականությունը, իսլամական իրավունքի ու քաղաքականության միասնական կենսատարածքային-քաղաքակրթական (արեալային-քաղաքակրթական) համակարգը կերպափոխելով պետությունների ներքաղաքական ու արտաքին քաղաքական հարաբերությունների իրավական կարգավորման ազգային համակարգերի, հնարավորություն է ստեղծում ավանդական հասարակությունների արդիականացման գործընթացի մեջ քաղաքակրթական արժեքների փոխներթափանցման համար: Այս ուղին հնարավորություն է տալիս մահմեդական պետությունների պետական իրավունքի մեջ միջազգային իրավունքի նորմերի ներմուծմամբ յուրացնելու մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության ազատական-ժողովրդավարական ստանդարտները: Մարդու իրավական պաշտպանության հիմքում դրված համամարդկային արժեքների ըմբռնման հարցում դիրքորոշումների մերձեցումը արդիականացած արևմտյան ու արդիականացող արևելյան քաղաքակրթությունների զարգացման զուգամիտության գնահատման առավել ընդհանրացված չափանիշներից մեկն է:

Թվում է՝ քաղաքակրթական համակարգերի զուգամիտման-տարամիտման հայեցակարգի հետազոտական գործիքայնությունը բավարար լիարժեքությամբ կարող է իրացվել «անհավատների» աշխարհի հետ մահմեդական ումմայի շփումներում առավել ցայտունորեն արտահայտված հակամարտության՝ «ջիհադի», կամ «սրբազան պատերազմի», վերլուծության ժամանակ: Այսպիսով՝ բազմամակարդակ քաղաքակրթական վերլուծության մեթոդաբանության մշակումն ստանում է առանձնակի կարևորություն, քանի որ հնարավորություն է տալիս արևմտյան գրակա-

նության և իսլամական ավանդույթներում մշակված ջիհադի մոդելը լրացնելու պատերազմի կենսատարածքային-քաղաքակրթական և ազգային-պետական մակարդակներում միջքաղաքակրթական ու ներքաղաքակրթական հակամարտության էական առանձնահատկությունների, ինչպես նաև շարունակական միջցեղային պատերազմի էթնոքաղաքական յուրահատկության վերլուծությամբ:

Կա մեծաքանակ խորհրդային և արտասահմանյան գրականություն, որում լուսաբանվում են էթնոազգային բնույթի կոնկրետ երևույթներ ու գործընթացներ, ընդսմին ուսումնասիրվում են դրանց բարդ փոխազդեցությունները հասարակական զարգացման հիմնական՝ տնտեսական, քաղաքական, սոցիալական, հոգեբանական, մշակութային, ժողովրդագրական և բնապահպանական, գործոնների հետ: Արտասահմանյան հեղինակների ուսումնասիրած պրոբլեմների շրջանը հիմնականում կողմնորոշված է դեպի ազգային շարժումների գերազանցապես հակամարտային կողմերը, և ուշադրությունը հիմնականում բևեռվում է դրանց սոցիալական դետերմինացվածություն, ինչպես նաև քաղաքական ու գաղափարախոսական պրակտիկայի հարցերին: Դա Մ. Պարենտիի, Ռ. Ռոկետի, Զ. Ռոտշիլդի, Պ. Վան դեն Բերգեի, Դ. Քոտցեի, Զ. Մ. Յինգերի, Չ. Քեյեսի, Մ. Նեշի, Յու. Ռեցլերի, Զ. Ստեկի, Լ. Սնայդերի, Մ. Հեկտերի, Թ. Նեյռնի, Մ. Բլեկի, Գ. Զոններտի, Ն. Գլեյզերի, Ա. Սմիթի, Ք. Ռիիլամսի և այլոց աշխատություններն են:

Այս բնագավառում խորհրդային գիտության կոնկրետ-տեսական մոտեցումները ներկայացված են առաջին հերթին էթնոսոցիոլոգիական բնույթի աշխատություններով: Դա արդի ժամանակաշրջանում ԽՍՀՄ ժողովուրդների կյանքում տեղի ունեցող էթնիկական գործընթացների ուսումնասիրության նոր, վերջին տասնամյակներում Լ. Ա. Դրոբիժևայի, Ս. Ա. Հարությունովի և այլոց ուսումնասիրությունների շուրջ ձևավորված ուղղություն է, որը զուգակցվում է ազգագրության, պատմության ու սոցիոլոգիայի հետ միջգիտաճյուղային համագործակցությամբ:

Տարբեր մասնագիտությունների գիտնականների՝ փիլիսոփաների, պատմաբանների, ազգաբանների, մշակութաբանների, քաղաքագետների կողմից լուրջ մշակումներ են կատարվել համաշխարհային-պատմական զարգացման մշակութաբանական կողմերի իմաստավորման, մարդկության պատմության մեջ քաղաքակրթությունների դինամիկայի յուրահատկությունների վերլուծության ուղղությամբ: Այդ պրոբլեմների էթնոքաղաքական, այդ թվում՝ հակամարտաբանական, կողմերի քաղաքակրթական յուրահատկություններն ի հայտ բերելու առումով առանձնակի նշանակություն ունեն Մ. Ա. Բարգի, Ն. Ի. Կոնրադի, Ս. Ա. Հարությունովի,

Յու. Վ. Բրոմլեյի, Բ. Ս. Երասովի, է. Ս. Մարգարյանի, Ա. Վ. Ժուրավսկու, է. Ի. Սկակունովի և այլոց աշխատությունները:

1991 – 1992 թթ. լույս տեսան առաջին հոդվածները, մենագրությունները, հանդեսները, ժողովածուները, որոնք իրենց բովանդակությամբ մոտ էին մեր հետազոտության թեմային: Նշենք Ա. Կ. Գլիվակովսկու հոդվածաշարը՝ նվիրված Ռուսաստանի ազգային անվտանգության էթնոքաղաքագիտական պրոբլեմներին[2], Օ. Բ. Մուխամմետբերդիևի «Ազգային ինքնագիտակցություն (սոցիո-հոգեբանական վերլուծություն)» մենագրությունը[3] և «Հակամարտություններ և համաձայնություն» նոր հանդեսը[4]:

1980 – 90-ական թվականներին ազգամիջյան ոլորտում տեղի ունեցած և տեղի ունեցող իրադարձությունները ցույց են տալիս, որ խորհրդային գիտության կողմից ժամանակակից ազգային գործընթացների տեսական հարցերի մշակվածության մակարդակն ու խորությունը չեն համապատասխանում հասարակության ընթացիկ պահանջմունքներին: Դրա պատճառն առաջին հերթին այն է, որ խորհրդային մարքս-լենինյան հասարակագիտության դոկտրինալության պայմաններում բավարար չափով չէին վերլուծվում ազգային-էթնիկական զարգացման կատեգորիայի հետ կապված պրոբլեմները: Պատճառն այն էր, որ փուլային բնույթի օրինաչափությունների և տեղային-պատմական բնույթի առանձնահատկությունների հարաբերակցության չհայտնաբերվածության հետևանքով տվյալ կատեգորիան ընկալվում էր չափազանց պարզունակ ձևով:

Պետությունների և քաղաքակրթությունների էթնիկական հարաբերությունների անվտանգությանն սպառնացող հակամարտությունները, ճգնաժամները մարդկային կեցության իրողությունների մաս են: Ուստի թե՛ քաղաքական գիտության, թե՛ պրակտիկայի կարևոր պահանջմունքն է օբյեկտիվ տարերային գործոնների, ինչպես նաև մարդու ռացիոնալ գործունեությամբ պայմանավորված ու սոցիալական փիլիսոփայության մեջ «սուբյեկտիվ» համարվող գործոնների ինքնությունները պարզելու կարողությունը:

էթնոքաղաքական հակամարտությունների ավերիչ ներուժի և դրա ծայրահեղ դրսևորումների բազմաչափ բարդության հետևանքով հետազոտության աշխատանքային վարկածը ենթադրում է դիտարկվող հակա-

[2] Տես *А. К. Гливаковский.* Перестройка и цивилизационный фактор в СССР. "Кентавр", 1991, № 3, *նույնի՝* Национальная безопасность России и геополитика. "Кентавр", 1991, октябрь-декабрь, *նույնի՝* "Империя зла" развалилась--что дальше? Статья первая. "Москва", 1992, № 1:

[3] Տես *О. Б. Мухамметбердиев.* Национальное самосознание (социо-психологический анализ). М., 1992:

[4] Տես "Конфликты и консенсус: Прикладная политология". М., 1991, № 1:

մարտությունների բովանդակության ու գործառման մեխանիզմների միջգիտաճյուղային և բազմամակարդակ հետազոտության հնարավորություն՝ քաղաքակրթական մոտեցմամբ ընձեռված էվրիստիկական հնարավորությունների օգտագործմամբ: Ծայրահեղ միջքաղաքակրթական շփումների էթնոքաղաքագիտական հետազոտությունների արդյունքների արժանահավատությունն ապահովելու համար ենթադրվում է դրանց հիմնարար տեսական վերլուծության ու գործառման նկատմամբ ներգրավված հեղինակային դիտարկման մեթոդների համատեղում:

Տվյալ հետազոտության նպատակներն են. էթնոքաղաքագիտության՝ որպես էթնոքաղաքական երևույթների ու գործընթացների մասին տեսական ու գործնական գիտելիքների հասարակագիտական ճյուղի պրոբլեմների համախմբի որոշումը, նրա ապարատի և առարկայի ուրվագծումը, արդիականացող և արդիականացած քաղաքակրթությունների միջև շփումների հակամարտային-համաձայնային դինամիկայի ուսումնասիրության համալիր մեթոդաբանության մշակումը: Որպես տվյալ մեթոդաբանության գործիքային ըմբռնում է դիտվում էթնոքաղաքական երևույթների քաղաքակրթական, բազմամակարդակ վերլուծության՝ հեղինակի առաջարկած մեկնակերպը:

Հետազոտության նպատակն իրացվում է հետևյալ գիտական խնդիրների ձևակերպմամբ ու լուծմամբ:

1. էթնոքաղաքագիտական պրոբլեմների համալիր հասկացութային վերլուծություն ու նկարագրում միջքաղաքակրթական շփման գործընթացում հակամարտության–համաձայնության պրոբլեմների վերլուծական նկարագրության միջոցով:

2. էթնոքաղաքական պրոբլեմների լուծման տեխնոլոգիաների մեթոդաբանական փորձարկման վերլուծական-կառավարային գործիքարանի մշակում՝ էթնոքաղաքական պրակտիկայի շտկման, արտաքին ու ներքին ազգային անվտանգության ապահովման հետ կապված որոշումների պատրաստման և ընդունման նպատակով:

3. Հակամարտության–համաձայնության երևույթի երկմիասնության վերաբերյալ տեսամեթոդաբանական վարկածների և ըմբռնումների հետազոտության արժանահավատության ստուգում (վերիֆիկացում)՝ կոնկրետ գործընթացների ու երևույթների վերլուծության օրինակով:

Հետազոտության օբյեկտներն են 20-րդ դարի 80 – 90-ական թվականների սկզբում ԽՍՀՄ քաղաքական իրականությունը, Աֆղանական պատերազմում դիմամարտող կողմերի ուժերը:

Որպես հետազոտության առարկա հանդես են գալիս հակամարտությունների, համաձայնության որոնումների, արդիականացման հետ կապված

քաղաքական հաստատություններն ու գործընթացները, քաղաքակրթական գործընթացն ինքը, քաղաքակրթությունների շփումը, ազգային անվտանգության կայացման և ապահովման գործընթացը:

Հետազոտության տեսական ու մեթոդաբանական հիմքն են կազմում խորհրդային և արտասահմանյան քաղաքագետների, սոցիոլոգների, փիլիսոփաների և իրավագետների, պատմաբանների աշխատությունները: Հեղինակը, որը տվյալ թեմայով զբաղվել է ավելի քան տասը տարի՝, անհրաժեշտ է համարել մշակել իր ուրույն գիտական դիրքորոշումը, հնարավոր է՝ վիճահարույց:

Մենագրական հետազոտության գիտական նորույթն է.

– արդիականացող էթնոսոցիալական համակարգերում համաձայնության–հակամարտության էթնոքաղաքականության միջգիտաճյուղային քաղաքակրթական վերլուծությունը,

– քաղաքագիտական գիտաճյուղերում կուտակված հումանիտար գիտելիքի էվրիստիկական էթնոքաղաքագիտական ներուժի բացահայտումը, «հակամարտություն–համաձայնություն» ռեժիմով միմյանց հետ շփվող քաղաքակրթությունների զուգամիտման ու տարամիտման կարողությունների ինտենսիվ իմաստավորման մեթոդաբանական ու մեթոդական միջոցների և մոտեցումների հետազոտումը,

– քաղաքակրթական դինամիկայի տարբեր մակարդակներում ու վիճակներում «համաձայնության–հակամարտության» նույնականացման գործիքարանի կիրառման ժամանակ էթնոքաղաքագիտական տեսությունների իրացվելիության գիտափորձարկումը, քաղաքացիական համերաշխության, խաղաղարարության և, վերջին հաշվով, ազգային ու միջազգային անվտանգության ապահովման տեխնոլոգիաների ընտրության մեթոդաբանության մշակումը, ճգնաժամային իրավիճակների զարգացման դժվար կանխատեսելի ռեալ ներքին և արտաքին էթնոքաղաքական սցենարների մշակումը,

– ներքաղաքակրթական ու միջքաղաքակրթական շփման երկմիասնական համաձայնային–հակամարտային գործընթացի տեսական ու կիրառական համալիր հետազոտությունը,

– միջքաղաքակրթական շփումների էթնոքաղաքական կարգավորման համար համաձայնային նախադրյալների ձևավորման գործում կրոնաեկեղեցական գործունեության դերի վերլուծությունը երկու այնպիսի քա-

---

՝ Հեղինակը իր էթնոքաղաքական-էթնոքաղաքագիտական մշակումներն սկսել է Աֆղանստանում ԽՄԿԿ կենտկոմի դեսպանորդ-խորհրդականի և վերլուծաբանի առաքելության գործարկմամբ (1982–1983 թթ.):

ղաքակրթական համակարգերի օրինակով, ինչպիսիք են քրիստոնեությունը և իսլամը, քրիստոնեական ու մահմեդական աշխարհների իրավաքաղաքական հաստատությունների պատմական-էթնոքաղաքագիտական հիմքերի և արդիականացման դինամիկայի քննումը, ինչը հնարավորություն է տալիս նորամուծական առումով առանձնացնելու զուգամիտման–տարամիտման՝ որպես որոնյալ համաձայնության կրող կառուցվածքների հիմնական էթնոքաղաքական մեխանիզմները,

– սոցիալական աղետների պայմաններում էթնոքաղաքագիտության ու էթնոքաղաքականության փոխգործության բարդության ներկայացումը հեղինակի վերլուծական-կառավարային գործունեության* օրինակով: Հատուկ ուշադրություն է դարձվել ճգնաժամային իրավիճակներում հետազոտողների և քաղաքական գործիչների համագործակցության առանձնահատկությունների վերլուծությանը, ինչպես նաև այն պրոբլեմին, որը ծագում է, երբ մեկ անձում համատեղվում են էթնոքաղաքագիտական որոնումների և արդյունքների մեկնաբանման ազատություն ենթադրող հետազոտական շահերը և, մյուս կողմից, առավել հաճախ որոշումների ընդունման սուբյեկտների ղեկավար ցուցումների ու քաղաքական դոկտրինների հիման վրա իր էթնոքաղաքական պրակտիկան հարկադրաբար կառուցող քաղաքական գործիչը,

– Աֆղանստանում համընդհանուր պատերազմի ու ջիհադի սուբյեկտների միջև զինված առճակատման հարաբերությունների համաձայնային-հակամարտային ներուժի դաշտային քաղաքագիտական ու քաղաքական-սոցիոլոգիական հետազոտության մեթոդիկաների կիրառման յուրահատկության վերլուծությունը, որն ուղեկցվում է «զինված համաձայնության» ծեռքբերման սցենարների մշակմամբ ու կիրառմամբ:

Հետազոտության մեջ զարգացված տեսամեթոդաբանական դրույթներն ու գաղափարները զեկուցվել և քննարկվել են միջազգային, համամիութենական և տարածաշրջանային գիտական, գիտակիրառական խորհրդաժողովներում, սեմինարներում, խորհրդակցություններում, ստուգվել և ճշգրտվել են բանակցությունների և մասնագետների, քաղաքական ու ռազմական գործիչների հետ կատարված փորձաքննությունների ընթացքում: Դրանցից կարելի է առանձնացնել հետևյալ միջազգային միջոցառումները:

ԽՍՀՄ և ԱՄՆ-ի երիտասարդ քաղաքական առաջնորդների քաղաքագիտական սեմինար՝ «Ամերիկա-խորհրդային հարաբերությունները արդի տարածաշրջանային հակամարտությունների շուրջ» նստաշրջան

* Վերլուծական-կառավարային գործունեությունը հեղինակը Աֆղանստանի ժողովրդավարական Հանրապետությունում (ԱԺՀ) կատարել է վերլուծաբանի և խորհրդականի դերակատարումների զուգորդմամբ:

(Աննիստոնի համալսարան, Ալաբամա, ԱՄՆ, 1987 թ.), ԵԱՀԽ «Մարդկային չափում» միջազգային խորհրդակցություն՝ «Էթնոազգային հակամարտություններ» գիտական նստաշրջան (Մոսկվա, 1991 թ.), «Հասարակության ժողովրդավարացում և ռազմական անվտանգություն» միջազգային խորհրդակցություն՝ «Ռազմական անվտանգության մարդկային չափում» գիտական նստաշրջան (Մոսկվա, 1992 թ.), Աֆղանական պատերազմի վետերանների միջազգային հանդիպում Թբիլիսիում՝ Կովկասում ազգամիջյան հակամարտությունների կարգավորման հարցերով (Թբիլիսի, 1992 թ. հունիս):

Համամիութենական միջոցառումներ. Հայկական երկրաշարժի հետևանքների վերացման՝ համամիութենական ու հանրապետական մասշտաբներով ճգնաժամային կառավարման կազմակերպական արատորոշում (Լենինական, 1988 թ.), Հայկական ԽՍՀ-ում «Ազատ ձեռնարկչության գոտի» համամիութենական կազմակերպագործունեական խաղ (Երևան, Ծաղկաձոր, 1989 թ.), Ազգամիջյան հարաբերությունների պրոբլեմներով համամիութենական խորհրդակցություն ԽՄԿԿ կենտկոմին առընթեր ՄԼԻ-ում (Մոսկվա, 1989 թ.):

Տարածաշրջանային միջոցառումներ. Խորհրդային սոցիոլոգիական ասոցիացիայի Հայկական բաժանմունքի երկրորդ գիտաժողով՝ գիտական նստաշրջան (Երևան, 1986 թ.), Հայաստանի կոմկուսի կենտկոմի հուլիսյան և դեկտեմբերյան պլենումներ (Երևան, 1987 թ.), Սումգայիթի ջարդերի գոհ դարձած փախստականների կենսապահովման հարցերով բանակցություններ Հայկական և Ադրբեջանական ԽՍՀ-ների կառավարական պատվիրակությունների միջև (Հրազդան–Երևան, 1988 թ.), ԽՍՀՄ ՆԳՆ Ներքին զորքերի ստորաբաժանումների և Ստեփանակերտի քաղաքացիական բնակչության միջև տեղի ունեցած զինված ընդհարման պատգամավորական հետաքննություն (Ստեփանակերտ, ԼՂԻՄ, 1989 թ.), «Ազգային զարգացման ռազմավարություն» կազմակերպագործունեական խաղ (Բյուրական, 1990 թ.), «Զարգացման հաստատություն. ներքաղաքական կայունության պրոբլեմները տարածաշրջանային և միութենական առումներով» մեթոդաբանական սեմինար (Իրկուտսկ, ԽՍՀՄ ԳԱ Սիբիրի բաժանմունքի ՀԿ, 1991 թ.):

Գիտական կենտրոնների և կազմակերպությունների միջոցառումներ. ԽՍՀՄ ԱԳՆ-ի Դիվանագիտական ակադեմիայի Միջազգային հետազոտությունների մեթոդաբանության կենտրոնի մշտական փորձագիտական սեմինար՝ «Խորհրդային քաղաքական համակարգը. ամբողջատիրությունից դեպի ժողովրդավարություն» թեմայով գիտական նիստ (Մոսկվա, 1990 թ.), Միջազգային հարաբերությունների տեսության և մոդելավորման ասոցիացիայի մեթոդաբանական սեմինար՝ «Էթնոազգային հակամար-

տությունների ծագման գործոնները և լուծման սոցիալական տեխնոլոգիաները» թեմայով մեթոդաբանական սեմինար-գիտափորձաքննություն, ԽՍՀՄ ԳԱ Սոցիոլոգիական հետազոտությունների ինստիտուտ՝ ԽՍՀՄ ԳԱ Փիլիսոփայության ինստիտուտի հետ համատեղ (Մոսկվա–Վոստրյակովո, 1991 թ.), ԽՍՀՄ ԱԳՆ-ի ԴԱ-ի ՄՀՄԿ մշտական գիտափորձաքննական սեմինար՝ «Քաղաքակրթական մոտեցում և խորհրդային հասարակության արդիականացման պրոբլեմներ» թեմայով նիստ (Մոսկվա, 1991 թ.), ԽՍՀՄ ԱԳՆ-ի ԴԱ-ի ՄՀՄԿ և Կենտկոմին առընթեր ՀԳԱ-ի ՍՀԿ գիտամեթոդաբանական սեմինար «Էթնոազգային հակամարտություն. հայեցակարգ, կառուցվածք, մեթոդաբանություն» թեմայով (Մոսկվա, 1991 թ.):

Հետազոտության գործնական նշանակությունն ու իրացումն այն է, որ ԱԺՀ-ում հեղինակի գտնվելու շրջանում կիրառական, այդ թվում՝ դաշտային հետազոտությունները, առաջարկությունները և էթնոքաղաքական սցենարային մշակումները կազմել են խորհրդատվական ապարատի քաղաքական ղեկավարության կողմից ներկայացվող պաշտոնական զեկույցների բաղադրամասը, ինչպես նաև օգտագործվել են 1982 – 1983 թթ. ԱԺՀ-ում աշխատող քաղաքական ու զինվորական մասնագետների գործունեությունը կողմնորոշելու համար: Դրանց թվում են հետևյալ վերլուծական մշակումներն ու զեկուցումները. «Որոշ իսլամական հակահեղափոխական կազմակերպությունների և դրանց քայքայիչ քարոզչության հիմնական ուղղությունների համառոտ բնութագիր» (Քաբուլ, 1982 թ. օգոստոս), «ԱԺՀ ժողովրդական իշխանության դեմ պայքարող հակահեղափոխական կուսակցություններն ու կազմակերպությունները, դրանց գաղափարաքաղաքական պլատֆորմները» (Քաբուլ, 1983 թ. մարտ), «Արհմիութենական կազմակերպությունների խնդիրները՝ ուղղված կուսխորհրդականների ապարատի գործունեության արդյունավետության հետագա մեծացմանը» (Քաբուլ, 1983 թ. մարտի 22):

ԱԺՀ-ում տիրող ռազմաքաղաքական իրադրության ներգրավված դիտարկման արդյունքներն օգտագործվել են «ազգային համերաշխություն» նոր քաղաքական ուղեգծի մշակման շրջանակներում ընդդիմության և իշխանությունների միջև զինված պայքարը դադարեցնելու համար: Վերլուծական-կառավարական գործունեության այդ արգասիքները իրացվել են Փանջշիրի* ռազմաճակատի հրամանատար Ահմադ Շահ Մասուդի ազդեցության գոտում պատերազմող կողմերի միջև զինադադարի հաստատման մասին բանակցություններում (Չարիքար, Անավա, Ռուհա, Գյուլբահոր, 1982 – 1983 թթ.), «Ազգային համերաշխության» ուղեգծի

* Սույն գրքում աֆղանական տերմինների և գործիչների ազգանունների հայերեն գրության ձևը հնարավորինս մոտեցված է բնագիր լեզվում դրանց արտասանությանը՝ երբեմն հակասելով հայերենում ընդունված ուղղագրությանը: *Ծան.թարգմ.*:

մեթոդական գործիքարանի և ժողովրդական իշխանության հետ համագործակցող ընդդիմադիր զինված ջոկատների հրամանատարների առաջին Ձիրգայի նախապատրաստման գործում ներառվել է հեղինակի «Ժողովրդական իշխանության կողմը խազարական բնակչության զինված ջոկատների անցումն ապահովելու ուղղությամբ միջոցառումների կողմնորոշման սխեմա՝ Սայիդ Ջագրանի բանդկազմավորումներին համագործակցությանը մղելու վերաբերյալ առաջարկությունների օրինակով» մշակումը (Քաբուլ, 1983 թ. մարտ):

Հետազոտության նշանակալիությունն ապացուցելու համար կարելի է հիշատակել դրա արգասիքների իրացումը Ղարաբաղյան հակամարտությամբ ու Հայկական երկրաշարժով պայմանավորված սոցիալական լարվածության կարգավորման գործում: Այդ միջոցառումների թվում են՝ մասնակցությունը Սումգայիթի ջարդերի զոհ դարձած փախստականների կենսապահովման հարցով Հայկական և Ադրբեջանական ԽՍՀ-ների կառավարական պատվիրակությունների միջև բազմափուլ բանակցություններին, հայ փախստականների, տեղի հայ և ադրբեջանական բնակչությունների միջև հակամարտային հարաբերությունների կարգավորման շրջանային շտաբի ղեկավարումը, մի հանրապետությունից հարևան հանրապետություն տեղափոխվող հայ և ադրբեջանական ընտանիքների միջև բնակարանների կազմակերպված փոխանակման խնդրի ընդհանուր առմամբ հաջողված իրավաքաղաքական լուծումը (1988 թ.), Հրազդանի շրջանում տեղաբաշխված ԽՍՀՄ հատուկ նախանշանակման զինվորական ստորաբաժանումների և ադրբեջանական, ինչպես նաև հայկական քաղաքացիական բնակչության միջև հարաբերությունների խաղաղ կարգավորման համար ժողովրդական դիվանագիտության միջոցների ձևավորումն ու գործունեության վերահսկումը, ընդդիմադիր ուժերի և պաշտոնական իշխանության ներկայացուցիչների միջև բանակցությունների «կլոր սեղանի» ստեղծումը և դրան որոշ խորհրդակցական-կառավարային իրավունքների փոխանցումը (Հրազդան և Չարենցավան, 1988 թ. մարտ):

Հայաստանում երկրաշարժից հետո ստեղծված իրադրության ճգնաժամային կառավարման վերլուծության արդյունքները իրացվեցին Երկրաշարժից տուժած ընտանիքների տարահանման համամիութենական շտաբի ստեղծմամբ, որի կազմում հեղինակը՝ որպես Հայաստանի կոմկուսի կենտկոմի լիազոր, համադասում էր հանրապետական ու միութենական քաղաքացիական, ինչպես նաև զինվորական ծառայությունների փոխգործությունը (1988 թ. դեկտեմբեր– 1989 թ. մարտ):

ԽՍՀՄ-ում, այդ թվում՝ Անդրկովկասյան տարածաշրջանում, տեղի ունեցող էթնոքաղաքական գործընթացների հակամարտաբանական վերլու-

ծության արդյունքներով արված եզրակացություններն ու առաջարկությունները ներկայացվել են ՀԿԿ ԿԿ անդամի պաշտոնական զեկուցագրերում և Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավորի պատգամավորական հարցապնդումներում. «ԼՂԻՄ-ում հանրաքվե անցկացնելու մասին», «Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի ընդհատված նստաշրջանի վերսկսման անհրաժեշտության մասին», «Ընդդիմության հետ քաղաքական երկխոսության մասին», «ԽՄԿԿ սոցիալ-ժողովրդավարական վերակառուցման հարցի շուրջ», ««Ազատ ձեռնարկչության գոտի» կազմակերպագործունեական խաղի անցկացման անհրաժեշտության վերաբերյալ» (1988 – 1989 թթ.), «ԽՄԿԿ 28-րդ համագումարի նախապատրաստման ընթացքում Հայաստանի և Ադրբեջանի կոմկուսների կուսմարմինների նյութերի համեմատական իրավաքաղաքական վերլուծություն» (1990 թ.):

«Համաձայնության – հակամարտության» պրոբլեմների էթնոքաղաքագիտական մշակման որոշ արգասիքներ օգտագործվել են 1989 թ. հոկտեմբերի 10-ին Ստեփանակերտի խաղաղ բնակչության հետ ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի շարասյունի զինված ընդհարման կարգավորման ժամանակ: ԼՂԻՄ-ի հատուկ կառավարման կոմիտեի հետ համատեղ այդ արգասիքներն իրացվել են հետաքննության և կողմերի խաղաղեցման ժամանակ, երբ հեղինակը իրականացնում էր Լեռնային Ղարաբաղում Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի հանձնաժողովի արտագնա խմբի ղեկավարի առաքելությունը (Երևան–Ստեփանակերտ, 1989 թ. նոյեմբեր):

ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս Վ. Մ. Մատրոսովի, պրոֆեսորներ է. Ի. Սկակունովի և Ժ. Տ. Տոշչենկոյի ղեկավարությամբ կատարված էթնոքաղաքական հակամարտության և քաղաքական կայունության ուսումնասիրությունների առանձին արգասիքներ մարմնավորում են ստացել ԽՍՀՄ ԱԳՆ-ի ԴԱ-ի ՄՀՄԿ «էթնոազգային հակամարտություն» և «Կայունություն» գիտահետազոտական նախագծերի (1990 – 1992 թթ.), ինչպես նաև ԽՄԿԿ կենտկոմին առընթեր ՀԳԱ-ի ՍՀԿ նյութերի պատրաստման ժամանակ:

Գլուխ 1

ԷԹՆՈՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Մեր հասարակության պատմության նոր փուլը, որը մեր երկիրը թևակոխեց 20-րդ դարի 80-ական թվականների երկրորդ կեսին, սկզբնավորեց ԽՍՀՄ-ում ձևավորված մեծ թվով հիմնարար հասարակական կառույցների ու կապերի արմատական փոփոխությունը, կյանքի կոչեց ու գործարկեց սոցիալական փոխգործության մեխանիզմները, որոնք ունակ էին ձևափոխելու սոցիալական, այդ թվում՝ ազգային-էթնիկական, զարգացման տասնամյակների ընթացքում ձևավորված որոշ միտումներ: Հասարակության մեջ տեղի ունեցող փոփոխությունների առաջին արդյունքներից էին ազգային և էթնիկական ինքնագիտակցության համատարած բուռն աճը, տարբեր բնույթի ու երանգի ազգային շարժումների զարգացումը, ազգամիջյան հակասությունների սրումն ընդհուպ մինչև ամբողջ երկիրը ցնցող հակամարտություններ: Հասարակության կյանքի ազգային-էթնիկական գործոնն անցավ այն երևույթների շարքը, որոնք գրավեցին ինչպես քաղաքական գործիչների ու գիտնականների, այնպես էլ լայն հասարակության համընդհանուր ուշադրությունը:

ԽՍՀՄ աղետալի փլուզումը, ԱՊՀ-ի դժվար կանխատեսելի ապագան, ազգային հակասությունների սրությունն ու խորությունը առանձնակի ուժով և ակներևությամբ շեշտեցին, մի կողմից, տեղի ունեցող գործընթացները բացատրելու ունակ հիմնարար տեսության անհրաժեշտությունը, մյուս կողմից՝ նման հետազոտությունների սուր պակասը, թեև առկա էր ինչպես խորհրդային, այնպես էլ արտասահմանյան հասարակագետների՝ ազգային պրոբլեմներին նվիրված հրապարակումների առատություն:

§ 1. ԷԹՆՈՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊՐՈԲԼԵՄԱՏԻԿԱՆ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹԱՅԻՆ ԱՊԱՐԱՏԸ

«Էթնոքաղաքականություն» տերմինը կարող է դրվել գիտական ու հրապարակախոսական նորաբանությունների շարքը. այն սկսեցին օգտագործել համեմատաբար վերջերս՝ 1960-ական թվականներին: Մասնավորապես՝ ամերիկացի քաղաքագետ Մ. Պարենտին այն օգտագործեց՝ փորձելով պարզել մարդկանց էթնիկական պատկանելության և քաղաքական գերակայությունների փոխկապվածության հարցը[5]:

[5] Տես *M. Parenti.* Ethnic politics and persistence of ethnic identification. "The American political science review". 1967, Vol. 61, № 3:

1970-ական թվականներից նման հետազոտություններն սկսեցին ավելի ու ավելի մեծ չափով կողմնորոշվել դեպի ազգային գործընթացների սոցիալական հիմքերի ընդունում: Հետազոտությունների շրջանի ընդլայնումը, դրանց բնորոշ յուրահատուկ հայեցակարգային մոտեցումների ձևավորումը նպաստեցին արևմտյան հասարակագիտության ոլորտում նոր ամբողջական ուղղության՝ էթնոքաղաքականության* ձևավորմանը:

Խորհրդային գրականության մեջ ընդունված գիտական տերմինաբանության ավանդույթների հաշվառմամբ ավելի տրամաբանական ու ստույգ է թվում «էթնոքաղաքականության» դիտարկումը զուտ որպես ռեալ քաղաքական կյանքի երևույթի և «քաղաքական գիտության» ուսումնասիրության օբյեկտի: Իսկ այն տերմինների ստեղծումն ու կիրառումը, որոնք պարզաբանում են «էթնիկական քաղաքականության» գիտականորեն արտացոլված, ճանաչված կողմերը և վերաբերում են տվյալ երևույթի մասին գիտելիքների համակարգին, ավելի նպատակահարմար է կատարել «քաղաքականություն»–«քաղաքագիտություն» կատեգորիաների հանդիպակացության մոդելով:

Առաջարկվող մոտեցման դեպքում մասնավոր-գիտական հասարակագիտական ոլորտների պահանջմունքների տեսակետից կառուցվում են երկու շարք հասկացություններ: Դրանցից մեկը՝ էթնոքաղաքականություն, էթնոքաղաքական և այլն, արտացոլում է էթնիկական խմբերի քաղաքական կյանքի ռեալ երևույթները: «Հանդիպակաց» շարք են կազմում այնպիսի հասկացությունները, ինչպիսիք են էթնոքաղաքագիտությունը, էթնոքաղաքական սոցիոլոգիան, էթնոքաղաքական հոգեբանությունը, էթնոքաղաքական հակամարտաբանությունը և այլն:

1980-ական թվականների սկզբին ամերիկացի հետազոտող Ռ. Ռոկետը էթնոքաղաքականության առարկայական բնագավառի ձևավորումը կապում էր փոքրամասնությունների էթնիկապես յուրահատուկ խմբային գծերի ուսումնասիրության հետ, մասնավորապես՝ այնպիսի գծերի, ինչպիսիք են միասնականալու ձգտումը և ընդհանուր ինքնագիտակցությունը[6]:

Նրա հայրենակից և գործընկեր, Կոլումբիայի համալսարանի պրոֆեսոր Զ. Ռոտշիլդը շեշտում էր, որ հետազոտողների ուշադրությունը «երբեք կենտրոնացած չի եղել միայն զուտ էթնիկական ինքնության կամ էթնոմշակութային արժեքների վրա, այլ՝ առաջին հերթին դրանց հնարավոր

* Հարկ է նշել, որ անգլալեզու գիտական գրականության մեջ օգտագործվում է Ethnopolitics (էթնոքաղաքականություն) տերմինը, որը համարժեք է հայերենի «էթնոքաղաքագիտություն» տերմինին:

[6] Տես *R. Rockett.* Ethnic nationalities in the Soviet Union. Sociological perspective on a historical problem. N. Y., 1981, P. 11:

(թեև ամենևին էլ ոչ անխուսափելի) քաղաքականացման վրա, որը դրսևորվում է բախումների և կարգավորումների ձևով, առանց ինչի դրանք վերածվում են բռնության»[7]: Եվ այսպես. «էթնոքաղաքականության» հեղինակի կարծիքով, մի աշխատության, որը մասնագետների գնահատմամբ էթնոքաղաքագիտության հայեցակարգերի ձևավորման առումով փուլային էր, և որի դրույթներն ու հասկացությունները լայն կիրառություն են ստացել էթնոազգային շարժումների ու հակամարտությունների պրոբլեմների հետազոտություններում, տվյալ գիտաճյուղի ուշադրության կենտրոնում են «էթնիկականության քաղաքական չափումը և քաղաքական-կառուցվածքային բովանդակությունը»[8]:

Զ. Վաշինգտոնի համալսարանի սոցիոլոգիայի և մարդաբանության պրոֆեսոր Փ. Վան դեն Բերգեն առանձնացնում է էթնոքաղաքագիտական հետազոտությունների առարկայական բնագավառի ևս մեկ ոլորտ: Նրա կարծիքով՝ էթնոքաղաքականության մեջ առանցքային են պետության փոխհարաբերությունները ոչ հավասար վիճակում գտնվող էթնիկական խմբերի հետ: Հեղինակը, այդ անհավասարությունը չայայնանավորելով միայն տնտեսական տարբերություններով, էթնոքաղաքական հարաբերություններում գլխավոր է համարում իշխանության հարցը: «Այսպիսով՝ էթնիկական քաղաքականությունը իշխանության, հատկապես՝ պետական իշխանության, կիրարկումն է էթնիկորեն կամ մարդաբանորեն (ըստ ռասայական հատկանիշների) դետերմինացվող և տարբերակվող խմբերի նկատմամբ»[9]: Ուստի ուսումնասիրել էթնոքաղաքականությունը՝ նշանակում է ուսումնասիրել հասարակական շահի այն պարզ, գործնական ու նյութապաշտական աքսիոմը, որ ցանկացած քաղաքական խաղ իշխանության օգտագործում է եսասիրական շահերի բավարարման նպատակով:

«Էթնոքաղաքականություն» տերմինը ենթադրում է, որ այստեղ գլխավոր գործող անձի դերում հանդես է գալիս էթնիկական հանրությունը (էթնիկական խումբը), որը հետապնդում է որոշակի քաղաքական նպատակներ: Հարկ է նկատի ունենալ, որ արևմտյան հասարակագիտության մեջ «էթնիկական խումբ» հասկացության հետ մեկտեղ լայնորեն օգտագործվում է «էթնիկականությունը», որը շատ ավելի բովանդակալից է և ներառում է ոչ միայն մարդկանց որոշակի հանրությունը, այլև էթնիկական ինքնագիտակցությունը, էթնիկական յուրօրինակությունը, ինչը հնարավորություն է տալիս տվյալ տերմինը ճկուն կերպով օգտագործելու այն

[7] *J. Rotschild.* Ethnopolitics: A conceptual framework. N. Y., 1981, P. 247.

[8] Նույն տեղում:

[9] *P. Van den Berghe.* Protection of ethnic minorities: A critical appraisal "Protection of ethnic minorities". N. Y., 1981, P. 2.

իրավիճակներում, երբ նկատելի դեր է խաղում փոքրամասնությունների էթնիկական յուրահատկությունը: Էթնոքաղաքականության հենց այդ հիմնական «դերակատարին»՝ «քաղաքականացված էթնիկականությունը», Զ. Ռոտշիլդը սահմանում է որպես քաղաքական ասպարեզում ի հայտ եկած նոր գործող անձի, որն իր մեջ կրում է գոյություն ունեցող հասարակական հաստատությունների և ընդհանուր առմամբ պետության դեմ ուղղված սպառնալիք[10]:

Միևնույն ժամանակ, չի կարելի անտեսել այն հանգամանքը, որ տարաբնույթ հակամարտային իրավիճակներում էթնիկական խմբերից ոչ պակաս դեր է խաղում պետությունը, իսկ եթե հաշվի առնենք վերջինիս ավելի մեծ նյութական, քաղաքական, ռազմական և այլ տեսակի ռեսուրսները, ապա նա հանդես է գալիս որպես էթնոքաղաքականության առնվազն հավասար սուբյեկտ:

Էթնոքաղաքականության սուբյեկտների որոշման ընթացքում արևմտյան հասարակագետները հանգեցին նախկինում ընդունված տերմինաբանական ապարատի կատարելագործման անհրաժեշտության, քանի որ այն ոչ լիարժեք կերպով էր հաշվի առնում էթնոքաղաքական իրավիճակների ամբողջ բարդությունն ու բազմապիսությունը: Այդ իրավիճակների համար կարևոր են հետևյալ պարամետրերը. ունի են դիմակայում «քաղաքականացած էթնիկականությունները», ունի շահերին են նրանք բախվում:

Սովորական է թվում այն թեզի վրա հիմնվող պատասխանը, թե էթնիկական փոքրամասնությունները հակամարտում են պետության հետ՝ հակադրվելով վերջինիս շահերին: Էթնոքաղաքականության մեջ, պետությունից բացի, որպես գործող անձ հանդես է գալիս նաև ազգը: Այն ընդունված է սահմանել որպես քաղաքականապես գիտակցված էթնիկական հանրություն, որն իրավունք է ներկայացնում պետականության նկատմամբ:

Եթե պետությունը գրեթե բացառապես բաղկացած է մեկ ազգի ներկայացուցիչներից, ապա ազգը և պետությունը, իրենց բոլոր էութենական տարբերություններով հանդերձ, կարող են արտացոլված լինել «ազգ-պետություն» կոչվող մեկ միասնական հասկացության մեջ: Պետությունների մի զգալի մասը կազմում են բազմազգ և բազմաէթնիկ կազմավորումները[11]:

Համակողմանի գիտական քննարկումների ընթացքում «ազգ-պետություն» հասկացությունը արժանացավ արևմտյան սոցիոլոգների ու քաղաքագետների լայն շրջանների հավանությանը, թեև էթնոքաղաքականության այնպիսի սուբյեկտի սահմանման նկատմամբ, ինչպիսին ազգն է, մասնագետների մոտեցումները շարունակում են մնալ ոչ միանշանակ: Որոշ հետազոտողներ ազգը բնութագրում են որպես ինքնագիտակցվող քաղաքական հանրություն[12]: Իրենց արդիականությունը չեն կորցրել նաև սոցիոլոգիական մեկնությունները: Ըստ դրանց՝ ազգը «կոլեկտիվ կյանքի սոցիալական երևույթ է՝ օժտված որոշակի մակարդակով միջսուբյեկտային գիտակցությամբ, որը հնարավոր չէ հանգեցնել նրա գոյության միայն օբյեկտիվ պայմաններին (տարածք, սոցիալական կառուցվածք, ծագման ընդհանրություն, լեզու, մշակույթ) կամ այլ մակարդակներով միջսուբյեկտային գիտակցության»: Այստեղ «ազգն» ըստ բավականաչափ լայն սպեկտրով բնութագրիչների նույնացվում է «հասարակության» հետ[13]:

Հատկանշական է ազգի հասկացության հանգեցումը «քաղաքական էությանը», որը կատարել է հարավաֆրիկացի քաղաքագետ Դ. Քոտցեն (Ստելենբոշի համալսարան): Այս հետազոտողի մեկնաբանությամբ՝ ազգն այն մարդկանց խումբն է, որոնք իրենց համարում են քաղաքական միասնություն և ձգտում են քաղաքական ինքնորոշման, այսինքն՝ իրենց ինքնիշխան անկախ պետության ստեղծման[14]:

«Ազգ» հասկացության սահմանման բոլոր երանգավորումներով հանդերձ՝ արևմտյան քաղաքագետները միակարծիք են այն բանում, որ ընդունում են դրա անխզելի կապը պետական-քաղաքական կազմավորման հետ: Նման եզրակացության համար համոզիչ ապացույց կարելի է համարել այնպիսի զանգվածային և Արևմուտքում հեղինակություն վայելող հրատարակությունները, ինչպիսիք են քաղաքագիտական տեղեկատուները, որոնցում «ազգ-պետություն» տերմինն արդեն ստացել է մեծ տարածում:

Արտասահմանյան հասարակագիտության մեջ ավելի խայտաբղետ են մոտեցումները «էթնիկական խումբ» և «էթնիկականություն» հասկացությունների նկատմամբ: Ամենալայն գիտական շրջանների ուշադրությունը այդ երևույթների վրա բևեռվեց 1970-ական թվականներին՝ զարգացած երկրներում բուռն «ազգային վերածննդի» շրջանում: Միևնույն ժամանակ, մասնագետների գնահատմամբ, 1970-ական թվականներին ավանդական հասարակությունների սոցիալական կազմակերպության այնպիսի ձևեր, ինչպիսիք են ցեղերը, առանձին բնակավայրերը, մեկուսացած համայնքները, ենթարկվեցին խորքային կերպափոխումների՝ վե-

[10] Տես *Զ. Ռոտշիլդ*, Նշ. աշխ., էջ 7:

[11] Տես *P. Van den Berghe*. The ethnic phenomena. N. Y., 1981, PP. 6 – 8:

[12] Տես *B. Anderson*. Imagined communities: Reflection of the origin and spread of nationalism. L., 1983, P. 15:

[13] Տես *E. Tiryakian, N. Venitte*. Nationalism and modernity. N. Y. New nationalism of the developed West. Boston etc., 1985, PP. 65 – 66:

[14] Տես *D. Kotze*. Nationalism: A comparative study. Cape Town: Tafelberg, 1981, PP. 6 – 8:

րածվելով էթնիկական միավորումների, ինչի հետևանքով էթնիկականությունը դարձավ «համընդհանուր երևույթ»[15]: Դրա ուսումնասիրության համար պահանջվեց մշակել նոր մոտեցումներ, առաջին հերթին՝ միջգիտաճյուղային, ընդսմին ներգրավվեցին այնպիսի գիտաճյուղեր, ինչպիսիք են սոցիոլոգիան, մարդաբանությունը, պատմությունը, քաղաքագիտությունը, հոգեբանությունը:

Թեև էթնիկականության բոլոր սահմանումներին բնորոշ են մասնավորգիտական յուրահատկությունն ու տեսական ընդհանրացման մակարդակների տարբերությունը, այդուհանդերձ դրանց համար ընդհանուր է «մենք–նրանք» հակադրության իմաստավորումը:

Սոցիոլոգիայի և մարդաբանության ամերիկացի պրոֆեսոր Ջ. Մ. Յինգերը 1970-ական թվականների կեսերին առաջարկեց էթնիկական խմբի սահմանման հետևյալ չափանիշները. «1) տվյալ խումբը համարել մյուսներից տարբեր ըստ հետևյալ հատկանիշների՝ լեզու, կրոն, ռասա, նախնիների հայրենիք և մշակութային ժառանգություն, 2) խմբի անդամները ևս իրենց համարում են մյուսներից տարբեր, և 3) նրանք ընդհանուր գործունեությանը մասնակցում են ընդհանուր ծագման (իրական կամ առասպելական) և ընդհանուր մշակույթի հիման վրա»[16]: Այս գործոններից յուրաքանչյուրը, նշում է Յինգերը, փոփոխական է, հետևաբար նման սահմանման հիման վրա կարելի է մշակել «էթնիկականության սանդղակ»՝ «լիակատարից» մինչև «զրոյական»:

էթնիկական խմբի լայն սահմանում է տալիս Ա. Սմիթը իր «Ազգայնականության դիֆուզիա. պատմական և սոցիոլոգիական որոշ հեռանկարներ» աշխատության մեջ. «էթնիկական խումբը մի միավորում է, որը հայտարարում է իր բոլոր անդամների ընդհանուր ծագման ու պատմության մասին, և որը, այդ ավանդույթի հետևանքով, ունի մշակույթի ընդհանուր գծեր և ընդհանուր տարածք, ինչպես նաև բնութագրվում է խմբի անդամների միջև համերաշխության զգացումով: Այս տեսակի պատմամշակութային կազմավորումներ գոյություն ունեն նոր քարի դարի շրջանից, և, քանի դեռ կրոնն էր պայմանավորում մշակույթը, նման խմբերում ծագման մասին հերոսական առասպելը սերտորեն միահյուսվում էր աստվածային նախանշանակման և այլ խմբերի համեմատությամբ ավելի բարձր արժանապատվության զգացումի հետ»[17]:

[15] Տես *B. Williams*. Class act: Anthropology and race to nation across ethnic terrain. "Annual review of anthropology". Palo Alto (Col.), 1989, Vol. 18, P. 422:

[16] *J. M. Yinger*. Ethnicity of complex societies: Structural, cultural and characterological factors. "The uses of controverse in sociology". N. Y., L., 1976, P. 200.

[17] *A. Smith*. The diffusion of nationalism: Some historical and sociological perspectives. "Brit. J. of sociology". L., 1978, Vol. 29, № 2, P. 245.

էթնիկականության սահմանման նկատմամբ մշակութաբանական մոտեցումը իր դիրքերը պահպանեց նաև 1980-ական թվականներին կատարված հետազոտություններում: Այսպես. ամերիկացի մարդաբան Չ. Քեյեսը համարում էր, որ հենց մշակութային ժառանգության վերլուծությունը գիտնականներին հնարավորություն կտա ի հայտ բերելու էթնիկականության «նախասկզբնական հատկությունը», որը դրսևորվում է հասարակության բոլոր անդամների կողմից ընդունվող մշակութային յուրահատկության մշտական պահանջմունքի ձևով: Քեյեսի տեսակետից էթնիկականության նախասկզբնական հատկությունը պայմանավորված է որոշակի համակարգում «ծագման գործոնով» և մշակութային տարբերակվածության մշտական չափանիշների առկայությամբ[18]:

էթնիկականության առավել «ընդարձակ» մարդաբանական սահմանումներից մեկը, ձևակերպված 1980-ական թվականների վերջերին, պատկանում է ամերիկացի ականավոր գիտնական Մ. Նեշին: Նրա կարծիքով՝ ժամանակակից աշխարհում էթնիկականությունն առավել վառ է արտահայտվում հետևյալ երեք դրսևորումներով: Նրա գլխավոր «խորհրդանշական գծանշիչն» է անվանումը (ինքնանվանումը), որը գործում է նմանատիպ անվանումների ամբողջական համակարգում: Նման համակարգը ոչ միայն «ուրվագծում» է խմբերի սահմանները, այլև հաստատագրում դրանց ենթակարգությունը, տնտեսական, քաղաքական ու բարոյական կարգավիճակները:

էթնիկական սահմանների սովորական գծանշիչ է նաև մշակութային տարրերի համախումբը, որը ներառում է ազգականության համակարգերը, խմբի կողմից կայուն կերպով պահպանվող սննդային առանձնահատկությունները, կրոնական պաշտամունքը: Դա արյան, կյանքի նյութական հիմքերի և աստծո միասնականության մի յուրահատուկ փոխաբերություն է: Տվյալ տրիադը որոշիչ է էթնիկական խմբի տարբերակման համար, քանի որ ոչ միայն գծանշում է նման խմբերի սահմանները, այլև դրանք առանձնացնում մյուս բոլոր տեսակների սոցիալական միավորումներից: Իրենց նշանակությամբ երկրորդային նշացույցների տրիադ են կազմում ընդհանուր մշակութային համատեքստում իմաստավորված արտաքին տեսքի առանձնահատկությունները (մարդաբանական բնութագրիչներ, հագուստի յուրահատկություն) ու լեզուն[19]:

էթնիկականության միջգիտաճյուղային հետազոտության դեպքում հնարավոր է տալ էթնիկական խմբի «երկակի»՝ միաժամանակ մշակութաբանական և իրավիճակային, սահմանում: Այսպես. Ա. Քոենի սահման-

[18] Տես *Բ. Ռեիչման*, Նշ. աշխ., էջ 419:

[19] Տես *M. Nash*. The cauldron of ethnicity in the modern world. Chicago, L., 1989, P. 12:

մամբ՝ էթնիկական խումբը «այնպիսի մարդկանց հանրություն է, որոնք ընդունում են վարքի որոշակի նորմեր և կազմում են ավելի ծավալուն սոցիալական ամբողջի մաս»[20]: Էթնիկական խումբը փոխգործում է այլ հանրությունների հետ միասնական սոցիալական համակարգի շրջանակներում:

Նման մոտեցումը ենթադրում է էթնիկականության հարաբերակցում հասարակության սոցիալ-դասակարգային բնութագրերի հետ: Արևմտյան հասարակագիտության մեջ այս հարցի վերաբերյալ կարծիքների սպեկտրը շատ լայն է: 1970-ական թվականների սկզբին փորձեր արվեցին էթնիկականությունը և հասարակության դասակարգային բաժանումը դիտելու որպես սոցիալական շերտավորման երկու ձև, որոնց միջև պատմական, բնապահպանական-տեխնոլոգիական և քաղաքական պայմանների հետևանքով հնարավոր են ինչպես առճակատում, այնպես էլ հաճախակի՝ խաղաղ գոյակցում[21]:

Իսկ ընդհանուր առմամբ 1970 – 1990-ականների սկզբի հասարակագիտական, հատկապես՝ քաղաքագիտական, գրականությանը բնորոշ է «էթնիկականի» և «դասակարգայինի» ավելի կոշտ հակադրումը՝ առաջինի գերակա դերի ընդունմամբ: Այս առումով հատկանշական է արևելաեվրոպական տարածաշրջանում (առանց ԽՍՀՄ-ի) տիրող էթնոքաղաքական իրավիճակի գնահատումը, որ կատարել է Յու. Ռեցլերը: Նա պնդում էր, որ 1980 թ. Արևելյան Եվրոպայում դասակարգային տարբերությունները դուրս են մղվում էթնիկական տարբերություններով, ինչը պայմանավորված է էթնիկական գիտակցության բարձր մակարդակի զարգացմամբ: Հատկապես արտաքին սպառնալիքի առկայության պայմաններում այն գերակշռում է դասակարգային նույնականության նկատմամբ[22]:

Քննադատության համար, հատկապես՝ սոցիալիզմի ժամանակ դասակարգերի ոչ անտագոնիստական էության մասին մարքսիստական դրույթի դիրքերից, խոցելի տվյալ արտահայտությունը այդուհանդերձ բացատրելու կարիք չունի:

1980-ական թվականներին էթնիկականության պրոբլեմին վերաբերող հետազոտությունների թվի բուռն աճը, հասարակության սոցիալական կազմակերպվածքի քաղաքական ու տնտեսական պարամետրների համար դրա նշանակության հայտնաբերումը, հետազոտական մեթոդիկա-

[20] Տես *Բ. Ռեիչման*, Նշ. աշխ., էջ 416:

[21] Տես *L. A. Despres*. Toward a theory of ethnic phenomena. "Ethnicity and resource competition in plural societies", P., 1975, PP. 187–207:

[22] Տես *J. Rezler*. Economic and social differentiation and ethnicity. "Ethnic diversity and conflict in Eastern Europe". Santa Barbara (Cal.): ABC-Cliv., 1980, PP. 280 – 281:

ների կատարելագործումը աներկբայորեն վկայում են, որ «դասակարգ», «ռասա», «էթնիկականություն», «մշակույթ» տիպի սոցիալական իրողությունների հարաբերակցությունը շատ ավելի բարդ է, քան պատկերացվում էր մինչ այդ:

Օրինակ՝ արդեն հիշատակված ամերիկացի հետազոտող Ա. Քոենը հատուկ ուշադրություն է դարձնում ժամանակակից արդյունաբերական հասարակության «շերտավորման քաղաքականության» մեջ էթնիկականության դերին, երբ հասարակության մեջ խմբի զբաղեցրած դիրքն զգալի չափով պայմանավորված է «հասարակական աշխատանքի բաշխմանը» նրա մասնակցությամբ և ըստ այդմ ստացված եկամտի մասով[23]:

Քաղաքականության ու դասակարգային պատկանելության, էկոնոմիկայի, մշակույթի և էթնոսի հետ կապված էթնիկականությունը, Մ. Նեշի կարծիքով, տարբեր տեսակի հակամարտություններում իր ունեցած դրսևորումներում չի կարող լինել քաղաքական, տնտեսական կամ մշակութային, կամ այդ բոլորը միաժամանակ[24]:

Ամերիկացի սոցիոլոգ Զ. Ստեկը էթնիկական խմբի՝ որպես էթնոքաղաքականության սուբյեկտի առավել կարևոր առանձնահատկություն է համարում արտահայտված խմբային պատկանելությունը (կամ նույնականությունը) և էթնիկական կապերի մեծ հոգեբանական արժեքավորությունը: Հետազոտողի կարծիքով՝ էթնիկական խումբը կարող է ազդու գործիք դառնալ իշխանության, կարգավիճակի, բարեկեցության համար մղվող պայքարում[25]:

Էթնիկական խմբի գործողությունները կարող են այս կամ այն հասարակության էթնիկական բաժանմանը համապատասխան ծավալվել շատ լայն տիրույթում՝ սկսած զուտ խորհրդանշական բնույթի մշակութային միջոցառումներից մինչև բոլոր սոցիալական ոլորտներում կոշտ գերիշխում: Ներպետական պայքարում էթնիկական խումբը կարող է համապատասխանել քաղաքական դասակարգին և մղել էթնիկական գաղափարախոսությամբ ուժեղացված դասակարգային պայքար[26]:

Էթնոքաղաքականության սուբյեկտների կողմից իրենց ներքին և արտաքին քաղաքական շահերի սպասարկմանը ծառայեցվող գաղափարախոսությունների էության ըմբռնման նկատմամբ մոտեցումները ևս

[23] Տես *Բ. Ռեիչման*, Նշ. աշխ., էջ 414:

[24] Տես *Մ. Նեշ*, Նշ. աշխ., էջ 127:

[25] Տես *J. Stack*. Ethnic groups as emerging transnational actors. "Ethnic identities in a transnational world". Westport (Conn.), 1981, P. 18:

[26] Տես *Մ. Նեշ*, Նշ. աշխ., էջ 5–6:

ձևավորվում են տարբեր գիտաճյուղերում: Ընդ որում, ստեղծվել է մի ավանդույթ, ըստ որի՝ «ազգ-պետության» և բազմազգ պետությունների կազմի մեջ մտնող «էթնիկական խմբերի» քաղաքականության հետ կապված գաղափարախոսությունները միմյանցից սահմանազատվում են:

Արևմտյան քաղաքագիտության մեջ ազգ-պետության էթնոքաղաքական շահերն արտացոլող գաղափարախոսությունները սովորաբար նշագրվում են «ազգայնականություն» տերմինով:

Հարկ է ուշադրություն դարձնել այն էական տարբերությունների վրա, որոնք գոյություն ունեն այդ տերմինի մեկնաբանությունների գիտական ու քարոզչական ավանդույթներում՝ ձևավորված արևմտյան և խորհրդային քաղաքական գիտություններում ու պրակտիկաներում: Մեր կարծիքով՝ «ազգայնականությունը» արևմտյան քաղաքական գիտությունում սակավ չափով է օժտվում քարոզչական բացասական գնահատականներով ու կարծրատիպերով, քան դա արվում էր խորհրդային քաղաքագիտության մեջ: Այդ պատճառով մեր քաղաքագիտական-հրապարակախոսական գրականության մեջ «ազգայնականությանը» տրվող իմաստին արևմտյան ավանդույթում համապատասխանում են այնպիսի տերմիններ, ինչպիսիք են «էթնիկական եսակենտրոնությունը», «շովինիզմը (ազգամոլություն)», «էթնիկական ծայրահեղականությունը»: Մինչդեռ Արևմուտքում «ազգայնականություն» հասկացությունն ավելի մեծ չափով համարժեք է խորհրդային գիտաքաղաքական գրականության մեկնաբանությամբ «ազգային-ազատագրական շարժում» կամ «հայրենասիրություն» («ազգասիրություն») հասկացություններին:

Նյու Յորքի համալսարանի պրոֆեսոր Լ. Սնայդերը, նշելով «ազգայնականություն» տերմինի օգտագործման հարցում առկա տարընթռումները, գրում է, որ այնպիսի լայն սոցիալական գործընթացների համատեքստում, ինչպիսիք են «արդիականացումն» ու «մոբիլիզացումը», ազգայնականության հետազոտման նկատմամբ անհրաժեշտ է միջգիտաճյուղային մոտեցում: Արևմտյան հասարակագիտության մեջ արդիականացումը, մեկնաբանությունների բազմազանությամբ հանդերձ, առավել ընդհանուր ձևով ընկալվում է որպես մի փուլ, որը միմյանց է կապում մարդկության զարգացման երկու շրջանը՝ ավանդական ու ժամանակակից, և, տվյալ հայեցակարգի կողմնակիցների կարծիքով, անցումային է՝ լինելով «միակ պատմականորեն ռեալ հեղափոխությունը»:

Լ. Սնայդերը ազգայնականությունը դիտում է որպես Արևմտյան Եվրոպայում սկսված, այնուհետև ամբողջ աշխարհում տարածված արդիականացման մաս: Հետազոտողի կարծիքով՝ ազգայնականությունը կարելի է դիտել որպես հատուկ ձևի սոցիալական մոբիլիզացում, որի միջոցով

անհատի կապերն ընդլայնվում են՝ սահմանափակ տեղական մակարդակից հասնելով մինչև ազգայինի: Այս տեսակի սոցիալական մոբիլիզացումը ներկայացնում է ազգայնականության բուն էությունը, թեև կարող է տարբեր երկրներում երկրորդական հատկանիշների տեսակետից լինել տարբեր:

Սնայդերը, օգտագործելով արևմտյան հասարակագիտության՝ քաղաքական գիտության, սոցիոլոգիայի, հոգեբանության մեջ ձևավորված կատեգորիաները, մշակել է «ազգայնականություն» երևույթի մասնավոր-գիտական սահմանումների դասակարգում:

Քաղաքագիտության համատեքստում գիտնականն առանձնացնում է «ճնշված ազգայնականությունը» և «միավորական (իռեդենտիստական) ազգայնականությունը» (այն ժողովուրդների դեպքում, որոնք պահանջում են ազատություն այլ ժողովուրդների իշխանությունից և միացում նույն ժողովրդի ազգ-պետությունում բնակվող ազգակից զանգվածին), «նախազգուշացնող ազգայնականությունը» (որն առաջ է գալիս ժամանակակից ազգային պետությունների մրցակցության հետևանքով, ազգայնականության ձև, որը մոտ է իմպերիալիզմին), «համբավի (պրեստիժային) ազգայնականությունը» (որը շեշտում է փառահեղ պատմական անցյալը և պահանջում համապատասխան վերաբերմունք): Ուրվագծելով քաղաքագիտական սահմանումների շրջանը՝ Սնայդերը շեշտում է, որ թեև «ազգայնականությունն առավել հաճախ դրսևորվում է քաղաքականության ոլորտում, սակայն դրա խորքում արմատացած են շարժառիթավորվող տնտեսական գործոնները, որոնք պայմանավորում են նրա բովանդակությունը և ուղղությունը»[27]:

Հետազոտողի եզրակացությունները որոշ չափով մոտ են ազգայնականությունը պայմանավորող ու զարգացնող արմատական գործոնների մարքսիստական իմաստավորմանը: Լ. Սնայդերը համարում է, որ ազգայնականության՝ որպես գաղափարի ու պատմական շարժման հիմքն է «ազգային ինքնիշխանությունը»:

Ժամանակակից ազգայնականության քաղաքական էությունը ինքնիշխանության հասկացության հետ է կապում նաև Քաղաքական փիլիսոփայության միջազգային ինստիտուտի խորհրդի անդամ պրոֆեսոր Ժ.-Ժ. Շևալիեն: Նրա կարծիքով՝ ազգի և ազգության գաղափարի հոգեբանական դինամիկությունը ազգային հանրության մեջ առաջ է բերում ինքնիշխան քաղաքական կազմակերպության մակարդակի հասնելու և դրանով իսկ միջազգային ընկերակցության մեջ այլ ազգերի հետ իրավահավասար

[27] *Լ. Սնայդեր*, Նշ. աշխ., էջ 37:

դիրք գրավելու անհաղթահարելի անհրաժեշտության գերակայող և համախմբող գիտակցում[28]:

Մ. Նեշը ևս «ազգայնականություն» հասկացության բովանդակությունն ընդհանուր առմամբ մեկնաբանում է որպես տարածքի նկատմամբ իրավունք, առավել հզոր ազգերի հետ հավասարություն, ինքնիշխան և անկախ ժողովրդի «ատրիբուտների» ամբողջություն[29]:

Էթնոազգայնականության՝ որպես բազմազգ պետություններում էթնիկական խմբերի ազգայնականության սահմանումներում սովորաբար գերակայում է գաղափարախոսության ու քաղաքական վարքի հենց այդ կողմը, որը խարսխված է ինքնիշխանության սկզբունքների, անկապտելի իրավունքների ու մշակութային ինքնության պաշտպանության անհրաժեշտության վրա: Այսպես. Ֆ. Շիլզը «էթնոազգայնականությունը» սահմանում է որպես մի պետության մեջ բնակվող կամ քաղաքական սահմաններով բաժանված էթնիկական փոքրամասնության ձգտում ինքնակառավարման[30]:

Էթնոքաղաքականության հիմնական սուբյեկտների և հասկացությունների վերաբերյալ արևմտյան հասարակագետների տեսակետների բազմազանությամբ հանդերձ՝ դրանք նույնն են բոլոր սոցիալական իրողությունների համար, որոնք միևնույն ժամանակ դասվում են առավել փոփոխականների շարքը, ուստի և սահմանման առումով բարդ են ցանկացած տեսակետից՝ լինի դա գիտական, քաղաքական, թե, վերջապես, առօրեական-կենցաղային: Բացի այդ, ցանկացած մոտեցման մեջ հստակորեն նկատվում են երկու միտումներ, մի կողմից՝ սոցիալական միավորումների շարքում էթնիկականության որակական յուրահատկության առավելագույն բացահայտում, մյուս կողմից՝ ժամանակակից հասարակության կենսագործունեության բոլոր՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային, հոգեբանական, ոլորտներում էթնիկականության դրսևորումների տարբեր կողմերի հետազոտում:

Էթնոքաղաքականության սուբյեկտների բնորոշման հարցի շուրջ տարբեր հեղինակների միջև ծավալված բանավեճերը վկայում են, որ քաղաքագիտության տվյալ ուղղությունն առաջին հերթին նպատակադրված է բացատրելու էթնիկականության՝ որպես քաղաքական գործոնի դերը այն հարաբերություններում, որոնք ձևավորվում են ազգ-պետությունների և դրանց տարածքում բնակվող էթնիկական խմբերի միջև, բազմազգ պետություններում տարբեր էթնիկական հանրությունների միջև, ինչպես նաև պետությունների միջև: Արևմտյան քաղաքագիտության մեջ էթնոքաղաքականության ընդհանուր տեսության ձևավորման ժամանակ հիմնականում ուշադրություն էր դարձվում էթնոազգային շարժումների պատճառականության պրոբլեմներին, որոնց լուծումը կարող էր հիմք դառնալ աշխարհում միջէթնիկական փոխհարաբերությունների զարգացման գիտական կանխատեսման համար:

[28] Տես *J. Chevalleier*. L'idee de nation et L'idee d'etat. "L'idee de nation". P., 1969, P. 56:

[29] Տես *Մ. Նեշ*, Նշ. աշխ., էջ 5 – 6:

[30] Տես *F. Shills*. Introduction. "Ethnic separatism and world politics". L., 1984, P. 1:

1970-ական թվականներին առանձնակի ուշադրության արժանացան այն քաղաքագետների աշխատությունները, որոնք փորձում էին պարզել Մեծ Բրիտանիայում ծավալված ազգային շարժումների պատճառները: Արևմտյան հասարակագիտության ընդհանուր ճանաչմանն արժանացավ Ջ. Վաշինգտոնի անվան համալսարանի պրոֆեսոր Մ. Հեկտերի առաջ քաշած՝ ներքին գաղութատիրության հայեցակարգը, որն իր անունն ստացավ ըստ հեղինակի գրքի անվանման՝ «Ներքին գաղութատիրություն: Բրիտանական ազգային զարգացման կելտական ծայրամասը. 1536 – 1966»[31]:

Մ. Հեկտերը սոցիալ-տնտեսական զարգացման անհամաչափության պրոբլեմները սերտորեն կապակցում է միասնական պետության բնակչության էթնիկական տարբերությունների հետ: Հետազոտողի ուշադրությունը հիմնականում հատկացվում է բազմազգ պետության արդիականացման ժամանակ կենտրոնական կառավարության և էթնիկական ծայրամասային խմբերի միջև ծագող հակամարտությանը:

Էթնոազգային խմբերի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների միջև տարբերությունների մեծացումը Հեկտերը բացատրում է բազմազգ պետությունների ինդուստրիալացման տեմպերի անհամաչափությամբ, կամ, այլ կերպ ասած, էթնոազգային խմբերի անհամաչափ արդիականացմամբ: Համաձայն ներքին գաղութատիրության մոդելի՝ գերիշխող խումբը ձգտում է կայունացնելու իր առավելությունները և պահպանելու դրանց նկատմամբ ունեցած մենաշնորհը: «Համապետական տնտեսական համակարգի մեջ ծայրամասերի ներառումը առաջ է բերում ոչ թե շփվող էթնոսների մերձեցում, այլ ավելի շուտ՝ էթնոսոցիալական շերտավորում, սոցիալ-դասակարգային բուրգի վերին հարկերն զբաղեցնող միջուկի (առևտրային, ֆինանսական, ձեռնարկատիրական) ներկայացուցիչների և աշխատուժի հիմնական աղբյուր հանդիսացող տեղի բնակչության վիճակների անհավասարություն»[32]: Մ. Հեկտերը շեշտում է, որ ձևավորվում է «աշխատանքի մշակութային բաշխման՝ իր շրջանակներում

[31] Տես *M. Hechter*. Internal colonialism: The Celtic fringe in the British national development. 1536 – 1966. L., 1975, PP. 13 – 18:

[32] "Межэтнические конфликты в странах зарубежного Востока". М., 1991, с. 46.

օբյեկտիվ մշակութային տարբերությունները դասակարգային տարբերությունների հետ համատեղող շերտավորման համակարգ»[33]: Այսպիսով՝ տարբեր էթնիկական խմբերի ներկայացուցիչների միջև առկա զգալի տնտեսական անհավասարությունը, որը գիտակցվում է որպես կոլեկտիվ էթնոազգային կեղեքում, դառնում է էթնոազգային համերաշխության ձևավորման ու դրսևորման պատճառ:

էթնոազգային հակամարտության դետերմինացման տեսանկյունից «ներքին գաղութատիրության» հայեցակարգը հնարավորություն է տալիս առանձնացնելու դրա ծագման «տրիադային մոդելը». 1) բազմազգ պետության անհամաչափ արդիականացման ընթացքում նրա էթնիկական ծայրամասային խմբերի օբյեկտիվ բաժնեզրկվածությունը, 2) էթնիկական խմբի անդամների կողմից այդ բաժնեզրկվածության ընկալումը որպես կեղեքման կոլեկտիվ կենտրոնա-ծայրամասային փոխհարաբերությունների պատկերի, 3) ծայրամասային խմբի էթնոազգայնականության ձևավորումը որպես կեղեքվող կոլեկտիվի հակազդում կենտրոնի «ներքին գաղութատիրությանը»: Այդ մոդելը հնարավորություն է տալիս էթնոազգային և էթնոքաղաքական հակամարտության հիմքերը մեկնաբանելու ընդհանուր հակամարտաբանության դիրքերից, ըստ որի՝ հակամարտությունը սահմանվում է որպես մի յուրահատուկ մրցակցություն՝ բոլոր մասնակից կողմերի համար կարևորություն ներկայացնող պակասուրդային արժեքներին տիրանալու համար:

էթնոքաղաքական հակամարտությունը որպես բազմազգ պետությունում «միջուկի» և էթնոազգային «ծայրամասի» արդիականացման անհամաչափության հետևանք դետերմինացնող «ներքին գաղութատիրության» հայեցակարգի մի յուրօրինակ տարբերակ կարելի է համարել էդինբուրգի Շոտլանդական միջազգային ինստիտուտի տնօրեն Թ. Նեյռնի «անհամաչափ զարգացման» հայեցակարգը: Այդ գիտնականի կարծիքով՝ էթնոազգայնականությունը և էթնոազգային հակամարտությունը երկրի սակավ զարգացած շրջաններին ավելի զարգացած կենտրոնի ձևանմուշների պարտադրման անխուսափելի հետևանքն են:

Թ. Նեյռնը հանգում է այն եզրակացությանը, որ «կապիտալիզմի տարածման և իր հետ շփվող հին համայնքների ենթարկեցման համեմատ այդ համայնքները սովորաբար առանձին մասերի էին տրոհվում իրենց մեջ պարունակվող «բեկվածքային գծերի» երկայնքով»: Թ. Նեյռնը շեշտում է, թե ինքնին հասկանալի է, որ այդ գծերը գրեթե միշտ եղել են էթնիկականության գծեր, թեև որոշ լավ հայտնի դեպքերում խոր արմատացած կրոնական սահմանազատումները կարող էին խաղալ նույն դերը[34]:

[33] *Մ. Հեկտեր*, Նշ. աշխ., էջ 30:

Կանխատեսելով այն առարկությունը, թե քաղաքական ճանաչում պահանջող ամենևին էլ ոչ բոլոր ազգային ծայրամասերն էին ավելի վատ զարգացած, քան «միջուկի» ազգային տարածքները, Թ. Նեյռնը կատարում է հետևյալ ճշտումը, թե տնտեսական անհավասարությունը անհամաչափ զարգացման տեսակներից մեկն է:

Չմանրամասնելով Մ. Հեկտերի և Թ. Նեյռնի հետ այլ արևմտյան քաղաքագետների բանավեճը՝ նշենք, որ նրանց հրապուրումը սոցիալ-տնտեսական դետերմինիզմով հակառակորդներին հիմք էր տալիս այդ հետազոտողներին դասելու նոր մարքսիստների շարքը: Միևնույն ժամանակ, տվյալ միտումը, բացի էթնոազգային հակամարտությունների արդիականացուցիչ պատճառականության մասին դրական գիտելիքից, այդ հայեցակարգը հանգեցնում էր նաև մոնիստական դետերմինիզմի: Իրոք, ակնհայտ է, որ «ներքին ազգայնականության» հայեցակարգը չի կարողանում համոզիչ կերպով բացատրել այն դեպքերը, երբ էթնոազգային հակամարտությունը ծագում է իշխող կենտրոնի և նրա ազգային ծայրամասերի տնտեսական զարգացման մակարդակների միջև էական տարբերություններ չլինելու պայմաններում, և չի ծագում, երբ նման տարբերություններն առկա են: Արևմտյան հասարակագիտության մեջ այս բավականաչափ քննադատվող հայեցակարգը, այնուամենայնիվ, խաղաց կարևոր դրական դեր՝ արևմտյան քաղաքագետներին դրդելով էթնոազգային ոլորտում առաջացող հակամարտային երևույթների իմաստավորմանը որպես ժողովուրդների անհամաչափ տնտեսական զարգացման հետևանքի:

Արդիականացման և էթնոազգային գործընթացների փոխգործության սոցիալական հետևանքներն ուսումնասիրել է արդիականացման տեսության ոլորտի ականավոր մասնագետ Ք. Բլեկը՝ որպես կանոն առանձնակի ուշադրություն հատկացնելով դրանց զարգացման հակամարտային ձևերին[35]: Այս հետազոտողը ավանդական և արդիականացած հասարակությունների միջև առավել կարևոր տարբերություններից մեկը համարում է «սոցիալական դերերի բաշխման» սկզբունքը: Առաջինին բնորոշ է կենտրոնական կամ ծայրամասային էթնիկական, ռասայական և կրոնական խմբերի ու դրանց ներկայացուցիչների սոցիալական կարգավիճակի խիստ կանոնակարգվածությունը՝ կախված ընդհանուր աստի-

[34] Տես *T. Nairn*. The break-up of Britain: Crisis and neocolonialism. L., 1977, P. 16:

[35] Տես *C. Black*. The dynamics of modernization: A study in comparative history. N. Y., 1966: – X:

ճանակարգային կառուցվածքում իր տոհմի զբաղեցրած «կարգից», ընտանեկան դրությունից, տարիքից, սեռից և այլ հանգամանքներից: Իսկ արդիականացած հասարակությունում ենթադրվում է ընտրություն, որը կատարվում է միասնական օրենքի առջև բոլորի իրավահավասարության պայմաններում: Էթնոազգային կենսատարածքներում արդիականացման անհավասարաչափությունը կարող է առաջ բերել հակամարտություն, մի կողմից, էթնիկական խմբերի հավակնությունների և, մյուս կողմից, իր քաղաքացիների իրավունքների ապահովման գործում պետության ռեալ կարողության միջև: Իր կազմի մեջ մտնող էթնիկական խմբերի պահանջներին դիմակայելու բազմազգ պետության փորձերը հանգեցնում են փոխադարձ դժգոհությունների և հակամարտությունների: Բազմազգ պետության քաղաքական հաստատությունների և արդիականացող էթնիկական խմբերի փոխգործության ընթացքում տեղի է ունենում էթնիկական քաղաքական և իրավական գիտակցության անհամաչափ զարգացում: Այնուհետև՝ որոշակի փուլում, առավել քաղաքականացած, իրենց «ծայրամասության» պատճառով իսկապես կամ թվացյալ կերպով «բաժնեզրկված» էթնիկական խմբերում առաջանում է դժգոհություն պետական կենտրոնից՝ որպես իրավապաշտպանության գերագույն երաշխավորից:

Արդիականացման և էթնոազգային գործընթացների միջև կապի իր մեկնակերպն է առաջարկում Գ. Զոններտը[36]: Հետազոտողի կարծիքով՝ այդ շարժումները մի յուրահատուկ «պատասխան» են արդիականացման հետևանքով ծագող սոցիալական ճգնաժամներին: Արդիականացման մասին «ազգազուրկ» պատկերացման առանցքն էր հավասարաչափ անշեղ առաջադիմական զարգացման գաղափարը, որը, սակայն, հաստատում չստացավ:

Ինչպես արդարացի կերպով նկատում է հետազոտողը, անհավասարաչափ զարգացումն այն դեպքում է դառնում պրոբլեմ, երբ անբարեհաջող մարդիկ այլևս չեն ուզում հաշտվել իրենց անբարեհաջողության հետ: Նրանց բողոքը առավել հաճախ ստանում է ազգայնականության ձև: Համակարգային ապահինտեգրման դեպքում չզարգացած տարածաշրջանների բնակչությունը կարող է ազգային ինքնուրույնությունը համարել հուսալի ռազմավարություն, որի շնորհիվ հնարավոր կլինի ազգային-քաղաքական պաշտպանական մեխանիզմների ստեղծմամբ լուծել զարգացման մեջ իրենց հետ մնալու պրոբլեմը: Սոցիալական ապահինտեգրման դեպքում ազգայնականությունը կարող է փոխարինել արդիականացման հետևանքով իրենց նշանակությունը կորցրած ավանդական արժեքները:

[36] Տես *G. Sonnert.* Nationalism between modernisation and demodernisation. "Canadian review of studies in nationalism". Charlottentown, 1988, Vol. 15, № 1/2, PP. 43–51:

ժամանակակից պրոբլեմներին տրվող «ազգայնական պատասխանը» կարող է լինել երկու հակադիր տիպերի՝ հակաարդիական, որը լիովին մերժում է արդիականացման ծրագիրը՝ դրա թերությունների պատճառով, և արդիականամետ, որը փորձում է շտկել այդ թերությունները:

Ապաարդիականացումը համակարգային առումով ձգտում է արդիականացման գործընթացը թեքելու դեպի տնտեսական ու վարչական կազմակերպման ավանդական եղանակներ, իսկ սոցիալական ինտեգրման առումով հրաժարվում է ազատագրված անհատի իդեալից՝ կարևորելով ավանդական արժեքներն ու կոլեկտիվ նույնականությունը:

Ի լրացումն էթնոազգային հակամարտությունների դետերմինացման տեսական բացատրությունների՝ հարկ է ուշադրություն դարձնել դրանց համապիտանիացման և ծավալման էական պատճառներից մեկի վրա: Այն անմիջականորեն արտացոլում է միջազգային-հաղորդակցային գործընթացների ինտենսիվացման պայմաններում բազմազգ, բազմակացութաձև պետությունների արդիականացման առանձնահատկությունները: Տեղեկատվահաղորդակցային գործոնները բացառիկ կարևորություն են ստացել միջազգային-իրավական նորմերի տեսքով համակարգված համաքաղաքակրթական արժեքների պաշտպանության լայնածավալ քարոզման գործում:

Այս տեսակետից չի կարելի չհամաձայնվել պրոֆեսոր Ն. Գլեյզերի այն դիտողության հետ, թե տեղեկույթի և գաղափարների լայն միջազգային փոխանակման շնորհիվ աշխարհի մի շրջանում ծագած էթնիկական հակամարտությունները լուրջ ազդեցություն են գործում այլ շրջանների էթնիկական խմբերի փոխհարաբերությունների վրա: Գիտնականը հատկապես շեշտում է այն հանգամանքը, որ էթնիկական խմբին պատկանելության զգացումը, մշակույթի ցանկացած այլ տարրի նման, փոխանցվում և յուրացվում է դաստիարակության ընթացքում: Ավանդական հասարակություններում որպես այդպիսի կապուղիներ էին ծառայում ծնողներ–զավակներ, դաստատուներ–աշակերտներ, առաջնորդներ ու ավագանի–շարքային ցեղակիցներ կապերը: Մինչդեռ ներկայումս էթնիկական նույնականության զգացումն ավելի ու ավելի մեծ չափով է ձևավորվում զանգվածային տեղեկատվության միջոցներով: Էթնիկական խմբերի շարքում ի հայտ են գալիս յուրահատուկ առաջնորդներ, որոնցից մյուսները սովորում են՝ փոխառելով դրանց լեզուն, գործողությունների ծրագիրը, կազմակերպվածքը: Ն. Գլեյզերը, մասնավորապես, նշում է երկրի բնակչության մյուս խմբերի «էթնիկականության վերածննդի» համար սևամորթ ամերիկացիների ոգեշնչող օրինակը: «Սակայն առավել ապշեցուցիչը այն

մեծ ազդեցությունն է, որ մարտնչող սևերը գործեցին այլ երկրների էթնիկական խմբերի վրա», գրել է հետազոտողը[37]:

Հայտնի ամերիկացի գիտնական Չ. Քեյեսը նշել է, որ անգամ էթնիկական հակամարտություններ չլինելու դեպքում պետությունն ինքն է իր իշխանության օրինականությունը հիմնավորելու նպատակով նպաստում իր կազմի մեջ մտնող էթնիկական հանրությունների մասին որոշակի «առասպելների» տարածմանը, ստեղծում է այնպիսի պայմաններ, երբ էթնիկականությունը հաստատապես դառնում է որոշակի տիպերի սոցիալական հարաբերությունների կառուցավորման գործոն[38]:

Էթնիցիստական ուղղությանը հարող հետազոտողները, ընդունելով գաղութատիրական շահագործման, ռասայական ու էթնիկական խտրականության դեմ մղվող քաղաքական պայքարի մեջ էթնոազգային հանրությունների ներգրավման համար սոցիալ-տնտեսական գործոնների հույժ կարևորությունը, առանձնակի ուշադրություն են հատկացնում էթնիկականության էթնոքաղաքագիտական պրոբլեմներին:

Արևմուտքում էթնոազգայնականության առաջատար մասնագետներից մեկի՝ Ա. Սմիթի աշխատություններում արտացոլված է այդ երևույթի էության, էթնիկական խմբի ու պետության փոխհարաբերությունների կարգավորման գործում դրա սոցիալական ու քաղաքական գործառույթների վերաբերյալ արտասահմանյան հասարակագիտության մեջ լայն տարածում ստացած տեսակետը:

Էթնոազգայնականության էութենական բնութագրերի ծավալուն սահմանումը, որն առաջարկել է այդ հետազոտողը, գրավում է էթնիկականության և քաղաքականության զուգակցման պրոբլեմի էթնոքաղաքագիտական ձևակերպմամբ: Նրա սահմանմամբ ազգայնականությունը «մի գաղափարախոսական հոսանք է, որն ուղղված է իրեն՝ որպես էթնիկական հանրություն ինքնագիտակցող սոցիալական խմբի ինքնավարության, միասնության և ինքնության ձեռքբերմանն ու պահպանմանը: Այլ կերպ ասած՝ ազգայնականությունը այն էթնիկական փոքրամասնության ինչպես գաղափարախոսությունն է, այնպես էլ քաղաքական շարժումը, որը հետապնդում է երեք հիմնական նպատակ. ինքնավարության և ինքնակառավարման ապահովում, տարածքի նկատմամբ իրավունքի իրացում

[37] *N. Glaser*. The universalization of ethnicity: Peoples in the boiling pot. "Encounter", L., 1975, Vol. 44, № 2, P. 14.

[38] Տես *Ч. Кейес*. Основа отношений между этническими группами в современных государствах-нациях. "Этнические процессы в СССР и США. Материалы советско-американского симпозиума". М., 1986, с. 70:

և իր մշակույթի համար համապետականին հավասար կարգավիճակի ճանաչում»[39]:

Էթնոազգայնականության վերաբերյալ Ա. Սմիթի տեսակետները հետագա զարգացում են ստացել նրա հաջորդ՝ «Ազգայնականությունը 20-րդ դարում» աշխատության մեջ, որում հետազոտողն ընդլայնում է տվյալ հասկացությունը՝ դրանում քաղաքականության ու քաղաքականացված գաղափարախոսության հետ մեկտեղ ներառելով նաև այնպիսի համարժեք տարրեր, ինչպիսիք են մշակույթը, առանձնահատուկ աշխարհընկալումն ու մտածելակերպը, էթնիկական ինքնագիտակցությունը[40]:

Դրան բավականին մոտ տեսակետ է արտահայտել նաև տվյալ ոլորտի այնպիսի հեղինակավոր մասնագետ, ինչպիսին է Ջ. Ռոտշիլդը: Նա ազգայնականությունը դիտում է նախ՝ որպես, ազգերի բնավորություն, շահերի, իրավունքների ու պարտականությունների մասին դոկտրին, երկրորդ՝ որպես ազգի նպատակների իրականացմանն ուղղված կազմակերպված քաղաքական շարժում [41]:

Այլ հեղինակներ շեշտը դնում են ազգայնականության բուն քաղաքական էության, առաջին հերթին իր պետականությունն ստեղծելու ձգտման վրա: Հարավաֆրիկացի քաղաքագետ Դ. Քոտցեն անհերքելի է համարում էթնիկական խմբերի ինքնորոշվելու և բազմազգ պետության կազմից դուրս գալու իրավունքը՝ էթնոազգային հակամարտության լուծման այս եղանակը համարելով փոքրամասնությունների էթնիկական ինքնության պաշտպանության միակ երաշխիքը[42]:

Խորհրդային հեղինակները ինքնիշխանությունը «պետականորեն» ձևակերպվելու էթնոսի ձգտումը կապում են ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ գործոնների հետ: «Առաջինների շարքն են դասվում հիմնականում տնտեսական զարգացման պահանջմունքները... Երկրորդների՝ էթնիկական գիտակցության աճը, սոցիալական հոգեբանության մեջ հայտնի այն միտումը, որ մարդկանց ցանկացած բավականաչափ մեծ հանրություն ձգտում է պատմության օբյեկտից վերածվելու, այսպես ասած, պատմության սուբյեկտի՝ իրեն արժանավայել կերպով ներկայացնելով նմանատիպ հանրություններին և իր զարգացման համար ապահովելով ավելի բարենպաստ պայմաններ: Դասակարգային հասարակության պատմական պայմաններում էթնոսը կարող էր ձևավորվել միայն պե-

[39] *A. Smith*. Introduction: The formation of nationalist movements. "Nationalist movements". L., 1976, PP. 1 – 2.

[40] Տես *A. Smith*. Nationalism in the twentieth century. Oxford, 1979, PP. 3 – 4:

[41] Տես *Ջ. Ռոտշիլդ*, Նշ. աշխ., էջ 1 – 2:

[42] Տես *Դ. Քոտցե*, Նշ. աշխ., էջ 19:

տության միջոցով՝ տարածքային առումով հաստատունորեն փաստելով իր սահմանները, ստանալ միասնական վարչաիրավական համակարգ, մշակութակրթական և այլ էթնիկապես կողմնորոշված հաստատություններ, ամրապնդել ներքին սոցիալ-տնտեսական կապերը». այս առավել ձևավորված տեսակետը պատկանում է Վ. Կոզլովին[43]:

Ժամանակակից պետություններում էթնիկականությունը դրսևորվում է ոչ միայն պետական հաստատություններին դիմակայության ձևով, այլև, ինչը թվում է առավել կարևոր, որպես այդ հաստատությունների էութենական բնութագիր: Ինչպես «Ուստիկանությունը, զինված ուժերը և էթնիկականությունը» և «էթնիկական զինվորներ» աշխատություններում ցույց է տալիս ռազմաքաղաքական սոցիոլոգիայի ոլորտի ամերիկուհի հետազոտող Ս. Էնլոուն, «էթնիկականությունը քաղաքական է ոչ միայն այն իմաստով, որ իր քաղաքական նպատակներին հասնելու համար խմբի մոբիլիզացման հիմք է ծառայում, այլև այն պատճառով, որ վճռորոշ կողմնորոշում է առավել կարևոր քաղաքական ապարատի՝ պետության ստեղծման ժամանակ»[44]: Հեղինակը հանգում է այն եզրակացությանը, որ պետական վերնախավը, առաջին հերթին՝ իշխանության բարձրագույն օղակը, էթնիկական բաժանումն օգտագործում է հենց այն ժամանակ, երբ հրապարակավ պարսավում է այն: Պետական քաղաքականությունը պլանավորելիս և հատկապես իրենց անվտանգությունն ապահովելիս վարչաքաղաքական շրջանների ներկայացուցիչները մտածում են «էթնիկորեն»:

էթնոազգային և քաղաքական երևույթների խաչման պրոբլեմները առավել լիարժեք կերպով լուսաբանված են Զ. Ոոտշիլդի բազմիցս հիշատակված «էթնոքաղաքականություն» աշխատության մեջ: Այդ չափազանց բազմապիսի երևույթների վերլուծությունը՝ կատարված քաղաքական սոցիոլոգիայի հայեցակարգային դիրքերից, հեղինակին հնարավորություն է տալիս առանձնացնելու իրադարձությունների զարգացման առավել հավանական մոդելներն ու սցենարները:

Ըստ Զ. Ոոտշիլդի՝ բոլոր էթնոքաղաքական երևույթների բուն էությունն այն է, որ որոշակի իրադրություններում տեղի է ունենում «էթնիկականության քաղաքականացում»: Այս հետազոտողի տեսակետից քաղաքականացման գլխավոր գործող անձինք են այսպես կոչված «էթնիկական անտրեպրենյորները»*, որոնք հետապնդում են միանգամայն գործնական

[43] *В. И. Козлов.* Этничность и государственность. "Этнические процессы в СССР и США. Материалы советско-американского симпозиума", с. 39.

[44] *C. Enloe.* Police, military and ethnicity: Foundation of state power. New Brunswics, 1980, P. 10.

* Անտրեպրենյոր (ֆրանս. *entrepreneur*՝ ձեռնարկիչ)՝ մասնավոր թատերական ձեռնարկու: *Ծանոթ. թարգմ.*:

շահեր և քաղաքական նպատակների մակարդակով գիտակցում են «էթնիկականության մոբիլիզացման» անհրաժեշտությունը: Մոբիլիզացում ասելով հասկացվում է էթնիկականության վերածումը հոգեբանական, մշակութային կամ սոցիալական գործոնից բուն քաղաքական ուժի, որպեսզի փոփոխվեն կամ, հակառակը, կայունացվեն էթնիկական խմբերի միջև անհավասարության այն համակարգերը, որոնք ձևավորվել են հասարակության մեջ[45]:

Ո՞րն է այն ռեալ ներուժը, որից «էթնիկական անտրեպրենյորները» ռեսուրսներ են առնում իրենց էթնոքաղաքական ծրագրերի մշակման և իրագործման համար: Այլ կերպ ասած՝ ո՞րն է «էթնոքաղաքականության» աղբյուրի էությունը: Ամերիկացի էթնոքաղաքագետը «էթնիկական անտրեպրենյորների» ներուժային կարողությունների աղբյուր է համարում այն «արդիականացման» անհավասարաչափությունը, որին ենթարկվում են ժամանակակից (արդիականացած) և անցումային (արդիականացող) հասարակությունները: «Արդիականացումը» ոչ միայն նպաստում է առանձին մարդկանց սոցիալական շարժունության ուժեղացմանը, այլև պահպանում և մեծացնում է խմբերի միջև եղած անհավասարությունը: Միևնույն ժամանակ, «արդիականացումն» ինքը հերքում է անհավասարության անխուսափելիության ցանկացած հիմնավորում:

«էթնիկականության քաղաքականացումը» հաճախ հանգեցնում է առաջին հայացքից տարիմաստ (պարադոքսալ) իրավիճակի ստեղծմանը, երբ համընդհանուր մշակույթն ու տեխնոլոգիաները յուրացնող, արդիականացող էթնիկական խմբում տեղի է ունենում իր ուրույն էթնառանձնահատուկ մշակույթի նկատմամբ հետաքրքրության բուռն աճ:

Հետազոտողը, հիմնավորելով արդիականացման հետևանքով առաջացող փոփոխություններից մեկուսացածության պայմաններում էթնիկական մշակույթի զարգացման անհնարինությունը, օգտագործում է մասնավորապես էթնոլեզվաբանական տվյալներ: Կոնկրետ նյութերի հիման վրա նա համոզիչ կերպով ցույց է տալիս, որ ոչ միշտ է հնարավոր էթնիկական խմբի լեզվի կիրառումը սահմանափակել միայն «տնական», կենցաղային գործածությամբ, այն դեպքում, երբ իշխող ազգի լեզուն վերածվում է էկոնոմիկայի և քաղաքականության լեզվի: Նոր իրողությունները անխուսափելիորեն ներթափանցում են մարդկանց առօրյա գործունեության մեջ՝ դառնալով նրանց անձնական փորձի մաս:

էթնիկականության քաղաքականացման բուն նախադրյալներն ըստ իրենց էության, որում զուգակցվում են «արդիականի» և «ավանդականի» տարրերը, երկակի են: Այդ գործընթացի սկզբնավորման համար կարևոր

[45] Տես *Զ. Ոոտշիլդ.* Նշ. աշխ., էջ 2:

դրդապատճառ է մտահոգվածությունը էթնոյուրահատկությունների պահպանմամբ և ձգտումը՝ դրանց բոլոր կրողներին միավորելու զարգացած էթնոազգային գիտակցություն (ավելացնենք՝ և վարք.–Հ. Ք.) ունեցող միասնական խմբի մեջ: Էթնոյուրահատուկ հատկանիշներն ու ատրիբուտները էթնիկական խմբի միասնականացման անհրաժեշտ, բայց ոչ բավարար և անգամ ոչ գլխավոր պայմանն են: Հետազոտողի կարծիքով՝ էթնիկական խմբի միասնականացման համար անհրաժեշտ է ունենալ «խմբի վերնախավ, որը ունակ և շահագրգռված լինի (կրոնական, տնտեսական, սոցիալական ու քաղաքական շարժառիթավորմամբ) էթնիկական հատկանիշների կրողներին մոբիլիզացնելու գործուն հանրության մեջ»: Անհրաժեշտ է նաև սահմանափակ և այդ պատճառով «մեծ» հասարակության կողմից արժեքավորվող ռեսուրսների համար մրցակցության առկայություն: Երկրորդ պայմանի կոնկրետ տարբերակներից մեկը կարող է լինել, օրինակ, էթնոազգային հիմքի վրա ծագած կենտրոնա-ծայրամասային հակամարտությունը[46]:

Վերնախավի գործունեության ակտիվացման և արտաքին անբարենպաստ հանգամանքների փոխկապվածության փաստը հետազոտողները նշել են նաև մինչ այդ: Տվյալ հանգամանքը հատկապես ազգային շարժումների ձևավորման սկզբնափուլի համար շեշտել է Ա. Սմիթը. «էթնիկական խմբերի գաղափարաբանացում և քաղաքականացում տեղի է ունենում հասարակական լարվածության, մրցակցության ու թշնամանքի ժամանակ, երբ էթնիկական առաջնորդները էթնիկական մշակույթների կրողներին համոզում են իրենց ճակատագիրն ընկալելու ոչ թե անձնային կամ դասակարգային, այլ էթնիկական կատեգորիաների միջոցով, և նրանց ապացուցում են, որ առանց էթնիկական համայնքային համախմբվածության նրանց տարբերակիչ արժեքներն ու սովորույթները կվտանգվեն, վտանգված կլինի նաև խմբի գոյատևումը»[47]: Ա. Սմիթը որպես ժամանակակից էթնոազգային շարժումների վերելքի առանձնահատուկ գործոն նշում է «գիտական բյուրոկրատիայի առաջացումը», որը «հին» վերնախավից տարբերվում է արհեստավարժությամբ ու գիտելիքներով: Քաղաքագետների հետագա ուսումնասիրություններով հաստատվել է այն կարևոր դերը, որ էթնոքաղաքականության մեջ խաղում է արդիականացող հասարակություններին հատուկ մտավորականության ջոկատը, որը հաճախակի հավակնում է ազգային վերնախավերում գրավելու առաջատար դիրքեր:

Վերնախավերի գործունեությունն զգալի չափով պայմանավորված է

[46] Տես նույն տեղում:

[47] *A. Smith*. Introduction: The formation of nationalist movements. "Nationalist movements". L., 1976, P. 29.

նրանց իրավաքաղաքական գիտակցության զարգացման մակարդակով: Արդիականացման ներկայիս փուլում ենթադրվում է բազմազգ պետությունների վերնախավերի իրավաքաղաքական գիտակցության մեջ այն արժեքային կողմնորոշման ներմուծումը, որը միտված է «մարդու իրավունքների» պաշտպանության համակարգին՝ միջազգային ընկերակցության կողմից մշակված այդ հասկացության լրիվ ծավալով: Այս դեպքում վերնախավը, ակտիվ կերպով ուղղորդելով «էթնիկականության քաղաքականացումը», հանդես է գալիս «մարդու իրավունքների» էթնոազգային քարոզչի դերում, էթնոազգային խմբի անդամներին մոբիլիզացնում է բոլոր տնտեսական, սոցիալական, մշակութային, քաղաքական և քաղաքացիական իրավունքներին ինքնիշխան տիրապետմանը ինչպես անհատական (անձնային), այնպես էլ կոլեկտիվ (էթնոխմբային) ձևաչափով: Այսպիսով՝ էթնիկականության «իրավաքաղաքականացածության» աստիճանը կարող է բնութագրվել վերնախավի և էթնիկական խմբի էթնոազգային գիտակցության մեջ «մարդու իրավունքներին» ինքնիշխան կերպով տիրապետելուն վերաբերող միջազգային իրավական նորմերի յուրացվածության տեսակետից: Հարկ է առանձնակի շեշտել այն հանգամանքը, որ դիմակայության և հատուկ տեսակի պակասուրդ ներկայացնող անհատական ու կոլեկտիվ «մարդու իրավունքներին» ինքնիշխան կերպով տիրապետելու համար մղվող պայքարի դիալեկտիկան էլ հենց արդի փուլում կազմում է բազմազգ պետության կենտրոնի ու ծայրամասի միջև ծագող էթնոքաղաքական հակամարտությունների էությունը:

Մեր կարծիքով՝ ամենալուրջ ուշադրության է արժանի փոքրամասնությունների առաջնորդների ու վերնախավի այն դերի առանձնակի նշանակալիության փաստարկված հիմնավորումը, որը նրանք խաղում են էթնիկական խմբերի քաղաքականացման սոցիոլոգիական վերլուծության մեջ և այն գործընթացներում, որոնց միջոցով էթնոազգային միջհամայնքային հակամարտությունները վերաճում են ինքնիշխանության հարցով կենտրոնա-ծայրամասային դիմակայության էթնոքաղաքական հատկության:

Ջ. Ռոտշիլդի էթնոքաղաքագիտական հայեցակարգը հաստատվում է ոչ միայն պատմական անդրադարձներով, այլև, ինչը հույժ կարևոր է, Արևելյան Եվրոպայի քաղաքական ասպարեզում տեղի ունեցող ժամանակակից էթնոազգային հակամարտություններով: Այդ պատճառով ուշագրավ են հեղինակի ձևակերպած այն տեսական-մեթոդաբանական դրույթները, որոնք նա դրել է բազմակացութածն բազմազգ պետությունների արդիականացման գործում էթնիկական գործոնի տեղի ու դերի ըմբռնման հիմքում:

Ջ. Ռոտշիլդի մշակած էթնոքաղաքագիտական մոդելը շարունակում է կիրառվել որպես արգասաբեր վերլուծական գործիք նաև իր հետևորդ հայտնի հետազոտողների մեծ թվով աշխատություններում:

Քաղաքական մշակույթի ոլորտի ամերիկացի մասնագետ Չ. Ֆոստերը, զարգացնելով «էթնիկականության քաղաքականացում» հասկացությունը, գիտական շրջանառության մեջ է դրել «էթնիկական համերաշխության քաղաքականացում» հասկացությունը:

էթնոքաղաքական սոցիոլոգիայի նշված երևույթը հեղինակը կապում է մի շարք գործոնների հետ: Առաջին հերթին այն պայմանավորված է ուրիշ միավորումներից օբյեկտիվ տարբերությունների վրա հիմնվող խմբային ինքնության զգացումով: Կարևոր նշանակություն ունեն նաև խմբի դժգոհությունը՝ կապված քաղաքական, տնտեսական կամ մշակութային խտրականության հետ, իրենց վիճակի բարելավման աճող ակնկալիքները, քաղաքական կենտրոնի հեղինակության ու գործունության անկումը, էթնոքաղաքական կազմակերպության արդյունավետությունը[48]: Տվյալ հասկացությամբ Չ. Ֆոստերը նշագրում է էթնիկական ինքնությանը ցուցաբերվող այն ընդգրկուն և ինտենսիվ աջակցությունը, որը մրցակցում է տիրող հասարակական կարգին ցույց տրվող աջակցության հետ և այդպիսով ձևավորում է հնարավոր էթնոքաղաքական հակամարտությունները: Էթնիկական ծայրամասի ինքնորոշման և կենտրոնից անջատման իրավունքի իրացման շուրջ «էթնիկական համերաշխության քաղաքականացումը» ոչ միայն ձևավորում է հակամարտություն կենտրոնի՝ որպես իրավաքաղաքական կառույցի իշխանության հետ, այլև հարցականի տակ է դնում բազմազգ պետության տարածքային ամբողջականությունը: Հետազոտողի առաջարկած հասկացությունը օրգանապես ներքերվում է ընդհանուր էթնոքաղաքագիտական հայեցակարգի մեջ՝ բացատրելով էթնոքաղաքական հակամարտության և անջատողականության միջև գոյություն ունեցող կապը:

Անգլիացի սոցիոլոգ Ք. Ռեիլյամսը անջատողականությունը սահմանում է որպես էթնիկական ձուլման անխուսափելիության դեմ ուղղված բողոք[49]: Նոր «էթնիցիստական» սոցիոլոգիայի այս ներկայացուցիչը հատուկ ուշադրություն է հրավիրում այն տարբեր գործոնների ռեգոնանսային փոխգործության վրա, որոնք առաջ են բերում իշխող կենտրոնի կողմից և՛ խտրականությանը, և՛ ձուլմանը ենթարկվող էթնիկական խմբի էթնոազգային անջատողականությունը: Հեղինակը գրում է. «Երբ տնտեսական ու սոցիալական անհավասարությունը համընկնում է լեզվական ու (կամ) մշակութային տարբերությունների հետ, կարող է ստեղծվել էթնիկական շերտավորման համակարգ (դրա կոնկրետ տարբերակն է «էթնիկական միջուկի» և «էթնիկական ծայրամասի» գաղութատիրական աստիճանակարգությունը:– *Հ. Ք.*): Հաճախ դասակարգային հակամարտությունը և էթնիկական հակամարտությունը ուժեղացնում են միմյանց՝ նոր հզոր ազդակ տալով փոփոխություններին: Եթե հակամարտությունը ներառում է էթնիկական տարածքը, ապա այն կարող է ստանալ ազգային շարժման ձև, որը ձգտում է լիովին անկախանալու իշխող կենտրոնից»[50]:

Անջատողականությունը՝ որպես էթնիկական փոքրամասնության շահագործմանն ու «մարդու իրավունքների» ոտնահարմանը ցույց տրվող իմաստավորված կոլեկտիվ հակազդեցություն, ձեռք է բերում ձուլման քաղաքականություն վարող կենտրոնի հետ էթնոքաղաքական հակամարտության ձև: Այս պայմանները նպաստում են նաև պետության տարածքային ամբողջականության հարցում էթնոքաղաքական առճակատման «ծրագրմանը»: Բնապահպանական, տնտեսական, սոցիալական, մշակութային, քաղաքական ու քաղաքացիական իրավունքների նկատմամբ գործադրվող խտրականությանը կոլեկտիվ հակազդեցության տարածքային և էթնոսոցիալական գործոնների համընկնման դեպքում անհատական ու էթնոխմբային կողմնորոշումները դեպի դրանց պաշտպանություն «կենտրոնանում» են էթնիկական խմբի ինքնորոշման կոլեկտիվ իրավունքի հետ կապված շահերի վրա և դառնում են էթնոազգային կոլեկտիվ գիտակցության ու համախմբված էթնոքաղաքական վարքի էությունը:

Անջատողականության «կառուցվածքային նախադրյալներն» են նշում նաև այլ արևմտյան քաղաքագետներ՝ միայն թե դա անելով որոշ, կոնկրետ հետազոտությունների համար յուրահատուկ տարբերություններով[51]:

էթնոազգային հակամարտությունների դիտարկված հայեցակարգերի ամբողջ բազմազանությամբ հանդերձ՝ դրանք համախմբում փոխլրացնում են միմյանց՝ կոնկրետ-գիտական հետազոտության իրենց հատուկ միջոցներով ու տեսական ընդհանրացման իրենց մակարդակում ի հայտ բերելով հետազոտման ընդհանուր օբյեկտի տարբեր կողմեր:

«Ներքին գաղութատիրության» հայեցակարգի հեղինակները հիմնականում ուշադրություն են դարձնում էթնոազգային հակամարտությունների սոցիալ-տնտեսական դետերմինացվածության վրա: էթնոազգայնականության հետազոտողները առավել լրիվությամբ երևան են հանել քաղաքական իրողությունների, առաջին հերթին՝ քաղաքական հաստատությունների և էթնիկականության փոխգործության հակամարտածին

[48] Տես *C. Foster*. Political culture and regional ethnic minorities. "Journal of politics". Gainesville, 1982, Vol. 44, № 2, P. 564:

[49] Տես *C. Williams*. Introduction. "National separatism". Cardiff, 1982, P. 1:

[50] Նույն տեղում:

[51] Տես *A. Orridge*. Separatism and autonomist nationalism: The structure of regional loyalities in the modern state. «National separatism», Cardiff, 1982, PP. 43 – 74; *J. Link*. From primordialism to nationalism. «New nationalism of the developed West». Boston, etc., 1985, PP. 203, 253:

ներուժը: Մինչդեռ ներխմբային մակարդակում տեղի ունեցող էթնիկական գործընթացների հետազոտման սոցիալական մեթոդիկաներ կիրառել են «նոր էթնիցիստական դպրոցի» ներկայացուցիչները:

Եվ այսպես. ամփոփելով հայտնի արևմտյան հեղինակների տարբեր տեսակետների համեմատական վերլուծությունը՝ կարող ենք դրանք ներկայացնել երկու հիմնական հայեցակարգային ուղղությունների՝ «ներքին գաղութատիրության դպրոցի» և «նոր էթնիցիստական դպրոցի» տեսքով:

Հեղինակների առաջին խումբը (Մ. Հեկտեր, Թ. Նեյռն) էթնոքաղաքագիտության պրոբլեմների համախմբի որոշման, նրա առարկայի ու հասկացութային ապարատի մեկնաբանման ժամանակ կիրառում է ավելի զարգացած ազգային-պետական կենտրոնի և հետամնաց էթնիկական ծայրամասի միջև կենտրոնա-ծայրամասային իշխանական վերահսկողությամբ միջնորդավորված էթնոքաղաքական հակամարտության մոդելը: Ծայրամասային էթնիկական խումբը դիտվում է որպես շահագործման, տնտեսական, իրավաքաղաքական, մշակութային խտրականության ու կեղեքման օբյեկտ և ըստ այդմ դետերմինացվում է որպես «ներքին գաղութ»: Ծայրամասի ազգային շահերում գերակայությունը առանձին պահերի կարող է տնտեսական ոլորտից անցնել քաղաքական ու մշակութային ոլորտներին, կենտրոնա-ծայրամասային ուղղածիգով ծավալվող միջէթնիկական հարաբերությունների պրոբլեմներին: Էթնոքաղաքական շարժման համար հեռանկարը կապվում է էթնոծայրամասային խմբում այնպիսի սոցիալական կողմնորոշումների ու վարքային կարծրատիպերի սերմանմանը, որոնք հանգեցնում են հնազանդությանը՝ որպես անհատի կողմից խմբին անդամակցելու և բարիքների որոշակի, կենտրոնի կողմից տրամադրվող աղբյուրներից օգտվելու համար այդ խմբին կատարվող վճարի: Նման էթնոխմբային համերաշխությունը և դրա վրա խարսխվող էթնոքաղաքական ակտիվությունը, այս դպրոցի հեղինակների կարծիքով, առավելարկվում են այն դեպքում, երբ մարդիկ, հանդիպելով բարիքների պակասուրդի, զրկված են լինում այլ խմբերի միանալու հնարավորությունից, և երբ նրանց սոցիալական գաղափարաբանվածության աստիճանը բացառիկ է[52]:

Հեղինակների մյուս խումբը (Ա. Սմիթ, Դ. Քոտցե, Յու. Անդերսոն, Ս. Էնլոե, Զ. Ռոտշիլդ), որը ներկայացվում է որպես «էթնիցիստական դպրոց», էթնոքաղաքագիտության պրոբլեմների ամբողջությունն ու հասկացութային ապարատը սահմանում է՝ ելնելով էթնիկականության վերաբերյալ իր մշակած հայեցակարգից: Ըստ այդ դպրոցի բավականին բազմապիսի

[52] Տես *M. Hechter*. Internal colonialism revised. "New Nationalism of the developed West". B., 1985, PP. 17–26:

մոտեցումների՝ էթնոազգայնականության էությունը կարելի է հանգեցնել աշխարհի այնպիսի ընկալման, որի դեպքում այն համարվում է բաժանված որոշակի խմբային էթնոմշակույթ ունեցող յուրահատուկ հանրություններ: Ազգային իդեալը մեկնաբանվում է որպես հավատ առ այն, որ բոլոր նրանք, ովքեր ունեն ընդհանուր պատմություն ու մշակույթ, իրենց հայրենիքում կարող են հավակնել միավորման: Ազգային իդեալը ներառում է որոշակի տիպի համերաշխություն, որը կապված է էթնիկական խմբերի պայքարի քաղաքական ծրագրի հետ:

Իսկ ընդհանուր առմամբ, չնայած էթնոքաղաքագիտության պրոբլեմների նկատմամբ էթնիցիստական դպրոցի մոտեցումների բավականին մեծ տերմինաբանական բազմապիսությանը, նրա ներկայացուցիչները համակարծիք են այն հարցում, որ էթնիկական նույնականության երևույթը ներթափանցում է քաղաքական կյանքի բոլոր ոլորտները: Դեռ ավելին. այն վճռորոշ ազդեցություն է գործում ազգային համախմբման առավել կարևոր հաստատության՝ պետության ստեղծման, զարգացման ու պահպանման գործընթացների վրա: «Էթնիցիստները» «էթնիկականության քաղաքականացման» և էթնոազգայնականության՝ որպես քաղաքական գործոնի ձևավորման ակունքներում տեսնում են այն անհավասարաչափ արդիականացումը, որին ենթարկվում են արդիականացող հասարակությունները:

Սույն հետազոտության հեղինակի տեսակետը, որը նա ձգտում էր ներկայացնելու կոնկրետ էթնոքաղաքագիտական դպրոցների և ուղղությունների վերլուծության ժամանակ, վերջին հաշվով կարող է հանգեցվել հետևյալին:

Առաջին. վերջին երկու տասնամյակում համաշխարհային գիտության մեջ ձևավորվել է հասարակական գիտելիքների այնպիսի նոր ճյուղ, ինչպիսին էթնոքաղաքագիտությունն է: Տվյալ քաղաքագիտական գիտաճյուղը քաղաքական գիտության օբյեկտիվ զարգացման արդյունք է: Այն արտացոլում է էթնիկական հանրությունների և պետության հաստատությունների՝ որպես էթնոքաղաքականության հիմնական սուբյեկտների միջև եղած՝ իշխանության (այդ թվում՝ պետական) ձևավորման, իրականացման ու վերարտադրման հետ կապված հարաբերությունների ոլորտում քաղաքական իրողությունների դրսևորման էությունն ու ձևերը:

Երկրորդ. մարքս-լենինյան դոգմայականության սահմանափակության հաղթահարման պայմաններում կենսական անհրաժեշտություն է դառնում արևմտյան էթնոքաղաքագիտության հիմնական արդյունքների, նրա զարգացման ուղղությունների ու միտումների ինտենսիվ գիտական իմաստավորումը: Տվյալ խնդիրը պահանջում է ինչպես խորհրդային մասնագետների կառուցողական մասնակցություն համաշխարհային էթնոքաղա-

քագիտության դպրոցների ստեղծագործական աշխատանքին, այնպես էլ արտասահմանյան քաղաքագիտական գիտելիքների վերակերտում, քանի որ մոտ անցյալում դրանք դասվում էին ոչ գիտական հայեցակարգների շարքը և փաստորեն հանվել էին քաղաքագիտական շրջանառությունից ու էթնոքաղաքականության մեջ գործնական կիրառումից:

Երրորդ. խորհրդային դոկտրինալ հասարակագիտության կորցրած ժամանակը ինտենսիվ կերպով հատուցելու համար նպատակահարմար է էթնոքաղաքագիտությունը՝ որպես մեզանում նոր գիտաճյուղ ձևավորելիս կատարել կառուցողական մշակումների նպատակամղված որոնում հասարակական գիտելիքների ավելի լայն դաշտում (արդիականացման, ազգային ու միջազգային անվտանգության, զուգամիտության (կոնվերգենցիա), քաղաքակրթական մոտեցման և այլ տեսություններ):

Եվ այսպես. որոշելով էթնոքաղաքագիտության պրոբլեմատիկան և հասկացութային ապարատի ուրվագիծը՝ մենք հարում ենք ազգային անվտանգության պրոբլեմների քննարկման անհրաժեշտությանը: Դա ենթադրում է տվյալ կատեգորիական շարքի լրացում և ընդլայնում, ինչը հանգեցնում է քաղաքակրթական համակարգերի կազմակերպման տարբեր մակարդակներում համաձայնային ու հակամարտային շփումների պրոբլեմների վերլուծության նկատմամբ քաղաքակրթական մոտեցման էթնոքաղաքագիտական ըմբռնման:

§ 2. ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊՐՈԲԼԵՄ

Ժամանակակից պատմության մեջ «անվտանգություն» հասկացությունը առավել հաճախ կապվում է պետության, բանակի, ներքին գործերի կազմավորումների, հետախուզության, հակահետախուզության և այլ նմանատիպ կառույցների գործունեության հետ: Անձի, ընտանիքի, իր տարածաշրջանի, իր ազգի իրավունքների և ազատությունների ապահովման համար երաշխիքներ ունենալու անհրաժեշտության գիտակցումը պայմանավորել է հետաքրքրությունը անվտանգության վիճակի և իրացման ամենատարբեր կողմերի նկատմամբ:

Մեր կարծիքով՝ 1992 թվականի մարտին ընդունված «Անվտանգության մասին» Ռուսաստանի Դաշնության Օրենքի և Ռուսաստանի Դաշնության Նախագահ Բ. Ն. Ելցինի «Ռուսաստանի Դաշնության Անվտանգության խորհրդի կազմավորման մասին» հրամանագրի հիմնական բովանդակության մեջ պահպանվում է «անվտանգության» ընկալման նկատմամբ ավանդական պետական մոտեցումը, որի առանցքային հասկացությունն

է «պաշտպանվածությունը»[53]: Դա արդարացված է, եթե Հայրենիքի անվտանգության բոլոր պրոբլեմները հանգում են «ինչպես գոյատևել» հստակ հրամայականին:

Այդուհանդերձ, մենք համարում ենք, որ անկասկած շատ կարևոր փաստաթղթերում «անվտանգություն» տերմինի օգտագործումն ու դրա մեկնաբանությունը ամենևին էլ բավարար չեն:

Եվ տեսական, և՛ գործնական տեսակետից ավելի կարևոր է «ազգային անվտանգություն» հասկացության լայն իմաստավորումը: Հատուկ ուշադրություն է պահանջում «ազգային անվտանգության հայեցակարգ» հասկացության էության իմաստավորումը: Տվյալ համատեքստում «ազգային» տերմինը սահմանվում է որպես ընդհանուր առմամբ երկրին, Հայրենիքին վերաբերող: Սույն ընդհանուր տեսական չափման մեջ «ազգային» հասկացությունը մենք չենք վերագրում որևէ առանձին ազգի:

Ռուսաստանի Դաշնության ազգային անվտանգության հայեցակարգը, ըստ հեղինակին մատչելի աղբյուրների, համակարգված ձևով դեռ մշակված չէ: Քաղաքագետների, փիլիսոփաների, միջազգայնագետների, տնտեսագետների, ռազմագետների, բնապահպանության ոլորտի մասնագետների, տարբեր մակարդակի ժողովրդական պատգամավորների նախաձեռնող խմբակներ սկսել են մշակել այդ պրոբլեմը 1989 թ.[54]:

Ազգային անվտանգության պրոբլեմների ոլորտում իր տեսական ու գործնական աշխատանքներն զգալի չափով ակտիվացրել է «Ազգային և միջազգային անվտանգության հիմնադրամը», որն ստեղծվել է 1990 թվականի ապրիլի 28-ին և որպես միջազգային միավորում վերագրանցվել 1992 թվականի ապրիլին: Գրանցման վկայականում որպես գործունեության հիմնական նպատակներ սահմանված են՝ աջակցությունը Ռուսաստանի, Անկախ Պետությունների Համագործակցության անվտանգության հասարակական համակարգի, ինչպես նաև միջազգային անվտանգության հասարակական համակարգի ստեղծմանը: «Ազգային անվտանգություն» հասկացության առավել ծավալուն սահմանումներից մեկը բերված է Ազգային և միջազգային անվտանգության հիմնադրամի նախաձեռնությամբ ու մասնակցությամբ հրատարակված ժողովածուում: Մ. Վ. Ալեքսանդրովի «Մեր երկրի ազգային անվտանգության հայեցա-

[53] Տես Закон Российской Федерации "О безопасности". "Российская газета", 6 мая 1992 г., с. 5:

[54] Տես *М. Александров.* Безопасность СССР: два взгляда на философию внешней политики. "Литературная Россия", 22 февраля 1991 г.; "Национальная безопасность: смена приоритетов. Беседа А. Гаспаряна с Н. Н. Воронцовым". "Советская культура", 4 августа 1990 г.:

կարգի մասին» հոդվածում նշված է. «Ազգային անվտանգություն՝ միջազգային հարաբերությունների համակարգում պետության կենսունակությունն ապահովող գործոնների համախումբ, ծագող արտաքին սպառնալիքները հետ մղելու և իր ազգային շահերին համապատասխան գործելու նրա ունակությունը»[55]:

Բազմապիսի գործոնների թվում հեղինակը հիշատակում է «բարոյաքաղաքական» գործոնը՝ հասարակության բարոյաքաղաքական վիճակը, պետական կառույցների հաստատունությունը, ազգային բնավորության առանձնահատկությունները, դիվանագիտության որակը[56]:

Նշենք, որ առաջարկված սահմանումը բավականաչափ համապիտանի է: Այսպես, օրինակ, Բրազիլիայում 1964 թ. հեղաշրջումից հետո իշխանության եկած ղեկավարությունը իր սկզբունքները հռչակեց որպես ազգային անվտանգության գաղափարախոսության վրա խարսխված սկզբունքներ: Նրա վարած քաղաքականությանը նվիրված հրապարակումներից մեկում այն պնդումն էր արվում, թե ցանկացած ազգային նախագծի անհրաժեշտ նպատակն ու հիմքը ազգային անվտանգությունն է: Դա մի բացարձակ, անվերապահելի, ոչ մի բանով չսահմանափակվող արժեք է, բոլոր ձևերի հասարակական ու մասնավոր գործունեությունը որոշող բարձրագույն նորմ, գործողության անմիջական ղեկավար սկզբունք[57]:

ԱՄՆ-ի Նախագահ Ջ. Բուշի «ԱՄՆ-ի ռազմավարությունը ազգային անվտանգության ոլորտում» զեկուցման մեջ, որը 1990 թվականի մարտի 20-ին ուղղվեց Կոնգրեսին, նշված է. «Մեր ազգային շահերի ու նպատակների մասշտաբայնությունը մնում է անփոփոխ: Դրանք կարելի է ի մի բերել հետևյալ տեսքով. ԱՄՆ-ի գոյատևումը որպես ազատ և անկախ երկրի՝ նրա հիմնարար արժեքների, հիմնական հաստատությունների և ժողովրդի անվտանգության պահպանման պայմանով»[58]:

Ազգային անվտանգության վերը բերված սահմանումները, բուն հասկացության բովանդակությունը (Ջ. Բուշ), անկասկած, պարունակում են «պաշտպանվածության» պահանջ: Սակայն դրա հետ մեկտեղ նախատեսվում է քաղաքացու անձնական մասնակցությունը, անձնական պա-

[55] *М. В. Александров.* О Концепции национальной безопасности нашей страны. "Международная безопасность. Национальные и глобальные аспекты", Дайджест I, М., 1992, сс. 28–29.

[56] Տես նույն տեղում, էջ 29:

[57] Տես "Les ideologies totalitaires en Amerique Latine". "Faire", P., 1976, Oct., № 12, PP. 26–31:

[58] *G. Bush.* National Security Strategy of the Union States: 1990–1991. N. Y., 1990, P. 7.

տասխանատվությունը պետության կայունության և անվտանգության, գլխավոր արժեքների պահպանման համար: Որպես արդյունք՝ կարևոր ընդհանուր հատկություն է դառնում անձի և պետության, անհատի և հասարակության պատասխանատվության փոխպայմանավորվածությունը: Դրանով իսկ հնարավոր ազգային, սոցիալական լարվածություններն ու հակամարտությունները տեղափոխվում են փոխադարձ պարտավորությունների ոլորտ: Այսինքն՝ քաղաքական մեթոդներով հակամարտության լուծման միջոցներ պետք է փնտրեն ոչ միայն պետությունն ու նրա հաստատությունները, այլև քաղաքացիներն իրենք: Դրանով իսկ ազգային անվտանգության արժեքավորման հարցում ճանապարհ է բացվում դեպի քաղաքացիական համերաշխության, համաձայնության որոնում:

Ձգուշավոր լավատեսություն է ներշնչում Մոսկվայում այնպիսի ոչ կառավարական հասարակական միավորների ստեղծման գործընթացը, ինչպիսին է Ազգային և միջազգային անվտանգության հիմնադրամը: Նրա գործունեության հիմնական սկզբունքների թվում են՝ քաղաքացիների, հասարակության և պետության շահերի հաշվեկշռի հաշվառումը, ներքին և միջազգային հակամարտությունների կարգավորման խաղաղ միջոցների ու մեթոդների պաշտպանությունը[59]:

Դա ևս նպաստում է այն բանին, որ ազգային անվտանգության պրոբլեմների կարևոր խումբը, որը նախկինում խորհրդային գիտական վերլուծության համար փակ էր, դառնում է քաղաքական գիտությունների ոլորտի անկախ հետազոտողների ուսումնասիրության առարկա: Այս դեպքում ուսումնասիրության հայեցակետերը բավական տարբեր են՝ և՛ աշխարհաքաղաքական, և՛ բնապահպանական, և՛ այլ: Բայց ոչ պակաս կարևորը էթնոքաղաքագիտական վերլուծությունն է: Նման մոտեցման ընկալումն սկսել է ավելի ու ավելի լիարժեք կերպով արտահայտվել ինչպես խորհրդային հետազոտողների հրապարակումներում, այնպես էլ արտասահմանյան քաղաքագետների քննադատական աշխատություններում:

§ 3. ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՀԱՅԱՑՔ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԷԹՆՈՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԿՐԱ

Այս պատճառով կարելի է խորհրդային քաղաքագիտության համար կարևոր համարել նախկին տարիների հակաքարոզչական քննադատության վերահմաստավորումը՝ էթնոքաղաքագիտության պրոբլեմների գիտական ու քարոզչական բովանդակությունների հնարավորինս ավելի հստակ սահմանազատմամբ:

[59] Տես "Устав Фонда национальной и международной безопасности". М., 1992, сс. 2–3:

Անդրադարձը էթնոքաղաքագիտության ոլորտի արևմտյան մասնագետների նախկինում քննադատվող աշխատությունների բովանդակությանը տալիս է էթնոազգային գործընթացների վերլուծությամբ զբաղվող մի շարք արտասահմանյան հետազոտական կենտրոնների ու համալսարանների եզրակացությունների և գործունեության արգասիքների նկատմամբ խորհրդային մասնագետների անընկալունակության հատկանիշ օրինակներ:

Դեռ ավելին. խորհրդային մասնագետների հնարավորություններն զգալի չափով սահմանափակվեցին ոչ միայն սոցիալիստական երկրների ու ԽՍՀՄ վարած ազգային քաղաքականության վրա զանգվածային լրատվության արևմտյան միջոցների հարձակումներին, այլև բուն տեսական քաղաքագիտական ուսումնասիրություններին «մերկացուցիչ արձագանքման պատվերով»: Դրանով իսկ խորհրդային ղեկավարությունը իրեն, ինչպես նաև հասարակայնության լայն, այդ թվում՝ գիտական, շրջաններին որոշակիորեն զրկեց ժամանակակից էթնիկական գործընթացների էությունը ներկայացնող ու վերլուծող հայեցակարգերի օբյեկտիվ ընկալման հնարավորությունից: Մինչդեռ այդ հայեցակարգերի շնորհիվ կարելի էր կանխատեսել նման գործընթացների զարգացումը նաև Խորհրդային Միությունում:

էթնոքաղաքագիտությանը «գաղափարախոսական հակազդեցության վերանայման» կոնկրետ արդյունք կարող էր դառնալ այն գիտական հակամարտային կանխատեսումների անվերապահ հերքման բացասական փորձի իմաստավորումը, որոնք համահունչ չէին խորհրդային ազգային քաղաքականության տեսության ու պրակտիկայի դոկտրինալ հրամայականներին: Ազգամիջյան հարաբերությունների զարգացման բերումով և օգտակար, և կարևոր է թվում վերհիշել արևմտյան մասնագետների կողմից դեռ վաղուց արված մի շարք կանխատեսումներ, անգամ նախազգուշացումներ այն մասին, որ ցայտունորեն արտահայտված տարաքաղաքակրթական կենսատարածքներ ներառող խորհրդային բազմազգ պետության արագացված արդիականացումը ծևավորում է պայթյունավտանգ հակամարտածին ներուժ:

Մասնավորապես՝ ուշագրավ է հետևյալ փաստը: Դեռ այն շրջանում, երբ խորհրդային հասարակագիտության մեջ մշակվում և «գաղափարախոսական շրջանառության» մեջ էր դրվում զարգացած սոցիալիզմի հայեցակարգը, որը վերջին հաշվով արտացոլում էր խորհրդային հասարակության արդիականացման ընկալումը, ամերիկացի սոցիոլոգները կանխատեսում էին բազմազգ ԽՍՀՄ-ում տեղի ունեցող արդիականացման հակամարտածին բնույթը և թաքուն շրջանում գտնվող հակամարտությունների առկայությունը:

Որպես «հասուն սոցիալիզմի» արդիականացման էթնոազգային պրոբլեմների կոլեկտիվ գիտական քննարկման արդյունք կարելի է հիշատակել ներկայիս իրադարձությունների տեսակետից առանձնապես հատկանշական եզրակացությունը, որն արվեց ԱՄՆ-ում 1976 թվականի դեկտեմբերին կայացած «Ազգություններն ու ազգայնականությունը ԽՍՀՄ-ում» գիտական սիմպոզիումի ժամանակ: Ըստ դրա՝ Խորհրդային Միությանն սպառնում են անջատողականությունն ու մասնատումը[60]: Հենց նույն ժամանակ «Ռուսաստանի արդիականացման» գծով մասնագետները կանխատեսել էին ժողովուրդների միջև նախկին անվստահության ավանդույթի աշխուժացում՝ կապված տնտեսության ու մշակույթի ոլորտներում խորհրդային ազգերի անհավասարաչափ զարգացման հետ[61]:

Վերակառուցման ընթացքում Խորհրդային Միության քաղաքական համակարգի ազատականացումը, քայքայելով էթնոազգային ծայրամասի նկատմամբ կենտրոնի արդյունավետ վերահսկողության միջոցները, նախադրյալներ ստեղծեց, որ էթնոազգայնականության թաքնված ներուժը կերպափոխվի ինչպես հորիզոնական (միջէթնիկական), այնպես էլ ուղղաձիգ (կենտրոնա-ծայրամասային) հարաբերություններում ծագած բացահայտ էթնոազգային հակամարտությունների:

Արդիականացող ԽՍՀՄ-ում թաքնված էթնոհակամարտային ներուժի ձևավորման գործոնները վերլուծելու համար, մեր կարծիքով, նպատակահարմար է դիմել «էթնիկական շերտավորման» պրոբլեմներին վերաբերող էթնոքաղաքագիտական հետազոտություններին: Ինչպես ցույց է տրվել և զարգացած արևմտյան, և՛ զարգացող հասարակություններին վերաբերող նյութերի հիման վրա, «էթնիկական շերտավորման» երևույթի համընդհանրությունը թույլ է տալիս մտածել, որ այն առկա է նաև սոցիալիստական իրականության մեջ, թեև պաշտոնական վարկածը հռչակում էր «սոցիալիստական ազգերի զարգացման մակարդակի համահավասարեցում»:

Սույն հետազոտության նպատակների համար առաջարկվում է որպես «էթնիկական շերտավորման» հիմնական չափումներ դիտել ինչպես համապետական, այնպես էլ էթնոազգային մակարդակներում մարդու կոլեկտիվ և անհատական իրավունքների ապահովման համակարգը: Քանի որ այս բնութագրիչը կարևոր դեր է խաղում արևմտյան էթնոքաղաքագիտության մեջ, մասնավորապես՝ «էթնիկականության քաղաքականաց-

[60] Տես "Nationalities and nationalism in the USSR: A Soviet dilemma". Washington, 1977, VIII:

[61] Տես *N. A. Riasanovsky*. History of Russia. 3-rd ed., N. Y.: Oxford univ. press, 1977, P. 654:

ման» գործընթացների վերլուծության ժամանակ, ըստ երևույթին, հարկ է դրան հատուկ ուշադրություն հատկացնել որպես այս կամ այն էթնոազգային խմբի վարքի հնարավոր հակամարտայնության կարևոր ցուցչի:

Մարդու իրավունքներին տիրելու և դրանց իրականացված լինելու ցուցիչը կարող է բավարար չափով ի հայտ բերվել կոնկրետ էթնիկական խմբերի կամ էթնոմշակութային կենսատարածքների արդիականացվածության (համապետականի համեմատությամբ) տնտեսական, սոցիալական, քաղաքական, բնապահպանական և մշակութային մակարդակների օբյեկտիվ ցուցանիշների ուսումնասիրությամբ:

Մարդու իրավունքների պաշտպանվածության ցուցիչը կարելի է ուսումնասիրել համամիութենական ու հանրապետական նորմերի հետ միջազգային իրավական նորմերի համեմատական վերլուծության մեթոդով, ինչպես նաև՝ ըստ օրենսդիր ու դատահիրավական գործունեությունում դրանց կիրառման:

Նման կարգի հետազոտությունները թվում են հատկապես կարևոր այն պատճառով, որ էթնիկական շերտավորման հարցը, թերևս, կենտրոնական տեղ էր զբաղեցնում ազգամիջյան հարաբերությունների պրոբլեմներով արևմտյան ու խորհրդային հասարակագիտությունների դիմակայությունում:

Ընդունելով և անգամ շեշտելով Արևմուտքի զարգացած բազմազգ հասարակություններում ազգային անհավասարության առկայությունը՝ «գաղափարաբանական հակազդեցության» ժամը կողմնորոշում էր ոչ այնքան «արևմտյան» փորձի վերլուծությանն ու դասերի յուրացմանը, որքան էթնոքաղաքական սոցիոլոգիայի մասնագետների քննադատությանն ու կանխատեսումների ժխտմանը:

Քննադատող կողմի դիրքորոշումը, ըստ էության, հանգում էր մի քանի թեզերի: Դրանցից գլխավորն այն էր, որ ի հակադրումն կապիտալիզմի՝ սոցիալիզմը առաջ է բերում մեկ այլ օրինաչափություն՝ անցյալում «հետամնաց» ժողովուրդների սոցիալ-տնտեսական, քաղաքական ու մշակութային զարգացման անհակամարտ պլանային հավասարեցում «առաջավոր» ժողովուրդների մակարդակին: Հատկապես շեշտվում էր այն հանգամանքը, որ «հետ մնացած» ազգերի ու ազգությունների «հավասարեցման» օրինաչափությունը, որը լիովին հակադիր է կապիտալիստական բազմազգ պետությունների զարգացման տրամաբանությանը, առաջին անգամ իրականացրել է Խորհրդային Միության կոմունիստական կուսակցությունն իր ազգային քաղաքականության տեսության մեջ ու պրակտիկայում, ընդսմին այդ փորձը հետագայում դրվել է բազմազգ

սոցիալիստական պետությունների եղբայրական կուսակցությունների գործունեության հիմքում:

Արևմտյան քաղաքագետների հետազոտությունների արդյունքներից սահմանազատումը սովորաբար հաստատվում էր գիտական հակառակորդների տեսական հիմնավորումներին խորհրդային հասարակագետների համար հրամայական-հրահանգային բնույթ ունեցող կուսակցական փաստաթղթերի հակադրմամբ: Նման կարգի հղումների համար շռայլ նյութեր էր ապահովում, մասնավորապես, ԽՄԿԿ կենտկոմի հաշվետու զեկուցումը ԽՄԿԿ 26-րդ համագումարին, որը կայացավ 1981 թ., այսինքն՝ այն ժամանակաշրջանում, երբ ԽՍՀՄ-ում տեղի էր ունենում խորհրդային լայն հասարակայնությունից հանգամանորեն թաքցվող բնապահպանական, տնտեսական, քաղաքական ու բարոյական ճգնաժամի խորացում:

Օրինակ կարող է ծառայել ԽՄԿԿ 26-րդ համագումարին Լ. Ի. Բրեժնևի ներկայացրած հաշվետու զեկուցման հետևյալ հատվածը. «Սովետական իշխանության առաջին տարիներից մեր տնտեսական ու սոցիալական քաղաքականությունը կառուցվում էր այնպես, որ Ռուսաստանի նախկին ազգային ծայրամասերը հնարավորին չափ արագ բարձրացվեցին մինչև նրա կենտրոնի զարգացման մակարդակը: Եվ այդ խնդիրը հաջողությամբ լուծվեց: Այստեղ կարևորագույն դեր խաղացին երկրի բոլոր ազգերի սերտ համագործակցությունը և ամենից առաջ ռուս ժողովրդի անշահախնդիր օգնությունը: Հետամնաց ազգային ծայրամասեր, ընկերներ, ներկայումս գոյություն չունեն»: Դրան լրացնում էր. «Մեր կուրսն է՝ մեծացնել յուրաքանչյուր հանրապետության նյութական ու հոգևոր պոտենցիալը, և դրա հետ մեկտեղ, այն առավելագույնս օգտագործել ամբողջ երկրի ներդաշնակ զարգացման համար: Այդ ճանապարհին մենք հիրավի պատմական նվաճումներ ենք ձեռք բերել»[62]:

«Էթնիկական շերտավորման» համընդհանրության ապացույցները «խորտակող» փաստարկների թվում, կուսակցական դիրեկտիվների հետ մեկտեղ, սովորաբար բերվում էին նաև հատվածներ բարձրագույն պետական իշխանության նորմատիվային փաստաթղթերից: Համաձայն ԽՍՀՄ Սահմանադրության՝ «ՍՍՀՄ տարբեր ռասաների և ազգությունների քաղաքացիները հավասար իրավունքներ ունեն: Իրավունքների որևէ ուղղակի կամ անուղղակի սահմանափակում, ըստ ռասայական և ազգային հատկանիշների քաղաքացիների ուղղակի կամ անուղղակի առավելությունների սահմանում, ինչպես նաև ռասայական կամ ազգային բացառի-

[62] Տես «ՍՄԿԿ 26-րդ համագումարի նյութեր»: Ե., 1981, էջ 89 – 90:

կության, թշնամանքի կամ արհամարհանքի ամեն մի քարոզ պատժվում են օրենքով»[63]:

26-րդ համագումարից 6 տարի անց՝ Կենտկոմի հուլիսյան (1987 թ.) պլենումում, ԽՄԿԿ կենտկոմի նոր Գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչևը, բնութագրելով «հասուն սոցիալիզմի» դարաշրջանը, շեշտեց հասարակական կյանքի բոլոր ոլորտներում «նախաձգնաժամային երևույթների» աճի միտումը: Այդ պլենումում արված զեկուցման մեջ հասարակության վիճակին տրված ամփոփիչ գնահատականն ըստ էության հանգում էր այն եզրակացությանը, որ արդեն 1980-ական թվականների սկզբներին երկրի «հիվանդությունները» ծեռք էին բերել քրոնիկական բնույթ:

«Վերակառուցման» ուղեգծի հռչակումից հետո ԽՄԿԿ պաշտոնական փաստաթղթերի, ԽՍՀՄ քաղաքական ղեկավարների ու հասարակական գործիչների ելույթների ուսումնասիրությունն օգնում է ապես ճշգրտելու Խորհրդային Միությունում 1980-ական թվականներին ստեղծված իրադրության ըմբռնումը: Քաղաքական ոլորտում «վերակառուցումային» գնահատումների տեսակետից առավել կարևոր երևույթ կարելի է համարել ոչ միայն երկրի բնակչության հիմնական զանգվածի, այլև ԽՄԿԿ շարքային անդամների մեծ մասի, ինչպես նաև մշտական կուսակցական վերահսկողությամբ գործող հասարակական կազմակերպությունների «օտարումը» պետական-կուսակցական կառույցներից: Որպես կանոն, այդ օտարումը դրսևորվում էր կառավարության խոստումների ու որոշումների նկատմամբ թերահավատության, հասարակական անտարբերության, սոցիալական լարվածության աճի ձևով:

Քաղաքական վերափոխումների ծավալման ընթացքում սկսեցին սուր քննադատության ենթարկվել վարչահրամայական բյուրոկրատական համակարգի խոր կոռումպացվածությունն ու խորհրդային հասարակության սոցիալական զարգացման, այդ թվում՝ էթնոազգային գործընթացների, մասին հաղորդվող տեղեկույթի քրոնիկական նպատակաուղղված աղճատումը:

«Տեղերում» ծավալված գործընթացների մասին տեղեկույթի հավաքման ու մշակման համակարգը գործի է դրվել դեռ պարտադրվող արագացված արդիականացման ստալինյան շրջանում: Ըստ էության, այն հանդես է եկել որպես իրադրության քաղաքական վերլուծության, առանձին ճյուղերում կամ կոնկրետ ազգային տարածաշրջաններում տիրող իրավիճակի վրա ուժային ներգործության չափի կարգավորման վերահսկման, ինչպես նաև ներքին ու արտաքին քաղաքական կիսապաշտոնական քարոզչության միջոցով լայն հասարակայնության ապատեղեկացման մեխանիզմի կարևոր լծակներից մեկը:

Երկրում Լ. Ի. Բրեժնևի քաղաքական ղեկավարման շրջանում տեղեկույթը «վերև» էր հասնում ավելի ու ավելի աղավաղված տեսքով: Դա էր պարտադրում «հասուն սոցիալիզմի» դոկտրինը, որը պահանջում էր «ճյուղերի ու տարածաշրջանների համալիր զարգացմանն» ուղղված առաջադրանքների մասշտաբների՝ հասարակությանն ուժասպառ անող մեծացում և քարոզվող գիտատեխնիկական առաջընթացի տեմպերի արագացում:

Տնտեսական, սոցիալական, քաղաքական ու բարոյական համակարգային ճգնաժամի խորացման պայմաններում ապատեղեկատվությունը դարձավ տեղերում կատարվող աշխատանքների վերաբերյալ ներկայացվող հաշվետվությունների որոշիչ հատկանիշը: Երկար տարիներ քաղաքական վերահսկողության կենտրոնացման պայմաններում իշխանության պաշտոնական մարմինների նոմենկլատուրային կորպուսի կողմից կատարվող հավելագրումները և այլ մեքենայություններ կոծկող կեղծ փաստաթղթերի կանոնավոր ստեղծումը պայմանավորեցին ռեալ իշխանության կենտրոնացումը կառավարչական ապարատում, ինչպես նաև այդ ապարատի կոռումպացվածությունը: Կարչաքաղաքական վերահսկողության գործնականում բոլոր մակարդակներում կոռուպցիայի վերարտադրման պետական-կուսակցական արմատների ու մեխանիզմների բացահայտումը, որը կատարվեց վերակառուցումային «հրապարակայնության» շրջանում, քաղաքական ռեժիմի բարոյալքվածության աստիճանը հասանելի դարձրեց ոչ միայն մասնագետների, այլև հասարակայնության համար:

Կոռուպցիայի՝ որպես սոցիալական երևույթի վերլուծության փորձերը հաստատում են դրա զգալի ազդեցությունը առավել ստվար, այդ թվում՝ էթնոազգային, հանրություններում սոցիալական արդարության, քաղաքացիական ազատությունների և մարդու իրավունքների պաշտպանվածության մակարդակով անհատական ու խմբային կայուն անբավարարվածության ձևավորման վրա:

Դրա հետ մեկտեղ, բռնի արդիականացումը, որը կատարվում էր ԽՍՀՄ՝ որպես «հեղափոխության ամրոցի» գերինդուստրիալ զարգացման ստալինյան հայեցակարգի շրջանակներում, հանգեցրեց ժողովրդական տնտեսության կառուցվածքում տարրերի հարաբերակցության խոր անհամամասնությանը: Ռազմաարդյունաբերական համալիրի անբնականոն ու գերազանցապես էքստենսիվ զարգացումը, որը կատարվում էր ի հաշիվ կենսապահովման մյուս բոլոր ռեսուրսների, քայքայիչ ազդեցություն գործեց բնական միջավայրի վրա՝ բնապահպանության ոլորտում առաջ բերելով ճգնաժամային երևույթներ:

[63] «Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության Սահմանադրություն (հիմնական օրենք)»: Ե., 1987, էջ 18:

Մի շարք ազգային տարածաշրջաններում՝ Մերձբալթիկայից մինչև Միջին Ասիա, վերջին տարիներին տեղի ունեցան տեխնածին բնապահպանական ճգնաժամային երևույթներ: Հրապարակայնության և մարդու անհատական ու կոլեկտիվ իրավունքների պաշտպանության համաշխարհային ստանդարտների մասին իրազեկվածության, ինչպես նաև առօրեական բարիքների աճող պակասուրդի պայմաններում դրանք դարձան էթնիկական տարածաշրջանների տեղաբնակների ճակատագրով խոր մտահոգության պատճառ: Քանի որ տեխնածին բնապահպանական աղետների աղբյուրներ էին մեծ մասամբ միութենական պետական գերատեսչությունների ձեռնարկությունները ու կազմակերպությունները, ապա հասարակայնության բնապահպանական մտահոգությունը վերածվեց «ազգային հատկանիշով» ինտենսիվ քաղաքականացման կարևոր հավելյալ գործոնի:

Սոցիալական լարվածության ընդհանուր ֆոնի վրա բնապահպանական շարժումների վրադրումը մի շարք տարածաշրջաններում ձևավորեց կենտրոնա-ծայրամասային և միջէթնիկական հակամարտությունների հզոր էթնոազգային ներուժ:

Այսպիսով՝ վերակառուցման ընթացքում տեղի ունեցող կառուցվածքային միջհամակարգային փոփոխությունների պայմաններում բազմազգ ԽՍՀՄ բռնի և արագացված արդիականացումը դինամիկացրեց ու բացահայտեց անհավասարաչափ արդիականացած էթնոազգային խմբերի միջև առկա թաքնված լարվածությունը:

Իր կազմի մեջ մտնող ազգերի իրավունքների և ազատությունների գերագույն երաշխավոր հանդիսացող ԽՍՀՄ-ի կողմից անվտանգության ռեալ իրավաքաղաքական, ռազմական, տնտեսական, սոցիալական, մշակութային ու բնապահպանական երաշխիքներ չլինելու պայմաններում առավել քաղաքականացած ազգերը դիմեցին ազգային ինքնորոշման իրենց իրավունքի և, վերջին հաշվով, ազգային ինքնիշխանության համար մղվող քաղաքական պայքարի:

Բնապահպանական շարժման ակտիվացումից ազգային անկախության հռչակմանն անցնելու «սցենարի» դասական զարգացում տեղի ունեցավ, մասնավորապես, Մերձբալթյան հանրապետություններում[64]: Պետք է ցավով նշել, որ այժմ արդեն նախկին ԽՍՀՄ տարածքում տեղի ունեցող էթնոազգային զարգացումների էթնոքաղաքագիտական վերլուծության և իմաստավորման գործում առաջնությունը դարձյալ պատկանում է արտասահմանյան հեղինակներին:

[64] Տես "The nationalities question in the Soviet Union". L.–N. Y., Longman, 1990, PP. 39 – 91:

* * *

Ավարտելով առաջին՝ ըստ իր խնդիրների քաղաքագիտական-պատմագրական, գլուխը՝ ցանկանում ենք ուշադրություն հրավիրել խորհրդային և հատկապես արտասահմանյան հետազոտությունների այնպիսի բնութագրային առանձնահատկության վրա, ինչպիսին է դրանց հասկացութատերմինաբանական ապարատի զգալի համընկնումը բուն քաղաքագիտական, սոցիոլոգիական, ազգաքանամարդաբանական ապարատների հետ: Նման համընկնումը բնական ու սովորական է սահմանային ենթագիտաճյուղերի համար, ինչի վկայությունն է, մասնավորապես, իշխանաքաղաքական* ազգագրության օրինակը[65]:

Էթնոքաղաքագիտության, ինչպես նաև ցանկացած այլ գիտաճյուղի յուրահատկությունը կապված է առաջին հերթին իր ուսումնասիրության առարկայի հետ: Մեր կարծիքով՝ այն կարող է սահմանվել որպես էթնիկական ու պատմամշակութային առանձնահատկություններ, որոնք բնորոշ են քաղաքական մշակույթին, կամ իշխանության և իշխման հարաբերություններին՝ դրանց օբյեկտիվ (հաստատությունների ու կառույցների միջոցով) և սուբյեկտիվ (քաղաքական վարքի շարժառիթավորումներ, կողմնորոշումներ, քաղաքական արժեքների համակարգեր և այլն) առումներով:

Ամփոփելով էթնոքաղաքականության և ազգային անվտանգության միջև փոխադարձ կապի վերլուծությունը, որոնք մենք փորձեցինք դիտարկել մեր հետազոտության սույն գլխում, կարող ենք առանձնացնել հետևյալ նկատառումները: Էթնոքաղաքականությունը այն ներքին և արտաքին քաղաքականության բաղկացուցիչ մասն է, որը վարում են ժամանակակից պետությունները ինչպես ազգային, այնպես էլ տարածաշրջանային ու համընդհանուր մասշտաբներով իրենց անվտանգությունն ապահովելու նպատակով:

Էթնոքաղաքագիտությունը քաղաքական գիտությունների նոր ձևավորվող ճյուղ է, որն ի հայտ է եկել արևմտյան հիմնարար քաղաքագիտության մեջ, ինչպես նաև ազգային-պետական, տարածաշրջանային ու համընդհանուր մակարդակներում անվտանգային խնդիրների վերլուծական-կառավարչական ապահովման հատուկ բաժինների հավելվածներում: Խորհրդային էթնոքաղաքագիտության՝ որպես առանձնահատուկ քաղաքական գիտելիքների համակարգի ինտենսիվ ձևավորումը կարևոր ու հրատապ գիտական խնդիր է: Այն կապված է Ռուսաստանի և ԽՍՀՄ

* *Իշխանաքաղաքական ազգագրություն* (потестарно-политическая этнография; լատ.՝ potestas՝ ուժ, հզորություն, իշխանություն, բառից)՝ արևմտյան «քաղաքական մարդաբանություն» ենթագիտաճյուղի հոմանիշը: *Ծանոթ. թարգմ.:*

[65] Տես *Л. Е. Куббель.* Очерки потестарно-политической этнографии. М., 1988, с. 27:

կազմում եղած հանրապետությունների ազգային շահերի աշխարհառազմավարական տարածության մեջ անվտանգության պրոբլեմների ամբողջ, այդ թվում՝ էթնոքաղաքական, բազմապիսության մասին համակարգված պատկերացումներ կազմելու հետ:

Ընդհանրապես արդիականացող հասարակություններում, և, մասնավորապես, ԽՍՀՄ–ԱՊՀ-ի ու նախկին սոցիալիստական բլոկի երկրներում տեղի ունեցող ռեժիմային փոփոխությունները պահանջում են անվտանգության այլ կարևոր կողմերի հետ մեկտեղ ուսումնասիրել անցումային հասարակությունների քաղաքակրթական դինամիկայի համաձայնային և հակամարտային ներուժի պրոբլեմները: Էթնոքաղաքական ճգնաժամների զարգացման դեռ սկզբնական փուլերում դրանց նույնականացմանն ու լուծմանը պետք է օգնի էթնիկական հանրությունների, ազգերի, պատմամշակութային կենսատարածքների նմանության–տարբերության էթնոքաղաքագիտությունը: Ընդսմին այդ նմանություն–տարբերությունը որոշվում է ըստ այն արժեքային կողմնորոշումների, որոնք մարդկության քաղաքակրթական կազմակերպվածքի համապատասխան մակարդակներում կամ հակադրվում են մարդու իրավունքների պաշտպանվածության ապահովմանը, կա՛մ էլ դրվում են վերջինիս հիմքում: Միևնույն ժամանակ, քաղաքակրթական համակարգերի միջև «համաձայնության-հակամարտության» էթնոքաղաքագիտությունը կարող է կիրառվել որպես գինված էթնոքաղաքական հակամարտությունների բնույթն ավելի մարդասիրական դարձնելու, ինչպես նաև համաձայնային եղանակով կարգավորելու ու նույնիսկ լուծելու գիտականորեն հիմնավորված գործիքարան:

Այսպիսով՝ ԽՍՀՄ տիպի քաղաքակրթական բարդ միավորումների ազգային անվտանգության պրոբլեմների շարակարգված ուսումնասիրությունը պահանջում է շփվող քաղաքակրթական համակարգերի «զուգամիտման-տարամիտման» հիմնարար էթնոքաղաքագիտական հետազոտում, ինչպես նաև կիրառական մշակումներ՝ միտված ժամանակակից արդիականացած և անցումային՝ արդիականացող, պետությունների ներքին և արտաքին անվտանգության ոլորտում ազգային շահերի էթնոքաղաքական պաշտպանության պրակտիկայում որոնյալ մեթոդաբանական մոտեցումների ու մոդելների իրացմանը:

Գլուխ 2

ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԷԹՆՈՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐ

«Արդիականացում» հասկացությունը, ընկալված լինելով որպես հասարակության կերպափոխում «ավանդական» վիճակից «արդիականի», արևմտյան հասարակագետներն սկսել են օգտագործել 1960-ական թվականների սկզբներին: Առավել ընդհանուր իմաստով արդիականացում ասելով նկատի են ունենում հասարակության բազմաչափ փոփոխությունը տնտեսական, տեխնոլոգիական, բնապահպանական, ժողովրդագրական, քաղաքական, սոցիալական ու հոգեբանական առումներով: Այն սկիզբ էր առել Արևմտյան Եվրոպայում 16-րդ դարում, ապա ստացել էր համընդհանուր տարածում:

Արդիականացումը կարևոր նշանակություն ունի էթնոազգային գործընթացների զարգացման համար, որովհետև արմատապես փոխում է ազգի կամ էթնիկական խմբի գործունեության պայմանները: Այս հարցում հատկապես ուշագրավ է Քաղաքական գիտությունների միջազգային ասոցիացիայի նախկին նախագահ պրոֆեսոր Ք. Դեյչի կարծիքը: Նրա պնդմամբ՝ արդիականացումն անխուսափելիորեն ակտիվացնում է էթնիկական գիտակցումը, նպաստում ազգային ինքնավարության ձեռքբերման քաղաքական ձգտումների ձևավորմանը: Որպես արդյունք՝ ազգային հակամարտությունները ապագայում կսկսեն ավելի հաճախ ծագել և առաջին հերթին կներառեն բազմազգ պետությունները, ինչի հետևանք կլինի դրանց տրոհումը առանձին տարածաշրջանների[66]: Նրան համակարծիք է նաև ականավոր ամերիկյան քաղաքագետ Զ. Բժեզինսկին՝ պնդելով, որ արդիականացումն ունի տարանջատման ներուժ:

§ 1. ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԷԹՆՈՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՂՄԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄԸ

Էթնոքաղաքականության հետազոտման գործում հասարակագիտության տարբեր բնագավառների մասնագետների ջանքերի անշուշտ օգտակար միավորումը իհարկե չի նշանակում էթնոքաղաքագիտության միասնական հայեցակարգի «մեխանիկական կազմում»՝ տարաբնույթ հատվածների պարզ միակցմամբ: Հայտնի ամերիկացի գիտնական Մ. Նեշի կարծիքով՝ ներկայումս էթնիկականության ընդհանուր տեսության ստեղծմանը խոչըն-

[66] Տես "Foundation of modern Sociology". N. Y., 1976, PP. 269–270:

դոտում են հասարակության կենսագործունեության սոցիալական, մշակութային ու հոգեբանական ոլորտները միաժամանակ ընդգրկող հասարակագիտության «գլխավոր» տեսությունից «առաջ ընկնելու» փորձերը: Իսկ հիմա, երբ նման մակարդակը դեռ նվաճված չէ, պետք է վերլուծական գաղափարների ընդհանուր շտեմարանից ընտրել այն գաղափարները, որոնք համապատասխանում են «մարդկության պատմության սահմանափակ հատվածներից» մեկի պատմական, կառուցվածքային ու մշակութային իրողություններին: Հետազոտողը որպես այդ սահմանափակ և միևնույն ժամանակ բավականաչափ տևական հատված առանձնացնում է համաշխարհային պատմության վերջին հինգ դարը: Այդ ժամանակաշրջանը բնորոշվում է արդիականացմամբ, որի գլխավոր բաղադրատարրերն են ազգային պետությունները և դրանց կազմում եղած էթնիկական խմբերը՝ որպես ինքնագիտակցությամբ օժտված հանրություններ[67]:

Այնպիսի արևմտյան քաղաքագետների հետազոտություններում, ինչպիսիք են Ս. Էնլոուն, Ն. Գլեյզերը, Ա. Սմիթը, Ջ. Դանլոպը, Զ. Սայմոնը, Զ. Սլոուսոնը, Թ. Ռակովսկա-Հարմստոունը, Թ. Մաք-Նեյլը և ուրիշներ, համոզիչ կերպով ցույց է տրված, որ բազմազգ հասարակություններում էթնիկական խմբերը հավասար չափով չեն մասնակցում արդիականացմանը: Որոշ էթնիկական խմբեր ավելի վաղ են մտնում արդիականացած շերտերի մեջ, քան մյուսները, և ավելի բարձր մակարդակի «արդիականացվածության» են հասնում՝ շնորհիվ քաղաքական նախապատվությունների և արտոնությունների համակարգի գործառման կամ իրենց մշակույթի առանձնահատկությունների, որն ավելի մեծ չափով է կողմնորոշված դեպի առաջադիմություն, քան մյուս էթնիկական խմբերի մշակույթը[68]:

էթնիկական խմբերի միջև անհավասարության գոյությունը պայմանավորված է հենց արդիականացման գործընթացների անհավասարաչափությամբ և արդիականացման մակարդակների միջև խզումների առկայության օրինաչափությամբ: Արևմտյան քաղաքագետները, հիմնվելով տարբեր սոցիալական կարգ ունեցող հասարակությունների հետազոտությունների վրա, համոզիչ կերպով ցույց են տալիս, որ զարգացած բազմաէթնիկ հասարակություններում գոյություն ունի «էթնիկական շերտավորում»[69]: Որպես ԱՄՆ-ում կատարված «էթնիկական շերտավորման» քաղաքա-

[67] Տես *Մ. Նեշ*, Նշ. աշխ., էջ 3–4:

[68] Տես "Canadian Slavonic". Ottawa, 1975, № 213, P. 287:

[69] Տես *Գ. Ֆոստեր*, Նշ. աշխ., էջ 560 – 569, *J. Gumperz*. The communicative bases of social unequality. "Minorities: Community and identity", Berlin, "Springer", 1982, PP. 109 – 118, *Մ. Հեկտեր*, Նշ. աշխ., էջ 17 – 26, *Y. Seton-Watson*. Nations and states: An inquiry into the origins of nations and the politics of nationalism. Boulder (Cal.), 1977:

կան-սոցիոլոգիական ուսումնասիրության տիպիկ փորձ հիշատակենք «Անհավասար ամերիկացիներ. միջխմբային հարաբերությունների պրակտիկա և քաղաքականություն» հատուկ հետազոտությունը, որի հեղինակներ Ջ. Սլոուսոնը և Մ. Վոսկը, համեմատելով կենսամակարդակի հիմնական ցուցանիշները կրթության, բնակարանային պայմանների, զբաղվածության և այլ ոլորտներում, ուսումնասիրում են ԱՄՆ-ի բնակչության էթնիկական խմբերի կյանքի ստանդարտների ռեալ տարբերությունները[70]: Հանրահայտ անգլիացի քաղաքագետ Ն. Գլեյզերը «էթնիկական գործոն» հոդվածում փաստում է, որ «հասարակությունն ի վիճակի չէ բոլոր էթնիկական խմբերը հասցնելու սոցիալական ու տնտեսական զարգացման միևնույն մակարդակի, հավասարության»[71]:

Կա կարծիք, որ հասարակության կյանքի երևույթների ամբողջ բազմապիսությունը, ներառյալ՝ էթնոազգային իրողությունները, հնարավոր չէ հանգեցնել միայն ֆորմացիոն մոտեցման հիմնական կատեգորիաների, հատկապես, երբ այն հանդես է գալիս գռեհկացված ձևով՝ խոսելով դասակարգերի կոշտ դիմակայության մասին: Ներկայումս այդ կարծիքը կարելի է համարել ընդունված տեսակետ ոչ միայն արևմտյան, այլև խորհրդային հասարակագիտության մեջ:

Խորհրդային ժամանակների հայտնի պատմաբան ոչ մարքսիստ Մ. Ա. Բարգը իր վերջին ելույթներից մեկում հատուկ շեշտել է, որ ականավոր արևմտյան մասնագետները, ի տարբերություն Մարքսից մեր հրաժարման, ավելի ու ավելի ակնհայտորեն են նրան համարում 19-րդ դարի պատմական մտքի կարկառուն տեսաբան, որը պատմության բուն գաղտնիքը տեսավ մարդկանց նյութական պրակտիկայի մեջ: Ֆորմացիայի մարքսյան կատեգորիան պահպանում է իր նշանակությունը որպես այն գործընթացների հայեցակարգման մեթոդ, որոնք հանգուցային են պատմության օրինաչափության տարրերը հասկանալու համար:

Մ. Ա. Բարգը մեր դարի սկզբում տեղի ունեցած գիտական առաջընթացի կարևոր ցուցիչ է համարում մարդու «բաժանումը» «տնտեսական մարդու», «քաղաքական մարդու», «սոցիալական մարդու», որովհետև պատմական գիտությունը տրոհվում էր ենթագիտաճյուղերի, և դրանք միմյանցից մեկուսացած առանձին կողմերի խորքերը: Սակայն արդեն 20-ական թվականներին դարի խոշորագույն ֆրանսիացի պատմաբան Մարկ Բլոկը իր գործընկերներին կոչ արեց վերադառնալու մարդու ըմբռնմանը որպես մեկ ամբողջության:

[70] Տես *J. Slawson, M. Vosk*. Unequal Americans: Practicies and politics of intergroup relations. L., 1979:

[71] *Ն. Գլեյզեր*, Նշ. աշխ., էջ 15:

Ներկայումս, երբ խորհրդային քաղաքականության մեջ ու քաղաքական գիտություններում տեղի է ունենում արժեքային կողմնորոշումների հերթական ցավագին վերաիմաստավորում, կատարվում է «փուլանիշների փոփոխություն» սոցիալական կապերի իմաստի վերմարդկային ընկալումից դեպի մարդը՝ որպես համակարգաստեղծ մարդասիրական արժեքի, որն ունի բազմաչափ անհատական ու խմբային բազմապիսություն:

Այն բանից, թե որքանով է մարդուն հաջողվում դրսևորել իր բազմաչափությունը, ինչ շրջանակներում է ուրվագծված նրա կենսական տարածությունը, որում ապահովվում կամ չի ապահովվում նրա՝ որպես ինքնիշխան անձնավորության զարգացումը, կախված կլինի, թե ինչ պատմական հարացույցի հետ նա կարող է հարաբերակցված լինել: Այդպես կարելի է որոշել նաև անհատի, դասակարգի, խավի, էթնիկական հանրության, ընդհանուր առմամբ պետության կամ մարդկանց որևէ այլ հանրույթի հետազոտման դաշտը՝ ֆորմացիոն, թե քաղաքակրթական:

Սույն մենագրական հետազոտության հեղինակը ելնում է այն մեկնակետից, որ ֆորմացիոն գործընթացը ներառում է հերթագայության, հաջորդականության ընդհատումների, հակադրությունների պայքարի մեխանիզմ, ընդսմին այդ պայքարի բարձրագույն ձևերն են դասակարգային հակամարտություններն ու սոցիալական հեղափոխությունները: Ի հակակշիռ դրան՝ քաղաքակրթության՝ որպես մեծամասշտաբ, իր մշակութային բնութագրերը հաստատունորեն պահպանող կենսատարածքի զարգացման մեջ առավել լիակատար կերպով արտացոլվում է սոցիալական առաջընթացի մյուս կողմը, այն է՝ զարգացման հաջորդականությունն ու անընդհատությունը, սերունդների կուտակած և մարդու ու հասարակության համար մեծ կարևորություն ներկայացնող փորձի պահպանումն ու փոխանցումը[72]:

Այսպիսով՝ «ֆորմացիա» և «քաղաքակրթություն» կատեգորիաների հարաբերությունն արտացոլում է «հեղափոխություն» և «էվոլյուցիա» հասկացությունների դիալեկտիկան: Սակայն այս երկու հասկացությունների բաղդատումը չի նշանակում այլընտրանքային երկձյուղում:

Դիալեկտիկական միասնության մեջ «քաղաքակրթություն» և «ֆորմացիա» կատեգորիաների ընկալումը հնարավորություն է տալիս հաղթահարելու գոյություն ունեցող հակասությունը: Ֆորմացիան փոխվում է և միևնույն քաղաքակրթության շրջանակներում, և՝ քաղաքակրթությունը փոխվելու դեպքում: Միևնույն ժամանակ, որոշակի քաղաքակրթության փոփոխումը, որպես կանոն, ուղեկցվում է նաև հասարակական ֆորմացիայի փոփոխմամբ: Ամեն մի հասարակության մեջ զուգակցվում են քաղաքակրթական ու ֆորմացիոն բաղադրատարրերը:

Մ. Ա. Բարգը համարում է, որ «օբյեկտիվիզմի փակուղին» հաղթահարել և պատմական գործընթացում մարդկային սուբյեկտիվության գործոնը ներառել հնարավոր է «քաղաքակրթություն» կատեգորիայի միջոցով, որը ապահովում է հասարակության ամբողջական ընկալումը՝ պատմության մեջ կենտրոնական դարձնելով բուն մարդկային առումը:

Անհատի և հասարակական համակարգում նրա էության դրսևորման եղանակների վրա «քաղաքակրթություն» և «ֆորմացիա» կատեգորիաների պրոյեկտմամբ կարելի է նաև հայտնաբերել երկու հիմքային բաղադրատարրերի առկայությունը: Մ. Բարգը դրանք անվանում է սուբստրատ և տարբերակում է էթնոծին (մարդածին) ու սոցիոծին (ֆորմացիոն) սուբստրատները[73]: Դրանք վերագրելով «քաղաքակրթություն» կատեգորիային՝ Մ. Բարգը համարում է, որ տվյալ սուբստրատները հնարավորություն են տալիս մի ամբողջության մեջ տեսնելու անձնավորության ու հասարակությունը, դրանց փոխհարաբերությունները, ինչպես նաև ավելի լայն կերպով դիտարկելու պատմական գործընթացի ծավալման հետ կապված պրոբլեմների սպեկտրը:

Հասարակության կառուցվածքը միայն «ֆորմացիա» կատեգորիայի տեսանկյունից դիտելու դեպքում առաջին պլան է մղվում մարդու դասակարգային էությունը, ընդսմին նա ներկայացվում է բազիսի ու վերնաշենքի փոխհարաբերությունների, արտադրության զարգացման մակարդակից և տնտեսության ու քաղաքականության փոխհարաբերություններից նրա կենսագործունեության պայմանների գերուժացված կախման երկմակարդակ մոդելով: Երկգործիչ (երկագենտ) հասարակության մեջ մարդուն օբյեկտիվ կերպով տեսնելու տվյալ փորձը, մեր կարծիքով, հանգեցնում է հասարակական անհատի դասակարգային էության բացարձակացմանը, նվազեցնում է նրա բազմապիսությունը:

«Ֆորմացիա» կատեգորիան ի հայտ չի բերում մարդու էության ամբողջ «ներկապնակը», որոշակի շրջանակով սահմանափակում է պատմական իրականությունը, ինչպես նաև այդ իրականության մեջ անհատի դրսևորումը: Ֆորմացիոն տեսանկյունից մարդու դիտարկումը տարբեր տեղափակված պատմական մշակույթներ ներկայացնող էթնոսների, ազգերի և պետությունների պատմության սոցիոլոգիան հանգեցնում է տրված փուլային սխեմային: Դա ֆորմացիոն մոտեցման հիմնական թերությունն է, որովհետև մարդը ոչ միայն ֆորմացիոն կատեգորիա է. նա և նրա հան-

[72] Տես "Эволюция восточных обществ: синтез традиционного и современного". М., 1984, с. 15:

[73] Տես *М. Барг*. О категории "цивилизация". "Новая и новейшая история". М., 1990, № 5, сс. 25–40:

րությունները նաև կոնկրետ քաղաքակրթությունների հատկանիշների կրողներ են:

Քաղաքակրթական մոտեցումը անհատի գործունեության մեջ ի հայտ է բերում վերը նշված սուբստրատները՝ և էթնոծինը, և սոցիոծինը: Դրանք անձնավորության մեջ և հանրություններում տարբեր չափով են երևակում էթնոսից սկիզբ առնող ու նրա անհատականությունը բնութագրող տարրերը, ինչպես նաև այն տարրերը, որոնք պայմանավորված են հասարակության ու պետության քաղաքատնտեսական յուրահատկությամբ:

էթնոսը չի կարելի համարել զուտ ֆորմացիոն կատեգորիա, որովհետև նրա ձևավորումը չի տեղափակվում մի ֆորմացիայի սահմաններում: Յուրաքանչյուր էթնոսի պատմությունը աշխարհին տիրապետելու դարերով կուտակված փորձի՝ մի մարդուց մյուսին փոխանցման հաջորդական շղթա է: էթնոսը՝ որպես քաղաքակրթական ամբողջականության տարր, գտնվում է մարդկային ինտեգրման ինչպես էթնոազգային, այնպես էլ վերէթնիկական ոլորտի ռեալությունների հետ կապված, մշակութային, բարոյական ու բարոյախոսական արժեքային դաշտում: «Քաղաքակրթական ամբողջականությունը չունի գործառութային բնույթ. դրան միավորողը նրա մեջ մտնող խմբերի և անհատների ինչ-որ ավելի խորքային, «ինտիմ» հատկությունների ընդհանրությունն է»[74]:

Այդ հատկությունները կազմում են ոչ դասակարգային ծագում ունեցող և տվյալ կոնկրետ ֆորմացիայի համակարգին չառնչվող արժեքների մի հսկայական շերտ: Արտահայտելով մարդու նույնականացուցիչ շահերի շրջանը՝ էթնոազգային արժեքները, ինչպես նաև ավելի լայն էթնոինտեգրիչ արժեքային կողմնորոշումները զարգանում են, փոփոխվում՝ հարաբերականորեն կախված լինելով ֆորմացիայից: Դրանք հիմնականում ձևավորվում են կոնկրետ քաղաքակրթության ու նրա էթնոազգային ենթահամակարգերի պատմամշակութային միջավայրի ազդեցությամբ: Արժեքների բնույթը կարող է հիմք ծառայել քաղաքակրթության տիպը որոշելու համար: Եվ այս տեսակետից հիմքային արժեքները քաղաքակրթության էությունն են, նրա անհատականությունը: Բայց միևնույն ժամանակ «էթնոսները, իսկ մենք ավելացնում ենք՝ նաև դրանց քաղաքակրթական ընդհանրությունները ամբողջական համակարգեր են, որոնք անխզելիորեն կապված են սոցիալ-տնտեսական գործոնների հետ»[75]:

Դա նշանակում է, որ համամարդկային հանրության մեջ, տվյալ դեպքում՝ էթնոսում և վերէթնիկական քաղաքակրթական կենսատարածքներում

[74] *Г. Дилигенский.* "Конец истории" или смена цивилизации? "Вопросы философии", 1991, № 3, с. 32.

[75] *Ю. Бромлей, Р. Подобный.* Человечество – это народы. М., 1990, с. 197.

փոխազդում են, առանց բևեռացած անտագոնիստական հակասություններ դրսևորելու, երկու գործոն, երկու կառուցվածքային գիծ, որոնք պայմանավորված են, մի կողմից, մարդկային անհատականությամբ (մարդածին սուբստրատ), մյուս կողմից՝ հասարակական կազմակերպվածքի յուրահատկությամբ (ֆորմացիոն սուբստրատ):

Այսպիսով՝ Բարգի հայեցակարգը հնարավորություն է տալիս «քաղաքակրթություն» կատեգորիայի դերը որոշելու մարդու մշակութային ու սոցիալական բնույթը, նրա էության երկակիությունն ու երկմիասնությունը, ինչպես նաև այդ գործոններից քաղաքակրթության պրակտիկ գործունեական դրսևորման կախումը դիտարկելու գործում: Ըստ մեզ՝ նման կերպով ներկայացված «քաղաքակրթություն» կատեգորիայի էվրիստիկական արժեքը, ճանաչողական կարողությունը այն են, որ նա առաջին պլան է մղում մարդկային առումը, այսինքն՝ անհատական ու կոլեկտիվ գործունեության բոլոր ոլորտներում մարդու անձնավորության դրսևորման գործընթացը՝ դրանով իսկ հետազոտողի առջև բացելով մարդկային կեցության շերտավորումը, ինչպես նաև ռեալ իրականության և ընդհանուր առմամբ պատմության ընթացքի վրա անձնավորության, էթնիկական ու քաղաքակրթական հանրությունների սուբյեկտիվ ազդեցության չափը: Հոգևոր, բարոյական, մշակութային արժեքների և սոցիալ-հասարակական կեցության լույսով մարդու ուսումնասիրումը հենց մարդու՝ որպես ամբողջականության քաղաքակրթական տեսլականն է:

Միևնույն ժամանակ, «քաղաքակրթություն» կատեգորիան հայեցակարգում է նաև հասարակության ընկալումը բոլոր կապերով ու դրսևորումներով հանդերձ: Այն նպատակ ունի վերացնել հակասությունները իշխանության օտարված բնույթի և ընդհանուր կարգավորման միջև, հասարակական ու անձնական շահերի միջև, ձգտում է լուծելու անցյալի, ներկայի և ապագայի հարաբերակցման, ժառանգորդության, մարդու՝ որպես անհատականության, ինչպես նաև էթնոսների ու քաղաքակրթությունների՝ որպես պատմական սոցիոմշակութային հանրույթների զարգացման էվոլյուցիայի պրոբլեմները:

Եվ այստեղ ունիվերսալ կերպով միահյուսված է հոգևորը՝ կապված էթնոսի, նրա պատմության, ավանդույթների, ինչպես նաև քաղաքակրթության մշակութային անկրկնելիության ու նրա սոցիալական, քաղաքատնտեսական պրակտիկայի հետ: Այլ կերպ ասած՝ «քաղաքակրթությունն» ապահովում է մարդու դիտումը երկու՝ սոցիոծին ու էթնոծին, բաղկացուցիչ հիմք-կոորդինատների միասնության մեջ: Չափումների այս միասնականությունը տվյալ դեպքում կարելի է ձևակերպել որպես հասարակության կառուցվածքի ու զարգացման դինամիկայի էթնոսոցիալական չափում: Այսպիսով՝ «քաղաքակրթություն» կատեգորիան դետերմինաց-

նում է հասարակական զարգացման բազմաչափության բովանդակությունը և ուղղությունները՝ էթնոսոցիալական չափման մեջ իրացնելով պատմության փիլիսոփայության նկատմամբ քաղաքակրթական մոտեցումը:

Պրոֆեսոր Մ. Ա. Բարգի առաջարկած ըմբռնմամբ՝ քաղաքակրթական մոտեցումը կարող է մեթոդաբանական հիմք դառնալ պատմական գործընթացի ևս մեկ «երկակիությունը», այն է՝ դրա զարգացման մեջ հակամարտային ու համաձայնային գործոնների զուգակցումը, վերլուծելու համար: Հեղինակը օբյեկտիվ սոցիոծին սուբստրատը դետերմինացնում է որպես իր էությամբ հակամարտային, քանի որ դրանով է պայմանավորված հիմնական սոցիալական հակասությունը: Իսկ սուբյեկտիվ էթնոծին սուբստրատին, որը պայմանավորված է մշակութային ինքնության տարրերով և ծառայում է որպես քաղաքակրթության մի յուրօրինակ «կոդային ոլորտ», պատկանում է համաձայնային, հասարակության մեջ երկպառակության կանխման մեխանիզմի գործառութային դերը:

Քաղաքակրթական մոտեցումը հնարավորություն է տալիս դիտարկելու հասարակական երևույթների օբյեկտիվ սոցիոծին ու սուբյեկտիվ էթնոծին տարրերի փոխադարձ կապը կոնկրետ էթնոսոցիալական սյուժեներով պատմական գործընթացի ծավալման գերազանցապես «հակամարտային» կամ «համաձայնային» սցենարների ձևավորման հետ:

Այսպես. կարելի է վարկածաբար ենթադրել, որ միաէթնիկ պետությունում էթնոծին սուբստրատի «համաձայնային» ներուժը, փոխազդելով սոցիոծին սուբստրատի «հակամարտային» ներուժի հետ, պայմաններ է ստեղծում հակամարտության վերացման, լուծման կամ առնվազն՝ որոշ մեղմացման համար:

Մինչդեռ սակավ հավանական է, որ բազմաէթնիկ պետությունում սոցիոծին սուբստրատի հակամարտային ներուժը մարվի տարբեր էթնիկական խմբերի «համաձայնային» ներուժերով, որովհետև վերջիններս «համաձայնային» են գերազանցապես ներխմբային չափման մեջ: Բացի այդ, առանձին էթնիկական խմբերի «համաձայնային» ներուժը կարող է լինել արտաքին խմբային հակամարտայնության սուբստրատ (կա՛մ հորիզոնական ուղղությամբ՝ էթնիկական խմբերի միջև, կա՛մ ուղղաձիգ ուղղությամբ՝ էթնիկական խմբերի և պետական կենտրոնի միջև):

Հավանական է, որ բազմաէթնիկ պետությունում պատմական քաղաքակրթական գործընթացի էթնոծին բաղադրատարրը, ի տարբերություն միաէթնիկ պետության դեպքից, դառնա լրացուցիչ հակամարտայնության աղբյուր՝ մեծացնելով սոցիոծին սուբստրատի օբյեկտիվ հակամարտային ներուժը:

Լրացնելով քաղաքակրթական հայեցակետից վերլուծության ենթարկված էթնոքաղաքագիտական պրոբլեմների կառուցողական մշակվածության վիճակի գնահատումը՝ հարկ ենք համարում նշել մի խումբ խորհրդային փիլիսոփաների, քաղաքագետների, ազգաբանների աշխատությունները, որոնք այս կամ այն առնչությամբ դիտարկել են դրանք: Առանձնակի ուշադրության են արժանի Ն. Ի. Կոնրադի, Յու. Վ. Բրոմլեյի, Ս. Ա. Հարությունովի, Բ. Ս. Երասովի, է. Ս. Մարգարյանի, է. Ի. Սկակունովի, Ա. Վ. Ժուրավսկու և այլոց աշխատությունները[76]:

Քաղաքակրթական մոտեցման հիման վրա մոդելավորվում է այս կամ այն հասարակության մեջ տեղի ունեցող էթնոազգային գործընթացի զարգացման առավել ընդհանուր, շատ առումներով զուտ մտահայեցական սխեման: Դրա հետ մեկտեղ, տվյալ մակարդակի մեթոդաբանական ընդհանրացումը հնարավորություն է տալիս հաշվի առնելու միաէթնիկ ու բազմաէթնիկ կազմավորումներում առկա էթնոազգային հարաբերությունների բնույթը պայմանավորող գործոնների լայն սպեկտրը:

Մեր կարծիքով՝ հետաքրքրություն է ներկայացնում «քաղաքակրթական մոդելի» բաղդատումը արևմտյան քաղաքագետների վերը ավելի հանգամանորեն քննարկված, էթնոազգային իրողություններին մոտարկումներում ավելի կոնկրետացված հայեցակարգերի հետ: Իրենց բազմազանությամբ հանդերձ այդ հետազոտությունները ներգծվում են արդիականացած կամ արդիականացող (ժամանակակից կամ ավանդականից դեպի ժամանակակից անցնող) հասարակության քաղաքակրթական շրջանակների մեջ՝ հաստատագրելով տվյալ քաղաքակրթական վիճակի կամ զարգացման փուլի առանձնահատկությունները: Հետազոտողները հիմնական ուշադրություն են դարձնում արդիականացող բազմաէթնիկ պետությունում էթնիկական խմբի ազգայնականության շուրջ սոցիալական հակամարտայնության բևեռացման պատճառները պարզելուն[77]:

Էթնիկապես տարասեռ պետության արդիականացման սոցիալ-տնտեսական գործընթացների օբյեկտիվ հակամարտածին բնույթը առավել լիովին ու համոզիչ կերպով ներկայացրել են Մ. Հեկտերը և Թ. Նեյռնը:

[76] Տես *Н. И. Конрад.* Запад и Восток. М., 1972; *Ю. В. Бромлей.* Национальные процессы в СССР: в поисках новых подходов. М., 1988; *С. А. Арутюнов.* Народы и культуры. Развитие и взаимодействие. М., 1989; *Б. С. Ерасов.* Культура, религия и цивилизация на Востоке. М., 1990; *Э. С. Маркарян.* Теория культуры и современная наука. М., 1983; *Э. И. Скакунов.* Путь модернизации советского общества. М., 1983, *Э. И. Скакунов.* Путь модернизации советского общества. М., 1991; *А. В. Журавский.* Христианство и ислам. М., 1990:

[77] Միջէթնիկական հակամարտությունների վերաբերյալ հայեցակարգերի առավել լիակատար տեսությունը խորհրդային գրականության մեջ տես՝ "Межэтнические конфликты в странах зарубежного Востока". М., 1991, сс. 33 – 72:

Հեղինակները կոնկրետ նյութի վերլուծությամբ ուսումնասիրում են, թե ինչպես կարող են բազմազգ պետություններում բնակչության տնտեսական ու սոցիալական բաժնեզրկության կենսատարածքները արդիականացման ընթացքում դառնալ ազգային հակամարտության օջախներ, եթե այդ կենսատարածքների սահմանները հատվում են «ծայրամասային» էթնիկական խմբերի բնակության տարածքների հետ: Քաղաքակրթական մոտեցմամբ «ներքին գաղութատիրության» հայեցակարգը հանգում է էթնոազգային հակամարտության օբյեկտիվ սոցիոծին գործոնների վերլուծության: Միևնույն ժամանակ, ինչպես բազմիցս նշվել է և՛ արտասահմանյան, և՛ խորհրդային գրականության մեջ, անգամ սոցիալ-տնտեսական և էթնիկական տարբերությունների համատեղման դեպքում թաքնված հակամարտությունը ոչ միշտ է փոխակերպվում բաց ծևի, և այդ տարբերություններն ու հակասությունները միայն որոշակի պայմաններում են առաջ բերում միջէթնիկական հակամարտություն: Դրա հետևանքով «ներքին գաղութատիրության» և «կենտրոն–ծայրամասի» հայեցակարգերը գործնականում կորցնում են սոցիոլոգիական տեսությունների համար հույժ կարևոր կանխատեսումային հնարավորությունները:

Հասարակության զարգացումը սոցիոծին ու էթնոծին սուբստրատների փոխազդեցության միջոցով ներկայացնող պրոֆեսոր Մ. Բարգի քաղաքակրթական մոդելին առավել մոտ է Ջ. Ոոտշիլդի կողմից որպես էթնոքաղաքագիտության հիմք առաջարկված «էթնիկականության քաղաքականացման» սոցիոլոգիական հայեցակարգը:

Հետազոտողը քաղաքական-սոցիոլոգիական գիտելիքի մակարդակով կոնկրետացնում է զարգացման քաղաքակրթական մոդելի էթնոծին ու սոցիոծին սուբստրատների փոխազդեցության դիալեկտիկան՝ շեշտելով «ունիկալ» էթնոյուրահատուկ մշակույթի փոխադարձ սերտ կապը արդիականացման ընթացքում էթնիկական խմբի կողմից ունիվերսալ մշակույթն ու տեխնոլոգիան յուրացնելու հետ: Գիտնականը «էթնիկականության քաղաքականացման տարիմաստություն» է համարում էթնիկական յուրահատկության նկատմամբ հետաքրքրության մեծացումը, որը տեղի է ունենում ի պատասխան արդիականացման գործընթացներով ներբերվող փոփոխությունների:

Հաշվի առնելով խորհրդային և արտասահմանյան գրականության մեջ քաղաքակրթական գործընթացների ու երևույթների անբավարար մշակվածության հանգամանքը՝ սույն հետազոտության հեղինակը, հենվելով վերը բերված վերլուծության վրա, իր հետագա խնդիրն է համարում էթնոքաղաքականության ընդգրկուն քաղաքակրթական հետազոտության պրոբլեմի ձևակերպումը, ինչպես նաև միջքաղաքակրթական շփման

պրոբլեմների բազմամակարդակ վերլուծության մեթոդաբանական մոդելի հիմնավորումը:

Ընդհանրացնելով անցումային հասարակությունների համաձայնային-հակամարտային ներուժի էթնոքաղաքագիտական հետազոտության նկատմամբ քաղաքակրթական մոտեցման՝ որպես ազգային անվտանգության մշակման ու էթնոքաղաքական ապահովման ռեալ ռեսուրսներից մեկի կիրառման պրոբլեմի մեթոդաբանական ձևակերպումը՝ կարող ենք անել հետևյալ եզրակացությունը: Քաղաքակրթական վերլուծությունը, մարդկության հասարակական-պատմական զարգացման ֆորմացիոն սխեմայի երկգործիչ միաչափությունը լրացնելով ու հասցնելով էթնոսոցիալական համակարգերի ծավալադիտական (ստերեոսկոպիկ) արտացոլման, հնարավորություն է տալիս աշխարհի արդիականացման, ձևավորման, վերարտադրման, ինչպես նաև էթնոքաղաքական ճգնաժամերի ու գինված հակամարտությունների ընթացքում դրանց կերպափոխումը դիտարկելու ավանդական ու ժամանակակից քաղաքակրթությունների պատմության քաղաքական փիլիսոփայության լայն դիրքերից:

Այսպիսով՝ հետագա հետազոտությունների համար մենք քաղաքակրթական մոտեցումը համարում ենք ազգային անվտանգության էթնոքաղաքագիտության՝ որպես հատուկ հիմնարար ու կիրառական հասարակական գիտելիքների համակարգի ձևավորման գլխավոր մեթոդաբանական սկզբունքներից մեկը: Էթնոքաղաքական երևույթների քաղաքակրթական վերլուծությունը հնարավորություն է տալիս հետագայում հիմնարար կերպով ուսումնասիրելու ազգային անվտանգության տեսության էթնոքաղաքագիտական առումները, մոդելավորելու արդիականացած ու արդիականացող միաէթնիկ ու բազմաէթնիկ պետությունների, ինչպես նաև վերէթնիկական քաղաքակրթական կենսատարածքների էթնոսոցիալական համակարգերի միջև շփումային գոտիների բացահայտման գործընթացների համաձայնային-հակամարտային դինամիկան:

§ 2. ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ ԷԹՆՈՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ

Նախկին ԽՍՀՄ տարածքում նոր հասարակական կարգերի ստեղծման խնդիրներով պայմանավորված քաղաքական որոնումներում չի կարող հաշվի չառնվել համաշխարհային պատմական գործընթացում հետևյալ երկու միտումների աճի հանգամանքը: Մի կողմից՝ միասնական տնտեսական ու տեղակատվական տարածության ձևավորման հետ մեկտեղ համաշխարհային ընկերակցությունում սկսում են ավելի ու ավելի մեծ դեր

Հեղինակները կոնկրետ նյութի վերլուծությամբ ուսումնասիրում են, թե ինչպես կարող են բազմազգ պետություններում բնակչության տնտեսական ու սոցիալական բաժնեգրկության կենսատարածքները արդիականացման ընթացքում դառնալ ազգային հակամարտության օջախներ, եթե այդ կենսատարածքների սահմանները հատվում են «ծայրամասային» էթնիկական խմբերի բնակության տարածքների հետ: Քաղաքակրթական մոտեցմամբ «ներքին գաղութատիրության» հայեցակարգը հանգում է էթնոազգային հակամարտության օբյեկտիվ սոցիոծին գործոնների վերլուծության: Միևնույն ժամանակ, ինչպես բազմիցս նշվել է և՛ արտասահմանյան, և՛ խորհրդային գրականության մեջ, անգամ սոցիալ-տնտեսական և էթնիկական տարբերությունների համատեղման դեպքում թաքնված հակամարտությունը ոչ միշտ է փոխակերպվում բաց ձևի, և այդ տարբերություններն ու հակասությունները միայն որոշակի պայմաններում են առաջ բերում միջէթնիկական հակամարտություն: Դրա հետևանքով «ներքին գաղութատիրության» և «կենտրոն–ծայրամասի» հայեցակարգերը գործնականում կորցնում են սոցիոլոգիական տեսությունների համար հույժ կարևոր կանխատեսումային հնարավորությունները:

Հասարակության զարգացումը սոցիոծին ու էթնոծին սուբստրատների փոխազդեցության միջոցով ներկայացնող պրոֆեսոր Մ. Բարգի քաղաքակրթական մոդելին առավել մոտ է Զ. Ոոտշիլդի կողմից որպես էթնոքաղաքագիտության հիմք առաջարկված «էթնիկականության քաղաքականացման» սոցիոլոգիական հայեցակարգը:

Հետազոտողը քաղաքական-սոցիոլոգիական գիտելիքի մակարդակով կոնկրետացնում է զարգացման քաղաքակրթական մոդելի էթնոծին ու սոցիոծին սուբստրատների փոխազդեցության դիալեկտիկան՝ շեշտելով «ունիկալ» էթնոյուրահատուկ մշակույթի փոխադարձ սերտ կապը արդիականացման ընթացքում էթնիկական խմբի կողմից ունիվերսալ մշակույթն ու տեխնոլոգիան յուրացնելու հետ: Գիտնականը «էթնիկականության քաղաքականացման տարիմաստություն» է համարում էթնիկական յուրահատկության նկատմամբ հետաքրքրության մեծացումը, որը տեղի է ունենում ի պատասխան արդիականացման գործընթացներով ներբերվող փոփոխությունների:

Հաշվի առնելով խորհրդային և արտասահմանյան գրականության մեջ քաղաքակրթական գործընթացների ու երևույթների անբավարար մշակվածության հանգամանքը՝ սույն հետազոտության հեղինակը, հենվելով վերը բերված վերլուծության վրա, իր հետագա խնդիրն է համարում էթնոքաղաքականության ընդգրկուն քաղաքակրթական հետազոտության պրոբլեմի ձևակերպումը, ինչպես նաև միջքաղաքակրթական շփման

պրոբլեմների բազմամակարդակ վերլուծության մեթոդաբանական մոդելի հիմնավորումը:

Ընդհանրացնելով անցումային հասարակությունների համաձայնային-հակամարտային ներուժի էթնոքաղաքագիտական հետազոտության նկատմամբ քաղաքակրթական մոտեցման՝ որպես ազգային անվտանգության մշակման ու էթնոքաղաքական ապահովման ռեալ ռեսուրսներից մեկի կիրառման պրոբլեմի մեթոդաբանական ձևակերպումը՝ կարող ենք անել հետևյալ եզրակացությունը: Քաղաքակրթական վերլուծությունը, մարդկության հասարակական-պատմական զարգացման ֆորմացիոն սխեմայի երկգործիչ միաչափությունը լրացնելով ու հասցնելով էթնոսոցիալական համակարգերի ծավալադիտական (ստերեոսկոպիկ) արտացոլման, հնարավորություն է տալիս աշխարհի արդիականացման, ձևավորման, վերարտադրման, ինչպես նաև էթնոքաղաքական ճգնաժամների ու զինված հակամարտությունների ընթացքում դրանց կերպափոխումը դիտարկելու ավանդական ու ժամանակակից քաղաքակրթությունների պատմության քաղաքական փիլիսոփայության լայն դիրքերից:

Այսպիսով՝ հետագա հետազոտությունների համար մենք քաղաքակրթական մոտեցումը համարում ենք ազգային անվտանգության էթնոքաղաքագիտության՝ որպես հատուկ հիմնարար ու կիրառական հասարակական գիտելիքների համակարգի ձևավորման գլխավոր մեթոդաբանական սկզբունքներից մեկը: Էթնոքաղաքական երևույթների քաղաքակրթական վերլուծությունը հնարավորություն է տալիս հետագայում հիմնարար կերպով ուսումնասիրելու ազգային անվտանգության տեսության էթնոքաղաքագիտական առումները, մոդելավորելու արդիականացած ու արդիականացող միաէթնիկ ու բազմաէթնիկ պետությունների, ինչպես նաև վերէթնիկական քաղաքակրթական կենսատարածքների էթնոսոցիալական համակարգերի միջև շփումային գոտիների բացահայտման գործընթացների համաձայնային-հակամարտային դինամիկան:

§ 2. ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ ԷԹՆՈՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ

Նախկին ԽՍՀՄ տարածքում նոր հասարակական կարգերի ստեղծման խնդիրներով պայմանավորված քաղաքական որոնումներում չի կարող հաշվի չառնվել համաշխարհային պատմական գործընթացում հետևյալ երկու միտումների աճի հանգամանքը: Մի կողմից՝ միասնական տնտեսական ու տեղակատվական տարածության ձևավորման հետ մեկտեղ համաշխարհային ընկերակցությունում սկսում են ավելի ու ավելի մեծ դեր

խաղալ ինտեգրային գործընթացները, մյուս կողմից՝ նկատելի է դառնում շարժումը դեպի էթնոսոցիալական ինքնավարություն: Այս երկու ուղղությունները հստակ կերպով ուրվագծվում են նոր ԱՊՀ պետությունների ծգտումներում արդիականացնելու դեպի համամարդկային արժեքներ ու արևմտյան տեխնոտրոն մոդելներ կողմնորոշվող տնտեսությունը և, միաժամանակ, հասնելու ազգային ինքնորոշման ու ինքնիշխանության:

Որպես արդյունք՝ ավելի ու ավելի մեծ կարևորություն են ստանում նույնականացման պրոբլեմները, այսինքն՝ իր հարաբերակցումը աշխարհում տեղի ունեցող ռեալ զարգացումների, այս կամ այն քաղաքակրթության, նրա կարողությունների ու առաջադիմության ձեռք բերված մակարդակի հետ, քանի որ ընդունվում է զարգացման անհավասարաչափության, ինչպես նաև հարաբերական անհամեմատելիության փաստը:

Նույնականացման պրոբլեմը դրված է այն բանավեճերի կենտրոնում, որոնք դարձյալ կյանքի են կոչվել «Արևմուտք–Արևելք» երկխոսության ընթացքում սլավոնամետների ու արևմտամետների միջև «համաձայնության–հակամարտության» պատմական որոնումներով: Զարգացման մոդելի ընտրության, նոր պետականության, մեր հասարակության արդիականացման հնարավոր ուղիների քննարկումները ենթադրում են առաջին հերթին այն երկու երևույթների միջև հակամարտության առկայություն, որոնք նշագրվում են «ավանդապահություն» և «արդիականացում» տերմիններով: Հեղինակի կարծիքով՝ հնարավոր համաձայնության ռեսուրսը պետք է փնտրել տվյալ պրոբլեմի քաղաքակրթական ամբողջականության իմաստավորմամբ:

Ֆորմացիոն մոտեցմանը բնորոշ կարծրատիպերը ինչպես ավանդական, այնպես էլ նորամուծական գիտակցությունը պայմանավորում են դասակարգային գործոնով՝ այդ մոտեցումը նույնացնելով բազիս-վերնաշենքային հարաբերությունների քաղաքական մեկնաբանման հետ, և նման խնդրադրման պարագայում ավանդականությունը հանգեցնում են հետամնացության: Այս տեսանկյունից՝ ավանդականը առաջընթացի վրա գործում է բացառապես արգելակող ազդեցություն, ինչի հետևանքով «հին» քաղաքակրթական բազմաչափության հեղափոխական խորտակումը և «նորի» ֆորմացիոն միաչափության ստեղծումը դառնում են տրամաբանական և արդարացված անհրաժեշտություն: Իր հերթին դա ենթադրում է ավանդականի բացարձակ ինքնուրույնություն, «օտարացածություն», ինչը վերջին հաշվով արդարացնում է նրա լիակատար վերացման անհրաժեշտությունը: Նման մոտեցումը, քաղաքական վերնախավի շահերը պաշտպանելով գաղափարախոսական ձևախախտումներից, իրեն վճռականորեն տարանջատում է արևմտյան քաղաքակրթության ձեռքբերումներով ներկայացվող նորամուծություններից:

Այլ խոսքով՝ ֆորմացիոն մոտեցման փիլիսոփայության մեջ աշխարհի զարգացման պատկերի պարզունակացումը բովանդակում է հասարակության էթնոքաղաքակրթական բազմազանության դիմազրկման մեթոդաբանություն, դրա հանգեցում միասեռ, դեպի «գաղափարախոսական քաղաքակրթություն» կողմնորոշված աշխարհընկալում և «վերևից» կառավարելիություն: Տվյալ մոտեցման քաղաքագիտական հավելումները առաջ են բերում մեկուսապաշտության (իզոլյացիոնիզմ) և սոցիալական կոնսերվացման գնով ձեռք բերվող քաղաքական կայունության հայեցակարգային արդարացում:

Այստեղից ակներևաբար հետևում է նախկին ԽՍՀՄ կերպափոխման պրոբլեմների նկատմամբ քաղաքակրթական մոտեցման ակտուալությունը: Հենց այդ դիրքերից հերթական մոբիլիզացիոն քաղաքական դոկտրինների լայն սոցիալական չափումը կարող է օգնել երկրի բազմապիսի քաղաքակրթական ներուժի համաձայնային ռեսուրսների առաջնահերթ զարգացմանը: Քաղաքակրթական մոտեցումը հնարավորություն է տալիս ծագող ազգ-պետությունների էվոլյուցիոն արդիականացման առավելություններն ըմբռնելու արմատական կամ որևէ այլ՝ ըստ էության ավանդապահական, գաղափարախոսության և «արևմտացման» հեռանկարի միջև կատարվող ընտրության անընդհատության մեջ:

Տվյալ մոտեցումը Ռուսաստանի, այլ ինքնիշխան պետությունների «առողջացման» «արևմտյան» և «արևելյան» մոդելների ինչպես տեսական, այնպես էլ գործնական հարմարեցման պրոբլեմը ձևակերպում է՝ ելնելով ազգային, տարածաշրջանային ու համաշխարհային մակարդակներով միջքաղաքակրթական շփման հարցի համակարգային իմաստավորումից:

Միջմշակութային փոխազդեցության բովանդակության, սահմանների ու ձևերի հետազոտությունը դարձել է տարբեր հասարակական գիտությունների այն ներկայացուցիչների աշխատությունների բնութագրական հատկանիշը, որոնք ուսումնասիրում են արդիականացման և Արևմուտքի ու Արևելքի միջև տեղի ունեցող մշակութատեղեկութային շփումների ընթացքում հակասությունների աճի երևույթը:

Ազգային զարգացման ուղիների ընտրության տեսական որոնումն ուղեկցել է ազգային-ազատագրական շարժմանը, որը հատկապես ինտենսիվ կերպով է ծավալվել երկրորդ համաշխարհային պատերազմից հետո այսպես կոչված «երրորդ աշխարհում»: Քաղաքագիտական պրոբլեմների առաջնահերթության վրա իր կնիքն է դրել այն հանգամանքը, որ տվյալ միջքաղաքակրթական շփման կողմերի գիտական դպրոցների ուշադրության կենտրոնում են եղել ազգային զարգացման պրոբլեմների վերլուծությունը, գաղութներից ձևավորվող նոր ազգ-

պետությունների վրա արտաքին տնտեսական, մշակութային և առանձնապես քաղաքական ներգործությունների գնահատումը: Դրանով կարելի է բացատրել այն փաստը, որ ինչպես տեսամեթոդաբանական, այնպես էլ մասնավոր-գիտական սոցիոլոգիական-հոգեբանական ու ազգաբանական հետազոտություններում գերակշռում են ինքնորոշման պրոբլեմները: Ինչպես նշում է Բ. Ս. Երասովը, Արևմուտքի ակնհայտ տնտեսական գերազանցությունը ազգային-ազատագրական շարժումների և ազատագրված երկրների տեսական գիտակցության մեջ նվազեցնում է տնտեսական գործոնների՝ որպես հասարակական կեցության հիմքի նշանակությունը: Նա հանգում է այն եզրակացության, որ հասարակական գիտակցությունը, խուսափելով Արևմուտքի կողմից պարտադրվող՝ ազգային գոյության մոդելից ու արդիականացման հարացույցից, որպես ինքնորոշման հիմք է դիտում քաղաքականությունն ու մշակույթը: Ընդսմին հարկ է նկատի ունենալ այն որոշակի ազդեցությունը, որ երրորդ աշխարհի քաղաքական գիտությունների կողմնորոշման վրա գործում են Արևմուտքի հասարակագիտական և հատկապես արդիականացման հայեցակարգները և մարքսիստական ֆորմացիոն տեսությունը:

Զարգացման տնտեսական արևմտակենտրոն մոդելին հասարակության իր ծևի կազմակերպվածքը հակադրելու ձգտումը կյանքի է կոչել մշակութային և քաղաքական ինքնության տարբեր հայեցակարգեր, այդ թվում՝ դեպի սոցիալիզմ կամ շուկայական ժողովրդավարություն կողմնորոշվող ազգային վերածննդի, ինչպես նաև պետական-կրոնական ավանդույթների արմատական նորացման հայեցակարգերի տեսքով: Արժեքային-կողմնորոշումային համակարգերի նման տարանջատումն սկսեց միտվել դեպի Արևմուտքի դիտումը որպես նյութական կողմնորոշմամբ, իսկ Արևելքի՝ որպես հոգևոր կողմնորոշմամբ աշխարհի:

Միևնույն ժամանակ, «Արևմուտք–Արևելք» միջքաղաքակրթական մշակութային ու տեխնիկատեխնոլոգիական շփման մակարդակում որոշակի երկձյուղ դիմակայության հետ մեկտեղ ձևավորվել է «Արևմուտք–Արևելք» առանցքով առճակատման ավելի բացահայտ քաղաքական ծրագիր՝ պայմանավորված «սառը պատերազմով», որն ընթանում է, մի կողմից, կապիտալիստական և, մյուս կողմից, սոցիալիստական, ինչպես նաև գաղափարախոսական տեսակետից ավելի շատ դեպի ԽՍՀՄ-ը հակված զարգացող երկրների բլոկների միջև: Այդ նույն շարքում պետք է դիտել նաև դիմակայության «Հյուսիս–Հարավ» առանցքը, որը միայն մասամբ է համընկնում ոչ վաղ անցյալում գերտերությունների միջև եղած գաղափարախոսական առճակատման հետ:

Կյանքի արևմտյան ոճին ու կերպին հակադրվող էթնոտարբերակիչ հատ-

կանիշների գերակա մշակութաբանական ու քաղաքագիտական մշակումն ստանձնեց ազատագրված երկրների հասարակական էթնոազգային գիտակցության մեջ նույնականացուցիչ արժեքային կողմնորոշումների ներբերման առաքելությունը, կողմնորոշումներ, որոնք նպատակաուղղված են նրանց ինքնության պաշտպանությանն ու ազգային պետականության կերտմանը: Ինչպես վերը ասվել է, էթնոսի հետ մեկտեղ, նույնականացման վերաբերյալ դիտարկվող պատկերացումների ու կողմնորոշումների մի յուրահատուկ համակարգաստեղծ պարամետր է դառնում նաև ավելի բաղադրյալ ինքնությունների՝ քաղաքակրթությունների շերտը:

Ինչպես տեսության մեջ, այնպես էլ էթնոքաղաքական պրակտիկայում արժեքային կոորդինատների նոր՝ քաղաքակրթական, համակարգի կայացմամբ ձևավորվում են լրացուցիչ ռեսուրսներ մեծ էթնոսոցիալական հանրությունների ինքնագնահատման ու փոխգնահատման համար: Տեղեկութամշակութային ու քաղաքական փոխգործության արդիական պայմաններում «նույնականությունների» ընկալումն այս մասշտաբով կարող է ինտենսիվացնել պատմության մեջ օբյեկտիվորեն տեղի ունեցող ինտեգրիչ ու ապաինտեգրիչ գործընթացները, դրանց հաղորդել մշակութաբանական և քաղաքագիտական հայեցակարգային ուղղվածություն, ինչպես նաև խթանել դրանց քաղաքական-գործնական ձևավորման ու սահմանադրական ամրագրման որոնումը: Այսպիսով՝ վարկածաբար կարելի է հետազոտության հեղինակի կողմից առաջարկվող և, վերջին հաշվով, տեսական ու հասարակական գիտակցության մեջ սկզբնավորված միտումներն ու հայեցակարգային տեղաշարժերն արտացոլող քաղաքակրթական մոդելում առանձնացնել էթնոսոցիալական նույնականացման մի քանի հիմնական մակարդակներ: Դրանք կարելի է ներկայացնել հետևյալ հաջորդականությամբ. էթնոսը՝ որպես էթնոազգային նույնականության հիմքային մակարդակ, ազգը՝ որպես էթնոսի և քաղաքակրթության միջև միջանկյալ նույնականություն, կենսատարածքային, կամ «պատմական», քաղաքակրթությունը՝ որպես ինտեգրիչ միջէթնիկական արժեքների վրա խարսխվող բաղադրյալ նույնականություն, և, վերջապես, համընդհանուր քաղաքակրթությունը՝ որպես համամարդկային արժեքային կողմնորոշումների վրա խարսխվող բարձրագույն բաղադրյալ նույնականություն:

Մեր կարծիքով՝ համակարգային էթնոքաղաքագիտական վերլուծության քաղաքակրթական մասշտաբավորումը մի շարք մեթոդաբանական առավելություններ է ստեղծում ինքնության ունիվերսալացման ու վերարտադրության հակասական գործընթացների, դրանց իրացման ավանդապահական ու նորամուծական մեխանիզմների հետազոտման համար: Տվյալ մոտեցումը հնարավորություն է տալիս էթնոսոցիալական համակարգերի փոխազդեցությունը դիտելու ավելի լայն ու տարաբնույթ կերպով, քան

դա արվում է ժամանակակից էթնոհակամարտաբանության մեջ, որը ներկայումս գերակայող հետազոտական ուղղությունն է: Մինչդեռ միասնական արժեքակողմնորոշումային համատեքստում միջքաղաքակրթական շփումների համընդհանուր, կենսատարածքային, ազգային ու էթնոազգային չափումների առաջարկվող զուգակցումը ենթադրում է դրանց ձևավորման ու զարգացման ինչպես հակամարտային, այնպես էլ համաձայնային սցենարների համակարգային հետազոտում:

Օգտագործելով «քաղաքակրթություն» հասկացության մասին տարաբնույթ բանավեճերի վերլուծությամբ Բ. Ս. Երասովի կողմից ստացված արդյունքները՝ որպես հիմք վերցնենք հետևյալ երեք հիմնական բնութագրիչները.

– տարածքին ամրակցված ու երկարատև ժառանգորդություն պահպանող մեծամասշտաբ հանրության հոգևոր կյանքի որոշակի միասնությանը նպաստող համընդհանուր սոցիոմշակութային կապերի առկայություն,

– տվյալ հանրության շրջանակներում կամ նրա սահմաններից դուրս ընթացող հոգևոր կյանքի տարբերակվածություն, որը նպաստում է տվյալ քաղաքակրթությունը կազմող ժողովուրդների կենսագործունեության զարգացմանն ու բազմազանությանը,

– երկարատև ժամանակաշրջանում (դարեր և հազարամյակներ) հասարակության գոյության ժառանգորդության պահպանում, այդ թվում՝ դինամիկայի զանազան տարբերակների պայմաններում:

Քաղաքակրթության՝ Օ. Շպենգլերի, Ն. Դանիլևսկու, Ա. Թոյնբիի, Պ. Սորոկինի, Մ. Վեբերի, Ս. Էյզենշտադտի, ինչպես նաև երրորդ աշխարհի երկրների մի շարք գիտնականների հայեցակարգերից քաղված և նման ձևով ընդհանրացված գործառույթները կազմում են այդ քաղաքակրթությունը ինտեգրող, տարբերակող և վերարտադրող բնութագրերի որոշակի ամբողջականություն[78]:

Քաղաքակրթական համակարգերի որակի տվյալ պարամետրերը, ֆորմացիոն մոտեցման հետազոտական միատեսակության ու անբավարար էվրիստիկության վերաբերյալ վերը բերված դատողությունների հաշվառմամբ, նպատակահարմար է լրացնել մի շարք պարզաբանումներով: Քաղաքակրթությունները ֆորմացիաների հետ չեն համընկնում ո՛չ ժամանակային, ո՛չ էլ տարածական առումով: Դրանք արտացոլում են տարբեր տեսակի մշակութապատմական ընդհանրություններ ու տարբեր տիպի դինամիկա: Զարգացման հաջորդ աստիճանին անցնելու դեպքում կոնկրետ քաղաքակրթությունների հիմնական հատկանիշներն ու կառուցված-

[78] Տես *Բ. Ս. Երասով*, Նշ. աշխ., էջ 90–207:

քը չեն վերանում, ֆորմացիոն գործոնները չեն ոչնչացնում քաղաքակրթական բնութագրերը:

Մեր կողմից վերը առանձնացված գործառույթ-բնութագրիչների տրիադին համապատասխանող խնդիրների լուծման քաղաքակրթական կարգավորիչ ներուժը մի ռեսուրս է բոլոր վերոնշյալ մակարդակներում տեղի ունեցող միջքաղաքակրթական շփումների համածայնային կամ հակամարտային զարգացման համար:

Եվ այսպես. քաղաքակրթությունները, անընդհատ պատմական իրացմամբ կատարելով ինտեգրիչ ու տարբերակիչ դերեր, կա՛մ հակամարտային, կա՛մ համաձայնային եղանակով վերացնում են հակասությունները տարբեր էթնոմշակութային ու սոցիոմշակութային հանրությունների միջև, զարգացած ու թերզարգացած ժողովուրդների միջև, դասակարգային առումով հասուն կենտրոնի և սակավ շերտավորված կամ նախադասակարգային ծայրամասի միջև, իշխանության օտարված էության և ընդհանուր կարգավորման պահանջմունքի միջև, սոցիալական կեցության բնական ու պատմական չափումների միջև: «Համածայնություն–հակամարտություն» տարածության բովանդակության տվյալ ընդարձակ սահմանումը այն կապերի բազմաչափության պարզեցված ուրվագիծն է, որոնք վերը դիտարկվել են էթնոսոցիալական հանրությունների քաղաքակրթական մոդելի էթնոծին ու սոցիոծին սուբստրատների ամբողջականության մեջ:

Նախկին ԽՍՀՄ տարածքում քաղաքակրթական դինամիկայի պրոբլեմների քննարկման ժամանակ անհրաժեշտ ենք համարում, մի կողմից, կենտրոնանալ այն հարցի վրա, թե ինչ է աթեիստական կոմունիստական քաղաքակրթությունը, և որոնք են բազմաէթնիկ պետությունն սպասարկող համակարգից նոր քաղաքակրթական որակի դրա վերափոխվելու միտումները: Մյուս կողմից՝ առանձնակի ուշադրության է արժանի ԽՍՀՄ տարածքում պատմականորեն տեղայնացած երկու հիմնական՝ քրիստոնեական ու մահմեդական, քաղաքակրթությունների կայացման ու վերարտադրության դինամիկան:

Մեր կարծիքով՝ Եվրոպայի ու Ասիայի՝ բազմաէթնիկ ու բազմակրոն բնակչությամբ հսկայական տարածքներ համեմատաբար կարճ պատմական ժամանակահատվածով ընդգրկած կոմունիստական քաղաքակրթության լճացման հետազոտությունը հնարավոր է արևելյան հասարակություններում լճացման պատճառների վերլուծության փորձի հիման վրա:

Վերը առանձնացվեցին քաղաքակրթության երեք էական գործառույթ-բնութագրիչները: Դրանցից մեկը՝ վերարտադրողը, պատմական ժամանակի ու տարածության մեջ ծավալում է մյուս երկուսը, որոնք էլ քաղա-

քակրթության դինամիկայի աղբյուրներն են: Խոսքը վերաբերում է սոցիոմշակութային կյանքի տարբերակմանն ըստ հասարակական կեցության կազմակերպման տարբեր եղանակների, մակարդակների ու մասնակիցների, ինչպես նաև ունիվերսալ սոցիոմշակութային համակարգերում այդ տարբերակների ինտեգրմանը: Ռեալ պատմության մեջ այդ գործառույթների հակասական փոխազդեցությունն էլ հենց քաղաքակրթությունների ներսում ու դրանց միջև շփումներում հակամարտային և համաձայնային ներուժի ձևավորման պատճառն ու մեխանիզմն է:

Խուսափելով նախկին ԽՍՀՄ-ում տիրող քաղաքակրթական իրավիճակի հետ անմիջական բաղդատումից՝ այդուհանդերձ, օգտակար ենք համարում ուշադրություն դարձնել արևելյան քաղաքակրթությունների համաձայնային-հակամարտային երկակիության, իսկ մեծ մասամբ՝ հակամարտայնության գերակշռության վրա: Ընդ որում, այդ քաղաքակրթությունները, ըստ Ա. Թոյնբիի, պարունակում և առաջացնում են քաղաքական իշխանությունն ի շահ հասարակության առավել հետամնաց քաղաքակրթական տարրերի կենտրոնացնելու ու բռնակալացնելու հրամայական[79]:

Սույն հետազոտության հեղինակը, հենվելով աֆղանական հակամարտության ներգրավված դիտարկման ու վերլուծության իր փորձի վրա, համաձայն է տարբեր արևելագիտական աշխատությունների՝ Բ. Ս. Երասովի կատարած ընդհանրական վերլուծությանը: Միևնույն ժամանակ, նա կարևոր է համարում շեշտել այն հանոգչությունն ու ակտուալությունը, որոնք բնորոշ են բռնակալության համատիպման վտանգը որոշ չափով զսպելու նպատակով արևելյան հասարակությունների կողմից կիրառվող ինտեգրային միջոցների վերաբերյալ Երասովի արած եզրակացություններին:

Հարկ է նշել, որ իսլամական մտածելակերպի և հասարակական կացության կազմակերպման քաղաքական ու կրոնական էությունները յուրահատուկ կերպով միաձուլված են, և քրիստոնեական աշխարհի քաղաքական համակարգերին հատուկ է աշխարհականությունը: Ռևստի առաջնահերթ է դառնում այն հարցի հետազոտությունը, թե ինչ դեր է խաղում կրոնը ինտեգրման մեխանիզմների ձևավորման և օգտագործման նկատմամբ քաղաքակրթության աճող պահանջմունքի բավարարման գործում: Տվյալ դեպքում մենք գործ ունենք այն մեխանիզմների հետ, որոնք զսպում են տարբեր ներքաղաքակրթական հանրությունների կողմնորոշումային պլյուրալիզմն ու տարբերակումը, բայց, միևնույն ժամանակ, հասարակությունը զերծ են պահում բռնակալության ծայրահեղություններից:

[79] Տես *А. Дж. Тойнби.* Постижение истории. М., 1991:

Հոգևոր, սոցիալական և հատկապես քաղաքական կյանքի բազմազանության կանոնակարգմանը նմանատիպ մասնակցությունը, մասնագետների կարծիքով, բնորոշ է մի շարք կրոնների՝ կոնֆուցիականությանը, իսլամին և այլ դավանանքների: Քաղաքակրթության շրջանակներում ոչ միայն առաջադիմական, այլև հետամնաց կացութաձևերը կոնսերվացնելու կողմնորոշումը վերջիվերջո, ինչպես վկայում է պատմական փորձի վերլուծությունը, հանգեցնում է ամբողջ համակարգի ոսկրացմանը:

Սովորաբար տվյալ կոնկրետ քաղաքակրթություններում էթնոազգային ու ազգային պետական մակարդակներում տեղի է ունենում քաղաքակրթական տարրերի իրավաքաղաքական հավասարեցում, հիմնական քաղաքական արժեք է հռչակվում ամբողջ հասարակությանը էթնոսոցիալական համասեռության պարտադրման վրա հիմնվող կայունությունը: Այս քաղաքական-կրոնական արժեքային կողմնորոշումը իրացվում է ուղղաձիգ կենտրոնա-ծայրամասային հարաբերությունների գերակշռության, հասարակության համատարած պետութենացման ձևով:

Արևմտյան քաղաքակրթական շրջանում եկեղեցին երկար ժամանակ է, ինչ օտարված է քաղաքական իշխանությունից: Դրա հետևանքով կրոնին տրամադրվում էին հասարակական կեցության բազմազանության ինտեգրիչ կարգավորմանը մասնակցելու համար որակապես այլ պայմաններ: Ընդհանուր համայնքային կոլեկտիվիզմի նկատմամբ անհատականության գերակայությունը, որը ձևավորվել էր քրիստոնեությունից անջատված քրիստոնեական պետությունում ու հասարակության մեջ, բոլոր քաղաքակրթական մակարդակներում որոշակի կնիք է դրել միջանձնային հարաբերությունների, էթնոմշակութային ու սոցիոմշակութային դինամիկայի ամբողջ համակարգի վրա: Հասարակական կառավարմանը քաղաքացիների մասնակցության ընդլայնումը, որն ուղեկցվում էր իրավաքաղաքական ու էթնոսոցիալական ոլորտի ուրվապատկերի յուրահատուկ փոփոխմամբ, ձևավորեց ներքաղաքակրթական պլյուրալիզմի «արևմտյան» ուղին: Պրոֆեսիոնալացումը և դրան զուգահեռ պետական կարգավորման ոլորտի կրճատումը բավական արդյունավետ կերպով ուղեկցվում էին հասարակության աճող կողմնորոշմամբ դեպի ազատական-ժողովրդավարական արժեքների քաղաքացիական պաշտպանություն: Այսպիսով՝ ի տարբերություն ներքաղաքակրթական միասնականության տարբերակիչ միտումներին հակազդեցության արևելյան, գերազանցապես բռնի եղանակներից, արևմտյան քաղաքակրթական կենսատարածքը մշակեց ժողովրդավարական բազմիշխանության (պոլիարխիա) համակարգ և այն դարձրեց հասարակական կեցության գլխավորապես ինքնակարգավորման միջոցներով քաղաքական կայունության ու քաղաքակրթության ամբողջականության վերարտադրության հասարակական-պետական ապահովման արդյունավետ գործիք:

ԽՍՀՄ տարածքում գոյություն ունեցած հիմնական քաղաքակրթական համակարգերի արժեքային կողմնորոշումների, ինչպես նաև դրանց իրացման սոցիոմշակութային ու էթնոմշակութային մեխանիզմների նմանության ու տարբերության էության հետագա ուսումնասիրությունը կարող է նպաստել միջքաղաքակրթական շփումները գերազանցապես համաձայնային ուղղությամբ զարգացնելու հնարավորությունների պարզմանն ու օգտագործմանը:

Իսկ ո՞ր արժեքային կողմնորոշումները կարող է էթնոքաղաքագիտությունը դիտարկել որպես միջքաղաքակրթական շփման ծավալման հիմնական ուղի: Այստեղ կարևոր է թվում ինչպես հասարակական գիտությունների առկա նվաճումների տեսամեթոդաբանական, այնպես էլ միջքաղաքակրթական համագործակցության պրակտիկայի իմաստավորումը: Կարևոր է նաև դիտարկել կոնկրետ ճգնաժամները, հետարդիական, արդիական և ավանդական քաղաքակրթությունների տարամակարդակ էթնոսոցիալական ենթահամակարգերի միջև ծագած հակամարտությունները: Հիմնական արժեքների ու կառավարման ընթացակարգային նորմերի վերաբերյալ համաձայնությանը ներքաղաքակրթական կողմնորոշվածությունը կարող է դառնալ արտաքին, արտաքաղաքակրթական շփումներին կողմնորոշվածության ու պատրաստության բովանդակության մեջ կատարվող կարևոր էթնոքաղաքագիտական փոփոխություններից մեկը:

Պետության հետ քաղաքացիական հասարակության համամասնակցությամբ կառավարումը, հասարակության տարբերակիչ գործոնների (տարածքային ու մշակութային ինքնավարություն, հատկապես՝ տարբեր լեզուների ու կրոնների կարգավիճակը, կրթամշակութային համակարգի նկատմամբ վերահսկողություն, պաշտամունքային ծեսերի կատարում, քաղաքացիական ու սոցիալական ազատություններ) ժողովրդավարական կարգավորման և ինքնակարգավորման վերաբերյալ այդ կառավարման մասնակիցների համաձայնությունը կազմում են ժողովրդավարական պլյուրալիզմի արժեքներին ու համակարգին ներքաղաքական կողմնորոշվածության հիմնական բովանդակությունը:

Իսկ պլյուրալիստական հասարակության կառավարումը տարբերակիչ գործոնների բռնի մեղմացմամբ կամ արգելակմամբ, կառավարման կողմնորոշվածությամբ դեպի ամբողջ հանրույթի քաղաքականացում՝ ընդհուպ մինչև նրա համատարած պետութենացումը, ինչը մի շարք դեպքերում պարտադրվում է իշխող կրոնական կամ աշխարհիկ գաղափարախոսությամբ, կազմում է բռնակալական պլյուրալիզմի արժեքներին ներքաղաքական կողմնորոշվածության բովանդակությունը:

Հարկ է անել հետևյալ վերապահումը: Տվյալ հետազոտության ժամանակ մենք գերազանցապես կենտրոնացել ենք էթնոքաղաքագիտության մեթոդաբանական պրոբլեմների վրա: Այդ հանգամանքով է բացատրվում հիմնական ուշադրության հատկացումը քաղաքական գործոններին ու դրանց քաղաքագիտական իմաստավորմանը: Հենց այս տեսանկյունից էլ ուրվագծվում են էթնոսոցիալական հանրությունների այն արժեքային կողմնորոշումների համախմբի բևեռները, որոնք ուղղված են դեպի ներքաղաքակրթական համաձայնություն ու քաղաքական կայունություն: Իսկ տվյալ կողմնորոշումների էության քաղաքական արտահայտումը դրսևորվում է հասարակության քաղաքակրթական ռեսուրսների վերարտադրության, տնօրինման ու սպառման նկատմամբ պետական ու քաղաքացիական վերահսկողության ձևերով:

Ժողովրդավարական պլյուրալիզմը, կամ բազմիշխանությունը, որը խարսխվում է արժեքային կողմնորոշումների արևմտյան քաղաքակրթական համակարգի վրա, հակված է իր իրավաքաղաքական ենթահամակարգերը, այդ թվում՝ կառույցները, հարմարեցնելու գործնականում ցանկացած տիպի զանգվածային էթնոսոցիալական կամ ազգային շարժման՝ բացառությամբ տվյալ համակարգի հիմքերը խարխլող բռնի ձևերի:

Բռնակալական պլյուրալիզմը, որի հիմքում արժեքային կողմնորոշումների այսպես կոչված արևելյան քաղաքակրթական համալիրն է, բնորոշվում է իրավաքաղաքական կողմնորոշումներով դեպի ինտենսիվ ինտեգրման ու փոքրամասնությունների ծուլման միջոցով «միասնական ազգի արագացված կերտում»: Ռեժիմը, իր քաղաքականությունը վարելով ի շահ տիրապետող ազգային-պետական մեծամասնության, փաստորեն խթանում է հակամարտային իրավիճակների ստեղծումը:

Հարկ է կանգ առնել «համաձայնություն–հակամարտություն» գործընթացի հակասականության հարցի վրա: Նշենք, որ այդ հակասականությունն ունի մի շարք հիմնական չափումներ: Բռնակալական պլյուրալիզմի պայմաններում էթնոսոցիալական լարվածություններն ավելի հազվադեպ են դրսևորվում բացահայտ հակամարտության ձևով, քան բազմիշխանության դեպքում: Ժողովրդավարական պլյուրալիզմի ռեժիմը սովորաբար ուղեկցվում է թաքնված հակամարտությունների արագ կերպափոխմամբ բացահայտ ձևերի:

Որո՞նք են գործընթացների նման տարիմաստության էութենական քաղաքական պատճառները: Մեր կարծիքով՝ տվյալ հակասությունը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ արևմտյան քաղաքակրթական բազմիշխանական տիպի ռեժիմների դեպքում չի ենթադրվում համընդհանուր պետական վերահսկողություն հասարակական կեցության ու գիտակցության նկատմամբ: Պետական կառավարման և քաղաքացիական հասարակության ինքնակառավարման քաղաքական «համատեղումը» էութենական հիմք է քաղաքական համակարգի ծայրամասում

առաջացած հակամարտային իրավիճակների կարգավորման համար՝ դրանց լուծումը տեղայնացնելով քաղաքացիական ինքնակառավարման տեղական մարմինների և կոնկրետ հակամարտությունների մասնակիցների միջև ծագող միջանձնային հարաբերությունների ոլորտում:

Տվյալ էությունը դրսևորվում է, առաջին հերթին, այն կողմնորոշման ձևով, ըստ որի՝ պետական կառավարմանն անմիջականորեն չառնչվող «հակամարտությունների մեծ մասը» համաձայնային եղանակով լուծվում է հենց տեղում: Մինչդեռ քաղաքական բնույթի հակամարտությունները, սպասարկվելով բազմիշխանության կառույցներով, հակված են թաքնված ձևից շատ արագ անցնելու հասարակականորեն վերահսկելի բաց ձևի: Իսկ վերջին հաշվով՝ խոսքը վերաբերում է հակամարտությունները «կազմակերպված» քաղաքականության ոլորտ տեղափոխելու մեխանիզմների գործառական կարգավորվածությանը:

Այս է բազմիշխանական քաղաքակրթական համակարգի համաձայնային նախահակվածության, քաղաքական համակարգի երկարաժամկետ ինքնակարգավորվող կայունության ապահովմանը նրա ծրագրվածության չափման հիմքը:

Բռնակալական պլյուրալիզմի դեպքում հասարակության սոցիոմշակութային կյանքի ծայրամասում ծագող ցանկացած պրոբլեմ, բախվելով համընդհանուր քաղաքական կանոնակարգման համակարգի հետ, գործնականում ձեռք է բերում քաղաքական բնույթ ու տեղափոխվում պետության հետ քաղաքական դիմակայության ասպարեզ: Դա է պլյուրալիստական բռնակալությունների հակամարտային լիցքավորվածության էությունը:

Միջքաղաքակրթական շփումների, դրանց էվոլյուցիոն փոխներթափանցման, ինչպես նաև քաղաքակրթությունները ներկայացնող կառույցների արտաքին քաղաքական ու միջազգային-իրավական փոխգործության հաշվառմամբ քաղաքակրթական նույնականության պրոբլեմը չի կարող բացատրվել սխեմայաբար «մաքուր» մոդելներով: Արևելյան երկրների մեծ մասի քաղաքական ռեժիմները չեն կարող առանց վերապահության վերագրվել ոչ բռնակալական, ոչ էլ ժողովրդավարական մոդելներին: Մեր կարծիքով՝ շփումների մասնակիցների հենց քաղաքակրթական բազմազանությունը, քաղաքական արտահայտման ավտորիտար (անձնատիրական) կամ խորհրդարանական ձևերը պարունակում են դրանց փոխազդեցության ոչ միայն հակամարտային, այլև համաձայնային ռեսուրսներ:

Հատուկ ուշադրություն են պահանջում քաղաքակրթական նույնականացման բոլոր մակարդակներում արժեքակողմնորոշումային տրամախաչումների ինչպես ներքաղաքակրթական, այնպես էլ միջքաղաքակրթական կողմերի հետազոտությունները:

Այս կապակցությամբ կարևոր է թվում ազգային-պետական ու միջազգային պրակտիկայում «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում», ինչպես նաև տնտեսական, սոցիալական, մշակութային, քաղաքացիական ու քաղաքական իրավունքների մասին միջազգային պայմանագրերում արձանագրված «մարդու իրավունքների» պաշտպանության հիմք ծառայող արժեքների արտացոլվածության համեմատական-վերլուծական էթնոքաղաքագիտական հետազոտությունը:

Ինչպես վերը նշել էինք, մարդու կյանքի, ազատության և արժանապատվության պաշտպանության ազգային համակարգերում տվյալ արժեքների հենց այդ արտացոլվածությունը կարող է ծառայել որպես գլխավոր չափանիշներից մեկը էթնոազգային, ազգային-պետական, կենսատարածքային կամ համաշխարհային մակարդակներում տեղի ունեցող «համաձայնության–հակամարտության» երկմիասնական գործընթացում գործընկերների կամ հակառակորդների քաղաքակրթական վիճակն ու արժեքային նախահակվածությունը գնահատելու համար:

Ավարտելով սույն գլխի երկրորդ պարագրաֆը՝ հեղինակը ցանկանում է նշել այն որոշակի բարդությունները, որոնք կապված են կոնկրետ էթնոքաղաքական շփումների համաձայնային ներուժայնության ու դրանց գործիքային իրացման պարզման հետ: Կարելի է առանձնացնել հեղինակի մասնակցությամբ հետազոտվող ռեալ էթնոքաղաքական ճգնաժամներում համաձայնային մոտեցման կիրառման հետ կապված առնվազն երկու ընդհանրացված խումբ դժվարություններ: Դրանք են իմացաբանական և գործիքատեխնոլոգիական դժվարությունները, ինչպես նաև նրանց էութենական հարաբերակցման պրոբլեմները:

Մեր կարծիքով՝ առանձնակի, հիմնարար տեղ են զբաղեցնում իմացաբանական բնույթի դժվարությունները, որոնք պայմանավորված են ռեալ էթնոքաղաքական գործընթացների ու երևույթների բազմազանության ընկալման և էթնոքաղաքագիտական ճանաչողավերլուծական խոհածության (ռեֆլեքսիա) անհամապատասխանությամբ: Համաձայնային կարգավորման սուբյեկտների և օբյեկտների միջև հաղորդակցման ու փոխազդեցության բարդության մասին ընդհանրական պատկերացումը կարող է բնութագրվել կառավարման ընդհանուր տեսության համապիտանի սկզբունքներից մեկի՝ «անհրաժեշտ բազմապիսության սկզբունքի»[80] կիրառմամբ: Տեսական կիբեռնետիկայի այդ հիմնադրույթը, կիրարկված լինելով սոցիալական գործընթացների, մասնավորապես՝ էթնոքաղաքական տեսության ու գործունեության նկատմամբ, կարող է ձևա-

[80] Տես *У. Эшби Росс.* Необходимое разнообразие. "Введение в кибернетику". М., 1959, сс. 287 – 310:

կերպվել հետևյալ կերպ: Քաղաքակրթական վերլուծության ու համաձայնության–հակամարտության կարգավորման ընթացքում էթնոսոցիալական համակարգերում օպտիմալ փոխազդեցությունը ենթադրում է, որ կարգավորման սուբյեկտները իրենց բովանդակությամբ ու դրա դրսևորման կարողությամբ պետք է լինեն ոչ պակաս բազմապիսի, քան էթնոքաղաքագիտական վերլուծության ու էթնոքաղաքագիտական կառավարման օբյեկտները:

§ 3. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ–ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԷԹՆՈՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՅԻ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ ԽՍՀՄ–ԱՊՀ ԿԵՐՊԱՓՈԽՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Մեր կարծիքով՝ հասարակության քաղաքակրթական վիճակի մակարդակը նույնականացնել նշանակում է որոշել նրա արդիականացվածության մակարդակը, ավանդական քաղաքակրթությունից արդիականի ու հետարդիականի նրա կերպափոխման բնույթը:

«Գերտերության» կարգավիճակը, որն ուներ ԽՍՀՄ-ը հետպատերազմյան շրջանում, և այն բանի լռելյայն ընդունումը, որ ԽՍՀՄ-ը, հանդես գալով «Արևելքի» դերում, «Արևմուտքի» հետ գտնվում է «հյուսիսում»՝ ի հակադրումն «Հարավի», ըստ էության ստեղծեցին նրա արդիականացվածության ռեալ մակարդակի պատրանք: Այսպես. ԽՍՀՄ ազգային-պետական պրոբլեմները, օրինակ, ժամանակակից Եվրոպայի ինտեգրման փորձի նմանակմամբ լուծելու վերաբերյալ առաջարկություններն արվել էին այն ենթադրությամբ, թե խորհրդային հասարակությունը կարող է նույնականացված լինել որպես հետարդիական մակարդակում գտնվող քաղաքակրթություն, որի սոցիումշակույթի տարրերից են իրոք որ վերազգային միջպետական կառույցները:

Սակայն քաղաքակրթական վերլուծության հիման վրա՝ դրա բազմաչափության ու համալիրության հետևանքով, ի հայտ բերվեցին ԽՍՀՄ-ում իրապես տեղի ունեցած մի շարք գործընթացներ, օրինակ, պետության ապագաղափարայնացում և տնտեսության ապապետականացումը, հողի նկատմամբ կոլտնտեսապետտնտեսական սեփականության ձևից շարժումը դեպի մասնավոր սեփականություն, ազգային ինքնիշխանությունը հարգելու պահանջները և այլն: Դրանք վկայում են, որ ԽՍՀՄ-ը գտնվում էր միայն արդիականացման սկզբնափուլում. ավարտին էր մոտենում ավանդական (պատմական) քաղաքակրթությունից դեպի արդիական քաղաքակրթություն անցման գաղափարախոսական փուլը:

Վերջին հաշվով խորհրդային հասարակության ռեալ արդիականացվածության բարձր մակարդակի պատրանքը հիմնված էր ֆորմացիոն մոտեցման վրա, որը սոցիալական զարգացումը գնահատում է դրա տնտեսական դետերմինացվածության տեսանկյունից: Բայց անգամ այդ դիրքերից չի կարելի ժխտել, որ ԽՍՀՄ-ը «գերտերության» կարգավիճակի էր հասել և այն պահպանում էր ի հաշիվ անբնականոն սոցիալ-տնտեսական զարգացման՝ պաշտպանության վրա կատարելով խաղաղ ժամանակվա համար չափազանց մեծ ծախսեր, որոնք էապես գերազանցում էին ՆՀԱ-ի «շեմային» 5 %-ը[81], իսկ դրանց սահմաններից դուրս անվտանգությունը մեծացնելու փորձերը հանգեցնում են տնտեսական քայքայման վտանգի աճի: Ավելին. հետևանքը եղավ «գերինդուստրիալացումը»՝ երկրի ներտնտեսական հաշվեկշռի խախտումը հօգուտ «երկրորդային տնտեսության» (ՆՀԱ-ի ավելի քան 50 %-ը): «Գերինդուստրիալացումը» խորհրդային հասարակությանը հասցրեց անընդմեջ տնտեսական ճգնաժամի և, որպես արդյունք, զանգվածային հոգեբանական դիստրեսի, որի մակարդակը համեմատական է արագացված ինդուստրիալ վերարտադրության վրա կատարվող «գերծախսերին»:

Այս ամենը պայմանավորեց բնակչության հիմքային պահանջմունքների բավարարման՝ ԽՍՀՄ պատմության մեջ թերևս ամենացածր մակարդակը և հետագա տարիների կտրվածքով երկրի ամենամեծ նախահակվածությունը հակամարտային հեռանկարների:

Ռուսի ԽՍՀՄ զարգացման օրինակը ցույց է տալիս, որ թեև առանց տնտեսական զարգացման, անտարակույս, հնարավոր չէ շարժվել դեպի ժամանակակից քաղաքակրթություն, այդուհանդերձ, այն ինքնին արդիականացածության մակարդակի միակ ցուցանիշը չէ, հատկապես՝ արևմտյան չափանիշներով անբնականոն սոցիալ-տնտեսական զարգացմանը հակված «ծայրամասային» հասարակությունների դեպքում:

Հասարակության արդիականացման մյուս չափանիշն է նրա հաստատութենացման մակարդակը, այն է՝ այնպիսի քաղաքական հաստատությունների առկայությունը, որոնք ունակ լինեն ընդգրկելու հասարակության՝ վերափոխման կողմնակից խմբերն ու նպաստելու նրա սոցիալ-տնտեսական զարգացմանը: Թեև ԽՍՀՄ-ում հասարակությունը 1985 – 1991 թվականներին այս ուղղությամբ էական առաջընթաց ունեցավ, սակայն խորհրդային քաղաքական համակարգը ժողովրդավարացնելու, ինչպես նաև նրա ազգային-պետական կազմակերպվածքը բարեփոխելու փորձերի տեսանկյունից հաստատութենացման ընթացքի ռեալ գնահատումը հնարավոր է միայն հակադրման կամ համագործակցության, այսինքն՝

[81] Այստեղ օգտագործված են ՄՀՄՏԱ-ի մեթոդաբանական սեմինարի թվային տվյալներն ու նյութերը: Հեղինակի մասնակցությամբ անցկացված այդ սեմինարը ղեկավարել է ՈԴ ԴԱ-ի Միջազգային հետազոտությունների մեթոդաբանության կենտրոնի տնօրեն, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր է. Ի. Սկակունովը:

պետության կենսագործունեությանը հասարակության մասնակցության, մակարդակի չափման ֆոնի վրա:

Պրոբլեմը դիտարկելով այս տեսանկյունից՝ մենք համոզվում ենք, որ հիմքային պահանջմունքների չբավարարվածությունը, որն ըստ որոշ սոցիոլոգիական հարցումների՝ ԽՍՀՄ առանձին տարածաշրջաններում գերազանցել էր բնակչության 70 տոկոսի «կրիտիկական թիվը», արդեն 1989 – 1992 թվականներին ստեղծել էր այն մակարդակի սոցիալական լարվածություն, որի դեպքում դրանք կարող են արագ կերպափոխվել քաղաքական ռեժիմային հակամարտությունների, ընդհուպ մինչև դրանց ծայրագույն ձևերը՝ քաղաքացիական պատերազմները: Քաղաքական պահանջներով գործադուլները, որոնք մեթոդաբանորեն գնահատվում են որպես քաղաքական ռեժիմային հակամարտություններ, առայժմ գտնվելով իրենց զարգացման հարաբերականորեն խաղաղ փուլում, միանշանակ կերպով վկայում են, որ առկա էր ինչպես խորհրդային, այնպես էլ հետխորհրդային քաղաքական ռեժիմներին հասարակության ծայրահեղ բարձր աստիճանի հակադրում:

Եթե դիտարկենք հաստատութենացման ազգային-պետական մակարդակը, ապա պետք է նշենք, որ պրոբլեմը բարդանում է, քանի որ կենտրոնածայրամասային ճնշման հետևանքով միասնական պետության մեջ միավորված էթնիկական հանրությունները գտնվում էին սոցիոմշակութային զարգացման տարբեր մակարդակներում: Դրանցից մի քանիսը պատկանում էին տարբեր տիպերի ավանդական քաղաքակրթությունների, որոնք երբեմն դեռ պատրաստ չէին արդիականացմանը, մինչդեռ մյուսներն իրենց զարգացման մակարդակը չափակցում էին արդիական քաղաքակրթության ստանդարտների հետ: Այդ պատճառով ԽՍՀՄ-ում հակամարտության վերածվող սոցիալական լարվածության վիճակում գտնվող բռնակալական պլյուրալիզմի քայքայման պայմաններում բարձրացած էթնոազգային ալիքը անխուսափելիորեն հանգեցրեց օրինական ազգային-ազատագրական հակամարտությունների, որոնք ի վերջո խարխլեցին ԽՍՀՄ ազգային-պետական կազմակերպվածքը և բարդություններ ստեղծեցին ԽՍՀՄ փլուզման հետևանքով ստեղծված պետությունների ամբողջականության պահպանման համար:

Այս կերպ գնահատելով ԽՍՀՄ տնտեսական զարգացման ու հաստատութենացման մակարդակները՝ մենք հայտնաբերեցինք, որ եթե առաջին ցուցանիշը, չնայած ԽՍՀՄ «գերինդուստրիալացմանը», մատնանշում էր նրա սոցիալ-տնտեսական թերզարգացածությունը, ապա երկրորդը՝ ինտերնացիոնալիստական հավատարմությունը ամբողջատիրական-քաղաքական ռեժիմին ու կայսերական ձևի ազգային-պետական կազմակերպվածքին, այսինքն՝ ավանդական քաղաքակրթության էութենական հատկանիշներին:

Միևնույն ժամանակ, ընդունելով հասարակության մեջ տեղի ունեցող սոցիալական ու տնտեսական փոփոխությունների մակարդակից քաղաքական հաստատությունների զարգացման հետ մնալու հնարավորությունը, մենք վերջապես սկսում ենք հասկանալ, որ արդիականացումն անմիջականորեն դրսևորվում է հասարակության «սոցիալական մոբիլիզացվածության» ձևով: Վերջինս մենք ընկալում ենք որպես ավանդական հասարակությունից դեպի ինդուստրիալ հասարակություն շարժվող երկրի բնակչության մի զգալի մասը ներառող փոփոխությունների համընդգրկուն գործընթաց, որպես հասարակության մեջ կազմավորվող նոր սոցիալական հանրությունների ժամանակակից քաղաքական գիտակցության ձևավորում: Ըստ էության, խոսքը վերաբերում է հասարակության սոցիոմշակութային զարգացման այն մակարդակի չափմանը, որն էլ հենց զանգվածային գիտակցության միջոցով արտահայտվելով արժեքային, կողմնորոշումների բովանդակության, սոցիալական բնավորության տիպերի, քաղաքական ոճի և արդիական քաղաքակրթությանը համապատասխանող այլ սոցիալ-հոգեբանական «կերպարների» մեջ, հասարակության առաջադիմական տեղաշարժի բնականության ու հաստատունության ռեալ ցուցանիշն է:

Ռուստի որպես խորհրդային հասարակության արդիականացման մակարդակի հիմնական ցուցանիշ, որից կատարվող հաշվումը կարող է ցույց տալ նրա տնտեսական զարգացման ու հաստատութենացման՝ բնականոնից շեղվածության չափը, հանդես է գալիս բնակչության սոցիոմշակութային շերտավորումը: Վերջինս զանգվածային գիտակցության միջոցով դրսևորվում է յուրաքանչյուր տիպի քաղաքակրթությանը բնորոշ սոցիալական արժեքների նկատմամբ կողմնորոշումներում: Կարելի է նախապես ենթադրել, որ յուրաքանչյուր քաղաքակրթության համար տիպական արժեքներին հակված բնակչության խմբերի հարաբերակցությունը նախկին ԽՍՀՄ շատ տարածաշրջաններում կլինի տարբեր, ուստի յուրաքանչյուր դեպքում կպահանջվի տարբերակված մոտեցում ինչպես տնտեսական զարգացման ռազմավարության, այնպես էլ հաստատութենացման խորության ընտրության նկատմամբ:

Տարբեր երկրների արդիականացման փորձը ցույց է տալիս, որ հասարակության քաղաքական կայունությունը պահպանելու համար անհրաժեշտ է, որ բնակչության սոցիալական մոբիլիզացվածության մակարդակը, փոփոխություններ իրականացնելու նրա նպատակամղվածությունը և հասարակության հաստատութենացումը լինեն հավասարակշռված: Որքան ցայտուն է արտահայտված հասարակության սոցիալական մոբիլիզացվածությունը, այնքան ավելի շատ հիմքեր կան, որ հասարակությունը զարգանա անհամաչափորեն, որ զանգվածների կողմից յուրացվող նոր սոցիալական արժեքների և, որպես կանոն, ավանդական ընտրախավի

ու նրա դրածոների կողմից զավթված կառույցների միջև առաջանա խզվածք: Եթե քաղաքացիական հասարակությունը ռեալ կերպով ներգրավված չէ, ապա այդ խզվածքն էլ հենց դառնում է ԽՍՀՄ–ԱՊՀ քաղաքական անկայունության գլխավոր աղբյուրը: Այն դրսևորվում է այսպես կոչված «դիրքային հակամարտությունների» ձևով, որոնք ծագում են նախկին վերնախավի և կոռուպցիայի նախահակված ու քաղաքացիական հասարակության սաղմնային մեխանիզմներով գործնականում չվերահսկվող նոր քաղաքական խմբերի միջև՝ ազգային ռեսուրսների օգտագործման վերաբերյալ քաղաքական որոշումների պատրաստման, ընդունման ու կատարման մեխանիզմները վերահսկելու համար:

Սոցիոմշակութային զարգացածության մակարդակի ու գոյություն ունեցող սոցիալական կառույցների հարաբերակցությունը մեր երկրի տարբեր շրջաններում տարբեր է: Սակայն, ինչպես ցույց է տալիս քաղաքական հակամարտությունների (ընդդեմ ռեժիմի և իշխանությունների) ներուժի վերլուծությունը, դրանց միջև խզումը ամենուրեք բավականին մեծ է, ինչը ԽՍՀՄ ժառանգորդ հասարակությանը բնութագրում է որպես ընդհանուր առմամբ անկայունությանը հակվածի:

Փլուզված ԽՍՀՄ-ում՝ «ազգային վերածննդի», ազգային ավանդույթների վերակենդանացման և, միևնույն ժամանակ, արևմտյան քաղաքակրթության բացության պայմաններում, ծավալվում են արդիականացման գործընթացներ տեխնոլոգիաների (այդ թվում՝ սոցիալական ու քաղաքական) բնագավառում և դրա հետ մեկտեղ՝ արևմտացման ու արմատականացման գործընթացներ մշակույթի, հասարակական գիտակցության ու վարքի ոլորտներում: Ինչպես վերը պնդել էինք, մշակութաքաղաքական փոփոխությունների այդ խճանկարը հնարավոր է ըմբռնել՝ հիմնվելով ավելի ընդհանուր հասկացության վրա, որի շնորհիվ կարելի լինի այդ գործընթացներն ընդգրկել ու հասկանալ որպես մեկ ոլորտի պատկանող երևույթներ: Սոցիալական իրողությունների բազմակողմ սպեկտրը որպես մի ամբողջական սոցիոմշակութային կազմավորում միավորում է «քաղաքակրթություն» հասկացությունը: Ինչպես վերը նշել էինք, քաղաքակրթական մոտեցումը ենթադրում է նաև երևույթների դիտարկում պատմական զարգացման կտրվածքով, ուստի ներառում է քաղաքակրթությունների ինտեգրման և ապաինտեգրման գործընթացների ուսումնասիրությունը, այսինքն՝ «համաձայնային» կամ «հակամարտային» տիպի քաղաքակրթական (միջքաղաքակրթական ու ներքաղաքակրթական) շփումների հաստատման գործընթացների հետազոտումը:

Բավականաչափ արագ ու խոր փոփոխությունների դեպքում արդիականացող հասարակության առջև ծառանում է, ինչպես արդեն տեսանք, քաղաքակրթական նույնականացման, այսինքն՝ իրեն այս կամ այն քաղաքակրթությանը վերագրելու, պրոբլեմ: Հաջորդայնության, ինքնության պահպանման (ինքնապահպանման կամ գոյատևության ապահովման), ավանդականության՝ որպես հասարակության գոյության հիմնարար պայմանի և ավանդապահության՝ որպես ինքնությունը «ճապաղող» փոփոխություններին դիմակայող արժեքներին ու խորհրդանիշներին կողմնորոշվածության միջև եղած հարաբերակցության պրոբլեմները սուր կերպով գիտակցվում են գաղափարախոսության մակարդակում և ոչ պակաս սրությամբ վերապրվում զանգվածային գիտակցության մակարդակում: Հասարակության մեջ դա նպաստում է, ասենք, «համաձայնային» ու «հակամարտային» գիտակցության միջև լարվածության և ներքին դինամիկության առաջացմանը, այն էթնիկական ու մշակութային շփումների վերահմաստավորմանը, որոնցում, մի կողմից, պահպանվում է «մենք–նրանք» հակադրումը, մյուս կողմից՝ աճում է միևնույն հանրությանը պատկանելության գիտակցումը:

Բազմաէթնիկ կայսերական կառուցվածքներում սովորաբար իշխում է «ուղղածիգ» (կենտրոն–ծայրամաս) ուղղվածությամբ կողմնորոշումը դեպի էթնիկական մշակույթների «համասեռացում», միօրինակացում: Նման քաղաքական կառուցվածքների դեպքում քաղաքակրթական շփումների պրոբլեմը, որպես կանոն, հանգում է ուժային փոխազդեցությանը: Այդ կառուցվածքների քայքայման դեպքում հեղեղորեն աճում է մշակույթների «տարասեռման» գործընթացը, ինչը հանգեցնում է «մշակութային խճանկարի» առաջացմանը. ուժգնանում են ապաինտեգրիչ գործընթացները, որոնք սպառնում են քաղաքակրթության գոյության բուն հիմքերին: Ստեղծվում է մի արտասովոր իրավիճակ, երբ իր առաջացմամբ ու գոյությամբ քաղաքակրթության ձևավորմանը «պարտական» ազգային վերածնունդը խարխլում է իր քաղաքակրթական հիմքերը: Ինչպե՞ս բացատրել այդ գործընթացը: Արդյո՞ք միայն փոփոխությունների անհրաժեշտությամբ: Ո՞րն է դրանց հնարավոր ուղղությունը, և որո՞նք են կանխատեսման ու ընտրության մեր հնարավորությունները:

Ըստ երևույթին, միակենտրոնության սոցիալ-քաղաքական «կայսերական» ուղղածիգ կառուցվածքներից բազմակենտրոնության հակամարտային հորիզոնական կառուցվածքին անցնելու անցանկալի «սցենարի» ծայրահեղություններից խուսափելու համար անհրաժեշտ է միաժամանակ ուժեղացնել համաձայնային գործընթացները կամ ներքաղաքակրթական ինտեգրացիոն ներուժը: Որո՞նք են ԽՍՀՄ-ից՝ որպես որոշ իմաստով քաղաքակրթական տիպի կառույցից, մեկ այլ կառույցի, ինչպիսին է, օրինակ, ԱՊՀ-ն, անցման համաձայնային գործոնները: Այս հարցի պատասխանը, որը սերտորեն կապված է ազգային ու միջազգային անվտանգության պրոբլեմների հետ, պահանջում է նախապես քննարկել մի քանի պատմական հարցեր: Ի՞նչ էր Ռուսաստանյան կայսրությունը:

Արդյո՞ք նա մարմնավորում էր հատուկ տեսակի քաղաքակրթություն, ավելի հին տեսակի ժառանգորդն էր, թե՞ նոր տեսակի նախակարապետը: Տվյալ քաղաքակրթական կենսատարածքի որոշիչ գործոնների պարզումը հնարավորություն է տալիս ճշգրտելու նրա սահմաններն ու որոշելու զարգացման հնարավոր ուղղությունները, ներառյալ՝ նրա արդիական մոդելները:

Ռուսաստանյան քաղաքակրթական կենսատարածքի պատմական զարգացման բավականին տևական փուլում նրա որոշիչ «արմատային» գործոնների օրինակ կարող են լինել «եվրասիական» գաղափարը և «Մոսկվան երրորդ Հռոմն է» հայեցակարգը: Անհերքելի է, որ տվյալ քաղաքակրթական կենսատարածքը վաղուց մտել է «քրիստոնեական քաղաքակրթության» մեջ, և, միաժամանակ, շատ կարևոր է ընդունել այն փաստը, որ կրոնը, որպես կանոն, գտնվում է քաղաքակրթության տեսակի «արմատային հարացույցի» ակունքներում: Քաղաքակրթությունների պատմական դինամիկայում, կրոնի հետ մեկտեղ, պարզորոշ կերպով դրսևորվում են նաև աշխարհաքաղաքական կողմնորոշումները: Ռուսաստանի դեպքում դրանց արտահայտությունն էր «եվրասիական գաղափարը»:

Եթե կրոնական գործոնը Ռուսաստանը կապում էր քրիստոնեական աշխարհի հետ, ապա աշխարհաքաղաքական գործոնը նրա ճակատագիրը կապեց «թյուրքաիսլամական» տարածաշրջանի հետ: Այս գործոնների խաչման կետում էլ ընդհանուր առմամբ ձևավորվում էր տվյալ քաղաքակրթական կենսատարածքի պատմությունը՝ «պանսլավոնականության» ու «պանթյուրքականության» հակասական զուգակցմամբ հանդերձ: Ընդսմին վերջին երկու գաղափարախոսություններն արտահայտում են ոչ միայն այստեղ գործող էթնոաշխարհաքաղաքական ու կրոնական գործոնների յուրահատկությունը, այլև դրանց միասնությունը:

Այս գործոններից յուրաքանչյուրն ունի տարբեր համաձայնային-հակամարտային ներուժ: Այսպես, օրինակ, քրիստոնեությունն ունի համաձայնային տիպի ներքին զարգացման և արտաքին փոխազդեցության ավելի մեծ փորձ: Մինչդեռ «թյուրքաիսլամական աշխարհը» մշակել է սոցիալական ինտեգրման ու կայունության պահպանման ավելի արդյունավետ միջոցներ, ինչը բնական է ճնշվող մեծ հակամարտային ներուժի առկայության պայմաններում:

Ռուսաստանյան քաղաքակրթական կենսատարածքը այսպես կոչված համամարդկային գիտակցության, համաշխարհային քաղաքակրթության տեսակետից զարգացել է ասես երկու «չափումներում»՝ դինամիկական, այն է՝ ռուսաստանյան աշխարհաքաղաքականության, և իներցիոն՝ էթնոկրոնական:

Խորհրդային մտածելակերպի գերիշխման պայմաններում առաջին պլան

էր մղվել աշխարհաքաղաքական գործոնը, ինչի վկայությունն է կայսերական գիտակցության փոխակերպումը «համաշխարհային հեղափոխության» ու «համաշխարհային պրոլետարական ինտերնացիոնալիզմի» գաղափարների նոր գաղափարախոսական ձևի: ԽՍՀՄ «ներքաղաքակրթական համածայնային էությունը» շատ բանով ապահովվում էր ի հաշիվ հակամարտայնությունը «միջքաղաքակրթական շփումների» մակարդակ արտահանելու, ինչի հետևանքով ստեղծվում էր «պաշարված ամրոցի» էֆեկտ:

Երբ միջքաղաքակրթական հակամարտայնությունն սկսեց սպառնալ «յուրային քաղաքակրթության» գոյության հիմքերին, խորհրդային կուսակցական-պետական ղեկավարությունը փորձեց ուժեղացնել միջքաղաքակրթական շփման համածայնային բնույթը, ինչը միաժամանակ առաջ բերեց «ներքաղաքակրթական» հակամարտայնության ուժգնացում, սոցիալ-քաղաքական գործընթացների արագացում, դրա հետ մեկտեղ դարձյալ «օրակարգ» մտավ քաղաքակրթական ինքնության էթնոկրոնական գործոնը: Սոցիալ-քաղաքական տեսանկյունից «խորհրդային քաղաքակրթությունը» շատ առումներով դադարեց գոյություն ունենալուց որպես միասնական ամբողջություն, բայց «հորիզոնական կապերի» ուժեղացման հետ մեկտեղ աճեց անցյալում միասնական քաղաքակրթական կենսատարածքի տարբեր տարածաշրջանների ու ենթատարածաշրջանների «ներքաղաքակրթական շփվելիությունը»: Քաղաքակրթական համակարգը գերազանցապես քաղաքական միջոցներով պահպանվող միակենտրոն վիճակից անցավ բազմակենտրոնության:

Ընդսմին նրա ամեն մի մասը դարձավ սակավ կայուն, որովհետև անցումային շրջանում ուժերի «կենտրոնադրումը» խախտվեց, և այժմ, միջազգային անվտանգության երկբևեռ համակարգի փլուզման համաշխարհային համատեքստի հաշվառմամբ, անխուսափելիորեն տեղի է ունենում դրա վերակողմնորոշում և ուժի մեծ թվով նոր ներքին ու արտաքին կենտրոնների միջև վերաբաշխում: Իհարկե, Ռուսաստանը ձգտում է պահպանելու «տարածաշրջանային հեգեմոնի» դերը, ինչը, ի դեպ, համապատասխանում է նրա գոյության պատմական ավանդույթներին:

Երկու՝ աշխարհաքաղաքական ու էթնոկրոնական, գործոնների «խաղի» վերականգնման պայմաններում դրանց փոխգործությունը բուռն կերպով աճում է, և, դրա հետ մեկտեղ, արագ աճում է ևս մեկ, մինչ այժմ հաշվի չառնված էթնոժողովրդագրական գործոնի դերը: Վերջինս էական նշանակություն ունի վերը նշված յուրաքանչյուր գործոնի համար և կարող է վերջին հաշվով կշեռքի նժարը թեքել դրանցից որևէ մեկի գերակայության կողմը: Էթնոժողովրդագրական գործոնի ազդեցության էֆեկտը նորամուծություն է, և ռուսաստանյան քաղաքակրթական կենսատարածքի պատ-

մական փորձը չի ապահովում դրան հարմարվելու մեխանիզմի մշակումը: Տվյալ պրոբլեմը պահանջում է հատուկ ուսումնասիրություն, վերջին հաշվով, նախկին ԽՍՀՄ տարածքում Անկախ Պետությունների Համագործակցության անվտանգության նոր ճարտարապետության այնպիսի հայեցակարգի իմաստավորման ու ձևավորման համար, որը համապատասխաներ արդիականացման հետվերակառուցումային փուլին: Ապագայում այն կարող է ունենալ երկակի դրսևորում. 1) ենթատարածաշրջանների վերջնական տրոհում և հետագա տարաբաշխում ըստ «եվրաքրիստոնեական» ու «իսլամասիական» մասերի, 2) նոր միասնական կենսատարածքի ձևավորում, ինչը սակավ հավանական է:

Շատ մոտ անցյալում ԽՍՀՄ-ն ընդգրկող քաղաքակրթական կենսատարածքի՝ «արևմտյան» ու «հարավային» կողմնորոշմամբ ենթատարածաշրջանների ձևավորման պայմաններում էթնոժողովրդագրական գործոնի դինամիկան թույլ է տալիս ենթադրել, որ նա կարող է զարգանալ այսպես կոչված «լիբանանյան» մոդելով: Մենք նկատի ունենք այն փաստը, որ ժամանակին, երբ Լիբանանը կազմավորվում էր որպես գերազանցապես քրիստոնեական պետություն, բավականին կոշտ ձևով էր փաստված ու քվոտայացված բոլոր համայնքների (մարոնիտներ, դրուզներ, շիաներ, սուննիներ, հայեր և այլն) ներկայացվածությունը իշխանության բոլոր շարակարգերում: Ավելի քան կես դարի ընթացքում մահմեդական բնակչության արագացված էթնոժողովրդագրական դինամիկայի պատճառով տեղի ունեցավ այդ փուխր հաշվեկշռի բավական կտրուկ խախտում, ինչը հանգեցրեց երկարատև քաղաքացիական պատերազմի:

Եթե հաշվի առնենք ներկայիս ԱՊՀ «հարավային» կողմնորոշմամբ պետությունների ակտիվ չափահաս բնակչության բաժնեմասի ու դերի աճի և նրա սոցիոդինամիկայի հանգամանքը, ապա այդ սցենարի տարբերակը կարող է հանգեցնել էական կառուցվածքային փոփոխությունների: Այս տեսակետից ԽՍՀՄ վերջին՝ 1991 թվականի գումարման Գերագույն խորհրդի կազմում բավականաչափ հատկանշական էր իսլամակողմնորոշված տարածաշրջանների ներկայացվածության տեսակարար կշռի փոփոխությունը նախկին ԽՍՀՄ իշխանության բարձրագույն օղակներում: Ավելին. տվյալ միտումների աճի և ուժգնացման արտահայտումն է 1991 թվականի վերջին կայացած այսպես կոչված Թուրանյան խորհրդակցությունը, ինչպես նաև Թուրանի բուն գաղափարը՝ դիտարկված այդ տարածաշրջանում Թուրքիայի և Իրանի արտաքին քաղաքական գործունեության ակտիվացման համատեքստում:

Այս ամենի հաշվառմամբ, ցավոք, ամենամոտ ժամանակներում զարգացման ավելի քան հնարավոր սցենար է թվում ներկայումս ԱՊՀ կոչվող ամբողջ քաղաքակրթական կենսատարածքի «լիբանանացումը»՝ ռուսների

(սլավոնների) կողմից միջէթնիկական հեգեմոնի դերը կորցնելու պայմաններում: Տվյալ պարագայում համախմբող գործոնի դեր կարող էր կատարել բանակը, եթե չլիներ որոշ սլավոնական պետությունների դիրքորոշումը, մասնավորապես՝ Ուկրաինայի, որը ձգտում է, այսպես ասած, հնարավորինս արագ շրջվել դեպի Արևմուտք՝ Ռուսաստանին թողնելով երես առ երես նախկին Միության ժառանգության հետ: Նման պայմաններում բանակը կարող է բռնել «հարավսլավական» ուղին: Ներքաղաքակրթական հակամարտության ուժգնացումը կարող է հարուցել միջքաղաքակրթական շփումների ուժեղացում, հատկապես՝ նախկին ԽՍՀՄ սահմանի այսպես կոչված շփումային գոտիներում: Դա հավանաբար իր հերթին կհանգեցնի հարավային ենթատարածաշրջանների «արևելացմանը» և արևմտյան ենթատարածաշրջանների «արևմտացմանը», ինչը տեղի կունենա վերջին ամրակցող օղակի՝ բանակի քայքայման հետ միաժամանակ:

Սակայն զարգացման նման սցենարը, որը Արևմուտքի և, առաջին հերթին, որպես ուժի միակ համընդհանուր կենտրոն մնացած ԱՄՆ-ի համար առավել անցանկալի է, դժվար թե իրականանա: Կարելի է ենթադրել, որ ուժի համաշխարհային կենտրոնների բազմաբևեռ համակարգի տուրբուլենտ ձևավորման պայմաններում Ամերիկան շահագրգռված է Սան Ֆրանցիսկոյից մինչև Վլադիվոստոկ միևնույն տիպի քաղաքակրթական համասեռ գոտու ստեղծման գործում: Ընդ որում, պարփակելով այդ գոտին, նա կկարողանա և՛ դիմակայել, և՛, հնարավոր է, համագործակցել Հարավի ու նրա այնպիսի տարածաշրջանային հեգեմոնների հետ, ինչպիսին է, օրինակ, Հնդկաստանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համաշխարհային քաղաքակրթության պատմական բաժանումը Արևմուտք–Արևելքի փոխարինվում է Հյուսիս–Հարավ համընդհանուր բաժանմամբ, կարող ենք ենթադրել, որ ներկայումս տեղի է ունենում համընդհանուր կառուցվածքային տեղաշարժ, որն ունակ է խախտելու առանց այդ էլ անկայուն հաշվեկշիռը և դրանով իսկ հանգեցնելու «լիբանանյան» մոդելի տարածմանը, այսինքն՝ մի ամբողջ շարք տարածաշրջանային հակամարտությունների ծագման վտանգի, հատկապես՝ քաղաքակրթությունների միջև «շփումային» գոտիներում:

Շփումային գոտին մեծ հակամարտայնություն պարունակող տարածաշրջան է, որը հենց այդ պատճառով դժվար է փոխադրել «գործառման համածայնային ռեժիմ»: Այստեղ հաշվեկշիռը ծայրաստիճան անկայուն է, և կարող է սկսվել հակամարտության աճ՝ դրա տարածաշրջայնացում և համընդհանրացում: Կա հրատապ կարիք ապառազմականացնելու և արդիականացնելու նախ և առաջ շփումային գոտիները: Դա առաջին

հերթին վերաբերում է ամբողջ Մերձավոր Արևելքին և, հատկապես՝ արաբա-իսրայելական հարաբերություններին, որոնք Ամերիկայի Միացյալ Նահանգները փորձում է հնարավորինս փոխադրել հենց «համաձայնային ռեժիմ»: Միևնույն ժամանակ, վերլուծաբանները հակված չեն նկատելու Մերձավոր Արևելքի վերածումը մեծ հակամարտայնությամբ նոր տարածաշրջանի, որում կարող են ներառվել նաև Անդրկովկասն ու Հյուսիսային Կովկասը:

Ակնհայտ է, որ տվյալ տարածաշրջանը կարիք ունի ազգային ու միջազգային անվտանգության մշտազննական ծառայության ստեղծման, մի ծառայություն, որը պետք է հետևի իրավիճակի չնչին փոփոխություններին և մշակի տարածաշրջանում համաձայնության և երկխոսության հաստատմանն ուղղված արդիականացման ծրագրեր ու հանձնարարականներ: Ըստ երևույթին, տվյալ ծառայությունը պետք է գործի այնպիսի հեղինակավոր կազմակերպությունների հիմքի վրա, ինչպիսիք են ՄԱԿ-ն ու ԵԱՀԽ-ն: Նման ծրագրի իրականացման համար համապատասխան ռեժիմով պետք է գործեն նաև զանգվածային հաղորդակցման միջոցները: Եվ եթե տարածաշրջանային միջոցներն ի վիճակի չեն կատարելու այդ գործառույթը, ապա անհրաժեշտ է ստեղծել ու գործարկել ՄԱԿ-ի ու ԵԱՀԽ զանգվածային հաղորդակցման միջոցներ, որոնք արդեն այսօր կարող էին ազգերի միջազգային ընկերակցության անվտանգային շահերը ռեալ կերպով ներկայացնել մեծ հակամարտայնությամբ օժտված շփումային գոտիներում: Խոսքը վերաբերում է մի բարդ խնդրի. այն է՝ «շփման» էթնոքաղաքական վերակողմնորոշմանը այնպիսի գործելակերպի, որի դեպքում տարամիտմանը կողմնորոշող աշխարհաքաղաքական ու էթնոկրոնական գործոններն ստիպված կլինեին իրենց տեղը զիջել միջքաղաքակրթական համաձայնության ձևավորման՝ զուգամիտմանը կողմնորոշող գործոններին:

Բացի այդ, ակտուալ է իսլամաջամահիրիական քաղաքակրթական կենսատարածքի կանոնավոր արդիականացման (բայց ո՛չ արևմտայնացման կամ արմատականացման) իրավիճակը: Գիտական վերլուծությունը կարող է պարզորոշել իսլամի ու ժողովրդավարության համատեղելիության և նման տիպի քաղաքակրթության մեջ ժողովրդավարության էությունը կազմող համամարդկային արժեքների արմատավորման սահմանները:

Ի տարբերություն արևմտյան մշակութային ավանդույթների անհատապաշտական ուղղվածությունից՝ իսլամական մտածողության մշակութային ավանդույթներում խմբային գործունեության կոլեկտիվիստական կողմնորոշումը հաշվի առնելու հետ մեկտեղ կարևոր է նաև նկատի ունենալ այն բանի հնարավորությունը, որ համաձայնային շփման հետևանքով կարող են նոր էթնոմշակութային հողի վրա վերածնվել եվրոպական սոցիալական ուտոպիաները՝ ընդունելով միանգամայն տարբեր ձևեր, օրինակ՝ սոցիալիզմի իսլամական մոդելի տեսք:

Ջամահիրիայի գաղափարը կարող է իրացված լինել աշխարհիկ գաղափարախոսության մեջ, որի աղբյուրն է եվրոպական սոցիալական ուտոպիան, և վերջիվերջո ռեզոնանս գտնել արևմտյան քաղաքակրթության մեջ: Այդ դեպքում միջքաղաքակրթական շփումը կարող է դարձյալ վերածվել փոխհարուցող միջքաղաքակրթական ու ներքաղաքակրթական հակամարտությունների: Այդպիսին կարող է դառնալ «սառը պատերազմի» նոր փուլը, այս անգամ՝ Հյուսիսի և Հարավի միջև: Նման սցենարի կանխման երաշխիք կարող են լինել քաղաքակրթական շփման տարբեր մակարդակներում կարգավորվող տեխնոլոգիական նորույթները, սոցիոմշակութային պլուրալիզմը և բնապահպանական համայնականությունը (էկումենիզմ):

Ամփոփելով՝ կարող ենք եզրակացնել, որ համաշխարհային քաղաքակրթության զարգացման ներկայիս շրջանը բնութագրվում է միջքաղաքակրթական շփումների աճող անկայունությամբ և, միաժամանակ, ներքաղաքակրթական երկխոսության՝ համաձայնության ամրապնդմամբ:

Մեր կարծիքով՝ դա նշանակում է, որ տարբեր քաղաքակրթություններ ինքնապահպանման նպատակով կձգտեն պատմական արժեքների վերականգնմանը: Ոհստի հիմքեր կան ենթադրելու, որ տվյալ հանգամանքը «արևմտյան քաղաքակրթության» մեջ կհանգեցնի անհատապաշտության, իսկ «արևելյան քաղաքակրթության» մեջ կոլեկտիվիստական հարացույցի աշխուժացմանը: Այդ պայմաններում, հավանական է, կաճի քաղաքակրթությունների էթնոքաղաքական հակամարտայնությունը:

Ինչպես ցույց է տալիս արդիականացման պրակտիկան, իսլամական աշխարհին, բացառությամբ թերևս Թուրքական Հանրապետության, բնորոշ է հրաժարումը քաղաքացիական հասարակության ձևավորմանը միտված էական նորամուծություններից: Նախկին խորհրդային հասարակության համար այս հանգամանքը կարող է ունենալ կարևոր հետևանքներ: Կոլեկտիվիստական, աստիճանակարգային իրավաքաղաքական կողմնորոշումների կրողների աճող, առաջին հերթին՝ էթնոժողովրդագրական, գերակշռության պայմաններում հնարավոր է դառնում ամբողջատիրական-անձնատիրական ավանդույթների վերարտադրությունը, առնվազն՝ նախկին «խորհրդային քաղաքակրթական կենսատարածքի» հարավային տարածաշրջաններում: Ազգային և միջազգային անվտանգության պրոբլեմների մշակման ժամանակ նպատակահարմար է նաև հաշվի առնել այն հանգամանքը, որ ամբողջատիրական-անձնատիրական ռեժիմներին բնորոշ է պետության կողմից հասարակության նկատմամբ օրինական բռնության կիրառման գործում բանակի, ինչպես նաև հարկադրանքի այլ մարմին-

ների առանձնահատուկ մեծ դերը: Եթե աճող հակամարտայնության նշված պրոբլեմները պատեհաժամորեն չմշակվեն ու չլուծվեն, ապա ավելի շատ «վերևից», քան «ներքևից» արդիականացմանը մեր հասարակության հակվածության պայմաններում նման փոփոխությունները կարող են ձևավորել հասարակության նկատմամբ մենաշնորհային վերահսկողության հաստատումը խթանող լրացուցիչ գործոններ:

Առանց հավակնելու սույն հույժ բարդ պրոբլեմի լիակատար ընդգրկմանը, համաձայնության–հակամարտության բազմամակարդակ վերլուծության փորձը ներկայացնում ենք նախկին ԽՍՀՄ, ապա Աֆղանստանի արդիականացման դինամիկայի օրինակով: Հետազոտական որոնումների փոխադարձ անցումները ընդհանուր ու միջին մակարդակով տեսական կառուցումներից դեպի իրավիճակային վերլուծություն ու վերլուծական-կառավարչական գործունեություն շարադրված են էթնոքաղաքագիտական ճեպագրերի համակառույցի տեսքով: Ընդսմին այդ ճեպագրերի մեթոդաբանական համակարգությունը դիտարկվում է տեսության բովանդակության և ռեալ էթնոքաղաքական կեցության դաշտում տվյալ տեսության հետազոտությունների մեթոդական գործիքակազմի ամբողջական փոխկապվածության մեջ:

Էթնոքաղաքագիտական պրոբլեմների տեսական ըմբռնման և էթնոքաղաքականության վրա գործնական ազդեցության կազմակերպման գործում վերլուծական ընդհանրացումների հետագա օգտագործման համար կարող ենք բերել «կազմակերպագործունեական խաղի» (ԿԳԽ) անցկացման ու վերլուծական զեկուցագրերի պատրաստման փորձը, ինչը հնարավորություն է տալիս կոնկրետ օրինակներով պարզաբանելու էթնոքաղաքագիտական ու էթնոքաղաքական մտագործության փոխկապվածության առանձնահատկությունները: Քաղաքական վերլուծաբանության ժանրերի հետագա դիտարկման էությունն է «հակամարտության–համաձայնության» կողմերի էթնոքաղաքական փորձի տեսական «վերածումը» մեթոդաբանական գործիքակազմի և վերջինիս կիրառումը հասարակական գիտակցության ու քաղաքական վարքի ձևավորման նպատակով[82]:

Քաղաքագետների առջև «Ազատ ձեռնարկչության գոտին» որպես քաղաքական խնդիր ծագեց Հայկական երկրաշարժից (1988 թ. դեկտեմբերի 7)

[82] Էթնոքաղաքականության ու էթնոքաղաքագիտության փոխադարձ գործիքային անցումների տվյալ մեկնաբանման ժամանակ մենք հիմնվել ենք Յելի համալսարանի (ԱՄՆ) քաղաքագիտության հայտնի պրոֆեսոր Դ. Ապտերի դասախոսության վրա, որը նա 1991 թ. մարտի 12-ին կարդացել է Մոսկվայում 1991 թ. մարտի 10 – 15-ը կայացած Միջազգային քաղաքագիտական դպրոցում, որի աշխատանքներին մասնակցել է հեղինակը:

անմիջապես հետո: Դրա ակտուալությունը պայմանավորված էր ինչպես համամիութենական վերակառուցումային քաղաքականության ազատություններով, այնպես էլ տեղային շուկայական գիտափորձում Արևմուտքի զարգացած երկրների համակարգված մարդասիրական մղումը ներգրավելու հնարավորությամբ: Չինական «արդիականացման» ընթացքում իրենց արդարացրած շուկայական գիտափորձերի ներմուծումը խորհրդային դիրեկտիվ-պլանային էկոնոմիկայի մեջ կարող էր հաջող կերպով տեղայնացված լինել փոքր ծայրամասային ազգային հանրապետության սահմաններում: Այն պահին տվյալ ընտրությունը կարող էր մյուս բոլոր հավակնորդների համեմատությամբ արդարացված լինել երկրաշարժի հետևանքներն ինտենսիվորեն հաղթահարելու անհրաժեշտությամբ: Նման նախապատվությունը կարող էր վերացնել էստոնիայում այդպիսի գոտի ստեղծելու առաջարկությանը կենտրոնի տված մերժման հետ կապված լարվածությունը: Էստոնական առաջարկությանը տրված մերժման նման հիմնավորումը կնպաստեր նաև կենտրոնի բարեփոխականների դիրքերի ամրապնդմանը:

Հայկական ԽՍՀ-ում բավականին արագ արձագանքեցին այս քաղաքական հրավերին, և արդեն դեկտեմբերի վերջին մի խումբ քաղաքագետներ՝ հեղինակի մասնակցությամբ, ներկայացրեցին վերլուծական զեկուցագիր, որում ձևակերպված էր տվյալ առաջարկությունը: Այդ զեկուցագրի մեջ փորձ էր արվում քաղաքագիտական տեսակետից կապակցելու տվյալ նախաձեռնության տարածաշրջանային, համամիութենական ու համընդհանուր կողմերը: «Գոտու» հայեցակարգի ընդհանուր տնտեսական, սոցիալական ու քաղաքական հիմնավորման հետ մեկտեղ քննարկվում էին ծովային ուղիներից Հայաստանի աշխարհաքաղաքական մեկուսացվածության ու սահմանակից տարածքների տարանցիկ ենթակառուցվածքներից նրա տնտեսական կախվածության առանձնահատկությունները: «Ազատ ձեռնարկչության գոտու» ստեղծումը կարող էր ԽՍՀՄ-ի համար դառնալ կերպափոխված ձևի ազգային ինքնիշխանության ունիկալ մոդել՝ առանց Խորհրդային պետության կազմից դուրս գալու: Տվյալ փորձի խելամիտ գործարկումը կարող էր կառուցողական հիմք դառնալ ԼՂԻՄ-ի շուրջ ստեղծված հակամարտության կարգավորման, ապա և, հնարավոր է, համաձայնային լուծման համար, մի իրավիճակի, որը միտում ուներ զարգանալով վերաճելու ադրբեջանա-հայկական միջպետական զինված հակամարտության, իսկ հետագայում ստանալու միջազգային ճանաչում:

Այլ կերպ ասած՝ սույն հետազոտության հեղինակի և տնտեսական գիտությունների թեկնածու Գ. Գ. Հարությունյանի առջև ծառացավ «Գոտի» ծրագրի մշակման և իրականացման համար հաստատութենական ռեսուրսների ու հասարակական կարծիքի քաղաքագիտական ու տնտեսա-

կազմակերպական համախմբման խնդիր[83]: Հեղինակը, գործելով նորամուծությունների սոցիոլոգիայի բնագավառի մասնագետ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու Գ. Ս. Ղազարյանի հետ համատեղ, գիտափորձի հետազոտական ու գործնական նախապատրաստման ավանդական մեթոդների կիրառումը զուգակցեց «Հայկական ԽՍՀ-ում ազատ ձեռնարկչության գոտի» ծրագրի համար ԽՍՀՄ խաղատեխնիկական հնարավորությունների ուսումնասիրությամբ: Քաղաքական ու քաղաքագիտական գործիքների համակցումը արտահայտվեց վերլուծական զեկուցագրի տեսքով, որում հեղինակը տալիս էր ստեղծարար խաղի միջոցով մշակումների ինտենսիվացնելու հիմնավորումը, և որը կցվել էր Հայկական ԽՍՀ Նախարարների խորհրդի Նախագահ Վ. Ս. Մարգարյանցի անունով իր ներկայացրած պատգամավորական հարցապնդմանը: Հօգուտ տվյալ մշակման գործիքային օգտակարության խոսող կարևոր փաստարկ էր հայ մշակողների և կառավարողների ինտենսիվ համալիր ուսուցման նպատակահարմարության հիմնավորումը (դա պետք է կատարվեր «Գոտի» ծրագրի խմբային նախապատրաստման ընթացքում՝ ԽՍՀՄ ներգրավված առաջատար մասնագետների միջավայրում):

ԿԳԽ-ի՝ որպես մասշտաբային գիտագործնական շուկայական գիտափորձի կիրառական էթնոքաղաքագիտական մշակման գործիքի մասին պատկերացում տալու համար վկայակոչենք ազդեցիկ (ժամանակին) կուսակցական-պետական պաշտոնաթերթում հրապարակված ամփոփիչ վերլուծական տեքստը[84]: Ակնհայտ է, որ տվյալ դեպքում ևս այդ հրապարակումը ինչպես քաղաքագիտական երևույթ է, այնպես էլ թե՛ պետական կառույցների, թե՛ մասնագիտական ու լայն հասարակայնության քաղաքական վարքի վրա գործնական ազդեցության գործիք: Հրապարակմանը յուրահատուկ քաղաքական հնչողություն էր տալիս այն հանգամանքը, որ հեղինակը հոդվածն ստորագրել էր որպես «Գոտի» ծրագրի ենթադրվող ներդրման շրջանում պաշտոնական քաղաքականության սուբյեկտ հանդիսացող երկրաշարժի գոտում վերականգնողական աշխատանքները վերահսկող Հայկական ԽՍՀ ԳԽ հանձնաժողովի անդամ:

«Վերլուծական զեկուցագրի» դիտարկումը կիրառական էթնոքաղաքագիտության գործիքարանի կազմում կապված է այն հանգամանքի հետ, որ տվյալ աշխատանքային գործիքը դրված է մյուս բոլոր էթնոքաղաքագիտական ու էթնոքաղաքական եղանակների ու մեթոդիկաների հիմքում: Ինչպես հայտնի է, վերլուծական զեկուցագիրը քաղաքագիտական կամ քաղաքական պրոբլեմի նկարագրության, դրա վիճակի վերաբերյալ գնահատումների ու եզրակացությունների ներկայացման, ինչպես նաև դիտարկվող տեսական ու գործնական խնդիրների լուծմանն ուղղված աշխատանքային վարկածների և առաջարկությունների ձևակերպման առավել տարածված եղանակն է: Տվյալ հետազոտության մեջ համառոտակի նկարագրվում է ԼՂԻՄ-ի շուրջ ծագած էթնոքաղաքական հակամարտության ծավալման հետ կապված յուրահատուկ սահմանադրական փակուղու իրավաքաղաքական հաղթահարման տեսական մշակման համար վերլուծական զեկուցագրի կիրառման փորձը:

Ինչպես հայտնի է, ժողովուրդների ինքնորոշման պրոբլեմը «մարդու իրավունքների» պաշտպանության գործառական հիմնադրույթներից մեկն է: Լեռնային Ղարաբաղի ժողովրդի սահմանադրական եղանակով ինքնորոշման ուղիների մշակման ժամանակ հեղինակը հաշվի է առել միջազգային-իրավական նորմերի և ազգային-օրենսդրական համակարգերի փոխհարաբերությունների իրավաքաղաքական պրոբլեմը: Խոսքն այն մասին է, թե որքանով են համապատասխանում իրար, մի կողմից, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի (1948 թ.) նորմ-հանձնարարականները, Մարդու իրավունքների մասին երկու պայմանագրերի ու դրանց Կամընտիր (ֆակուլտատիվ) արձանագրության (1966 թ.) մեջ քաղաքական վարքի՝ գործնականում հրամայական միջազգային-պայմանագրային նորմերը և, մյուս կողմից, ԽՍՀՄ-ում դրանց գործնական իրականացման սահմանադրական նորմերը, ինչպես նաև օրենսդրական-նորմատիվ մեխանիզմները[85]: Այս բարդ քաղաքագիտական պրոբլեմի տեսական առումները մենք քննարկել ենք քաղաքակրթական համակարգերի իրավաքաղաքական զուգամիտման-տարամիտմանը նվիրված բաժնում: Իսկ 1989 թ.՝ զեկուցագրի կազմման ժամանակ, ուրվագծվել են միջազգային և ազգային իրավունքի համակարգի կարգավորիչ կարողությունները[86]:

Վերլուծական զեկուցագրի նման քաղաքագիտական գործիքի կիրառման վերը բերված օրինակը, բացի պրոբլեմի մշակվածության չափի գնահատումից, պարունակում է նաև այն վարկածը, որ հանրաքվեի անցկացման սահմանադրական-օրենսդրական մեխանիզմի իրավական թերիությունը նպատակահարմար է լրացնել իրավաքաղաքական

[83] Տես *Э. И. Скакунов.* Пути модернизации советского общества. "Рабочие тетради АТММО", 1991, № 3:

[84] Տես *Հ. Ս. Քոթանջյան.* Նորացման ստրատեգիա: «Խորհրդային Հայաստան», 1989 թ. ապրիլի 23:

[85] Տես *Г. Котанджян, Г. Казарян.* Блокада... Время игр? "Коммунист", Е., 21 ноября 1989 г. № 267:

[86] Հեղինակը, 1989 թ. փետրվարի 2-ին հանդես գալով «Կոմսոմոլսկայա պրավդա» թերթում, հրապարակեց հանրաքվեի միջոցով Ղարաբաղյան հակամարտության լուծման համար միջազգային-իրավական և ազգային-սահմանադրական նորմերի կիրառման վերաբերյալ հիմնական վարկածը (տես *Г. С. Котанджян.* Вариантов не признаю. "Комсомольская правда", 2 февраля 1989 г.):

Այս վերլուծական զեկուցագիրը հետագայում դրվեց այլ քաղաքագիտական նյութերի պատրաստման հիմքում (տես *Г. Котанджян.* Выход из тупика. Размышления после съезда. "Коммунист", Е., 14 июня 1989 г.):

նախադեպի ստեղծմամբ: Տվյալ էթնոքաղաքագիտական փակուղու հաղթահարման ճգնաժամային կարևորության հաշվառմամբ հեղինակը առաջարկում էր քննարկվող նախադեպի իրականացման էթնոքաղաքական սցենար: Էթնոքաղաքագիտության ոլորտից ինքնորոշման էթնոքաղաքականության բնագավառ տվյալ զեկուցագրի էության «տեղափոխումը» իրացվել էր Հայաստանի կոմկուսի կենտկոմի անդամի զեկուցագրի ձևով[87], որը ներկայացվել էր Հայաստանի քաղաքական ղեկավարության կողմից ԽՍՀՄ կուսակցական-պետական իշխանության բարձրագույն մարմիններում օգտագործելու համար[88]:

Իրադարձությունների հետագա ընթացքի վերլուծությունը հաստատել է հակամարտության սահմանադրական անպատեհաժամ լուծման դեպքում դրա քայքայիչ զարգացման վերաբերյալ կանխատեսումների հիմնավորությունը: «Վերլուծական զեկուցագիրը» վերը մենք անվանել էինք կիրառական քաղաքագիտության հիմքային գործիք: Տվյալ սահմանումը արդարացված էր նաև մեր կոնկրետ դեպքում. Լեռնային Ղարաբաղում համաձայնության–հակամարտության պրոբլեմին հետագա բազմաթիվ հարկադրված անդրադարձների ժամանակ մենք հաճախ այս կամ այն չափով հենվել ենք հիշատակված զեկուցագրի վերլուծական հիմքի վրա:

Նախկին ԽՍՀՄ կենտրոնի կողմից ԼՂԻՄ-ի հակամարտության ճգնաժամային կառավարումը ժամանակի ընթացքում սկսեց ներառել իրադրության աֆղանական հակամարտային կառավարման գործիքներ, այդ թվում՝ նոր հակամարտային սյուժեների պլանաչափ մշակման և անգամ նոր հակամարտային օջախների հարուցման միջոցով հակամարտությունների կառավարման մեթոդները: Նման էթնոքաղաքականության տարրերը մշակվում ու իրականացվում էին ոչ միայն անմիջական կենտրոնա-ծայրամասային կառավարմամբ, այլև տեղերում իշխանությունների և ընդդիմության հակամարտային, իբր՝ վերջին հաշվով կառուցողական, ակտիվության միջնորդավորված հարուցման միջոցով:

Հետագա վերլուծությունը ցույց տվեց, որ խորհրդային էթնոքաղաքականության արկածախնդրային «հակամարտային ուղեգիծը» ադրբեջանա-հայկական հակամարտության կողմերին ի վերջո դրդեց թերարժեք իրավաքաղաքական որոշումների ընդունման[89]:

[87] Տվյալ զեկուցագրի պատրաստման ու քաղաքական իրագործման պահին հեղինակը եղել է Հայաստանի կոմկուսի կենտկոմի անդամ:

[88] Զեկուցագրի տեքստը «Կոմունիստ» թերթում հրապարակվել է «ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների համագումարին ընդառաջ» խորագրի տակ:

[89] Տես Закон Аз.Р "Об упразднении НКАО Аз.Р", 26 ноября 1991 года. «Ведомости ВС Аз.Р», 1991, № 24:

ԽՍՀՄ, Ադրբեջանի և Հայաստանի քաղաքական կենտրոնների փաստաթղթերի ուսումնասիրությամբ (նշված վերլուծական զեկուցագրի պատրաստումից հետո մեկ տարվա կտրվածքով) պարզվեց, որ Մոսկվայում գործել է մի կենտրոն, որը համադասել է հակամարտող կողմերի թերարժեք իրավական գործողությունների նախապատրաստման ու կատարման ոլորտում յուրահատուկ ճգնաժամային զուգակշիռը: Հայաստանի հետ ԼՂԻՄ-ի վերամիավորման մասին որոշման քաղաքական փաստը համակշռող ծեռնարկումը հակադիր կողմը նախապատրաստում էր նպատակաուղղված կերպով և ցուցադրաբար: 1990 թ. գարնանից ծավալվեց ԼՂԻՄ-ում սահմանադրական ներկայացուցչական իշխանության բոլոր օղակների վարչաուժային վերացման ուղղությամբ պլանաչափ քայքայիչ արշավ: Եվ Լեռնային Ղարաբաղի ինքնավարության՝ որպես ազգային-պետական կազմավորման վերացումը դարձավ ադրբեջանա-հայկական հակամարտության կողմերի վարքի «հակամարտային կառավարման» (հակամարտության զարգացման միջոցով) տրամաբանական շարունակությունը[90]:

Ռեալ հակամարտային գործընթացների այս կամ այն սյուժեն բերվում է որպես մի նյութ, որը վերլուծության կոնկրետ արգասիքների հետ մեկտեղ լուսաբանում է կոնկրետ հետազոտական գործիքի պարունակած վերլուծական-կառավարչական ռեսուրսի բովանդակային կողմերը: Սահմանափակվելով էթնոքաղաքական վերլուծության այնպիսի ժանրի ու գործիքի վերաբերյալ, ինչպիսին վերլուծական զեկուցագիրն է, բերված ներածականով՝ նշենք, որ 1990 թ. հունիսին հեղինակի վերլուծական զեկուցագրում առաջարկվում էր Ղարաբաղյան հակամարտության զարգացման «համաձայնային կառավարման» սցենարային ուրվագիրը: Հայաստանի կոմկուսի կենտկոմի անդամի ստորագրած զեկուցագրի մեջ առաջարկվում էր. «...սկսել երկու հարևան հանրապետությունների քաղաքական ղեկավարությունների, երկու ժողովուրդների ժողովրդավարական ուժերի միջև անմիջական և միջնորդավորված բանակցություններ՝ կողմերի շահերի իրատեսական իմաստավորման, հակամարտության քաղաքական կարգավորման ուղղությամբ քայլերի մշակման համար,

– որպես բանակցությունների կարևորագույն հարց կարելի է քննել այն օրենսդրական ակտերի ժամանակավոր երկկողմանի կասեցման պայմանները, որոնց դեպքում ԼՂԻՄ-ը և երկու հանրապետությունները կվերադառնային միութենական ֆեդերացիայի սուբյեկտների միջև փոխհարաբերությունների ժողովրդավարացման հունը...»[91]:

[90] Տես "Права человека. Сборник международных документов". М., 1986, сс. 21–78:

[91] *Գ. Կոտանջյան.* Противоправное право. "Коммунист". Е., 13 июля 1990 г. Բերվում է ըստ՝ *Հայկ Քոթանջյան*, Հայկական երկրաշարժը: Ե., 1992, էջ 68:

Դրա հետ մեկտեղ հեղինակը, իրագործելով իր ՀԿԿ կենտկոմի անդամի և ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավորի իրավասությունները, փակ (գաղտնի) վերլուծական զեկուցագրերով առաջարկություններ է ներկայացրել Լեռնային Ղարաբաղի օրինակով ԽՍՀՄ օրենսդրության մեջ ժողովուրդների ինքնորոշման խնդիրը հանրաքվեի իրավաքաղաքական գործիքարանի միջոցով լուծելու համար: Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման օրինակով հանրաքվեի մեխանիզմի օրենսդրական մշակման անհրաժեշտության մասին առաջարկությունը հրապարակվել է նաև ՀԿԿ կենտկոմի պաշտոնաթերթում: Հետագայում հեղինակը մասնակցել է ԽՍՀՄ–ՈԴ ԱԳՆ-ի դիվանագիտական ակադեմիայի Միջազգային հետազոտությունների մեթոդաբանության կենտրոնի «Հակամարտություն» և «Կայունություն» նախագծերին: Տվյալ նախագծերը ԽՄԿԿ կենտկոմի պատվերով մշակվել են 1990 թվականից՝ «ԽՍՀՄ-ից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» ԽՍՀՄ Օրենքի ստեղծման, միութենական հանրաքվեի և նոր Միութենական պայմանագրի մշակման ընթացքում[92]:

Եվ վերջապես, կիրառական քաղաքագիտության գործիքակազմի և դրա տեսական-գործնական կիրառման փորձի ուսումնասիրությունը ավարտենք իրավիճակային վերլուծության և կոնկրետ քաղաքագիտական վարկածների, կանխատեսումների ու քաղաքական ձեռնարկումների սցենարների շուրջ հասարակական կարծիքի համախմբման առավել հրապարակախոսական գործիքներից մեկի՝ «բաց նամակի» օգտագործման փորձի վերլուծությամբ:

Վերջին տարիներին՝ պոպուլիստական քաղաքական մշակույթի կրողների գռեհիկ ժողովրդավարական ակտիվության, ինչպես նաև խորհրդային պետության վարչաուժային ավանդույթների ալիքի վրա, «բաց նամակի» ժանրը որոշակի առումով ստացավ քաղաքական իրավիճակին պարզունակ ու մակերեսային քաղաքագիտական արձագանքման վարկ:

Ուշադրության են արժանի «բաց նամակների» բովանդակության վերլուծական հիմքը, բաց նամակագրության սուբյեկտների և օբյեկտների համապատասխան ընտրությունը, ինչպես նաև տվյալ նամակի հրապարակմանը մասնագիտական ու լայն հասարակական լսարանում մեծ հեղինակություն վայելող ամբիոններից ու հեղինակների կողմից հնարավոր ծանրակշիռ արձագանքի պլանավորումը:

«Օգոնյոկ» հանդեսում նամակների հրապարակմանը[93] նախորդել է նախկին ԽՍՀՄ-ում սոցիալիստական ժողովրդավարականության քաղաքական հեռանկարներին «կողմ» ու «դեմ» արտահայտման արժեքակողմնորոշումային ու նպատակային հակամարտության կողմեր հանդիսացող հեղինակների միջև իրական բանավոր ու նամակային հաղորդակցումը:

1990 թվականի վերջերին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանում է. Ա. Շևարդնաձեն հրապարակավ զգուշացրեց բարեփոխումների քաղաքականության դեմ ուղղված իշխանության բռնազավթման (պուտչի) վտանգի մասին: Գերագույն խորհրդի փակ նիստում Մ. Ս. Գորբաչևը առաջարկեց ժամանակավորապես դադարեցնել Մամուլի ազատության մասին օրենքի գործողությունը, սակայն հետո հետ վերցրեց այդ առաջարկությունը: 1991 թվականի սկզբին շեշտակի աճեց լայն հասարակայնության սոցիալական անհանգստությունը՝ կապված Վիլնյուսում տեղի ունեցած արյունալի զինված ընդհարման, տեղերում զինված ջոկատների պարեկման համատարած սահմանման, ինչպես նաև գրաքննության վերականգնման միջոցով երկրում տիրող իրավիճակի նկատմամբ համընդհանուր ռազմավարչական վերահսկողության հնարավոր հաստատման հետ:

Այսպես կոչված պահպանողական ու ժողովրդավարական ուժերի առճակատումը ձեռք էր բերում ավելի ու ավելի զանգվածային և հակամարտային բնույթ: Հասունացող քաղաքացիական պատերազմի սուբյեկտների միջև շփումների համաձայնային զարգացման որևէ հնարավորության կտրուկ ժխտումը արտացոլվում էր կոմունիստական և ժողովրդավարական մամուլի էջերում զետեղվող հրապարակումներում: Գաղափարախոսական հակամարտության կողմերի փոխադարձ հերյուրանքները, որ տեղ էին գտնում մամուլի էջերում ու եթերում, ընդունեցին բացահայտորեն սանձազերծ ու ապակառուցողական բնույթ: Հենց այդ պայմաններում հիշյալ նամակների հեղինակները որոշեցին «երևան հանել» իրենց նամակագրությունը՝ դիմելով նախկին ԽՍՀՄ սթափ մտածող շրջանների ու հասարակայնության համաձայնային շահերին: Նամակներում տրվում էին ԽՍՀՄ-ում տիրող ճգնաժամային իրադրության վերլուծական գնահատականներ, քաղաքական համակարգի կառուցվածքային ապակայունության կանխատեսում՝ հետվերակառուցման քաղաքական կառավարման սցենարների բավականաչափ ընդարձակ փաթեթով:

Քաղաքացիական համաձայնության ձեռքբերման հարցում կառուցողական ժողովրդավարականության ու վերկուսակցական պետական-քաղաքական շահերի հիմքի վրա համաձայնության ընդգծված զուսպ ձևի որոնմամբ զուգակցված հեղինակների կոշտ հակադրված սոցիալիստական ու հակասոցիալիստական դիրքորոշումների հրապարակումը պետք է օրինակ դառնար գաղափարախոսական հակառակորդների սանձազերծ ու ջղաձիգ դիմակայության մեղմացման համար:

[92] Տես *Г. Котанджян.* Выход из тупика. Размышления после съезда:

[93] *Г. Котанджян и А. Головков.* Тонкая нить согласия. "Огонек", 1991 № 6.

Քաղաքացիական համաձայնության մշակույթի ձևավորմանը նպաստեցին հեղինակավոր արձագանք-գրախոսականները, որոնք հնչեցին զանգվածային լրատվության ազդեցիկ միջոցներում: Այնպիսի ճանաչված հեղինակների հրապարակումները, ինչպիսիք էին «Նովոյե վրեմյա»-ի մեկնաբան Սիմոն Սոլովեյչիկը, ինչպես նաև ԽՍՀՄ Սահմանադրական հսկողության հանձնաժողովի անդամ Սերգեյ Բոսխոլովը («Նեզավիսիմայա գազետա»-ում)[94], «բաց նամակների» քաղաքական տրամաչափը դուրս բերեցին միջանձնային երկխոսության սահմաններից՝ այն նպատակաուղղելով հեղինակի կողմից կանխատեսված հետվերակառուցման զարգացման համաձայնային սցենարների քաղաքագիտական իմաստավորմանը[95]:

Կարևոր է թվում նաև բերել մեր երկրում արդիականացմանը վերաբերող համաձայնային-հակամարտային իրադարձությունների իրավիճակային-վերլուծական մեկնաբանումները՝ կատարված արտասահմանյան մասնագետների կողմից: Դեռ նախքան ԽՍՀՄ-ում արդիականացման փոփոխությունների ծեռնարկումը ազգային հարաբերությունների պրոբլեմները եղել են արտասահմանյան քաղաքագետների սևեռուն ուշադրության առարկա: Այդ աշխատությունների հիմնարար մասի վերլուծությունը, որն արվել է առաջին գլխում, վկայում է, որ ակադեմիական էթնոքաղաքագիտության մեջ Միության փլուզումը կապվում էր անխուսափելի ապաինտեգրման դատապարտված «20-րդ դարի վերջին կայսրության» բուն էության հետ:

1980-ական թվականների սկզբներից արևմտյան մասնագետների հատուկ ուշադրության կենտրոնում էին խորհրդային Միջին Ասիան ու Կովկասը՝ որպես հնարավոր ապակայունացնող գործոններ, այսինքն՝ կոմունիստական ռեժիմին սպառնալիքի և ազգայնական շարժումների աղբյուր: Կենտրոնի հետ այդ տարածաշրջանի փոխհարաբերություններում հիմնական քայքայիչ գործոնի դերը վերագրվում էր ժողովրդագրական դինամիկային և «իսլամական վերածննդին»:

1980-ական թվականների վերջերին արևմտյան քաղաքագետների հետաքրքրությունը հիմնականում գրավում էին Մերձբալթիկայում, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցող գործընթացներն ու իրադարձությունները:

Արևմտյան մասնագետների ուշադրությունն սկսեց ավելի ու ավելի մեծ

[94] Տես *С. Соловейчик.* Где эта улица? Где этот храм? "Новое время", 1991, № 6, сс. 28–30; *С. Боскхолов.* От конфронтации к оппозиции. "Независимая газета", 9 февраля 1991 г.:

[95] Տես *Г. Котанджян.* Противоправное право:

չափով է բևեռվել ազգային ինքնիշխանության արդյունավետ ապահովման պրոբլեմների, ծայրամասերում տեղի ունեցող գործընթացների նկատմամբ Մոսկվայի քաղաքական վերահսկողության էական թուլացման համար մղվող պայքարի վրա: Ծավալվեց կենտրոնի, միութենական հանրապետությունների, ինքնավար ու ենթաստորադաս կազմավորումների փոխհարաբերությունների բազմամակարդակ իրավիճակային վերլուծություն: Այլ կերպ ասած՝ եթե առաջներում գերակայում էին ավանդական՝ ազգային հանրությունների տնտեսական ու սոցիալական զարգացման հարցերը, երբ լեզվի, մշակույթի, կրոնի պրոբլեմներին տրվում էր քաղաքական հնչողություն, ապա այժմ՝ ըստ նոր իրողությունների առանձնակի ուշադրություն է հատկացվում քաղաքական բնույթի պահանջներին, որոնց բավարարման հետ են կապվում բոլոր բնագավառներում ազգային զարգացման հետագա հաջողությունները:

Նախ նշենք, որ որոշ հետազոտողներ, տվյալ իրավիճակային հենքի վրա զարգացնելով նախորդ գիտական բնագծերը, դրանք հասցնում են ավելի բարձր մակարդակի ընդհանրացումների՝ խորհրդային ազգային քաղաքականությունը դիտելով որպես համակարգային երևույթ: Որպես կանոն, նրանք նշում և առանձնացնում են դրա քաղաքական ու գաղափարախոսական չափումները, քաղաքական դետերմինացվածությունը: Այնպիսի ականավոր արևմտյան քաղաքագետների տրամաբանությամբ, ինչպիսիք են Կոլումբիայի համալսարանին առընթեր Միջազգային փոփոխությունների գծով հետազոտական ինստիտուտի տնօրեն, քաղաքական գիտությունների պրոֆեսոր Ս. Բյալերը կամ Օստտավայի Կառլսոնի համալսարանի քաղաքագիտության պրոֆեսոր Թ. Ռակովսկա-Հարմստոունը, վերազգային միասնության թեզի տապալումը հանգեցրեց ինչպես ազգային քաղաքականության մեջ նոր «գաղափարախոսական հենասյուների» որոնմանը, այնպես էլ դրա իրականացման ուժային մեթոդների կիրառմանը:

Ռեյսի համալսարանի քաղաքական գիտությունների դասախոս Փ. Դունկանը ուշադրություն է դարձնում այն հանգամանքի վրա, որ ազգային քաղաքականության բնագավառում խորհրդային ռեժիմը չունի խստագույնս ճշգրտված գաղափարախոսական կողմնորոշումներ: Այդ քաղաքականության մեջ՝ կողմնակի հանգամանքների բերումով, մշտապես տեղերով փոխվել են երեք, հեղինակի կարծիքով՝ անփոփոխ, բաղադրատարրեր՝ մարքսիզմը, լենինիզմը և ռուսական ազգամոլությունը: Նա գրում է. «Բրեժնևի կառավարման վերջում ռուսական ազգամոլությունը դարձավ իշխող գաղափարախոսության կարևոր բաղադրամաս, ինչն սպառնում է ազգային փոքրամասնությունների դժգոհության զարթոնքով»[96]:

[96] *P. Duncan.* Ideology and national question. "Ideology and Soviet politics". L., Macmillan, 1988, PP. 180–203.

Խորհրդային գաղափարախոսությունն ընկալելով որպես «նոր մարդու» դաստիարակության համակարգ՝ խորհրդագետները շեշտում են, որ իրական կենսապայմաններից գաղափարախոսական կողմնորոշումների ու դավանանքի կտրվածությունը, ուստի և դրանց վարկաբեկումը կատարում են ազգայնական դրսևորումների կատալիզատորի դեր:

ԽՍՀՄ-ում ազգային հարաբերությունների գծով հանրաճանաչ մասնագետ, Արևելքի երկրների ու միջազգային հարաբերությունների ուսումնասիրության դաշնային ինստիտուտի (Քյոլն) գիտական աշխատող Գ. Չիմոնը այս առիթով գրում է, որ «մարքսիզմ-լենինիզմի՝ որպես մի ամբողջական աշխարհայացքի կողմից իր մոբիլիզացնող ուժի կորուստը նպաստել է խորհրդային հասարակության մեջ հսկայական հոգևոր վակուումի առաջացմանը, որը ձգտում են լրացնելու արժեքների ու հոգևոր հարստության մասին ազգային պատկերացումները»[97]:

Փորձելով առանձնացնել ԽՍՀՄ-ում իրականացվող ազգային քաղաքականության գլխավոր հատկանիշները, ինչպես նաև պարզել այսօր ազգային հարաբերություններում ի հայտ եկած այն նորը, որը բնութագրվում է ոչ միայն միջէթնիկական հակասությունների, այլև «կենտրոն–ծայրամաս» առանցքով հակամարտության սրմամբ, արևմտյան քաղաքագետները դիմում են Խորհրդային Միության ազգային շինարարության ակունքներին՝ ձգտելով ապացուցելու, որ հենց «խորհրդային համակարգն» է այն չարիքի արմատը, որտեղ պետք է փնտրել 80-ական թվականների երկրորդ կեսին հասարակական հարաբերություններում լարվածության աճի աղբյուրը:

Հայտնի ամերիկացի լեզվաբան Ռ. Ռիքսմենը համարում է, որ խորհրդային ազգային քաղաքականությունը որպես մեկ ամբողջություն դիտարկելու դեպքում պետք է եզրակացնել, որ այն բավականաչափ ռացիոնալ, տրամաբանական ու հետևողական է՝ և՛ ժամանակային առումով, և՛ գործնականում բոլոր ազգությունների նկատմամբ: Պարզաբանելով իր դիրքորոշումը՝ հեղինակը պնդում է, որ ԽՍՀՄ-ում ազգային քաղաքականությունն ստորադասված է եղել ռեժիմի գլխավոր նպատակներին ու շահերին, հարաբերակցվել գաղափարախոսության և ընդհանուր քաղաքականության հետ:

Առաջին, առավել կարևոր խնդիր է համարվել ԽՍՀՄ տարածքային ամբողջականության ու Խորհրդային երկրում քաղաքական իշխանության պահպանումը: Երկրորդը եղել է սոցիալական ճանապարհով խորհրդային հասարակությունը ժամանակակից սոցիալիստական պետության կերպափոխելու խնդիրը: Եվ, վերջապես, երրորդ խնդիրն էր համաշխարհային հեղափոխության իրագործման և այդ կապակցությամբ Խորհրդային Միության սահմաններից դուրս ապրող ճնշված ժողովուրդների համակրանքի վայելումը, ներգործությունը արտասահմանյան պետությունների այն էթնիկական խմբերի վրա, որոնց ներկայացուցիչները բնակվում էին նաև ԽՍՀՄ տարածքում[98]:

Ռիքսմենը խորհրդային ազգային քաղաքականության «ողնաշար» է համարում «բաժանեա զի տիրեսցես» սկզբունքը: Առանձնակի հետևողականությամբ այն կենսագործվել է Միջին Ասիայում, Միջին Մերձվոլգյան շրջանում, Հյուսիսային Կովկասում ապրող մահմեդական ժողովուրդների միջև պետական-տարածքային սահմանորոշման ու սահմանազատման փուլում:

Մինչդեռ Կալիֆոռնիայի համալսարանի պատմության պրոֆեսոր, նախկինում Մերձավոր Արևելքի երկրների հետազոտությունների կենտրոնի ղեկավար Ի. Լապիդուսի կարծիքով՝ մինչխորհրդային շրջանի մահմեդականների քաղաքական մշակույթում ազգի հայեցակարգ չի եղել: Նա գրում է. «Խորհրդային Միությունում համամահմեդական ընդդիմության ձևավորումը բացառելու համար ռեժիմը փորձել է տարածաշրջանը տրոհել առանձին ազգային պետությունների՝ կտրելով ցեղային լոյալության կապերը և դադարեցնելով իր էությամբ վերազգային կրոնական ու էթնիկական գիտակցման գործընթացները»[99]:

Ռիքսմենը համարում է, որ դժվար թե Ռուսաստանի տարբեր մահմեդական ժողովուրդներ արդեն 20-ական թվականներին համապատասխանում էին ազգի չորս չափանիշներին (ըստ Ստալինի հայտնի սահմանման): Խորհրդային առաջնորդները փորձում էին վերափոխել այդ ժողովուրդների ներքին կառուցվածքը, որպեսզի այն հարմարեցնեն տվյալ չափանիշներին: Մեկ ազգության մեջ ձուլվելու եզրին գտնվող կամ միևնույն ազգային ճյուղը կազմող էթնիկական խմբերը տարանջատվեցին: Օրինակ՝ ղազախները, ղրղզներն ու կարակալպակները Միջին Ասիայում, թաթարներն ու բաշկիրները Միջին Մերձվոլգյան շրջանում, չեչեններն ու ինգուշները, ադըղները, չերքեզներն ու կաբարդինները, բալկարներն ու կարաչայները Հյուսիսային Կովկասում:

Ռիքսմենի հետ համամիտ է Արևելյան Եվրոպայի երկրների օրենսդրության ուսումնասիրության ինստիտուտի (Գերմանիայի Դաշնային Հանրապետություն) տնօրեն Գ. Բրունները: Նա նշում է, որ, ըստ ամենայնի,

[97] *G. Simon*. Nationalismus und Grenzen des Sowjetunion als Welmacht. Köln, 1988, S. 9.

[98] Տես *R. Wixman*. Applied Soviet nationality policy: A suggested rationale. "Passe-Turco-Tatar, present sovuetigue", P., 1986, PP. 449 – 468 (P. 450):

[99] *I. M. Lapidus*. A history of islamic societies. Cambridge, 1988, PP. 804 – 806.

խորհրդային ազգային քաղաքականության կառուցվածքում գերակշռել են երբեմն ուղղակի, երբեմն անուղղակի քաղաքական վերահսկողության նպատակները: Հեղինակի կարծիքով՝ դրա դրսևորումը եղել է այն, որ գիտակցաբար իրար են հակադրվել ձևական դաշնայնության սկզբունքն ու տվյալ՝ իրենց հատկացված, էթնիկական տարածքում գերակշռող էթնիկական խմբերին բոլոր ազգային իրավունքների տրամադրման սկզբունքը:

Ս. Բյալերը նաև նշում է, որ խորհրդային ձևի կառավարման շրջանակներում գերիշխում է ազգային, քաղաքական, տնտեսական, մասամբ՝ մշակութային կյանքի գերկենտրոնացվածությունը, ինչը առիթ է տալիս «մեծառուսական» միջուկի և ոչ ռուսական ծայրամասի փոխհարաբերությունները բնութագրելու որպես «կայսերական»[100]:

Բյալերի կարծիքով՝ Խորհրդային Միությունում ազգային պրոբլեմը չի կարելի դիտել որպես ռուս բնակչության մեջ լուծված էթնիկական փոքրամասնությունների պրոբլեմ: Նա համարում է, որ ԽՍՀՄ-ում ազգային հարցը ռուս և ոչ ռուս ազգերի միջև ընթացող պայքարի պրոբլեմն է:

Այս կապակցությամբ Գ. Զիմոնը իր վերջերս հրապարակված աշխատություններից մեկում գրել է, որ խորհրդային ղեկավարությունը, պայքարելով կենտրոնախույս միտումների դեմ, ապավինում է սլավոնների միասնականությանը[101]: Այս կարծիքին է նաև Ռակովսկա-Հարմստոունը՝ համարելով, որ իրադարձությունների անցանկալի զարգացումը կանխելու համար խորհրդային ռեժիմը պետք է փորձի խաղարկել «համասլավոնական» ժողովրդագրական գերակշռության խաղաքարտը:

Արևմտյան հետազոտողները ավելի ու ավելի հաճախ են տալիս այն հարցը, թե ԽՍՀՄ-ում տեղի ունեցող ազգային գործընթացները արդյոք տեղավորվում են Արևմուտքում ճանաչում ստացած սոցիոլոգիական տեսությունների շրջանակների մեջ:

Նյուֆաունդլենդի համալսարանի սոցիոլոգիայի պրոֆեսոր Վ. Զասլավսկու կարծիքով՝ խորհրդային համակարգի յուրօրինակությունը բոլոր առումներով այնպիսին է, որ արևմտյան սոցիոլոգիական մոդելները կարող են այն բացատրել միայն մասնակիորեն, այն էլ՝ ոչ միշտ: Նա կանգ է առնում արևմտյան սոցիոլոգիայում ներկայումս գերակշռող հետևյալ երկու տիպի հասարակությունների բնութագրերի վրա՝ մասնավոր սեփականությամբ, շուկայական փոխհարաբերություններով ու քաղաքական բազմակարծությամբ բնորոշվող ինդուստրիալ հասարակության արևմտյան տարբերակի և արտադրության միջոցների նկատմամբ մասնավոր սեփականություն չունեցող, կենտրոնացված պլանավորմամբ ու միակուսակցական համակարգով բնորոշվող «խորհրդային» տարբերակի: ԽՍՀՄ-ում իրականացվող ռեալ քաղաքականության նկատմամբ կիրառելի են միայն մի քանի հայեցակարգներ, համարում է հետազոտողը և դրանց թվին դասում մեր կողմից առաջին գլխում քննարկված «ներքին գաղութատիրության» մոդելը, որի հիմքում դրված են «կենտրոն–ծայրամաս», կամ «գերիշխում –կախում», հարաբերությունները: Կանադացի պրոֆեսորի հայեցակարգի համաձայն՝ «էթնիկական ծայրամասերի», օրինակ՝ Միջին Ասիայի, գրգռումը հետզհետե աճում է և դրսևորվում է ազգայնամոլական ելույթների, քաղաքական ինքնավարության աճող պահանջների տեսքով:

Հեղինակի կարծիքով՝ գործնական տեսակետից ավելի արժեքավոր է «աշխատանքի էթնիկական բաժանման» մոդելը, ըստ որի՝ ցանկացած ինդուստրիալապես զարգացած երկրում աշխատուժի շուկան բաժանված է բարձր կարգով ու ցածր կարգով վարձատրվող հատվածների: Դա հստակորեն համահարաբերակցվում է էթնիկական շերտավորման հետ: Սակայն կարծում ենք, որ ԽՍՀՄ-ում տիրած իրավիճակի նկատմամբ տվյալ մոդելը կարող է կիրարկված լինել միայն մեծ վերապահումներով: Օրինակ՝ Միջին Ասիայում տեղաբնիկները ցածր կարգով վարձատրվող գյուղատնտեսական հատվածում գբաղվածությունը չէին համարում անպատվաբեր, ինչը արտացոլում էր ավանդական մշակութային արժեքները:

Բացի այդ, խորհրդային ռեժիմի վարած տնտեսական քաղաքականությունը հնարավորություն էր տալիս էթնիկական խմբերը տրոհելու ըստ մասնագիտական ոլորտների՝ առավել ակտիվ տարրերի համար ստեղծելով յուրահատուկ «պատսպարաններ» («*նիշաներ*») և դրանով իսկ մտավորականությանը մեկուսացնելով բուն բնակչությունից[102]:

Զասլավսկին խորհրդային ազգային քաղաքականության առավել բնութագրային հայտանիշ է համարում սոցիալական շերտավորման գործընթացներին տիրապետումը: Պետությունը ձեռնամուխ էր եղել պաշտոնապես հռչակված հավասարապաշտական գաղափարախոսության և դրան հակառակ կատարվող գործողությունների միջև դիալեկտիկական հակասության հարթեցմանը:

Ըստ դասակարգային, բուն էթնիկական ու տարածքային հայտանիշների ազգային խմբերի «ցրվածությունը» ռեժիմին հնարավորություն էր տալիս

[100] Տես *S. Bialer*. The conditions of stability in the Soviet Union. "Soviet society and culture: Essays in honor of F. Dunhan". L., 1988, PP. 254–273:

[101] Տես *G. Simon*. Regionalism in the Soviet Union: Challenge or stabilization of the Soviet system. "J. of Baltic studies", N. Y., 1987, Vol. 18, № 3, PP. 257–268:

[102] Տես *V. Zaslavsky*. Ethnic group Divided: Zonal stratification and national policy in the Soviet Union. "The Soviet Union Party and society". L., 1988, PP. 218–228:

ընդհանուր զանգվածից առանձնացնելու և չեզոքացնելու անընդհատ ձևավորվող տեղական քաղաքական ընտրախավերը: Այստեղ, Զասլավսկու կարծիքով, մեծ դեր էր խաղում Խորհրդային Միությունում ընդունված ունիկալ անձնագրային համակարգը: Դա էթնիկական խմբերի միջև պատնեշի ստեղծման գործուն մեխանիզմ էր:

Դրա հետ մեկտեղ, անձնագրային համակարգը, ազգային պատկանելությունը ներկայացնելով որպես ինչ-որ բնականորեն տրված բան, որը հաճախ կախված չէ մարդու մշակույթից, լեզվից, կրոնից, ծննդավայրից կամ էլ սուբյեկտիվ նույնականացումից, ապահովում էր «ընդհանուր էթնիկական հայտարարի» առկայությունը. ազգային պատկանելության հարցում խիստ որոշակիությունը թուլացնում է մարդու ձգտումը գիտակցական էթնիկական նույնականացմանը:

Զասլավսկու կարծիքով՝ հենց դրա շնորհիվ է, որ ԽՍՀՄ-ում ազգային փոքրամասնությունների հումանիտար ու տեխնիկական մտավորականության միջև ստեղծվել է անդունդ և արագանում է լեզվական ծուլման գործընթացը[103]: Հեղինակը անհրաժեշտ է համարում վերջ տալ ազգային գործընթացների կառավարմանը վերևից, քանի որ դա ներկայումս հղի է անկանխատեսելի հետևանքներով:

Նույն կարծիքին են նաև Քարկլինշը և Ռակովսկա-Հարմստոունը: Նրանք նույնպես անհրաժեշտ են համարում դադարեցնել անձնագրում ազգության գրանցումը:

Խիստ անձնագրային ռեժիմը, զուգակցված լինելով առանձին ազգությունների ու խմբերի նկատմամբ իշխանությունների ընտրողական վերաբերմունքի հետ, Զասլավսկու կարծիքով, խոչընդոտեց տարածաշրջանային ինքնագիտակցության կառուցավորմանը՝ լինի դա պանթյուրքականություն Միջին Ասիայում, թե համախմբման գործընթաց Մերձբալթիկայում: Բացի այդ, առանձին հանրապետությունների ու տարածաշրջանների սահմաններում կատարվող ակտիվ միախառնման շնորհիվ կանխվում էր «միջինասիացիներն ընդդեմ եվրոպացիների», «Կովկասի բնակիչներն ընդդեմ սլավոնների» և այլ նմանատիպ կայուն միավորումների ձևավորման վտանգը:

Ամփոփելով իր վերլուծությունը՝ Զասլավսկին միանգամայն իրավացիորեն շեշտում է խորհրդային ազգային քաղաքականության ամենակարևոր նվաճումներից մեկը՝ կրթության, կառավարական հիմնարկների ու գերատեսչությունների համակարգերի բոլոր մակարդակներում ազգությունների համամասնական ներկայացվածության սկզբունքի հետևողական

[103] Տես նույն տեղում, էջ 225:

կենսագործումը: Սակայն, եզրակացնում է նա, այդ շատ բանով «մեքենայական մոտեցման» նպատակահարմարությունն ու կշռադատվածությունը նոր իրողությունների ձևավորման համեմատ ավելի ու ավելի էին հարցականի տակ դրվում անգամ խորհրդային աղբյուրներում[104]:

Վերջին տարիներին Արևմուտքում հրապարակվում են մեծ թվով աշխատություններ, որոնց հեղինակները նշում են իսլամի դերի աճը Միջին Ասիայի ու Ղազախստանի ժողովուրդների քաղաքական ու մշակութային կյանքում: Այս գործոնը դիտվում է որպես թե՛ մտավորականության, թե՛ «աշխատավոր զանգվածների» շրջանում ազգայնական կողմնորոշումների ձևավորումն արագացնող վճռորոշ գործոն:

Այս առումով Աֆղանստան խորհրդային զորքեր մտցնելը և դրան հակադրված «սրբազան պատերազմի» աստիճանական ծավալումը դիտվում էին որպես իսլամական աշխարհի կողմից խորհրդային Միջին Ասիայի «նոր հայտնագործում»: Գ. Ջիմոնը Խորհրդային Միության ներխուժումը Աֆղանստան գնահատում է որպես «կենտրոնական իշխանության մեծագույն ձախողում ու սխալ»: «Սոցիալիզմի արտահանման փոխարեն», գրում է նա, սկսվեց «ընդհանուր առմամբ իսլամի ու, մասնավորապես, արմատականության ներմուծում»[105]:

Աֆղանական հակամարտության բազմամակարդակ քաղաքակրթական-էթնոքաղաքագիտական վերլուծությունը թողնելով հետագա քննարկմանը՝ այստեղ ի մի բերենք արտասահմանյան մասնագետների տեսակետները ԽՍՀՄ – ԱՊՀ արտաքին ու ներքին քաղաքականության հակամարտածին գործոնների յուրօրինակ ռեզոնանսի վերաբերյալ:

Քաղաքագետները բավական հաճախ ապակայունացնող են անվանում Միջին Ասիայում ու Ղազախստանում տեղի ունեցող իրադարձությունների զարգացման վրա այն գաղափարների ներգործությունը, որոնք առաջ են քաշում իսլամական արմատականները՝ այաթոլա Հոմեյնիի կողմնակիցները: Հենց այդ մեկնակետից է չափվում Թուրքիայի միջնորդության քաղաքական գերադասելիությունը նախկին ԽՍՀՄ տարածքի մաս կազմող, արդիականացման մարտահրավերի առջև կանգնած իսլամական քաղաքակրթական կենսատարածքում Արևմուտքի շահերն առաջ մղելու գործում: Հակառակ սցենարային ընտրության դեպքում Հոմեյնիի՝ «քաղաքական իսլամը» սպասարկող պոպուլիզմը ԽՍՀՄ մահմեդական քաղաքակրթական կենսատարածքում կարող է վերածվել միջինասիական հանրապետություններում հետխորհրդային բյուրոկրատիայի հասցեին հնչող և ազգայնամոլական շարժառիթներով համեմված քննադատության աճող

[104] Տես նույն տեղում:

[105] Տես *Գ. Ջիմոն*, Նշ. աշխ., էջ 7–9:

ալիքի, իսկ իսլամական հեղափոխության առաջնորդների ուղերձների հակաիմպերիալիստական ուղղվածությունը՝ հակառուսական տրամադրությունների:

Այլ հետազոտողների, մասնավորապես՝ Ի. Լապիդուսի կարծիքով՝ խորհրդային Միջին Ասիային բնորոշ է իսլամի զգալի աշխարհիկացում, և վերջին տասնամյակներում իսլամական տեսաբանները շեշտել են անգամ սոցիալիստական և իսլամական արժեքների, այդ թվում՝ սոցիալական արդարության, ժողովուրդների միջև բարեկամության և այլ գաղափարների, համատեղելիության հանգամանքը[106]:

* * *

Ամփոփելով մենագրության երկրորդ գլխի որոշ արգասիքներ՝ մենք կարող ենք տեսնել առաջին գիտական արդյունքների համահարաբերակցվածությունը (կորելացիա) հետազոտության առաջադրված նպատակների ու որոշ գիտական խնդիրների հետ: Իրացված է հետազոտության այնպիսի խնդիր, ինչպիսին է էթնոքաղաքագիտության հիմնական կատեգորիաների բովանդակային դաշտի որոշումը: Առաջին և մասամբ երկրորդ գլուխներում ուրվագծված է էթնոքաղաքականության՝ կայացման ճանապարհին գտնվող տեսության ու դրա յուրահատուկ բաժիններից մեկի՝ ազգային անվտանգության էթնոքաղաքագիտության պրոբլեմների համախումբը:

Այսպիսով՝ առաջադրված գիտական նպատակի իրականացման ուղղությամբ ձեռնարկված քայլերին կարելի է տալ հետևյալ գնահատականը: Առաջին գլուխներում ցույց են տրված այն էվրիստիկական հնարավորությունները, որոնք ընձեռում է քաղաքակրթական մոտեցման կիրառումը ազգային անվտանգության էթնոքաղաքագիտական հայեցակարգի, էթնոքաղաքական հակամարտությունների քաղաքակրթական դետերմինացման ու գործառման մեխանիզմների, ինչպես նաև ազգային ու միջազգային անվտանգության էթնոքաղաքական ապահովման համակարգում այդ հակամարտությունների համաձայնային կարգավորման մեթոդաբանական հիմքերի միջգիտաճյուղային բազմամակարդակ որոնումների ժամանակ:

[106] Տես *Ի. Լապիդուս*, Նշ. աշխ., էջ 813–814:

Գլուխ 3

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԷԹՆՈՔԱՂԱՔԱԿԱՆ ՉԱՓՈՒՄԸ. ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԶՈՒԳԱՄԻՏՈՒՄ–ՏԱՐԱՄԻՏՈՒՄԸ

Շարունակենք հետազոտել մարդու իրավունքների հավասարության ճանաչման ու պաշտպանության հիմքում դրված արժեքների նկատմամբ իսլամական ու քրիստոնեական քաղաքակրթական կենսատարածքների կողմնորոշումների նմանության–տարբերության հենքի վրա հնարավոր միջքաղաքակրթական համաձայնության պրոբլեմը: Նման հարցադրումը ենթադրում է առնվազն փիլիսոփայական-մշակութաբանական, քաղաքագիտական ու սոցիալ-հոգեբանական ուսումնասիրություն:

Միջքաղաքակրթական շփումն առավել ցայտունորեն արտացոլվում է համատեղ կեցության բովանդակության մեջ, երբ քրիստոնեական կամ մահմեդական համայնքը այլ քաղաքակրթական մեծամասնության սահմաններում տեղաբաշխվում է որպես փոքրամասնություն: Քանի որ նախկին ԽՍՀՄ պայմաններում իսլամական մտածելակերպի բացահայտ դրսևորումները ենթարկվում էին յուրահատուկ աթեիստական ճնշման, ապա անհրաժեշտություն է ծագում իսլամի ընդհանուր աշխարհից առանձնացնելու խորհրդային մահմեդական հանրապետություններում պաշտամունքային ծեսերի պաշտոնական կատարման, բարոյականության ու իրավունքի ոլորտները: Այստեղ կարելի է խոսել շարիաթային կարգավորմամբ իրավաքաղաքական գործընթացների ու գործողությունների պարտադրված գաղտնի կամ առնվազն հատյալ ուղեկցման մասին, ինչը պայմանավորված է դուրսանական նորմերի չընդունման պետական քաղաքականությամբ: Դիտարկումները ցույց են տալիս, որ Միջին Ասիայի, Կովկասի և Մերձվոլգյան տարածաշրջանի նախկին խորհրդային հանրապետություններում շարիաթային իրավագործության տվյալ պրակտիկան սահմանափակ է: Ռուսի տարբեր էթնոմշակույթների ներկայացուցիչների միջև հետազոտվող միջքաղաքակրթական շփումների հոգեբանական առումները կարելի է վերլուծել էթնոկրոնական յուրահատկությունը պաշտոնապես դեպի սոցիալական կարգավորման համակարգի ծայրամաս դուրս մղելու համատեքստում:

Ինչ վերաբերում է քրիստոնեական, այսպես կոչված կանոնական իրավունքի և աշխարհիկ իրավունքի տարանջատվածությանը, ապա այդ պատմական բաժանումը պայմանավորված է, նախ, ավետարանական «կեսարյանը՝ կեսարին» դավանությամբ: Ընդսմին կանոնական իրավունքը, լինելով հիմնականում կրոնական համայնքի նորմերի նեղ եկեղեցական համակարգ, հանդես չի եկել կաթոլիկ եկեղեցու և արտաքին քաղա-

քակրթական աշխարհի միջև հարաբերությունների նորմատիվ կարգավորման ասպարեզում: Քրիստոնեական քաղաքակրթական շրջանում, ի տարբերություն մահմեդական երկրներից, պետական իրավունքը չի կազմել բուն կրոնի մաս[107]: Ավելի շուտ, ըստ Ա. Ջ. Թոյնբիի, եղել է հակառակը. «Բյուզանդական կայսրերը եկեղեցին վերածել են պետական գերատեսչության, իսկ տիեզերական պատրիարքին՝ եկեղեցական գործերով նախարարի»[108]:

Խորհրդային մահմեդական տարածաշրջաններում քրիստոնեական և մահմեդական քաղաքակրթությունների էթնոսոցիալական տարրերի միջև շփումները կոմունիստական գաղափարախոսական քաղաքակրթության շրջանակներում իրագործվել են գերազանցապես պետական քաղաքականության, աշխարհիկ իրավունքի ու բարոյականության կարգավորիչ ղեկավարության ներքո, ինչը բնորոշ է սոցիալիստական աշխարհիկ քաղաքական համակարգերին: Միջքաղաքակրթական փոխհարաբերությունների կրոնական շտկումը կատարվել է սոցիալական, առաջին հերթին՝ նորմատիվային, իրավաքաղաքական կարգավորման սոցիալ-հոգեբանական նրբերանգման ոչ ծավալված ձևով:

Հարկ է նշել, որ սոցիալիստական ինտերնացիոնալիզմի դոկտրինն ու պրակտիկան ըստ էության եղել են խորհրդային բռնակալական պլուրալիզմի համակարգի քաղաքական-գաղափարախոսական դրսևորումներ, մի համակարգի, որն իրացրել է միջքաղաքակրթական շփման կայուն վերարտադրումը դրա երկու չափումներում: Համաձայնությունը ձևավորվել ու վերարտադրվել է մահմեդական ու քրիստոնեական փոխդերակատարների (կոնտրագենտների) ազգային ու կենսատարածքային քաղաքակրթական առանձնահատկության մի յուրօրինակ ստերջացման կամ մեղմացման հիման վրա: ԽՍՀՄ-ում հենց այդ գաղափարախոսական միջքաղաքակրթական հարաբերություններով էր ապահովվում հակամարտային գործընթացների կենտրոնածայրամասային կառավարելիությունը: Որպես արդյունք՝ միջքաղաքակրթական շփումների հակամարտային ներուժը կուտակվում և պահպանվում էր քաղաքական-գաղափարախոսական համաձայնության զանգվածային պարտադրման համակարգի թաքնված (լատենտ) փուլում: Պետք է նշել նաև տվյալ քաղաքակրթական դինամիկայի դրական կողմերը, որոնք արտահայտվում էին ազգային մշակույթների ինչպես տարերային, այնպես էլ կարգավորվող փոխազդեցության միջոցով: Կարևոր նշանակություն ուներ և միջանձնային հարաբերությունների ոլորտում գաղափարախոսական համաձայնության

[107] Տես *Р. Давид.* Основные правовые системы современности. М., 1988, сс. 390 – 391:

[108] *Ա. Ջ. Թոյնբի*, Նշ. աշխ., էջ 320:

քաղաքականության բազմամյա անձնավորումը էթնոքաղաքակրթական, ազգային ու կենսատարածքային քաղաքակրթական արժեքային կողմնորոշումների անհատական ու կոլեկտիվ կրողների միջև սոցիալ-հոգեբանական շփումների բոլոր մակարդակներում: Այն հանգամանքը, որ թաքնված հակամարտությանը երկար տարիներ թույլ չէր տրվում անցնել բացահայտ միջքաղաքակրթական բախման վիճակի, նպաստում էր նաև տարբեր քաղաքակրթական կենսատարածքների բնակչության պատմական զանգվածային գիտակցության մեջ էթնոկրոնական հակոտնյայի՝ որպես թշնամու առավել խորշելի հայտանիշների առանձնացմանը:

Խորհրդային հասարակության մեջ միջքաղաքակրթական համաձայնության պրոբլեմի հետ կապված՝ կարող ենք պնդել, որ դրա շարունակական վերարտադրությունը պայմանավորված էր հասարակության քաղաքական կազմակերպվածքի էությամբ, ինչպես նաև խորհրդային աթեիստական աշխարհականության գաղափարախոսական-քաղաքակրթական բովանդակությամբ:

Ներկայումս միջքաղաքակրթական շփումների հարցերը ակտուալ են իսլամա-քրիստոնեական համատեղ բնակության ինչպես ավանդական, այնպես էլ նոր տեղերում: Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Մերձավոր Արևելքում մահմեդական մեծամասնության միջավայրում քրիստոնեական փոքրամասնության և Եվրոպայում մահմեդական փոքրամասնության բնակության ու շփումների քաղաքակրթական դինամիկան:

Մեր հետազոտության մեջ սահմանափակվելով միայն էթնոքաղաքագիտական առումով՝ մենք ավելի շատ ուշադրություն կդարձնենք այն հարցին, թե որքանով են փոխվել քաղաքակրթական կեցության տարբեր մակարդակներում մարդու իրավունքների պաշտպանության ու ռեալ իրավահավասարության ապահովման համար սոցիալական ու քաղաքական պայմանները: Այստեղ միջքաղաքակրթական շփումը դիտվում է որպես շփվող արժեքային համակարգերի նմանության–տարբերության, ինչպես նաև մի քաղաքակրթության էթնիկական, ազգային, կենսատարածքային սահմաններում մեկ այլ քաղաքակրթության ներկայացուցիչների իրավունքների իրական ապահովվածության աստիճանի համեմատության և համաձայնության կամ հակամարտության ձևով իրացման գործընթաց:

Եթե սահմանափակվենք պրոբլեմի միայն ձևական կողմով, ապա այն կարող ենք պարզաբանել կոնկրետ քաղաքակրթական կենսատարածքին պատկանող այս կամ այն երկրի ներպետական իրավունքի համակարգում ընդհանրապես միջազգային իրավունքի նորմերի և, մասնավորապես, մարդու իրավունքների պաշտպանության հետ կապված նորմերի գործարկման տեսակետից: Մեր կարծիքով՝ մարդու իրավունքների և ազատությունների հետ կապված միջազգային իրավունքի նորմերի

իմաստավորման պրոբլեմը, լինելով իր էությամբ քաղաքագիտական[109], կարող է ձևակերպվել նաև քաղաքակրթական մասշտաբներում: Խոսքը կարող է վերաբերել, մի կողմից, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի (1948 թ.), Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին պայմանագրի (1966 թ.), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին պայմանագրի (1966 թ.) և, մյուս կողմից, ազգային ու կենսատարածքային-քաղաքակրթական արժեքային կողմնորոշումների և դրա հետ կապված՝ միջքաղաքակրթական շփումների նորմատիվային կարգավորման համակարգի համահունչության էթնոքաղաքագիտական հետազոտությանը:

Մեր կարծիքով՝ քրիստոնեական ու մահմեդական կենսատարածքներին բնորոշ քաղաքակրթական կառույցների միջև էթնոքաղաքական նմանության–տարբերության էութենական բնութագրերը կապված են պետության և եկեղեցու ու կրոնական ավանդույթի փոխհարաբերությունների ձևավորման պատմական փորձի առանձնահատկությունների հետ:

Եվրոպայում հասարակության ու պետության հետ քաղաքացու փոխհարաբերությունների ազատականացման ազդակը պայմանավորված է միջնադարյան բարեներոգման (ռեֆորմացիա) ժամանակներից Հռոմի եկեղեցու հետ ազգ-պետությունների պատմական հակամարտության էությամբ: Մինչդեռ իսլամական աշխարհում մահմեդական իրավունքը և պետությա՝ որպես իսլամի սպասավորի հայեցակարգը ամբողջական կրոնական համակարգի անկապտելի մասն են[110]:

Եկեղեցուց արևմտյան աշխարհի իրավաքաղաքական համակարգերի տարանջատվածությունը և աշխարհականության սկզբունքների էվոլյուցիոն զարգացումը կարելի է դիտել սկսած անգլիական Ազատությունների մեծ խարտիայից (1215 թ.) և Իրավունքների մասին բիլլից (1689 թ.), հյուսիսամերիկյան՝ ԱՄՆ-ի անկախության հռչակագրից (1776 թ.) մինչև ֆրանսիական՝ Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիրը (1789 թ.): Իսլամական էթնոքաղաքականության ծագումնաբանության էթնոքաղաքագիտական կողմը ենթադրում է մահմեդական կրոնական ու իրավաքաղաքական միաձուլվածության երևույթի ուսումնասիրություն[111]:

[109] Տես *А. С. Гаврдовский.* Имплементация норм международного права. Киев, 1980; *Н. В. Захарова.* Выполнение обязательств, вытекающих из международного договора. М., 1987:

[110] Տես *Г. Э. фон Грюнебаум.* Истоки мусульманской цивилизации. "Основные черты арабо-мусульманской культуры". М., 1981, сс. 30 – 82:

[111] Տես *И. Л. Фадеева.* О некоторых категориях цивилизационных различий обществ Запада и Востока. "Экономика и политика. Взаимосвязь и взаимодействие". М., 1990, сс. 39 – 59:

Քրիստոնեական ու մահմեդական քաղաքական և իրավական ավանդույթների միջքաղաքակրթական զուգամիտման–տարամիտման ծագումնաբանության էթնոքաղաքագիտական կողմի հետազոտումը տվյալ զուգամիտման էությունն ու ակունքները տեսնում է կամ՝ ներքաղաքակրթական իրավաքաղաքական աշխարհականության, կամ՝ կրոնաքաղաքական ու կրոնահիրավական միաձուլվածության մեջ:

Տվյալ հայտանիշը կարող է էթնոքաղաքագիտության մեջ ծառայել որպես մարդու իրավունքների պաշտպանության հայեցակարգի հիմքում դրված քաղաքագիտական արժեքների նկատմամբ տարբեր ազգային-քաղաքական համակարգերի կողմնորոշվածության գնահատման չափանիշ:

Մարդու իրավունքների պաշտպանության մահմեդական և արևմտյան մոդելների էթնոքաղաքական զուգամիտման–տարամիտման ժամանակակից յուրահատկությունն ավելի լավ ըմբռնելու համար անհրաժեշտ է նաև հստակեցնել հնարավոր համաձայնության կամ հակամարտության այն հիմնարար սկզբունքները, որոնք թելադրվում են դասական իսլամի նորմերով: Իհարկե, «դար ալ իսլամի» («իսլամի տարածք») և «դար ալ դարբի» («պատերազմի տարածք») փոխհարաբերությունների միջնադարյան իսլամական քաղաքական և իրավական մշակույթի այդ նորմերը ներկայացնում են գերազանցապես պատմական հետաքրքրություն: Ինչպես նշում են մասնագետները՝ ժամանակակից իսլամական պատկերացումներով միջքաղաքակրթական շփման այդ հիմնարար սկզբունքներն ու նորմերը ավելի շատ ընկալվում են որպես «պատմության ու քաղաքակրթության անկապտելի մաս, որպես մշակութային ժառանգություն»[112]:

Դիտարկվող էթնոքաղաքական համաձայնային-հակամարտային ժառանգության էությունը՝ որպես իսլամի անցյալով պայմանավորված եղելություն, կարող է ուսումնասիրվել խաղաղ միջհամայնքային գոյակցության վիճակների տարածության մեջ, «դար ալ իսլամի» և «անհավատների դեմ սրբազան պատերազմի»՝ ջիհադի սահմաններում: Դասական մահմեդական իրավունքի համակարգում ղուրանական նորմերը պարտադրում են «պատերազմի տունը (տարածքը)» ջիհադի միջոցով վերածել «իսլամի տան»:

Իսլամական ավանդական էթնոքաղաքական ժառանգության հակամարտային կարողությունների ու ջիհադի ձևով դրանց իրացման հնարավոր սցենարների ուսումնասիրությունը թողնելով հետագային՝ շեշտենք «մահմեդական իրավունք» և «մահմեդական երկրի իրավունք» հասկացությունները տարբերելու անհրաժեշտությունը: Տվյալ վերապահումը էական է ժամանակակից միջքաղաքակրթական շփումների երևույթների ու գործ-

[112] Տես *А. В. Журавский.* Христианство и ислам. М., 1990, с. 108.

ընթացների պարզունակ, դասական իսլամին և նրա իրավաքաղաքական համակարգին բնորոշ միջնադարյան նորմերին համահունչ կատարվող հնարավոր մեկնաբանությունները կանխելու համար:

Նպատակ ունենալով իսլամա-քրիստոնեական միջհամայնքային շփումների քաղաքակրթական սկզբունքների զուգամիտման–տարամիտման էթնոքաղաքագիտական առումի ուսումնասիրությունը՝ մենք ստիպված ենք միայն սահմանափակ, խնդրի սահմաններով պայմանավորված տեղ հատկացնել մեծ թվով խորհրդային և արտասահմանյան գիտնականների հարուստ արևելագիտական նյութին:

Կարևոր է առանձնացնել այն հիմնարար հարացույցները, որոնց վրա դասական մահմեդական իրավունքը խարսխում է «դար ալ իսլամում» մահմեդականի և այլադավանի իրավաքաղաքական ինքնության էութենական բնութագրերը: Փաստորեն տվյալ մոտեցումը ենթադրում է միջքաղաքակրթական շփումների երկու կողմերի իրավապաշտպանվածության դիտարկման համար էթնոսոցիոծին բնույթի սուբստրատային հիմունքների իմաստավորում: Ո՞րն է «իսլամի տան» սահմաններում մահմեդական-քրիստոնեական համաձայնության էթնոքաղաքական ավանդույթների էությունը: Այդ էությունն է մարդու՝ որպես «ուղղահավատ մահմեդականի», որպես «հովանավորյալի» («ահլ ալ զիմա») և որպես «հեթանոս միաստվածապաշտի կամ բազմաստվածապաշտի» խաղաղ գոյակցության տվյալ համակարգը: Մահմեդականների հետ քրիստոնյաների գոյակցման պայմանների իրավական, քաղաքական, սոցիալական բովանդակությունը արտացոլված է Աստծու կողմից ղուրանական նորմի տրվածության և «հովանավորության» ներքո ապրելու սկզբունքի անփոփոխելիության մեջ: Մեր կարծիքով՝ այս հարացույցը հատկանշական կերպով արտացոլում է հնարավոր միջքաղաքակրթական համաձայնության էությունը, ինչպես նաև նրա իրականացման էթնոքաղաքական և իրավական սահմանները:

Համաձայնային-հակամարտային շփումների ձևավորման ու գործառման արդի պայմանները լիարժեք կերպով ներկայացնելու համար հարկ է ուրվագծել դասական մահմեդական իրավունքում «հովանավորյալների» (ըստ Ղուրանի՝ միաստվածապաշտ քրիստոնյաների ու հուդայականների) պաշտպանվածության սկզբունքները: Այս կապակցությամբ կարևորություն է ստանում նաև «հովանավորյալների» սոցիալական վարքի կանոնակարգման միջոցով տվյալ իրավունքի իրականացման բուն քաղաքագիտական կողմը: Եվ այսպես. հովանավորյալ «Սբ. Գրքի պահապանողի» իրավազորության շրջանակը ուրվագրված է Աստծու հայտնությամբ, ուստի և մահմեդական իրավունքի համակարգում չի կարող փոփոխվել: «Աշխարհում չկա մի իշխանություն, որը կարողանար փոխել

մահմեդական իրավունքը», պնդում է հայտնի ֆրանսիացի կոմպարատիվիստ (համեմատաբան) քաղաքագետ Ռ. Դավիդը[113]:

Այսպիսով՝ դասական իսլամում քրիստոնյաների և հուդայականների հետ գոյակցությունն ու համաձայնությունը ենթադրում են նրանց կողմից մահմեդականների նկատմամբ իրենց ստորադաս սոցիալական կարգավիճակի ընդունում: Ղուրանով նախատեսված իրավական սահմանափակվածությունը ամրագրվում էր համապատասխան էթնոքաղաքականությամբ, այն է՝ քաղաքական ու ռազմական ոլորտից քրիստոնյաների մեկուսացմամբ, լրացուցիչ հարկումներով, նրանց ակտիվության սահմանափակմամբ այն ոլորտներով, որտեղ նրանք չէին հանդիպում մահմեդական ումմայի հակազդեցությանը: Շարիաթի անփոփոխության և «հովանավորյալների» վրա նրա սկզբունքների չտարածման պայմաններում կատարվում էր կրոնական համայնքների էթնոկրոնական տարանջատում: Ժամանակի ընթացքում՝ 15-րդ դարից մինչև 20-րդ դարի սկզբները, կրոնահամայնքային տարանջատվածությունը Օսմանական կայսրությունում ամրագրվեց «միլեթների» համակարգի ձևով. դրանք ենթարկվում էին Բարձր Դռան վերահսկողությամբ համայնքի կողմից ընտրվող պատրիարքների ոչ միայն հոգևոր, այլև աշխարհիկ իշխանությանը: Բերված դատողությունները թույլ են տալիս պնդել, որ դասական մահմեդական իրավունքը և ղուրանական հանձնարարականներին համապատասխանող էթնոքաղաքականությունը, սկսած 8-րդ դարից մինչև Օսմանյան կայսրության փլուզումը, վերարտադրում էին մի յուրօրինակ համաձայնություն իսլամական հասարակության (ումմայի) և նրան ենթարկված ու «իսլամի տան» էթնոկրոնական գետտոյի ձև ստացած իրավաքաղաքական ծայրամասի միջև[114]: Տվյալ վերլուծության հիման վրա կարելի է հանգել այն եզրակացությանը, որ իսլամն իր իրավունքով ու էթնոազգային, ազգային-պետական, իսկ Օսմանյան խալիֆայության սահմաններում նաև կենսատարածքային քաղաքակրթական մակարդակներում իրականացվող էթնոքաղաքականությամբ հանդերձ դատապարտված էր իրացնելու օրենքի առջև մահմեդականների և «Սբ. Գրքի մարդկանց» անհավասարության վրա հիմնվող միջքաղաքակրթական համաձայնություն:

Այլակրոն համայնքների՝ որպես սոցիալական, էթնոմշակութային ու քաղաքացիական կարգավորման գործառույթներ ներառող յուրահատուկ կրոնաքաղաքական հաստատությունների ձևավորումը պայմանավորում էր միջքաղաքակրթական գոյակցության մի յուրահատուկ վիճակ: Դրա

[113] *Р. Давид.* Основные правовые системы современности. М., 1988, с. 390.

[114] Ըստ Դավիդի՝ մահմեդական իրավունքը միշտ եղել է անփոփոխ դոկտրինալ համակարգ, որը ենթակա չէր իշխանությունների կողմից որևէ նորամուծության (տես *Ռ. Դավիդ*, Նշ. աշխ., էջ 386 – 388):

սահմաններից դուրս, եթե խախտվում էր ենթակայության կարգավիճակը, այլակրոնին սպառնում էր մահմեդական պետության «հովանավորությունից» զրկվելու հեռանկարը: Դեռ ավելին. դա ուղեկցվում էր մահմեդական ումմայի ու այլադավանների փոխհարաբերությունների տեղափոխմամբ «իսլամի տնից» «պատերազմի տուն»: «Համաձայնություն–հակամարտություն» շեմային վիճակով նման անցումները կարելի է համարել նորմ, որը ներհատուկ է միջքաղաքակրթական շփումը ջիհադի՝ այլակրոնների դեմ սրբազան պատերազմի ձևով[115] իրավաքաղաքական կարգավորման մահմեդական դասական համակարգին:

Ուշադրությունը կենտրոնացնելով համաձայնային սցենարի մշակման պրոբլեմի վրա՝ մենք հետագային ենք թողնում հակամարտային շփումների պայմանավորվածության ուսումնասիրությունը քաղաքակրթական վերլուծության տարբեր մակարդակներում:

Այն տպավորությունը, թե իսլամական հասարակությունը իրավաքաղաքական առումով լիովին կոնսերվացված է, շատ պարզունակ է: Տվյալ աշխատությունը, չլինելով բնույթով պատմական, չի կարող ներառել տեսանելի պատմության կտրվածքով միջքաղաքակրթական փոխազդեցության ամբողջ ընթացքը: Այդուհանդերձ, ռեալ համաձայնային կարողությունների իմաստավորման համար նպատակահարմար է ելնել այն դրույթից, որ նորամուծական միտումների հայտանիշները նոր և նորագույն շրջանում բնորոշ են եղել ոչ միայն Արևմուտքին, այլև մահմեդական աշխարհին:

Արդիականացման ձգտումների շարքում իրենց նախատեսվելիք փոխակերպումների նորությամբ ու մասշտաբներով քաղաքակրթական վերլուծության են արժանի Օսմանյան կայսրության բարեփոխման համառ փորձերը, որոնք ձեռնարկվել են 19-րդ դարից սկսած: Հայտնի է, որ բոլոր օսմանյան բարեկորոգիչները, սկսած Սելիմ 3-րդ սուլթանից (1789–1808), գիտակցելով ավանդական արևելյան բազմաէթնիկ բռնապետության բարեկորոգման ու գոյունակության մեծացման անհրաժեշտությունը, հանդիպել են կրոնական շրջանների կողմից ղեկավարվող մահմեդական բնակչության կատաղի դիմակայությանը «գլավուրների նորույթներին»:

Ձգտելով առանձին վարչաքաղաքական ու ռազմական վերափոխումների միջոցով կանխելու կայսրության փլուզումը՝ Մահմուդ 2-րդ սուլթանը իր համախոհների հետ առաջ է քաշել «օսմանականության» նոր էթնոքաղաքական հայեցակարգը, որը հիմնված է «միլեթների» համակարգի պահպանման պայմանով մահմեդականների ու ոչ մահմեդականների

[115] Մենք դիտարկում ենք ջիհադի առավել տարածված, կանոնական մեկնաբանությունը՝ նշելով, որ ժամանակակից մահմեդական պետություններում այն միակը չէ:

միջև քաղաքացիական հավասարության սկզբունքների վրա, որոնք խորթ են շարիաթին: Պետության եվրոպականացման ուղղությամբ ձեռնարկված հետագա վերափոխումները կուտակվել են կայսրության բոլոր հպատակների կյանքի, պատվի և ունեցվածքի անվտանգության երաշխավորման ոլորտում: Թանզիմաթի (1839 – 1871) քաղաքականության էությունն էին առևտրական ու հողային աշխարհիկ օրենսգրքերի ընդունումը, պետական կառավարմանը կրոնական շրջանների միջամտությունը սահմանափակելու փորձերը: Արդիականացման այս ալիքը օբյեկտիվորեն միտված էր կարգավորելու միջքաղաքակրթական շփումները ինչպես արտաքին ասպարեզում՝ հեգեմոնի դերին հավակնող մեծ տերությունների հետ, այնպես էլ ներքին՝ կապված կայսրությունում բնակվող ու տարբեր քաղաքակրթական ավանդույթներ ունեցող ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների հետ:

Մեր կարծիքով՝ Թանզիմաթի բարեփոխումները առաջին փորձն էին, որը ձեռնարկվել էր իսլամական աշխարհում աշխարհիկ-պետական եղանակով հասարակությունն արդիականացնելու համար: Տվյալ դեպքում մենք փաստորեն կարող ենք Թանզիմաթի համակարգը դիտել որպես միջքաղաքակրթական շփման իսլամական սկզբունքները արմատապես վերափոխելու փորձ՝ միտված այն բանին, որ քաղաքացիական համաձայնությունը գերակայի «իսլամի տանը» «հովանավորյալների» ստորադաս գոյակցության և «պատերազմի տանը» ջիհադի ստանդարտների միջև փոխհարաբերությունների ընտրության իսլամական իրավաքաղաքական հրամայականի նկատմամբ:

«Օսմանականության» էթնոքաղաքականության հիմքի վրա ձևավորված համաձայնությունը անշուշտ արագացնում էր ոչ մահմեդական ու ոչ թյուրքախոս բնակչության էթնոմշակութային եզրահանման (մարգինալացման) գործընթացները և վերջին հաշվով միտված էր էթնոկրոնական փոքրամասնությունների ձուլման միջոցով օսմանյան հասարակության էթնոմշակութային համասեռության հաստատմանը: Ինչպես ցույց է տալիս կայսրությունների նոր ու նորագույն քաղաքական պատմությունը, միջքաղաքակրթական շփումների համաձայնային լուծման այս մոդելը բնորոշ է բռնապետական պլյուրալիզմի քաղաքակրթական համակարգերին: Ընդսմին պետք է նշել, որ Թանզիմաթի արդիականացումը հարաբերականորեն առաջադիմական էր և միջքաղաքակրթական երկխոսության՝ արևմտյան հասարակությանն ավելի զուգամետ հայեցակարգի ու համապատասխան էթնոքաղաքական դոկտրինների ձևավորման ծանրակշիռ հայտ էր:

Պատմության հաջորդ շրջաններում ևս թուրքական մետրոպոլիան, ապա և Թուրքական Հանրապետությունը առաջատար դիրքեր էին պահպանում

միջքաղաքակրթական շփումների պրակտիկայում դասական իսլամի իրավաքաղաքական հիմքերի վերափոխման գործում: Աբդուլ Համիդ 2-րդի օրոք իսլամի անառարկելի իրավաքաղաքական տիրապետության վերականգնումը, չնայած կայսերական վերնաշենքի եվրոպականացման ուղղությամբ ձեռնարկված որոշ ժամանակավոր ու իրավիճակային քայլերին[116], ուղեկցվում էր կայսրության փլուզումը կասեցնելու համար նոր պլատֆորմի՝ «պանիսլամականության» առաջքաշմամբ: Բարձր Դռան էթնոքաղաքական ուղեգիծը, որը հիմնվում էր «պանիսլամականության» վրա, գործնականում ոչ թյուրքական ու թյուրքական ծագում ունեցող մահմեդականներին միասնական ու անբաժանելի ումմայում համախմբելու բռնատիրական մոդել էր: Իսկ ներկայսերական միջքաղաքակրթական շփման պրոբլեմի լուծումը տեղափոխվել էր բալկանյան անջատումներից հետո մնացած էթնոկրոնական փոքրամասնությունների բռնի մահմեդականացման հարթություն:

Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է միջքաղաքակրթական շփման էթնոքաղաքական վերակողմնորոշմանը համաձայնությունից դեպի հակամարտություն, «իսլամի տնից»՝ դեպի «պատերազմի տուն»:

Աշխարհիկ բարեփոխումների և «օսմանականության» նոր էթնոքաղաքական դոկտրինի ձախողման պատճառները պարզելու համար դիմենք թուրքական ազգայնամոլության գաղափարախոսներից մեկին՝ Զիա Գյոքալպին: Նրա գնահատականը էթնոքաղաքագիտական բնույթի է և համապատասխանում է վերլուծության կենսատարածքային-քաղաքակրթական, ինչպես նաև համընդհանուր-քաղաքակրթական մակարդակներին: Գյոքալպը գրում է, որ «Թանզիմաթի առաջնորդները փորձում էին օսմանական քաղաքակրթությունը համատեղել արևմտյանի հետ: Այս քաղաքակրթությունները չէին կարող գոյակցել և միայն հակամարտում էին մեկը մյուսի դեմ: Ինչպես անհատը չի կարող անկեղծորեն դավանել միաժամանակ երկու կրոններ, այնպես էլ ազգը չի կարող պատկանել միաձամից երկու քաղաքակրթությունների: Թանզիմաթի բարեփոխումների արդյունքն էր քաղաքական կառուցվածքում, դատական, օրենսդրական ու կրթական համակարգերում ստեղծված երկվությունը, որը պահպանվեց մինչև քեմալական հեղափոխություն: Արևմտյան քաղաքակրթության հետ արևելյանի համատեղման փորձը հավասարազոր էր միջնադարը այժմեականության հետ համատեղելու փորձի»[117]: Նշելով մահմեդական աստվածաբանների ազդեցության ոլորտի սահմանափակմանը նպաստած մի շարք առաջարկությունների հեղինակի դատողությունների որոշակի կտրուկությունը՝ այդուհանդերձ փաստենք Թանզիմաթի արդիականացուցիչ քաղաքականության էկլեկտիկության ու ոչ շարակարգվածության մասին Գյոքալպի դիտողությունների արդարացիությունը[118]:

Օրինաչափ է այն հարցը, թե գուցե իսլամական քաղաքակրթության ժառանգության վերարտադրման քաղաքական ու իրավական կանոններն իրոք բացառում են ազգային-պետական կյանքի մահմեդական և արևմտյան մոդելների զուգամիտությունը: Նման դեպքում հարկ կլիներ ելնել այն տրվածությունից, որ միջքաղաքակրթական շփման համաձայնային կարողությունների դրական զարգացումը դատապարտված է անհաջողության, քանի որ երկխոսության համար չկա որևէ ռեալ հիմք: Բարեբախտաբար, դա այդպես չէ: Այլ բան է, որ տվյալ պրոբլեմի ուսումնասիրություններում հաճախ գերակշռում են քարոզչական ծայրահեղությունները, ինչի պատճառով համագործակցության ուղիների դատողական ու կշռադատված որոնումը փոխարինվում է խանդավառության կամ վրդովմունքի էյֆորիայով՝ կապված համամարդկային արժեքների ու մարդու իրավունքների ինքնաբերական ընդունման կամ մերժման հետ:

Մարդու իրավունքների համակարգին դասական մահմեդական իրավունքի նորմերի զուգամիտելիության հարցը պարզելու համար նպատակահարմար է քաղաքագիտական վերլուծությունը շարունակել համեմատական իրավագիտության ոլորտում: Ռենե Դավիդը, իսլամական իրավունքի երևույթը դիտելով որպես աստվածատուր կրոնի բաղադրամաս, բացառում է շարիաթի նորմերին հակասող որևէ նորամուծության հնարավորությունը: Սակայն այս անառարկելի եզրակացության հետ մեկտեղ հեղինակը նշում է մահմեդական երկրների միտվածությունը դեպի արդիականացում: Իսկ ինչպե՞ս կարող են նոր տիպի քաղաքական ռեժիմների հաստատումը, իրավաքաղաքական կարգավորման մի շարք ոլորտներում կատարվող արմատական վերափոխումները զուգակցվել մահմեդական իրավունքի անփոփոխությանը:

Չհորանալով համեմատաբանության մանրամասների մեջ՝ մենք, հետևելով ֆրանսիացի իրավագետին և աֆղանական ուլեմներին՝, կարող ենք

---

[116] Աբդուլ Համիդի կատարած տարաշարժի օրինակ կարող են ծառայել առաջին թուրքական սահմանադրության ընդունումը և 1876 թ. խորհրդարանի գումարումը, ապա դրա ցրումն ու սահմանադրականների նկատմամբ դաժան բռնաճնշումների գործադրումը:

[117] *Z. Gökalp.* Türkçülügün esaslari. Istanbul, 1973, s 44.

[118] Կտրուկությունը կարող է լուսաբանվել այն փաստով, որ հեղինակը անվերապահորեն բացառում է կրոնների միջև համաձայնության գոյության հնարավորությունը, թեև հայտնի է, որ չինացիների պաշտամունքը հանդուրժողական էր այնպիսի կրոնական համակարգերի տարրերի նկատմամբ, ինչպիսիք են կոնֆուցիականությունը, բուդդայականությունը և դաոսականությունը:

՝ Հեղինակը, 1982 – 1983 թթ. Աֆղանստանի Ժողովրդավարական Հանրապետությունում (ԱԺՀ) ծառայելով որպես քաղաքական խորհրդական և վերլուծաբան, պարբե-

պնդել, որ մահմեդական իրավունքը անփոփոխ է, բայց միևնույն ժամանակ՝ հնարավորություններով լի: Տվյալ հնարավորությունների էությունը կարելի է ընդհանուր առմամբ հանգեցնել այն բանին, որ իսլամական իրավունքը թույլ է տալիս սովորույթի, կողմերի համաձայնության, վարչական կանոնակարգի մեխանիզմների կիրառմամբ հաստատել նոր նորմեր՝ առանց բուն իրավունքը փոփոխելու: Հենց այդ սկզբունքներով են ձևավորվում մահմեդական պետությունների դրական իրավական համակարգերը, պետություններ, որոնք տարբեր չափով են տարանջատված կրոնական ուտոպիայից, բայց դրա հետ մեկտեղ հռչակում են «մահմեդական երկրի իրավունքի» նկատմամբ «մահմեդական իրավունքի» անառարկելի հեղինակությունը և, վերջին հաշվով, գերակայությունը[119]:

Այստեղ կարևոր է ուշադրություն դարձնել մի մեծ մեթոդաբանական պրոբլեմի՝ կապված միջքաղաքակրթական շփման կողմերի իմաստավորման գործում, ինչպես նաև քաղաքակրթությունների համաձայնային-հակամարտային փոխազդեցության բազմամակարդակ վերլուծության վարկածի կոնկրետ-քաղաքագիտական կիրառման մեջ շրջադարձային հանգամանքի հետ:

Միջքաղաքակրթական շփումը արտաքին չափման մեջ ձեռք է բերում նոր բովանդակություն: Կողմերի զուգամիտման էությունն այն է, որ դուրանական նորմերի միասնական համակարգը, որը նախկինում հանդես է եկել որպես իրավունքի անփոփոխ ու գործնականում անկապտելի սուբյեկտ, այժմ լրացվում է մահմեդական պետությունների ազգային իրավունքի ավելի բազմազան համակարգով: Փաստորեն, ներկայումս քրիստոնեական քաղաքակրթությունը և արևմտյան ազգ-պետությունների աշխարհիկ իրավաքաղաքական համակարգերը համապատասխան իրավաքաղաքական շփումների մեջ են ներգրավվում ոչ միայն կենսատարածքային-քաղաքակրթական, այլև շատ կարևոր ազգային ու համընդհանուր մակարդակներում:

Այսպիսով՝ արևմտա-մահմեդական համընդհանուր շփման կողմերի զուգամիտելիությունը կարող է դիտվել ինչպես հորիզոնական միջպետական հարաբերությունների ոլորտում, այնպես էլ համաշխարհային հանրության միջազգային կազմակերպություններով և առաջին հերթին ՄԱԿ-ով միջնորդավորված միջազգային հարաբերություններում: Շարիաթի նախկինում միասնական համակարգի նման ազգային ազատագրումը, կախված մահմեդական երկրների քաղաքականության և իրավունքի ոլորտ

րական խորհրդատվություններ է ունեցել Աֆղանստանի հեղինակավոր մահմեդական աստվածաբանների՝ ուլեմների հետ:

[119] Տես *Ռ. Դավիդ*, Նշ. աշխ., էջ 382 – 407:

աշխարհիկ նորմերի ներքերման չափից, պայմանավորում է այն ռեսուրսների էվոլյուցիոն աճը, որոնք անհրաժեշտ են արևմտյան ազատական-ժողովրդավարական մտածելակերպին բնորոշ արժեքների և ստանդարտների ըմբռնումն աստիճանաբար խորացնելու համար:

Հարկ է շեշտել զուգամիտության սկզբունքների կարևոր դերը նաև քրիստոնեության և իսլամի միջև անմիջական միջդավանական երկխոսությունում: Հակամարտային ներուժի մեջ էական ներքերում եղավ Հռոմի եկեղեցու որդեգրած «էկումենիզմի» նոր քաղաքականությունը, որը ծավալվեց Վատիկանի 2-րդ տիեզերական ժողովից (1962 – 1965) հետո: Ժողովի կոչը՝ «մոռացության տալ անցյալը և անկեղծորեն ձգտել փոխըմբռնման», նոր ազդակ հաղորդեց չափազանց բարդ ու սակավ փորձարկված անմիջական մահմեդա-քրիստոնեական շփման ծավալմանը[120]:

Մեր կարծիքով՝ քաղաքական ու իրավական մշակույթների փոխազդեցության հենց այս, արդիականացման համընդհանուր գործընթացներն արտացոլող բազմամակարդակ քաղաքակրթական համատեքստն է հնարավոր դարձնում համաձայնային սկզբունքների էվոլյուցիոն գերակայումը արտաքին ու ներքին (միջհամայնքային) չափումներում տեղի ունեցող միջքաղաքակրթական շփումներում:

Իմաստ ունի Արևմուտքի և մահմեդական Արևելքի իրավաքաղաքական զուգամիտման–տարամիտման քաղաքագիտությունը կոնկրետացնելու մահմեդական աշխարհում գոյություն ունեցող արմատականության, ինչպես նաև աշխարհիականության քաղաքագիտության ու քաղաքականության օրինակով: Ճյուղավորման միտումները ավելի մեծ չափով բնորոշ են իշխանության և իրավունքի մասին շիական պատկերացումների արմատականությանը: Շիական արմատականությունը պաշտպանում և հաստատում է պետության իրավաքաղաքական համակարգի բացառիկ սրբազան (սակրալ) բնույթը: Ի տարբերություն պետության սուննիական տեսությունից («խալիֆայություն»)՝ պետության շիական հայեցակարգը («իմամություն») հիմնվում է կիսաստվածային կառավարչի հատկություններով օժտված անսխալական իմամի ձեռքում բոլոր իշխանական լիազորությունների կենտրոնացման գաղափարի վրա: Այստեղ կրոնական վերնախավին վերապահվում է ումմայի և «չհայտնված իմամի» միջև միջնորդի առանձնահատուկ դեր: Շիական արմատականությունը ենթադրում է մահմեդական իրավունքի առանց բացառության բոլոր հրահանգների անառարկելի կատարում: Քաղաքականության և իրավունքի արևմտյան տեսության ու պրակտիկայի աշխարհիկությունը գնահատվում է որպես անաստվածության դրսևորում, ինչի հետևանքով մարդու իրավունքների

[120] Տես *Ա. Վ. Ժուրավսկի*, Նշ. աշխ., էջ 54 – 80:

և ազատությունների պաշտպանության ժամանակակից, իր քաղաքակրթական ծագումնաբանությամբ արևմտյան հայեցակարգը ևս գնահատվում է որպես իսլամի մաքրության ու մահմեդական իրավունքի աստվածաշնորհ հրահանգների նկատմամբ մեղսական ոտնձգություն:

Այսպիսով՝ շիական արմատականության քաղաքագիտությունն ու քաղաքականությունը կարող են բնութագրված լինել արևմտյան քաղաքակրթական արժեքների ու նորմերի նկատմամբ տարամիտությամբ, ինչպես նաև համաձայնային կողմնորոշումների նկատմամբ միջքաղաքակրթական հակամարտային կարողությունների գերակշռմամբ՝ պայմանավորված հենց այդ տարամիտությամբ: Կապված դուրանական հրահանգների ունիվերսալ կատարման հետ՝ քրիստոնեա-մահմեդական շփումներում համաձայնությունը տվյալ դեպքում խստագույնս սահմանափակվում է Սբ. Գրքի մարդու «հովանավորյալության» կարգավիճակով[121]:

Ինչպես երևում է իսլամագետ քաղաքագետների աշխատություններից[122], սուննիական ուղղության տարբեր ոչ արմատական պետահիրավական դպրոցներ իրենց հետազոտություններն ու եզրահանգումները կենտրոնացնում են «խալիֆայության» հայեցակարգի և իշխանության խորհրդարանական ու նախագահական մոդելների զուգադրման, ինչպես նաև խալիֆայական ու խորհրդարանական օրենսդրական համակարգերում «խորհրդատվության» հաստատության դերի վրա: Ժամանակակից սուննիական քաղաքագիտության մեջ ձևավորվել են իսլամական պետություններում քաղաքականության և իրավունքի զարգացման ինչպես տարամիտային, այնպես էլ զուգամիտային տեսակետներ: Առաջին դեպքում վերլուծության էությունը հանգեցվում է այն բանի պնդմանը, թե պետության համաշխարհային տեսության մեջ ու պրակտիկայում եղած ամեն դրականը ներքուստ բնորոշ է իսլամի համակարգին: Եզրակացությունները վերջին հաշվով հանգում են կառավարման մահմեդական ձևի ու բուրժուաժողովրդավարական հաստատությունների միջև համապատասխանության առկայության հիմնավորմանը:

Իսլամի իրավաքաղաքական համակարգը մահմեդական երկրների պետության և իրավունքի ազգային համակարգերի վերափոխելու կողմնա-

[121] Տես *Л. Р. Сюкияйнен.* Мусульманское право. Вопросы теории и практики. М., 1986, сс. 112 – 116:

[122] Տես "Социальное учение исламского возрожденчества". М., 1990; *Л. Р. Сюкияйнен.* Концепция мусульманской формы правления и современное государствоведение в странах арабского Востока. "Социально-политические представления в исламе. История и современность". М., 1987, сс. 45 – 68; *Н. В. Жданов, А. А. Игнатенко.* Ислам на пороге XXI века. М., 1969, сс. 140 – 151; *Գ. Է. Ֆոն Գրյունեբաում,* Նշ. աշխ.:

կիցների զուգամիտական թևը քեմալական բարեփոխումների ժամանակներից ի վեր անշուշտ գլխավորում է Թուրքական Հանրապետությունը: Նրան են հարում աշխարհիականության սկզբունքներ հռչակած Լիբանանն ու Սիրիան, ինչպես նաև մի շարք այլ արաբական երկրներ, որոնք փորձում են արդիականացնել իրենց պետականության հիմքերը[123]: Տարամիտմանը սատարում է արմատականների կողմնորոշումը դեպի պետության կազմակերպվածքի՝ քաղաքական պրակտիկայում հայտնի բոլոր ձևերի նկատմամբ «կառավարման իսլամական ձևի» առավելությունների հիմնավորում:

Իհարկե, պետք չէ չափազանցել դիտարկվող երկրներում ընթացող պետահիրավական շինարարության վրա իսլամի ու մահմեդական իրավունքի գործած ազդեցությունը: Սակայն, ինչպես հետևում է մահմեդական իրավունքի հեղինակավոր մասնագետ Լ. Ռ. Սյուկիյայնենի վերլուծությունից, տվյալ զուգամիտական գործոնի ազդեցությունը չի կարելի նաև անտեսել: Ի հաստատումն իր եզրահանգումների՝ հեղինակը նշում է, որ իսլամը պետական կրոն է հռչակվել 30 երկրում[124]:

Նկատվում է արմատականության տարամիտական ձգտումների ազդեցության աճ իմամ Հոմեյնիի գլխավորած Իսլամական հեղափոխության հաղթանակից հետո: Հենց այդ ժամանակից ի վեր պետական իրավունքի վրա մահմեդական իրավական հաստատությունների ազդեցության աշխարհագրական շրջանակը արդեն չի սահմանափակվում միայն ֆեոդալական միապետություններով, այլ ներառում է նաև հանրապետական ձևի կառավարմամբ որոշ բուրժուական պետություններ: Տարամիտական թևն առաջնորդում են սուննիական Պակիստանը և շիական Իրանը, որոնք արմատականությունը մարմնավորում են իսլամական հանրապետությունների տեսության ու պրակտիկայի մեջ:

Եվ այսպես. ամփոփելով միջքաղաքակրթական շփման գերազանցապես համաձայնային զարգացման օբյեկտիվ նախադրյալները՝ մենք կարող ենք հանգել հետևյալ եզրակացությունների: Աշխարհականությունն ու արմատականությունը, որոնք մահմեդական պետությունների իրավաքաղաքական տեսության մեջ ու պրակտիկայում իսլամի ունեցած դերի ու տեղի նկատմամբ հիմնական բևեռային մոտեցումներն են, պայմանավորում են Արևմուտքի և իսլամական Արևելքի քաղաքակրթական համակարգերի

[123] Տես "Османская империя. Государственная власть и социально-политические структуры". М., 1990; "Турция. История. Экономика. Политика". М., 1984; *И. Л. Фадеева.* Об эволюции светских тенденций в социально-политическом развитии Турции. К постановке вопроса. "Ислам в странах Ближнего и Среднего Востока". М., 1982, сс. 76 – 110:

[124] Տես *Л. Р. Сюкияйнен.* Мусульманское право..., с. 116:

զուգամիտման կամ տարամիտման էությունը: Աշխարհականությունը, մահմեդական իրավունքի ու քաղաքականության միասնական կենսատարածքային քաղաքակրթական համակարգը կերպափոխելով պետությունների ներքին և արտաքին քաղաքական հարաբերությունների իրավական կարգավորման ազգային համակարգերի, հնարավորություն է ստեղծում ավանդական հասարակությունների արդիականացման ընթացքում քաղաքակրթական արժեքների փոխներթափանցման համար: Տվյալ ուղին հնարավորություն է տալիս մահմեդական պետությունների պետական իրավունքի մեջ միջազգային իրավունքի նորմերի ներթափանցման միջոցով յուրացնելու մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության ազատական-ժողովրդավարական ստանդարտները: Մարդու ազատությունների իրավապաշտպանության հիմքում դրված համամարդկային արժեքների ըմբռնման հարցում դիրքորոշումների մերձեցումը արդիականացած արևմտյան ու արդիականացող արևելյան քաղաքակրթությունների զարգացման զուգամիտության գնահատման հնարավոր, առավել ընդհանրական չափանիշներից մեկն է:

Ըստ դիտարկված ընդհանուր տեսական դրույթների՝ միջքաղաքակրթական շփումների իրողությունների քաղաքագիտական ընկալումը ենթադրում է նաև մարդու իրավունքների և ազատությունների ապահովման ճանապարհին եղած խոչընդոտների կոնկրետ վերլուծություն: Խոսքը առաջին հերթին այն խոչընդոտների մասին է, որոնք պայմանավորված են կոնկրետ ազգային հասարակության սոցիալական կառուցվածքով, ազգային կառուցվածքների և համաշխարհային ընկերակցության կառուցվածքի զուգամիտմամբ–տարամիտմամբ:

Մեր տեսակետից՝ միջքաղաքակրթական շփման ընթացքում համաձայնային–հակամարտային ընտրության հիմնական առանցքներն ընդգրկում են քրիստոնեական Արևմուտքի և մահմեդական Արևելքի փոխազդեցության հետևյալ համընդհանուր ասպարեզները.

– փոխազդեցություն արդիականացած Հյուսիսի և արդիականացող Հարավի միջև[125],

– փոխազդեցություն արևմտյան ժողովրդավարական պլուրալիզմի ու մահմեդական բռնակալական պլուրալիզմի միջև,

– փոխազդեցություն արևմտյան ազատական անձնապաշտության և արևելյան կոլեկտիվիստական հավասարապաշտության միջև:

[125] Խոսքը վերաբերում է քաղաքական գլոբալիստիկային բնորոշ կաղապարներին, որոնց միջոցով ներկայացվում են զարգացած (արևմտյան) և թերզարգացած (աֆրիկյան, ասիական ու հարավամերիկյան) երկրների դիմակայության կողմերը:

Լարվածության նշված բոլոր առանցքներով տեղի ունեցող միջքաղաքակրթական շփման վերլուծությունը հիմք է տալիս պնդելու, որ հույժ կարևոր է հաշվի առնել նաև միջքաղաքակրթական շփման սոցիալ-հոգեբանական կողմը, որովհետև այդ շփումը, ըստ էության, ակտիվացնում է զուգամիտման–տարամիտման վերը բերված կառուցվածքային-հաստատութենական արտահայտումները և դրանք փոխակերպում շփվող քաղաքակրթական հանրությունները ներկայացնող մարդկանց միջև հարաբերությունների համածայնության-հակամարտության: Քրիստոնեական ու մահմեդական պատմամշակութային կենսատարածքներում մարդու իրավունքների սոցիալ-հոգեբանական ընկալումների միջև նմանության–տարբերության գնահատումը քաղաքական հոգեբանության բավականաչափ բարդ պրոբլեմներից է: Իսկ քաղաքական պրակտիկայում այն կարող է հանդես գալ ինչպես համածայնային, այնպես էլ հակամարտային սցենարների ձևավորմանը և իրականացմանը նպաստող գործոն: Ահա թե ինչու մահմեդական պետություններում՝ անգամ դրանց ներքին ազգային իրավաքաղաքական համակարգում մարդու իրավունքների պաշտպանության հռչակվածության դեպքում, հարկ է լինում հաշվի առնել մահմեդականների այն սոցիալական դիրքորոշումը, ըստ որի՝ մարդու իրավունքներն ընկալվում են որպես արևմտյան ծագում ունեցող օտարածին գաղափար:

Այս հոգեբանական կոլիզիաները, դառնալով էթնոքաղաքականության բաղադրամաս, գործոն, պարտադրում են իրենց ուսումնասիրությունը չսահմանափակել ընդհանուր քաղաքագիտության խնդիրներով, այլ կատարել նաև էթնոքաղաքագիտության շրջանակում: Չէ՞ որ գործնականում բոլոր մահմեդական պետությունների սահմանադրություններում, այդ թվում և Աֆղանստանում, որտեղ հեղինակը ներգրավված դիտարկման եղանակով ուսումնասիրել է օրենսդրական-սահմանադրական գործընթացները, խոսվում է բոլոր քաղաքացիների իրավունքների հավասարության մասին: Բայց վերապահում է արվում, որ այդ նորմերը պետք է կիրառվեն ճշգրտորեն համածայն շարիաթի: Մինչդեռ հայտնի է, որ շարիաթը սահմանում է սեռերի անհավասարություն, այն կարող է վերաբերել նաև էթնոկրոնական փոքրամասնությունների իրավունքներին և ազատություններին և այլն: Միևնույն ժամանակ ենթադրվում է, որ ուղղադավան մահմեդականը, լինելով իսլամական ժառանգության կրողը, իր հոգեբանության մեջ ներակայորեն պահպանում է իսլամական հասարակության մեջ «գյավուրի» զբաղեցրած տեղի մասին Ղուրանի նորմերը, «Սբ. Գրքի մարդու» հետ ումմայի անդամի հրահանգված փոխհարաբերությունների նորմը:

Ի հակադրումն դրա՝ մահմեդականը, լինելով ժողովրդավարական արևմտյան պետության քաղաքացի, ներգրավվում է համընդհանուր ընտրությունների, ցանկացած՝ ռասայական, էթնիկական, կրոնական և այլ

ձևի խտրականության հաղթահարման ու նույնիսկ դրա դեմ պայքարի համակարգի մեջ: Ստանալով քաղաքացիություն՝ նա նաև հնարավորություն է ստանում ներգրավվելու կուսակցությունների ու գաղափարների պլյուրալիստական մրցակցության, քաղաքական ու դատական իշխանությունների նկատմամբ մասնակցային վերահսկողության մեջ: Անշուշտ, այստեղ ևս մահմեդականին ուղեկցում են սոցիալ-հոգեբանական անհարմարավետությունն ու դիստրեսները, սակայն դա տեղի է ունենում քաղաքացիական իրավունքների և հասարակության նկատմամբ պարտականությունների որակապես այլ հարաբերակցության պայմաններում:

Մշակութաբան Ա. Վ. Ժուրավսկին քրիստոնեության ու մահմեդականության միջև երկխոսության սոցիոմշակութային պրոբլեմների վերաբերյալ իր ակնարկներում միանգամայն տեղին մեջբերում է անում Ռ. Սմիթից, որը կոռեկտ և միևնույն ժամանակ ճշգրիտ կերպով է բնութագրում միջքաղաքակրթական շփման կողմերի մեր դիտարկած սոցիալ-հոգեբանական անհամապատասխանության առանձնահատկությունները: Ռ. Սմիթը այդ հոգեբանության բնորոշումը ձևակերպում է այսպես. «Մահմեդական աշխարհում մահմեդականները ոչ մի տեղ պարզապես չեն ընկալում, որ իրենց ազգությանը պատկանող ոչ մահմեդականը կարող է լինել «մեզնից մեկը»: Շատ դեպքերում դա առաջ է բերում ոչ մահմեդականների լուրջ անհանգստությունը: Մահմեդականների մեծ մասը չի հասկանում իր երկրի ոչ մահմեդական փոքրամասնության վիճակի անապահովությունն ու անհանգստությունը: Նրանցից ոմանք պարզապես չեն տեսնում նման պրոբլեմ. նրանք մտածել անգամ չեն կարող, որ ոչ մահմեդականները կարող են համաձայն լինել իրենց հետ կազմելու մեկ հանրություն: Մյուսները անկեղծորեն կարծում են, որ «իսլամը փոքրամասնություններին վերաբերվում է աստվածահաճո արդար կերպով»»[126]:

Վերադառնալով մահմեդական երկրում ոչ մահմեդականի համաձայնային գոյակցության սոցիալական հոգեբանությանը՝ բերենք մի հատված Ղուրանի 9-րդ՝ Ապաշխարանք, Սուրահից, որով նորմատիվորեն սահմանվում են «իսլամի տանը» միջկրոնական համաձայնության կողմերի առնվազն հոգեբանական անհավասարության սահմանները. «Պատերազմեցէք նրանց հետ, որ չեն հաւատում Աստծուն եւ ոչ էլ վերջին օրւան եւ պիղծ չեն համարում Աստծոյ եւ նրա մարգարէի պիղծ հրատարակածը եւ արդար դատաստան չեն անում նրանցից, որ գիրք է տրւած նրանց, մինչեւ որ ձեռքով հարկը տան եւ ինք նւաստացած լինեն»[127]:

[126] *W. C. Smith.* Islam in modern society. L., 1963. P. 86 (բերվում է ըստ *А. В. Журавский.* Христианство и ислам. Социокультурные проблемы диалога. М., 1990, с. 109):

[127] Ղուրան (թարգմանեց Արաբերէնից Հայերէնի ԱԲՐ. Ամիրխանեանց): Վառնա, 1909, էջ 172 – 173:

Եվ այսպես. կարգավիճակով արտոնյալության սոցիոլոգիական հոգեբանությունը, որը հրահանգված է սուրբ Ղուրանով ու դարեր շարունակ կարգավորվել է շարիաթի նորմերով, սովորական մահմեդական գիտակցության մեջ ձևավորել է հաստատուն սոցիալական կողմնորոշումներ՝ հուդայականների ու քրիստոնյաների կողմից իրենց ստորադաս, իրավունքների տեսակետից թերարժեք դրության ընդունման նորմի տեսակետից: Նման շարունակական սոցիալ-հոգեբանական ճնշումը, լինելով «Սբ. Գրքի մարդկանց» հետ «օրինական խաղաղության» ավանդական պատկերի կարևոր հատկանիշ, իրականում կարող է մահմեդականների կողմից չընկալվել որպես փոխըմբռնման ու գոյակցության համար խոչընդոտ: Իհարկե, առաջին համաշխարհային պատերազմից հետո անցած տարիներին միջքաղաքակրթական շփման կողմերի՝ «բարեկամի» ու «թշնամու» կերպարների ընկալումներում տեղի են ունեցել էական փոփոխություններ: Թուրքիայի և մեծ տերությունների իրավաժառանգների էթնոքաղաքականությունը այսօր ցեղասպանության ձևով չի բացահայտում այլակրոնների «կյանքի իրավունքի» տարրըմբռնման ավերիչ ներուժը: Պարզագունացում կլիներ այժմեականություն տեղափոխել անգեն ոչ մահմեդականի հետ զինված մահմեդական ֆեոդալի «բարեկամության» կանոններն ու սովորույթները, ըստ որոնց՝ ոչ մահմեդականը միակողմանի կարգով պարտավոր էր ամեն տարի իր հաշվին մի քանի ամիս ընդունել արոտավայրերից կամ ոչ հարմար ձմեռանոցներից իջած ամբողջ տոհմը, իսկ երբեմն նաև ցեղը*: «Բարեկամության» նման՝ շարիաթի տեսակետից դասական, ձևերի դրսևորումներով, իրավահարաբերությունների իրացման կոնկրետ սկզբունքների ու իրավիճակների հիման վրա էլ հենց վերարտադրվում էր իրական շփման վերը դիտարկված սոցիալական հոգեբանությունը:

Սակայն պետք է շեշտել, որ այստեղ մենք խոսում ենք Արևմուտքի մարդու տեսակետից հակահիրավական ու անարդարացի և հավատացյալ մահմեդականի համար բնական գոյակցության տարբեր վերափոխված ձևերի մասին: Միջքաղաքակրթական շփման յուրաքանչյուր կոնկրետ դեպքում կողմերի համաձայնության կամ հակամարտության հնարավորությունները հասկանալու համար, մեր կարծիքով, օգտակար է իմանալ «իսլամի տան» և «պատերազմի տան» միջև շարիաթով նախատեսված և իրականում առկա տարածությունը:

* Խոսքը չի վերաբերում Արևելքի ինչպես մահմեդականների, այնպես էլ քրիստոնյաների համար ավանդական հյուրընկալությանը, որը կարգավորվում էր սովորութային իրավունքի նորմերով և ենթադրում էր շփման կողմերի միջև «օջախի տիրոջ» ու «հյուրի» դերերի ազատ ընտրության իրավահավասար փոխհարաբերություններ:

* * *

Եվ այսպես. հետազոտության երեք գլուխներում ըստ դրված խնդիրների մշակվել են արդիականացման ընթացքում շփվող անցումային էթնոսոցիալական համակարգերի քաղաքակրթական նույնականացման նկատմամբ հիմնական տեսական-մեթոդաբանական մոտեցումները:

Արդիականացած ու արդիականացող հասարակությունների իրավաքաղաքական հաստատությունների զուգամիտման–տարամիտման արժեքակողմնորոշումային հիմքերի դիտարկումը որպես քաղաքակրթական համակարգաստեղծ պարամետրի հնարավորություն է տալիս վերլուծելու միջքաղաքակրթական շփումների դինամիկան: Ընդսմին վերլուծությունն ուղեկցվում է համաձայնային–հակամարտային նույնականացմամբ, ինչի շնորհիվ ավելի կոնկրետ ձևով են իմաստավորվում մարդու իրավունքների պաշտպանության պրոբլեմի նկատմամբ հիմնական մոտեցումները:

Հեղինակի դիրքորոշումը, լինելով ավելի լայն քաղաքակրթական մոտեցման կոնկրետացում, ուրվագծում է «արմատականության» և «աշխարհականության» միջավայրում քրիստոնեական ու մահմեդական պետությունների միջև տեղի ունեցող շփումների ազգային անվտանգության էթնոքաղաքականության գիտական մշակման հիմնական ուղենիշները: Հաստատվում է նաև իրենց քաղաքակրթական որակներով տարբեր այդ հասարակությունների քաղաքական կազմակերպվածքի այնպիսի մոդելների ուսումնասիրության արգասաբերությունը, ինչպիսիք են «ժողովրդավարական (բազմիշխան) պլյուրալիզմը» և «բռնակալական պլյուրալիզմը»:

Այստեղ նաև փորձ է արվում ի մի բերելու որոշ բարդություններ՝ կապված համաձայնային տեխնոլոգիաների արդյունավետ կիրառման սահմանների գնահատման հետ:

Համաձայնային տեխնոլոգիաների ապահովումը պահանջում է զգալի ժամանակ, որն անհրաժեշտ է կոնկրետ էթնոքաղաքական ճգնաժամների համաձայնային հնարավորությունների բավարար բազմազանությունն ի հայտ բերելու, ինչպես նաև հակամարտային-համաձայնային շփման կողմերի կարծիքները պարզելու, դիմակայության բոլոր մասնակիցների շահերն ու առաջարկությունները փոխհամաձայնեցնելու համար: Ժամանակի չափազանց սղության պարագայում անհապաղ որոշման ընդունում պահանջող հակամարտային գործընթացների սրընթաց, իսկ մի շարք դեպքերում՝ գերազանցապես տարերային, տուրբուլենտ զարգացման պայմաններում համաձայնային տեխնոլոգիաների կիրառումը կարող է լինել անհնարին:

Համաձայնային կարգավորման տեխնոլոգիան ենթադրում է էական ծախսեր՝ կապված դիրքորոշումների փոխհամաձայնեցման ընթացակարգերը արդյունավետ կապով ու տրանսպորտով, համաձայնության ձեռքբերման գործում շահագրգռված կողմերի տեսակետների վերաբերյալ տեղեկույթի հավաքման ու մշակման միջոցներով ապահովելու, բարձր որակավորում ունեցող փորձագետների ներգրավելու հետ:

Համաձայնային տեխնոլոգիաներն ըստ իրենց էության և իրացման ձևերի պահանջում են բարձր ճշգրտություն: Դա ենթադրում է կատարող փորձագետների մեծ իրազեկություն ու վարպետություն և ընթացակարգերի լրիվության ու հաջորդականության խիստ պահպանում: Այստեղ շատ կարևոր է նաև զգուշավորություն ցուցաբերել էթնոքաղաքական հաղորդակցման ընթացքում այնպիսի սյուժեների ու թեմաների արծարծման ժամանակ, որոնց վրա առճակատման ցանկացած կողմի էթնոքաղաքական ենթամշակույթում արգելանք է դրված:

Համաձայնային գործիքակազմը հատուկ պահանջներ է ներկայացնում կոնկրետ էթնոքաղաքական ճգնաժամային շփումների համաձայնային ներուժի հայտնաբերման և իրացման կոլեկտիվ ու անհատ սուբյեկտների հեղինակությանը: Ներգրավված սուբյեկտների անբիծ համբավի վերաբերյալ ամենաչնչին կասկածներն անգամ հղի են կարգավորման գործընթացի նկատմամբ վստահության սասանմամբ և նույնիսկ դրա լրիվ ձախողմամբ: Այդ ձախողումները հանգեցնում են ժամանակի ու ներդրված ռեսուրսների մեծ կորուստների, իսկ որոշ դեպքերում նաև տեսանելի ժամանակային հեռանկարում ու էթնոքաղաքական իրողությունների տեղայնացման տարածության մեջ հակամարտությունների լուծման շանսի անդառնալի կորստով:

Հեղինակի կարծիքով՝ ճգնաժամային էթնոքաղաքական շփումների համաձայնային իրացման միջոցների ու մոտեցումների կիրառելիության սահմանների այս ճշգրտումը կարող է էապես օգնել քաղաքակրթական վերլուծության տարբեր մակարդակներում համաձայնության–հակամարտության պրոբլեմների մշակման մեթոդաբանական, տեսական ու գործիքային ուղղությունների հեռանկարայնության հետագա ճշգրտմանը:

Հեղինակը չի հավակնում այն եզրակացությունների անառարկելիությանը, որոնց հանգել է էթնոքաղաքական համաձայնության–հակամարտության երևույթի՝ վերջին տասը տարիներին կատարած հետազոտության արդյունքներով: Իր առջև դնելով հետազոտական խնդիր՝ հեղինակը նախատեսում էր առաջին հերթին ցույց տալ այն հասարակագիտական թափուր տեղը պատեհաժամ լրացման կարևորությունը, որը դեռ վերջերս մենաշնորհային կերպով զբաղեցնում էր «ՀԿ(բ)Կ–

ԽՄԿԿ ազգային քաղաքականության» դոկտրինալ-գաղափարախոսական տեսությունը: Նա նպատակ ուներ նաև էթնոքաղաքական ճգնաժամային շփումների քաղաքակրթական վերլուծության պրոբլեմները դարձնել կառուցողական գիտական քննարկումների առարկա:

Ավարտական գլխում համաձայնության ձեռքբերման և պրոբլեմները, և հնարավորությունները, և բարդությունները ավելի հանգամանորեն կքննարկվեն աֆղանական պատերազմի ողբերգական փորձի օրինակով:

Գլուխ 4

ՄԻՋՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ՇՓՄԱՆ ՀԱԿԱՄԱՐՏԱՅԻՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ

(Աֆղանստանում ծավալված ջիհադի օրինակով)

Միջքաղաքակրթական շփման հակամարտային դինամիկայի քննարկման լիարժեքությունն ապահովելու համար մենք ձեռնարկում ենք «անհավատների» աշխարհի հետ մահմեդական ումմայի շփումներում հակամարտության առավել ցայտունորեն արտահայտված ձևերից մեկի կոնկրետ-քաղաքագիտական վերլուծություն: Շեշտելով ջիհադի ձև ընդունած հակամարտության պրոբլեմի ուսումնասիրության համար քաղաքակրթական համակարգերի զուգամիտության – տարամիտության վերաբերյալ հեղինակի առաջարկած հայեցակարգի կիրառելիության հանգամանքը՝ մենք կփորձենք ցույց տալ վերը շարադրված մեթոդաբանական դատողությունների հետազոտական գործիքայնությունը:

Այս կապակցությամբ նպատակահարմար է թվում մեր հետազոտությունն ավարտել միջքաղաքակրթական շփման հակամարտային սցենարներից մեկի՝ ջիհադի (սրբազան պատերազմի) կոնկրետ էթնոքաղաքագիտական վերլուծությամբ, որը կատարվում է Աֆղանստանում տեղի ունեցած պատերազմի ընթացքի՝ 1982 – 1983 թթ. հեղինակի ներգրավված դիտարկման փորձի հիման վրա:

Անհրաժեշտ է տարբերակել ջիհադի դասական սահմանումը իսլամական աշխարհի միջազգային հարաբերությունների համատեքստում և այդ հասկացության տարբեր մեկնաբանությունները մահմեդական քաղաքակրթական կենսատարածքի ներսում:

Ջիհադի արևմտյան մեկնակերպը, որն ընդունված է որպես դասական սահմանում, իր «Իսլամը և գաղութատիրությունը: Ջիհադի դոկտրինը ժամանակակից պատմության մեջ» գրքում բերում է Ռ. Փիտերսը: Այն սահմանվում է որպես «առավելագույն ջանքերի գործադրում... «անհավատների» դեմ մղվող պատերազմում՝ նրանց ռազմական հարվածներ հասցնելու, նրանց սեփականությունը բռնագրավելու, նրանց տաճարներն ավերելու, նրանց իդեալները պսակազերծելու և այլ նմանատիպ միջոցներով»[128]:

«Ջիհադ» հասկացության էությունը պարզելու համար մենք կփորձենք որոշել դիտարկվող երևույթի բովանդակության մեր կարծիքով հիմնա-

[128] *R. Peters.* Islam and colonialism. The doctrine of jihad in modern history. N. Y., 1979, P. 10.

կան ատրիբուտները: Խոսքը վերաբերում է ջիհադի նպատակները, նրա սուբյեկտներն ու օբյեկտները, ինչպես նաև տեղայնացումը պարզելուն: Ջիհադի բովանդակության և արտահայտման ձևերի հետագա կոնկրետացումը կկատարվի մի նյութի հիման վրա, որը ներկայացնում է ԱԺՀ կենտրոնական ռեժիմի դեմ, ինչպես նաև՝ ԽՍՀՄ-ի դեմ սրբազան պատերազմ հայտարարած աֆղանական զինված ընդդիմության[129] ռազմաքաղաքական գործունեությունը: Ընդսմին ԽՍՀՄ-ը մինչև 1973 թ. համաձայնային միջքաղաքակրթական շփումներ է ունեցել մահմեդական Աֆղանստանի Թագավորության, իսկ մինչև 1978 թ. Սաուրյան հեղափոխությունը՝ մահմեդական Աֆղանստանի Հանրապետության հետ:

Ժամանակակից արտաքին ու ներքին քաղաքական հարաբերությունների համակարգում ջիհադի էությունը պարզելու համար կարևոր է այդ պրոբլեմի պատմաքաղաքագիտական կողմի դիտարկումը մահմեդական աշխարհի ներքաղաքակրթական և միջքաղաքակրթական շփումների համատեքստում:

§ 1. Ջիհադի էթնոքաղաքագիտության ճեպագիր. Աֆղանստանում «սրբազան պատերազմի» էթնոքաղաքականությունը

Մասնագետների կարծիքով՝ ջիհադի մեկնության դինամիկայի պատմական հիմքում դրված է իսլամի գոյության ու պաշտամունքի դեմ ուղղված սպառնալիքի հետմղման սկզբունքը, որը ծնավորվել է իրենց գոյության ու հաստատման համար առաջին մահմեդական համայնքների մղած պայքարի առասպելական շրջանում: Այլ կերպ ասած՝ ումմայի առավելագույն մոբիլիզացման կոչի պատմական բացատրության էությունն է Ալլահի թշնամիների սպառնալիքի աղբյուր հանդիսացող «պատերազմի տան» գրավումը՝ այդ սպառնալիքը վերացնելու և «պատերազմի տունը» «իսլամի տան» կազմում ներառելու նպատակով: Այսպիսով՝ մահմեդական պետությունները «սրբազան պատերազմի» ակունքներում դնում են իսլամի՝ որպես գաղափարախոսության և ումմայի՝ որպես նրա կրողի ու պաշտպանի դեմ ագրեսիային հակազդեցության «պարտադրված անհրաժեշտության» դրույթը: Ջիհադի՝ որպես ումմայի պատմականորեն անհրաժեշտ ինքնապաշտպանության պատմաքաղաքագիտական հիմնավորման տվյալ մեկնակերպը այժմ մահմեդական քաղաքագետներին «հնարավորություն» է տալիս ջիհադը դիտարկելու ագրեսիայի սահմանման ժամանակակից միջազգային իրավական նորմերի

[129] Տես *В. Н. Спольников.* Афганистан: исламская оппозиция. Истоки и цели. М., 1990:

համակարգում, մշակելու դրա հետմղման կազմակերպման քաղաքական դոկտրին և գործնական մեխանիզմներ[130]:

Միջազգային հարաբերությունների ժամանակակից մահմեդական հայեցակարգը ջիհադի նպատակադրումը հիմնում է իսլամական համայնքի դեմ ուղղված ագրեսիայի հետմղման սկզբունքի վրա, այսինքն՝ արդարության վերականգնում, որի խախտումը վնաս էր պատճառել մահմեդականներին, մահմեդական պաշտամունքի անկաշկանդ կատարման ապահովում, խաղաղության ու անվտանգության հաստատում:

Ն. Ժդանովն ու Ա. Իգնատենկոն, որոնք ուսումնասիրել են ջիհադի բովանդակությունն ու ձևերը, տարբերակում են դրա մի քանի ձևեր. ընդդեմ Ալլահի թշնամիների, ընդդեմ իսլամական պետության սահմանների անձեռնմխելիությունը խախտելու փորձ անողների, ընդդեմ հավատուրացների, կեղեքիչների ու բռնակալների, ընդդեմ «հարկեր մուծելուց հրաժարվող ավազակների»[131]: Այստեղից հետևում է, որ ջիհադ կարող է հայտարարվել ոչ միայն մահմեդական պետությունից դուրս, այլև ներսում: Ջիհադի օբյեկտներ կարող են լինել պետությունները, հանրույթներն ու խմբավորումները, կազմակերպություններն ու առանձին ֆիզիկական անձինք: Բերված դասակարգումից կարելի է անել այն եզրակացությունը, որ չի բացառվում ջիհադը նաև մահմեդական պետության դեմ, եթե վերջինիս դիրքորոշումը որակվում է որպես «ոչ աստվածահաճո» (Իրանի՝ նորերս տեղի ունեցած պատերազմը Իրաքի դեմ): Չի բացառվում նաև ջիհադի մեթոդներով պայքարը առանձին իշխանական կամ ոչ կառավարական կազմակերպությունների դեմ և՛ տվյալ պետության ներսում («Հիզբոլահ»–«Ամալ» Լիբանանում, ԱԱԺԿ–ԱԻԿ, ԱԻԸ և այլ ընդդիմադիր կազմակերպություններ Աֆղանստանում և այլն), և՛ այն պետությունների տարածքում, որոնք չեն պատերազմում ջիհադի սուբյեկտի գտնվելու մահմեդական պետության հետ (պաղեստինյան կազմակերպությունների ահաբեկչական գործողություններն ընդդեմ իսրայելական գործիչների՝ աշխարհի տարբեր երկրների տարածքներում):

Ջիհադի սուբյեկտ կարող են լինել առանձին մահմեդական պետություններ, առանձին կառավարական և ոչ կառավարական կազմակերպություններ, ինչպես նաև խմբավորումներ:

Ջիհադ կարող է հայտարարել միայն հեղինակավոր մահմեդական գործիչը՝ ումմայի առջև դրա հիմնավոր (Ղուրանի վկայակոչմամբ) փաստարկման դեպքում:

Աֆղանստանում մղված պատերազմի յուրահատկությունը, իհարկե, ունի

[130] Տես *Э. И. Скакунов.* Самооборона в международном праве. М., 1973, с. 176:

[131] Տես *Ն. Վ. Ժդանով, Ա. Ա. Իգնատենկո,* Նշ. աշխ., էջ 214 – 237:

շատ ավելի «հին արմատներ», քան տասը տարին, որոնց ընթացքում ընդդիմությունը ԱԱԺԿ-ի ռեժիմի դեմ ծավալել էր ներքին զինված քաղաքացիական հակամարտություն, որը ԱԺՀ տարածք խորհրդային զորքերի մտնելուց հետո ստացավ միջազգային բնույթ:

1979 թվականին ի սատարումն ԱԺՀ կառավարող ռեժիմի՝ խորհրդային զորային թվակազմի մուտք գործելու հետևանքով գործարկվեցին միջինարևելյան տարածաշրջանում խախտված ռազմական ու քաղաքական ստատուս քվոյի հավասարակշռման մեխանիզմները: ԱՄՆ-ը և նրա բարեկամ պետությունները, ինչպես նաև մի շարք իսլամական պետություններ սկսեցին օգնություն ցույց տալ աֆղանական ընդդիմությանը՝ տեղի ունեցած ագրեսիային նրա ռազմական ու ռազմաքաղաքական դիմակայության գործում: Միևնույն ժամանակ, գերտերությունների գլխավորած բլոկների ձևով հանդես եկող ուժային կենտրոնների երկբևեռ համակարգի առանձնահատկությունները, տարածաշրջանային հակամարտության համընդհանրացման ու միջուկային պատերազմի սանձազերծման սպառնալիքի պատճառով, բացառեցին հակամարտության մեջ աֆղանական զինված ընդդիմության կողմում ԱՄՆ-ի և նրա դաշնակիցների ուղղակի ներգրավումը:

Մահմեդական աշխարհի որոշ երկրների ու կազմակերպությունների, ինչպես նաև արևմտյան երկրների ոչ կառավարական կազմակերպությունների միջոցով ԱՄՆ-ի միջնորդավորված մասնակցությունը խորհրդային կողմի հետ հակամարտությանը ԽՍՀՄ-ում որակվեց որպես «չհայտարարված պատերազմ Աֆղանստանի շուրջ»: Այսպիսով՝ թե ԱՄՆ-ում, թե ԽՍՀՄ-ում ծավալված քարոզարշավները նպատակաուղղված էին իրադարձությունները ներկայացնելու որպես հակադիր գերտերության ուղղակի կամ միջնորդավորված ագրեսիայի հետևանքով ծագած տարածաշրջանային միջազգային հակամարտություն:

Մեր առջև չդնելով այդ միջազգային իրավական, քաղաքական ու ռազմական պրոբլեմի հատուկ քննարկման խնդիր՝ նշենք, որ տվյալ դեպքում վրադրվեցին և հակասությունների բարդ կծիկ կազմելով միահյուսվեցին բազմամակարդակ միջքաղաքակրթական շփման հակամարտային կարողությունները: Բազմամակարդակ քաղաքակրթական վերլուծության մեթոդաբանությունը, որը մենք առաջարկել էինք նախորդ բաժիններում, հնարավորություն է տալիս Աֆղանական հակամարտության օրինակով ի հայտ բերելու միջքաղաքակրթական հակամարտային մոդելների բոլոր հիմնական մակարդակային տարբերակների առկայությունը:

Դիտարկվող կոնկրետ նյութի վրա մշակված վերլուծական սխեմայի «վրադրումը» հնարավորություն է տալիս պարզելու, որ առկա էին՝

– համընդհանուր միջքաղաքակրթական շփում երկու՝ արևմտյան և կոմունիստական, «գաղափարախոսական քաղաքակրթությունների» միջև միջնորդավորված հակամարտության ձևով,

– կենսատարածքային-քաղաքակրթական հակամարտություն մահմեդական քաղաքակրթական շրջանը և աթեիստական (անաստված) կոմունիստական կենսատարածքը ներկայացնող երկրների խմբերի միջև: Միջքաղաքակրթական հակամարտության տվյալ չափումը պարունակում է նաև քրիստոնեական (Ռուսաստանի ռուսներ և այլ քրիստոնյաներ՝ ավանդական-պատմական ընկալմամբ) և մահմեդական քաղաքակրթական կենսատարածքների միջև վերափոխված ձևի հակամարտություն,

– ազգային-քաղաքակրթական հակամարտություն, որը զինված աֆղանական ընդդիմությունը ծավալել էր ընդդեմ ԱԱԺԿ «անհավատ» ռեժիմի: Այստեղ հակամարտության կառուցվածքի մեջ ներակայված է մահմեդական պետությունների մասնակցությունը աֆղանական իսլամական ընդդիմության կողմում,

– ներքաղաքակրթական հակամարտություն միջէթնիկական մակարդակով՝ Աֆղանստանի ցեղերի միջև,

– արյան վրեժի ներէթնիկական հակամարտություն, որը ծավալվել էր «ադաթների» (սովորութային իրավունքի նորմերի) համակարգով կարգավորվող աֆղանական «վենդետայի» (արյան վրեժխնդրության) կողմերի, կլանների, տոհմերի և ընտանիքների միջև:

Այսպիսով՝ Աֆղանստանում տեղի ունեցած պատերազմի համակարգը կարող է ներկայացված լինել հինգ մակարդակի քաղաքական-գաղափարախոսական, ռազմաքաղաքական ու բուն ռազմական հակամարտությունների բարդ փոխազդեցության միջոցով:

Աֆղանստանում պատերազմը («ջանգ») մշտապես առկա է միջցեղային զինված հակամարտությունների և արյան միջկլանային վրեժխնդրության ձևով ու դարձել է ազգային-քաղաքակրթական ինքնության ատրիբուտ: Տվյալ մակարդակի պատերազմները սակավ շարժունակ են և ծավալվում են ցեղային կամ կլանային ինքնության շրջանակով սահմանագծված որոշակի տարածքում: Այստեղ ռազմական հակամարտությունը կարգավորվում է ոչ միայն ու ոչ այնքան շարիաթով, որքան ադաթների սովորութաիրավական մեխանիզմներով: Օրինակ՝ փուշթունական ցեղերի կենսատարածքում միջցեղային պատերազմի կարգավորումը կատարվում է գերազանցապես ադաթների «փաշտունվալայ» (փուշթունի պատվի վարքականոն) համակարգով: Այս մակարդակում մղվող պատերազմն առաջին հերթին իշխանության ուժի, ռազմական կազմա-

կերպվածքի, մարդկային, տարածքային ու ֆինանսական ռեսուրսների ցուցադրում է: Ադաթների հանգամանորեն մշակված կանոնակարգերին և ընդհանուր շարիաթային նորմերին համապատասխան՝ միջցեղային ու միջկլանային պատերազմը մղվում է անընդհատ բանակցային գործընթացների ուղեկցմամբ:

Դրա հետևանքով այս մակարդակների պատերազմների յուրահատկությունն է ներքաղաքակրթական շփումների համածայնային-հակամարտային սցենարների մեծ շարժունությունը: Առավել հաճախ մարտական ձեռնարկումների ու բանակցությունների նպատակն է լինում ուժի և հեղինակության պարտադրումը: Սովորաբար նման պատերազմներում հակառակորդի զանգվածային ոչնչացում չի դիտվում: Ինչպես նշում են աֆղաններն իրենք, «սպանում են որոշակի մարդկանց, որոնց պետք է սպանել»: Արյան վրեժխնդրության ընթացքում տվյալ սկզբունքն իրագործվում է հատուկ ճշտապահությամբ:

Այս պատերազմների կարգավորման գործում առանձնակի դեր ունի ռազմական գործողությունները «արյան գնի»՝ «ղեյմաթ-ե խուն»-ի պայմանավորված վճարումներով փոխարինելու մեխանիզմը: Ցեղերի ու կլանների միջև խաղաղության յուրահատկություններն են և՛ այն, որ տղամարդիկ մշտապես կրում են հրազեն ու սառը զենք, և՛ նրանց՝ որպես հավասար իրավունքի ինչպես անհատական, այնպես էլ կոլեկտիվ սուբյեկտների ու օբյեկտների փոխհարաբերությունների վերարտադրումը «թշնամանքի» և «հյուրընկալության» վարքականոնների միջոցով: Ընդսմին այդ փոխհարաբերությունները փոխհատուցման պարտավորության անկասելիության հետևանքով տոգորված են հոգեբանական լարվածությամբ:

Մեր դասակարգման մեջ պատերազմը՝ որպես ջիհադ, ներկայացված է Աֆղանստանում տեղի ունեցած հակամարտությունների կենսատարածքային-քաղաքակրթական և ազգային մակարդակներում: Ջիհադի ընդհանուր հատկությունների վերլուծությունը լրացնելով դրա կարգավորման կոնկրետ քաղաքագիտությամբ՝ հարկ ենք համարում նշել, որ տվյալ քաղաքակրթական մակարդակի նորմատիվային և արժեքային հիմքը արմատապես տարբերվում է ցեղային ու կլանային ինքնության բովանդակությունից և մակարդակից: «Սրբազան պատերազմը» իր բովանդակությամբ ավելի բարձր է կանգնած, քան ցեղային մակարդակի տեղային արժեքային կողմնորոշումները, և «իսլամի մաքրության» կոչի հետևանքով առանձնանում է կրոնագաղափարախոսական ուղղափառությամբ, իսկ երբեմն նաև կրոնական անհանդուրժողականության և անգամ մոլեռանդության դրսևորումներով:

Աֆղանստանում ջիհադը կարող է ներկայացվել հակամարտության մի քանի փոխլրացնող քաղաքական չափումներով.

– աֆղանական «քաֆիրների» ռեժիմի և իշխանությունների դեմ՝ ներքաղաքակրթական ազգային (քաղաքացիական ներքաղաքական հակամարտություն զինված ընդդիմության հետ) և միջպետական մակարդակներում՝ իսլամական քաղաքակրթական շրջանի երկրների ու միջազգային կազմակերպությունների մասնակցությամբ,

– միջքաղաքակրթական մակարդակով ԽՍՀՄ-ի՝ որպես անաստված զավթող երկրի, ինչպես նաև քրիստոնեական քաղաքակրթության արժեքները միջնորդավորված ձևով ներկայացնող կենսատարածքի և զինված աֆղանական ընդդիմության միասնական ճակատի, ինչպես նաև մահմեդական քաղաքակրթական շրջանի երկրների ու միջազգային կազմակերպությունների միջև:

Աֆղանստանում ջիհադի նշված իրավաքաղաքական բովանդակության շնորհիվ սրբազան պատերազմը ցեղերից վեր է կանգնած և իսլամի անունից՝ շարիաթի միջոցով հայտարարվում է ամբողջ «ումմային» ուղղված հրամայական դիմումով: Սակայն պետք է նշել այն ավանդական մոտեցման որոշակի սահմանափակությունը, ըստ որի ջիհադը մոդելավորվում է որպես բացառապես «ումմայի» կամ «մելաթի» մակարդակով մղվող պատերազմ: Պատերազմի էթնոցեղային կողմի նման անտեսումը աղքատացնում է «ջիհադ» երևույթի քաղաքակրթական բազմազանության ըմբռնումը:

Աֆղանստանում պատերազմի արմատական կերպափոխումը միջցեղային ու միջկլանային հակամարտությունների հարթությունից համատարած ջիհադի կատարվել է տեղային պատերազմի թուլացման, նվազման և ցեղերի միջև ժամանակավոր հաշտության հաստատման ձևով:

Միջցեղային ու միջկլանային մակարդակից ջիհադի անցնելու ժամանակ պատերազմի բովանդակության ու մասշտաբների փոփոխությունը նկատելի է ըստ մասնակիցների կազմի, սուրբ պատերազմն ուղեկցող հասկացությունների ու տերմինների փոփոխման: «Ջիհադ» հասկացությունը լիովին դուրս է մղում «ջանգ» կատեգորիան, ինչը արտացոլվում է նաև առօրյա օգտագործման բառանյութում:

Ի տարբերություն ջանգի իրագործողներից, ջիհադի սուբյեկտ է դառնում գինվորի (փուշթունի, տաջիկի, խազարացու կամ «դուռռանի», «գիլզայի» և այլ ցեղերի անդամների) փոխարեն «մոջահեդը»՝ իսլամի անաղարտության ու հաղթանակի համար «քաֆիրի» դեմ կռվող հավատքի մարտիկը: Պատերազմող խմբերի կողմից միջցեղային պատերազմների

տարածքի («կադմ») վերածված սահմանափակ տարածությունների փոխարեն սկսում է գործել «մելաթը», այն է՝ մահմեդական ազգն ու տարածությունը, որոնց հատուկ են զավթման վերընթաց կամ կորուստների վարընթաց բնորոշումները: Ընդսմին որպես զոհեր արդեն հանդես են գալիս ոչ թե սպանվածները («քոշտա»), այլ հանուն հավատի սուրբ նահատակները («շահիդ»):

Ինչպես վերը նշվել է, ջիհադի ընթացքում ներքաղաքակրթական և միջքաղաքակրթական հակամարտությունների կարգավորման մեջ առաջին՝ գերիշխող, պլան է մղվում դասական մահմեդական իրավունքի նորմերի համակարգը՝ շարիաթի մեխանիզմներով: Սակայն մոջահեդի զինվորական վարքում շարունակում է որոշակի տեղ գրավել սովորութաիրավական կարգավորումը՝ հիմնված զինվորի վարքականոնը պայմանավորող այնպիսի համամահմեդական սովորութաիրավական նորմերի («Ադաբա») և փուշթունների ադաթների («Փաշթունվալայ») համակարգի ընդհանուր հասկացությունների վրա, ինչպիսիք են «նամուսը» (պատիվ), «խեյսյաթը» (համբավ), «մերանան» (արիություն, խիզախություն) և այլն: Փաշթունվալայը հրահանգում է մարտադաշտում որոշակի նորմերի կատարում: Ահա գլխավոր պահանջներից մի քանիսը. մեջքով դեպի թշնամին չշրջվել, մարտադաշտում սպանվածներ չթողնել, թույլ չտալ, որ նրանց մարմինները ընկնեն թշնամու ձեռքը և ենթարկվեն ծանակումների, վիրավորներին անմիջապես ցույց տալ առաջին օգնություն և դուրս բերել կրակի տակից, առաջնորդներին՝ տեղում գնդակահարել ամենքին, ով կփախչի մարտադաշտից...

Որպես, մի կողմից, մահմեդական իրավունքի, մյուս կողմից, սովորույթների կարգավորիչ համակարգերի բովանդակային փոխկապվածության և հարաբերական ինքնավարության հեղինակավոր հաստատում կարող ենք բերել ֆրանսիացի իրավագետ Ռենե Դավիդի հետևյալ եզրակացությունը: Նրա կարծիքով՝ մահմեդական իրավունքը «սովորույթի նկատմամբ ունի այնպիսի դիրքորոշում, ինչպիսին է արևմտյան իրավունքի դիրքորոշումը հոժարական կամ հաշտ գործարքի վերապահման նկատմամբ... Իսլամը կարող էր աշխարհում տարածվել միայն այն պատճառով, որ հանդուրժողական դիրքորոշում էր պահպանում և չէր պահանջում զոհաբերել սովորույթով սրբագործված ապրելակերպը»[132]:

Այսպիսով՝ ջիհադի մոդելը, որը ներկայացված է սրբազան պատերազմի իսլամական տեսաբանների աշխատությունների հիման վրա[133], ան-

[132] *Р. Давид.* Приспособление мусульманского права к современному обществу. "Основные правовые системы современности". М., 1988, сс. 392 – 398:

[133] Տես *Башорми.* Требования мусульманской науки Афганистана. Издание "Национального фронта спасения Афганистана". Б. м., 1981 (пер. с дари); *Кази*

շուշտ արտացոլում է Աֆղանստանում ԽՍՀՄ զինված ուժեր մտցվելուց հետո ծավալված զինված հակամարտության կրոնաքաղաքական կողմերը: Սակայն տվյալ մոդելով սրբազան պատերազմի թատերաբեմ են դիտվում սոսկ «ումմայի» և «մելաթի» տեղաբաշխման սահմանները՝ որպես միասնական տարածություն, որը կառուցավորված չէ ցեղերի կյանքի և նրանց միջև պատերազմի սովորութաիրավական կանոնակարգման տրամաբանությամբ: Տվյալ մոդելի սահմանափակումը միայն վերցեղային կրոնական պատերազմի սահմաններով ուսումնասիրությունից դուրս է թողնում ցեղերի՝ ադաթների համակարգով կարգավորվող ռազմական էթնոքաղաքականության և էթնոհոգեբանության հարուստ աշխարհը: Դա հիմք է տալիս պնդելու, որ միջցեղային պատերազմից ջիհադի գործնականում լիովին տարանջատվածության հայեցակարգը Աֆղանստանում տեղի ունեցած ռազմական հակամարտության էթնոկրոնական և էթնոքաղաքական երևույթի ռեալ ամբողջականության բավական պարզունակ մոդել է:

Բազմամակարդակ քաղաքակրթական վերլուծության մեթոդաբանությունը, որն առաջարկվել էր տվյալ հետազոտության ընդհանուր-տեսական բաժիններում, հնարավորություն է տալիս ջիհադի և իսլամական մոդելի, և դրա արևմտյան մեկնաբանությունը որոշակի չափով լրացնելու այն էական առանձնահատկություններով, որոնք բնորոշ են միջքաղաքակրթական և ներքաղաքակրթական շփումներին պատերազմի երկու՝ ինչպես կենսատարածքային-քաղաքակրթական ու ազգային, այնպես էլ շարունակական միջցեղային պատերազմի՝ ջանգի էթնոքաղաքական յուրահատկության մակարդակներում:

§ 2. Կիրառական էթնոքաղաքագիտություն. մեթոդական գործիքակազմի հարցեր

Աֆղանստանում ջիհադի էթնոքաղաքագիտական վերլուծության հետագա կոնկրետացումը մենք կնպատակաուղղենք այն քաղաքագիտական տեսանկյունների կիրառական քննարկմանը, որոնց միջոցով հայտնաբերվում են ջիհադի միասնական համակարգում կրոնակենսատարած-

Шахид Гази Абдулкадыр Абдулварис аль-Кашгари. Догматы о необходимости. Дамаск, 1971 (пер. с дари); *Гульбеддин Хекматьяр.* Бог говорит: создавайте исламское государство. Текст выступления перед племенами Афганистана. Б. м., 1359 г. Хиджры (пер. с пушту).

Վկայակոչումներում б. м. և б. г. տառերը նշանակում են, համապատասխանաբար, «առանց հրատարակության տեղի նշման» և «առանց հրատարակության տարեթվի նշման»: Աֆղանստանում ջիհադի յուրահատկության հետ կապված՝ զինված ընդդիմության շատ հրատարակություններում գաղտնապահության նկատառումով չեն նշված լույսընծայման տեղը, երբեմն և ժամանակը:

քային ու կրոնաազգային, ինչպես նաև էթնոցեղային պատերազմի քաղաքակրթական տարրերի համադրման առանձնահատկությունները:

Կիրառական քաղաքագիտության պրոբլեմներին նվիրված նյութերը, թերևս, առավել մեծ չափով են կրում այն ժամանակ տեղի ունեցած իրադարձությունների կնիքը, երբ ԽՍՀՄ-ն Աֆղանստանում իր ռազմական ներկայությունը մեկնաբանում էր որպես հարևան երկրի հարկադրված արձագանք «համաշխարհային իմպերիալիզմի և իսլամական պետությունների հետադիմական ռեժիմների կողմից Աֆղանստանի խաղաղ բնակչության դեմ սանձազերծված չհայտարարված պատերազմին»: Ժամերի պահանջներն ու ավանդույթները ենթադրում էին վերլուծական աշխատանքի կազմակերպում՝ ըստ «աֆղանական պատերազմի շուրջ» ԽՄԿԿ ունեցած որոշակի գաղափարախոսական դիրքորոշումների: Դրանով էր պայմանավորված նաև այն հասկացութային ու տերմինաբանական ապարատի յուրահատկությունը, որն այդ ժամանակ սպասարկում էր կիրառական էթնոքաղաքագիտության խնդիրները Աֆղանստանում:

Հեղինակային նյութի մեկ այլ, ոչ պակաս կարևոր առանձնահատկությունն է աֆղանական հակամարտության հարցում 1982 թվականին Յու. Վ. Անդրոպովի իշխանության գալուց հետո ուրվանկարվող ԽՍՀՄ նոր քաղաքական ուղեգծի արտացոլումը: Կարծում ենք, որ առաջարկվող վերլուծությունը կօգնի մասնագետներին լրացնելու ԽՄԿԿ կենտկոմի Գլխավոր քարտուղարի պաշտոնում ՊԱԿ-ի նախկին ղեկավարի վարած ոչ միանշանակ գործունեության մասին իրենց պատկերացումները: Փաստերը, այդ թվում՝ Աժհ-ում գործող խորհրդային քաղաքական խորհրդականների և վերլուծաբանների խմբի կազմում հեղինակի կողմից դիտարկված փաստերը, վկայում են, որ Յու. Անդրոպովի օրոք սկզբնավորվեց Աֆղանստանի հարցում ԽՍՀՄ ռազմաքաղաքական դոկտրինի քննադատական վերաիմաստավորումը: Աֆղանստանում, ինչպես այն ժամանակ ասվում էր, հակահեղափոխության դեմ խորհրդային և աֆղանական կանոնավոր բանակների մղած համատարած պատերազմի շարունակման պարագայում ծավալվեց մեծ վերլուծական աշխատանք՝ ուղղված հակառակորդի օբյեկտիվ ուսումնասիրմանը, Աժհ-ում տիրող ռեալ իրադրության վերաբերյալ նախկին քաղաքական, ռազմական, ազգաբանական գնահատումների, առաջարկությունների և կանխատեսումների ճշգրտմանը: Լայն հասարակությանն անհայտ այս սխալների որոնումները վերջին հաշվով միտված էին դասեր քաղելուն՝ պաշտոնական ուղեգծի ծանրության կենտրոնը աֆղանական պրոբլեմի ռազմական լուծման ոլորտից տեղափոխելով քաղաքական, դիվանագիտական կարգավորման ոլորտ, իսկ հետագայում նաև հակամարտությունը լուծելուն՝ Աժհ-ից խորհրդային զորային թվակազմի դուրսբերման պայմանով:

Քանի որ երկու կողմերն էլ իրար դեմ ռազմական գործողությունները վարում էին մի առանձնակի դաժանությամբ, ապա աֆղանական հասարակության մեջ ազգային համերաշխության հաստատման հնարավոր ուղիների ամենանախնական զգուշավոր որոնումը 1980-ական թվականների սկզբին կատարում էին նեղ խմբով մասնագետներ: 1982 թվականի վերջին սկսեցին ավելի ակտիվ կերպով մշակվել զինված ընդդիմությունը Աժհ իշխանությունների հետ համագործակցության մղելու պրոբլեմները*: Հեղինակին բախտ վիճակվեց տվյալ պրոբլեմների մշակման ժամանակ որպես քաղաքագետ-վերլուծաբանի համագործակցել հատուկ քաղաքագիտական, երկրագիտական ու կրոնական պատրաստվածություն ունեցող մի շարք խորհրդային և աֆղան գործընկերների հետ, խորհրդատվությունների ու բանակցությունների համար բազմիցս այցելել այսպես կոչված «պատասխանատվության գոտիներ», որոնց ռազմավարչական կարգով բաժանված էր Աֆղանստանի ամբողջ տարածքը:

Նոր համալիր վերլուծական խմբերի ինտենսիվ գործունեության շնորհիվ հնարավոր եղավ 1983 թվականի գարնանը Քաբուլում կազմակերպել «Աժհ ժողովրդական իշխանության կողմն անցած բանդկազմավորումների ղեկավարների առաջին ջիրգան»:

Իհարկե, հիմքեր չկան գերագնահատելու այդ քաղաքագիտական նորույթների նշանակությունը ԽՍՀՄ ռազմաքաղաքական դոկտրինի ու քաղաքական գծի վերաիմաստավորման գործում: Սակայն աֆղանական պատերազմին խորհրդային մասնակցության իրական կերպափոխումը օբյեկտիվորեն գնահատելու համար, անշուշտ, անհրաժեշտ է կշռադատված և հանգամանալից կերպով ուսումնասիրել դաժան ճգնաժամից դուրս գալու համաձայնային սցենարների այդ առաջին, «ոչ մոդայիկության» հետևանքով երբեմն զգուշավոր որոնումները: Հետազոտողը կարող է այդ շրջանի տեքստերում նկատել ամբողջ պրոբլեմի ընկալման որոշակի ոչ լիակատարությունը. զգացնել են տալիս աֆղանական հասարակության «հեղափոխական» ու «հակահեղափոխական» առճակատման այն ժամանակ սովորական դրամատիկությունը, ինչպես նաև զինված ռազմաքաղաքական հակամարտության ներքին և արտաքին մասնակիցների փոխադարձ «հոգեբանական պատերազմի» տարրերը:

Հեղինակն ու նրա գործընկերները էթնոքաղաքագիտական վերլուծության մի զգալի մասը կատարել են բավական յուրահատուկ աղբյուրագիտական հիմքի վրա: Կիրառական քաղաքագիտական ուսումնասիրությունների հենքը կազմում են զինված ընդդիմության տեսական, քա-

* Այն ժամանակ դա կոչվում էր «բանդկազմավորումների մղում դեպի ժողովրդական իշխանության հետ համագործակցություն»:

ղաքական-կիրառական, հրապարակախոսական աշխատությունները, փաստաթղթերը, բրոշյուրներն ու թռուցիկները, ինչպես նաև աֆղան ու խորհրդային մասնագետների հետ բազմաթիվ զրույցները և այն ծառայությունների վերլուծական ծառայողական զեկուցագրերը, որոնք փոխգործում էին զինված աֆղանական ընդդիմության հետ հնարավոր համագործակցությանը միտված ուղեգծի մշակման ու իրականացման բնագավառում: Ընդսմին այդ համագործակցությունը դիտվում էր որպես ազգային հաշտության քաղաքականության հետագա հռչակման հիմք: Նշենք, որ ընդդիմության նյութերի թարգմանությունը 1982 – 1983 թվականներին կատարել է քաղաքական խորհրդականների կենտրոնական աշխատակազմին սպասարկող թարգմանչական խումբը՝ Սայֆուդդին, Փուլատ, Խայտ, Միսկին:

Հեղինակի կարծիքով՝ առաջարկվող վերլուծությունն ու փաստերը որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև որպես փաստաթղթեր, որոնք արտացոլում են այն ժամանակաշրջանի ռազմաքաղաքագիտական վերլուծաբանության կոնկրետ տեսանկյուններն ու ժանրերը, երբ տեղի էր ունենում ազգային ու միջազգային անվտանգության հայեցակարգի վերաիմաստավորում ու դրա հետ կապված՝ աֆղանական հարցում Բրեժնևի մահից հետո փոխվող ուժային ուղեգծի վերանայում:

Տասնամյա վաղեմություն ունեցող ռազմաքաղաքական վերլուծաբանությունը, որը կողմնորոշված է եղել կոնկրետ գործնական խնդիրների լուծմանը և կատարվել է պատերազմական ժամանակի ու հանգամանքների հետ կապված խիստ սահմանափակումների պայմաններում, մեր կարծիքով, իր կարևորությունը չի կորցրել նաև 1992 թվականի ապրիլին: Դրա ապացույցն է Քաբուլում իշխանությունը մոջահեդների ձեռքն անցնելու փաստը:

Նյութի էական ժամանակային «ամրության պաշարն» ու կանխատեսումային հնարավորությունները, ինչպես հետագայում ակներև դարձավ, ապահովվել էին դրա պատրաստման հիմքում դրված «տեխնոլոգիայի» շնորհիվ: Այդ տեխնոլոգիայում կիրառվեց հասարակագիտական շրջանի գիտաճյուղերի ժամանակակից «դաշտային» հետազոտության գործնականում ամբողջ մեթոդական գործիքակազմը, ինչն էլ, ըստ էության, հնարավորություն է տալիս ռազմաքաղաքական գործողությունների հիմքում դրված փաստաթղթերի մշակված համալիրը համարել կիրառական էթնոքաղաքագիտության ոլորտում կատարված ամբողջական հետազոտություն:

Խորհրդային հեղինակները կիրառական հարցերով զբաղվող քաղաքագետների «դաշտ» էին համարում առաջին հերթին այն պրոբլեմները, որոնք կամ երկար ժամանակ պահպանում են իրենց գործնական նշանակությունը, կամ իրավիճակային փոփոխությունների հետևանքով ձեռք են բերում հրատապություն ու կարևորություն: Առանձնապես շեշտվում էր այն հանգամանքը, որ պրոբլեմների այդ նույն համախումբը կարևոր նշանակություն ունի նաև տեսական քաղաքագիտության կողմից մշակման համար:

Հետպատերազմյան տարիներին, հատկապես՝ սկսած 1960-ական թվականներից, արևմտյան կիրառական քաղաքագիտության մեջ ի հայտ է եկել կայուն հետաքրքրություն մի քանի խումբ պրոբլեմների նկատմամբ: Քանի որ մեծ թվով ականավոր քաղաքագետներ արդի դարաշրջանը դիտում են որպես հակամարտությունների սրման շրջան, իսկ դրանց կառավարումը՝ առանձին երկրներում ու միջազգային ասպարեզում սոցիալ-քաղաքական կայունության պահպանման կարևոր պայման, ապա բնական է, որ կիրառական քաղաքագիտական հետազոտություններում կենտրոնական տեղերից մեկը տրվում է հակամարտությունների լուծման և համաձայնության ձեռքբերման հետ կապված պրոբլեմների համալիրին:

Դրան սերտորեն հարադրվում է վերջին տասնամյակներում նույնպես ակտիվ կերպով մշակվող հարցերի հետևյալ շրջանը՝ ինչպես ներքաղաքական, այնպես էլ միջազգային բանակցությունների վարման տեսությունն ու պրակտիկան: Բանակցային պրակտիկայում ավելի ու ավելի է աճում տեսական հետազոտությունների ու մեթոդական մշակումների հիման վրա մասնագետների ներկայացրած առաջարկությունների դերը: Բանակցությունների հետազոտման ու վարման մոդելների մշակման նպատակով ստեղծված են բազմաթիվ կենտրոններ ու ձևավորվում են հատուկ հետազոտական նախագծեր, ինչպիսին է, օրինակ, Հարվարդի համալսարանի (ԱՄՆ) բանակցությունների գծով հետազոտական նախագիծը[134]:

Քաղաքագետներն ավելի ու ավելի ակտիվ կերպով են ուսումնասիրում զանգվածային քաղաքական շարժումների դինամիկան ու քաղաքական լիդերության պրոբլեմները, մասնավորապես՝ քաղաքական կուսակցությունների և իշխանության ու քաղաքական որոշումների ընդունման հաստատությունների գործունեությունը, հասարակական կարծիքի ձևավորման վրա զանգվածային հաղորդակցման միջոցների ազդեցությունը:

Կիրառական քաղաքագիտությունը, հենվելով այն նույն ընդհանուր ու մասնակի մեթոդաբանական սկզբունքների վրա, որոնց ապավինում է տեսական քաղաքագիտությունը, օգտագործում է քաղաքական երևույթ-

[134] Տես *Р. Фишер, У. Юри.* Путь к согласию, или переговоры без поражения. М., 1990:

ների վերաբերյալ տեղեկույթի հավաքման ու վերլուծության այն մեթոդների լայն սպեկտրը, որոնք կիրառում են «դաշտային պայմաններում» աշխատանքի գծով «մասնագիտացած» էմպիրիկ սոցիոլոգիան ու մարդաբանական-ազգագրական գիտաճյուղերը:

Ազգագրական մեթոդիկաների նշանակությունը հատկապես աճում է այն դեպքում, երբ հետազոտությունը կատարվում է արտասահմանում՝ մի միջավայրում, որն իր էթնոմշակութային բնութագրերով տարբերվում է հետազոտողի մշակույթից: 1980-ական թվականների վերջերի արևմտյան, հատկապես՝ ամերիկյան, գրականության մեջ լուրջ ուշադրություն էր հատկացվում դաշտային, առանձնապես՝ ազգագրական, հետազոտությունների պրոբլեմներին: Ազգագրագետները, ի տարբերություն այլ հասարակական գիտաճյուղերի ներկայացուցիչներից, հաճախ օգտագործում են «ներգրավված դիտարկման» մեթոդը՝ անմիջականորեն մասնակցելով ուսումնասիրվող բնակչության առօրյա կյանքին: Պահպանելով մշտական շփումներ վերլուծվող երևույթների ու գործընթացների մասնակիցների հետ (այդպիսիք կարող են լինել սոցիալական կամ էթնիկական հողի վրա ծագած հակամարտությունները, տարբեր քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչների միջև բանակցությունները, զանգվածային շարժումներ ու դրանց հիմքի վրա քաղաքական շահերի խմբերի, այդ թվում՝ քաղաքական կուսակցությունների և այլ նմանատիպ կազմակերպությունների ձևավորումը), կամ էլ ինքը լինելով, օրինակ, բանակցային գործընթացի ակտիվ «գործող անձ»՝ քաղաքագետը ևս հայտնվում է «ներգրավված դիտորդի»՝ ազգագրագետի համար դասական դերում:

Անգլախոս երկրների ժամանակակից գիտության մեջ «ազգագրություն» հասկացությունը առավել հաճախ օգտագործվում է հատուկ տեսակի ճանաչողական գործունեություն նշագրելու համար, մի գործունեություն, որի էությունն է որևէ մշակույթի երկարատև ներգրավված դիտարկումը և հետագայում հետազոտողի կողմից իր ամեն տեսածի ու իմացածի նկարագրումը: Շատ հաճախ «ազգագրություն» հասկացությունը վերաբերում է զուտ նման նկարագրությանը: Որպես այդպիսին՝ «ազգագրությունը» դառնում է մեծ թվով հասարակական գիտությունների բաղկացուցիչ մասը. մշակութային ու սոցիալական մարդաբանության բնագավառում այն դարձել է մասնագիտության ատրիբուտ դեռ Բ. Մալինովսկու և Ֆ. Բոասի ժամանակ, Չիկագոյի դպրոցի (Ռ. Փարկ, է. Հյուզ) ազդեցությամբ սոցիոլոգիայում դարձել է առավել տարածված մեթոդներից մեկը: Ներկայումս այն հետզհետե ավելի խոր է ներթափանցում սոցիալական հոգեբանության, հաղորդակցային համակարգերն ուսումնասիրող գիտաճյուղերի, կրթության, վարչարարության, ներառյալ՝ ծառայությունը

բանակում ու ոստիկանությունում, իրավաբանական գիտությունների, քաղաքագիտության բնագավառներ[135]:

«Ազգագրական դաշտում» հայտնված քաղաքագետը հետազոտական խնդիրը հաջողությամբ լուծելու համար պետք է ոչ միայն հաշվի առնի գուցե շատ առումներով իր համար նոր «ժանրի» կանոնները, այլև հետևի դրանց: Բոլոր փորձառու «դաշտային հետազոտողները» ուշադրություն են հրավիրում այն հանգամանքի վրա, որ նրանցից գրեթե յուրաքանչյուրը, սկսելով իր աշխատանքը, այսպես կոչված մշակութային շոկ է ապրել. ունեցել է ապակողմնորոշվածության, լեզվի, ավանդական աստիճանակարգության կարգավիճակների հետ կապված փոխհարաբերությունների նրբությունները, կյանքի ռիթմը, իրական արժեքային կողմնորոշումներն ու նախապատվությունները, էլ չասենք՝ տեղի վարքի կանոններն ու կենսաոճը պատշաճ ձևով հասկանալու անկարողության զգացում: Այդ տրամադրությունը հաջորդաբար փոխարինվում է նոր, որոշ չափով էկզոտիկ իրադրության աստիճանական ընկալումից առաջացող մի տեսակ էյֆորիայով:

Արևմտյան մասնագետները համարում են, որ ուսումնասիրվող հասարակության մեջ ազգագրագետի «ներմուծումը» (վերը նշված լայն իմաստով) ընդհանուր առմամբ ավելի բարդ գործընթաց է, քան տեղափոխումն իր հասարակության սոցիալական ու դասակարգային «հարկերով»: Այսպես. Ազգագրության գծով դաշտային հետազոտությունների դպրոցի (Նյու Մեքսիկոյի համալսարան) աշխատողներ Օ. Վեռները և Ջ. Շոպֆլը իրենց «Կանոնավոր դաշտային հետազոտություններ» հիմնարար երկհատորյակում ուշադրություն են դարձնում մի այնպիսի նուրբ հանգամանքի վրա, ինչպիսին է «ուսումնասիրվող ժողովրդի արդեն հայտնաբերված բնութագրերի հետ գիտնականի անձնային հատկությունների մանրակրկիտ զուգադրման անհրաժեշտությունը», քանի որ, օրինակ, ինքնապարփակ կյանքի ու միայնակ ժամանցի հակված մարդուն դժվար կլինի «ներդաշնակվել» մի հասարակությանը, որում նման վարքը գնահատվում է որպես ապասոցիալական: Պլանավորելով այնպիսի մշակույթի ֆեմինիստական հետազոտում, որում գերիշխում է տղամարդը, ինչպես սովորաբար տեղի ունի մահմեդական հասարակությունում, հատկապես՝ կին հետազոտողների դեպքում, ևս դժվար թե կարելի է ակնկալել հաջողություն[136]:

Մշակութային մարդաբանության բնագավառում հետազոտական մեթոդ-

[135] Տես *J. Van Maanen*. Tales of the field: On writing ethnography. Chicago, 1988, P. 24:

[136] Տես *O. Werner, G. M. Schoepfle*. Systematic fiedwork. Newbury Park etc: Sage, 1987, Vol. 1: Foundations of ethnography and interviewing, P. 174:

ների գծով հայտնի մասնագետ Հ. Ռ. Բեռնարդը նույնպես շեշտում է հետազոտության պրոբլեմի, կատարման տեղի ու մեթոդների ընտրության նկատմամբ հետազոտողի վերաբերմունքի հույժ կարևորությունը: «Դա այն դեպքն է, երբ չի կարելի գերագնահատել կոնկրետ կատարողի անձնական շահագրգռվածությունը աշխատանքի արդյունքում»[137]: Հետազոտությունը պետք է նաև պարտադիր կերպով համապատասխանի էթիկայի նորմերին ու դրույթներին:

Այս բոլոր հանգամանքների հաշվառմամբ հատկապես պատասխանատու պետք է համարել աշխատանքի նախապատրաստական փուլը, ներառյալ՝ հետազոտության օբյեկտի և թեմատիկայի ընտրությունը:

Նախնական աշխատանքային պլանի պարտադիր մասն է հարցի վերլուծական պատմագրությունը: Արդեն կատարված գիտական հետազոտություններին նախնական ծանոթացումը, որպես կանոն, կատարվում է մատենագիտական որոնման ժամանակակից միջոցների կիրառմամբ: ԱՄՆ-ում գիտական պարբերականների շատ լայն ընդգրկում է ապահովում Գիտական տեղեկութաբանության ինստիտուտը (ք. Ֆիլադելֆիա), որը գործում է առևտրային հիմունքներով: Նրա տարբեր տեսակի տեղեկատուներում կան տեղեկություններ 35 լեզուներով հրապարակվող 4600 գիտական հանդեսների մասին[138]: Սովորաբար պատմագրությունը, գիտական հրապարակումներից բացի, ներառում է նաև այսպես կոչված «գորշ» գրականությունը. Միացյալ Նահանգներում դրա շարքն են դասում կառավարական հիմնարկների հրապարակումները, հիմնարկների և մասնավոր անձանց հատուկ պատվերներով կատարված հետազոտությունները: Այդ մասին տեղեկություններ է տրամադրում Կոնգրեսի տեղեկատվական ծառայությունը: Այս կամ այն պրոբլեմի վերաբերյալ տվյալների լիակատար հավաքումը պարտադիր պայման է, առանց որի հնարավոր չէ այս կամ այն ոլորտում կատարվող նոր հետազոտության ֆինանսավորումը պետական ու մասնավոր հիմնադրամների կողմից:

Աշխատանքային պլանում առանձնակի մանրակրկիտությամբ է մշակվում հետազոտական խնդիրների բաժինը: Կառավարության, պետական հիմնարկների, ֆինանսավորող հիմնադրամների կամ մասնավոր անձանց՝ գործնական կիրառական նախանշանակման նպատակային պատվերների կատարման համար ԱՄՆ-ում մշակված է հատուկ ծրագիր: Դաշտային պայմաններում այդ ծրագրի մեջ մշտապես կատարվում են անհրաժեշտ փոփոխություններ[139]:

[137] *H. R. Bernard.* Research methods in cultural anthropology. Newbury Park etc.: Sage, 1988, P. 112.

[138] Տես նույն տեղում, էջ 126:

[139] Տես *Օ. Վեռներ, Ջ. Մ. Շուպֆլ*, Նշ. աշխ., էջ 198:

Նոր պայմաններում հետազոտողին օգնում է կողմնորոշվելու առաջին հերթին դիտումը, ուստի տեղեկատվության այդ կապուղին պետք է օգտագործվի առավելագույն ակտիվությամբ: Ներգրավված դիտարկման ժամանակ, նոր էթնոմշակութային միջավայրի դիտումից բացի, պետք է անհրաժեշտաբար կատարվի նաև արտաքին հանգամանքներին հետազոտողի անձնական հակազդումների արձանագրում: Ընդսմին հետազոտողը, անկախ իր անձնական ճաշակից, պետք է անշեղորեն պահպանի «ազգագրության ոսկե կանոնը, յուրաքանչյուրին վերաբերվի ինչպես հնարավոր խորհրդատուի, ինչը գործնականում նշանակում է՝ ոչ մեկի մասին ոչ մի բացասական արտահայտություն: Եթե չգիտես, թե ինչ անել, ոչինչ մի՛ արա»[140]:

Տեղեկությունների հիմնական և առավել կարևոր աղբյուրներ են ընթացիկ աշխատանքային քննարկումների, հետազոտվող գործընթացների և իրադարձությունների հնարավորինս լայն շրջանով մասնակիցների հետ տեղի ունեցած հատուկ հարցազրույցների ու ոչ պաշտոնական զրույցների ժամանակ ստացված տվյալները: Քանի որ հետազոտության կատարման անգամ առավել օպտիմալ պայմաններում շփումների հնարավորությունը որպես կանոն լինում է սահմանափակ, շատ կարևոր է ընտրել «հաղորդակցման ներկայացուցչական խումբ», որը, լինելով մի յուրատեսակ «փորձանմուշ», պետք է համապատասխան ձևով ներկայացնի ամբողջ հետազոտվող օբյեկտը: Նման խմբերի կազմավորման տեխնիկան բազմապիսի է. քաղաքի բնակչության դեպքում՝ հեռախոսագրքի հիման վրա կատարված վիճակագրական տոկոսային ընտրանքից մինչև այսպես կոչված «ձնագնդի» մեթոդը, երբ ամեն մի հարցվող հետազոտման համար առաջարկում է մի քանի թեկնածուի: Եթե չկան նյութական ապահովումն ու ժամանակը սահմանափակող գործոններ, ապա կարող է կիրառվել հետազոտվող բնակչության թվաքանակի և առավել բնորոշ առանձնահատկությունների հիման վրա օպտիմալ ընտրանքի որոշման բանաձևը: Ընդսմին դրանց թվում են հետևյալ առանձնահատկությունները. բնակչությունը քաղաքայի՞ն է, թե՞ գյուղական, բնակվում է պարփա՞կ, թե՞ ցրիվ, ըստ էթնիկական կազմի համասե՞ռ է, թե՞ խառը:

Ինքնին հասկանալի է, որ պատերազմական իրավիճակներում հետազոտողի հնարավորությունները էապես սահմանափակ են, եթե ոչ հասցված նվազագույնի: Նման դեպքերում շատ կարևոր է լինում տեղաբնակների թվից ընտրել առավել տեղյակ մարդկանց, որոնք դառնում են յուրատեսակ «խորհրդատուներ»: Դրանց ընտրությունը պետք է կատարվի մեծ զգուշավորությամբ՝ ոչ միայն գիտելիքների, այլև հասարա-

[140] Նույն տեղում, էջ 245:

կությունում ունեցած պատշաճ դիրքի հաշվառմամբ: «Խորհրդատուների» հետ շփումների և հաստատումը, և պահպանումը առավել կարևոր խնդիրներից են, որոնց լուծումը պայմանավորված է ոչ միայն հետազոտողի հմտությամբ ու փորձով, այլև յուրաքանչյուր կոնկրետ դեպքում՝ բազմաթիվ անհատական հատկություններով և անգամ՝ պատահականությամբ: Անհրաժեշտ է նաև հաշվի առնել այն հանգամանքը, որ հետազոտողի նկատմամբ «հանդիպակաց հետաքրքրության» հիմքում կարող են լինել անձնական համակրանքը, սոցիալական առաջխաղացման ձգտումը, վերջապես, նյութական օգուտը: Հետազոտվող խմբի անդամների հակազդումը ևս կարող է լինել տարբեր՝ «բարեկամական հանդուրժողականությունից մինչև լրիվ անտարբերություն»[141], թեև պատերազմական պայմաններում չի կարող երաշխիք լինել, որ այդ փուլը չի վերաճի բացահայտ թշնամանքի փուլի:

Հարցազրույցների նախապատրաստման հիմնական մասը սովորաբար կատարվում է արշավի նախապատրաստման փուլում: Հարցերը մշակվում են ըստ թեմատիկ համալիրների, սակայն հարցաշարին ավելի մեծ ճկունություն հաղորդելու նպատակով կարող է կիրառվել առանձին բաժինների մասնատման համակարգը: Արշավի ժամանակ հարցաշարի «լրամշակումը» դրա օպտիմալ «կիզակետումն» է, ինչն արվում է կոնկրետ իրազեկիչների հնարավորությունների հաշվառմամբ: Այդ աշխատանքն այնքան ավելի կարևոր է դառնում, որքան բարձր է տվյալ եզակի տեղեկույթն ունեցող խորհրդատուի կարգավիճակը: Ստանդարտ հարցաշարի «տեղավորումը» որոշակի համատեքստում հնարավորություն է տալիս այն դարձնելու ավելի արդյունավետ, ինչպես առավել բարձր մասնագիտական մակարդակի ցանկացած աշխատանք: Ամերիկյան մասնագետների գնահատմամբ՝ բառասունհինգ րոպեանոց հարցազրույցի նախապատրաստման համար պահանջվում է միջին հաշվով ամբողջ ութժամյա աշխատանքային օր, իսկ ստացված նյութի հետագա մշակման համար՝ ևս մի քանի, սովորաբար՝ երեք-չորս օր[142]:

Թարգմանության պրոբլեմը, որը բնորոշ է ազգագրական արշավներին, ըստ ամերիկյան մասնագետների, նյութի մշակման ժամանակ առավել օպտիմալ ձևով լուծվում է մշակույթի «ներկայացման» գործում նրա կրողների կարևորագույն դերը շեշտող էթնոմեթոդաբանության ու ճանաչողական մարդաբանության տեսական դիրքերից: Այդ ուղղությունների ներկայացուցիչների ազդեցությամբ հետզհետե ավելի լայն տարածում է ստանում «բնիկների» դատողությունների բառացի վերարտադրումը՝ նրանց բնորոշ արժեքային կողմնորոշումներով, բարոյականության, պարտքի, սոցիալական դերերի մասին պատկերացումներով և այլ պարագաներով հանդերձ: Այս մոտեցումներում արտահայտված է «սոցիալական ֆիզիկայի» ձևով ներկայացված սոցիալական իմացաբանության կերպարից դեպի հասարակական գիտությունների հերմենևտիկ (մեկնական) ու դիալոգիկ (տրամախոսական) ներկայացմանն անցնելու միտումը[143]:

Դաշտային նյութերի գրանցման համար, ընդունված գրավոր ձևերի հետ մեկտեղ՝ դաշտային մատյան, դաշտային օրագրեր, դաշտային գրառումներ, հարցազրույցների ու դիտումների գրանցում, վերջին տարիներին ավելի ու ավելի մեծ նշանակություն են ստանում համակարգիչները: Պրոցեսորների հիշողության մեջ կոնկրետ տվյալների մուտքագրումից բացի, դաշտային նյութերի թեմայական կոդավորումը, հատկապես՝ մի շարք հետազոտությունների համար ստանդարտ կոդերի կիրառումը, հնարավորություն է տալիս ստեղծելու տվյալների հսկայական բազաներ և օպերատիվ կերպով գործարկելու դրանք: Նոր տեխնիկական միջոցների հնարավորությունները կարող են արդեն մոտ ժամանակներս էական փոփոխություններ մտցնել դաշտային ազգագրական աշխատանքի մեջ[144]:

Մասնագետները համարում են, որ դաշտային ազգագրական աշխատանքի մեծ հնարավորությունները ոչ լրիվ չափով են օգտագործվում քաղաքագիտական կողմնորոշվածությամբ հետազոտություններում: Մասնավորապես՝ ուշադրություն է դարձվում այն հանգամանքի վրա, որ վերջիններս սովորաբար լինում են ավելի նեղ ու պրագմատիկորեն «կիզակետված», քան ակադեմիական հետազոտությունները, ինչի պատճառով հաճախ դրանց տեսադաշտից որպես հետաքրքրություն չներկայացնող երևույթներ դուրս են մնում երկարատև պատմական զարգացումները: Դրանցում նաև գործնականում չի օգտագործվում մշակութային մարդաբանության առավել ուժեղ կողմերից մեկը, որն է հասարակության ու նրա մշակույթի նկատմամբ հոլիստական (ամբողջական) մոտեցումը՝ դրանց դրսևորումների լրիվ բազմազանության դիտարկմամբ: Ոչ միայն նյութի հավաքման, այլև նրա հետագա մշակման ժամանակ տրված մեթոդաբանական ու մեթոդական սահմանափակվածությունը էապես նվազեցնում է «վարչական հետազոտությունների» ճանաչողական հնարավորությունները[145]:

Քաղաքագիտական ազգագրության նկատմամբ իր ունեցած վերաբեր-

[141] Նույն տեղում, էջ 240:

[142] Տես նույն տեղում, էջ 294:

[143] Տես *Ջ. Վան Մաանեն*, Նշ. աշխ., էջ 143:

[144] Տես *Հ. Ռ. Բեռնարդ*, Նշ. աշխ., էջ 271:

[145] Տես "Anthropology at home". Ed. by *A. Jackson*. L.-N. Y., 1987, P. 57:

մունքում գիտական հանրությունը շեշտված կերպով ուշադրություն է դարձնում դրա վարքականոնային կողմերին, կատարված հետազոտությունների արդյունքների համար գիտնականների անձնական պատասխանատվության հարցին: Ամերիկացի հասարակագետների դեպքում դա զգալի չափով պայմանավորված է կիրառական մարդաբանության բնագավառում բարդ աշխատանքի հակասական կեսդարյա փորձի իմաստավորմամբ:

ԱՄՆ-ում տվյալ գիտական ուղղության կազմակերպական ձևավորումը տեղի է ունեցել երկրորդ համաշխարհային պատերազմի շրջանում. 1941 թ. հիմնադրվեց կիրառական մարդաբանության ընկերությունը: Պատերազմի ժամանակ մշակութային մարդաբանության գծով մասնագետները ներգրավվում էին Ռազմական տեղեկատվության վարչության, ԱՄՆ-ի ռազմական գերատեսչությանն առընթեր ազգագրության հատուկ բաժանմունքի, Խաղաղ օվկիանոսում ռազմավարական ռմբակոծությունների բաժնի աշխատանքներում, հանդես էին գալիս որպես այս կամ այն տարածաշրջանի ազգային յուրահատկությունների վերաբերյալ խորհրդատուներ[146]: Այդ շրջանում ականավոր ամերիկյան մարդաբանների ներգրավմամբ կատարվել են հավանական ռազմական հակառակորդի ազգային բնավորության հետազոտություններ: Այս տեսակի առավել հայտնի ու տխրահռչակ գրքերից է Ռ. Բենեդիկտի «Քրիզանթեմը և սուրը» աշխատությունը, որը դարձավ ճապոնական հասարակայնության բուռն բողոքի պատճառ[147]:

Ամերիկյան ազգագրագետները մասնակցել են 1946 թվականին հիմնադրված՝ ԱՄՆ-ի Պետքարտուղարությանն առընթեր Արտասահմանյան ծառայության ինստիտուտի աշխատանքներին՝ պատրաստելով մասնագետներ այնպիսի երկրների գծով, ինչպիսիք են Չինաստանը, Ճապոնիան, Հնդկաստանը, Պակիստանը և այլն: Այդ նույն ժամանակահատվածում ռազմական գերատեսչությունների միջոցներով ստեղծվել են մի շարք հետազոտական կենտրոններ՝ Կոլումբիայի համալսարանին առընթեր ժամանակակից մշակույթների հետազոտության ինստիտուտը, Հարվարդի համալսարանին առընթեր Ռուսական հետազոտությունների կենտրոնը, Ինդիանապոլիսի համալսարանին առընթեր Խորհրդային Միության և Արևելյան Եվրոպայի հետազոտության կենտրոնը, որոնց առջև խնդիր էր դրվել շարունակելու ԱՄՆ-ի համար ռազմավարական կարևորություն ներկայացնող տարածաշրջանների ուսումնասիրությունը: Քաղաքական մարդաբանության՝ որպես առանձին գիտաճյուղի ձևավորումը տեղի է ունեցել 1960-ական թվականների կեսերին[148]:

Հետպատերազմյան տարիներին սկսվեց ազգագրագետների բավական լայն ներգրավումը Եվրոպայի երկրներին օգնությամբ և Ասիայի ու Աֆրիկայի երկրների տնտեսական զարգացմանը նպաստմամբ զբաղվող տարբեր կառավարական կազմակերպությունների գործունեության մեջ: 1950–60-ական թվականներին նրանք հիմնականում զբաղվում էին տեղի բնակչության բավականին նեղ, համայնքատեղայնական հետազոտումներով: 70-ական թվականների երկրորդ կեսից մարդաբաններին սկսում են ներգրավել ոչ միայն որոշումների կատարման, այլև դրանց ընդունման, փորձագիտական գնահատումների նախապատրաստման, տարբեր տեսակի նախագծերի պլանավորման ու կատարման գործընթացներում[149]: Նոր պրոբլեմների լուծման անհրաժեշտությունը ազգագրագետների առջև դնում է նախկինում իրենց ոչ հատուկ մեթոդիկաների յուրացման պահանջ, մասնավորապես, այնպիսի մեթոդիկայի, ինչպիսին է տարբեր տեսակի փաստաթղթերի վերլուծությունը, որը լայն կիրառում ունի քաղաքագիտության բնագավառում:

Քաղաքագիտական վերլուծության են ենթարկվում ոչ միայն պաշտոնական տեքստերը՝ կառավարական հայտարարությունները, կուսակցությունների ծրագրերը, նիստերի արձանագրությունները և այլ նմանատիպ փաստաթղթեր, որոնք, որպես կանոն, կազմում են փաստաթղթատեղեկատվական բլոկի մեծ մասը: Հետազոտողի համար հետաքրքրություն են ներկայացնում նաև գրավոր տեքստի ոչ պաշտոնական տարատեսակները, որոնք անմիջականորեն կամ միջնորդավորված ձևով վերաբերում են քաղաքական գործընթացներին: Բնական է, որ պատերազմական պայմաններում կատարվող էթնոքաղաքագիտական հետազոտության համար կարևոր նշանակություն ունեն քաղաքական որոշումները, օպերատիվ-շտաբային փաստաթղթերի տվյալները, քարտեզագրական նյութերը, հակառակորդի ագիտացիոն-քարոզչական բնույթի նյութերը, ներառյալ՝ թռուցիկները, ելույթների տեքստերը տպագիր ու ձայնագրային կատարմամբ, ռադիոհաղորդումային ծրագրերի բովանդակությունը, գաղափարագրական փաստաթղթերը՝ լուսանկարչական ու տեսանյութերը:

---

[146] Տես *Ю. П. Аверкиева.* Служебное значение этнографии в США. "Вестник истории мировой культуры", 1959, № 4, сс. 67 – 74:

[147] Տես *R. Benedict.* The chrisanthemum and the sword. Boston, 1946:

[148] Տես *M. N. Fried.* The evolution of political society: An essay in political anthropology. N. Y., 1967; *M. J. Swartz, V. Turner, A. Tuden* (Eds.). Political anthropology. Chicago, 1966, VIII:

[149] Տես *A. Hoben.* Anthropologists and development. "Annual review of anthropology". Palo Alto: Annual. review, 1982, Vol. 11, P. 361:

Կիրառական քաղաքագիտության մեթոդական գործիքակազմում անշուշտ իր ուրույն տեղն ունի գիտափորձը՝ որպես առավել ակտիվ, բոլոր տեղեկութային ու վերլուծական ռեսուրսների լիովին մոբիլիզացում պահանջող հետազոտական պրակտիկա: Քաղաքագիտության մեջ գիտափորձը սովորաբար կատարվում է խաղային մոդելավորման յուրահատուկ ձևով, երբ հետազոտվող գործընթացը կամ երևույթը վերարտադրվում են քաղաքագետին հետաքրքրող պարամետրերով՝ խաղային իրավիճակի ստեղծմամբ (մատրիցային կամ այլ տեսքով)[150]: Հակամարտության զարգացումը, բանակցությունների ընթացքը, որոշակի համակարգի էվոլյուցիայի ընթացքը նմանարկելով՝ հետազոտողը հնարավորություն է ստանում կա՛մ կանխատեսելու իրական գործընթացի զարգացումը, կա՛մ հայտնաբերելու տեղի ունեցած իրադարձության բացատրության բանալին: Ռազմաքաղաքագիտական գիտափորձերի կատարումը ևս հնարավոր է տարբեր մասշտաբների «նմանարկումային խաղերի» ընդհանուր շրջանակներում: Ռեալ մարտական պայմաններում կորցնելով «խաղային» հատկանիշները՝ այն վերածվում է արդյունավետ ռազմաքաղաքական գործիքի: Նման պարագայում ռազմաքաղաքագիտական գիտափորձը ապահովում է ոչ թե ռազմաուժային եղանակով, այլ «համածայնային զարգացման» «սցենարների» մշակման և իրացման միջոցով հակամարտային իրավիճակների կարգավորման առավել օպտիմալ ուղիների հայտնաբերումը:

Նախնական տեղեկույթի վերլուծման այլ՝ քաղաքագիտության մեջ լայն տարածում ստացած, մեթոդներից են բովանդակային վերլուծությունը (կոնտենտ-անալիզ), գենետիկական վերլուծությունը, ճանաչողական քարտեզների կառուցումը և այլն:

Հետազոտական գործիքակազմի ու դրա կիրառման սահմանների ընտրությունը ինքնին ոչ միայն կոնկրետ-մեթոդական, այլև տեսամեթոդաբանական բնույթի պրոբլեմ է: Մեր դեպքում այդ ընտրությունը թելադրված էր Աֆղանստանում էթնոքաղաքագիտական հետազոտությունների օբյեկտների և առարկաների ծագման ու վերարտադրության ինչպես ընդհանուր, այնպես էլ առանձնահատուկ պայմաններով: Հարկ է նշել, որ որպես օբյեկտ դիտարկվում էին իշխանության (պետական և հասարակական, օրինական և ապօրինի, քաղաքական, ռազմական, կրոնաիրավաբանական և այլ բնույթի) իրականացման հետ կապված հարաբերությունների կրողները, իսկ որպես էթնոքաղաքագիտության առարկա դիտվում էր էթնոքաղաքականությունը:

[150] Տես Э. *Баталов*. Что такое прикладная политология. "Конфликты и консенсус", 1992, № 1:

Գործիքակազմը որոշվում էր ըստ հետազոտվող խնդիրների բովանդակության, իսկ վերջին հաշվով՝ ըստ հետազոտվող գործընթացների ու երևույթների բովանդակության, դրանց յուրահատուկ ռազմական, քաղաքական, պետաիրավական, սովորութաիրավական ու վարչական կանոնակարգման, որը խորհրդային զորքեր մտցնելու հետևանքով միջազգայնացված քաղաքացիական զինված հակամարտության պայմաններում կատարում էին իշխանության՝ Աֆղանստանի ներսում ու դրսում գործող մի քանի կենտրոններ:

Ռազմական քաղաքականությունը և դրա դոկտրինալ-գաղափարախոսական ապահովումը պայմանավորում էին պատերազմի քաղաքագիտական ու գործնական վերլուծական-կառավարային ուղեկցման էությունը, իսկ առանձին դեպքերում՝ ինչպես մշակվող պրոբլեմների, այնպես էլ հետազոտական գործիքակազմի ընտրության դիրեկտիվ տրվածությունը:

Վերջում հարկ ենք համարում նշել, որ ձևավորվող էթնոքաղաքագիտության առարկայի որոշման նկատմամբ հեղինակի մեթոդաբանական մոտեցումների գործիքային կիրարկելիության ստուգման խնդիրը իրացվել է ազգային անվտանգության տեսության և մեթոդաբանության համատեքստում կիրառական ռազմական էթնոքաղաքագիտության պրոբլեմատիկայի ու մեթոդական գործիքակազմի հիմնավորմամբ:

§ 3. Զինադադարի տեղի ունեցող արդիականացման գործընթացները

Զինված հակամարտության ռազմաքաղաքական արդիականացման գործընթացն ավելի լավ հասկանալու համար քննարկենք ավանդական ջիհադի համար սկզբունքորեն նոր սուբյեկտների՝ իսլամական քաղաքական կուսակցությունների կողմից սրբազան պատերազմի կրոնաքաղաքական դոկտրինի, ինչպես նաև մոջահեդների դիմադրության կառույցների ռազմական կազմակերպվածքի նորամուծական փորձը: Ընդսմին վերջինս համադրում է ցեղային պատերազմի տարրերը գերիլայի* ու կանոնավոր բանակային գործունեության տարրերի հետ:

3.1. Զինադադարի տաջիկական էթնոքաղաքական ռեսուրսը Աֆղանստանի իսլամական ընկերության (ԱԻԿ) օրինակով

Քանի որ հեղինակը 1982 – 1983 թվականներին անձամբ մասնակցել է զինված ընդդիմության հետ բանակցությունների այն մեթոդիկաների

* *Գերիլա*, կամ *գվերիլյա* (իսպ. guerrilla, guerra – պատերազմ)՝ պարտիզանական պատերազմ Իսպանիայում և Լատինական Ամերիկայի երկրներում: *Ծանոթ. թարգմ.:*

մշակմանը, որոնք հիմնվում են Ահմադ Շահ Մասուդի (բազավորման գոտին՝ Փանջշիր) և Սայիդ Զագրանի (բազավորման գոտին՝ Խազարաջաթ) նման մեծանուն դաշտային հրամանատարների գործունեության կիրառական քաղաքագիտական վերլուծության վրա, ապա գլխավորապես ուշադրություն կդարձնենք նշված առումների էթնոքաղաքագիտական վերլուծությանը՝ Աֆղանստանի իսլամական ընկերության («Ջամիյաթե իսլամիյե Աֆղանստան») կուսակցության, նրա զորակայանների (կենտրոնների)՝ «մարկազների» և տեղական ռազմաքաղաքական կառավարման յուրահատուկ հաստատությունների՝ «իսլամական կոմիտեների» օրինակով:

Աֆղանստանի իսլամական ընկերությունը (ԱԻԸ)՝ որպես ջիհադի սուբյեկտ, այն ժամանակակից վերէթնիկական քաղաքակրթական ենթահամակարգերից է, որոնք արտացոլում են իսլամի պաշտամունքային և իրավաքաղաքական հիմքերի ամբողջականության և անբաժանելիության դասական հայեցակարգում տեղի ունեցած արդիականացուցիչ փոփոխությունները: Ընկերությունն իր ազդեցության գոտում հանդես է գալիս որպես կրոնահամայնքային և տարածքացեղային միավորումների համախմբման նոր մեխանիզմ, որը ձյուղավորված է ըստ ազդեցության ազգակրոնական ու էթնոցեղային մակարդակների: Քանի որ ԱԻԸ-ի պլատֆորմի կրոնաքաղաքական բովանդակությունը նպատակաուղղված է «իսլամական արդարության» կարգախոսի իրականացմանը՝ Աֆղանստանում Իրանի Իսլամական Հանրապետության իմամության տիպի «Իսլամական հանրապետության» ստեղծման միջոցով, ապա տվյալ կուսակցությունը համախմբում է այն տարածքները, որոնց բնակչությունը դավանում է մահմեդականության ինչպես սուննի, այնպես էլ շիա և նրա ճյուղավորում իսմայիլականության ուղղությունները: Էթնոցեղային ու կլանային կենսատարածքների՝ «կադմերի» համախմբման տեսակետից ԱԻԸ-ն վերահսկում ու ջիհադի շուրջ միավորում է տաջիկական, բադախշանական, խազարական, ինչպես նաև որոշ ուզբեկական ու փուշթունական ցեղերով բնակեցված տարածքները: ԱԻԸ-ի տեղական կազմակերպությունները՝ իրենց «իսլամական կոմիտեների» գլխավորությամբ, ինչպես նաև ճամբարներում՝ «մարկազներում», ու մոջահեդների բնակության վայրերում տեղաբաշխվող մարտական ջոկատները գործում են մի շարք այնպիսի նահանգների ընդարձակ վարչաքաղաքական տարածություններում, ինչպիսիք են Քաբուլը, Փարվանը, Կապիսան, Վարդակը, Բամիանը, Հերաթը, Գորը, Բադգիսը, Բաղլանը, Բադախշանը, Ղունդուզը, Թախարը, Ֆարահը, Նիմրուզը, Փակտիան, Ղազնին, Լագմանը և Կունարը: Իր քաղաքական-կազմակերպական սկզբունքների ու նշված տարածքներում տարբեր «կադմերի» համախմբման պրակտիկայի շնորհիվ ԱԻԸ-ն առավելություն ունի ավելի

կենտրոնացված կուսակցությունների համեմատությամբ, ինչը բացատրվում է նրա ավելի մեծ համապատասխանությամբ աֆղանական հասարակության սոցիալական կազմակերպվածքի ապակենտրոնացվածության սկզբունքին:

ԱԻԸ կուսակցության առաջնորդն է Բուրհանուդդին Ռաբբանին, որը ծնվել է 1940 թվականին, ունի փիլիսոփայության ու շարիաթային իրավունքի բակալավրի աստիճան, անցյալում եղել է Քաբուլի համալսարանի աստվածաբանության պրոֆեսոր: Երիտասարդ տարիներին նա եղել է նոր ժամանակի մի շարք ականավոր մահմեդական մտածողների ուժեղ ազդեցության տակ, մտածողների, որոնք իրենց տեսական աշխատություններում փորձում էին իսլամական վերածննդի ուղիները հիմնավորել որպես պատասխան ժամանակակից միջքաղաքակրթական շփման արդիականացուցիչ մարտահրավերներին այդ շփման համընդհանուր տարբերակներով՝ Արևմուտք–Արևելք և Հյուսիս–Հարավ: Պրոֆեսոր Ռաբբանին իր աստվածաբանական դասախոսություններում և աշխատություններում դեռ 1970-ական թվականներին Քաբուլի համալսարանի ուսանող երիտասարդությանը կողմնորոշում էր դեպի ժամանակակից իսլամաբանության այնպիսի հեղինակավոր գործիչների գաղափարների յուրացում, ինչպիսիք են «Ջամիաթե Իսլամի» պակիստանյան շարժման հիմնադիր ու Պակիստանի էլ ավելի իսլամացման ջատագով Սայեդ Մաուդուդին, «Մահմեդական եղբայրներ» ազդեցիկ միջազգային կազմակերպության (որի կենտրոնակայանը գտնվում է Եգիպտոսում) հիմնադիրներ Սայիդ Ղութբը[151] և Հասան ալ Բանը, հայտնի շիա աստվածաբան ու կրոնական գործիչ իրանցի Ալի Շարիաթին: Ռաբբանին համարվում է իմամ Հոմեյնիի կողմնակից[152]:

Բուրհանուդդին Ռաբբանիի հեղինակությունը հիմնվում է նաև այն փաստի վրա, որ 1973 թվականի պետական հեղաշրջումից անմիջապես հետո նա դարձավ Դաուդի ռեժիմին ընդդիմության ղեկավարներից մեկը: Նա հայտնի է որպես Աֆղանստանում առաջին խոշոր Աֆղանստանի իսլամական կուսակցության (ԱԻԿ՝ «Հեզբե իսլամիյե Աֆղանստան») հիմնադիրներից մեկը: Այդ կուսակցության հիմնադիրներից էին նաև ընդդիմության այնպիսի առաջնորդներ, ինչպիսիք են Հեկմաթիյարը, Յունուս Հալեսը, Զալալուդդինը և Ահմադ Շահ Մասուդը, որոնք կապ ունեին նաև «Մահմեդական եղբայրներ» կազմակերպության հետ:

---

[151] *Սայիդ Ղութբը* վաղ շրջանի իսլամի ու դասական մահմեդական իրավունքի նորմերի վրա հիմնվող «իսլամական իշխանության» բռնի հաստատման տեսաբան էր, որը մահապատժի ենթարկվեց Կահիրեում 1966 թ.:

[152] Տես *Хуршид Ахмад.* Ислам и Запад. Кум (Исламская Республика Иран), б. г. (пер. с перс.):

Ռաբբանին ԱԻԿ-ից դուրս եկավ 1978 թվականին՝ հեղաշրջումից հետո, և նույն թվականին հիմնադրեց իր կուսակցությունը՝ ԱԻԸ-ն: ԱԻԿ-ից դուրս գալու փաստը Ռաբբանին իր ելույթներում փորձում էր հիմնավորել այն հանգամանքով, որ ԱԻԿ-ի սկզբունքներն ու կոշտ կենտրոնացված իշխանության պրակտիկան հակասում են աֆղանական հասարակության սոցիալական ու էթնոմշակութային յուրահատկությանը, քանի որ այդ հասարակությունը հիմնվում է անձի ազատության ու հավասարության վրա: ԱԻԸ-ի ղեկավարը, լինելով ծագումով իսմայիլականության միջնաբերդ Հյուսիսարևելյան Բադախշան նահանգի տաջիկ, առանձնակի մեծ ազդեցություն ունի ոչ փուշթունական բնակչության շրջանում:

Բուրհանուդդին Ռաբբանին Աֆղանստանի առաջին կրոնական հեղինակություններից մեկն էր, որը 1980 թվականի հունվարին մահմեդականներին կոչ արեց ջիհադ հայտարարելու ԽՍՀՄ-ին, զավթիչ խորհրդային զորքերին, ինչպես նաև «Քաբուլի անաստված խամաճիկային ռեժիմին»:

Ինչպես երևում է քարոզչության, նախապատրաստման և ԱԻԸ ընդունման բաժնի պետի ելույթից (1981 թ. մայիսի 29), կազմակերպությունն իր գլխավոր խնդիրներն է համարում «կոմունիզմի նկատմամբ իսլամական հեղափոխության հաղթանակը», «իսլամական հեղափոխության գաղափարախոսության տարածումը», ինչպես նաև «մեր իսլամական հեղափոխության գաղափարները ամեն մի մահմեդականի գիտակցությանը հասցնելը, շարիաթի և իսլամի օրենքները բարձր պահելը, բոլոր մահմեդականներին քաֆիրների ու կոմունիզմի գաղափարների վերջնական ոչնչացման նախապատրաստելը և իսլամական հեղափոխության լիակատար հաղթանակին հասնելը»: Ըստ նրա՝ ԱԻԸ-ն «այն միակ կազմակերպությունն է, որը հիրավի պայքարում է հանուն իսլամի՝ քաղաքական, տնտեսական ու սոցիալական ոլորտներում, հանուն նրա գաղափարների ու նպատակների տարածման, հանուն Ղուրանի և արդար կառավարության»: ԱԻԸ-ի անդամներին հրահանգված է «ամենուրեք և միշտ հարգել հոգևոր կոչում ունեցող անձանց և կրոնական հեղինակություններին»:

Իր քարոզչական թռուցիկներում ու բուկլեներում ԱԻԸ-ն, համաձայն իմամ Հոմեյնիի տեսակետի, «ամերիկյան իմպերիալիզմը» դնում է «արյունռուշտ Ռուսաստանի» հետ միևնույն հարթության վրա՝ շեշտելով, թե իբր այս երկու ուժերը գործում են «լիովին փոխհամաձայնեցված»: Դա պարզորոշ երևում է Թեհրանում ԱԻԸ-ի գործկոմի մամուլի բաժնի թռուցիկից, որն ստորագրել է «պրոֆեսոր Բ. Ռաբբանին» (հայտնաբերվել է 1982 թվականին Բադախշան նահանգում): Այս տեսակետից հատկանշական է թռուցիկի բնաբանը, որն առնված է Ղուրանից. «Չարագործներն ու կեղեքիչները ընկերներ են»:

ԱԻԸ-ի գաղափարաքաղաքական պլատֆորմի գլխավոր բովանդակությունը կազմում են իսլամի դավանական դրույթները: Ընկերության կողմից հրատարակվող «Միասկե խուն» («Արյան երդում») հանդեսը 1982 թվականի նոյեմբերին գրել է. «Մենք՝ Աֆղանստանում իսլամի վերականգնման սուրբ գործի մարտիկներս, միջոցներ կձեռնարկենք այն մահմեդականների դեմ, որոնք ընդունել են կոմունիստական ռեժիմը, շարիաթի օրենքներով կպատժենք նրանց: Մենք կստեղծենք մի հասարակություն, որն ազա՛տ կլինի չարից, ամեն տեսակի հակաիսլամական տարրերից, ազա՛տ՝ օտարներից, ազա՛տ՝ անարդարությունից: Կեցցե՛ն Աֆղանստանում իսլամական պետության հաստատման համար մաքառող մեր մարտիկները»:

ԱԻԸ-ի աստվածաբանական ու քարոզչական տպագիր արտադրանքին բնորոշ են ավանդական իսլամական կոչերը. «Մեր նպատակն է Ալլահի օրհնանքը, Մուհամմա՛դ մարգարեն մեր առաջնորդն է, Ղուրա՛նը մեր օրենքն է, մեր ուղի՛ն՝ ապստամբությունն է, իսկ զոհողությունը հանուն Ալլահի՝ մեր վսեմագույն երազանքն է»:

Գաղափարախոսական ներգործության արդյունավետությունը մեծացնելու նպատակով ԱԻԸ-ն իր Կենտրոնական ապարատի բաժինների, ինչպես նաև տեղերում գործող «իսլամական կոմիտեների» միջոցով ծավալում է ակտիվ գործունեություն՝ միտված ջիհադում բնակչության ներգրավմանը: Մասնավորապես՝ ԱԻԸ-ի ռազմական բաժնի «150 հարց ու պատասխան պարտիզանական պատերազմի մասին» ձեռնարկում քարոզչական խմբերի առջև խնդիր է դրվում «բնակչության հետ աշխատանքը վարել այնպես, որ ժողովրդի ուշադրությունը բևեռվի ձեզ՝ որպես ջիհադի դրոշակակիրների և ստվեր գցվի հակառակորդի վրա»[153]:

Հետաքրքրություն է ներկայացնում ԱԻԸ-ի գաղափարախոսների մոտեցումը «ջիհադ» կրոնական հասկացության ու «հեղափոխություն» քաղաքական կատեգորիայի միջև բնական և էութենական կապի գոյության հիմնավորման նկատմամբ: Այդ մոտեցումն արտացոլում է ջիհադի և հոմեյնիականության «իսլամական հեղափոխության» գաղափարներն ու գործողությունները միասնական համակարգում դիտարկելու հայեցակարգը: ԱԻԸ-ի գործունեության մեջ ջիհադի և «իսլամական հեղափոխության» միասնականության հայեցակարգի գերիշխող դիրքի մասին ավելի լիարժեք պատկերացում են տալիս Աֆղանստանի իսլամական ընկերության ծրագրի ու կանոնադրության հետևյալ հատվածները[154]:

[153] "Требование времени: 150 вопросов и ответов о партизанской войне". Пешавар: Издание военного комитета ИОА, б. г. (пер. с пушту).

[154] Տես *Абуали Мурари*. Рассказы об исламском обществе из уст Исламского общества Афганистана. Б. м., б. г. (пер. с дари):

Այսպես. համաձայն ԱԻԸ-ի ծրագրի՝ կուսակցության անդամը «պայքար է մղում հանուն իսլամի վեհ գաղափարների և իսլամական հեղափոխության հաղթանակի»: ԱԻԸ-ի գործունեությունն է «մշակել ու կենսագործել իսլամի գաղափարները, գտնել դրանց հաղթանակի ուղիները և ստվարացնել իսլամի մարտիկների շարքերը»: Այնուհետև նշվում է՝ ԱԻԸ-ի շարքերն ընդունվողը «պետք է գիտենա. մեր գաղափարը միակ գաղափարն է, որ տանում է դեպի իսլամի ու կրոնի հաղթանակը»: «Հասարակության» թշնամիներ են բոլոր նրանք, «ովքեր հանդես են գալիս Ղուրանի դեմ», ուստի «ամեն մի մահմեդական պետք է դառնա իսլամի զինվոր»: Աֆղանստանի իսլամական ընկերության ծրագրում ու կանոնադրության մեջ շեշտվում է, որ «Ալլահը պատվիրել է չվախենալ մահից. անգամ եթե դու զոհվես, ապա այն աշխարհում կհանդիպես Ալլահի հետ, ուստի հանուն Ալլահի և իսլամի պետք չէ խնայել կյանքը»: Եվ հետո՝ «Յուրաքանչյուր մահմեդական, գտնվելով երկրագնդի ցանկացած կետում, պետք է մարտնչի հանուն իսլամի գաղափարների, ակտիվ կերպով քարոզի դրանք և պայքարի հակաիսլամական գաղափարների դեմ... Անհավատների դեմ մղվող սրբազան պատերազմը (ջիհադը) Ալլահի հրամանն է և կշարունակվի այնքան ժամանակ, քանի դեռ երկրում չի վերացել կյանքը»[155]:

Համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ ջիհադի հարցերն ավելի մեծ տեղ են գրավում ԱԻԸ-ի ծրագրում, քան նրա հետ մրցակցող՝ Հեքմաթիյարի գլխավորած Աֆղանստանի իսլամական կուսակցության ծրագրում: Դրանում տրվում է այդ հասկացության վերաբերյալ հետևյալ պարզաբանումը. «Ջիհադի սկիզբն է այն պահը, երբ մահմեդականը գիտակցում է, թե ովքեր են անհավատները, և լցվում է նրանց դեմ ատելությամբ: Սրբազան պատերազմի բարձրակետն է զինված պայքարն ընդդեմ անհավատների: Որքան ավելի է բորբոքվում այդ պայքարը, այնքան աճում են դրա դժվարությունները, սակայն մոջահեդները պետք է լինեն տոկուն:

Մեր հասարակության յուրաքանչյուր անդամ պետք է հավատարիմ լինի մեր գործին և անհավատների դեմ մղվող ջիհադում չվախենա մահից:

Մեր կարգախոսն է՝ «մահ հանուն Ալլահի»»:

ԱԻԸ-ի շարքեր ընդունելության ժամանակ ընտրազատումը գլխավորապես կատարվում է ըստ ջիհադին նվիրվածության, ընդսմին անկյունաքար է դարձվել անվերապահորեն ենթարկվելու և ցանկացած զոհողության դիմելու պատրաստակամության սկզբունքը: «Կանոնադրության» 9-րդ կետում ասվում է. «Մեր ընկերության անդամները պայքարում պետք է տոկուն լինեն, որովհետև անհավատների դեմ մղվող ջիհադը երկարատև ու համառ է լինելու: Ով կապրի մինչ հաղթանակը, ով կգոհվի դրա ճանապարհին, բոլորն էլ վերջին հաշվով կհայտնվեն դրախտում: Մենք մոտ ենք հաղթանակին, մեր զոհերը գուր չեն: Ալլահը տեսնում է մեզ և չի թողնի առանց օգնության:

Մեր ուժը միասնության մեջ է, ուստի և մեր ընկերության անդամները պետք է համախմբված լինեն, ինչի շնորհիվ էլ մենք կհասնենք դրված նպատակին»:

Այն, որ ԱԻԸ-ի կրոնաքաղաքական գործունեության ռազմավարական նպատակն է «իսլամական հասարակության» կերտումը, ապացուցվում է հետևյալ փաստով. ինչպես աստվածաբանական աշխատություններում, այնպես էլ քարոզչության մեջ երիտասարդության կրթությունն ու դաստիարակությունը դասվում են կրոնաքաղաքական ու ռազմական կենտրոնական գաղափարի՝ ջիհադի հետ միևնույն շարքը[156]:

ԱԻԸ-ի առաջնորդները, ձևակերպելով կրթության ու դաստիարակության նկատմամբ իրենց վերաբերմունքը, հատուկ շեշտում են, որ նախկինում Աֆղանստանը եղել է գիտության, մշակույթի և լուսավորության կենտրոն, սակայն բռնակալներն ու ծախու կառավարիչները իրենց հանցավոր գործողություններով խոչընդոտներ են ստեղծել իսլամի հաղթական գաղափարների իրականացման ճանապարհին: ԱԻԸ-ի տեսաբանները գրում են, թե «դավաճանները» թույլ չեն տվել, որ Սուրբ Գիրքը՝ Ղուրանը, դառնա կյանքի ընդհանուր ծրագիր՝ ընդգրկելով նրա բոլոր սոցիալական կողմերը և հասարակությունն ուղղորդելով դեպի զարգացում: Դրանով իսկ, իբր, ծանր հարված է հասցվել Աֆղանստանի մահմեդական ժողովրդի առաջավարական դերին:

1919 թվականից հետո, շարունակում են ԱԻԸ-ի տեսաբանները, երբ հերոսական աֆղան ազգը իսլամական հեղափոխության շնորհիվ պարզեց ջիհադի դրոշը և կործանարար հարված հասցրեց ամենահզոր գաղութատիրական տերությանը՝ Մեծ Բրիտանիային, իրավիճակը փոխվեց: Բորբոքված հեղափոխությունը Աֆղանստանին մղեց «աշխարհի հերոսական ժողովուրդների պայքարի առաջին շարքը»:

Սակայն գաղութարար թշնամիները վերսկսեցին գործողություններն ընդդեմ աֆղան ժողովրդի հերոսական հեղափոխության՝ ձգտելով թույլ չտալու իսլամի ճշմարիտ սկզբունքների իրականացումը: Գաղութատիրական շրջաններն ու բարոյազուրկ իշխող ռեժիմները խոչընդոտեցին

[155] Տես *Бурхануддин Раббани.* Какая борьба? О борьбе и джихаде. Б. м., б. г. (пер. с дари):

[156] Տես "Что необходимо для победы революции и джихада". Ч. 1, 2. Б. м., б. г. (пер. с дари):

իսլամի սկզբունքների իրականացմանը: Այդ ճշմարիտ հեղափոխական ուսմունքը կենսագործելու փոխարեն նրանք ջանացին մոլորեցնել ժողովրդական զանգվածներին՝ նրանց հրամցնելով իսլամի «երևութականությունը»:

Այս առնչությամբ ԱԻԸ-ն իր առջև խնդիր է դնում առաջին հերթին վերացնելու «իսլամական ուսուցման» զարգացման ճանապարհին եղած խոչընդոտները: Քննութագրական է իսլամական դպրոցների տարրական դասարանների համար ԱԻԸ-ի մշակած դասագիրքը, որը հրատարակվել է Աֆղանստանի իսլամական ընկերության դաստիարակության և ուսուցման վարչության գծով[157]:

Ռխուցիչներին և աշակերտներին ուղղված դիմում-նախաբանում ԱԻԸ-ի ղեկավար Բուրհանուդդին Ռաբբանին շեշտում է, որ կուսակցությունը իր գլխավոր խնդրի՝ «սրբազան ջիհադի» հետ մեկտեղ, ռազմահայրենասիրական գործունեության ոլորտում առանձնակի ուշադրություն է դարձնում խավարամտության և անգրագիտության դեմ պայքարին: Այդ նպատակով, նշում է նա, փախստականների ճամբարներում բացվել են մեդրեսեներ, ինչպես նաև Աֆղանստանի «ազատագրված շրջաններում» ձեռնարկվել է ընդգրկուն գործնական աշխատանք՝ նպատակաուղղված «հեղափոխական սերունդների» ծանոթացմանը վեհ իսլամական մշակույթին: «Չնայած ճգնաժամային իրավիճակին,–շեշտում է Ռաբբանին,– ընկերությունը, ելնելով իսլամի սկզբունքներից, մեդրեսեների համար պատրաստում է դասագրքեր, որպեսզի մահմեդականների ու մոջահեդների երեխաները կարողանան օգտվել դրանցից»:

«Ես դիմում եմ ձեզ, ո՞վ մահմեդականներ,– շարունակում է Ռաբբանին,– որ ձեր կարգախոսը լինեն գիտությունն ու գիտելիքը, որ դուք ցանկացած հարմար պահի ձեռք բերեք գիտելիքներ, որպեսզի այդ զենքով, Ղուրանի օգնությամբ, ավարտին հասցնեք մեր հաղթական ջիհադը»:

Նա կոչ է անում վրաններում ու ճամբարներում, իրենց Հայրենիքում, մեծ ջիհադի դրոշի ներքո վճռական հարված հասցնել «աշխարհի ամենահզոր գաղութատիրական պետությանը», իրենց առաջնորդների գլխավորությամբ ելնել հաղթական ապստամբության:

Քանի որ «գաղութարարները» ձգտում են ճնշելու իսլամական հեղափոխությունը և խեղդելու իսլամի ճշմարիտ դաստիարակչաբարոյական սկզբունքները, նրանք Քաբուլում տիրող բարոյազուրկ ռեժիմի հետ խոչընդոտում են իսլամի ճշմարտացի հեղափոխական ուսմունքի կենսագործմանը: ԱԻԸ-ն իր առջև խնդիր է դրել աֆղանական հասարակության

[157] Sbu "Учебник для начальных классов". ИОА, Управление воспитания и учебы. Б. м., Хиджры 1360 г. (пер. с дари):

մեջ մաքրելու իսլամական մշակույթի հիմքերը, պայքարում է հանուն այն բանի, որ մեդրեսեները ձեռք բերեն հոգևոր և հասարակական հեղինակություն, «որ հեղափոխության գաղափարների տարածման գործում դրանք դառնան հուսալի և անհողդողդ բարիկադ, իսկական կրոնական կենտրոններ՝ իսլամի կոչը հասցնելով բազմաչարչար ու տառապյալ ժողովրդի սրտին ու մտքին»:

Առանձնակի երախտապարտություն է արտահայտվում «իսլամի ազատագրական դպրոցի լուսավորիչ ուլեմների» հասցեին, մի դպրոցի, որը պետք է «կոմունիստական» և այլ «անաստական» դպրոցների դեմ մղվող պայքարում, «սրբազան ջիհադում» մարտիկներին օժտի զենքով:

Հատկանշական է առաջին դասարանի ձեռնարկում ջիհադի գաղափարների ու մոջահեդի կերպարի ներկայացվածության հանգամանքը: Այդ ձեռնարկը բաղկացած է երեք բաժնից: Առաջինը նվիրված է կրոնական իսլամական հիմունքների յուրացմանը՝ տառերի միաժամանակյա ուսումնասիրությամբ: Դրանում ներառված են Ղուրանից հակիրճ սուրահներ՝ անգիր անելու համար, կրոնական ուսուցումը պաշտպանելու անհրաժեշտության մասին հանձնարարականներ, սերտելու համար տասը պարտադիր կանոնները, այդ թվում՝ «հինգ հիմնական սկզբունքները՝ հոլիմա, նամազ, ռուզա, զաքահատ և հաջ», վարքին ու կարգապահությանը վերաբերող հրահանգագրեր և համառոտ տեղեկություններ ջիհադի էության մասին:

Երկրորդ բաժինը, որը նվիրված է ընթերցանությանն ու ուղղագրությանը, բաղկացած է «իսլամական ջիհադին» վերաբերող 47 դասից: Դրանցում ջիհադի հարցերը զուգակցված են սպորտի հարցերին: Տրված են իսլամի հետևյալ հինգ հիմնական սկզբունքների վերաբերյալ ավելի մանրամասն պարզաբանումներ՝ «մեդրեսե», «համբերատարություն», «ինազանդություն» հասկացությունների, Ղուրանի՝ որպես «աստծու հրամանի» մասին ուսմունքի բացատրությունները, թե ինչպես պետք է մահմեդականը ընկալի Ալլահի հրամանը՝ հաղորդված «ամիրաների» միջոցով, իսլամական դաշինքներին ու միություններին վերաբերմունքի մասին և այլն: Բաժինն ավարտվում է սաների մեջ իսլամի պաշտպանության գաղափարներին հավատարմություն սերմանելու կոչով, այն մտքի շեշտմամբ, որ Աֆղանստանը իսլամական երկիր է, և նրա բաղաքացին պետք է թույլ չտա, որ վիրավորեն իր հավատքը:

Երրորդ բաժնում, որը նվիրված է թվաբանությանը, այս առարկայից տարրական գիտելիքների հետ մեկտեղ ներկայացված են մոջահեդների, ատրճանակների, ավտոմատ հրազենի, զինամթերքի պատկերներ, որպեսզի այդ ժամանակ էլ սովորողները չդադարեն ջիհադի մասին մտածելուց:

* * *

Եթե փորձենք քաղաքական իսլամի համատեքստում ընդհանրացնել դասական ջիհադի էթնոքաղաքական նորամուծության դերը, ապա առաջին հերթին պետք է նշենք սրբազան պատերազմի այն նոր սուբյեկտի երևան գալու կարևորությունը, որը ներկայացնում է վերցեղային էթնոքաղաքական ինքնության նոր մակարդակը: Սրբազան պատերազմի ավանդական մեկնաբանությամբ ջիհադը հավատացյալ մոջահեդի և նրա Աստծո միջև հարաբերությունների համակարգն է: Ջիհադի համակարգի մեջ իսլամական կուսակցությունների մուտք գործելուց հետո մահմեդականի և Աստծո միջև տվյալ հարաբերությունները որոշակի չափով միջնորդավորվում են սրբազան պատերազմի ինչպես գաղափարախոսությունը, այնպես էլ ռազմաքաղաքական կազմակերպվածքը մարմնավորող քաղաքական կուսակցությամբ:

Իսլամական կուսակցությունները իրենց կազմակերպական կառուցվածքների միջոցով դինամիկացրել ու համընդհանրացրել են ցեղային ու դաշնակցային տարածքների՝«կադմերի» խիստ սահմաններում մոջահեդների ու զինված կազմավորումների ռազմական և կրոնաքաղաքական ակտիվության տեղայնացվածությունը, որն ավանդաբար բնորոշ էր Աֆղանստանին: ԱԻԸ-ի օրինակով կարելի է պնդել, որ ցեղերի անշարժ շերտավորման մեջ ներբերվել են միջցեղային, իր բովանդակությամբ բուն էթնոքաղաքական համախմբման նոր, ավելի արդյունավետ եղանակներ: Այլ կերպ ասած՝ ջիհադի մեջ ներդրվում են ժամանակակից սոցիալական ու ռազմական պրակտիկայի համապատասխան բաժիններով օժտված էթնոքաղաքականության տարրեր: Ընդսմին էթնոքաղաքականությունն արդեն սպասարկում է «իսլամական հեղափոխության» օրենքներով կազմակերպված սրբազան պատերազմի ազգային-քաղաքակրթական ասպարեզը: Ջիհադում սոցիալական կարգավորման մեխանիզմների միջոցով վերցեղային համախմբման փորձերի համոզիչ վկայություն կարելի է համարել այն «ջիհադական» քաղաքականությունը, որը ԱԻԸ-ն վարում է ազգային կրթության ոլորտում:

Իսլամական կուսակցությունների արդիականացուցիչ առաքելության մասին ընդհանուր եզրակացությունն այն է, որ դրանք ջիհադի էթնոտարածքային ամրագրվածությունը քաղաքականապես փոխադրում են «մելաթի» և «ումմայի»՝ իր ներքին միջցեղային թափանցիկությամբ դինամիկ տարածությունում մղվող համատարած սրբազան պատերազմի ասպարեզ: Տեղի է ունենում յուրաքանչյուր «կադմի» համար իր սահմաններում մղվող ջիհադի ուղղորդված կերպափոխում ինչպես ոչ կանոնավոր, այնպես էլ կանոնավոր բանակային գործունեության ռազմաքաղաքական տեղափոխությունների ազատության բոլոր աստիճաններով

օժտված համատարած պատերազմի, ընդսմին այդ կերպափոխման ռազմաքաղաքական կազմակերպումը կատարվում է «իսլամական կոմիտեների» միջոցով, որոնց վրա է դրվում իսլամական կուսակցությունների ծրագրային դիրքորոշումների կենսագործման խնդիրը:

* * *

Վերջին տարիներին Աֆղանստանի այն շրջաններում, որոնք վերահսկում էր զինված ընդդիմությունը, ստեղծվեց ընդդիմադիր «իսլամական կոմիտեների» ճյուղավորված ցանց, որը մի շարք տեղերում լրիվ ծավալով կառավարում և իշխանություն էր իրականացնում: Որոշ տեղերում, որոնք վերահսկում էր կենտրոնական իշխանությունը, տեղի իսլամական կոմիտեները ևս կատարում էին իրենց գործառույթները, սակայն՝ գործելով ընդհատակում:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ իսլամական կոմիտեների ճնշող մեծամասնությունը իր քաղաքական գործունեության մեջ կողմնորոշված է դեպի հիմնական խոշոր ընդդիմադիր կուսակցություններն ու խմբավորումները՝ Հեքմաթիյարի «Աֆղանստանի իսլամական կուսակցությունը», Ռաբբանու «Աֆղանստանի իսլամական ընկերությունը», Գեյլանու «Աֆղանստանի ազգային իսլամական ճակատը», Նաբիի «Իսլամական հեղափոխության շարժումը», Մոջադադու «Ազգային փրկության ճակատը»:

ԱԺՀ ներքին գործերի նախարարության տեղեկատվավերլուծական խմբի տվյալներով՝ երկրում 1983 թվականի հունվարի 1-ի դրությամբ գործում էին տարբեր իսլամական ընդդիմադիր կուսակցությունների մոտ 700 իսլամական կոմիտեներ: 80-ական թվականների սկզբին նկատվում էին դինամիկ փոփոխություններ՝ իսլամական կոմիտեների կազմակերպման համակարգի խոշորացում կամ տրոհում, դրանց աշխատանքի վերակառուցում՝ կապված այս կամ այն նահանգում իրադրության սրման կամ կայունացման հետ:

3.2. Ջիհադի փուշթունական էթնոքաղաքական ռեսուրսը Աֆղանստանի իսլամական կուսակցության (ԱԻԿ) օրինակով

Չնայած որոշ տարբերություններին՝ կարելի է նշել զանազան ընդդիմադիր կուսակցությունների իսլամական կոմիտեների տարածքային բաժանման ու կառուցվածքային կազմակերպվածքի շատ ընդհանրություններ: Այսպես. ԱԻԿ-ի իսլամական կոմիտեներն ստեղծվում են գավառակներում և ենթարկվում են գավառի իսլամական կոմիտեներին, որոնք, իրենց հերթին, ենթարկվում են նահանգային իսլամական կոմի-

տեին: Վերջինս անմիջականորեն ենթարկվում է ԱԻԿ-ի կենտրոնական խորհրդին, որը գտնվում է Պակիստանում: Մանր կազմավորումների գործունեությունը ղեկավարելու համար իսլամական կոմիտեներ ստեղծվում են նաև մեծ բնակավայրերում:

Մեծ իսլամական կոմիտեներն ունեն խստիվ սահմանված կառուցվածք, կառավարման բավականին հստակ կազմակերպում, զինված կազմավորումներ մարդկանց ներառման ու կցագրման լավ մշակված համակարգ: Դրանք իրենց աշխատանքը կազմակերպում են ըստ կուսակցական կենտրոններից ստացվող ցուցումների և կարգադրությունների: Այսպես. ԱԻԿ-ի զինված ուժերի գլխավոր հրամանատարության օպերատիվ կառավարման շտաբի հայտնաբերված դիրեկտիվներից մեկում ընդդիմադիր ուժերին տրվում էին հանձնարարականներ ու ցուցումներ՝ նպատակաուղղված դրանց միավորմանը, կառավարման կազմակերպվածքի կարգավորմանը, ղեկավարման համակարգի կատարելագործմանը ԱԻԿ-ի որդեգրած կուսակցական սկզբունքների հիման վրա[158]:

Համաձայն դիրեկտիվի՝ ԱԻԿ-ի տեղական իսլամական կոմիտեներն իրենց կազմում, որպես կանոն, ունեն որոշակի մասնագիտացմամբ բաժիններ (խորհուրդներ): Ռազմական բաժնի գործառույթները ներառում են մարտական գործողությունների վարման լավագույն մեթոդների մշակման նպատակով այդ գործողությունների շրջանի գնահատումը աշխարհագրական ու կլիմայական պայմանների տեսակետից: Բաժինը պետք է աշխատանքներ տանի իրազեկիչների լայն ցանցի, բնակչության ագդարարման, իրազեկման ու մոբիլիզացման համակարգի ստեղծման ուղղությամբ, ինչպես նաև պլանավորի փորձառու դաշտային հրամանատարների գլխավորությամբ հարվածային ուժերի կազմավորումը: Ընդորում, ղեկավարի նշանակման համար չափանիշ են նրա կուսակցական պատկանելությունը և իսլամին հավատարմության գործնական ապացուցվածությունը: Ռազմական բաժինը պետք է կատարելագործի մարտավարությունը՝ լավ զինված ու շարժուն հարվածային խմբերի կիրառմամբ, ընդսմին վերջիններս պետք է ունակ լինեն հաջողությամբ գործելու մութ ժամանակ և անբարենպաստ կլիմայական պայմաններում:

Մշակույթի և դաստիարակության բաժինն զբաղվում է մարտական գործողությունների ժամանակ օգտագործելու համար նախատեսվող ԱԺՀ տարբեր շրջանների տեղագրական քարտեզների, տարբեր կուսակցական փաստաթղթերի (ԱԻԿ-ի ծրագիր, կանոնադրություն), անցագրերի,

[158] Sm *Заморак Абед*. Такая борьба. Б. м., б. г. Изд. ИПА; *Гульбеддин Хекматьяр*. Требования веры и ее защиты (текст выступления от 28.08.1360 г. Хиджры в лагере № 2 ИПА) (пер. с пушту):

ԱԻԿ-ի զինանշանի ու ղեկավարների դիմանկարների հրատարակմամբ ու ցրմամբ, ինչպես նաև այնպիսի «մշակութային կենտրոնների» ստեղծմամբ, որոնց նպատակներն են՝ բնակչության շրջանում կրոնական գիտելիքների տարածումը, զինված կազմավորումների անդամների քաղաքական ու բարոյական դաստիարակությունը: Բաժնի գործառույթներից են նաև մարտական գործողությունների վերաբերյալ մանրամասն հաշվետվությունների կազմումն ու կենտրոն ներկայացումը՝ դրանցում առավել ակտիվ մոջահեդների բնութագրերի ներառմամբ:

Ագիտացիայի և քարոզչության բաժնի գլխավոր խնդիրներն են՝ բնակչության լայն զանգվածների հավաքագրումը ԱԻԿ-ի շարքեր, կուսակցության առավելությունների և կենսունակության պարզաբանումը, մոջահեդների բարոյաքաղաքական վիճակի բարելավումն ու ամրապնդումը, նրանց մեջ ինքնագոհողության պատրաստակամության սերմանումը: Բաժնի գործառույթներից է նաև մզկիթների, հոգևոր դպրոցների ցանցի ստեղծումը, մոլլաների և քարոզիչների պատրաստումը: Այս բաժինների քարոզչական գործունեությունը հատկապես արդյունավետ է, քանի որ կրում է կազմակերպված ու նպատակաուղղված բնույթ և հավակնում է տեղի բնակչության վրա գաղափարախոսական ներգործության ոլորտում առաջնային դիրքերի:

Ֆինանսական բաժինն զբաղվում է բնակչության կողմից կուսակցությանը նյութական օգնություն ցույց տալու, զինված խմբերը տրանսպորտով ապահովելու, զենքի, զինամթերքի, հանդերձանքի պահեստներ կազմակերպելու, բնակչությունից հարկեր հավաքելու, սպանված մոջահեդների հարազատներին, ինչպես նաև հիվանդ ու վիրավոր մարտիկներին օգնություն ցույց տալու հարցերով, ռազմաավարային արժեքների ու գույքի (բացի զենքից) հավաքմամբ և զինված կազմավորումների անդամների միջև բաշխմամբ:

Տեղեկատվության բաժինը (հետախուզություն և հակահետախուզություն) կազմակերպում է քաղաքների, գյուղերի (ղշլաղների), ավտոճանապարհների, զինվորական կազմավորումների տեղաբաշխման վայրերի մասին հետախուզական ու հակահետախուզական տվյալների հավաքում, աշխատանք է տանում «հայտնի և ակտիվ կոմունիստների... վերացման համար շտապ և անհետաձգելի միջոցների» ձեռնարկման ուղղությամբ:

Դատական բաժինը համաձայն մահմեդական իրավունքի նորմերի լուծում է մոջահեդների միջև ու բնակչության շրջանում ծագող տարբեր իրավաքաղաքացիական վեճեր, ըստ շարիաթի օրենքների դատավճիռներ է կայացնում կատարված քրեական հանցագործությունների համար, պետք է շարիաթի միջոցներով պայքարի իսլամի անաղարտության հա-

մար, այնպիսի անբարոյական երևույթների դեմ, ինչպիսիք են պոռնկությունը, ոգելից խմիչքների օգտագործումը, խաղամոլությունը, կաշառակերությունը և այլն:

Իսլամական կոմիտեների թվակազմը տարբեր է. սովորաբար դրանցում լինում է 25-ից մինչև 40 մարդ: Աֆղանստանի շատ բնակավայրերում գործում են իսլամական կոմիտեների ակտիվներ, որոնց անդամները տեղի բնակիչներ են:

Իսլամական կոմիտեների ու նրանց ղեկավարած զինված կազմավորումների գործունեության հիմնական մեթոդներն էին՝ կենտրոնական իշխանության ներկայացուցիչների, կուսակտիվիստների, Ցարանդոյի ու բանակի սպաների ու զինծառայողների դեմ դիվերսիոն ու ահաբեկչական, հաճախ՝ ցուցադրական բնույթի գործողությունների իրականացումը, ավտոշարասյունների, տնտեսական ու պաշտպանական նշանակություն ունեցող օբյեկտների վրա հարձակումները, բեռնված ավտոմեքենաների, առանձին անձանց գերեվարումը, ճանապարհների ականապատումը, ակտիվ քարոզչությունը և այլն:

Իսլամական կոմիտեները կիրառում էին բնակչության և իրենց անդամների շրջանում տարվող աշխատանքի բազմատեսակ մարտավարություն ու մեթոդներ. հանրահավաքների ու զրույցների կազմակերպում, իրենց կուսակցությունների ծրագրերի ու կանոնադրությունների պարզաբանում, կենտրոնական իշխանությունների նկատմամբ թշնամական բովանդակությամբ ագիտացիոն քարոզչական հանդեսների, թերթերի ու թռուցիկների հրատարակում ու ցրում, մարտական գործողություններից հրաժարվելու կոչերով դիմումներ՝ ուղղված Ցարանդոյի ու աֆղանական բանակի, ինչպես նաև խորհրդային բանակի զինծառայողներին, «քաֆիրներին»՝ ի դեմս ԽՍՀՄ-ի, ԱԺՀ-ում խորհրդային զինվորական թվակազմի, ինչպես նաև «Քաբուլում անաստվածների ռեժիմի» մասին զրպարտող տեղեկույթի, խուճապահարույց լուրերի, ապատեղեկույթի և սպառնալիքների տարածում և այլն:

Կոմիտեները բավական հմտորեն էին օգտագործում երկրում առկա դժվարությունները, ԱԺՀ քաղաքական ու տնտեսական կյանքում թույլ տրվող սխալներն ու բացթողումները, Աֆղանստանի ժողովրդական ժողովրդավարական կուսակցության (ԱԺԺԿ) մեջ ծագող տարաձայնությունները: Այսպես. Հերաթում տարածվեց դիմում՝ ուղղված ԱԺԺԿ «Հալք» թևի անդամներին, որում կոչ էր արվում անցնելու ընդդիմության կողմը, ոչնչացնելու «փարչամիստներին»* ու խորհրդային քաղաքացի-

* «Փարչամը» (դրոշ) և «Խալղը» (ժողովուրդ) ԱԺՀ-ում իշխանության գլուխ կանգնած կոմունիստամետ Աֆղանստանի ժողովրդական-ժողովրդավարական կուսակցության մեջ գոյություն ունեցած խմբավորումների անվանումներն են:

ներին, ընդ որում, այդ ուղերձը զինված ընդդիմության միասնականությունը ցուցադրելու նպատակով վավերացված էր վեց իսլամական կոմիտեների կնիքներով:

Իսլամական կոմիտեների գործունեության մեջ կարևոր տեղ ունի աշխատավոր զանգվածների բարոյավարքային իսլամական դաստիարակության կազմակերպումը, նրանց գիտակցության մեջ իսլամի՝ որպես այն միակ գաղափարախոսության արմատավորումը, որով ամեն մի աֆղան պետք է առաջնորդվի իր առօրյա կյանքում, իր յուրաքանչյուր արարքում:

Փորձենք ցույց տալ, թե ինչ էթնոքաղաքագիտական հիմք ունի իսլամական կուսակցությունների ռազմավարչական քաղաքականությունը վերահսկվող գոտիներում, որոնք ընդգրկում են ցեղերի ավանդական էթնոտարածքային ամրակցվածության և համախմբման տարածությունները՝ կադմերը:

Ինչպես արդեն ասվել է, իսլամական կուսակցությունները՝ ջիհադի կառավարման իրենց ռազմաքաղաքական կառույցներով հանդերձ, նախադրյալներ են ստեղծել աֆղանական ավանդական ռազմական դիմադրության էական բնութագրերից մեկը՝ նրա ռազմավարական անշարժունությունը, համախմբման կամ համերաշխության տարածքով սահմանափակվածությունը արմատապես հաղթահարելու համար: Համերաշխության տարածքն իր էությամբ ներկայացնում է էթնոժողովրդագրական և պայմանական-ֆեոդալական սահմանների էթնոքաղաքական զուգակցման հնամենի ակունքները: Շարունակական միջցեղային ու միջկլանային պատերազմի և թշնամական ու դաշնակցային կապերի փոխդասավորության՝ այդ գործընթացով պայմանավորված շարժունության հետևանքով «կադմ» երևույթը ներկայացնում է ջիհադի մրցակցող սուբյեկտների ճակատների մեջ ներկառուցված ճակատներով եղբայրությունների, էթնիկական խմբերի և նույնիսկ քաղաքական կուսակցությունների համերաշխության փոխկապված տարածքների՝ «կադմերի» ցանցերի դինամիկ համալիր: Աֆղանստանի տարածքի մեծ մասում ջիհադը, թեև իրականում մղվում է ամբողջ ումմայի կողմից, իրագործում էին իրենց կադմերում անշարժ տեղայնացած, որոշակի ցեղերի ու կլանների պատկանող մոջահեդները, ինչը կենդանի ուժի մի յուրահատուկ «ստատիկ ռազմական զորաշարժ» էր: Քանի որ անցյալում անհրաժեշտություն կար դիմակայելու կենտրոնական իշխանության կանոնավոր բանակին ու խորհրդային զորքերին, որոնք ազատ տեղաշարժեր էին կատարում ամբողջ Աֆղանստանի տարածքով, ապա միայն իր «կադմի» տարածքում ցույց տրվող նման ստատիկ դիմադրությունը ռազմավարական առումով անկասկած դատապարտված էր անհաջողության:

Այսպիսով՝ ԱԺՀ կենտրոնական կառավարության և ժամանակին՝ խորհրդային բանակի վարած համատարած պատերազմին գործնականում հակադրվում էր ումմայի համընդհանուր սրբազան պատերազմը, որն իրագործվում էր տեղային ցեղային պատերազմի միջոցներով: Աֆղանստանում ձևավորված ավանդույթների համաձայն՝ ցեղը կամ կլանը նույնիսկ աղետալի փորձությունների և սպառնալիքների ժամանակ վատ են ընկալում այլ ցեղի տարածք անցնելու նպատակահարմարության վերաբերյալ խորհուրդները (նման դեպքերում հրամաններն ուղղակի անհնար են): Այս պարագայում նախընտրելի է համարվում տեղափոխվել Պակիստանի կամ Իրանի տարածք, քանի որ այն դիտվում է որպես մի յուրահատուկ չեզոք գոտի:

Աֆղանստանում ռազմաքաղաքական իրադրության վերլուծությունը սոսկ ազգային մակարդակում կատարող քաղաքագետները հաշվի չէին առնում «համընդհանուր ջիհադի» իրական էթնոքաղաքական մեխանիզմները, որոնք այն վերածում էին խստիվ տեղայնացված և վատ համադասված ցեղային ջիհադների խճանկարի: Խորհրդային զորքերը ԱԺՀ մտցվելուն նախորդած և հաջորդած տարիներին պատերազմ վարելու ավանդույթների վատ իմացության հետևանքով իրադրության ռազմաքաղաքական ուսումնասիրությունը սահմանափակվում էր աֆղանական էթնոքաղաքական բազմազանությունը ամբողջությամբ չներառող մակերեսային վերլուծական մոդելներով և նման վերլուծության վրա հիմնվող առաջարկություններով: Ձուտ տեսական և մեթոդաբանական քաղաքագիտական վրիպումները գործնականում հանգեցնում էին ԽՍՀՄ կրած քաղաքական, դիվանագիտական, ռազմական մեծ կորուստների, դառնում էին աֆղանական պատերազմի բոլոր մասնակիցների համար չարդարացված մեծ թվով զոհերի պատճառներից մեկը:

Իսլամական կոմիտեներն իրենց աշխատանքում ավելի ու ավելի մեծ ուշադրություն էին դարձնում դիմադրության առանձին անկլավային ուժերի միջև ռազմաքաղաքական համաձայնության և մարտական համագործակցության համար ռեզերվների ու հնարավորությունների ձևավորմանը՝ առաջին գերազանցապես կադրերի ուղղածիգ ցանցերով, որոնք, որպես կանոն, զուգակցվում էին կենտրոնա-ծայրամասային կուսակցական-էթնոքաղաքական կառավարման կառույցների ստորակարգությանը:

Ջիհադի էթնոքաղաքականության պրոբլեմների վերաբերյալ բոլոր նախորդ դատողությունները կարելի է հանգեցնել հետևյալ քաղաքագիտական եզրակացությանը: Աֆղանստանում ջիհադի ռազմաքաղաքական արդիականացումը արդեն 1980-ական թվականների սկզբին կապված էր գինված ընդդիմության համար էական մի խնդրի իմաստավորման

հետ, այն է՝ փոփոխել պատերազմի էթնոքաղաքականությունը, առաջին հերթին՝ հրաժարվել ջիհադի ռազմական կառուցումից սրբազան պատերազմի տարածությունը «կադրերի» տրոհելու սկզբունքով:

Հենց ջիհադը էթնոցեղային տարածությունից ազգային տարածություն էթնոքաղաքականապես տեղափոխելու անհրաժեշտությամբ էր պայմանավորված զինված ընդդիմության գործունեության փոխադրումը խճանկարային «գերիլայի» մակարդակից աֆղանական կենտրոնական կառավարության ազգային բանակի մղած համատարած պատերազմի ռազմավարական ասպարեզ:

3.3. Արդիականացված ջիհադի էթնոքաղաքագիտությունը Ահմադ Շահ Մասուդի մոդելով

Պատերազմի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գինված ընդդիմության որոշ առաջնորդներ այն ժամանակ արդեն գիտակցում էին ջիհադի նման արդիականացման կարևորությունը: Փորձենք այդ գործընթացի բարդությունը ցույց տալ Աֆղանստանում ամենահեղինակավոր դաշտային հրամանատարներից և ԱԻԸ-ի ռազմաքաղաքական մտաբեղուն առաջնորդներից մեկի՝ Ահմադ Շահ Մասուդի կողմից լուծումների արդյունավետ որոնման օրինակով:

ԱԺՀ-ում հեղինակի գտնվելու ժամանակ Ահմադ Շահը, լինելով Փանջշիրի ռազմաճակատի հրամանատար, հայտնի էր որպես տաղանդավոր ռազմական կազմակերպիչ, ինչպես նաև խորամանկ ու ճկուն «բանագնաց»: Փանջշիրի հովիտի ծնունդ լինելով՝ նա իր համերկրացիների շրջանում գերիշխող դիրք էր ձեռք բերել 1980 թ. խորհրդային բանակի ստորաբաժանումների դեմ հանդուգն հաղթական հարձակման շնորհիվ: Փանջշիրի ռազմական կազմակերպման սկզբնական փուլերում Ահմադ Շահի ռազմաճակատը ծավալվում էր ըստ «կադրերի» ավանդական կառուցվածքի: Սակայն ժամանակի ընթացքում նա ընդդիմության ռազմաքաղաքական առաջնորդներից առաջինը մշակեց և իրականացրեց պատերազմի այնպիսի մոդել, որը մոջահեդներին հնարավորություն էր տալիս ճեղքելու «համերաշխության տարածությունը» և դուրս գալու ազգային ասպարեզ: Վերջապես 1985 թ. Ահմադ Շահի զորքերում հայտնվեցին կանոնավոր զինվորական ստորաբաժանումներ («քաթեհաե մարկազի»), որոնց մեջ հավաքագրումն սկսեց կատարվել «կադրերի» ցանցերից անկախ:

Սկսած այդ ընտրյալ միավորումների ստեղծման ու դրանց համազգային կազմակերպվածքի առավելությունների ցուցադրման պահից՝ Ահմադ Շահը գործունեություն ծավալեց իր ռազմական կազմակերպության մեջ այլ «համերաշխության տարածություններ» ներգրավելու ուղղությամբ:

Մասնագետները նշում էին, որ Մասուդը զուգորդում էր ազգային ռազմական կազմակերպման նկատմամբ կանոնավոր մոտեցումները և «կադմերի» սահմաններում հատվածավորված ջիհադի էթնոքաղաքական յուրահատկությունը: Մասնավորապես՝ նա ստաժավորման էր վերցնում ոչ փանջշիրյան խմբերն ու դրանց այն տեղական դաշտային հրամանատարներին, որոնք, ըստ Ահմադ Շահի ստացած հետախուզական տվյալների, լարված հարաբերությունների մեջ էին ավանդական առաջնորդների հետ: Ստաժավորվողների կողմից արդիականացված պատերազմի մոդելի գործնական յուրացումը, դրա առավելություններում համոզվածության ձեռքբերումը և փանջշիրյան հրահանգիչների ու խորհրդականների ուղեկցությամբ հետագա ներգրավումը ցեղային «կադմերի» իրենց բնիկ գոտիների մեջ Ահմադ Շահին հնարավորություն էին տալիս ջիհադը հետևողականորեն ձերբազատելու էթնոցեղային համերաշխության տեղայնացված տարածությունների սահմաններից, այսինքն՝ փաստորեն արդիականացնելու ռազմաքաղաքական դոկտրինը և նրա ազգայնացման էթնոքաղաքական պրակտիկան:

Ահմադ Շահ Մասուդը, լինելով «նոր ռազմական մտածողության» ներկայացուցիչ և միևնույն ժամանակ էթնոցեղային մշակույթի լավ գիտակ, օգտագործում էր նաև իր ռազմաքաղաքական դոկտրինի «մարդկայնացման» և ջիհադի տարամակարդակ քաղաքակրթական մասշտաբավորման գործընթացի անձնավորված կառավարման սոցիալ-հոգեբանական գործոնները: Նոր դաշտային հրամանատարները, որոնք վերջին հաշվով ներկայացնում էին որոշակի ցեղեր ու կլաններ, ունեին մոջահեդների ավանդական առաջնորդների համեմատությամբ ավելի շատ գիտելիքներ, ավելի լայն մտահորիզոն և դրանով իսկ «անաստված հակառակորդի» համընդհանուր պատերազմին ռազմական հակազդեցության ավելի ռացիոնալ տեխնոլոգիաների կրողներ էին: Նոր սերնդի հրամանատարները Ահմադ Շահի շարժման մեջ տեսնում էին ավելի ժամանակակից ծևի սոցիոդինամիկա («սովորածների» առաջքաշում՝ ցեղերի և տոհմերի նահապետական աստիճանակարգության շրջանցմամբ): Մասուդը, չդիպչելով ավանդական գյուղական էթնոսոցիալական կառուցվածքին, ջիհադի ազգայնացման իր համակարգը իրագործում էր գերազանցապես վերևից՝ ռազմաքաղաքական կառավարման արդիականացման միջոցով: Այդ նպատակով նա 1985 թ. ստեղծեց «Հյուսիսի վերահսկողության խորհուրդ» («շուրաե նազա»)՝ կոլեկտիվ ռազմական կառավարման մի կառույց, որը կոչված էր Աֆղանստանի իսլամական ընկերության քաղաքական հնարավորությունների օգտագործման և նրա ազդեցիկ առաջնորդ Բուրհանուդդին Ռաբբանու աջակցության շնորհիվ հաղթահարելու «սրբազան պատերազմի» էթնոքաղաքական հատվածավորումը «ցեղային համերաշխության տարածություններում»:

Ահմադ Շահ Մասուդի բազմամյա բարենորոգչական ռազմաքաղաքական գործունեության հետևանքով շարժունակ զինված խմբերը հնարավորություն ստացան անարգել կերպով շրջանառելու «Հյուսիսի խորհրդի» կողմից վերահսկվող ամբողջ տարածքում՝ անկախ իրենց էթնիկական պատկանելությունից ու «կադմերի» ցանցի առկայությունից: «Կադմերի» սկզբունքով կապն այժմ գործում է զինվորական ու քաղաքական կադրերի ընտրության և առաջքաշման լայն էթնոքաղաքականության ընդհանուր «ազգային» կտուրի ներքո անձնական բարեհուսության ու հավատարմության վերարտադրության ոլորտում:

Ջիհադում տեղի ունեցող արդիականացուցիչ գործընթացների էթնոքաղաքագիտական վերլուծության արգասիքները երևան են հանում Աֆղանստանում ծավալված սրբազան մահմեդական պատերազմի՝ իրենց քաղաքակրթական բազմազանությամբ հույժ բարդ երևույթների ուսումնասիրության ժամանակ հիմնարար ու կիրառական մոտեցումների շարակարգված կիրառման հետազոտական հնարավորությունները, իսկ ճգնաժամային պայմաններում՝ նաև դրա գերադասելիությունը: Ժամանակակից ջիհադի ընթացքում ազգային և միջազգային անվտանգության շահերի բազմապլանության բացահայտման նպատակով էթնոքաղաքագիտական գործիքարանի համալիր կիրառման արդյունքներում իրացվում է կարևոր հետազոտական խնդիրներից մեկը՝ էթնոքաղաքականության՝ որպես տեսական ու պրակտիկ գիտելիքների համակարգի մեթոդաբանական-մեթոդական ամբողջականության ապահովման նկատմամբ գիտական մոտեցումների մշակումը:

3.4. Դաշտային էթնոքաղաքագիտական նյութի նմուշ. ջիհադի կոչ

«Խոսք ջիհադի մասին»*

Թարգմանություն

մագնիտոֆոնային ժապավենի վրա ձայնագրված քարոզչական ճառի, ոճը պահպանված է (աղբյուրը պարզված չէ, ձայնահոլովակը հայտնաբերվել է Աշրաֆի «Աֆղանստանի իսլամական ընկերություն» հրոսակախմբի սպանված անդամներից մեկի մոտ, 8.10.82)

Եթե երկու մահմեդական իրար դեմ կռվում են, կամ երկու խումբ իրար դեմ պատերազմում են, դուք պետք է նրանց հաշտեցնեք: Եթե նրանց չհաշտեցնեք, նրանք կշարունակեն կռվել, իրար կգինաթափեն: Հարձակվող խումբը ագրեսոր է, և դուք պետք է նրան ոչնչացնեք: Սա Ալլահի կամքն է: Նա սիրում է արդարներին, և գժտվող խմբերին հաշտեցնելն Ալլահի կամքն է: Օրենքն այս է. եթե երկու խումբ կռվում են իրար դեմ, դուք պետք է նրանց հաշտեցնեք:

Ինչո՞ւ եք դուք կռվում իրար դեմ, երբ կա թշնամին: Թշնամին ոտնձգություններ է անում հայրենիքի պատվի վրա, թշնամին ուզում է մեզ պատվազուրկ անել, թշնամին մի կողմ է մնում, իսկ դուք կռվում եք աթոռի համար: Աթոռը թշնամու ձեռքում է, դուք դեռ չեք խլել այն, բայց այդ աթոռի համար իրար սպանում եք:

Եթե մի մահմեդական սպանում է մյուսին, ապա Ալլահը կնզովի նրան, և նա կդատապարտվի մեծագույն պատժի՝ հավետ կմնա դժոխքում:

Մտածե՛ք, եղբայրնե՛ր, ով հրամայում է սպանել իրար, նա լարում է ԱԻԿ-ը Ջամիաթի դեմ, Ջամիաթը Հարաքյաթի դեմ, Հարաքյաթն ԱԻԿ-ի կամ Մախոզի դեմ**, եթե նույնիսկ հրամանատարներն են ձեզ հրամայում, նրանք անհավատներ են՝ քաֆիրներ: Կան երկու տեսակի քաֆիրներ, մեկը բեղավոր է, մյուսը՝ մորուքավոր: Եթե մարդը մորուք ունի, սպիտակ զգեստ է հագնում և չալմա կապում, բայց հրամայում է սպանել մահմեդականներին, լինի դա թեկուզ Գուլբեդդինը, Գեյլանին, Բուրհանուդդինը, Մոջադադին, նա չի հավատում ո՛չ դժոխքին, ո՛չ դրախտին, ո՛չ էլ Ալլահին: Նա խաբում է մահմեդականներին: Ուրեմն նրան, ով խախտում է կանոնները, դուք պետք է սպանեք, որովհետև նա թշնամու կողմն է: Որովհետև նա ինքը թշնամի է, քաֆիր, փարչամական, խալղական, մարդկանց միջև թշնամանք է սերմանում: Հիմա ձեզ պա՞րզ է: Ասեմ ձեզ, որ երբ դուք զենք եք վերցնում և կռվի գնում, իսկ ինչ-որ մեկը մեր կռվին դեմ է, նրան զենք մի՛ տվեք, որովհետև նա ռուս է: Զենք վերցնող ամեն մի մահմեդական պաշտպանում է հայրենիքը: Իսկ նա, ով խանգարում է դրան, թեև մահմեդականանման է, բայց քաֆիր է, զենքդ ուղղիր նրա դեմ: Եթե գոհվես, ապա՝ հանուն արդար գործի, եթե մեռնի նա, նրա տեղը դժոխքում է: Նրանց ամեն մի հարձակում այլ մահմեդականների վրա հանցագործ արարք է: Նրանց պետք է հարվածել, պետք է կրակել նրանց վրա և երբեք զենքը վար չդնել: Եթե որևէ մեկը խանգարում է ձեզ, ասում է՝ «Զենքդ հանձնի՛ր», ապա մտածեք. արդյոք նա շուրավի՞* չէ՞: Մի՛ հավատացեք դրանց, դրանք խալղականներ են, փարչամականներ: Մի՞թե մահմեդականը կարող է հրամայել, որ սպանեն մահմեդականին: Մի՞թե մահմեդականը կսպանի մահմեդականին: Ի սեր Ալլահի, դա ի՞նչ բան է: Հյուսիսում ամեն տեղ իսկական թշնամին է, իսկ սրանք իրա՛ր դեմ են կռվում: Եթե մարդը պաշտպանվում է և այդ ժամանակ սպանվում է, ապա նա դառնում է շահիդ: Մի՞թե մահմեդականներն անպայման պետք է սպանեն իրար: Մի՞թե դա սխալ չէ: Այդ մահմեդականները (չէ՞ որ նրանք իրենց մահմեդական են համարում), թեև մորուք ունեն և սպիտակ չալմա են կապում, սև հոգի ունեն: Նրանք մահմեդականի զավակ չեն, այլ՝ շեյթանի ծնունդ: Մահմեդականի զավակ են նրանք, ովքեր կռվում են արդար գործի համար, կռվում են քաֆիրների դեմ: Ովքեր մահմեդականներին իրար դեմ են հանում, նրանք կռվում են աթոռի համար կամ հօգուտ ինչ-որ մեկի, իսկ այդպիսիք կան, դրանք քաֆիրներ են: Այ անաստված մարդ, ինչի՞ պիտի հասնես հիմա, որ կռվում ես աթոռի համար: Հիմա՛ր, ոչ մի բանի: Այդպե՞ս է, թե՞ այդպես չէ:

Եթե մի մահմեդական մյուսի վրա զենք է բարձրացնում. խլի՛ր նրա զենքը: Մենք ասում ենք, որ Ջամիաթի կամ ԱԻԿ-ի կամ Հարաքյաթի կողմնակից ենք, բայց դրանցից ո՛ր մեկն էլ դիմի ագրեսիայի, ոչնչացրո՛ւ նրան: Այս է հրամանը: Իմացե՛ք, որ ամեն մի խումբ, որը զրպարտում է

---

* Տեքստը հեղինակը ժամանակին ԱԺՀ-ում աշխատած քաղաքական վերլուծաբանների խմբի մասնակցությամբ ընտրել է թարգմանիչների խմբին (Միսկին, Փուլատ, Սայֆուդդին, Խայոտ) շարունակաբար պատվիրվող նյութերի բազմությունից: Հոլովակի թարգմանությունը, որը որպես հավելում կցված էր ԽՄԿԿ կենտկոմ ներկայացված զրությանը, պետք է պատկերացում տար Աֆղանստանում ջիհադի քարոզման բնույթի մասին:

Տեքստի լրախմբագրված սույն տարբերակը հրապարակվել է ՀՀ ՊՆ «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսում (1996, հմ. 2) և հեղինակի «Անվտանգության քաղաքագիտական պրոբլեմներ. ԽՍՀՄ վերակառուցում – Ղարաբաղ Հայաստան, Անդրկովկաս – Աֆղանստան» մենագրության (Ե., 2009) մեջ:

** Այստեղ թվարկված են ԱԺՀ ռեժիմի նկատմամբ ընդդիմական իսլամական հիմնական կուսակցությունների կրճատ անվանումները: Ստորև համապատասխանաբար նշված են դրանց առաջնորդների անունները:

* Դարի լեզվով «շուրավի» նշանակում է «խորհրդային»: Աֆղանական պատերազմի ժամանակ այս տերմինը աֆղան բնակչության զանգվածային գիտակցության մեջ ձեռք էր բերել զավթիչի բացասական իմաստ:

մահմեդականներին, չի սիրում նրանց, ռուսի զավակ է, թեև ասում է, թե ինքն իսլամի կողմնակից է: Եթե երկու մահմեդական կռվում են իրար հետ, ավագները պետք է նրանց հաշտեցնեն: Եթե դա չի հաջողվում, ապա գինիր մահմեդականներին և ոչնչացրու մեղավոր խմբին:

Եթե մեկը քո տան կտուրն է բարձրացել, սպանի՛ր նրան: Եթե մեկը քո բակը մտնի դռան անցքից, հանի՛ր նրա աչքերը: Բայց եթե մեկը քո տուն գա և քեզնից՝ մահմեդականից, զենքը խլի, ապա, եթե ընտրելու ժամանակ կա, նրա համար մահն ընտրիր:

Այ անխելք: Ինչպե՞ս կարող ես դու հաշտվել հավիտենական դժոխքի հետ, եթե քո մեջ հավատ կա: Եթե դու, այնուամենայնիվ, դիմում ես այդ քայլին, ապա դու, շո՛ւն, դժվար թե հավատացյալ ես: Ու թեև լավ մորուք ունես, սպիտակ չալմա ես կապում, քեզ իսլամի հրամանատար ես համարում, բայց դու հեռու ես իսլամից: Եթե նա մահմեդական է, մի՞թե կարող է սպանել իր եղբորը: Դուք, մահմեդականնե՛ր, պետք է եղբայրների միջև խաղաղություն տարածեք: Եթե երկու եղբայր գժտվել են, դու ի՞նչ ես անում: Աշխատում ես նրանց հաշտեցնել: Այդպես չէ՞: Օրինակ՝ այն աշակերտը խալղական է եղել, հիմա մորուք է պահում և իրեն մահմեդական է անվանում: Բայց կարո՞ղ է մահմեդական լինել: Դժել է իր երդումը, բայց չէ՞ որ նա փարչամական է: Ի՞նչ է արել նա: Մորուք է պահել, որ խաղեր խաղա մահմեդականների հետ, իրար հանդեպ ատելություն, թշնամանք սերմանի, սպանի մահմեդականներին, որ նրանք չմիավորվեն: Մի՞թե նա իսկական շուրավիի զավակ չէ: Ինչի՞ համար է նա այդ անում: Որպեսզի իր հայրը կառավարի Աֆղանստանը: Բայց մենք և դուք չենք հավատում այդ մորուքներին: Ամեն ոք, ով վարկաբեկում է մոջահեդին, շուրավիի զավակ է: Եթե դու մահմեդական ես, արդար գործի համար պայքարող ես, ջերմ սիրտ ունես, դու այդպես կվարվե՞ս: Չքավորի տունն այնտեղ է՝ հեռու վերևում, ինքն ապրում է փողոցում, իսկ սա կռվում է աթոռի համար: Այդ ի՞նչ է անում սա, այս անաստվածը: Հրաման կա հատուկ խումբ ստեղծելու, որ այդպիսի մարդկանց գնդակահարի: Ալլահից վախեցեք, որ դուք այդպես կռվում եք: Եթե դուք կռվում եք այն բանի համար, որ նա այնտեղից է, իսկ դու՝ այստեղից, որ դու այսպիսին ես, իսկ նա՝ այնպիսին, դա իսլամ չէ: Ամեն մեկը պետք է հարգի իրեն, ամեն մեկն ուրախ է, որ իր պատմությունն ունի: Ամեն մի տոհմ, որ դու տեսնում ես, ունի իր տեղն աշխարհում: Նա ուժ ուներ, բայց ժամանակները փոխվում են: Ուստի, եթե մենք այսքան զորեղ ենք, ապա չպետք է ուրիշին անզոր համարենք, քանի որ նա էլ իր ժամանակին զորեղ է եղել: Մի՛ ծիծաղիր նրա վրա, քանի որ նա էլ կարող է վաղը քեզ վրա ծիծաղել: Եթե դու նրա վրա ծիծաղել ես, նա քեզնից վրեժխնդիր կլինի: Հասկացա՞ք: Ալլահն ասում է, որ մահմեդականը պետք է պահի իր պատիվը: Եթե ԱԻԿ-ը վատ է մտածում

Ջամիաթի մասին, կարծում է, թե Ջամիաթը Ամերիկայի կողմն է, կամ Ջամիաթը վատ է մտածում ԱԻԿ-ի մասին, թե նա ռուսների կամ ուրիշ ինչ-որ մեկի կողմն է, ապա դու պետք է խուսափես նման խոսքերից, քանի որ դա վատ է:

Երբ մենք թշնամու դեմ ջիհադ ենք մղում, մենք պետք է հիշենք Ալլահին, աղոթենք Նրան և խնդրենք Նրա օգնությունը մեր նպատակին հասնելու համար: Եթե մենք այդ չանենք, ապա ոչնչի չենք հասնի, իսկ եթե հիշենք Ալլահին, ապա կհասնենք: Երջանկությունը և հաջողությունները Ալլահի ձեռքում են, միայն Նա կարող է մեզ երջանիկ դարձնել: Միայն Նա մեզ կօգնի: Ի՞նչ կարող ենք մենք անել ուղղաթիռների և տանկերի դեմ առանց Ալլահի: Ուրեմն մարտի դաշտում մենք պետք է միշտ հիշենք Ալլահին:

Դուք պետք է երկրպագեք Ալլահին, աղոթեք, հավատարիմ լինեք հավատքին, չարիք չպատճառեք մահմեդականներին: Պետք չեն մանր բաների համար անտեղի տուգանքներ՝ 10, 20, 30 հազարի: Եթե դու վնաս ես տալիս մահմեդականին, անմեղ տեղը նրան քշում ես հարազատ հողից, ապա դու իրականում մահմեդական չես: Նա, ով ձեզ տուգանում է, ով չարիք է գործում ձեր հանդեպ, նա մարդկանց առջև սևացնում է մահմեդականական բարոյականությունը, նա իսկական մահմեդական չէ: Նա այդ անում է, որ մարդիկ ընդունեն «ժողովրդական իշխանությունը»: Մենք շատ մարդկանցից ենք լսել, թե իրենք ուզում են անձնատուր լինել շուրավիներին: Շուրավիներն ավելի լավ են, քան այդպիսի մահմեդականները: Ահա այդպիսի հրամանատարները և նրանք, ովքեր մորուք ունեն, իրենք ռուս են, ռուսների ներկայացուցիչներ են և ուզում են ոչնչացնել իսլամը: Մահմեդականը չպետք է անհիմն կերպով պատժի, տուգանքի ենթարկի և, ինչպես արդեն ձեզ ասացի, սպանի: Մի՞թե մահմեդականը կարող է սպանել մահմեդականին: Ջամիաթը դեպի իրեն է քաշում, Հարաքյաթը՝ դեպի իրեն, Մախոզը՝ դեպի իրեն, մյուսը՝ դեպի իրեն: Այս սրիկաները ծախեցին իրենց հայրենիքը, իրենց 1350-ամյա հայրենիքը ծախեցին: Բերեցին 100 հազար ռուս զինվորների* 10 հազար տանկերով հանդերձ և իրենք էլ նրանց ստրուկը դարձան: Ապա մի մտածե՛ք, թե ով վերացրեց Զաքիրին, ռուսնե՞րը, թե՞ ուրիշներ: Ո՞վ վերացրեց Դաուդին, Թարաքիին, ո՞վ վերացրեց Ամինին, ռուսնե՞րը, թե՞ ուրիշներ: Բաբրաքին ո՞վ կվերացնի: Նրան էլ շուրավիները կվերացնեն: Բայց, երդվում եմ, քեզ էլ հանգիստ չեն թողնի՛: Դու կարծում ես, թե նրանց պետք են աֆղաննե՞րը՝ խալղականները կամ փարչամականնե՞րը: Ո՛չ, նրանց պետք է աֆղանական հողը: Միակ բանն այն է, որ նրանք սիրահարված են հողին: Ուզում են ծովին հասնել և հետո զավթել Պակիստանն ու Հնդկաստանը, արաբական պետությունները,

* Զաքիրը, Դաուդը, Թարաքին, Բաբրաքը աֆղանական պետության ղեկավարներն են:

իսկ մեզ ձեզ հետ՝ շահագործել: Սա է շուրավիների նպատակը: Շուրավիներին պետք չեն ո՛չ փարչամը և ո՛չ էլ խալըը: Արդյոք, ռուսների դրդմամբ չէ՞ր, որ սպանվեց Թարաքին կամ Հաֆիզուլա՞, թե՞ ոչ: Բաբրաքին նրա՞նք կսպանեն, թե՞ ուրիշները: Չէ՞ որ դուք նրանց ճտերն եք. մի՞թե նրանք ձեզ կթողնեն: Չեր երիտասարդությանը Աֆղանստանում թողեցի՞ն: Հարգված մարդկանց թողեցի՞ն: Բոլորին վերացրին: Դուք ձեզ խելացի եք համարում: Այ դուք, տգետ ավանակնե՛ր, մտածե՛ք, թե ինչու եք մարդկանց ստիպում տանջվել:

Եթե դուք մահմեդական եք, ապա պետք է համախմբվեք և թշնամուն քշեք հայրենիքից: Խելացի մարդիկ ասում են. պետք է ապրել պարզ երկնքի տակ, այլ ոչ թե լինել օտար ցեղի ստրուկներ: Չի կարելի օտար զինվորին թողնել, որ տրորի ձեր մորը: Իսկ եթե «խելոքները» հակառակն են ասում, ապա հազար անեծք այդպիսի գիտունների գլխին: Գեթ մեկ անգամ մտածեք. Աֆղանստանի խեղճ մահմեդականը դեպի իսլամն է մղվում, իսկ մենք բաժանվել ենք 50 մասի, մեկը՝ Հեզբե Իսլամի, մյուսը՝ Ջամիաթե Իսլամի, Հարաքյաթե էնղելոբին Իսլամի, Ֆիդայան, Հեզբե Անսոուրե Իսլամի, և իրար թշնամի ենք դարձել: Դուք ճիվաղներ եք: Իսկ ո՞ւր կորչի Աֆղանստանի մահմեդականը: Չեր հայրենիքն Աֆղանստանն է, կրոնը՝ իսլամը, իսկ դուք՝ մահմեդականական խմբավորումներդ, մահմեդականական ոչ մահմեդականներդ, չէ՞ որ դուք ուզում եք ծախել հայրենիքը: Եթե դուք բոլորդ միավորվեք, ղուրանն ամուր վերցնեք ձեր ձեռքը, չմասնատվեք, եթե դուք՝ աֆղաններ, մահմեդականներ եք, Աֆղանստանի ազատագրման կողմն եք, ապա միավորվե՛ք միացյալ դրոշի տակ, և դուք կոչնչացնեք թշնամուն: Բայց եթե դու աթոռ ես ուզում, աշխատավարձդ շուրավիից ես ստանում, փողը թշնամիներիցդ ես ստանում, ուրեմն դու ուզում ես Աֆղանստանը մաս-մաս անել:

Մահմեդական եղբայրնե՛ր, մի՛ կռվեք իրար դեմ, թե չէ կթուլանաք: Մահմեդական եղբայրնե՛ր, մենք պետք է ամուր լինենք թշնամու դեմ և ճանաչենք մեր թշնամուն: Իմացե՛ք, որ ամեն մի խումբ, որը մահմեդականներին սպանելու հրաման է տալիս, շուրավիների կողմն է, նա Աֆղանստանի թշնամին է: Դուք պետք է միավորվեք, լինեք միասնական, ինքներդ ոչնչացնեք թշնամուն, թուլություն չցուցաբերեք, տարբեր խմբերի միջոցով մի՛ սպանեք ձեր եղբայրներին, կրակոցներն ուղղեցեք թշնամու վրա: Որ դուք սպանում եք մահմեդականներին, ձեզ հավիտենական դժոխք է սպասում: Դա՞ է արդյոք ձեր խելքը, ձեր զգոնությունը: Ո՛չ, դուք մահմեդականներ չեք: Մահմեդականը մահմեդականին եղբայր է, նա չպետք է չարիք պատճառի նրան: Դուք ինչո՞ւ եք չարիք պատճառում Աֆղանստանի խեղճ ժողովրդին, անջատ-անջատ խմբերի միջոցով

* Խոսքը վերաբերում է Հաֆիզուլա Ամինին:

սպանում ձեր եղբայր մահմեդականին: Մի քիչ մտածեք, թե ինչ պատահեց Բուխարայիին թուրքերի և տաջիկների միջև թշնամության հետևանքով: (Իսկ թշնամանքը ռուսները սերմանեցին:) Շուրավիներն առանց որևէ ջանքի զավթեցին Բուխարան: Եվ այսպես, եղբայրնե՛ր, շուրավիներն այս կերպ են գործում, խմբերի միջև թշնամություն են հարուցում, իսկ այդ խմբերում կան մարդիկ, որոնք չեն ցանկանում միավորվել այլ մահմեդականների հետ: Այսպիսով, եղբայրնե՛ր, բոլոր նրանք, ովքեր չեն ուզում միավորվել, խմբերի միջև թշնամանք են սերմանում, շուրավիների զավակներ են: Դուք մի՛ հավատացեք նրանց և մի՛ ենթարկվեք նրանց խորամանկություններին: Լինի դա մոլլա կամ ծերունի կամ երիտասարդ, բոլոր նրանք, ովքեր թշնամություն են սերմանում, մահմեդականներ չեն, թշնամիներ են: Եթե նրանք մահմեդականների կողմն են, ապա պետք է լինեն նրանց կողմից, ովքեր հաղթում են, և ապստամբեն նրանց ղեկավարությամբ: Խմբերը պետք է ամենուրեք միավորվեն և ջարդեն թշնամուն: Այդպիսին պետք է լինի մահմեդականությունը: Դա ես ձեզ ասում եմ, որովհետև եթե այդպես լինի, եթե լինի միավորում, ապա մեր կառավարությունը, մեր հայրենիքը մերը կլինեն: Հակառակ դեպքում շուրավիները կխլեն մեզնից մեր հայրենիքը, ինչպես Բուխարան: Ահա հենց այդպիսի թշնամանքի պատճառով, որ լինում է խմբերի միջև, հայրենիքը հանձնվում է շուրավիների ձեռքը: Որից հետո չի լինի ո՛չ հայրենիք, ո՛չ կրոն, ո՛չ կին, ո՛չ երեխաներ: Կամ այն տները, որոնք մեզ այդ տառապանքները բերեցին, դրանք Ջաքիրի, Նադիրի* տներն են, այն տները, որոնք հրավիրեցին շուրավիներին և բերեցին մեզ այս բոլոր դժվարությունները: Կտեսնեք. եթե վերադառնան այդ տները, ապա կսկսեն, մի կողմից, համագործակցել ռուսների հետ, մյուս կողմից՝ Ամերիկայի հետ, այլ ո՛չ թե կրոնի և ժողովրդի: Ահա թե ինչ են ուզում այդ մարդիկ:

Հե՛յ, անջատ-անջատ խմբե՛ր: Հե՛յ, խմբեր, որ իրենց մահմեդականներ են անվանում: Եթե դուք հավատում եք Ալլահին, փորձանք մի՛ բերեք ձեր գլխին: Դու աթոռ ես ուզում, բայց Ալլահը քեզ երբեք աթոռին չի նստեցնի: Նա քեզ հետ այնպես կվարվի, որ խելքդ երբեք գլուխդ չի գա: Նա ամենայն խստությամբ կհատուցի քեզ այն բանի համար, որ դու աթոռի պատճառով ստիպում ես խեղճ մարդկանց զոհվել: Եթե դու հավատում ես Ալլահին, ապա այդպես չես վարվի: Եթե մեկն այդպես է վարվում, դուք պետք է սպանեք նրան: Եթե Ալլահը մեզ հետ է, կգտնվի՞ մի ուժ, որ կարողանա կոտրել մեզ: Մեզ կկոտրեն այն ժամանակ, երբ Ալլահը մեզ հետ չի լինի: Եթե մենք ձեզ հետ անջատ-անջատ ենք, ապա մեր երկուշաբթի և հինգշաբթի օրերի աղոթքներն ընդունելի չեն լինի, մինչև որ բոլորս հաշտ չլինենք իրար հետ: Մենք այնպիսի վիճակում

* Հիշատակված են Աֆղանստանի նախկին կառավարողների անունները:

ենք, որ ԱԻԿ-ը Ջամիաթի դեմ է, Հարաքյաթը՝ Մախոզի, մի ուրիշը՝ մեկ ուրիշի, իսկ մենք ձեզ հետ պետք է թշնամի լինենք այն խմբին, որը քաֆիրների կողմն է: Առանձին հաշիվ կունենանք նրանց հետ, ովքեր մեզ կոչ են անում դառնալու քաֆիր: Եթե դա չլինի, չի լինի և Ալլահի նզովքը:

Ալլահն ասում է, որ դուք կթուլանաք, կգրկվեք ուժից: Համբերե՛ք, քանի որ Ալլահը համբերատարների հետ է: Եղբայրնե՛ր, մի՛ թուլացեք, մի՛ տխրեք: Դուք բարձր եք բոլոր տեսակի գժտություններից, դուք մահմեդականներ եք: Եթե դուք մահմեդականներ եք, և հավատը դեպի Ալլահն իրոք որ անկեղծ է, դուք երբեք ստորացած չեք լինի, և ձեզ երբեք չեն հաղթի: Բայց ձեր հավատը կթուլանա, եթե կռիվ լինի աթոռի համար կամ լինի տեղայնություն. մենք ձեզ հետ նսեմացած կլինենք: Եթե ձեր արդար գործը Ալլահը չընդունի, դուք երբեք դրախտ չեք ընկնի: Ամենքն էլ ուզում է դրախտ ընկնել: Դու նյութապես կամ որևէ այլ ճանապարհով օգնե՞լ ես նրանց, ովքեր կռվում են արդար գործի համար: Ո՛չ: Մի՞թե դրախտն այդպիսիների համար է: Դրախտը նրանց տեղն է, ովքեր իրենց ամբողջ ունեցվածքը և նույնիսկ կյանքը զոհում են արդար գործի համար մղվող կռվում, լինի դա մոլլա, խան, թե մի հասարակ մարդ:

Աֆղանստանի թշնամին՝ իսլամի թշնամին, ոտք է դրել մեր հայրենիք: Ով չի մարտնչում նրա դեմ, նա նզովված է Ալլահի կողմից: Բայց եթե ձեզնից որևէ մեկը մե՛կ փարչամի, մե՛կ խալղի կամ ուրիշ որևէ մեկի կողմն է, ապա նա ձեր ամենաառաջին թշնամին է: Դուք կարծում եք, թե կարելի է հենց այնպես դրախտ ընկնել: Դրա համար պետք է քննություն տալ, պետք է կռվել, օգնել և եթե պետք է՝ մեռնել: Մենք ձեզ հետ չպետք է վախենանք մահից, որովհետև եթե բախտորոշված չէ, ապա մահ չի լինի: Իսկ եթե ինչ-որ բան բախտորոշված է, կյանք չի լինի: Ով տանն է, նա գերեզմանատանը չէ, իսկ ով գերեզմանատանն է, նա տանը չէ: Հիշե՛ք. այն, ինչ բախտորոշված է մեկին, մյուսի հետ երբեք չի կատարվի: Ոհստի բոլորը պետք է վանեն մահվան վախը, ոչ ոք չի մեռնի առանց Ալլահի կամքի: Բոլոր մարդիկ մեռնում են Ալլահի թույլտվությամբ: Իսկ Ալլահը թույլտվություն է տալիս միայն այն դեպքում, երբ եկել է անհրաժեշտ ժամանակը: Որտեղ էլ որ լինեք, մահը միշտ էլ ձեզ կգտնի, մահից չես խուսափի: Եղբայրնե՛ր, արդյո՞ք հաճելի է ձեր կյանքը ստրկության մեջ, ձեր կանանց ու աղջիկների կյանքը ռուսներին ծառայության մեջ: Ավելի լավ է մահը: Մահը հազար անգամ լավ է նման կյանքից: Մենք ձեզ հետ պետք է մարտնչենք հենց մահից մեր հայրենիքը ազատագրելու համար: Բայց եթե մենք ձեզ հետ մահից վախենանք, ռուսները կգայթակղեն մեր կանանց, կօգտագործեն մեր աղջիկներին: Թող անիծյա՛լ լինի այդպիսի կյանքը, եթե մենք դա կյանք ենք անվանում:

Սակայն Աֆղանստանի խեղճ ժողովուրդը ընդունեց մահը: Ես ասում եմ՝ նզովյա՛լ լինեք, անջատ-անջատ խմբե՛ր: Ով իսլամն է ուզում, Աֆղանստանն է ուզում, ճշմարտությունն է ուզում, թող Ալլա՛հը նրան օրհնի: Բայց ով ահա այսպիսի Աֆղանստան է ուզում, Ալլահը կպատժի նրան: Կան մարդիկ, որոնք ընդհանրապես չեն ուզում Աֆղանստանի ազատությունը, քանի որ առաջներում կուշտ չեն եղել, իսկ այժմ իրենց լավ են զգում, տակները մեքենա կա, նրանք մեր մասին չեն էլ մտածում. կուզե՞ն նրանք արդյոք, որ Աֆղանստանում լավ լինի: Կան և այսպիսի անամոթ մարդիկ, և նրանք միշտ գժտություն են բորբոքում, և մեր որոշ սրիկաներ աջակցում են նրանց, և սպանում իրենց եղբորը՝ մահմեդականին: Իսկ ո՞ւր է ձեր մահմեդականի խելքը: Այդ ինչո՞ւ եք ընտրում դժոխքը: Մենք չենք վախեցել ո՛չ Ջաքիրից, ո՛չ Դաուդից, ո՛չ Թարաքիից, մենք մյուսներից էլ չենք վախենում: Մենք պարտավոր ենք ասելու ճշմարտությունը մեր եղբայր մահմեդականներին:

Մահմեդականնե՛ր, միավորվե՛ք,
Միացե՛ք և ջախջախե՛ք թշնամուն:
Հե՛յ, երիտասարդ քաջե՛ր,
Կռվե՛ք առյուծի պես և ջախջախե՛ք թշնամուն:

(Սրան հետևում է աղոթքը:) «Ալլա՛հ, մենք Քո անօգնական զավակներն ենք, փրկի՛ր մեր խեղճ Աֆղանստանը: Դու բերեցիր անիծյալ ռուսներին մեր իսկ մեղքով, քանի որ մեր կառավարողները, դատավորները ծախեցին մեզ, մեր ավագները դավաճանեցին ղուրանին, և մեզնից ոչ ոք չծառայեց կրոնին, դրա համար էլ Դու մեզ պատուհաս բերեցիր: Աղաչում ենք, ների՛ր մեզ, որպեսզի մենք ուղղվենք, և այն օրը, երբ մենք ուղղվենք, Դու ինքդ կվտարես թշնամուն: Ազատի՛ր մեր հայրենիքը, ազատի՛ր մեզ այս խայտառակությունից, ողորմա՛ որբերին, այրիներին: Այս մահմեդականները չեն խղճում որբերին և այրիներին, գոնե Դու խղճա նրանց: Եթե նրանք գութ ունենային, նրանք կմիավորվեին և կջախջախեին թշնամուն: Բայց քանի որ նրանք խիղճ չունեն, ուստի չեն էլ միավորվում: Չունեն նրանք խիղճ, ուստի Դու ինքդ խղճա որբերին և այրիներին: Մենք մեղավոր ենք, բայց մի՛ պատժիր Դու մեզ, ժողովրդին փրկիր թշնամուց:

Դու միշտ օգնել ես մեզ, բազում անգամներ ջախջախել ես թշնամուն, բայց մենք անշնորհակալ գտնվեցինք: Փրկի՛ր հայրենիքը, ղուրանը օրենք դարձրու, ղուրանը իշխող դարձրու: Ամեն մեկին, ով սիրում է Աֆղանստանը, ամեն մեկին, ով խղճում է Աֆղանստանի ժողովրդին, ամեն մեկին, ով իսլամի կրոնի համար ջիհադի վիճակում է, տուր հաղթանակ և ամբողջ Աֆղանստանը տուր նրանց ձեռքը:

Սատա՛ն եղիր նրանց, ովքեր կռվում են հանուն Աֆղանստանի ազատության»:

Եղբայրնե՛ր, այս ժապավենը մի մարդու ձայնագրություն է, որը մաքուր է երկնքի առջև, պայքարում է իսլամի հաղթանակի համար, չի երերում այս կամ այն կողմ, ցանկանում է միայն, որ իսլամը հաղթանակի հայրենիքում: Արտագրեցեք այս ձայնագրությունը և լսեցեք ամենուրեք միջոցառումներում»:

* * *

Տեսանելի ապագայում ավանդական ջիհադն իր արմատական դրսևորմամբ, ինչպես նաև արդիականացված ջիհադն իր փոխակերպված ռազմական ու ռազմաքաղաքական ձևերով, հեղինակի կարծիքով, սպառնում են վերածվելու կանոնավոր բանակներին անհամաչափ ցանցային դիմագրավման, պետությունների և տարածաշրջանների ապակայունացման արդյունավետ միջոցի:

Արդիականացված ջիհադը կարող է վերածվել մի գործիքարանի, որի կիրառումը հնարավորություն կտա տարածաշրջանային զինված հակամարտությունների բորբոքման ու նպատակային կառավարման միջոցով հասնելու ուժերի բաշխման աշխարհառազմավարական փոփոխման և ռեսուրսների ու շուկաների նկատմամբ վերահսկողության հաստատման[159]:

Սույն նյութը Հայաստանի Հանրապետության, ԱՊՀ երկրների, ինչպես նաև Կովկասի տարածաշրջանում իրենց շահերը հետապնդող այլ պետությունների ազգային և միջազգային անվտանգության համար սպառնալիքների պրոբլեմի ակտուալության հաշվառմամբ հասցեագրվում է զինվորական և քաղաքական հարցերով հետաքրքրվող ընթերցողին ժամանակակից ջիհադի երևույթի մասին նրա գիտելիքների ու պատկերացումների խորացման նպատակով:

[159] Տես *George W. Gawrych*. Jihad in the 20-th century. //Military Review. The Professional Journal of the United States Army. US Army Command & General Staff College, Vol. LXXV–Sept.–Oct. 1995. N 5, PP. 33 – 39; *Ralph Peters*. The Culture of Future Conflict. //Parameters. The US Army's Senior Professional Journal. US Army War College Qarterly, Vol. XXV, Winter 1995–1996. № 4, PP. 18–27:

§ 4. Ջիհադում համաձայնային սցենարների մշակման փորձի մասին. մեթոդիկայի որոնումներ և փորձաքննություն

Ինչպես վերը նշվել է, ԽՍՀՄ-ում Յու. Վ. Անդրոպովի իշխանության գալով ուրվագծվեց շրջադարձ դեպի ավելի ռեալիստական հարաբերակցում այն քաղաքական, բարոյական, մարդկային ու նյութական կորուստների և շահումների, որոնք Խորհրդային Միությունն ունեցել է ծգծգված աֆղանական պատերազմի ընթացքում*: Քաղաքական ուժերի նոր դասավորությունը կանխորոշեց ռազմավարական ընտրությունը հօգուտ ռազմական հակամարտությունից ԽՍՀՄ դուրս գալու՝ ռազմաքաղաքական դոկտրինի և դրանից բխող արտաքին ու ներքին քաղաքական ուղեգծերի համապատասխան փոփոխմամբ: Աֆղանական զինված ընդդիմության դեմ համընդհանուր պատերազմում ԽՍՀՄ և ԱԺՀ կուսակցական-պետական մեքենաների շարակարգված ներգրավվածությունը, ռազմաքաղաքական գործընթացի իներցիոն բնույթը, որը կառուցվածքագործառութային առումով ամրագրված էր զինված հակամարտության վերարտադրման դիրեկտիվ, այդ թվում՝ կադրային, մեխանիզմներում, նախանշում էին այսպես կոչված «ապահովող ծառայությունների» գործունեության կերպափոխման սահմանափակությունը:

Համաձայնային-հակամարտային նպատակամիտումը (միանշանակ հակամարտայինի փոխարեն) կանխորոշեց միջազգային հարաբերությունների համակարգում ԽՍՀՄ կերպարի ու դերի ռեաբիլիտացիայի համար նախադրյալների ստեղծման հնարավորությունների հետազոտման «գերխնդիրը»: Այն սկսեց մշակվել ԽՍՀՄ ակադեմիական ու ճյուղային գիտական կենտրոնների մի ամբողջ համակարգի կողմից: Այդ հետազոտական գործընթացում որոշակի դեր էր հատկացված նաև Աֆղանստանում ակտիվ ներգրավված դիտարկման ռեժիմով աշխատող մասնագետների վերլուծական-կառավարային գործունեությանը: Միաժամանակ համաձայնային սցենարների որոնումներ էին կատարվում նաև պատերազմող կողմերի շփման ավելի բարձր՝ միջքաղաքակրթական, մակարդակում:

Ինչպես արդեն նշվեց, որպես խորհրդային արտաքին քաղաքականության ու քարոզչության տվյալ համընդհանուր ու տարածաշրջանային կա-

* 1982 թ. նոյեմբերի 27-ին՝ Լ. Ի. Բրեժնևի հուղարկավորությունից անմիջապես հետո, ԽՄԿԿ կենտկոմի Քաղբյուրոն ԽՍՀՄ նոր ղեկավարի առաջարկությամբ քննարկեց Աֆղանստանից խորհրդային զորքերի դուրսբերման հարցը: 1984 թ. փետրվարին՝ Յու. Վ. Անդրոպովի վախճանից հետո, տեղի ունեցավ հրաժարում Աֆղանստանում ազգային համաձայնության հաստատման ուղեգծից: Այդ ուղեգծի արգելակմանը նպաստեցին նաև այն միջազգային ուժերը, որոնք շահագրգռված էին, որ խորհրդային զորքերը մնան Աֆղանստանում, և ԽՍՀՄ-ը շարունակի քայքայվել:

ռուցվածքի նպատակ դիտվում էր ԽՍՀՄ Զինված ուժերի դուրսբերումն ԱԺՀ-ից: Կապված քաղաքական ուղեգծի փոփոխման հետ՝ սկսեց փոխվել նաև խորհրդականների հաստատության գործունեությունը, ինչն ուղեկցվում էր դրա բովանդակության մեջ վերլուծական բաժինների ինտենսիվ ներմուծմամբ: 1982 թվականի աշնանից հակառակորդին ցույց տրվող քաղաքական ու գաղափարախոսական հակազդեցության հարցերը մշակող վերլուծաբանների առջև դրված խնդիրներում գերակայություններն սկսեցին թեքվել դեպի «ազգային համերաշխության քաղաքականության» տեսության ու պրակտիկայի հետազոտում: Ավանդական քաղաքական ու հակաքարոզչական հակազդեցության պրոբլեմների շարունակվող մշակումների ֆոնի վրա մի շարք մասնագետներ սկսեցին ներգրավվել ձևավորվող համաձայնային-հակամարտային ուղեգծի տեսական-մեթոդաբանական հիմքերի վերաիմաստավորման գործում:

Հանուն ճշմարտության պետք է ասել, որ տվյալ դեպքում ոչ միայն հակամարտության, այլև համաձայնության էթնոքաղաքականության ոլորտում հետազոտական դաշտի ընդհանուր ուրվագծի, ինչպես նաև ուսումնասիրության գործիքակազմի ընտրությունը տրված էր «վերևից», գերազանցապես՝ դիրեկտիվային եղանակով: Եվ միայն գիտական ու գործնական խնդիրների այս, համեմատաբար ավելի օբյեկտիվ ձևակերպման շրջանակներում էին սակավաթիվ մասնագետները կատարում այն գործիքների ընտրությունը, որոնք համապատասխանում էին բազմամակարդակ վերլուծական-կառավարային մշակման կոնկրետ բնագավառներին:

Ժամանակի ընթացքում, թեև այս դրույթը չներկայացվեց խորհրդային հասարակության քննարկմանը, պարզ դարձավ, որ աֆղանական հակամարտության ներքին և արտաքին քաղաքական կարգավորմանն անցնելու բարդությունը կապված է դրա մոդելի հիմքային ձևախախտվածության հետ: Ժամանակին խորհրդային զորքեր մտցնելու որոշումն արդարացնելու, «ագրեսիա» և «բռնազավթում» տիպի միջազգային-իրավական գնահատականները չեզոքացնելու համար մշակվեցին «աֆղանական ժողովրդի դեմ իմպերիալիզմի սանձազերծած չհայտարարված պատերազմի» մեթոդաբանական հայեցակարգն ու մոդելը: Հենց այս առասպելականացված մոդելը ԱԺՀ-ում խորհրդային ներկայության արդարացմանն ու արտաքին ագրեսիայի հետևմանն իր կողմնորոշվածությամբ քողարկեց աֆղանական հակամարտության հիմքային կառուցվածքը՝ երկար ժամանակով կաշկանդելով իր ներքաղաքական հենքի վրա դրա դինամիկայի հնարավոր սցենարների համաձայնային կարողությունները:

Վերլուծաբանների նեղ շրջանում հակամարտության հիմքային մոդելի էության գիտական պարզումը, դրա կառուցվածքի ու դինամիկայի որոշումը մեթոդաբանական հիմք դարձան, որպեսզի քաղաքագիտական տեսակետից հիմնավորվի այն համաձայնային գիտափորձերի կատարման հնարավորության մասին վարկածը, որոնք պետք է նախորդեին ազգային խաղաղության հաստատմանը միտված ուղեգիծը և հնարավորություն տային փորձարկելու դրա քաղաքական գործիքարանը:

Տվյալ վարկածի տեսական միջուկը օրգանապես պարունակում էր միջազգայնացված զինված հակամարտությունը Աֆղանստանի ընդդիմության ու պաշտոնական ռեժիմի միջև ներքաղաքական քաղաքացիական հակամարտության սկզբնական հունը վերադարձնելու մասին հայեցակարգը[160]: Հենց ներազգային հակամարտության մասնակիցների՝ աֆղանների կողմից սկզբնապես ընտրված դերերի վերադարձն իրենց իսկ՝ աֆղաններին, դարձավ խորհրդային զորքերի դուրսբերման մասին թեկուզ և չքարոզվող, սակայն իրատեսական վարկած:

«Ճգնաժամային էթնոքաղաքականության» կողմից դրվող սահմանափակումները հիմնականում պայմանավորված էին հուսալի տեղեկույթի աղբյուրների մատչելիության, համաձայնային-հակամարտային պրակտիկայի սուբյեկտների և օբյեկտների ինքնարտահայտման միջավայրի հետ անմիջական շփումների խիստ սահմանափակվածությամբ: Աֆղանական պատերազմի պայմաններում կոնկրետ էթնոքաղաքագիտության գործիքակազմից գործնականում բացառվում էին քաղաքական սոցիոլոգիայի մեթոդների կիրառմամբ կատարվող զանգվածային հետազոտությունները: Դրա հիմնական պատճառներն էին՝ երկրում ուղևորության ժամանակ հետազոտողի կյանքի համար իրական վտանգի գոյությունը[161], բնակչության մեծ մասի անգրագիտությունը, զանգվածային հարցումների համար պատրաստված կադրեր ու համապատասխան ավանդույթներ չլինելու հանգամանքը և այլն: Քանի որ բնակչությունը հարցազրույցներն ընկալում էր որպես միջամտություն անձնական կյան-

[160] Աֆղանական զինված հակամարտության՝ «Աֆղան ժողովրդի դեմ չհայտարարված պատերազմի» մոդելով մարմնավորված հայեցակարգի քաղաքական-գաղափարախոսական պատվիրվածությունը երկար տարիներ բացառում էր ընդդիմության ներկայացուցիչների իրավահավասար մասնակցությունը միջազգային բանակցություններին ու պայմանագրերին: Աֆղանական ընդդիմության նման արհեստական մեկուսացումը բացառում էր նաև նրանց կողմից պայմանագրերի կատարման վերաբերյալ որևէ պարտավորությունների ստանձնումը, քանի որ նրանք չէին մասնակցում դրանց քննարկումներին: Այս մոտեցումը փաստորեն միջնորդավորված ձևով նպաստում էր պատերազմի շարունակմանը:

[161] Այն մասնագետները, որոնք 1982–1983 թթ. աշխատել են ԱԺՀ-ում, ի հակադրություն աֆղանական պաշտոնական քարոզչության գնահատականների, գիտեն, որ անգամ ցերեկային ժամերին Աֆղանստանի տարածքի շուրջ 80 %-ը վերահսկվում էր զինված ընդդիմության կողմից:

քին, ուստի անհնարին էր զանգվածային ուսումնասիրությունների արդյունքների իսկությունն ստուգել քիչ թե շատ հուսալի կերպով:

Վերլուծության արդյունքների մշտական գործնական փորձարկման և իսկության ստուգման, ինչպես նաև ռազմաքաղաքական կառավարման պրակտիկայում ներդրման անհրաժեշտության բերումով կիրառական էթնոքաղաքագիտության գործիքակազմում հատուկ տեղ էր գրավում իր բովանդակությամբ ու կառուցվածքով առավել բարդ մեթոդը՝ «գիտափորձը»:

Աֆղանստանում ջիհադի ռազմաքաղաքական և սոցիալ-հոգեբանական յուրահատկությունների հետևանքով գիտափորձերը կարող էին անցկացվել միայն հետազոտվող օբյեկտների բնական ինքնարտահայտման դաշտային պայմաններում: Վերլուծաբանները հիմնականում հնարավորություն չէին ունենում «կախյալ փոփոխականների» վրա ազդեցության վերահսկման նպատակով նախապես ընտրելու և գրանցման նախապատրաստելու «անկախ փոփոխականը»: Ուստի հետազոտողները մեծ մասամբ գործում էին «բնական գիտափորձի» ռեժիմով, երբ ստիպված էին ուշադիր դիտարկել դրա օբյեկտները և սպասել, մինչև համաձայնության–հակամարտության հետազոտվող գործընթացում հստակորեն արտահայտվի այն համաձայնային կամ հակամարտային տարրերի փոփոխությունը, որոնք էլ հենց կարող են հանդես գալ միջնորդավորված կերպով վերահսկվող անկախ փոփոխականի դերում:

Համաձայնային գիտափորձում որպես հետազոտման և ուղղակի կամ միջնորդավորված եղանակով վերահսկվող էթնոքաղաքական օբյեկտներ դիտարկվում էին ռազմական ու քաղաքական ռեալ իշխանության կառույցները, որոնք գոյություն ունեին ինչպես ԱԺՀ պաշտոնական հաստատություններում, այնպես էլ զինված ընդդիմության ռազմաքաղաքական ստորաբաժանումների գործունեության ոլորտում: Ի դեպ, վերջիններս թեև ճանաչված չէին որպես օրինական իշխանության սուբյեկտներ, սակայն ոչ պակաս ազդեցիկ էին:

Որպես անկախ համընդհանուր փոփոխականներ դիտվում էին օբյեկտների այն բնութագրերը, որոնք վկայում էին զինադադարի և համագործակցության վիճակ նրանց մտնելու մասին (բանակցություններ բանակցությունների վարման մասին, տնտղիչ բանակցություններ, միջնորդական առաջարկությունների իրացվելիության, անմիջական բանակցությունների մեջ մտնելու գլխավոր հատկանիշների քննարկում և համաձայնեցում, զինադադարի պայմանների վերահսկելիություն, բանակցությունների և բուն զինադադարի վերարտադրման երաշխիքների պահպանում և այլն):

Տվյալ դեպքում խնդիրը մի յուրահատուկ դաշտային գիտափորձի կատարումն էր այնպիսի պայմաններում, երբ գիտափորձի օբյեկտը՝ ԱԺՀ-ում հակամարտության կողմերը, գերզգայուն կերպով էր արձագանքում զինված կազմավորումների վարքի վրա թեկուզ որոշ չափով ներգործություն պարունակող ցանկացած միջամտությանը:

Այսպիսով՝ դաշտային գիտափորձը գործնականում բացառում էր իր ընթացքի վերահսկման անմիջական ձևերը և ենթադրում էր հետազոտական ու գործնական աշխատանքի վարում պատերազմող և բանակցող կողմ-հակառակորդների ներխմբային և արտախմբային բնական ինքնարտահայտման պայմաններում: Պատերազմող կողմերին համաձայնության ու համագործակցության մղելու ուղղությամբ բնական գիտափորձի նախապատրաստման և անցկացման ժամանակ առանձնակի մտահոգության առիթ էր հակազդումն իրավիճակի ճգնաժամային փոփոխականությանը: Վերջինս պայմանավորված էր ինչպես տարատեսակ տեղական ռազմական էթնոքաղաքական գործոններով, այնպես էլ զինված ընդդիմության ու քաբուլյան իշխանությունների շտաբային կենտրոններից իրականացվող ռազմաքաղաքական կառավարմամբ:

Գիտափորձի տվյալ ձևը հետազոտվող և կառավարվող օբյեկտների բնույթի պատճառով հասարակական գործունեության մի բարդ համալիր էր, որը չէր սահմանափակվում միայն զինված կազմավորումների ռազմաքաղաքական վարքի ոլորտով: Թեև խմբային վարքի կարգավորման հարցում արտաքնապես գերակշռում էին ռազմաքաղաքական գործոնները, այնուամենայնիվ այդ վարքն զգալի չափով պայմանավորված էր օբյեկտի սոցիոմշակույթի և էթնոմշակույթի յուրահատկությամբ:

Հարկ է ուշադրություն դարձնել այդ գիտափորձի հետազոտական և գործնական կողմերի սերտ կապին: Ի դեպ, հետազոտական մասն առաջին հերթին ներառում էր օբյեկտների՝ ռազմական հակամարտության կողմերի վերաբերյալ տեղեկությունների հավաքում և վերլուծում, այդ թվում նաև գիտափորձի այնպիսի առարկայի մասին, ինչպիսին է պատերազմող կոնկրետ կազմավորումների փոխհարաբերություններում եղած համաձայնային ու հակամարտային ներուժը:

Գիտական ուսումնասիրության ընթացքում կիրառվում էին այն հետազոտական գործիքները, որոնք հնարավորություն էին տալիս բացահայտելու և նկարագրելու զինված խմբավորումների սոցիալական, առաջին հերթին՝ ռազմաքաղաքական, այդ թվում՝ էթնոքաղաքական, վարքի ձևավորման գործոններն ու մեխանիզմները:

Զինված ընդդիմության կազմավորումների ընդհանուր և առանձնահատուկ բնութագրերի, շահերի, նպատակների, ինչպես նաև նրանց համա-

ձայնային կամ հակամարտային վարքի կարգավորման մեխանիզմների միջև պատճառահետևանքային կապը պարզելու համար հիմնականում օգտագործվում էին այնպիսի գործիքներ, ինչպիսիք են փաստաթղթերի ուսումնասիրությունը, արտաքին և ներգրավված դիտարկումները, փորձագիտական տեղեկույթի հավաքումն ու վերլուծումը, «բանակցային տեխնոլոգիաների» տարրերը:

Ռազմական իրադրության յուրահատկությունը կանխորոշում էր համաձայնային գիտափորձի օբյեկտի և առարկայի համակողմանի ուսումնասիրման հնարավորության սահմանափակությունը: Ռևստի գիտափորձի ծրագրի մշակմանը մասնակցում էին մի քանի գերատեսչությունների ու ծառայությունների վերլուծաբաններ, որոնք օգտվում էին տեղեկույթի հավաքման ու մշակման անհրաժեշտ աղբյուրներից և մեթոդներից: Տվյալ փուլում ուսումնասիրման օբյեկտներ էին ոչ միայն քաղաքական ու ռազմաքաղաքական հաստատությունները (կուսակցություններ, շարժումներ և ռազմաքաղաքական կառավարման կառույցներ), այլև աֆղանական ավանդական հասարակության այնպիսի կարևոր տարրեր, ինչպիսիք են ցեղերը, տոհմերը, կլանները, դրանց առաջնորդները, հեղինակավոր կրոնական գործիչները:

Հետազոտվող օբյեկտների գործունեությանը վերաբերող փաստաթղթերի ուսումնասիրությունը կառուցվում էր աֆղանական և խորհրդային կողմերի վերլուծական ծառայությունների աղբյուրագիտական հիմքի վրա: Հիմնական ուշադրությունը դարձվում էր իսլամական ընդդիմադիր կուսակցությունների կենտրոնական մարմինների և տեղերում նրանց իսլամական կոմիտեների ծրագրերի, կանոնադրությունների, ուղղորդող փաստաթղթերի ու հրահանգագրերի ռազմաքաղաքական և իրավաքաղաքական վերլուծությանը: Որպես պաշտոնական գնահատականների և իրադարձությունների ուսումնասիրման լրացուցիչ աղբյուր հետազոտական գիտափորձում զուգահեռաբար կատարվում էր նաև զինված ընդդիմության և նրա արտասահմանյան դաշնակիցների մամուլի մշտադննական վերլուծություն:

Սոցիոլոգիական զանգվածային հարցումների անցկացման բացարձակ անհնարինության հետևանքով զանգվածային լրատվության միջոցների ուսումնասիրումը որոշ չափով լրացնում էր նաև աֆղանական հասարակությունում տիրապետող հասարակական կարծիքի արժանահավատ և ներկայացուցչական գնահատումների պակասը: Տվյալ հրապարակումների ուսումնասիրության ժամանակ հիմնական ուշադրությունը սովորաբար դարձվում էր ընդդիմադիր կառույցների ղեկավար մարմինների և առաջնորդների գնահատականներն ու դիրքորոշումներն արտահայտող առաջնորդող հոդվածներին, ինչպես նաև հակամարտության կողմերի ռազմական ու քաղաքական գործունեության հետ կապված փաստերի վերաբերյալ տեղեկատվական հաղորդագրություններին:

Հատուկ ուշադրության առարկա էր այն ընդդիմական հատուկ քարոզչական նյութերի ուսումնասիրությունը, որոնց նպատակն էր հակազդեցությունը խորհրդային և աֆղանական հակաքարոզչությանը, ինչպես նաև բնակչության հասարակական տրամադրվածության թեքումը հօգուտ ջիհադի: Տվյալ դեպքում հաշվի էր առնվում նաև այն փաստը, որ մոջահեդների մեծ մասի անգրագիտության պատճառով ընդդիմությունը հատուկ քարոզչական նյութերը դիմադրության լայն շրջաններին էր հասցնում իր ակտիվիստների կողմից կատարվող խմբակային ընթերցումների ու մեկնությունների միջոցով[162]:

Գիտափորձի նախապատրաստման հետազոտական մասը ներառում էր աֆղանական ընդդիմության առավել հեղինակավոր առաջնորդների հեղինակային աշխատությունների և ելույթների ուսումնասիրությունը: Ի լրացումն աֆղանական ու խորհրդային վերլուծական ծառայությունների կողմից հավաքված կենսագրական բնույթի տեղեկությունների՝ կատարվում էր այնպիսի ականավոր ընդդիմադիր գործիչների աշխատությունների համեմատական վերլուծությունը, ինչպիսիք են Գուլբեդդին Հեքմաթիյարը, Բուրհանուդդին Ռաբբանին, Սեբղաթուլլա Մոջադադին և ուրիշներ: Դա հնարավորություն էր տալիս ավելի ճշգրիտ կերպով որոշելու նրանց իրական ռազմական և էթնոքաղաքական վարկանիշը, ազդեցության ոլորտներն ու ձևերը, ինչպես նաև նրանց առաջնորդական ոճի առանձնահատկությունները[163]:

Քանի որ բնակչության գերակշռող մասն անգրագետ էր, զինված ընդդիմությունը ջիհադում աֆղանների հավաքագրում իրականացնում էր հիմնականում շարունակական բանավոր քարոզչության միջոցով՝ օգտագործելով ինչպես քարոզիչների տարածված ցանցը, այնպես էլ ժամանակակից տեխնիկական միջոցները:

---

[162] Տես *Г. С. К. (Гайк Саргисович Котанджян).* Краткая характеристика некоторых исламских контрреволюционных организаций и основных направлений их подрывной пропаганды. Кабул, август 1982 г., 13 с., *ձեռքի*՝ Մոջահեդի բարոյահոգեբանական կողմնորոշումների հարցի շուրջ: «Հայկական բանակ», 1996, հմ. 1:

[163] Տես *Себкатулла Моджадади.* Цели национального спасения Афганистана. Б. м., б. г.; "Коротко о жизни одного моджахеда: Биография С. Моджадади". Издание НФС Афганистана. Б. г. (пер. с пушту); *Бурхануддин Раббани.* Мухаммад–первый воспитатель и учитель человечества. Б. м., б. г.; *его же:* Обращение к народу Афганистана. Б. м., б. г. (пер. с дари); *Гульбеддин Хекматьяр.* Требования веры и ее защиты (текст выступления 28.08.1360 г. Хиджры в лагере № 2 ИПА) (пер. с пушту):

Գիտափորձի նախապատրաստման վերլուծական մասում հատուկ տեղ էր զբաղեցնում ընդդիմության ռադիոհաղորդումների ծրագրերի այն ընդհանրացված տեսությունների տեքստերի համեմատական ուսումնասիրությունը, որոնք մշակվում էին ԱԺՀ պաշտոնական տեղեկատվական հաստատությունների հակաքարոզչական ծառայությունների կողմից: Լուծվում էր ընդդիմության քարոզչության նպատակների, փաստարկումների, ձևերի ու մեթոդների, ինչպես նաև լսարանի մասնագիտական և էթնոմշակութային առանձնահատկությունների նույնականացման խնդիրը:

Չնայած քարոզչության արտահայտչամիջոցների դուրանական կանոնակարգման իներցիային՝ աֆղանական զինված հակամարտության ընթացքում ընդդիմությունը գունեղ պլակատներում, թռուցիկներում, բուկլեներում բավական լայնորեն օգտագործում էր կերպարվեստի ստեղծագործությունները, այդ թվում՝ դուրանական բովանդակությամբ իսլամական հայտնի ավանդական գեղագրության գործերը, սրբավայրերի պատկերները, իսլամական ականավոր գործիչների ու շահիդների դիմանկարները, հակառակորդների ծաղրանկարները և այլն: Համաձայնային գիտափորձի սցենարներ մշակողների կողմից այս և այլ տեսակի պատկերագրական փաստաթղթերի ուսումնասիրությունը հնարավորություն էր տալիս համապատասխան պատկերացում կազմելու իրենց բնակության և սրբազան պատերազմի թատերաբեմում ռազմաքաղաքական ակտիվության տարածքներում բնակչության տարատեսակ խմբերի վրա ընդդիմության կոնկրետ կազմակերպությունների կողմից հուզագեղարվեստական ներգործության ծևավորված եղանակների մասին:

Նման, թեև որոշակի առումով յուրահատուկ ուղղություններով էր էթնոքաղաքագիտական և ռազմաքաղաքագիտական վերլուծության ենթարկվում հակամարտության կողմերի գործունեությունն արտացոլող կինո-, տեսա- և ֆոտոփաստաթղթերի մշտապես համալրվող զանգվածը: Քանի որ տվյալ փաստաթղթերի հեղինակները տարբեր էին, առանձնակի հետաքրքրություն էր ներկայացնում պատկերված փաստերի ու դրանց մեկնաբանությունների արժանահավատության ուսումնասիրությունը: Փաստերի արժանահավատությունը կամ աղճատվածությունը պարզելուց հետո մանրակրկիտ բովանդակային վերլուծության էին ենթարկվում խորհրդային և արտասահմանյան, գերազանցապես՝ արևմտյան, վավերագրողների պատրաստած այն տեսողական փաստաթղթերը, որոնք պատկերում էին ցեղային պատերազմի և «կաղմերի» էթնոքաղաքական սահմաններում «մասնակային ջիհադի» առանձնահատկությունները, ինչպես նաև հակամարտության կողմերի ռազմական հակամարդասիրական գործողությունները՝ ձեռնարկված միմյանց դեմ:

Համաձայնային գիտափորձի գիտական նախապատրաստման փուլում ձայնատեսագրական նյութերի հետազոտական մշակման կարևորությունը պայմանավորված էր այն հանգամանքով, որ ընդդիմությունը տեղերում բավականին լայնորեն էր օգտագործում տեսաձայնագրիչները: Ոհսումնասիրությամբ պարզվեց, որ առկա է փաստաթղթերի տեսաձայնագրական վերարտադրման՝ ինքնուրույն էներգասնուցմամբ օժտված ժամանակակից տեխնիկական միջոցների լայն ցանց, որը տեղերում վերահսկում են իսլամական կոմիտեները:

Չայնային փաստաթղթերը վերլուծելիս բացահայտվում էին սովորաբար ձայնահոլովակների վրա վերարտադրված տեքստերի բովանդակային (նպատակադրումը և փաստարկումը) և էթնոլեզվական առանձնահատկությունները՝ կապված տեքստերի հեղինակների և ունկնդիրների լսարանի հետ:

Սույն մենագրական հետազոտության հեղինակը մասնակցել է պատերազմող կողմերի միջև հարաբերությունների հակամարտային ու համաձայնային ռեսուրսների ուսումնասիրությամբ կատարվող դաշտային բնական գիտափորձի վերլուծական ու գործնական ծրագրերի համադասման աշխատանքներին: Պատերազմող կազմավորումներին զինադադարի ու համագործակցությանը միտելու մեթոդիկաների մշակման ինտենսիվացումը պայմանավորեց գիտափորձի գործնական հատվածի առաջմղումը զինված ընդդիմության կոնկրետ կազմավորումների օրինակով:

Փաստաթղթերի վերլուծությունը ուղեկցվում էր տեղեկատվական աղբյուրների արժանահավատության և հուսալիության ուսումնասիրմամբ: Հարկ էր լինում նաև մշտապես հաշվի առնել հետաքրքրող տեղեկույթի աղբյուրների և այդ տեղեկույթը «կրողների» քաղաքական-գաղափարախոսական նախապաշարվածությունը, ինչպես նաև նրանց ապատեղեկատվական «պաշտպանվածությունը»: Հատկապես էական էր այն վիճակագրական տեղեկատվության անհավաստիությունը, որն արտացոլում էր աֆղանական հասարակության տնտեսական ու սոցիալական առաջընթացի դինամիկան: Չունենալով պետական վիճակագրության ստորաբաժանումների հուսալի ցանց և ավանդույթներ, իրենց պրակտիկայում ընդօրինակելով բյուրոկրատական հավելագրումների խորհրդային փորձը՝ ԱԺՀ պետական մարմինները հաճախակի էին Ապրիլյան հեղափոխության մտացածին զարգացման մասին տրվող տվյալներով մոլորության մեջ գցում վերլուծական խմբերին: Իսկ դա, իր հերթին, հանգեցնում էր սխալ եզրակացությունների:

Աֆղանական հասարակության քաղաքական կտրուկ շերտավորման հետևանքով նկատելի դարձավ ռազմաքաղաքական և էթնոքաղաքական

տեղեկույթի կրողների հակվածությունը դեպի գաղտնի կամ կեղծ-գաղտնապահական տեղեկությունների այսպես կոչված վերահսկվող, կամ պլանավորված, «սորակորստի» կազմակերպումը: Այդ միջոցներին դիմակայելու անհրաժեշտությունը, «տվյալների ապատեղեկատվական բազայի զատման» ուղղությամբ աշխատանքների կատարումը լրացուցիչ ջանքեր էին պահանջում ուսումնասիրվող օբյեկտների ռեալ վիճակը պարզելու համար:

Ընտրված մեթոդիկաների զուգորդումը հնարավորություն էր տալիս վերահսկելու իրադարձությունների համաձայնային զարգացման համար հիմքերի ընդունելի հուսալիությունն ու հավաստիությունը: Փաստաթղթերի բնագրաբնույթությունը և ընդհանուր առմամբ էթնոքաղաքական ու ռազմաքաղաքական տեղեկույթի հավաստիությունը որոշելուն օգնում էին երկրագիտական և պատմալեզվաբանական պատրաստություն ունեցող խորհրդատու մասնագետները, ինչպես նաև թարգմանիչների մասնագիտացված խումբը:

Քանի որ հետազոտվող հակամարտային շահերն ու հարաբերությունները պահանջում էին ծայրաստիճան նրբանկատություն, ապա էթնոքաղաքագիտական վերլուծության ժամանակ հարկ էր լինում մշտապես ստուգել ստացվող տեղեկույթի հավաստիությունը: Դա հիմնականում կատարվում էր լրացուցիչ վերլուծակիրառական մեթոդիկաների օգտագործմամբ, օրինակ՝ տարբեր ժամանակներում, ճգնաժամի աստիճանով տարբերվող իրավիճակներում միևնույն աղբյուրից ստացվող տեղեկույթի բովանդակությունների համեմատությամբ: Ի լրումն այս ամենի՝ անկախ աղբյուրների համեմատական վերլուծության մեթոդը հնարավորություն էր ընձեռում էթնոքաղաքական օբյեկտների համաձայնային-հակամարտային ներուժի՝ վերլուծաբաններին հետաքրքրող պարամետրների բաղդատման ճանապարհով ապահովելու ինչպես տեղեկույթի հուսալիության, այնպես էլ օբյեկտների նկարագրման տեսանկյունների բավարար բազմազանություն: Որոշակի սահմանափակումները առաջին պլան էին մղում գիտափորձի հավաստիության ապահովման նաև այնպիսի մի յուրահատուկ գործիք, ինչպիսին է տվյալների ու դրանց վրա հիմնված եզրակացությունների համեմատումը ստանդարտների հետ: Այս դեպքում որպես գիտափորձի օբյեկտի և առարկայի ընդհանուր գնահատականների ու բնութագրերի ձևավորման ստանդարտներ ամենից հաճախ դիտարկվում էին փորձագիտական և հրահանգային, ցավոք, ոչ միշտ հիմնավոր գնահատականներն ու կողմնորոշումները: Գիտափորձի հավաստիության ապահովման մեթոդաբանական և ընդհանուր-տեսական հիմքում դրված էին ակադեմիական ու կիրառական գիտություններում ձևավորված ստանդարտները:

Փաստաթղթերի և ընդհանրապես տեղեկույթի միջգերատեսչական ուսումնասիրման բազմատեսակ գործիքակազմի կիրառումը հնարավորություն էր տալիս, հավաստիության ապահովումից բացի, ավելի լիարժեքորեն հարաբերակցելու գիտափորձի օբյեկտի ընդհանուր, առանձնահատուկ և միակի էթնոքաղաքագիտական ու ռազմաքաղաքական չափումները, գնահատելու կոնկրետ համաձայնային գիտափորձի հնարավոր վերարտադրելիությունը:

Նման մոտեցումը նպաստում էր նաև Աֆղանստանում նախապես մշակված փաստերի համախմբի հետագա գիտական ընդհանրացմանը էթնոքաղաքական համակարգերի վերլուծության ավելի բարձր մակարդակներում կատարվող խոր ուսումնասիրության համատեքստում:

Հարկ է նկատի ունենալ, որ միայն վերլուծության պահանջները պայմանավորեցին Աֆղանստանում կատարվող ռազմաքաղաքական փորձագիտական աշխատանքի գիտակիրառական առումների նախապատրաստման ու անցկացման համալիր գործիքակազմի զուտ մտահայեցողական տարաբաժանման անհրաժեշտությունը: Եվ իրոք, փաստաթղթերի ուսումնասիրությունը, փորձագիտական գնահատումները, դիտարկումներն ու բանակցային տեխնոլոգիաները, թեև որոշակիորեն ինքնուրույն էին, սակայն աֆղանական հակամարտության պարագայում առավել հաճախ օգտագործվում էին սերտ փոխկապվածության ու փոխլրացման պայմանով: Ավելացնենք, որ, չնայած կոնկրետ վերլուծական ծառայությունների որոշակի մեթոդիկագործիքային մասնագիտացմանը, որին գումարվում էր ազգային համերաշխության քաղաքական ուղեգծին առաջին մոտեցումների մշակման գաղտնիության պահպանման անհրաժեշտությունը, իրադրությունը թելադրում էր բոլոր ներգրավված վերլուծական խմբերի աշխատանքի արդյունքների ու հնարների համադասում: Դրանով էին պայմանավորված վերլուծական աշխատանքի մեթոդիկաների ունիվերսալացումը, ինչպես նաև խորհրդակցական ծառայությունների մասնագետների առավել սերտ միջգերատեսչական համագործակցությունը[164]:

Աֆղանստանում քաղաքացիական հակամարտության հեռանկարների իմաստավորման նկատմամբ համաձայնային մոտեցումների մերժումը և դրանց հանդեպ անվստահությունը էապես բարդացնում էին նոր մասնագետների անմիջական մուտքը այն ռազմաքաղաքական միջավայր, որտեղ ձևավորվում ու վերարտադրվում էր պատերազմի «հեղափոխական» և «հակահեղափոխական» մասնակիցների փոխհարաբերությու-

[164] Տվյալ միտումը երևան եկավ 1982 թ. ԽՍՀՄ-ում ղեկավարության փոխվելուց հետո:

ների հակամարտային ներուժը: Տեղեկույթի ստացման ու մշակման համապատասխան եղանակներ ու մեթոդներ կիրառող գերատեսչական ծառայությունները, նախ, միշտ չէ, որ գտնվում էին քաղաքական-վերլուծական խորհրդակցական ապարատի իրավասության ոլորտում, երկրորդ, լուծում էին ուրույն խնդիրներ, որոնք միայն մասնակիորեն էին համընկնում ԽՍՀՄ նոր քաղաքական ուղեգծի նպատակադրման ու բովանդակության հետ:

Исходя из изложенного, основная цель военной программы Армении – разработка и обоснование военной политики и направлений военного строительства, порядка создания Вооруженных Сил и их интеграции в состав Объединенных Вооруженных Сил без снижения боевой и мобилизационной готовности имеющихся группировок войск при минимальных экономических затратах и с обеспечением социальной защиты военнослужащих.

Достижение этой цели должно обеспечиваться решением комплекса частных задач, к основным из которых можно отнести:

- завершение формирования министерства обороны Армении, разработка военной доктрины и реализация ее положений,активное участие в формировании управленческих структур Объединенных Вооруженных Сил Содружества Независимых Государств;

- решение вопросов о статусе объектов, обеспечивающих боеготовность Объединенных Вооруженных Сил, расположенных на территории Армении;

- определение источников и формирование военного бюджета Армении и учреждение порядка контроля над военными расходами;

- решение вопросов организации разработки, производства, продажи и закупок вооружения и военной техники;

- участие Армении в переговорах по сокращению вооруженных сил и вооружений;

- решение вопросов организации военной науки и подготовки военных кадров;

- разработка вопросов предотвращения войны и военных конфликтов политическими методами;

- расширение военного сотрудничества Армении со странами Европы и Азии, установление военных связей с европейскими странами НАТО и США.

Научно-техническая программа

Основная цель научно-технической программы – разработка комплекса мер и механизмов их реализации, которые позволили бы создать условия, обеспечивающие устойчивое развитие науки и техники в течение всего переходного периода, сохранение интеллектуального потенциала нации, эффективное использование достижений науки и техники для недопущения дальнейшего отставания Армении в области разработки и использования новых технологий.

Достижение этой цели должно обеспечиваться решением комплекса частных задач, к основным из которых относятся:

– совершенствование в Армении системы организации и управления научной деятельностью с целью расширения фундаментальных исследований и централизации планирования НИР, недопущения свертывания фундаментальных исследований из-за трудностей их финансирования;

– совершенствование системы подготовки научных кадров для нужд устойчивого и безопасного развития Армении;

– разработка комплекса мер, стимулирующих внедрение научных достижений в новые технологии;

– разработка мер по привлечению зарубежных фирм для финансирования перспективных разработок, а также целевых грантов;

– расширение научных связей Армении с развитыми странами и практики проведения совместных фундаментальных и прикладных научных исследований, обмена научно-технической информацией и лицензиями, стандартизация и унификация разработки образцов техники;

– принятие мер по централизации, стандартизации, унификации и стимулированию разработки в Армении информационной инфраструктуры;

– обеспечение защиты авторских прав и информационной безопасности;

– развитие научных исследований в области обеспечения экологической безопасности Армении.

Гуманитарная программа

Основная цель гуманитарной программы – разработка комплекса мер и механизмов их реализации, которые позволили бы создать условия, обеспечивающие улучшение охраны здоровья населения и материально-технической базы здравоохранения, укрепление единства нации, поддержание культурного, образовательного и духовного уровня армянского народа, восстановление нормальной, с точки зрения экологии, среды обитания.

Достижение этой цели должно обеспечиваться решением комплекса частных задач, к основным из которых относятся:

– разработка в Армении комплекса мер, в том числе в области налоговой системы, стимулирующих не только государственное финансирование, но и финансирование частными лицами и различного рода коммерческими структурами деятельности организаций сферы культуры, искусства, а также благотворительной деятельности;

– совершенствование в Армении принципов финансирования подготовки специалистов с высшим и средне-техническим образованием, системы формирования научных кадров, переквалификации кадров, в том числе безработных и увольняемых из Вооруженных Сил, формирование механизмов, стимулирующих привлечение для этих целей средств государственных и коммерческих предприятий и организаций, а также частных лиц;

– создание системы социального обеспечения всех слоев населения Армении, защиты прав и личных свобод граждан, в том числе проживающих за рубежом;

– разработка в Армении законодательных актов, обеспечивающих социальную защиту беженцев из других государств, а также финансовые и иные компенсации со стороны этих государств;

– осуществление действенных мер по профилактике заболеваний, полному и повсеместному удовлетворению потребностей населения в высококвалифицированной медицинской и лекарственной помощи в условиях формирования и развития в Армении различных форм собственности в здравоохранении и рынка медицинских услуг;

– создание в Армении условий для здорового образа жизни, формирование высокого нравственного и духовного уровня народа;

– создание в Армении государственных и общественных структур, обеспечивающих оперативную ликвидацию последствий стихийных бедствий, экологических и иных катастроф как на территории Армении, так и за рубежом;

– создание в Армении единой системы мониторинга качества природной среды и здоровья населения на основе объединения существующих систем наблюдения;

– обеспечение экологической, радиационной и химической безопасности, защиты населения и биоресурсов для его жизнеобеспечения.

* * *

Только оптимально используя огромный творческий потенциал армян, всех народностей, живущих в Республике Армения, можно построить современные и надежные Вооруженные Силы.

VI. ДЕЯТЕЛЬНОСТЬ ГОСУДАРСТВА ДЛЯ ОБЕСПЕЧЕНИЯ ВОЕННОЙ БЕЗОПАСНОСТИ АРМЕНИИ

Система военной безопасности Армении предназначена для достижения такого качественного состояния страны, которое позволило бы надежно обеспечить существование и возможность прогрессивного развития личности, общества и государства. Она строится, исходя из целей и принципов обеспечения безопасности, путем разработки системы правовых норм, регулирующих межведомственные отношения в сфере военной безопасности, определения основных направлений деятельности органов власти и управления в данной области, формирования и преобразования органов обеспечения безопасности и механизмов контроля и надзора за их деятельностью. Это достигается за счет деятельности законодательной, исполнительной и судебной властей Армении в соответствующих с их компетенцией сферах безопасности.

Основными функциями органов, действующих в законодательной сфере безопасности Армении, могут быть следующие:

- разработка системы правового регулирования отношений в сфере безопасности;

- установление порядка организации и деятельности органов обеспечения безопасности;

- осуществление контроля за кадровой политикой органов системы обеспечения безопасности;

- регулярное (не реже одного раза в год) заслушивание в Парламенте доклада Президента Армении об обеспечении безопасности;

- определение бюджетных ассигнований по финансированию органов обеспечения безопасности и государственных программ в сфере безопасности;

- ратификация и денонсация международных договоров и соглашений Армении по вопросам обеспечения безопасности;

- определение приоритетов в защите жизненно важных интересов объектов безопасности;

- контроль за деятельностью органов обеспечения безопасности.

Основными функциями органов, действующих в исполнительной сфере военной безопасности Армении, могут быть:

- обеспечение исполнения законов и принятие подзаконных нормативных актов, регламентирующих отношения в сфере безопасности;

- организация разработки и реализации государственных программ обеспечения безопасности;

- осуществление системы мероприятий по обеспечению безопасности личности, общества и государства в пределах своей компетенции;

- формирование, реорганизация и ликвидация в соответствии с законом государственных органов обеспечения безопасности.

Основными функциями органов, действующих в судебной сфере безопасности Армении, могут быть:

– осуществление правосудия по делам о преступлениях, связанных с посягательством на безопасность личности, общества и государства;

– обеспечение судебной защиты граждан, общественных и иных организаций и объединений, чьи права были нарушены в связи с деятельностью по обеспечению безопасности.

Исходя из предназначения и принципов обеспечения безопасности, система военной безопасности Армении может иметь следующие характеристики:

- охватывать все сферы военной безопасности и надежно обеспечивать защиту жизненно важных интересов страны в полном объеме;

- заблаговременно предвидеть и своевременно предупреждать угрозы на ранней стадии их развития;

- адаптироваться к условиям обстановки, соответствовать политическим целям и экономическим возможностям Армении;

- эффективно функционировать как в нормальных, так и экстремальных условиях;

- иметь структурную и функциональную разделенность органов законодательной, исполнительной и судебной властей;

- не содержать угрозы обществу и человеку, строить свою деятельность по обеспечению военной безопасности только в соответствии с законом;

- обладать необходимой открытостью и гласностью в деятельности органов системы безопасности, обеспечивать максимально возможный доступ к информации по вопросам безопасности для всех граждан.

С учетом всех перечисленных задач можно было бы так сформировать структуру системы военной безопасности Армении.

Структура системы военной безопасности состоит из органов законодательной, исполнительной и судебной властей, государственных, общественных и иных организаций и объединений, граждан, принимающих участие в обеспечении безопасности в соответствии с законом.

Государственные органы, действующие в исполнительной сфере безопасности, включая силы и средства обеспечения безопасности, образуют систему обеспечения военной безопасности Армении.

К основным функциям системы обеспечения военной безопасности Армении, таким образом, можно отнести:

- выявление и прогнозирование внешних и внутренних угроз жизненно важным интересам объектов безопасности, осуществление комплекса оперативных и долгосрочных мер по их предупреждению и нейтрализации;

- создание и поддержание в готовности сил и средств обеспечения военной безопасности;

- управление силами и средствами обеспечения военной безопасности в повседневных условиях и при чрезвычайных ситуациях;

- осуществление системы мер по восстановлению нормального функционирования объектов военной безопасности в регионах, пострадавших в результате возникновения чрезвычайной ситуации;

- участие в мероприятиях по обеспечению военной безопасности за пределами Армении в соответствии с международными договорами и соглашениями, заключенными или признанными Республикой Арменией.

К центральному уровню системы обеспечения военной безопасности можно было бы отнести Совет Министров (Правительство), министерства и ведомства Армении.

Общее руководство государственными органами обеспечения национальной, в том числе военной безопасности осуществляет Президент. В качестве высшего консультативного органа при Президенте выступает Совет национальной безопасности.

Основными задачами Правительства Армении и подчиненных ему министерств и ведомств могут быть:

- разработка и реализация государственных планов и комплексных программ, затрагивающих национальную безопасность Армении;

- реализация мероприятий по предупреждению и ликвидации последствий чрезвычайных ситуаций, экологических бедствий и катастроф, определение необходимых для этого ресурсов и государственных резервов;

- определение объема ущерба, нанесенного народному хозяйству в чрезвычайных ситуациях и в ходе ликвидации их последствий;

- контроль за разработкой и осуществлением мероприятий по обеспечению национальной, в том числе военной безопасности республики;

- организация и проведение в министерствах и ведомствах Армении в рамках сфер их деятельности анализа угроз национальной безопасности Армении, разработка мер по ликвидации этих угроз и представление соответствующих предложений в Правительство.

К местному уровню системы обеспечения национальной безопасности относятся местные органы исполнительной власти. Задачи этих органов в пределах их компетенции аналогичны задачам соответствующих органов системы обеспечения национальной безопасности регионального (территориального) уровня.

Для непосредственного выполнения функций по обеспечению безопасности личности, общества и государства в системе исполнительной власти могли бы быть созданы силы и средства обеспечения национальной безопасности Армении, которые включали бы: Вооруженные силы, органы безопасности, внешней разведки, внутренних дел, финансовой и налоговой службы, службы обеспечения безопасности средств связи и информации, пограничные войска, внутренние войска, органы, обеспечивающие безопасность ведения работ в промышленности, энергетике, на транспорте и в сельском хозяйстве, формирования гражданской обороны, службы ликвидации последствий чрезвычайных ситуаций, таможни, природоохранительные органы, органы охраны здоровья и другие государственные органы обеспечения безопасности, действующие на основании законодательства.

VII. НАЦИОНАЛЬНАЯ БЕЗОПАСНОСТЬ И ВОЕННАЯ ПОЛИТИКА АРМЕНИИ

Решение проблем сохранения мира, создания системы международной безопасности немыслимо вне анализа и решения проблем национальной безопасности.

В данном случае важно не смешивать понятия страна и государство. Если государство включает в себя социально-дифференцированную общность и рассматривается с нормативных, властных и управлен-

ческих позиций, то страна охватывает более широкий круг проблем, рассматривая общность людей с точки зрения их социального, национально-территориального и культурного единства и в этом плане является интегрирующей.

Анализируя национальную безопасность как состояние общества, мы можем выделить ряд ее структурных элементов. Весьма важную, а зачастую и центральную роль в системе национальной безопасности играет военная безопасность страны. В рамках данного раздела вряд ли возможно все составляющие представить в полном объеме. Отметим следующее:

Во-первых, национальная безопасность предстает как состояние страны, позволяющее ей выступать в качестве суверенного субъекта системы межгосударственных отношений и на основе сложившейся экономической, социальной, политической и военной системы, культурных традиций успешно решать задачи материального и духовного развития народа.

Во-вторых, основными структурными элементами национальной безопасности выступают политическая, экономическая, экологическая, военная и культурная составляющие, которые в своей совокупности позволяют стране успешно развиваться в рамках взаимозависимого, целостного мира, сохраняя свою самобытность и традиции.

Может возникнуть вопрос, а как же соотносятся национальная и государственная безопасность. Дело в том, что национальная безопасность страны реализуется как бы в двух измерениях: гражданском и государственном. Первоосновой безопасности является безопасность личности. С ней связана безопасность общества, включающая социальную защищенность граждан, открытость общества, благополучие его членов, защиту их жизни, здоровья, собственности и основных прав. Государственная же безопасность включает круг проблем, связанных с обеспечением нормального функционирования государственного механизма: защиту суверенитета, территориальной целостности, нерушимости границ и конституционного строя внутри страны.

В данном случае мы имеем дело с тем аспектом национальной безопасности, который непосредственно завязан на использование средств вооруженного насилия. То есть военная безопасность должна характеризовать такое состояние страны, которое бы препятствовало или противодействовало нанесению ущерба ее национальной безопасности средствами вооруженного насилия.

Наряду с этим в проблеме военной безопасности явно просматриваются две ее стороны: внешняя и внутренняя. Внешняя сторона военной безопасности характеризует возможность предотвращения или нейтрализацию воздействия военной силы из-за рубежа; внутренняя сторона – возможность исключения или локализацию ее внутренних деструктивных проявлений.

Сущность внешней стороны проблемы военной безопасности, на наш взгляд, состоит в решении вопроса о соотношении войны и национальной безопасности. Иначе говоря, существуют ли в современном мире такие условия, при которых война или вооруженный конфликт способствовали бы укреплению национальной безопасности? Анализ современного взаимозависимого, целостного мира, уровня развития средств вооруженного противоборства, проведенный как у нас в стране, так и за рубежом, однозначно свидетельствует о том, что война не может быть средством рациональной политики. По этой причине войны и вооруженные конфликты не могут служить средством укрепления национальной безопасности, а при всех кажущихся выгодах зачастую наносят ей ущерб как непосредственно, так и опосредованно через систему экономической, политической или культурной безопасности.

В современных условиях даже самая справедливая с точки зрения ее социальных целей война не только разрушает систему национальной безопасности, но и может привести к гибели всего живого. Поэтому в условиях современного мирового развития под военной безопасностью следует понимать такое состояние системы межгосударственных отношений и обороноспособности страны, которое если полностью и не исключает возможность возникновения войны, то хотя бы противодействует вовлечению в нее государства либо минимизирует ее деструктивное проявление.

Военная безопасность непосредственно связана с состоянием военно-политической обстановки на международном, региональном и двустороннем уровнях, а также с обороноспособностью страны. Вместе с тем хотелось бы отметить, что в любом случае анализ и оценка военно-политической обстановки вне системы интересов и внешнеполитических целей государства малопродуктивен. Поэтому для исследования вопросов военной безопасности представляется более приемлемым использование категории "военно-политическое положение" страны, которая характеризует ее место и роль в системе межгосударственных военно-политических отношений применительно к конкретным пространственным (как правило, охватывающим ближнее пограничье) и временным границам, их соответствие внешнеполитическим целям и обусловленный этими целями характер вовлеченности в события международной жизни, в том числе и военно-политической. То есть военно-политическое положение государства раскрывает харак-

тер его взаимодействия с другими странами, формы и методы которого определяются с позиций внешнеполитических интересов.

В случае, если состояние и тенденции развития военно-политической обстановки соответствуют внешнеполитическим интересам государства, то оно политико-дипломатическими средствами способствует ее стабилизации, в противном случае возникает вопрос о дефиците обороноспособности. Конечно, в данном случае речь идет о строительстве такого государства, действия которого укладываются в логику современного мирового развития и которое не стремится к укреплению национальной безопасности путем дестабилизации военно-политической обстановки и развязывания войны. К сожалению, еще далеко не все страны стремятся следовать этой логике, пытаясь найти решение внутренних проблем на пути военной конфронтации и гонки вооружений. Вряд ли эти действия можно назвать рациональными и поэтому при оценке военной безопасности эти страны требуют самого пристального, индивидуального внимания.

Представляется, что военно-политическое положение занимает весьма важное место во всей системе военной безопасности. Дело в том, что наряду с объективными факторами, такими, как состояние военно-политической обстановки, внешнеполитические потребности страны и т.д., она включает в себя и субъективные моменты, проявляющиеся во внешнеполитических интересах и основанной на них деятельности. Если внешнеполитические потребности обусловлены политическими, экономическими, социальными, культурными и другими потребностями развития страны, а военно-политическая обстановка – это объективная реальность как результат деятельности объектов системы межгосударственных отношений, то внешнеполитические интересы – это уже результат их осмысления с позиций определенных социальных слоев и групп, государственного и политического руководства самой страны.

Оценка военно-политического положения страны в конечном счете выводит на другой важнейший элемент военной безопасности – обороноспособность страны. В самом общем плане обороноспособность – это способность страны предупредить или нейтрализовать воздействие военной силы извне средствами вооруженного насилия.

Наиболее осязаемым является собственно военный потенциал, который воплощается в боевой мощи, боевом потенциале вооруженных сил как синтезе главного содержания всех остальных элементов военной мощи. Боевая мощь, боевой потенциал отражают наличные и предельные возможности вооруженных сил, состав, величину тех моральных и духовных элементов, которые могут быть приведены в действие в случае войны. Кроме того, характеристикой собственно военного потенциала выступает и боевая готовность, т.е. состояние войск, степень их готовности к действию, необходимая для перехода к непосредственному выполнению боевых задач.

Конечно, военная мощь государства является центральным элементом обороноспособности. Традиционно, столетиями обороноспособность ассоциировалась с военной мощью. Такое положение продолжалось до недавнего времени, пока появление оружия массового поражения, особенно ядерного, не создало принципиально новую ситуацию, получившую название "парадокса силы". В современных условиях дальнейшее наращивание военной мощи не только не способствует укреплению обороноспособности, но и, наоборот, снижает или даже сводит на нет военную безопасность. Поэтому дальнейшее наращивание военной мощи за пределы уровня ее оборонной достаточности контрпродуктивно. Следовательно, возникает настоятельная необходимость более детального рассмотрения других составляющих элементов обороноспособности.

Одним из традиционных путей укрепления обороноспособности является интегрирование страны в соответствующие военно-политические союзы, позволяющее достигнуть наращивания обороноспособности государства за счет сил союзников. В принципе, данный подход так же стар, как и наращивание собственной военной мощи. Хотя в последние годы в нем проявляются новые элементы, суть которых состоит в перераспределении роли военных и политических функций военных союзов. Если в классическом варианте на первый план выдвигались военные функции, то в настоящее время все большую роль начинают играть политические. Благодаря этому возникает реальная возможность для создания коллективных систем военной безопасности, в которых обороноспособность каждого государства опирается на совокупную способность к обороне государств-членов союза.

Значительную роль в деле укрепления обороноспособности страны играет политика, направленная на достижение выгодного соотношения сил, в том числе и военных, по отношению к тем государствам, которые продолжают уповать на использование военной силы на международной арене. В первую очередь, речь идет о создании международных организаций и объединений, которые решительно противодействуют агрессивному военно-политическому курсу. Наиболее представительной организацией подобного типа является ООН, которая в настоящее время не только решительно противодействует использованию военной силы, выполняет посреднические, миротворческие функции, но и при необходимости может осуществлять политические, экономические и военные акции, препятствующие агрессии. Представляется, что формирование подобных организаций и сою-

зов на региональном уровне (а многие уже существуют) будет способствовать изменению соотношения сил в пользу Армении и государств-союзников, укрепляя не только их обороноспособность, но и безопасность.

Таким образом, говоря об укреплении военной безопасности современных государств (имея в виду ее внешнюю сторону), правомерно сделать вывод о том, что укрепление их обороноспособности и военно-политического положения возможно не путем самоцельного наращивания военной мощи, в деструктивности которого уже мало кто сомневается, а путем формирования систем международной, региональной и двусторонней безопасности. То есть военная безопасность страны является производной от ее международной безопасности.

Жизнь подсказывает, что формирование систем военной безопасности, отвечающей потребностям политического, экономического, социального и культурного развития армянского общества, возможно только на основании системного подхода. Военная безопасность Армении в современных условиях должна стать результатом целенаправленной политики по формированию системы ее международной безопасности, по поддержанию совокупной, в т. ч. военной мощи на уровне оборонной достаточности. Сформированная таким образом система обороноспособности может позволить укрепить военно-политическое положение Республики Армения и обеспечить ее военную безопасность в целостном, безопасностно взаимосвязанном мире.

Завершая изложение методологических "Основ военной политики Республики Армения", автор обращает внимание на необходимость дальнейшей конкретизации тех наиболее общих понятий, принципов и подходов, которые составляют военно-политическую сущность стратегии становления национальной и международной безопасности Армении как независимого государства.

ЗАКЛЮЧЕНИЕ

Таким образом, мы пришли к выводу, что национальная безопасность является производной от экономического, социально-политического и культурного развития страны, от ее роли и места в системе межгосударственных отношений. Вместе с тем одно из важнейших мест в системе национальной безопасности занимает военная безопасность, на состояние которой оказывают непосредственное влияние военно-политическое положение и обороноспособность страны. Многие позитивные тенденции развития современного целостного мира свидетельствуют о том, что обороноспособность страны укрепляется не путем наращивания военной мощи, а в результате формирования системы военно-политических отношений, исключающих возможность противоправного применения средств вооруженного насилия.

Характер материала не позволяет осветить такой сложный и спорный вопрос, как внегосударственные отношения социальных, этнических, религиозных групп, различного рода интернациональных объединений, транснациональных экономических союзов, которые и в прошлом, и в современной истории оказывают огромное влияние на международные отношения. Однако при изучении военно-политических отношений указанные моменты следует учитывать.

Заключительная часть предлагаемой работы посвящена таким проблемам, которые пока еще разработаны весьма слабо и настоятельно требуют осмысления. Речь идет о таких категориях, как новые условия обеспечения мира, ориентация политики на исключение вооруженных конфликтов, достижение военно-политической стабильности, понятие национальной безопасности.

В общем и целом генезис этих новых проблем связано с наступлением новой эпохи в международных отношениях. Эта эпоха характеризуется двумя важнейшими показателями. Первый состоит в том, что войны любого, даже малого масштаба (не говоря уже о ядерной) стали в наше время таким средством политики, обращение к которому может повлечь самые пагубные последствия. Человечеству предстоит осмыслить такой важный факт, как патовая ситуация в применении вооруженного насилия в международной политике, так как "цена победы" ныне стала настолько большой, что не оправдывает использования вооруженных сил на международной арене.

Именно поэтому в общемировом масштабе настает пора поиска консенсуса и компромиссов. Военная сила при этом, однако, присутствует, но степень ее воздействия требует серьезного исследования. Отсюда и вторжение в основы военной политики совсем не военных терминов,

связанных с ролью военной силы в поисках путей ликвидации конфликтов, примирения враждующих наций, этнических и социальных групп. Этот первый показатель тесно связан с тяжелыми глобальными проблемами экологического и социального характера. Возможности человечества в силовом воздействии на социальную и географическую среду обитания ныне стали столь велики, что объективно перечеркивают свои продуктивные ресурсы.

Второй показатель новой эпохи – это необычайно быстро возрастающие цельность и взаимозависимость всех стран, народов и континентов, прогрессирующее межцивилизационное единство.

Глядя в будущее, мы должны сказать, что конфликтные ситуации будут столь же "вечными", сколь будет "вечно" человечество. Думается, что человечество в будущем исключит массовые военные кровопролития, однако искусство "гасить" нарождающиеся столкновения, охранять политическую стабильность и безопасность останется постоянной функций социума. Глядя в будущее с нашей сегодняшней политической "вершины", можно предсказать долгожительство и военной силы, и военной организации, превращающейся из орудия войны в орудие сохранения мира, и теоретическим основам военной политики как науки о применении военной силы совместно с интегрированным разумом человечества для предотвращения войн и вооруженных конфликтов.

Но сказанное относится к сфере добрых пожеланий, которыми, как известно, вымощена дорога в ад. Каждый день приносит нам сообщения о все большем разгуле военной силы, причем не только в плане досконально продуманных акций, но и диких по своему содержанию, не поддающихся никаким здравым объяснениям. Кто знает, сколько еще сил предстоит положить человечеству, прежде чем оно сможет покончить с такими иррациональными кровопролитиями? И сумеет ли оно это сделать? Это основной философский вопрос военной политики.

В мире существует еще целый океан иррациональных, эгоистических и иных сил, которые проводят антисоциальную политику, сулящую невиданные ранее кровопролития. И из этого вытекает важнейшая задача политической науки – нахождение путей, обеспечивающих мирное воспроизводство "единства разнообразия" всего человечества, диалог наций и народов и формирования их консенсуса по основным, судьбоносным проблемам.

Ряд исследователей и политиков считает, что роль военной силы, а поэтому и военной политики в судьбах мира еще далеко не исчерпана. Напротив, вплоть до создания единого союза народов должен быть

создан международный карательный орган, в ведении которого международным сообществом были бы представлены наднациональные военные формирования, способные пресечь любую агрессию. Можно согласиться с тем, что без наднациональных сил, подчиненных Совету Безопасности ООН, действительно сложно гасить вооруженные конфликты. Положительные ожидания в поддержании стабильности и устойчивого развития вновь созданных на территории СССР независимых государств следует связывать с нарождающейся системой коллективной безопасности вновь созданного Содружества независимых государств. Но существует ли реальность того, что созданные силы в своих действиях всегда будут опираться на международную поддержку и не вызовут новых конфликтных ситуаций? Решение этого вопроса требует детального анализа и лежит в сфере научных разработок основ военной политики.

Так случилось в мировой истории, что обретение государственной самостоятельности Арменией на исходе первой мировой войны в 1918 году сопровождалось военными конфликтами в первый же год существования практически со всеми соседними странами, в той числе и с Россией.

Восстановление суверенитета в 1991 году также произошло на фоне военного конфликта с соседней страной – Азербайджаном. При этом – еще не были изжиты последствия страшного землетрясения 1988 года, а страна была занята обустройством сотен тысяч беженцев.

Поэтому наш анализ основ военной политики Армении направлен на выявление главной проблемы: роль и участие каждого жителя республики любой национальности, армянской Диаспоры в возрождении страны, приобретшей свою независимость вновь. И в такой длительной, многотрудной работе по обеспечению национальной безопасности есть дело каждому: в экономике, науке, на селе, в культуре, в военном деле. Не сразу, постепенно, но уверенно можно и должно восстановить нашу страну древней цивилизации, известной своим гуманитарным потенциалом и славными боевыми традициями, независимую Армению, живущую в мире со всеми своими соседями, но готовую нанести агрессору неприемлемый урон.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՌԱԶՄԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

(ազգային անվտանգության ռազմաքաղաքական տեսանկյունը)

(թարգմանություն ռուսերենից)

Երևան
1992

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Ընթացիկ հարյուրամյակում իրեն երկրորդ անգամ ինքնիշխան պետություն հռչակած Հայաստանի համար ռազմական քաղաքականության հիմունքների ձևավորումը առանց չափազանցության կենսականորեն կարևոր խնդիրներից մեկն է, որն ունի համազգային նշանակություն: Տվյալ խնդրի լուծման դժվարությունը պայմանավորված է ուսումնասիրության և մշակման առարկայի բազմապլանությամբ: Վերջինս բացատրվում է ինչպես միջազգային հարաբերությունների համակարգում ազգային անվտանգության ապահովման երկարաժամկետ նպատակների ռազմավարական մասշտաբներով, այնպես էլ կենսագործունեության ոլորտներում համակարգային ճգնաժամի և Լեռնային Ղարաբաղի շուրջ Ադրբեջանի Հանրապետության հետ զինված հակամարտության պայմաններում Հայաստանի Հանրապետության ներքին և արտաքին անվտանգության ապահովման դինամիկան մշտապես շտկելու համար ռազմական ու քաղաքական գործիքարանի մարտավարական տարաշարժով:

Ռազմական քաղաքականությունը ռազմավարական չափմամբ պայմանավորված է անկախ պետության քաղաքական և ռազմական դոկտրինների էությունից բխող գենետիկական ածանցվածությամբ: «Ռազմական քաղաքականության հիմունքների» մշակման ակներև ակտուալության հետևանքով մենք ստիպված ենք լինում հաղթահարելու այն սկզբունքային դժվար հարթելի հակասությունը, որ առկա է քաղաքական ու ռազմական դոկտրինալ ամբողջական բազա չլինելու և գործնականում «բոլոր ազիմուտներով՝ զրոյից» կանոնավոր ազգային բանակի շինարարության «երթային վիճակում» ռազմական քաղաքականության ձևավորմանը մասնակցելու անհրաժեշտության միջև:

Այս իմաստով՝ «Հայաստանի Հանրապետության ռազմական քաղաքականության հիմունքների» սույն հրատարակությունը մեր երկրում առաջին փորձն է: Դրա հետ մեկտեղ, հեղինակին հնարավորություն էր տրվել օգտվելու այնպիսի աղբյուրներից, որոնք արտացոլում են տվյալ պրոբլեմի ինչպես պատմագրությունը, այնպես էլ ներկայիս վիճակը: Հարկ է նշել, որ երկար ժամանակ ազգային պետականություն և նրա ատրիբուտը հանդիսացող ազգային կանոնավոր բանակ չունենալու պատճառով Հայաստանում ռազմաքաղաքական ավանդույթների ոչ բավարար աստիճանի զարգացածության պայմաններում ժամանակակից ռազմական քաղաքագիտության՝ որպես հայեցակարգային-տեսական երևույթի և ռազմական քաղաքականության՝ որպես պրակտիկ գործունեության համալիրի մշակումը զգալի չափով նորույթ են: Հատուկ ուշադրության են արժանի ռազմական քաղաքականության որոշակի ուղեգծի մշակման և

իրականացման փորձերը, որոնք արվել են անցյալում՝ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, հայերի նկատմամբ շարունակաբար իրագործվող ցեղասպանության ընթացքում Հայաստանի գոյատևման համար մղվող պայքարի դրամատիկ ժամանակաշրջանում: Միևնույն ժամանակ, որքան էլ ակներև լինեն Ռուսաստանի կայսրության և ԽՍՀՄ փլուզման հետևանքով նոր հայկական պետականության կայացման շրջաններում տեղի ունեցող ներքաղաքական, արտաքին քաղաքական ու ռազմական զարգացումների միջև զուգահեռները, այդուհանդերձ հարկ է որոշել Հայաստանի Հանրապետության ազգային ու միջազգային անվտանգության ժամանակակից համակարգում եղած ռազմաքաղաքական նպատակների ու խնդիրների, դրանց լուծման մեխանիզմների յուրահատկությունը: Հայաստանի ազգային անվտանգության կարևոր չափում պետք է համարել նրա պաշտպանվածության ռազմաքաղաքական երաշխավորվածությունը ՄԱԿ-ի, ԵԱՀԽ, ԱՊՀ անդամ պետությունների ընկերակցության կոլեկտիվ անվտանգության նոր ձևավորվող մեխանիզմների շրջանակներում:

«Ռազմական քաղաքականության հիմունքների» մշակման ժամանակ հեղինակը հնարավորություն է ունեցել ուսումնասիրելու և արդի խնդիրների լույսով հիմնվելու այնպիսի հայ ականավոր գործիչների՝ համաշխարհային պատերազմների և ազգային-ազատագրական շարժման մասնակիցների ռազմաքաղաքական տեսակետների վրա, ինչպիսիք են՝ Անդրանիկը, Նժդեհը, Արամ Մանուկյանը, Ռուբեն Տեր-Մինասյանը, Գայը, Հովհաննես Բաղրամյանը և ուրիշներ: Ռազմաքաղաքական ստեղծագործության անընդհատության տարրերի հնարավոր հայտնաբերման, նախորդ սերունդների նվաճումների և անհաջողությունների վերլուծության համար օգտագործվել է մեզ հասանելի ռազմապատմական գրականությունը՝ նվիրված 19 – 20-րդ դարերի պարտիզանական-ֆիդայական շարժման ավանդույթների, 1918 – 1920 թթ. հայոց ազգային բանակի կայացման, ինչպես նաև Ռուսական, Կարմիր ու Խորհրդային բանակների շինարարության դրանց մարտական պրակտիկայի ձևավորմանը հայերի մասնակցության հարցերին:

«Ռազմական քաղաքականության հիմունքների» մշակման ժամանակ անհրաժեշտ էր թվում այն փաստի հաշվառումը, որ նախկին ԽՍՀՄ աշխարհաքաղաքական տարածքում կառուցվող ազգային բանակներում ներկայումս ծավալվել է ռազմական քաղաքականության նպատակների, խնդիրների, բովանդակության և իրականացման ձևերի վերահիմաստավորման գործընթաց: Տեղի է ունենում դժվար անցում Խորհրդային բանակում արմատավորված այն քաղաքական-դոկտրինալ կողմնորոշումներից, որոնք ձևավորում էր կոմիսարական-քաղղեկային աշխատանքի

որոշ առումներով արդյունավետ համակարգը գլխավորող Գլխավոր Քաղվարչությունը, դեպի այն նոր վերլուծական-կառավարային գործունեությունը, որը շտաբային կառույցները վարում են ռազմական անվտանգությունը ոչ միայն ռազմատեխնիկական, այլև բուն քաղաքական միջոցներով ապահովելու նպատակով: Դրա հետ մեկտեղ, բանակի բարեփոխումների ընթացքում փորձումների ու գնահատումների եղանակով ձևավորվում է ազգային բանակների անձնակազմի շրջանում հոգեբանամանկավարժական աշխատանքի համեմատաբար ինքնուրույն համակարգ, որը վերջին հաշվով արտացոլում է կոնկրետ պետության ռազմական քաղաքականության մեթոդաբանական-մեթոդական հիմքերը:

Ռազմական քաղաքականությունը մեր կողմից առաջին հերթին դիտվում է որպես Պաշտպանության նախարարության կոլեգիայի և համապատասխան մասնագիտացված մարմնի (ռազմական քաղաքականության բաժնի կամ վարչության) գործունեության գլխավոր ուղղություններից մեկը, ընդսմին նախարարությունը Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգությունը ներքին և արտաքին քաղաքականության միջոցներով ապահովելու ուղղությամբ Կառավարության որդեգրած ռազմավարական ուղեգծի ձևավորման հիմնական սուբյեկտն է:

Եվ այսպես. խոսքը վերաբերում է Հայաստանի ռազմական քաղաքականության հիմնական ուղղությունների, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության, իսկ ավելի լայն համատեքստում՝ տեղային-տարածաշրջանային ու համաշխարհային չափումներում, այսինքն՝ ազգային-պետական օջախում, շրջապատող տարածաշրջանում և Սփյուռքում, հայ ժողովրդի անվտանգության ռազմաքաղաքական ապահովման համակարգում նորաստեղծ պաշտպանության նախարարության տեղի ու դերի որոշման փորձերին:

Ինքնին հասկանալի է, որ ներկայացվող աշխատությունը ամենևին էլ չի հավակնում «անհերքելի ճշմարտություն լինելու»: Այն արտացոլում է առաջին փորձերը՝ մեթոդաբանական-ռազմավարական մակարդակով համակարգայնորեն համադրելու նոր ձևավորվող «ռազմական քաղաքականության» արդի նպատակների ու խնդիրների վերաբերյալ համագործակցության մասնակից պետությունների մասնագետների դիրքորոշումները, իսկ որոշ հարցերում կրում է որոնողական ու բանավիճային բնույթ:

Հեղինակը հարկ է համարում մշակվող պրոբլեմների վերաբերյալ խորհրդատվությունների ու ծանոթացման նպատակով բաց նյութեր տրամադրելու համար իր շնորհակալությունը հայտնել Վահան Ավագյանին, Գրիգոր Գրիգորյանին, Աշոտ Մանուչարյանին, Էդուարդ Սիմոնյանցին,

Նորատ Տեր-Գրիգորյանցին, Վահան Շիրխանյանին, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության ռազմական քաղաքականության հիմունքների» հրատարակման գործում աջակցություն ցուցաբերած բարեկամներին:

Հեղինակը երախտապարտ կլինի, եթե տվյալ մշակման փորձարկումային հրատարակության առաջին փորձի վերաբերյալ կարծիքներն ու առաջարկություններն ուղղվեն Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ռազմական քաղաքականության բաժին:

Հայաստանի Հանրապետության
Պաշտպանության նախարարության
ռազմական քաղաքականության բաժնի պետ,
քաղաքական գիտությունների դոկտոր Հայկ Քոթանջյան

ՆԵՐԱԾԱԿԱՆ*

Հայաստանի ռազմական քաղաքականության հիմունքների ձևավորման օպտիմալ ճանապարհը բազմագործոն վերլուծությունն է հետևյալ երկու խումբ գերակայությունների համակարգում.

առաջին. «ազգային անվտանգություն»–«ռազմական անվտանգություն»,

երկրորդ. «ազգային շահեր–սպառնալիքներ–դրանց հետմղման միջոցներ»:

Նախ նշենք, որ վերլուծության ժամանակ Հայաստանի Հանրապետության ռազմական քաղաքականությունը դիտվում է որպես բոլոր հայերի, Հայաստանի Հանրապետության բոլոր ազգային փոքրամասնությունների, երկրի ու պետության անվտանգության քաղաքականության կարևոր բաղկացուցիչ մասը:

Ներկայումս գոյություն ունեցող ժողովրդավարական իրավական պետություններում անվտանգության հասկացության նկատմամբ մոտեցումը անմիջականորեն կապված է ազգային շահերի (անհատի, հասարակության ու պետության) պաշտպանությունն ապահովելու կարողության հետ ու պետության ամբողջ ներքին և արտաքին քաղաքականության համալիր պլանավորման հիմքն է:

Հայաստանի ռազմական քաղաքականության հիմունքների առաջարկվող դիտարկումը, համաշխարհային փորձի հաշվառմամբ, արտացոլում է «համընդգրկուն անվտանգության» գաղափարը, որը ենթադրում է քաղաքական կառուցվածքի հիմնական տարրերի՝ անհատի, հասարակության ու պետության կենսականորեն կարևոր շահերի պաշտպանվածությունը ներքին և արտաքին բնույթի հնարավոր սպառնալիքներից: Առաջնություն է տրվում մարդու և հասարակության կենսականորեն կարևոր շահերի պաշտպանվածությանը, որոնք ձևավորված են համամարդկային արժեքների հենքի վրա:

Անհատի շահերի առաջնայնությունը հիմնված է այն դրույթի վրա, որ ազատ մարդը հասարակական հարաբերությունների ամբողջ համակարգի առաջադիմական զարգացման պարտադիր ու գլխավոր պայմանն է: Որովհետև հենց ազատ մարդը, որը ենթակա է միայն խղճի զգացումին ու բարոյականության չգրված օրենքներին, ձգտելով բավարարելու իր բնական պահանջմունքները, ակամայից, բայց լավագույն կերպով է ծառայում հասարակության շահերին:

* Քանի որ սույն մշակումը ծառայողական փաստաթուղթ է, աղբյուրներին արվող հղումները չեն նշվում:

ԽՍՀՄ գոյության դադարումը օբյեկտիվ անխուսափելիությամբ հանգեցրեց ոչ միայն Հայաստանում ու սահմանակից պետություններում իրադրության փոփոխմանը, այլև էապես ազդեց աշխարհում ստեղծված աշխարհաքաղաքական իրադրության վրա:

1991 թ. սեպտեմբերի 21-ին անկախության ձեռքբերումն ու հայոց պետականության վերաստեղծումը տեղի ունեցան Հայաստանի և Ադրբեջանի միջև փաստացի մղվող պատերազմի պայմաններում, որի պատճառն էր Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ազատագրական շարժումը: Հարկ է նշել նաև Սպիտակի երկրաշարժի հետևանքների վերացման աշխատանքները, երեք հարյուր հազար փախստականների կենցաղավորման հետ կապված պրոբլեմների լուծումը, լարվածության աճումը ամբողջ հայ-ադրբեջանական սահմանի երկայնքով, Հայաստանի և Արցախի շրջափակումը, մահմեդական աշխարհի ուժերի համախմբումն հաջակցություն Ադրբեջանին:

Հայաստանի Հանրապետության ներկայիս վիճակի պատմաաշխարհագրական վերլուծությունը ցույց է տալիս, որ առավել հավանական է հարձակումը Ադրբեջանի, Թուրքիայի հանրապետությունների կողմից և համեմատաբար նվազ հավանական՝ Վրաստանի: Դա բացատրվում է առաջին հերթին գոյություն ունեցող սահմաններով:

Հայաստանի քաղաքներն ու ինքնորոշված Ղարաբաղի բնակավայրերը ենթարկվում են ադրբեջանական ՌՕՒՒ-ի ավիահարձակումների, խաղաղ քաղաքների ու գյուղերի դեմ կիրառվում են ծանր հրետանի ու տանկեր, դրանց վրա գրոհում են խոշոր ռազմական միավորումներ: Այս ամենը թույլ է տալիս փաստել, որ Ադրբեջանի ղեկավարությունը նախկինի պես ձգտում է պատերազմն ավարտելու Ղարաբաղի հայ բնակչության ոչնչացմամբ և արտաքսմամբ:

Ցավոք, գոյություն ունեցող սահմանները նպաստում են լարվածությանը: Աղստև, Որոտան և Արփա գետերի բաժանման իրական սահմաններն այնպիսին են, որ դրանց նախալեռները պատկանում են Հայաստանին, իսկ հովիտները՝ Ադրբեջանին: Հարթավայրերում են գտնվում նաև ռազմավարական առումով հույժ կարևոր տրանսպորտային հանգույցները՝ Ղազախի, Նակորզանի ու Ջուղայի: Դրանց վրա ինչպես Հայաստանի, այնպես էլ Ադրբեջանի վերահսկողության հաստատումը կարող է վերջիններիս դարձնել ռազմական, քաղաքական ու տնտեսական տեսակետներից Անդրկովկասի հեգեմոն:

Գյուղատնտեսության տեսանկյունից հարթավայրերի ոռոգման համար ջուր մատակարարում է Հայաստանը: Ջրամբարներ ևս կարելի է կառուցել հիմնականում հենց Հայաստանում:

Որպես Խորհրդային Ռուսաստանի վարած քաղաքականության արդյունք երեք վիճելի մարզերից՝ Արցախ, Սյունիք, Նախիջևան, Հայաստանին մնաց միայն Սյունիքի արևմտյան հատվածը:

Վրաստանի կողմից Հայաստանին ներկայացվելիք հնարավոր տարածքային պահանջները վերաբերում են Լոռուն, իսկ Ադրբեջանին՝ Ջաքաթալայի շրջանին: Կարելի է ենթադրել, որ Վրաստանի անվտանգության տեսակետից Լոռին ավելի կարևոր դեր ունի, քան Ինգիլոն (Ջաքաթալայի շրջանը): Հարկ է նկատի ունենալ այն հակամարտային ներուժը, որը Հայաստանին սահմանակից Ջավախքում կուտակվում է այդ տարածաշրջանում էթնոժողովրդագրական հաշվեկշիռը արմատապես փոխելու նպատակով Վրաստանի կողմից համապետական բնույթի նախաձեռնություններով քողարկվող փորձերի հետևանքով:

Խոր ու հաշվեկշռված վերլուծություն են պահանջում հարաբերությունները Թուրքիայի հետ, որը ճանաչել է Հայաստանի անկախությունը: Այս դեպքում պահպանվում են հիշողությունը 1915 թ. ցեղասպանության մասին, Հայաստանի տարածքային հարցերը և Հայոց Սփյուռքի պահանջատիրությունը իրենց պատմական հայրենիք հայերի վերադարձի ու կորսված հողերին տիրանալու վերաբերյալ: Այդ պատճառով դեռ առկա են հետևյալ հարցերը. արդյոք կհամաձայնվի՞ Թուրքիան հոժարակամորեն զիջել այդ հողերը հայերին, ի վիճակի՞ են Հայաստանն ու հայությունը ուժով վերադարձնելու այդ հողերը, կա՞ մի երրորդ ուժ, որը կարող է ստիպել Թուրքիային վերադարձնել հայերին այդ հողերը:

Այդ երեք հարցերի պատասխանները և քաղաքական ուղեգծի ընտրության ժամանակ թույլ տրված սխալների համար պատասխանատվության չափը ակնհայտ են:

Որոշակիորեն կարելի է ենթադրել, որ Իրանը շահագրգռված է Հայաստանի գոյության և ամրապնդման մեջ: Իրանը հիմնավոր կերպով անհանգստանում է, որ ազերիները կարող են հզորանալ, ինչը կհանգեցնի Հարավային Ադրբեջանում ապակառուցողական տարրերի ակտիվության ինքնաբերական աճմանը: Լայնամասշտաբ օգնությունը Իրանից Հայաստան կարող է գալ միայն Ջուղայով ու Նակորզանով:

Վերը նշված աշխարհաքաղաքական գործոնների ու ռազմական ռազմավարական իրադրության անգամ զուտ սխեմայական վերլուծությունը ցույց է տալիս, թե որքան կարևոր ու բարդ խնդիր է Հայաստանի Հանրապետության ժամանակակից Զինված ուժերի ստեղծումը: Ոչստի և կարելի է արդարացված համարել Հայաստանի մասնակցությունը Անկախ Պետությունների Համագործակցությանը, ինչպես նաև 1992 թ. մայիսի 15-ին Հավաքական անվտանգության մասին պայմանագրի ստորագրու-

մը (Ռուսաստանի, Ղազախստանի, Ուզբեկստանի, Ղրղզստանի ու Տաջիկստանի հետ) և Բիշկեկում ս. թ. հոկտեմբերի 9-ին Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների ռազմական անվտանգության հայեցակարգի մասին համաձայնագրի ստորագրումը (Ռուսաստանի, Ղազախստանի, Ուզբեկստանի, Տաջիկստանի ու Ղրղզստանի հետ):

Դրանով իսկ Հայաստանը դառնում է միջազգային անվտանգության համար կոլեկտիվ պատասխանատվության մասնակից: Մյուս կողմից՝ նրա ռազմական անվտանգությունը, կազմելով ազգային անվտանգության միջուկը, ապահովվում է Համագործակցության ռազմական անվտանգության միջոցով: Այդպիսով Հայաստանը իր Զինված ուժերի կազմավորման, պետականության կայացման բարդ շրջանում Ռուսաստանից, ԱՊՀ-ից ստանում է ներկայումս գոյություն ունեցող սահմանների անձեռնմխելիության, իր ներքին գործերին չմիջամտության, տարածաշրջանում ռազմավարական կայունության պահպանման երաշխիքներ:

Նման մոտեցումը գլխավոր է համարում քաղաքական մեթոդները, ինչը հույժ կարևոր է մի հանրապետության համար, որում բնակվում է ազգի միայն մեկ երրորդը, և որի համար գերակայություն է առաջընթաց զարգացող Սփյուռքի առկայությունը նրա համայնքների էթնոմշակութային և լեզվական ինքնության պահպանման պայմանով: Հայաստանն իր հերթին ստանում է և կարող է ստանալ Սփյուռքի քաղաքական, տնտեսական ու մտավոր օգնությունը անցումային շրջանի դժվարությունների հաղթահարման, ինչպես նաև ռազմական շինարարության համար:

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Ազգային անվտանգության ռազմական քաղաքագիտության հիմնական հասկացությունները

Անվտանգության ապահովումը լայն իմաստով ներառում է տվյալ հասարակության քաղաքացիների ապահովումը բնականոն քաղաքակիրթ կյանքի, ազատ զարգացման ու ինքնաիրականացման համար անհրաժեշտ պայմաններով: Այդ պատճառով անվտանգության ինչպես ներքին, այնպես էլ արտաքին տնտեսական, քաղաքական, ռազմական, սոցիալական, բնապահպանական և այլ բնույթի առումները, հասարակության լիարժեք զարգացումն ապահովող օպտիմալ պայմանների պահպանումը նրա կարևոր ու անկապտելի բաղադրատարրերն են, որոնք համաշխարհային պատերազմի սպառնալիքի ռեալ թուլացման համեմատ ավելի ու ավելի են մղվում առաջին պլան:

Հասարակության այն օբյեկտիվ պահանջմունքների համախումբը, որոնք բխում են նրա սոցիալ-տնտեսական ու քաղաքական կազմակերպվածքի առանձնահատկություններից, տնտեսական զարգացածության մակարդակից, աշխատանքի միջազգային բաշխման համակարգում պատմականորեն ձևավորված տեղից, աշխարհագրական դիրքի յուրահատկությունից, ազգային և մշակութային ավանդույթներից, արտահայտվում է «երկրի շահեր» (ազգային շահեր) հասկացությամբ:

Շահերի կրողներ են անհատը, հասարակությունը՝ ի դեմս հասարակական կազմակերպությունների ու քաղաքացիների միավորումների, պետությունը՝ ի դեմս իշխանության ու կառավարման պետական մարմինների:

Երկրի շահերն ունեն բարդ կառուցվածք և կարող են դասակարգվել ըստ տարբեր հատկանիշների: Ըստ հասարակության համար ներկայացրած կարևորության՝ շահերը կարող են լինել կենսականորեն կարևոր, կարևոր ու ծայրամասային, ըստ կայունության աստիճանի՝ մշտական ու ժամանակավոր, ըստ դրսևորման ոլորտի՝ քաղաքական, տնտեսական, ռազմական, հումանիտար և այլն:

Ամեն մի հասարակության համար կա կենսագործունեության կրիտիկական պարամետրերի որոշակի համալիր, որոնց խախտման դեպքում տվյալ հասարակությունը կորցնում է իր ինքնուրույնությունը, դադարում է գոյություն ունենալուց որպես հասարակություն: Այդ կրիտիկական պարամետրերը բնորոշում են երկրի կենսականորեն կարևոր շահերի ոլորտը:

Երկրի կենսականորեն կարևոր շահերը այն օբյեկտիվ պահանջմունքների համախումբն են, որոնց բավարարման դեպքում հուսալիորեն ապահովվում են անհատի, հասարակության ու պետության գոյությունը և առաջադիմական զարգացման հնարավորությունը:

Գոյատևման պրոբլեմի հետ կարևոր և ծայրամասային շահերի կապը ավելի կողմնակի է, միջնորդավորված, քան կենսականորեն կարևոր շահերի դեպքում: Շահերի առաջնայնությունն ըստ կարևորության բաշխելու ժամանակ շեղումներից ու անհամամասնություններից խուսափելու, դրանց դրսևորումների առանձին ոլորտները ներդաշնակելու համար անհրաժեշտ է շահերի աստիճանակարգում ոչ միայն ըստ սուբյեկտների, այլև՝ ոլորտների միջև (օրինակ՝ քաղաքական ու տնտեսական), ինչպես նաև՝ յուրաքանչյուր ոլորտում:

Անհատի, հասարակության ու պետության գիտակցված պահանջմունքների՝ երկրում պաշտոնապես ընդունված աստիճանակարգային համախումբը կոչվում է Երկրի շահերի (ազգային շահերի) հայեցակարգ: Այն, հաշվի առնելով պետության, հասարակության և ամեն մի քաղաքացու շահերը, ի զորու է ապահովելու անմիջական կապ ներքին պահանջմունքների և միջազգային ասպարեզում առկա շահերի միջև:

Մեթոդական առումով պետք է տարբերել երկրի շահերն ու պետական քաղաքականության նպատակները: Եթե շահերն արտահայտում են հասարակության օբյեկտիվ պահանջմունքները, ապա նպատակները այն սուբյեկտիվ պատկերացումներն են, որոնք այս կամ այն պետական գործիչ, իշխանությունները ունեն պետության գործունեության արդյունքների վերաբերյալ:

Որոշված նպատակների իրականացումն ապահովվում է պետության ռազմավարությամբ, որը պետք է հասկանալ որպես քաղաքականության ոլորտում պետության բարձրագույն մակարդակի գործունեություն՝ երկրի քաղաքական, տնտեսական, ռազմական, գիտատեխնիկական, հումանիտար և այլ տեսակի հզորության բոլոր աղբյուրների գործարկմամբ:

Անվտանգության ոլորտում Հայաստանի Հանրապետության պետական ռազմավարության ձևավորման գործընթացը ընդհանուր առմամբ կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

– կենսականորեն կարևոր շահերը, արտացոլված լինելով երկրի քաղաքական ղեկավարության գիտակցության մեջ, ստանում են պետական քաղաքականության ձև,

– պետական քաղաքականության նպատակները, զուգակցվելով դրանց ապահովման միջոցների հետ, կազմում են երկրի պետական ուղեգիծը,

– առկա նյութական հնարավորությունները երաշխավորում են քաղաքականության իրականացման միջոցները:

Իրականության մեջ երկրի կենսականորեն կարևոր շահերի ապահովմանը կարող են խոչընդոտել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին գործոնները, որոնք սպառնալիք են ՀՀ պետական քաղաքականության նպատակներին հասնելու համար:

Անհատի, հասարակության և պետության կենսականորեն կարևոր շահերը վտանգող պայմանների և գործոնների համախումբը կոչվում է անվտանգության դեմ ուղղված սպառնալիք: Սպառնալիքների աղբյուր կարող են լինել այլ պետություններ, այլ երկրների ու տվյալ երկրի ոչ պետական կազմակերպություններ, անձանց խմբավորումներ, տեղի ունեցող գործընթացներ ու երևույթներ:

Սպառնալիքների հետմղումը կամ չեզոքացումը երկրի անվտանգության ապահովումն է:

Սպառնալիքները կարող են լինել տարբեր բնույթի և ունենալ իրենց նշանակալիությամբ ու ծավալով տարբեր հետևանքներ: Սպառնալիքները կարող են առաջանալ ու վերանալ, աճել ու նվազել: Այս առումով հույժ կարևոր են սպառնալիքների գերակայությունների ճիշտ որոշումն ու կանխատեսումը, ինչը հնարավորություն է տալիս օպտիմալ կերպով բաշխելու երկրի անվտանգության ապահովման առաջնահերթությունները:

Հիմնվելով «երկրի շահեր», «սպառնալիքներ» և «պետական քաղաքականության նպատակներ» հասկացությունների վրա՝ կարելի է տալ անվտանգության սահմանումը: Անվտանգությունը ներքին և արտաքին սպառնալիքներից անհատի, հասարակության ու պետության կենսականորեն կարևոր շահերի պաշտպանվածության վիճակն է:

Երկրի անվտանգության ապահովումը ենթադրում է անվտանգության ոլորտում միասնական պետական քաղաքականության վարում, տնտեսական, քաղաքական, կազմակերպական և այլ բնույթի այնպիսի միջոցառումների համակարգ, որոնք համապատասխանեն անհատի, հասարակության ու պետության կենսականորեն կարևոր շահերի համար եղած սպառնալիքներին:

Անվտանգության ապահովման ոլորտում քաղաքականությունը պետք է իրականացվի՝ համապատասխան ազգային անվտանգության հատուկ մշակված ռազմավարությանը, որը կոչված է երկրի քաղաքական, տնտեսական, ռազմական և այլ կարողությունների օգտագործման շնորհիվ ապահովելու անվտանգության հայտարարված նպատակների իրագործումը: Որպես ամբողջական համակարգ՝ ազգային անվտանգության

ռազմավարությունն ինտեգրում է բոլոր այլ տեսակների պետական ռազմավարությունները՝ արտաքին ու ներքին քաղաքական, տնտեսական, գիտատեխնիկական, ռազմական և այլն: Բոլոր ռազմավարությունների փոխգործությունը ապահովվում է անվտանգության ոլորտում ամենաբարձր պետական մակարդակով որոշումների ընդունման հատուկ մեխանիզմի առկայությամբ:

Ազգային անվտանգության մշակված և ընդունված ռազմավարության հիման վրա կատարվում է քաղաքական, տնտեսական, ռազմական, գիտատեխնիկական, հումանիտար և այլ ազգային ծրագրերի մշակում:

Երկրի կենսականորեն կարևոր շահերի պաշտպանվածության անհրաժեշտ մակարդակին հասնելու և այն պահպանելու համար ստեղծվում է անվտանգության համակարգ, որը օրենսդրական ակտերի և դրանց հիման վրա ստեղծված մարմինների, հաստատությունների ու փոխազդեցության մեխանիզմների մի համախումբ է:

Անվտանգության համակարգի պաշտպանության հիմնական օբյեկտներն են անհատը՝ նրա իրավունքներն ու ազատությունները, հասարակությունը՝ նրա նյութական ու հոգևոր արժեքները, պետությունը՝ նրա սահմանադրական կարգը, ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը: Պաշտպանության ենթակա են նաև Հայաստանի քաղաքացիներն ու սեփականությունը, որոնք գտնվում են նրա սահմաններից դուրս: Պաշտպանության յուրահատուկ օբյեկտ կարող են նաև լինել արտերկրում Հայոց Սփյուռքի անդամները:

Անվտանգության ապահովման հիմնական սուբյեկտը պետությունն է, որը տվյալ բնագավառում պաշտպանական գործառույթներն իրականացնում է օրենսդիր, գործադիր ու դատական իշխանությունների մարմինների միջոցով:

Քաղաքացիները, հասարակական և այլ կազմակերպություններն ու միավորումները՝ որպես անվտանգության սուբյեկտներ, ունեն անվտանգության ապահովմանը մասնակցության իրավունքներ ու պարտականություններ, որոնք սահմանվում են Հայաստանի օրենքներով: Անվտանգության բոլոր սուբյեկտները միևնույն ժամանակ նաև նրա օբյեկտներն են, այսինքն՝ կարիք ունեն պաշտպանության:

Անվտանգության համակարգի գործունեության հիմնական ոլորտներն են՝ քաղաքական, տնտեսական, իրավապահական, ռազմական, բնապահպանական, տեղեկութային, հումանիտար և այլ ոլորտներ:

Սա է երկրի անվտանգության պրոբլեմի նկատմամբ հիմնական տեսական մոտեցումների ամենաընդհանուր ուրվագծումը: Ազգային անվտան-

գության ապահովման պրոբլեմի գործնական լուծումը առնվազն ենթադրում է.

– պետության կենսականորեն կարևոր շահերի, նպատակների ու գերակայությունների որոշում,

– երկրի շահերի դեմ ուղղված գոյություն ունեցող և հավանական սպառնալիքների բնույթի գնահատում,

– իրականում գոյություն ունեցող սպառնալիքների չեզոքացման կամ հետմղման համար հնարավոր և առկա ռեսուրսների ու միջոցների որոշում և գնահատում,

– երկրի ազգային անվտանգության ապահովման ռազմավարության տարբերակների մշակում,

– նման ռազմավարության ձևավորման և իրագործման համար անհրաժեշտ պետական մեխանիզմի ստեղծում:

Թվարկված հարցերին իրավասու պետական մարմինների ստացած պատասխանները կարող են հիմք լինել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հայեցակարգի համար, որը արտաքին ու ներքին սպառնալիքներից* երկրի կենսականորեն կարևոր շահերի պաշտպանության ուղիների, միջոցների ու եղանակների վերաբերյալ պաշտոնապես ընդունված տեսակետների համակարգ է:

Հայաստանի կենսականորեն կարևոր շահերը կապված են ձևավորվող կոնկրետ իրադրության հետ, պայմանավորված են մեր հասարակության զարգացման արդի փուլի առանձնահատկություններով, մի փուլի, որի էությունն է անցումը ամբողջատիրական պետությունից դեպի ժողովրդավարական պետություն, պետական մենաշնորհի վրա խարսխված տնտեսությունից՝ դեպի բազմազան ձևերի սեփականության վրա հիմնվող տնտեսություն:

Հայաստանի հիմնարար շահն է բազմադարյան հոգևոր մշակույթի, մարդկային ու բնական ռեսուրսների բնագավառում «առողջ ու հարուստ», ծաղկուն տերություն լինելու պահանջմունքը:

Մշտական կենսականորեն կարևոր շահերի ու նպատակների շարքն են դասվում.

– տարածքային ամբողջականության ու պետության անկախության պահպանումը,

* Այստեղ և ստորև օգտագործված տերմինների ու հասկացությունների բառարանը տրված է առաջին հրատարակության Հավելվածում (սույն ժողովածուում ներառված չէ):

– ժողովրդավարական հաստատությունների զարգացումը քաղաքացիների քաղաքական ազատությունների և իրավունքների ապահովման նպատակով,

– արտասահմանում Հայաստանի քաղաքացիների, ինչպես նաև Հայոց Սփյուռքի անդամների անվտանգության ապահովումը միջազգային և ազգային իրավունքի նորմերի շրջանակներում,

– այլ պետությունների հետ հարաբերությունների զարգացումը միջազգային իրավունքի, միջազգային ու ազգամիջյան հարաբերություններում առճակատման բացառման սկզբունքներով՝ Հայաստանի շահերի պահպանմամբ,

– այլ պետությունների հետ ծագող հակասությունների լուծման համար ռազմական ուժի կիրառման անթույլատրելիությունը, հարձակումը հետ մղելու և ագրեսորին չախչախելու կարողությունը,

– տնտեսության զարգացման կայունության և երկրի գիտատեխնիկական ներուժի աճի ապահովումը,

– հասարակության կենսագործունեության պատշաճ բնապահպանական պայմանների ապահովումը, տեխնածին աղետների կանխումը:

Հայաստանի ժամանակավոր շահերը պայմանավորված են, առաջին հերթին, հայ հասարակության զարգացման ներկայիս փուլի առանձնահատկություններով:

Առավել զարգացած, Հայաստանի նման դեպի ժողովրդավարական արժեքներ կողմնորոշված երկրների փորձը ցույց է տալիս, որ նման հասարակության զարգացման կայունությունը ապահովված կլինի պետական կառավարման համակարգի զգալի ապակենտրոնացման դեպքում: Միևնույն ժամանակ, մեր հասարակությանը միշտ էլ բնորոշ է եղել կառավարման բարձր աստիճանի կենտրոնացումը:

Այսպիսով՝ անցումային շրջանում պետք է իրականացվեն՝ տնտեսության ապամենաշնորհացում, կառավարման որոշակի ապակենտրոնացում և հասարակության ժողովրդավարական հաստատությունների զարգացում:

Դրա հետ մեկտեղ, կենսագործունեության բոլոր հիմնական ոլորտներում առկա համակարգային ճգնաժամը ենթադրում է կենտրոնացված մոբիլիզացիոն քաղաքականության տարրերի կիրառում:

Այս շրջանում Հայաստանի հիմնական կենսական շահերն են՝

– Հայաստանի տարածքային ամբողջականության պահպանումը,

– պաշտպանական ներուժի ստեղծումը, ինչպես նաև տնտեսական ու գիտատեխնիկական ներուժի պահպանումը,

– բնակչության սոցիալապես առավել քիչ պաշտպանված խավերի կենսամակարդակի՝ միևչև կրիտիկական մակարդակ նվազման կանխումը:

Անվտանգության վրա ազդող գործոնների ամբողջ համախումբը կարելի է բաժանել երկու խմբի՝ Հայաստանի արտաքին անվտանգության վրա ազդող արտաքին գործոնների և ներքին անվտանգության վրա ազդող ներքին գործոնների:

Հայաստանի Հանրապետության արտաքին անվտանգության համար սպառնալիքները պայմանավորող գործոնների թվում կարելի է նշել՝

– Հայաստանի և ԽՍՀՄ տարածքում նոր ստեղծված անկախ պետությունների միջև հակասությունների առաջացումը,

– նախկինում ԽՍՀՄ կազմի մեջ մտնող անկախ պետություններում զինված ուժերի ստեղծումը և ԽՍՀՄ Զինված ուժերի ապաինտեգրումը, միասնական ռազմական ռազմավարական տարածության պահպանման նկատմամբ նոր մոտեցումների որոնման անհրաժեշտությունը,

– Հայաստանում տիրող ներքաղաքական իրադրության վրա առավել զարգացած օտար պետությունների և կոլեկտիվ անվտանգության դրանց կազմակերպությունների ներգործության աճումը, նրանց ձգտումը՝ իրենց ռազմական հզորությունը պահպանելու այնպիսի մակարդակում, որը նրանց հնարավորություն կտա ԽՍՀՄ կազմում եղած պետությունների նկատմամբ վարելու անմիջական կամ միջնորդավորված ուժային ճնշման քաղաքականություն,

– երրորդ աշխարհի երկրների տնտեսական ու ռազմական հզորության աճը, միջուկային զենքի տեր դառնալու նրանց հնարավորությունը,

– Հայաստանի և սահմանակից, այդ թվում՝ նախկինում ԽՍՀՄ կազմում եղած, պետությունների միջև տարածքային տարաձայնությունների սրման հնարավորությունը,

– համընդհանուր բնապահպանական պրոբլեմները, բնական, բնատեխնածին, բնապահպանական, տարածաշրջանային ու համընդհանուր մասշտաբների աղետները:

Հայաստանի ներքին անվտանգության դեմ ուղղված սպառնալիքները պայմանավորող հիմնական գործոններն են՝

– իշխանության նոր կառույցների ձևավորման անավարտությունը, և նրա չափազանց կենտրոնացումը,

– տնտեսության պետական հատվածի ապակազմակերպումը և նոր տնտեսական կառույցների ոչ բավարար զարգացածությունը,

– նախկին ԽՍՀՄ տարածքում հայերի բնակության շրջաններից փախստականների հոսքի աճը,

– սոցիալական պրոբլեմների սրումը, գործազրկության ու հանցագործությունների աճը,

– տնտեսական ու ֆինանսական ինքնուրույնության պրոբլեմի չլուծվածությունը,

– վառելիքաէներգետիկ, տրանսպորտային, հաղորդակցային ճգնաժամի սրումը՝ կապված սահմանակից պետությունների տարածքներով տարանցիկ ուղիների արգելափակման հետ,

– բնական ռեսուրսների սպառումը և բնապահպանական իրադրության համատարած վատթարացումը, ինչը հանգեցնում է կյանքի տևողության կրճատման, բնակչության առողջական վիճակի վատացման ու գալիք սերունդների գենետիկական հետաճման, բնապահպանական աղետների գոտիների առաջացումը:

Անվտանգության վրա ազդող հիմնական գործոնների վերլուծությունը ցույց է տալիս, որ առավել մեծ սպառնալիք են ներկայացնում այն գործոնները, որոնք պայմանավորված են ԽՍՀՄ փլուզմամբ, Հայաստանի ներքին պրոբլեմներով, ինչպես նաև տարածաշրջանի աշխարհաքաղաքական առանձնահատկություններով:

Հայաստանի արտաքին անվտանգության վրա ազդող հիմնական գործոնների վերլուծությունը ցույց է տալիս, որ ռազմական վտանգը պահպանվում է: Այն ակտուալ է: Ինքնորոշված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ ծավալվում են ռազմական գործողություններ՝ խաղաղ բնակչության դեմ մարտական միջոցների կիրառմամբ:

Այսպիսով՝ ներկայիս պահին բնորոշ են.

- Հայաստանի տարածքային ամբողջականության ու պետական անկախության համար սպառնալիքը,
- պետության էկոնոմիկայի քայքայման, անդառնալի տեխնիկական հետամնացության, սոցիալական հետաճման, բարոյական ու հոգևոր անկման և հասարակության ապահիստեգրման սպառնալիքը,
- հասարակության գոյության բնական միջավայրի քայքայման, բնականոն կենսագործունեության համար անընդունելի բնապահպանական պայմանների ստեղծման սպառնալիքը,
- բնակչության զանգվածային արտագաղթի սպառնալիքը:

1.2. Ռազմական քաղաքականություն (ընդհանուր դրույթներ)

Ռազմական գործունեության ոլորտը, որը անմիջականորեն առնչվում է զինված բռնության միջոցների կիրառման հետ, ուստի և իշխանական հարաբերությունների համակարգի համար առավել զգայունն է, չի կարող դուրս մնալ քաղաքականության տեսադաշտից: Եվ քաղաքականության նման մասնագիտացված հատվածը, որը կոչված է նրա շահերը ներկայացնելու ռազմական բնագավառում, պետության ռազմական քաղաքականությունն է:

Ընդհանուր սոցիոլոգիական տեսանկյունից ռազմական քաղաքականությունը սահմանվում է որպես իշխանության հաստատությունների այն գործունեությունը, որը հիմնվում է տեսակետների ու գաղափարների որոշակի համակարգի, հասարակությունում ու աշխարհում ձևավորված սոցիալ-քաղաքական հարաբերությունների վրա և անմիջականորեն կապված է պետության հիմնարար շահերի ապահովման նպատակով զինված բռնության միջոցների ստեղծման և օրինական կիրառման հետ: Ռազմական քաղաքականության հիմնական յուրահատկությունն այն է, որ նա որոշակի պատմական պայմաններում և արմատական քաղաքական նպատակներին համապատասխան իր մեջ կենտրոնացնում, ինտեգրում է պետության այլ տեսակների կենսագործունեությունը՝ այն ուղղելով զինված բռնության միջոցների կիրառման հետ կապված խնդիրների լուծմանը: Պատերազմների նախապատրաստումն ու վարումը, հուսալի պաշտպանության ու ռազմական անվտանգության ապահովումը պատմականորեն դառնում են ավելի ու ավելի բարդ պրոբլեմ, ինչը պահանջում է նյութական, հոգևոր ու մարդկային ուժերի ներգրավում, հասարակության տարբեր ոլորտների ինտեգրում: Հենց դրանով էլ զբաղվում է ռազմական քաղաքականությունը՝ համադասելով և ուղղորդելով հասարակության ջանքերը:

Ռազմական քաղաքականության էությունը պարզորոշելու համար անհրաժեշտ է թվում ավելի հանգամանորեն ուսումնասիրել նրա կառուցվածքը: Ամենաընդհանուր տեսքով ռազմական քաղաքականության կառուցվածքը կարելի է ներկայացնել հետևյալ հաջորդականությամբ. 1) ռազմական քաղաքականության սուբյեկտները, 2) ռազմական քաղաքականության նպատակները, 3) ռազմական քաղաքականության օբյեկտները, 4) ռազմաքաղաքական նպատակներին հասնելու միջոցները, և վերջապես, այն պայմանները, որոնցում իրականացվում է ռազմաքաղաքական գործունեությունը, այսինքն՝ ռազմաքաղաքական իրադրությունը, որը թեև ռազմական քաղաքականության կառուցվածքային տարր չէ, սակայն անմիջականորեն ազդում է դրա գործառման ու զարգացման վրա:

Որպես ռազմական քաղաքականության սուբյեկտ կարող են հանդես գալ պետությունները և նրանց միավորումները, ազգերը, սոցիալական խմբերը և դրանց ստեղծած հաստատությունները: Արդի հասարակությունում գործնականում ցանկացած սոցիալական շերտ կարող է ունենալ յուրահատուկ տեսակետներ իր նպատակներին զինված բռնության միջոցներով հասնելու վերաբերյալ և դրա համար ստեղծել հատուկ կառույցներ: Նման իրավիճակը ռեալ փաստ է զարգացող պետությունների մեծ մասի համար: Դրանցում այս կամ այն ազգային, սոցիալական, կրոնական և այլ խումբ ունի իր զինված կազմավորումները և զենքը ձեռքին պաշտպանում է իր շահերը:

Քանի որ խոսքը վերաբերում է պետության ռազմական քաղաքականությանը, ապա ռազմաքաղաքական նպատակների որոշման իրավունքը պատկանում է բացառապես երկրի ռազմաքաղաքական ղեկավարությանը: Այդ նպատակներն արտացոլում են ինչպես ամբողջ երկրի, այնպես էլ պետական ապարատի հիմնարար շահերը: Ռազմական քաղաքականության նպատակների հիման վրա որոշվում են նրա օբյեկտները, որոնց դերում կարող են հանդես գալ առանձին պետություններ կամ դրանց խմբեր, ազգեր, սոցիալական խմբեր և ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային ասպարեզում իրագործվելիք զինված բռնության՝ դրանց ստեղծած կառույցները:

Ռազմաքաղաքական նպատակներին կարելի է հասնել զինված բռնության միջոցներով (դրանց մասին ավելի հանգամանորեն կխոսենք հաջորդ գլխում), որոնց միջուկն են զինված ուժերը: Այդ պատճառով բանակը ռազմական քաղաքականության սուբյեկտի մշտական հոգածության առարկան է, քանի որ բանակով է պայմանավորված պետության կարողությունը՝ ինչպես պաշտպանելու երկիրը, այնպես էլ միջազգային ասպարեզում հասնելու իր ռազմաքաղաքական նպատակներին:

Պետության ռազմական քաղաքականության գործառման ու զարգացման մեխանիզմը գործում է հետևյալ կերպ: Կա պետություն՝ որպես ռազմական քաղաքականության սուբյեկտ, որն ունի որոշակի ռազմաքաղաքական նպատակներ և զինված բռնության միջոցների զինանոց: Տվյալ միջոցները կիրարկվում են միջազգային հարաբերությունների համակարգի այս կամ այն օբյեկտի նկատմամբ, ընդսմին նշված համակարգը բնութագրվում է կոնկրետ ռազմաքաղաքական իրադրությամբ: Եթե նպատակներն ու միջոցները համապատասխանում են ռազմաքաղաքական իրադրության պայմաններին և գերազանցում են հակազդեցության հնարավորությունները, ապա օրինաչափ է խոսել պետության ռազմական քաղաքականության գործառման կայունության մասին, որովհետև ռազմաքաղաքական նպատակներն իրագործվում են ռազմական քաղաքականության միջոցներով: Այն դեպքում, երբ նպատակները չեն համապա-

տասխանում ռազմաքաղաքական իրադրությանը կամ օբյեկտի վրա հակադարձ ուժային ներգործության հնարավորություններին, տեղի է ունենում ռազմական քաղաքականության կայուն վիճակի խախտում, որը կարող է դրսևորվել հետևյալ ձևերով.

1) առաջ է գալիս պահանջմունք կա՛մ ընդլայնելու զինված բռնության ներգրավված միջոցների զինանոցը (հակամարտության ծավալում), կա՛մ ընդհանրապես հրաժարվելու դրանց կիրառումից (քանի որ դրանք հնարավորություն չեն տալիս հասնելու դրված նպատակներին),

2) ռազմաքաղաքական նպատակներին հասնելու անհնարինությունը առաջ է բերում դրանց մասնակի կամ արմատական շտկման անհրաժեշտություն: Ռազմաքաղաքական նպատակների մասնակի շտկումը ենթադրում է կա՛մ հրաժարում տվյալ օբյեկտի վրա անմիջական ներգործությունից, կա՛մ ընդհանրապես նրա արտաքսում իր շահերի ոլորտից: Ռազմաքաղաքական նպատակների արմատական շտկումը չի կարող կատարված լինել առանց ռազմական քաղաքականության սուբյեկտի շահերի համակարգում սկզբունքային փոփոխությունների, որոնք հնարավոր են միայն կառավարության և բարձրագույն պետական մարմիններում քաղաքական ուժերի բաշխման փոփոխման դեպքում:

Ռազմաքաղաքական հարաբերությունների համակարգում առանձնացվում են ներքին և արտաքին (միջազգային) ոլորտները: Պետության ռազմական քաղաքականության վրա դրանց ազդեցությունը միանշանակ չէ. եթե ներքին ռազմաքաղաքական հարաբերություններով պայմանավորվում է ռազմական քաղաքականության սոցիալ-քաղաքական էությունը, ապա միջազգային հարաբերությունները, կախված դրանց վիճակից, որոշում են զինված բռնության միջոցներով քաղաքական նպատակներին հասնելու այս կամ այն ձևի ու մեթոդի կիրառելիության կոնկրետ սահմանները: Կախված լարվածության աստիճանից՝ ռազմաքաղաքական հարաբերությունները կարող են լինել դիմամարտության, առճակատման, համագործակցության, ինտեգրման և այլ բնույթի:

Ելնելով ռազմաքաղաքական հարաբերությունների երկու փոխկապված համակարգերի (արտաքին և ներքին) առկայության հանգամանքից՝ բովանդակային առումով տարբերում են պետության ռազմական քաղաքականության երկու կողմ՝ արտաքին և ներքին: Արտաքին կողմն ընդգրկում է այն պրոբլեմների շրջանը, որոնք անմիջականորեն կապված են այլ պետությունների հետ փոխհարաբերություններում քաղաքական նպատակներով զինված բռնության միջոցներ կիրառելու կամ կիրառման սպառնալիքի, ինչպես նաև այդ պետություններում գործող սոցիալական ուժերին սատարելու կամ դրանց դիմագրավելու հետ:

Ռազմական քաղաքականության ներքին կողմը ներառում է այն պրոբլեմները, որոնք անմիջականորեն առնչվում են միջազգային հակամարտությունների լուծման համար զինված բռնության միջոցների պատրաստմանը կամ երկրի ներսում միջդասակարգային, ազգամիջյան և այլ հակասությունների լուծման նպատակով զինված պայքարի նախապատրաստմանն ու վարմանը:

Պետության ռազմական քաղաքականության արտաքին և ներքին կողմերի հարաբերակցության վերլուծությունը ցույց է տալիս, որ թեև դրանց բովանդակությունը միևնույնը չէ, սակայն դրանք գտնվում են դիալեկտիկական միասնության մեջ: Դա հատկապես նկատելի է դառնում, երբ խոսքը վերաբերում է առանձին պետությունների ռազմական քաղաքականության ներգործությանը աշխարհում կամ տարածաշրջաններում տիրող ռազմաքաղաքական իրադրության վրա:

Միջազգային հարաբերությունների համակարգում պետության ռազմական քաղաքականության արտաքին կողմի ոչ զգուշավոր իրականացումը, հատկապես՝ ներկայիս ժամանակներում, կարող է ունենալ անդառնալի հետևանքներ և անգամ հանգեցնել պետությունների ու նույնիսկ ամբողջ մարդկության կործանման: Այդ պատճառով արդեն վաղուց ակնհայտ է դարձել պետության ամբողջ ռազմաքաղաքական գործունեության մեջ ռազմական քաղաքականության արտաքին բաղադրիչի դերի և ազդեցության աճման միտումը:

Հասարակության ռազմաքաղաքական հաստատությունների շարքն են դասվում այն հատուկ ստեղծված հաստատությունները, որոնք կոչված են մշակելու, ինչպես նաև իրականացնելու պետության ռազմական քաղաքականությունը: Նման հաստատություններ կարող են լինել՝ Ազգային անվտանգության խորհուրդը, Պաշտպանության նախարարությունը, Գլխավոր շտաբը և ռազմական քաղաքականությունն անմիջականորեն իրականացնող բանակը: Սոցիալական հաստատությունների սույն համախմբի առանձնահատկությունն այն է, որ դրանք մարմնավորում են ոչ միայն պետության, այլև ընդհանուր առմամբ հասարակության քաղաքական կազմակերպվածքի նյութական ուժը:

Ռազմաքաղաքական գործունեությունը սոցիալ-քաղաքական գործունեության այն տարատեսակն է, որն անմիջականորեն և ուղղակի կապված է ռազմական քաղաքականության սուբյեկտի նպատակներին հասնելու համար զինված բռնության միջոցների նախապատրաստման ու կիրառման հետ: Ընդ որում, տվյալ տեսակի գործունեության մեջ ռազմական բաղադրիչի առկայությունը այն բնութագրում է զինված բռնության միջոցների կիրառման տեսակետից, իսկ քաղաքական բնույթը երևան է հանում ռազմական քաղաքականության սոցիալական ուղղվածությունը:

Ռազմաքաղաքական գաղափարներն ու հայացքները արտացոլվում են ռազմաքաղաքական հայեցակարգերում, ռազմական դոկտրիններում և պլաններում:

Այսպիսով՝ կարելի է հանգել այն եզրակացությանը, որ պետության ռազմական քաղաքականության ամբողջ համակարգը հիմնականում ձևավորվում, գործարկվում ու զարգացվում է ռազմաքաղաքական հարաբերությունների համակարգի վրա ազգային շահերին համապատասխանող ազդեցություն գործելու նպատակով:

II. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՈՒՏՔԸ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿՈՒԼԵԿՏԻՎ ՈՒԶՄԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ստեղծված պայմաններում Հայաստանի համար իր ռազմական անվտանգության ապահովման ռեալ հեռանկարների որոշման լուրջ հիմք դարձավ Ռուսաստանի Դաշնության Գերագույն խորհրդի Նախագահության հայտարարությունը «Ռուսաստանի Դաշնության ռազմական քաղաքականության գերակայությունների մասին» (ընդունվել է 1992 թ. ապրիլի 1-ին): Այստեղ 1-ին և 2-րդ բաժիններում նշվում է, որ Ռուսաստանի և ԱՊՀ մասնակից մյուս պետությունների դեմ ուղղված համաշխարհային պատերազմների կանխման բավարար միջոց են ռազմավարական միջուկային ուժերը, որոնց կազմը պետք է կարգավորվի պայմանագրային հիմունքներով: Շեշտվում է, որ ԱՊՀ միասնական պաշտպանական տարածության շրջանակներում նախկին ԽՍՀՄ Զինված ուժերի ձևավորված կառուցվածքը, ԱՊՀ մասնակից պետությունների միջև սերտ համակողմանի կապերի առկայությունը կանխորոշում են նրանց կոլեկտիվ անվտանգության համակարգի ստեղծման անհրաժեշտությունը:

Ռազմական հարցերի լուծմանը ԱՊՀ մասնակից պետությունների տարբեր մոտեցումների հաշվառմամբ՝ նրանց պաշտպանունակությունը կարող է ապահովված լինել բազմակողմ և երկկողմ համաձայնագրերի, համատեղ գործողությունների համադասման համար համամասնական հիմունքներով ԱՊՀ քաղաքական և ռազմական մարմինների ստեղծման հիմքի վրա:

Արդեն իսկ Հայաստանի մասնակցությունը Անկախ Պետությունների Համագործակցությանը կանխորոշեց նրա ռազմական քաղաքականության գերակայությունների կառուցվածքի ամենակարևոր պարամետրը: Դա, մի կողմից, հայ-ռուսաստանյան բարեկամության, համագործակցության և փոխադարձ անվտանգության մասին պայմանագրի ստորագրումն է: Փաստաթղթում նաև սահմանվում է այնպիսի կարևոր արտահայտություն, ինչպիսին է «փոխադարձ անվտանգությունը»: Առջևում է Պայմանագրի վավերացումը ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Հայաստանի կողմից:

Հայաստանը դարձավ նաև ԱՊՀ անդամ պետությունների Հավաքական անվտանգության մասին պայմանագրի մասնակից: Այն ևս դեռ պետք է վավերացվի: Արդեն հավաքական անվտանգության հարաբերությունների ձևավորման սկզբնական փուլում Հայաստանը անցնում է այդ կարևոր պայմանագիրը ռեալ բովանդակությամբ օժտելու իր ճանապարհը: Այսպես. ԱՊՀ պետությունների ղեկավարների՝ Բիշկեկում կայացած (1992 թ. հոկտեմբեր) խորհրդակցությունից հետո Հայաստանի ներկայացուցիչը հաստատվեց ԱՊՀ ՄԶՈՒ-ի շտաբի պետի տեղակալի պաշտոնում:

Համագործակցության Պաշտպանության նախարարների խորհրդի նիստին, որը տեղի ունեցավ Մոսկվայում 1992 թ. նոյեմբերին, մասնակցեց Հայաստանի ներկայացուցչական պատվիրակությունը:

Խորհրդի նիստից առաջ ԱՊՀ ՄԶՈՒ-ի Գլխավոր հրամանատար, ավիացիայի մարշալ Եվգենի Շապոշնիկովը, պատասխանելով լրագրողների հարցերին, նշել է. «Ռազմական գերատեսչությունների ղեկավարների քննարկմանը ներկայացվող փաստաթղթերը կարևոր են: Սակայն Համագործակցության համար առավել մեծ պրոբլեմը զինված հակամարտությունների կանխումն է: Մենք առաջ ենք քաշել խաղաղապահ հավաքական ուժերի ստեղծման, զինվորական դիտորդների հաստատության հիմնման գաղափարը: Համապատասխան համաձայնագիրն ստորագրված է: Ցավոք, Հայաստանից բացի, ոչ մի պետությունում այն նախաստորագրված չէ իշխանությունների կողմից»:

ԱՊՀ մասնակից պետությունների ռազմական անվտանգության հայեցակարգի (Հայաստանն ստորագրել է Բիշկեկում 1992 թ. հոկտեմբերի 9-ին) առանձնակի կարևորությունը պայմանավորված է ռազմական քաղաքականության փոխհամաձայնեցված ու ԱՊՀ բոլոր մասնակից պետությունների համար ընդհանուր հիմնական սկզբունքների մշակմամբ, ամրագրմամբ և իրագործմամբ՝ ի շահ յուրաքանչյուր երկրի պաշտպանության ապահովման:

Ենթադրվում է պահպանել այս մոտեցումները Հայաստանի պաշտպանության վերաբերյալ օրենսդրական ակտերի մշակման և ընդունման, նրա ազգային ռազմական դոկտրինի ձևակերպման ժամանակ:

ԱՊՀ մասնակից պետությունների ռազմական անվտանգության հայեցակարգը համաձայնեցված և պաշտոնապես ընդունված այն տեսակետների համախումբն է, որոնք վերաբերում են արտաքին սպառնալիքներից մասնակից պետությունների պաշտպանությանը, նրանց անկախության, տարածքային ամբողջականության և քաղաքական կայունության ապահովմանը:

III. ՆՈՐԱՍՏԵՂԾ ԱՊՀ ԿՈԼԵԿՏԻՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՌԵՍՈՒՐՍ

Ռազմական անվտանգության հայեցակարգը ներառում է ռազմական քաղաքականության, Համագործակցության մասնակից պետությունների կոլեկտիվ պաշտպանության հիմունքները, այդ թվում՝ նրանց միջուկային քաղաքականության, Համագործակցության Միացյալ զինված ուժերի շինարարության ու զարգացման հիմնական սկզբունքները: Այն արտացոլում է ազգամիջյան ռազմաքաղաքական նպատակների ընդհանրությունը և հիմնվում է ռազմական հարցերին վերաբերող այն փաստաթղթերի սկզբունքային դրույթների վրա, որոնք ընդունել են Համագործակցության պետությունների ղեկավարները, և նրանց ազգային ռազմական դոկտրինների հիմնադիր կողմնորոշումները:

Համագործակցության մասնակից պետությունները գլխավոր քաղաքական նպատակներից մեկն են համարում Համագործակցության ու նրա յուրաքանչյուր մասնակցի ռազմական անվտանգությունը: Պատերազմի կանխումը դիտվում է որպես այդ նպատակին հասնելու հիմնական միջոց: Նրանք պատրաստ են համաշխարհային ընկերակցության բոլոր պետությունները դիտելու որպես գործընկերոջ և իրենց հարաբերությունները կառուցելու միջազգային իրավունքի, բարեկամության ու համագործակցության հանրաճանաչ սկզբունքների և նորմերի հիման վրա: Համագործակցության մասնակից պետությունները քաղաքական ու ռազմական առումով թշնամի չեն համարում և ոչ մի պետություն կամ պետությունների դաշնադրություն:

Անկախ Պետությունների Համագործակցության ռազմական քաղաքականությունը նրա մասնակից պետությունների ընդհանուր քաղաքականության բաղադրիչ մասն է: Այն հիմնվում է Անկախ Պետությունների Համագործակցության ստեղծման մասին 1991 թ. դեկտեմբերի 8-ի և 21-ի համաձայնագրերի դրույթների և ռազմական հարցերին վերաբերող այն փաստաթղթերի սկզբունքային դիրքորոշումների վրա, որոնք ընդունել են Համագործակցության պետությունների ղեկավարները: Ռազմական քաղաքականությամբ որոշվում են Համագործակցության մասնակից պետությունների ինքնիշխանության ու տարածքային ամբողջականության պաշտպանության համար Համագործակցության Միացյալ զինված ուժերի պատրաստման ու կիրառման հիմնական նպատակները և ուղղությունները:

ԱՊՀ ռազմական քաղաքականությունը որոշող հիմնական գործոնները պայմանավորված են այն հանգամանքով, որ աշխարհում տիրող ռազմա-

քաղաքական իրադրությունը ձեռք է բերել որակապես նոր բնույթ և բնորոշվում է միջազգային լարվածության նվազմամբ, միևնույն ժամանակ՝ որոշակի բարդությամբ ու հակասականությամբ: Նրա զարգացման վրա ազդում են մեծ թվով արտաքին ու ներքին գործոններ, որոնք սերտորեն փոխկապված ու փոխպայմանավորված են:

Արտաքին քաղաքական գործոններ: Աշխարհը գտնվում է ռազմական դիմակայությունից, «Արևմուտք–Արևելք» երկբևեռ կառուցվածքից դեպի ապառազմականացում և նոր միջազգային հարաբերություններ, նոր համընդհանուր ընկերակցություն անցման փուլում, ինչը լայն հնարավորություններ է ստեղծում կառուցողական համագործակցության հաստատման, ուժի կիրառումից հրաժարման և քաղաքական մեթոդներով վիճելի հարցերի ու հակամարտությունների կարգավորման համար:

Արևելքի և Արևմուտքի միջև հարաբերություններում «սառը պատերազմի» վիճակն իր տեղը զիջում է կառուցողական երկխոսությանն ու համագործակցությանը: Իր հետագա զարգացումն է ստացել բանակցային գործընթացը միջուկային և զանգվածային խոցման այլ տեսակի զենքերի, սովորական զինված ուժերի և սպառազինությունների կրճատման ու սահմանափակման ոլորտներում, ինչպես նաև վստահության, անվտանգության ու համագործակցության ամրապնդմանն ուղղված միջոցների ձեռնարկման վերաբերյալ:

Այս ամենը, ինչպես նաև պատերազմի սպառնալիքի վերացման, փոխադարձ վստահության ամրապնդման և միջազգային, եվրոպական ու ազգային անվտանգության հուսալի մեխանիզմների ստեղծման գործում համընդհանուր շահագրգռվածությունը առաջ են բերում պետությունների ռազմական քաղաքականության արմատական վերանայման, նոր ռազմական հայեցակարգերի մշակման ու, վերջին հաշվով, նոր ռազմական դոկտրինների ստեղծման և ընդունման անհրաժեշտություն:

Համագործակցության պետությունների ռազմական քաղաքականության համար սկզբունքային նշանակություն ունեն արևմտյան տերությունների պաշտոնական հրաժարումը ԱՊՀ մասնակից պետությունների հետ ռազմաքաղաքական առճակատումից, նրանց պատրաստակամությունը՝ հարաբերությունները կառուցելու երկխոսության, վստահության, համագործակցության հիմքի վրա, այն բանի ընդունումը, որ պատերազմն այլևս չի կարող լինել քաղաքական նպատակներին հասնելու միջոց:

Միջազգային հարաբերությունների նոր համակարգի ձևավորման պայմաններում ԱՊՀ-ն ունի համաշխարհային ընկերակցության մեջ էական տեղ զբաղեցնելու և միջազգային անվտանգության համար կոլեկտիվ պատասխանատվություն կրելու բոլոր հիմքերը: ԱՊՀ մասնակից պե-

տությունները, իրագործելով արմատական բարեփոխումներ, զգալի ազդեցություն են գործում ու կգործեն միջազգային հարաբերությունների համակարգում տեղի ունեցող գործընթացների վրա:

Սակայն ներկայումս չի կարելի լիովին բացառել առանձին երկրների կամ դրանց խմբերի կողմից տարածաշրջանային կամ համաշխարհային գերիշխանության հաստատմանը միտված ուղեգիծ վարելու, իրենց ռազմական, տնտեսական կամ գիտատեխնիկական ներուժի շնորհիվ ուժի դիրքերից իրականացվող քաղաքականության միջոցով համաշխարհային համակարգում արտոնյալ տեղ գրավելու փորձերի հնարավորությունը:

Ներքին քաղաքական գործոններ: Միմյանց նկատմամբ անկախ պետությունների և նոր ազգային կազմավորումների փոխադարձ պահանջատիրության հետևանքով առաջացած ռազմական հակամարտությունների գոտիների առկայությունը և անցումային շրջանի բարդությունը, նախկին ԽՍՀՄ ունեցվածքի մի մասի, այդ թվում՝ ռազմական, պատկանելության մեկնաբանման ոչ միանշանակությունը, Ռուսաստանի իրավասության տակ գտնվող և Համագործակցության այլ պետությունների տարածքում ժամանակավորապես տեղաբաշխվող որոշ զորքերի կարգավիճակի անորոշությունը, ինչպես նաև մեծ թվով սահմանադրորեն չհաստատված զինված կազմավորումների գոյությունը բացասաբար են ազդում այդ պետություններում տիրող ներքաղաքական իրադրության վրա և անկայունության գլխավոր պատճառներն են:

Նախկին ԽՍՀ Միության տարածքում կազմավորված որոշ ինքնիշխան պետություններում ստեղծված իրավիճակի նման անկայունությունը էապես բարդանում է տնտեսական ճգնաժամի ու մեծ թվով լուրջ սոցիալ-էթնիկական պրոբլեմների չլուծվածության հետևանքով, ինչը որոշակի հանգամանքներում կարող է հանգեցնել այն բանին, որ Համագործակցության մասնակից առանձին պետություններում առկա ներքին անկայունությունը կդառնա սպառնալիքի աղբյուր այլ պետությունների անվտանգության համար:

Կան նաև Համագործակցության մասնակից պետությունների արտաքին սահմանների անմիջական մոտակայքում զանազան կարգի ճգնաժամների առաջացման զգալի ռիսկեր:

Այդ պատճառով Համագործակցության մասնակից պետությունները ռազմական անվտանգության ոլորտում իրենց քաղաքականությունը որոշելիս, մերժելով ռազմական ուժի ամենակարողության մասին հնացած պատկերացումները, իրենց ապագան չկայմանավորելով միջազգային պրոբլեմների բացառիկ ռազմական լուծմամբ, ելնում են հետևյալ նկատառումներից.

– միջուկային զենքի կիրառմամբ համաշխարհային պատերազմի բռնկման սպառնալիքը ներկայումս քիչ հավանական է,

– մեծամասշտաբ սովորական պատերազմի բռնկման հավանականության նվազման միտումն ունի կայուն բնույթ,

– պահպանվում է տարբեր ռազմական և այլ հակամարտությունների և դրանց հիման վրա տեղային պատերազմների բռնկման բավականաչափ մեծ վտանգ,

– կա դրսից այն ուժերին սատարման հնարավոր վտանգ, որոնց գործողությունները կարող են ուղղված լինել ԱՊՀ համախմբվածության խաթարմանը,

– պահպանվում է միջուկային ու զանգվածային խոցման այլ տեսակի զենքերի, ինչպես նաև դրանց տեղ հասցման միջոցների տարածման, միջազգային ահաբեկչության, առաջին հերթին՝ զենքի ու թմրանյութերի առևտրի հետ կապված ձեռնարկումների վտանգը, ինչը կարող է դառնալ զինված հակամարտությունների պատճառ,

– կոլեկտիվ անվտանգության համար որոշակի սպառնալիք են ներկայացնում Համագործակցության որոշ պետություններում ներքին պրոբլեմների չլուծվածությունը, քաղաքական ու սոցիալական անկայունությունը: Այդ վտանգը կարող է էապես աճել Համագործակցության մասնակից պետությունների ներքին գործերին հնարավոր արտաքին միջամտության հետևանքով:

Համագործակցության մասնակից պետությունները որպես հավանական ռազմական վտանգի գլխավոր աղբյուրներ են դիտում մի շարք տարածաշրջաններում ձևավորված սոցիալ-տնտեսական ու ռազմաքաղաքական իրադրության անկայունությունը, որոշ պետությունների հզոր ռազմական ներուժը, որը գերազանցում է պաշտպանության պահանջմունքները, միջուկային ու զանգվածային խոցման այլ տեսակի զենքերի տարածումը:

Ռազմաքաղաքական իրավիճակի անկայունությունը մոտակա տարիներին ամենայն հավանականությամբ կպահպանվի: Համագործակցության արտաքին սահմանների անմիջական մերձակայքում խաղաղ ժամանակ սահմանակից և այլ պետությունների ծավալած ռազմավարական հարձակողական սպառազինությունների, ցամաքային զորքերի, ռազմաօդային ու ռազմածովային ուժերի հզոր մարտական խմբավորումները դժվար թե զգալիորեն կրճատվեն և կշարունակեն Համագործակցության անվտանգության համար ստեղծել գլխավոր հավանական ռազմական սպառնալիքը:

Այսպիսով՝ Համագործակցության համար ռազմական վտանգը մոտ ապագայում դժվար թե լիովին վերանա: Ռազմական իրադրության զարգացման ցանկացած, հատկապես՝ անցանկալի, տարբերակի դեպքում Համագործակցության մասնակից պետությունների առջև ծառանում է իրենց ռազմական անվտանգության ապահովման կարևոր ու հրատապ հարցը:

Համագործակցության մասնակից պետություններին միավորում են ոչ միայն նրանց ժողովուրդների պատմական ընդհանրությունը, տնտեսական ու քաղաքական փոխկապվածությունը, միասնական տնտեսական տարածությունը, այլև ըստ նպատակների համընկնող պաշտպանական խնդիրները, միասնական ռազմական ժառանգությունը և Համագործակցության բոլոր մասնակից պետությունների պահպանվող միասնական ռազմական ռազմավարական տարածությունը:

Ռազմական քաղաքականության գլխավոր նպատակն է արտաքին ռազմական սպառնալիքներից և հնարավոր ագրեսիայից Անկախ Պետությունների Համագործակցության բոլոր մասնակից պետությունների երաշխավորված պաշտպանության ապահովումը:

Խաղաղ ժամանակ ռազմական քաղաքականությունը, լինելով Համագործակցության մասնակից պետությունների արտաքին ու ներքին քաղաքականության մաս, ջանքերն ուղղում է Անկախ Պետությունների Համագործակցությունում և աշխարհում ռազմական սպառնալիքների հաջորդական նվազեցման (սահմանափակման) և կայունության ամրապնդման ապահովմանը, միջպետական ու քաղաքացիական պատերազմների կանխման, ռազմական բնագավառում վստահության ու բացության մեծացման ուղղությամբ միջոցների ձեռնարկմանը: Նշված նպատակներին հասնելու ճանապարհին Համագործակցության մասնակից պետությունների ռազմական քաղաքականությունը ելնում է վիճելի պրոբլեմները, միջազգային ճգնաժամները, տարածաշրջանային ռազմական հակամարտությունները խաղաղ, համաձայնական միջոցներով կարգավորելու անհրաժեշտությունից, միջպետական պրակտիկայում բացառում է խտրականությունը, ճնշման տնտեսական կամ ցանկացած այլ մեթոդների կիրառումը: Այն ամեն կերպ նպաստում է միջազգային և ներքին ահաբեկչության դեմ պայքարի արդյունավետ միջոցների իրականացմանը, մարդու իրավունքների ապահովմանը:

Պատերազմական շրջանում ռազմական քաղաքականությունը ապահովում է արտաքին ագրեսիայի հետմղումը և Համագործակցության պետությունների ազատության, ինքնիշխանության ու տարածքային ամբողջականության պաշտպանության ընթացքում ագրեսորին այնպիսի անըն-

դունելի կորուստների պատճառումը, որը նրան կստիպի դադարեցնել ռազմական գործողությունները:

Այն դեպքերում, երբ ծագել է սպառնալիք Համագործակցության մասնակից մեկ կամ մի քանի պետությունների անվտանգությանը, տարածքային ամբողջությանը, ինչպես նաև միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը, Համագործակցության մասնակից պետությունները անհապաղ կարող են գործարկել փոխադարձ խորհրդատվությունների մեխանիզմը, որոնք նպատակաուղղված կլինեն իրենց դիրքորոշումների համաձայնեցմանը և ծագած սպառնալիքի վերացման համար միջոցների համատեղ ձեռնարկմանը:

Ինչպես հետևում է վերը շարադրվածից, Համագործակցության մասնակից պետությունների ռազմաքաղաքական նպատակները իրենց բնույթով զուտ պաշտպանողական են, ուղղված են ագրեսիայի կանխմանը, իսկ դրա ձեռնարկման դեպքում՝ տարածքային ամբողջականության ու պետական սահմանների անձեռնմխելիության ապահովման նպատակով ագրեսիայի հետմղմանը բոլոր եղած ուժերով ու միջոցներով:

Խաղաղ ժամանակ ռազմական քաղաքականության գլխավոր խնդիրն է պատերազմի կանխումը և միջազգային անվտանգության ամրապնդումը: Համագործակցության մասնակից պետությունները նպատակադրված են իրենց հարաբերությունները զարգացնելու պետական ինքնիշխանության, ինքնորոշման անկապտելի իրավունքի, փոխադարձ ճանաչման ու հարգման, իրավահավասարության սկզբունքի հիման վրա և մերժում են ռազմական ուժի կամ ուժի սպառնալիքի կիրառումը քաղաքական, տնտեսական և այլ նպատակների հասնելու համար: Նրանք գերակշիռ ուշադրություն են դարձնում ճգնաժամային իրավիճակների հաղթահարմանը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայիս պայմաններում ցանկացած տեղային զինված հակամարտություն կարող է աղետալի հետևանքներ ունենալ ոչ միայն դրանում ներգրավված, այլև Համագործակցության բոլոր պետությունների, ամբողջ աշխարհի համար:

Համագործակցության մասնակից պետությունները՝

– փոխադարձաբար լի են վճռականությամբ կատարելու ինքնիշխանության մասին ընդունված հռչակագրերն ու անկախության մասին ակտերը,

– երբեք, ոչ մի հանգամանքում առաջինը չեն սկսի որևէ պետության դեմ ուղղված ռազմական գործողություններ, եթե իրենք չդառնան ագրեսիայի, զինված հարձակման օբյեկտ,

– հաստատում են իրենց պարտավորությունը՝ առաջինը չկիրառելու միջուկային կամ զանգվածային խոցման ցանկացած այլ զենք,

– ջանքեր կգործադրեն՝ միջուկային զենքի, զանգվածային խոցման այլ տեսակի զենքերի, ինչպես նաև դրանք տեղ հասցնելու միջոցների տարածումը կանխելու համար,

– երաշխավորում են գոյություն ունեցող սահմանների անձեռնմխելիությունը և այլ պետությունների ներքին գործերին չմիջամտելը,

– հռչակում են Համագործակցության մասնակից պետությունների ռազմական անվտանգության ապահովման ուղղությամբ կոլեկտիվ որոշումների ընդունման ու համատեղ միջոցների ձեռնարկման գերակայությունը,

– նպատակադրված են աշխարհում ռազմավարական կայունության պահպանումն ապահովելու քաղաքական ու ռազմաքաղաքական մեթոդներով,

– կնպաստեն անվտանգության միջազգային համակարգերի ամրապնդմանը,

– մտադրված են քաղաքական ու ռազմական հարցերով համագործակցելու Հյուսիսատլանտյան և այլ դաշինքների, աշխարհի բոլոր պետությունների հետ,

– կմասնակցեն ՄԱԿ-ի Կանոնադրությանը համապատասխանող միջազգային ձեռնարկումներին,

– միտված են Համագործակցության մասնակից պետությունների զինված ուժերն ու Միացյալ զինված ուժերը պահելու Համագործակցության մասնակից պետությունների հուսալի պաշտպանունակության ապահովման համար խելացի բավարարության սահմաններում:

Ընդսմին Համագործակցության մասնակից պետությունները ելնում են այն գաղափարից, որ նրանց ընդհանուր ռազմական անվտանգությունը, ինչպես նաև յուրաքանչյուր մասնակցի ռազմական անվտանգությունը ապահովվում են հետևյալ եղանակներով ու միջոցներով.

– միջուկային զսպում, որն իրագործվում է Ռուսաստանի Դաշնության Ռազմավարական միջուկային ուժերի՝ այդ նպատակների համար նվազագույնս անհրաժեշտ ներուժով,

– Համագործակցության արտաքին սահմաններում տեղային հակամարտությունների կանխման գծով ուժերի և յուրային բանակների՝ պաշտպանության համար բավարար ներուժով,

– խաղաղության համար վտանգ ներկայացնող ապօրինի զինված կազմավորումների գործողությունների հետևանքով տարածաշրջաններում անկայունության ցանկացած դրսևորումների տեղայնացումը կարճ ժամկետում ապահովելու կարողությունը:

Հայեցակարգում շեշտվում է. Համագործակցության մասնակից պետությունները հաստատում են, որ իրենց փոխհարաբերություններում թույլ չեն տա ուժի կիրառում կամ կիրառման սպառնալիք և իրենց միջև ծագող բոլոր հնարավոր վեճերը կլուծեն բացառապես խաղաղ միջոցներով, բանակցություններով:

Համագործակցության մասնակից պետությունները նպատակադրված են ներքին անվտանգության ապահովման ոլորտում շարունակելու երկկողմ ու բազմակողմ հիմունքներով այնպիսի համաձայնեցված գործնական միջոցների մշակումն ու իրագործումը, որոնք ուղղված լինեն ԱՊՀ շրջանակում խաղաղության, միջպետական կայունության ու վստահության, ներքին սպառնալիքների տեղայնացման իրավիճակի հաստատմանը, իսկ նման սպառնալիքների պատճառով զինված հակամարտությունների առաջացման դեպքում՝ դրանց արագ և անարյուն դադարեցմանը:

Համագործակցության ցանկացած պետության տարածքում միջդավանական, ազգամիջյան ու քաղաքական հենքի վրա ծագած և մարդու իրավունքների խախտմանը հանգեցնող հակամարտությունների կարգավորման ու կանխման գործում փոխադարձ օգնություն ցույց տալու նպատակով կօգտագործվեն պետությունների ղեկավարների որոշմամբ ստեղծվող Ռազմական դիտորդների և ԱՊՀ-ում խաղաղություն պահպանող հավաքական ուժերի խմբերը:

Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների կոլեկտիվ պաշտպանությունը ԱՊՀ Ռազմական անվտանգության ապահովման հայեցակարգի բաղկացուցիչ մասն է և հիմնվում է ռազմական հարցերի վերաբերյալ Համագործակցության մասնակից պետությունների ղեկավարների կողմից ընդունված փաստաթղթերի դրույթների վրա: Դա այն տեսակետների համակարգն է, որոնք վերաբերում են ագրեսիայի կանխմանը քաղաքական, տնտեսական ու ռազմական եղանակների կիրառմամբ, իսկ դրա սանձազերծման դեպքում՝ ագրեսիայի հետմղմանը Համագործակցության մասնակից պետությունների ունեցած բոլոր միջոցներով:

Կոլեկտիվ պաշտպանությունն ապահովում է Համագործակցության մասնակից պետությունների պաշտպանական ներուժի առավել արդյունավետ իրացումը քաղաքական իրադրության, նրանց ռազմատնտեսական ու գիտատեխնիկական հնարավորությունների հաշվառմամբ և ելնում է ռազմական սպառնալիքի նվազեցման անհրաժեշտությունից, պատերազմի կանխման ու ագրեսիայի հետմղման հնարավորություններից, նախատեսում է գործողություններին մասնակցություն Ռազմական դիտորդների և Անկախ Պետությունների Համագործակցությունում խաղաղություն

պահպանող հավաքական ուժերի խմբերի կազմում: Հայեցակարգը նաև նախատեսում է ռազմաքաղաքական ու ռազմավարական իրադրություն, ռազմական սպառնալիքի աղբյուրների, ապագա պատերազմի հավանական բնույթի համակողմանի վերլուծություն:

Համագործակցության մասնակից պետությունների կոլեկտիվ պաշտպանության հիմքում դրված են այն սկզբունքները, որոնցով ապահովվում է կայունության և անվտանգության հետագա ամրապնդումը, զինված հակամարտությունների բացառումը, Համագործակցության մասնակից պետությունների ինքնիշխանության պաշտպանությունը, և որոնք այդ պետությունների ռազմական քաղաքականությանը տալիս են ընդհանուր առմամբ պաշտպանողական ուղղվածություն: Դրանք են՝

– հրաժարում ռազմական գործողություններն առաջինն սկսելուց և հարձակողական գործողություններ վարելու համար խաղաղ ժամանակ զորքերի խոշոր խմբավորումներ ստեղծելուց,

– կանխման կարգով իրականացվող այնպիսի ռազմական միջոցների ու գործողությունների բացառում, որոնց ձեռնարկումը նպատակաուղղված լինի ռազմական գերազանցության հասնելուն,

– ՄԱԿ-ի սկզբունքների, մարդու իրավունքների պահպանում, միջուկային զենքի չտարածմանն ու զինաթափմանը վերաբերող, ինչպես նաև խաղաղության և անվտանգության պահպանմանն ուղղված պայմանագրերի, համաձայնագրերի և այլ միջազգային ակտերի պահանջների ճշգրիտ կատարում,

– դոկտրինալ փաստաթղթերի բովանդակության թափանցիկության ապահովում,

– խաղաղ ժամանակ ռազմական գործունեության նկատմամբ վերահսկողության արդյունավետ մեխանիզմի ստեղծում:

Անկախ Պետությունների Համագործակցության կոլեկտիվ պաշտպանության բովանդակությունն ու նրա սկզբունքներն են կազմում Համագործակցության Միացյալ զինված ուժերի ու մասնակից պետությունների զինված ուժերի խնդիրները, դրանց կիրառման ձևերն ու եղանակները, ինչպես նաև Համագործակցության Միացյալ զինված ուժերի ղեկավարման կազմակերպումը:

Համագործակցության Միացյալ զինված ուժերի խնդիրները Հայեցակարգում սահմանվում են խաղաղության պահպանման, առաջինը զինված ուժ ու միջուկային զենք չկիրառելու պարտավորության, տարբեր տարածաշրջաններում խաղաղության վերականգնման նպատակով միջազգային պայմանագրերին ու համաձայնագրերին համապատասխան իր զինված

ուժերը կիրառելու յուրաքանչյուր մասնակից պետության իրավունքի պահպանման, այլ պետությունների ներքին գործերին չմիջամտելու, ռազմաքաղաքական գործունեության թափանցիկության, զորքերի (ուժերի), տարածքի ու բնակչության պատեհաժամ նախապատրաստման, սպառազինության ու ռազմական տեխնիկայի արտադրության միասնական տեխնոլոգիայի, զորքերի խմբավորումների և հակաօդային ու օդատիեզերական պաշտպանության միասնական համակարգի ստեղծման, միջուկային զենքի կիրառմանը մշտական պատրաստության վիճակի պահպանման անհրաժեշտության հաշվառմամբ:

Համաձայն Հայեցակարգի՝ կոլեկտիվ պաշտպանության բնագավառում Համագործակցության Միացյալ զինված ուժերի խնդիրներն են.

– պատերազմի կանխումը՝ հավանական հակառակորդին միջուկային զսպմամբ դրա սանձազերծումից հետ պահելու միջոցով,

– պատրաստվող ագրեսիայի վերաբերյալ տեղեկույթի պատեհաժամ հաղորդումը, հերթապահ ուժերի ու միջոցների, մարտական կառավարման և ապահովման համակարգերի պահպանումը բարձր մարտական պատրաստության վիճակում,

– ցամաքում և ծովում, օդում և տիեզերքում հրթիռային հարձակումն սկսվելու մասին զգուշացում,

– հանկարծակի օդատիեզերական հարձակման հետմղում ու հիմնական վարչաքաղաքական, արդյունաբերական կենտրոնների և այլ կարևոր օբյեկտների պաշտպանություն,

– հակառակորդի ցամաքային, ծովային և օդային հարձակման հետմղում, ԱՊՀ տարածքի կարևոր շրջանների պահպանում և հակառակորդի ներխուժած խմբավորումների ջախջախում,

– հակառակորդին ռազմական գործողությունների դադարեցման պարտադրում և ագրեսիայի հետևանքների վերացում,

– հակառակորդի ռազմատնտեսական ներուժի թուլացում,

– խաղաղության պահպանում ու վերականգնում այլ պետությունների զինված ուժերի հետ համատեղ՝ համաձայն միջազգային պայմանագրերի և ՄԱԿ-ի Կանոնադրության,

– աղետների, այդ թվում՝ տարերային, հետևանքների վերացման ժամանակ օգնություն բնակչությանը:

Համագործակցության մասնակից պետությունների Զինված ուժերի խնդիրները, կապված կոլեկտիվ պաշտպանությանը դրանց մասնակցության հետ, ԱՊՀ ռազմաքաղաքական ղեկավարության կողմից սահմանվում են յուրաքանչյուր պետության օրենսդրության հիման վրա և Համագործակցության Միացյալ զինված ուժերի Գլխավոր հրամանատարի առաջարկությունների հաշվառմամբ:

Համագործակցության Միացյալ զինված ուժերի կիրառման պլանավորման հիմքերն են հնարավոր պատերազմի քաղաքական նպատակները ռազմական գործողությունների վարման հարցում, հատկապես՝ պատերազմի սկզբնական շրջանում, զինված ուժերի կոնկրետ խնդիրները: Հայեցակարգում նշվում է, որ Համագործակցության Միացյալ զինված ուժերի կիրառման վերաբերյալ որոշման կայացումը պատկանում է Համագործակցության մասնակից պետությունների ղեկավարների խորհրդի իրավասությանը: Քանի որ Համագործակցության մասնակից պետությունների ռազմական քաղաքականությունն ունի պաշտպանողական ուղղվածություն և բացառում է ցանկացած վիճելի միջազգային պրոբլեմների, այդ թվում՝ զինված հակամարտությունների, լուծման համար ուժի կամ ուժի սպառնալիքի կիրառումը, քանի դեռ Համագործակցության ցանկացած ինքնիշխան պետության տարածքը չի ենթարկվել ուղղակի ագրեսիայի, ապա Համագործակցության Միացյալ զինված ուժերը պատրաստվում են առաջին հերթին պատասխան գործողություններում կիրառմանը: Այս դրույթը վերաբերում է զինված պայքարի սկզբին: Ագրեսիայի նախաձեռնումից հետո դրանք կողմնորոշվում են զինված պայքարի այնպիսի ձևերի ու եղանակների ընտրությանը, որոնք պետք է համապատասխանեն ստեղծված իրադրությանը, ապահովեն ռազմավարական նախաձեռնության ձեռքբերումն ու ագրեսորի պարտությունը: Ռուսի Համագործակցության Միացյալ զինված ուժերը պետք է պատրաստ լինեն վարելու պաշտպանական, հարձակողական և այլ տեսակի մարտական գործողություններ ցանկացած տարբերակով պատերազմի սանձազերծման ու վարման դեպքում, խոցման արդիական ու հեռանկարային միջոցների կիրառման պայմաններում:

Ռազմավարական ուժերի կողմից միջուկային զենքի կիրառմամբ մարտական խնդիրների կատարումը նախատեսվում է միայն պատասխան գործողությունների ժամանակ (Համագործակցության մասնակից պետությունների ռազմական անվտանգության ապահովման համակարգում միջուկային զենքի ու Ռազմավարական ուժերի դերի ու տեղի վերաբերյալ տեսակետները արտացոլված են Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների միջուկային քաղաքականության հիմունքներում):

Օդատիեզերական պաշտպանության (ՕՏՊ) զորքերը կիրառվում են Համագործակցության մասնակից պետությունների օդատիեզերական

պաշտպանության միացյալ համակարգի շրջանակներում՝ օդային, հրթիռային ու տիեզերական հարձակման մասին պատեհաժամ իրազեկման, միասնական օդային տարածքի սահմանների պաշտպանության ու Համագործակցության մասնակից պետությունների զինված ուժերի առավել արդյունավետ կիրառման, պետական ու ռազմական կառավարման օբյեկտների, զորքերի, ռեզերվների, առավել կարևոր վարչաարդյունաբերական և այլ օբյեկտների ծածկապաշտպանության նպատակով:

ՕՏՊ կազմում են հակաօդային պաշտպանության, հրթիռատիեզերական պաշտպանության (ՀՏՊ) և օդատիեզերական ուժերի (ՕՏՈՒ) համակարգերը: ՀՕՊ-ի ու ՀՏՊ զորքերի և ուժերի կիրառումը կազմակերպվում է ԱՊՀ ամբողջ տարածքում՝ ըստ միասնական մտահղացման ու պլանի: ՀՕՊ-ի համակարգը կառուցվում է տարածքային սկզբունքով՝ գոտիների ու շրջանների հստակ բաժանմամբ:

ՕՏՈՒ-ն կիրառվում են Համագործակցության մասնակից այն պետությունների հետ պայմանագրային հիմունքներով, որոնց տարածքում տեղաբաշխված են:

Համագործակցության Միացյալ զինված ուժերը և մասնակից պետությունների զինված ուժերը պատրաստ են վարելու բոլոր տեսակի մարտական գործողություններ (պաշտպանական կամ հարձակողական) պատերազմի սանձազերծման ցանկացած տարբերակի դեպքում (զինված հակամարտություն, տեղային պատերազմ, լայնամասշտաբ պատերազմ՝ խոցման սովորական միջոցների կիրառմամբ, միջուկային պատերազմ): Նրանք կարող են կիրառվել լիարժեքորեն կամ մասնակիորեն:

Համագործակցության Միացյալ զինված ուժերի և մասնակից պետությունների զինված ուժերի կիրառումը նպատակաուղղված է խնդիրների լուծմանը Համագործակցության մասնակից պետությունների միասնական ռազմական ռազմավարական տարածության մեջ:

Համագործակցության՝ պաշտպանության հարցերով բարձրագույն մարմին է Համագործակցության մասնակից պետությունների ղեկավարների խորհուրդը, որը մշակում և իրագործում է ռազմական քաղաքականությունը, որոշում է ռազմական շինարարության հիմնական ուղղությունները, ընդունում է ռազմական դոկտրինը, այդ թվում՝ միջուկային քաղաքականության հիմունքները, սահմանում է միջուկային զենքի կիրառման վերաբերյալ որոշման ընդունման ու դրա նկատմամբ վերահսկողության իրականացման կարգը, սահմանում է Համագործակցության Միացյալ զինված ուժերի կազմն ու կառուցվածքը և քննարկում է դրանց զարգացման ու պատերազմի ժամանակ կիրառման պլանները:

Համագործակցության պետությունների գործունեությունը կոլեկտիվ անվտանգության ապահովման ոլորտում համադասում է Հավաքական անվտանգության խորհրդի կողմից ստեղծված մշտական աշխատանքային մարմինը՝ Գլխավոր քարտուղարի գլխավորությամբ: Վերջինիս ղեկավարությամբ Համագործակցության Միացյալ զինված ուժերի Գլխավոր հրամանատարությունը՝

– կազմակերպում է ռազմական հարցերով քաղաքական խորհրդատվություններ ու համադասում Խորհրդի անդամ պետությունների դիրքորոշումները,

– պատրաստում է առաջարկություններ ու փաստաթղթեր անվտանգության ու պաշտպանության ոլորտում Խորհրդի անդամ պետությունների ղեկավարների կողմից որոշումների ընդունման համար,

– կազմակերպում է Հավաքական անվտանգության խորհրդի ներկայացումը պետությունների ղեկավարների, միջազգային կազմակերպությունների ու զանգվածային լրատվության միջոցների հետ հարաբերություններում, ինչպես նաև Խորհրդի լիազորմամբ կազմակերպում է շահերի ընդհանրության վրա հիմնված փոխգործություն և համագործակցություն Հյուսիսատլանտյան պայմանագրի կազմակերպության և այլ ռազմաքաղաքական խմբավորումների բլոկների ու միությունների հետ,

– նպաստում է Հավաքական անվտանգության խորհրդի անդամ պետությունների կողմից իրենց զինված ուժերի ստեղծմանն ու ամրապնդմանը և ցույց տալիս անհրաժեշտ օգնություն:

Համագործակցության մասնակից պետությունների ղեկավարների խորհուրդը որոշում է ընդունում՝ Համագործակցության ամբողջ տարածքում ռազմական դրություն մտցնելու մասին այն դեպքերում, երբ Համագործակցության, նրա մասնակից մի քանի կամ մեկ պետության դեմ ագրեսիա է ձեռնարկվել կամ կա դրա ձեռնարկման սպառնալիք, պատերազմ հայտարարելու, ռազմական գործողություններ վարելու, ռազմական դրությունը վերացնելու, պատերազմի վիճակը դադարեցնելու և հաշտություն կնքելու մասին: Համագործակցության մասնակից պետությունների կառավարությունների ղեկավարների խորհուրդը համադասում է Համագործակցության ռազմատնտեսական գործունեությունը, Պետությունների ղեկավարների խորհրդին ներկայացնում է պաշտպանական բյուջեի նախագիծը, Համագործակցության Միացյալ զինված ուժերի Գլխավոր հրամանատարության հետ համատեղ մշակում է զորքերի (ուժերի) զարգացման ծրագիրն ու դրա ֆինանսավորման ծավալը, ժողովրդական տնտեսության մոբիլիզացման և նյութական ռեսուրսների կուտակման պլանները:

Համագործակցության մասնակից պետությունների պաշտպանության նախարարների (կոմիտեների նախագահների) խորհուրդը ռազմական քաղաքականության ու ռազմական շինարարության հարցերով Պետությունների ղեկավարների խորհրդի բարձրագույն կոլեգիալ գործադիր մարմինն է: Նա քննարկում է տարածաշրջանների պաշտպանական բավարարության ապահովման նկատմամբ հայեցակարգային մոտեցումները, պաշտպանությանն ու ռազմական շինարարությանը վերաբերող պայմանագրերի ու համաձայնագրերի նախագծերը, մշակում է առաջարկություններ Միացյալ զինված ուժերի կազմակերպվածքի վերաբերյալ, ընդհանուր պահանջներ դրանց մարտական ու զորահավաքային պատրաստության, օպերատիվ ու մարտական պատրաստման կազմակերպման, զորքերի (ուժերի), սպառազինության, ռազմական տեխնիկայի ու կառավարման համակարգերի հեռանկարների վերաբերյալ:

Պաշտպանության նախարարների խորհրդի կազմում ներգրավվում են պաշտպանության նախարարները (կոմիտեների նախագահները), Համագործակցության Միացյալ զինված ուժերի գլխավոր հրամանատարը (Պաշտպանության նախարարների խորհրդի նախագահի), Համագործակցության Միացյալ զինված ուժերի շտաբի պետը:

Հայեցակարգում հստակեցվում է, որ Համագործակցության Միացյալ զինված ուժերի Գլխավոր հրամանատարությունը ղեկավարում է Համագործակցության Միացյալ զինված ուժերը, իր գործունեությունը կազմակերպում ու վարում է համապատասխան Համագործակցության Միացյալ զինված ուժերի Գլխավոր հրամանատարության Կանոնադրության:

Ի շահ կոլեկտիվ պաշտպանության ապահովման՝ Համագործակցության Միացյալ զինված ուժերի Գլխավոր հրամանատարությունը մշտապես համագործակցում է մասնակից պետությունների ռազմաքաղաքական ղեկավարության ու զինված ուժերի կառավարման մարմինների հետ:

Համագործակցության Միացյալ զինված ուժերի Գլխավոր հրամանատարության կազմում են՝ Համագործակցության Միացյալ զինված ուժերի Գլխավոր հրամանատարն ու նրա տեղակալները, Համագործակցության Միացյալ զինված ուժերի շտաբը, Հասարակական տեղեկատվության կենտրոնը, Գործերի կառավարչությունը և Համագործակցության Միացյալ զինված ուժերի Գլխավոր հրամանատարության այլ մարմիններ:

Համագործակցության Միացյալ զինված ուժերը կառուցված են հետևյալ սկզբունքների հիման վրա. Համագործակցության մասնակից պետությունների կողմից իրենց զինված ուժերից զորքերի (ուժերի) որոշակի թվակազմի հոժարական հատկացում՝ ՄՀՈՒ-ի Գլխավոր հրամանատարության օպերատիվ ենթակայության տակ, ռազմական կառույցների

և, ընդհանուր առմամբ, Միացյալ զինված ուժերի վերահսկելիություն՝ Համագործակցության պետությունների ղեկավարների խորհրդի կողմից, Համագործակցության մասնակից պետությունների պաշտպանության կոլեկտիվ ղեկավարում և Համագործակցության Միացյալ զինված ուժերի, ԱՊՀ արտաքին սահմաններին տեղային հակամարտությունների կանխման ուժերի, Ռազմական դիտորդների խմբերի և Անկախ Պետությունների Համագործակցությունում խաղաղության պահպանման հավաքական ուժերի միասնական օպերատիվ կառավարում:

Հայեցակարգում նշվում է, որ Համագործակցության Միացյալ զինված ուժերի շինարարությունը հիմնվում է Համագործակցության մասնակից պետությունների կոլեկտիվ պաշտպանության ղեկավարման կոլեգիալության, համաձայնեցված որոշումների մշակման, Համագործակցության Միացյալ զինված ուժերի անընդհատ կառավարման կազմակերպման ու պահպանման, միջուկային ներուժի հետևողական նվազեցման, Համագործակցության Միացյալ զինված ուժերի՝ ռազմական սպառնալիքի առաջացման դեպքում իրենց մարտական հզորությունը համապատասխանաբար մեծացնելու կարողության վրա, ինչպես նաև զորքերի (ուժերի), հատկապես՝ ագրեսիայի հետմղման համար նախատեսված զորքերի, մարտական ու զորահավաքային պատրաստությունը պատշաճ մակարդակում պահպանելու վրա:

Համագործակցության Միացյալ զինված ուժերի ընդհանուր կառուցվածքն ու մարտական կազմը հաստատվում են Համագործակցության մասնակից պետությունների ղեկավարների խորհրդի որոշմամբ՝ ըստ Համագործակցության մասնակից պետությունների պաշտպանության նախարարների խորհրդի ներկայացման և բանակաշինության ընդունված սկզբունքների հաշվառմամբ:

Համագործակցության Միացյալ զինված ուժերը կազմակերպորեն ներառում են՝ Համագործակցության մասնակից պետությունների զինված ուժերից հատկացված զորքերի (ուժերի) թվակազմները, ԱՊՀ արտաքին սահմաններին տեղային հակամարտությունների կանխման ուժերը, որոնք տրամադրվում են Համագործակցության մասնակից պետությունների զինված ուժերի կազմից, Ռազմական դիտորդների խմբերը և Անկախ Պետությունների Համագործակցությունում խաղաղություն պահպանող հավաքական ուժերը:

Համագործակցության արտաքին սահմաններին տեղային հակամարտությունների կանխման ուժերը ներառում են զորամիավորումներ, զորամասեր, հիմնարկներ և այլ զորային կազմավորումներ, ինչպես նաև Համագործակցության մասնակից պետությունների բանակների այն օբյեկտները,

որոնք փոխանցված են Համագործակցության Միացյալ զինված ուժերի Գլխավոր հրամանատարության օպերատիվ ենթակայությանը:

Ռազմական դիտորդների խմբերը և Անկախ Պետությունների Համագործակցությունում խաղաղություն պահպանող հավաքական ուժերը բաղկացած են Համագործակցության մասնակից պետությունների այն զորքերից (ուժերից), որոնք հատկացվում են ժամանակավորապես՝ մասնակից պետությունների միջև փոխհամաձայնեցված թվաքանակով:

Համագործակցության Միացյալ զինված ուժերի պատրաստումը նպատակաուղղված է անվտանգության ապահովմանը և կատարվում է ըստ Համագործակցության Միացյալ զինված ուժերի պատրաստման պլանի, որը յուրաքանչյուր ընթացիկ տարվա համար մշակում է Համագործակցության ՄՀՈՒ-ի Գլխավոր հրամանատարությունը: Ընդսմին մշակման ժամանակ հաշվի են առնվում Համագործակցության մասնակից պետությունների զինված ուժերի գլխավոր (գերագույն) շտաբների առաջարկությունները: Համագործակցության Միացյալ զինված ուժերի պատրաստման պլանը հաստատում է Համագործակցության մասնակից պետությունների Պաշտպանության նախարարների խորհուրդը: Համագործակցության մասնակից պետությունների զինված ուժերի զորքերի ու շտաբների պատրաստումը կատարվում է Համագործակցության մասնակից պետությունների ինչպես ազգային, այնպես էլ կոլեկտիվ ռազմական անվտանգության ապահովման ուղղությամբ նրանց առջև դրվող խնդիրներին համապատասխան: Այն կազմակերպվում է ըստ Համագործակցության մասնակից պետությունների զինված ուժերի պատրաստման ամենամյա պլանների, որոնք մշակում են համապատասխան գլխավոր (գերագույն) շտաբները՝ Համագործակցության Միացյալ զինված ուժերի Գլխավոր հրամանատարության կազմակերպամեթոդական առաջարկությունների հաշվառմամբ:

Համագործակցության Միացյալ զինված ուժերի համար կադրերի պատրաստման համակարգը կառուցվում է Համագործակցության մասնակից բոլոր պետությունների տարածքում գտնվող ռազմաուսումնական հաստատությունների գոյություն ունեցող ցանցի հիմքի վրա՝ Համագործակցության մասնակից պետությունների միջև պայմանագրային պայմաններով, փոխադարձ շահերի հաշվառմամբ: Ընդսմին, քանի որ պաշտպանական շահերը համընկնում են, ապա անցումային ժամանակաշրջանում ռազմական կադրերի պատրաստումը կատարվում է Համագործակցության այլ պետությունների ռազմաուսումնական հաստատություններ իրենց ներկայացուցիչներին ուղարկող պետությունների համար մինչև 1993 թ. ներառյալ՝ անվճար, իսկ հետագայում՝ երկկողմ համաձայնագրերի հիման վրա:

Համագործակցության Միացյալ զինված ուժերի համալրումն իրագործվում է արտերկրայնության ու տարածքային համալրման, զինապարտության ու պայմանագրային ծառայության անցնելու կամավորության սկզբունքների համատեղմամբ: Ընդսմին զինվորական պարտականության կատարման ժամանակ հաշվի են առնվում սոցիալական արդարությունն ու բոլոր քաղաքացիների հավասարությունը:

Նյութատեխնիկական միջոցներով Համագործակցության Միացյալ զինված ուժերի ապահովումն ու դրանց կուտակումը իրականացվում են ըստ ռազմական արտադրանքի պատվերների ու մատակարարումների՝ Համագործակցության մասնակից պետությունների միջև համաձայնեցված միասնական պլանների՝ այդ արտադրանքի թողարկման կոոպերատիվ կապերի, ինչպես նաև երկարաժամկետ արտադրատնտեսական համաձայնագրերի պահպանմամբ:

Ռազմատնտեսական գործունեության և Համագործակցության Միացյալ զինված ուժերի նյութատեխնիկական ապահովման համադասումը կատարում է Համագործակցության մասնակիցների կառավարությունների ղեկավարների խորհուրդը: Համագործակցության Միացյալ զինված ուժերն իրենց զարգացման նպատակով գործադրվող հիմնական ջանքերը կենտրոնացնում են այն զորքերի (ուժերի) օպտիմալ կազմհաստիքային կառուցվածքի ստեղծման վրա, որոնք նախանշանակված են առաջին հերթին ագրեսորի ներխուժումը հետ մղելու համար, այսինքն՝ պետք է պաշտպանական գործողություններ վարեն պատերազմի սկզբնական շրջանում (համագործային միավորումներ ու զորամասեր, ինժեներական, ՌԷՊ-ի ու հետախուզության զորամասեր), ինչպես նաև սպառազինության ու ռազմական տեխնիկայի ստանդարտացման, պայքարի նոր միջոցների զարգացման ուղղությամբ:

Ռազմական անվտանգության հայեցակարգի սկզբունքային դրույթների հաշվառմամբ Միացյալ զինված ուժերի զարգացման գործում առաջնություն է տրվում նաև այն ուժերին ու միջոցներին, որոնք նախանշանակված են հնարավոր ագրեսիայի մասին զգուշացնելու, օդատիեզերական հարձակումը հետ մղելու և հակառակորդին պատասխան հարված հասցնելու համար: Համագործակցության Միացյալ զինված ուժերի զարգացման պլաններով նախատեսվում են գոյություն ունեցող ենթակառուցվածքի կատարելագործում, Համագործակցության մասնակից բոլոր պետությունների բնակչության ու տարածքի պատրաստում՝ ի շահ Անկախ Պետությունների Համագործակցության կոլեկտիվ պաշտպանության ապահովման:

* * *

Այսպիսով՝ Հայաստանը, շնորհիվ այդ համաձայնագրին մասնակցության, իր անվտանգության ու տարածքային ամբողջականության ապահովման համար ունի ռազմավարական միջուկային ուժերի միջուկային ծածկապաշտպանություն: Նշենք նաև, որ ազգամիջյան հակամարտության ժամանակ Հայկական ԱԷԿ-ի նման ռազմավարական օբյեկտների վրա հարձակումը փաստորեն որակվում է որպես «առաջին» միջուկային հարված, որի դեպքում պահանջվում է Համագործակցության ռազմավարական միջուկային ուժերի անհապաղ պատասխան հարվածը ագրեսորին:

IV. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՈԿՏՐԻՆԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ռազմական դոկտրին ասելով ամենաընդհանուր մոտեցմամբ հասկանում են տվյալ պետությունում որոշակի ժամանակով ընդունված այն տեսակետների համակարգը, որոնք վերաբերում են հնարավոր պատերազմի նպատակներին ու բնույթին, դրան երկրի ու զինված ուժերի պատրաստմանն ու վարման եղանակներին: Ռազմական դոկտրինի հասկացության իսկ վերլուծությունից հետևում է, որ այն պետք է պատասխանի մի շարք փոխկապված հարցերի, այն է՝

- ինչպիսին է ապագա պատերազմի հավանականությունը և ինչ հակառակորդի հետ հարկ կլինի գործ ունենալ,
- ինչ բնույթ կարող է ստանալ այն պատերազմը, որը պետք է վարեն երկիրն ու նրա զինված ուժերը,
- այդ պատերազմի նախաշեմին ինչ նպատակներ ու խնդիրներ պետք է դրվեն զինված ուժերի առջև և, համապատասխանաբար, քանակական ու որակական առումով ինչ զինված ուժեր պետք է ունենալ դրված խնդիրները կատարելու համար,
- ինչ կերպ պետք է իրականացնել ռազմական շինարարությունը և բանակն ու երկիրը պատրաստել պատերազմի,
- և, վերջապես, ինչ եղանակներով պետք է վարել պատերազմը, եթե այդուհանդերձ այն փաստ դառնա:

Ինչպես հետևում է էությունից և լուծվող խնդիրներից, պետության ռազմական դոկտրինն ունի առնվազն երկու դիալեկտիկորեն փոխկապված կողմ՝ սոցիալ-քաղաքական և ռազմատեխնիկական: Ռազմական դոկտրինի սոցիալ-քաղաքական կողմն ընդգրկում է այն հարցերը, որոնք վերաբերում են պատերազմի քաղաքական նպատակներին և սոցիալական

ուղղվածությանը: Դա որոշիչ կողմն է և ունի որոշակի կայունություն, քանի որ արտացոլում է համեմատաբար երկարատև պատմական շրջաններում հարաբերականորեն կայուն ազգային-պետական շահերը: Բացի այդ, այն նաև արտացոլում է միջպետական հարաբերությունների ամբողջ համակարգի վրա պետության ու նրա ռազմական քաղաքականության ներգործության սոցիալ-քաղաքական բնույթը՝ դրանով իսկ ստեղծելով այդ համակարգի զարգացման հեռանկարների ու միտումների հիմքերը:

Ռազմական դոկտրինի ռազմատեխնիկական կողմը քաղաքական նպատակներին համապատասխանությամբ որոշում է ռազմական շինարարության անմիջական իրականացմանը, զինված ուժերի պատրաստմանն ու տեխնիկական զինմանը, օպերացիաների և ընդհանրապես պատերազմի վարման ձևերին ու եղանակներին առնչվող հարցերը: Այսինքն՝ ռազմատեխնիկական կողմը, որպես կանոն, ստորադաս բնույթի է և կախված է պետության սոցիալ-քաղաքական նպատակներից, որոնք, իրենց հերթին, ի հայտ են գալիս անմիջական ռազմական շինարարության ընթացքում: Այսպիսով՝ ռազմական դոկտրինի այս երկու կողմերը չի կարելի ջլատել, առավել ևս՝ հակադրել միմյանց առանց դրանց վերլուծության իսկությանը վնաս պատճառելու:

Հարկ է նկատի ունենալ, որ ռազմական դոկտրինին հատուկ է կոնկրետ-պատմական բնույթը, իսկ դրանում արտացոլված ռազմաքաղաքական ու ռազմատեխնիկական տեսակետները անփոփոխ չեն, այլ կախված են աշխարհում տիրող ռազմաքաղաքական իրադրությունից, զենքի զարգացման աստիճանից, պետության ռազմաքաղաքական ուղեգծի տատանումներից, որոնք բոլորն էլ փոխվում են հասարակության և ընդհանուր առմամբ աշխարհի սոցիալ-տնտեսական զարգացման համեմատ:

Համաշխարհային ընկերակցության սոցիալ-տնտեսական, քաղաքական, գիտատեխնիկական ու մշակութային զարգացման նոր պատմական դարաշրջանը, որը բնորոշվում է համաշխարհային հանրության ձևավորմամբ, պետությունների փոխկապվածության ու փոխկախվածության ուժեղացմամբ, անհրաժեշտություն դարձրեց ռազմաքաղաքական ոլորտի նկատմամբ նոր մոտեցման մշակումը: Էությունը հետևյալն է. քանի որ պատերազմի ու խաղաղության պրոբլեմը ներկայումս դարձել է կենտրոնական հարց, իսկ դրա լուծումը, քաղաքականի հետ մեկտեղ, գտնվում է նաև ռազմաքաղաքական ոլորտում, ապա պատերազմի բռնկմանը խոչընդոտելու մեխանիզմները պետք է ձևավորված լինեն արդեն պետությունների ռազմական քաղաքականության, նրանց ռազմական դոկտրինների մակարդակում: Այսինքն՝ եթե զինվորականներն ի վիճակի չեն լուծելու խաղաղության պահպանման և ամրապնդման պրոբլեմները, ապա նրանք կարող են և պարտավոր են անել ամեն ինչ՝ պատերազմը կանխելու համար:

Ռազմական դոկտրինը պատմական կատեգորիա է: Նրա հիմնական դրույթները պայմանավորված են պետության ներքին և արտաքին քաղաքականությամբ, սոցիալ-քաղաքական, տնտեսական և աշխարհագրական առանձնահատկություններով, գիտության, արտադրության զարգացման մակարդակներով և այլ գործոններով:

Ռազմական դոկտրին մշակում է պետության քաղաքական ու ռազմական ղեկավարությունը: Որպես կանոն, այն պետք է պատասխանի հետևյալ հարցերին.

– համարո՞ւմ է արդյոք պետությունը պատերազմը իր քաղաքականության իրացման ընդունելի միջոց, թե՞ մերժում է այն,

– կա՞ արդյոք ռազմական վտանգ, որո՞նք են դրա չափերն ու աղբյուրները,

– որո՞նք են այն հնարավոր պատերազմի բնույթն ու նպատակները, որին պետք է մասնակցեն պետությունն ու նրա զինված ուժերը, որո՞նք են նրանց խնդիրները,

– պատերազմը հաջողությամբ վարելու համար ի՞նչ զինված ուժեր են հարկավոր, ի՞նչ ուղղությամբ տանել դրանց շինարարությունը,

– ի՞նչ կարգով պետք է երկիրն ու զինված ուժերը պատրաստվեն պատերազմի, ի՞նչ եղանակով պետք է այն վարեն:

ԱՊՀ մասնակից պետությունների ռազմական անվտանգության հայեցակարգը հաշվի առնող ռազմական դոկտրինի հիմքում դրված քաղաքական սկզբունքները առավել լիակատար ձևով մարմնավորվել են Հայաստանի ռազմական շինարարության բնույթը սահմանող կարևորագույն կազմակերպական սկզբունքում, որն է՝ պաշտպանության համար բավարարության սկզբունքը:

Ո՞րն է այդ սկզբունքի բովանդակությունը: Ընդհանուր առմամբ դա նշանակում է ունենալ այնպիսի զինված ուժեր, որոնք անհրաժեշտ են արտաքին հարձակումից պաշտպանվելու համար: Ըստ էության, զինված ուժերի կազմը, զինված պայքարի միջոցների թվաքանակն ու որակը պետք է խստագույնս համապատասխանեն ռազմական սպառնալիքի մակարդակին, մեր ընդդիմախարների ռազմական պատրաստությունների բնույթին ու ինտենսիվությանը և որոշվեն ըստ ռազմական անվտանգության ապահովման ու ագրեսիայի հետմղման համար անհրաժեշտ պահանջմունքների: Այսինքն՝ խելացի բավարարությունն ունի որակապես նոր, ժամանակի ոգուն համապատասխանող բովանդակություն, որովհետև հիմնված է այն գաղափարի վրա, որ միջուկային դարում պետությունների

ու ժողովուրդների անվտանգությունն ապահովվում է բացառապես քաղաքական միջոցներով:

Խելացի բավարարություն հասկացությունը նոր բովանդակություն ունի նաև այն պատճառով, որ արտահայտում է ոչ բռնի, ժողովրդավարական աշխարհի ձևավորման՝ Հայաստանի մշակվող ռազմական դոկտրինի քաղաքական սկզբունքներով սահմանվող միտումը և կապված է ռազմական ներուժը միայն պաշտպանության համար անհրաժեշտ քանակական ու որակական պարամետրերով սահմանափակելու, զինված ուժերի գործունեության բնույթը ռազմական դոկտրինների պաշտպանողական ուղղվածության վրա հիմնելու հետ: Խելացի բավարարությունը հնարավոր է միայն շահերի հաշվեկշռի հաստատման հիման վրա և հեռանկարում պետք է ընդգրկի բոլոր երկրները:

Միևնույն ժամանակ, խելացի բավարարությունը բնորոշում է նաև միջպետական ռազմաքաղաքական հարաբերությունների համակարգի վիճակը, երբ դեռ լիովին բացառված չէ արտաքին ագրեսիայի հնարավորությունը: Դրա հետևանքով Հայաստանի ձևավորվող ռազմական դոկտրինի ամբողջ ոգին տոգորված է այն գաղափարով, որ պետք է պետության Զինված ուժերի ռազմական հզորությունը պահպանել այնպիսի վիճակում, որը հնարավորություն տա ցանկացած արտաքին ագրեսիա բնում խեղդելու և ապահովի երկրի բնականոն գործունեության ու զարգացման համար անհրաժեշտ մակարդակի ազգային անվտանգություն:

Այսպիսով՝ սոցիալ-քաղաքական տեսանկյունից խելացի բավարարությունը նշանակում է համամարդկային արժեքների գերակայության հիմքի վրա ձևավորել առնվազն պետությունների միջազգային ընկերակցության մակարդակի համաձայնություն, շահերի հաշվեկշիռ: Այն նշանակում է Հայաստանի մասնակցություն այդ երկրներում հասարակական կարծիքի այնպիսի ուղղվածության ու այդ պետությունների այնպիսի ուղեգծի ձևավորմանը, որոնք միտված լինեին ինչպես միջուկային, այնպես էլ սովորական պատերազմի կանխմանը, մասնակցությանը ոչ միջուկային, ոչ բռնի աշխարհի ստեղծմանը, տարածաշրջանային ու համընդհանուր անվտանգության համակարգում հուսալի ազգային անվտանգության համակարգի ապահովմանը:

Ռազմատեխնիկական ու ռազմավարական տեսանկյունից Հայաստանի խելացի բավարարությունը նշանակում է հանրապետության այնպիսի մակարդակի պաշտպանական ներուժի ստեղծում ու նրա Զինված ուժերի այնպիսի բնույթի գործունեություն, որոնք ապահովեին պատերազմի կանխումը և բավարար լինեին պաշտպանության (հավանական հակառակորդի զսպման) համար: Այլ կերպ ասած՝ եթե խելացի բավարարությունը գնահատենք հնարավոր և ակտուալ հակամարտության կողմե-

րից մեկի դիրքերից, ապա այն ենթադրում է այնպիսի ներուժի առկայություն, որը համեմատելի լիներ մյուս կողմի ռազմական ներուժի հետ, բայց, միևնույն ժամանակ, ծանր բեռ չդառնար իր տնտեսության համար:

Այսպիսով՝ Հայաստանի մշակվող ռազմական դոկտրինի հիմնական սոցիալ-քաղաքական ու դրանցով պայմանավորվող ռազմատեխնիկական կողմերի վերլուծությունը հանգեցնում է այն եզրակացությանը, որ այդ դոկտրինը ենթադրում է միջպետական հարաբերությունների պրակտիկայում պատերազմներից հրաժարում և ունի աշխարհի զարգացածության ներկայիս մակարդակի համար առաջադիմական համաձայնական բնույթ՝ ագրեսիայի հետմղմանը պատրաստությամբ հանդերձ:

Ռազմաքաղաքական պրակտիկայում ռազմական դոկտրինի հիմնական տեսական ու կազմակերպագործնական դրույթների հետևողական ներդրումը հնարավորություն կտա ապահովելու Հայաստանի խաղաղասիրական պաշտպանական քաղաքականության բնականոն գործառույթյունը:

Փոխկապված աշխարհում դժվար թե հնարավոր լինի ցանկացած պետության ազգային անվտանգությունն ապահովել սոսկ ազգային միջոցներով: Այդ պատճառով Հայաստանի ապագա ռազմական դոկտրինը պետք է նախատեսի ինտեգրում մայրցամաքային (եվրոպական, ասիական) ու միջազգային անվտանգության ավելի ընդգրկուն համակարգերին: Հայաստանի ռազմական դոկտրինի «սահմանափակությունից», ուստի և մեկուսացածությունից հրաժարումը հնարավորություն կտա էապես մեծացնելու տարբեր աշխարհագրական տարածաշրջաններում լարվածության համատեղ վերացման հնարավորությունները: Ռազմաքաղաքական համագործակցության որակապես ավելի բարձր մակարդակի անցնելու դեպքում հնարավորություն կլինի ավելի ներդաշնակորեն միանալու այն դաշնադրություններին, որոնք ստեղծվում են համաշխարհային ընկերակցության այլ պետությունների հետ համատեղ խաղաղարարական գործառույթներ կատարելու համար:

Հայաստանի ռազմական դոկտրինը պետք է կազմվի՝ ԱՊՀ, ԵԱՀՄ և այլ կազմակերպությունների մյուս անդամների ազգային հայեցակարգերի (դոկտրինների) առանձնահատկությունների հաշվառմամբ և բովանդակել միասնական ռազմական ռազմավարական տարածության համատեղ պաշտպանության ուղղությամբ ռազմաքաղաքական գործընկերների հետ համաձայնեցված ընդհանուր նպատակներ և խնդիրներ, հաշվի առնել նաև կոնկրետ պատերազմների հնարավորությունը:

Հնարավոր պատերազմների սպեկտրը ներառում է (ըստ հավանականության աստիճանի)՝

– սահմանամերձ գոտում ռազմական ընդհարումը,

– արտասահմանյան աջակցությունը Հայաստանի տարածքում անջատողական խռովությունների*, պարտիզանական գործողություններին և ահաբեկչությանը,

– սովորական պատերազմն առանց միջուկային զենքի կիրառման,

– սովորական պատերազմը մարտավարական միջուկային զենքի կիրառմամբ:

Հնարավոր ռազմական սպառնալիքներից ցանկացածը հետ մղելու կարողությունը ամենևին էլ չի նշանակում պատրաստում միաժամանակյա դիմամարտությանը բոլոր հնարավոր հակառակորդների հետ: Խորհրդային Միության կործանումն զգալի չափով պայմանավորված էր մնացած ամբողջ աշխարհի հետ սպառազինությունների երկարատև մրցավազքով: Առավել ևս, որ Հայաստանի համար նման հարցադրումն ընդունելի չէ ո՛չ ռազմական ռազմավարական, ո՛չ էլ տնտեսական նկատառումներով:

Հնարավոր ենք համարում ներկայացնել Հայաստանի ապագա ռազմական դոկտրինի հետևյալ սկզբունքները.

1. Կարևոր է սովորական սպառազինությունների ոլորտում թույլ չտալ, որ Հայաստանն սպառազինության ու ռազմական տեխնիկայի գծով հետ մնա գիտական և արդյունաբերական տեսակետից առավել զարգացած պետություններից: Ռազմական գործում վճռական դեր են խաղալու զենքի ու ռազմական տեխնիկայի ոչ թե քանակական, այլ որակական պարամետրերը: Սպառազինությունների համակարգերի անհրաժեշտ կատարելագործումը կարող է կատարվել, առնվազն, մոտակա տարիներին, Հայաստանի՝ տարածաշրջանի մասշտաբներով նշանակալից ռազմաարդյունաբերական և մտավոր ներուժի օգտագործման օպտիմալացման խնդրի լուծմամբ: Մեր կարծիքով՝ կարևոր այս ուղղության հետ մեկտեղ անհրաժեշտ կլինի ԱՊՀ, ԵԱՀՄ և այլ կազմակերպությունների կոլեկտիվ անվտանգության կառավարման մարմինների վերահսկողության շրջանակներում ապահովել վերահսկողություն Անդրկովկասյան տարածաշրջանի պետությունների սպառազինվածության մշտական ռազմատեխնիկական զուգակշռի նկատմամբ:

2. Ռազմատեխնիկական տեսանկյունից գերակա ուղղություն կարող են դառնալ խոցման գերճշգրիտ հեռահար միջոցների արագ զարգացումը, ինչը հնարավորություն կտա խոցելու հակառակորդի ռազմա-

* Ամենայն հավանականությամբ՝ աղրբեջանցիների վերադարձի դեպքում:

կան, քաղաքական, տնտեսական նշանակետերը՝ առանց նրա հետ անմիջական (վրագետնյա) շփման մեջ մտնելու, ռադիոէլեկտրոնային հետախուզության և ուղղորդման, կապի ու կառավարման հուսալի և արդյունավետ միջոցների մշակումն ու ներդրումը:

3. Նպատակահարմար է սպառազինման ծրագրերի զարգացումը օպտիմալացնել՝ դրանք դարձնելով նվազագույն խելացի բավարարության շրջանակներում սպառազինության մեջ նոր համակարգերի ընդունման խնդիրներ: Ռազմատեխնիկական քաղաքականությունը որոշելիս, ռազմական նպատակահարմարության հետ մեկտեղ, առաջնահերթ նշանակություն պետք է տալ «արժեք-արդյունավետություն» չափանիշին:

4. Հեռանկարում նպատակահարմար է զինված ուժերի համալրման համակարգը արմատապես վերափոխել հօգուտ կանոնավոր բանակի կազմակերպման պայմանագրային ձևերի զարգացման:

Առաջին՝ անցումային, փուլում կարելի է ներդրել անձնակազմով համալրման խառը համակարգը՝ զորակոչով ու պայմանագրային զինծառայության սկզբունքների զուգակցմամբ: Արդի ռազմական տեխնիկան կարող են սպասարկել միայն բարձր որակավորմամբ, լավ պատրաստություն ստացած զինծառայողները: Խաղաղ ժամանակ զանգվածային բանակ պահելը ոչ միայն տնտեսական առումով ծանր բեռ է, այլև նպատակահարմար չէ զորքերի մարտունակության տեսակետից:

Հետևաբար Հայաստանին պետք են համեմատաբար ոչ մեծ (25 – 30 հազար մարդ) զինված ուժեր, որոնք համալրվեն զորակոչի ու կամավորության հիմունքով, ինչը զուգակցվի Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծված իրադրության հաշվառմամբ, հնարավոր է՝ «զինված ժողովրդի» հայեցակարգի յուրահատուկ ձևի իրացմամբ: Առաջնահերթ զարգացում պետք է ստանան զինված ուժերի բարձր տեխնոլոգիական ձևերը: Նպատակահարմար է նաև առաջին կարգի կիսապրոֆեսիոնալ ռեզերվի պատրաստումը (օրինակ՝ հայ ֆիդայիների ավանդույթների հաշվառմամբ):

1. Հայաստանի աշխարհագրական դիրքը բացառում է պատերազմի բոլոր թատերաբեմերում զորքերի անհրաժեշտ խմբավորումների վաղօրոք ստեղծման հնարավորությունը: Սահմանամերձ շրջանների պաշտպանությունը Իսրայելի օրինակով կարող է իրագործվել տարածքային պաշտպանության համեմատաբար ոչ մեծ ուժերով:

Արտաքին ագրեսիայից Հայաստանի հուսալի պաշտպանությունը կարող է ապահովվել գլխավորապես ի հաշիվ բարձր աստիճանի շարժունակությամբ զորքերով, որոնք ունակ են արագ կենտրոնանալու սպառնալից

ուղղություններում և հակառակորդի դեմ մղելու վճռական հարձակողական գործողություններ: Նման ռազմավարական ու մարտավարական տարաշարժի կատարմանը մշտական մարտապատրաստության ապահովումը ենթադրում է նաև անհրաժեշտ օդատրանսպորտային ու հաղորդակցային միջոցների առկայություն, ՈԳԹ-ում համապատասխան ծանր սպառազինության ու ռազմական տեխնիկայի նախնական տեղաբաշխում և արդյունավետ ռազմական կառավարում:

2. Հայաստանի ազգային անվտանգության շահերի առավել արդյունավետ ապահովումը հնարավոր է միայն կոլեկտիվ անվտանգության համակարգում մեր երկրի ներգրավման դեպքում:

V. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՒ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՈՐՈՇ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի Զինված ուժերի գործող կազմհաստիքային կառուցվածքի, բանակային կյանքի կացութաձևի հիմքում դրված են Խորհրդային բանակի հիմունքներն ու ավանդույթները, համենայն դեպս՝ այն լավը, որն ընդունելի էր մեր երկրի համար: Գործում է նաև 1991 թ. դեկտեմբերի 9-ին ընդունված «Զինապարտության մասին» Օրենքը, որով ժամկետային ծառայության տևողությունը սահմանված է 18 ամիս: Հայաստանի Կառավարությունը 1991 թ. մարտի 30-ին հաստատեց Սպայական կազմի՝ զինվորական ծառայության անցնելու կանոնակարգը:

Հայաստանի ռազմական բյուջեի ձևավորման համար նպատակահարմար է նշել, որ այդ նպատակով նախկին ԽՍՀՄ-ը տարեկան հատկացնում էր ՆՀԱ-ի մոտ 15 – 17 %-ը, ԱՄՆ-ը՝ 5,7 %-ը, Մեծ Բրիտանիան 4, 7 %-ը, Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը՝ 3,2 %-ը, Ֆրանսիան՝ 4 %-ը, Իրաքը՝ 32 %-ը, ԿԺԴՀ-ն՝ 24 %-ը, Լիբիան՝ 11,1 %-ը: Թվում է, որ մոտ ապագայում Հայաստանի ռազմական բյուջեի համար օպտիմալ նորմա կլինի ՆՀԱ-ի 8 – 10 %-ը:

Զինված ուժերի թվաքանակն ընդունված է արտահայտել բնակչության թվաքանակի տոկոսներով: Զարգացած երկրներում այն կազմում է միջինը 0,6 – 0,7 %: ԽՍՀՄ-ում այն հասնում էր 1, 35 %-ի:

Այսպիսով՝ Հայաստանի համար, Ադրբեջանի հետ ռազմական հակամարտության հետևանքով, այդ թվաքանակը կարող է կազմել ընդհանուր բնակչության թվաքանակի 0,9 – 1 %-ը:

Հայաստանի ԶՈՒ-ի համար կարևոր ռեզերվ կարող է դառնալ մեծ թվով զինվորական մասնագիտությունների գծով կանանց ներգրավումը: Այս-

պես. Հնդկաստանում ռազմական ավիացիայի վրագետնյա ծառայություններ փորձի կարգով հրավիրված կանայք հասել են փայլուն հաջողությունների: 1992 թվականից Հնդկաստանում կատարվում է կանանց ընդունելություն օդաչվական զինվորական ուսումնարաններ՝ ռազմատրանսպորտային ինքնաթիռների և ուղղաթիռների օդաչուներ պատրաստելու համար:

Ռուսաստանի բանակում ուսադիրներ են կրում շուրջ 100 հազար կին, որոնցից հազարից ավելին՝ սպայական: Կանայք ծառայում են որպես սպաներ, ենթասպաներ, սերժանտներ ու շարքայիններ բժշկական ու կապի, հակաօդային ու հակահրթիռային, ռադիոէլեկտրոնային ծառայության զորամասերում, շտաբներում՝ համակարգիչների առջև, այլ ծառայություններում: Համընդհանուր ճանաչման է արժանացել կանանց ծառայության արդյունավետությունը Ցահալում՝ Իսրայելի Պաշտպանության բանակում:

Դրանով իսկ՝ Հայաստանի ԶՈՒ-ի լավ պատրաստված շարժունակ ոչ մեծաթիվ զորամասերի առկայության պայմաններում ռազմական շինարարության հեռանկարում կարող է իրականացվել ազգային կանոնավոր բանակի միջուկի շուրջ կազմակերպված «զինված ժողովրդի» գաղափարը՝ զուգակցված երկրի որոշ մասի բռնազավթման դեպքում «համընդհանուր ժողովրդական ոչ զինված դիմադրության» գաղափարի հետ:

Այս հայեցակարգի շրջանակներում հնարավոր է անցնել զինված ուժերի մի մասի համալրմանը միլիցիական սկզբունքով, կատարել կառուցվածքային կերպափոխումներ, վերափոխել մարտական պատրաստման բնույթը, ծառայության ու զորակոչման սկզբունքները: Մեծ թվով երկրների ռազմական փորձագետների կարծիքով՝ բանակի կառուցման միլիցիական սկզբունքը, զուտ զորահավաքային առավելություններից բացի, ապահովում է ժողովրդի և բանակի միջև հաստատուն կապը, զինված ուժերին հաղորդում է զանգվածային համաժողովրդական բնույթ: Նշենք, որ «զինված ժողովրդի» սկզբունքի իրացման համար պահանջվում է արդյունավետ կերպով ապահովել Հայաստանի Հանրապետության ներքին քաղաքական կայունությունը:

Բանակի մի զգալի մասը, այն է՝ բուն միլիցիական կազմը, կարող է իսկական ծառայության մեջ գտնվել 20 տարի՝ պարբերական բազմօրյա վարժանքների զորակոչման միջոցով: Այս 20 տարիների ընթացքում, որոնց հաշվարկումն սկսվում է ժամկետային ծառայության ավարտից հետո, «միլիցիոները» կարող է հասնել որոշակի հասարակական դիրքի՝ ըստ իր մարտական նախանշանակման մնալով շարքային: Այդ եղանակով Հայաստանի Զինված ուժերը կկարողանային մարդկային ռեսուրսներ ներգրավել հայ հասարակության գործնականում բոլոր խավերից ու սոցիալական խմբերից:

Ոչ զինված դիմադրություն ասելով պետք է հասկանալ ֆիզիկական բռնության բացառմամբ իրականացվող այն գործողությունները, որոնց զինված դիմադրության մասնակիցների հետ (օրինակ՝ Աֆղանստանում) մասնակցում է բնակչության մեծ մասը: Այս եղանակով փորձ է արվում կանխելու հակառակորդի կողմից իր նպատակների իրականացումը, նվազեցնելու կամ իսպառ վերացնելու այն օգուտները, որ նա կարող էր քաղել տարածքների բռնազավթումից: Ոչ զինված դիմադրության իրականացումը պլանավորվում է որպես աջակցություն զինված ուժերի գործողություններին այն փուլաշրջանում, երբ չեզոքությունը կորսված է, իսկ երկրի տարածքի մի մասը՝ բռնազավթված:

Ռազմական շինարարության միանգամայն ինքնուրույն կողմեր են Հայաստանի ռազմական անվտանգության համակարգի գործունեության ռազմավարությունն ու մարտավարությունը: Համակարգի գործառման մեխանիզմն է իշխանության ու կառավարման պետական մարմինների կողմից ձեռնարկվող համաձայնեցված գործողությունների համախումբը, գործողություններ, որոնք նրանք կատարում են պետության ռազմական անվտանգության՝ օրենսդրորեն իրենց ամրակցված ոլորտներին ու խնդիրներին համապատասխան:

Հայաստանի Ազգային անվտանգության խորհուրդը կատարում է երկրում և արտասահմանում ընթացիկ իրադրության վերլուծություն, երևան է հանում դրա զարգացման միտումները կանխորոշող գործոնները, գնահատում է երկրի կենսականորեն կարևոր շահերի համար առկա սպառնալիքները և կանխատեսում հեռանկարային վտանգները, Նախագահի համար մշակում դրանց կանխման ու չեզոքացման վերաբերյալ առաջարկություններ:

Նախագահը սահմանում է գալիք տարվա ու մոտակա հեռանկարի կտրվածքով Հայաստանի ռազմական անվտանգության նպատակներն ու անվտանգության ռազմավարության հիմունքները, որոնք ներկայացնում է Հայաստանի խորհրդարանին երկրի անվտանգության ապահովման վերաբերյալ իր ամենամյա զեկուցման մեջ: Դրանում տրվում են անվտանգության վիճակի գնահատականը, անվտանգության ոլորտում իրականացվելիք ներքին, արտաքին ու ռազմական քաղաքականության պլանավորվող ուղղություններն ու համապետական ծրագրերը և հայցվում են այդ ծրագրերի իրականացման ու անվտանգության ապահովման պետական մարմինների ֆինանսավորման համար բյուջեական միջոցներ:

Ռազմական ոլորտում համալիր պլաններն ու ծրագրերն իրականացվում են Կառավարության կողմից՝ Հայաստանի այն նախարարությունների ու գերատեսչությունների միջոցով, որոնց գործունեությունն անմիջականորեն առնչվում է անվտանգության ապահովման հետ, ինչպես նաև տեղա-

կան մակարդակի իշխանության ու կառավարման համապատասխան կառույցների միջոցով:

Ազգային անվտանգության խորհուրդը վերլուծում է ծրագրերի կատարման ընթացքը, կանխատեսում ու գնահատում է անվտանգության համար ծագող սպառնալիքները, այդ սպառնալիքների վերացման ուղղությամբ օպերատիվ որոշումների ընդունման համար մշակում և Նախագահին է ներկայացնում առաջարկություններ:

Եթե ծագում են երկրի կենսականորեն կարևոր շահերին դիպչող արտակարգ իրավիճակներ, ապա Ազգային անվտանգության խորհուրդը Նախագահի համար մշակում է դրանց հետևանքների վերացմանը նպատակաուղղված արտակարգ, ճգնաժամային որոշումների վերաբերյալ առաջարկություններ: Ընդունված որոշումները և ուժերի ու միջոցների օգտագործման համադասումը կատարում է Կառավարությունը:

Կոնկրետ աշխատանքի հիմնական ուղղությունները իրացվում են պետական մարմինների այն գործունեության միջգերատեսչական ծրագրերի համալիրում, որն իրականացվում է ի շահ քաղաքական, տնտեսական, ռազմական, գիտատեխնիկական ու մարդասիրական ոլորտներում անվտանգության ապահովման:

Անվտանգության խնդիրների վերաբերյալ առավել կարևոր որոշումների պատրաստման ապահովման ու կատարման վերահսկման ոլորտում համադասող կենտրոնն է Նախագահի՝ ազգային անվտանգության հարցերով գլխավոր խորհրդականի մասնագիտացված աշխատակազմը:

Քաղաքական ծրագիր

Քաղաքական ծրագրի հիմնական նպատակն է մշակել այնպիսի միջոցառումների ու դրանց իրականացման մեխանիզմների համալիր, որոնք հնարավորություն տան ստեղծելու բարենպաստ արտաքին քաղաքական իրադրություն ապահովող (երբ բացառվում է ռազմական սպառնալիքների առաջացումը և ապահովվում է պետության կողմից ճգնաժամի արագ հաղթահարումը), ինչպես նաև ժողովրդավարության հետագա զարգացման ու հասարակության քաղաքական կայունության ամրապնդման համար անհրաժեշտ պայմաններ: Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել մասնավոր խնդիրների համալիր, որոնց թվին կարելի է դասել.

– աշխարհում Հայաստանի քաղաքական դերի աճում, ակտիվ մասնակցություն միջազգային կազմակերպությունների գործունեությանը, միջազգային իրավական ակտերի ու նորմերի ճանաչում,

– Հայաստանի անմիջական մասնակցություն կրակի դադարեցման, միջազգային հակամարտությունների կարգավորման հարցերի լուծմանը,

– Հայաստանի երկկողմ քաղաքական շփումների ակտիվացում բոլոր երկրների հետ, որոնք մասնակցում են Անդրկովկասում տարածաշրջանային անվտանգության պահպանմանը,

– Հայաստանի մասնակցություն Ամերիկայի, Եվրոպայի և Ասիայի երկրների հետ համատեղ ազգամիջյան մակրոտարածաշրջանային ֆինանսատնտեսական ու ռազմաքաղաքական ընկերակցությունների (այդ թվում՝ նախկինում ԽՍՀՄ կազմի մեջ մտած պետությունների հետ), միասնական տնտեսական ու ռազմական ռազմավարական տարածության ստեղծմանը, նրանց հետ համապատասխան խաղաղ պայմանագրերի կնքում, Հայոց Սփյուռքի համայնքների բնակության երկրների պետական ու ոչ պետական մարմինների հետ համագործակցության հնարավորությունների օգտագործում,

– Հայաստանի ակտիվ մասնակցություն Անկախ Պետությունների Համագործակցության զարգացմանն ու Համագործակցության խորհրդատվական-համադասող կառույցների ձևավորմանը,

– այնպիսի ծրագրի մշակում, որով կապահովվի ինչպես Հայաստանի ներսում, այնպես էլ նրանից դուրս ազգային դիմակայության ու իրադրության ապակայունության ուժգնացման ցանկացած փորձի պատեհաժամ կանխումը,

– Հայաստանի գործադիր իշխանության՝ անվտանգության ապահովման համակարգի կառույցների ձևավորման ավարտում,

– կոռուպցիայի ու կազմակերպված հանցավորության հետագա զարգացումը և միջազգային մաֆիայի հետ միավորումը կանխելու նպատակով պահպանում, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև ամրապնդում Հայաստանի այն կառույցների, որոնք նախկինում ապահովել են դրանց դեմ պայքարը ՊԱԿ-ի ու ՆԳՆ կազմում,

– Հայաստանի կողմից միջպետական բնապահպանական պայմանագրի և բնապահպանական անվտանգության ապահովման գծով երկկողմ տարածաշրջանային համաձայնագրերի կնքում,

– ընթացիկ սոցիալական խնդիրները բնության քայքայման միջոցով լուծելու փորձերի կանխման նպատակով Հայաստանի գործադիր իշխանության կենտրոնական ու տեղային մարմինների լիազորությունների օրենսդրական սահմանազատում,

– Հայաստանի բնապահպանական օրենսդրության մշակման ավարտում, այդ թվում՝ բնության պահպանության ու շրջակա միջավայրի վատ-

թարացման հետևանքով բնակչության առողջությանը հասցված վնասի դիմաց հատուցման ակտերի, ինչպես նաև ճառագայթային անվտանգության մասին օրենքի ընդունում,

– Հայաստանի էթնիկական փոքրամասնությունների և փախստականների ու ժամանակավոր վերաբնակների (օրինակ՝ Սպիտակի երկրաշարժի գոտուց արտաբնակեցվածների) իրավունքների պաշտպանության պետական քաղաքականության ձևավորում,

– սահմանում այն գերակայությունների և հիմնական դոկտրինալ ուղղությունների, որոնք պետք է հաշվի առնվեն Հայաստանի ռազմական ու տնտեսական ծրագրերում:

Տնտեսական ծրագիր

Տնտեսական ծրագրի հիմնական նպատակն է մշակել այնպիսի միջոցառումների ու դրանց իրականացման մեխանիզմների համալիր, որոնք հնարավորություն տան պայմաններ ստեղծելու տնտեսության պետական հատվածի գործառությունը կայունացնելու և նոր տնտեսական կառուցվածքներ արագ զարգացնելու, ինչպես նաև ընդհանրապես Հայաստանը տնտեսական ճգնաժամից դուրս բերելու համար:

Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել մասնավոր խնդիրների մի համալիր, որոնցից հիմնականներն են.

– Հայաստանի տնտեսության պետական հատվածի զարգացման կայունացում և դրա ինտեգրում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից այլ պետությունների տնտեսությունների հետ,

– Հայաստանի պետական սեփականության մասնավորեցում, բազմակացութածև տնտեսության զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծում,

– Հայաստանի հակամենաշնորհային օրենսդրության ստեղծում,

– համակողմանի աջակցություն Հայաստանում հեռանկարային տեխնոլոգիաների կիրառմամբ պաշտպանական արտադրանքի թողարկման զարգացմանը,

– այնպիսի միջոցառումների համալիրի ներդրում, որոնք ապահովեն պաշտպանական ձեռնարկություններում մշակվող նոր տեխնոլոգիաների ներդրումը Հայաստանի արդյունաբերության քաղաքացիական ճյուղերում,

– Հայաստանի տնտեսության մեջ արտասահմանյան ներդրումների ներգրավումն ապահովող համալիր միջոցների մշակում,

– Հայաստանի վառելիքաէներգետիկ համալիրի պրոբլեմների լուծում,

– Հայաստանում հողային բարեփոխումների զարգացում, ֆերմերական տնտեսությունների ու բազմակացութածև գյուղատնտեսության զարգացման խթանում,

– Հայաստանի այնպիսի հարկային համակարգի ստեղծում, որը խթաներ արտադրությունը և միևնույն ժամանակ ապահովեր բնակչության առավել սակավ ապահովված շերտերի սոցիալական պաշտպանությունը,

– Հայաստանի արտաքին առևտրի կառուցվածքի կատարելագործում, ապրանքների արտահանման ընդհանուր ծավալում հումքի մասնաբաժնի նվազեցում,

– առավելագույն բարենպաստման բանելակարգի ստեղծում մեծ պահանջարկի ապրանքներ ու նոր, բնապահպանության տեսակետից մաքուր տեխնոլոգիաների վրա հիմնվող արտադրամիջոցներ Հայաստան ներկրելու համար,

– Հայաստանի արտադրությունում ու գյուղատնտեսությունում էներգախնայող տեխնոլոգիաների մշակման ու ներդրման, երկրորդային ռեսուրսների լայն օգտագործման տնտեսական խթանման համակարգի ստեղծում,

– Հայաստանում բնական ռեսուրսների և հողի օգտագործման համար տնտեսապես հիմնավորված վճարաչափի (հարկերի) ներդրում,

– Հայաստանում ձեռնարկատերերի կողմից իրենց ձեռնարկությունների բնապահպանական, էներգա- ու ռեսուրսատարության սահմանային պարամետրերի հայտարարման պրակտիկայի ներմուծում,

– Հայաստանում շրջակա միջավայրի աղտոտման համար տարածաշրջանային ու տեղային քվոտաների ու լիմիտների սահմանում,

– Հայաստանում բնապահպանական աղետների (առաջին հերթին՝ Սպիտակի երկրաշարժի) հետևանքների վերացում:

Ռազմական ծրագիր

Ռազմական սպառնալիքի ծագման հնարավորության վրա ազդող գործոնների վերլուծությունից հետևում է, որ Հայաստանի պաշտպանության ոլորտում հարկ կլինի իրագործել հետևյալ միջոցառումները:

Տարածքային վեճերի, ինչպես նաև զարգացած ու «երրորդ աշխարհի» երկրների հետ հարաբերություններում տարածայնությունների առաջացման դեպքում ռազմական ուժի կիրառման համար նախադրյալները բացառելու նպատակով պայմաններ ստեղծել հնարավոր ռազմական հակամարտությունների շրջաններում պատեհաժամորեն զորախմբավո-

րումներ ծավալելու ու ճգնաժամային իրավիճակներում դրանց արդյունավետ կառավարումն ապահովելու համար:

Վերը շարադրվածից բխում է, որ Հայաստանի ռազմական ծրագրի հիմնական նպատակն է մշակել ու հիմնավորել ռազմական քաղաքականությունն ու ռազմական շինարարության ուղղությունները, Զինված ուժերի ստեղծման և առանց եղած զորախմբավորումների մարտական ու զորահավաքային պատրաստության մակարդակի իջեցման, նվազագույն տնտեսական ծախսերով ու զինծառայողների սոցիալական պաշտպանվածության ապահովմամբ Միացյալ զինված ուժերի կազմում դրանց ինտեգրման կարգը:

Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել մասնավոր խնդիրների մի համալիր, որոնցից հիմնականների թվին կարելի է դասել՝

– Հայաստանի պաշտպանության նախարարության կազմավորման ավարտումը, ռազմական դոկտրինի մշակումը և դրա դրույթների իրականացումը, ակտիվ մասնակցությունը Անկախ Պետությունների Համագործակցության Միացյալ զինված ուժերի կառավարային կառուցվածքի ձևավորմանը,

– Հայաստանի տարածքում գտնվող և Միացյալ զինված ուժերի մարտունակությունն ապահովող օբյեկտների կարգավիճակի հարցի լուծումը,

– Հայաստանի ռազմական բյուջեի աղբյուրների որոշումը և դրա ձևավորումը, ռազմական ծախսերի վերահսկման կարգի հաստատումը,

– սպառազինության և ռազմական տեխնիկայի մշակման, արտադրության, վաճառքի ու գնման կազմակերպման հարցերի լուծումը,

– Հայաստանի մասնակցություն զինված ուժերի և սպառազինությունների կրճատման գծով բանակցություններին,

– Հայաստանում ռազմական գիտության կազմակերպման և զինվորական կադրերի պատրաստման հարցերի լուծումը,

– քաղաքական մեթոդներով պատերազմներն ու ռազմական հակամարտությունները կանխելու հետ կապված հարցերի մշակումը,

– Եվրոպայի և Ասիայի երկրների հետ Հայաստանի ռազմական համագործակցության ընդլայնումը, ՆԱՏՕ-ի եվրոպական պետությունների և ԱՄՆ-ի հետ ռազմական կապերի հաստատումը:

Գիտատեխնիկական ծրագիր

Գիտատեխնիկական ծրագրի հիմնական նպատակն է մշակել այնպիսի միջոցառումների ու դրանց իրականացման մեխանիզմների համալիր,

որոնք հնարավորություն տան ստեղծելու ամբողջ անցումային շրջանում գիտության ու տեխնիկայի կայուն զարգացումը, ազգի մտավոր ներուժի պահպանումը, նոր տեխնոլոգիաների մշակման ու կիրառման բնագավառում հետագայում Հայաստանի հետ մնալը կանխելու նպատակով գիտության ու տեխնիկայի նվաճումների արդյունավետ օգտագործումը ապահովող պայմաններ:

Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել մասնավոր խնդիրների մի համալիր, որոնցից հիմնականների թվին կարելի է դասել՝

– Հայաստանում գիտական գործունեության կազմակերպման ու կառավարման համակարգի կատարելագործումը՝ հիմնարար հետազոտություններն ընդլայնելու և ԳՀԱ-ների պլանավորումը կենտրոնացնելու, ֆինանսավորման հետ կապված դժվարությունների պատճառով հիմնարար հետազոտությունների կրճատումը կանխելու նպատակով,

– Հայաստանի կայուն և անվտանգ զարգացման կարիքների համար գիտական կադրերի պատրաստման համակարգի կատարելագործումը,

– նոր տեխնոլոգիաների մեջ գիտական նվաճումների ներդրումը խթանող համալիր միջոցների մշակումը,

– հեռանկարային մշակումների ֆինանսավորման, ինչպես նաև նպատակային դրամաշնորհների տրամադրման գործում արտասահմանյան ֆիրմաների ներգրավմանն ուղղված միջոցների մշակումը,

– զարգացած երկրների հետ Հայաստանի գիտական կապերի ծավալումը և համատեղ հիմնարար ու կիրառական գիտական հետազոտությունների կատարման, գիտատեխնիկական տեղեկույթի ու հավաստագրերի փոխանակման, տեխնիկայի նմուշների մշակման ստանդարտացման ու միօրինականացման պրակտիկայի զարգացումը,

– Հայաստանում տեղեկատվական ենթակառուցվածքի կենտրոնացման, ստանդարտավորման, միօրինակացման ու մշակման խթանման ուղղությամբ միջոցների ձեռնարկումը,

– հեղինակային իրավունքների պաշտպանության ու տեղեկութային անվտանգության ապահովումը,

– Հայաստանի բնապահպանական անվտանգության ապահովման ոլորտում գիտահետազոտական գործունեության զարգացում:

Մարդասիրական ծրագիր

Մարդասիրական ծրագրի հիմնական նպատակն է մշակել այնպիսի միջոցառումների ու դրանց իրականացման մեխանիզմների համալիր, որոնք հնարավորություն տան ստեղծելու բնակչության առողջության

պահպանման համակարգի և առողջապահության նյութատեխնիկական բազայի բարելավումը, ազգի միասնության ամրապնդումը, հայ ժողովրդի մշակութային, կրթական ու հոգևոր մակարդակի պահպանումը, բնապահպանական տեսանկյունից բնականոն շրջակա միջավայրի վերականգնումը ապահովող պայմաններ:

Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել մասնավոր խնդիրների մի համալիր, որոնցից հիմնականների թվին են դասվում՝

– Հայաստանում այնպիսի համալիր միջոցառումների մշակումը, այդ թվում՝ հարկային համակարգի բնագավառում, որոնք խթանեն մշակույթի, արվեստի ոլորտի կազմակերպությունների գործունեության, ինչպես նաև բարեգործական գործունեության ֆինանսավորումը ոչ միայն պետության, այլև մասնավոր անձանց ու տարբեր տեսակի առևտրային կառույցների կողմից,

– Հայաստանում բարձրագույն ու միջնակարգ տեխնիկական կրթությամբ մասնագետների պատրաստման, գիտական կադրերի ձևավորման և կադրերի, այդ թվում՝ գործազուրկների ու Զինված ուժերից զորացրվողների, վերապատրաստման համակարգի ֆինանսավորման սկզբունքների կատարելագործում, այդ նպատակով պետական ու առևտրային ձեռնարկությունների ու կազմակերպությունների, ինչպես նաև մասնավոր անձանց միջոցների ներգրավումը խթանող մեխանիզմների ձևավորում,

– Հայաստանի բնակչության բոլոր շերտերի սոցիալական ապահովման, քաղաքացիների, այդ թվում՝ արտասահմանում բնակվողների, իրավունքների ու ազատությունների պաշտպանության համակարգի ստեղծում,

– այլ պետություններից փախստականների սոցիալական պաշտպանությունը, ինչպես նաև այդ պետությունների կողմից ֆինանսական և այլ բնույթի փոխհատուցումներ ապահովող օրենսդրական ակտերի մշակումը Հայաստանում,

– Հայաստանում առողջապահության բնագավառում տարբեր տեսակի սեփականության ու բուժծառայության շուկայի ձևավորման ու զարգացման պայմաններում հիվանդությունների կանխարգելման, բնակչության՝ բարձրորակ բուժօգնության ու դեղորայքային ապահովման պահանջմունքի լիարժեք ու համատարած բավարարման ուղղությամբ գործուն միջոցների ձեռնարկումը,

– Հայաստանում առողջ կենսակերպի համար պայմանների ստեղծումը, ժողովրդի բարձր հոգևոր ու բարոյական մակարդակի ձևավորումը,

– ինչպես Հայաստանի տարածքում, այնպես էլ արտասահմանում տարերային, բնապահպանական և այլ բնույթի աղետների հետևանքների

օպերատիվ վերացումն ապահովող պետական ու հասարակական կառույցների ստեղծումը Հայաստանում,

– Հայաստանում բնական միջավայրի որակի ու բնակչության առողջության մշտադիտարկման միասնական համակարգի ստեղծումը՝ դիտման գոյություն ունեցող համակարգերի միավորմամբ,

– բնապահպանական, ճառագայթային ու քիմիական անվտանգության, բնակչության պաշտպանության ու նրա կենսապահովման համար անհրաժեշտ կենսառեսուրսների ապահովումը:

* * *

Միայն օպտիմալ կերպով օգտագործելով հայության, Հայաստանի Հանրապետությունում բնակվող բոլոր ազգությունների հսկայական ստեղծագործ ներուժը՝ կարելի է ստեղծել արդիական և հուսալի Զինված ուժեր:

VI. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ

Հայաստանի ռազմական անվտանգության համակարգը նախանշանակված է երկրի այնպիսի որակական վիճակի հասնելու համար, որի դեպքում հուսալի կերպով ապահովված լինեին անհատի, հասարակության ու պետության գոյությունն ու առաջադիմական զարգացման հնարավորությունը: Այն կառուցվում է ըստ անվտանգության ապահովման նպատակների և սկզբունքների՝ ռազմական անվտանգության ոլորտում միջգերատեսչական հարաբերությունները կարգավորող իրավական նորմերի համակարգի մշակմամբ, տվյալ ոլորտում իշխանության ու կառավարման մարմինների գործունեության հիմնական ուղղությունների որոշմամբ, անվտանգության ապահովման մարմինների ու դրանց գործունեության նկատմամբ վերահսկման ու հսկողության մեխանիզմների ձևավորմամբ ու կերպափոխմամբ: Դրան կարելի է հասնել ի հաշիվ Հայաստանի օրենսդիր, գործադիր ու դատական իշխանությունների գործունեության, որը նրանք վարում են անվտանգության՝ իրենց իրավասություններին համապատասխանող ոլորտներում:

Հայաստանի անվտանգության օրենսդրական ոլորտում գործող մարմինների հիմնական գործառույթներ կարող են լինել՝

– անվտանգության ոլորտում հարաբերությունների իրավական կարգավորման համակարգի մշակումը,

– անվտանգության ապահովման մարմինների կազմակերպման ու գործունեության կարգի սահմանումը,

– անվտանգության ապահովման համակարգի մարմինների կադրային քաղաքականության վերահսկումը,

– անվտանգության ապահովման մասին Հայաստանի Նախագահի զեկուցման պարբերական (ոչ պակաս, քան տարին մեկ անգամ) լսումները Խորհրդարանում,

– անվտանգության ապահովման մարմինների ու անվտանգության ոլորտում պետական ծրագրերի ֆինանսավորման համար բյուջետական հատկացումների որոշումը,

– անվտանգության ապահովման հարցերով Հայաստանի միջազգային պայմանագրերի ու համաձայնագրերի վավերացումն ու չեղյալ հայտարարումը,

– անվտանգության օբյեկտների կենսականորեն կարևոր շահերի պաշտպանության գործում գերակայությունների որոշումը,

– անվտանգության ապահովման մարմինների գործունեության վերահսկումը:

Հայաստանի ռազմական անվտանգության գործադիր ոլորտում գործող մարմինների հիմնական գործառույթներ կարող են լինել՝

– անվտանգության ոլորտում հարաբերությունները կարգավորող օրենքների և կատարման ենթաօրենսդրական նորմատիվ ակտերի ընդունման ապահովումը,

– անվտանգության ապահովման պետական ծրագրերի մշակման և իրացման կազմակերպումը,

– անհատի, հասարակության ու պետության անվտանգության ապահովման ուղղությամբ միջոցառումների համակարգի իրականացումը՝ իրենց իրավասությունների սահմաններում,

– անվտանգության ապահովման պետական մարմինների ձևավորումը, վերակազմակերպումը և լուծարումը՝ օրենքով սահմանված կարգով:

Հայաստանի անվտանգության դատական ոլորտում գործող մարմինների հիմնական գործառույթներ կարող են լինել՝

– անհատի, հասարակության ու պետության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ գործերով արդարադատության իրականացումը,

– այն քաղաքացիների, հասարակական և այլ կազմակերպությունների ու միավորումների դատական պաշտպանության ապահովումը, որոնց

իրավունքները խախտվել էին անվտանգության ապահովման ուղղությամբ կատարված գործունեության հետևանքով:

Հայաստանի ռազմական անվտանգության համակարգն ըստ իր նախանշանակման ու անվտանգության ապահովման սկզբունքների կարող է ունենալ հետևյալ բնութագրերը.

– ընդգրկել ռազմական անվտանգության բոլոր ոլորտները և հուսալի կերպով ապահովել երկրի կենսականորեն կարևոր շահերի պաշտպանությունը լրիվ ծավալով,

– վաղօրոք կանխատեսել ու պատեհաժամորեն կանխել սպառնալիքները՝ դրանց զարգացման վաղ փուլում,

– հարմարվել իրադրության պայմաններին, համապատասխանել Հայաստանի քաղաքական նպատակներին ու տնտեսական հնարավորություններին,

– արդյունավետ կերպով գործել ինչպես բնականոն, այնպես էլ ծայրահեղ պայմաններում,

– ունենալ օրենսդիր, գործադիր ու դատական իշխանությունների մարմինների կառուցվածքային ու գործառութային տարանջատվածություն,

– չպարունակել սպառնալիքներ հասարակության ու մարդու համար, ռազմական անվտանգության ապահովման գծով իր գործունեությունը վարել միայն օրենքին համապատասխան,

– օժտված լինել անվտանգության համակարգի մարմինների գործունեության անհրաժեշտ բացությամբ ու հրապարակայնությամբ, բոլոր քաղաքացիների համար ապահովել անվտանգության հարցերի վերաբերյալ տեղեկույթի առավելագույնս հնարավոր մատչելիություն:

Վերը թվարկված բոլոր խնդիրների հաշվառմամբ կարելի է Հայաստանի անվտանգության համակարգի կառուցվածքին տալ հետևյալ ձևը:

Ռազմական անվտանգության համակարգի կառուցվածքը բաղկացած է օրենսդիր, գործադիր ու դատական իշխանությունների մարմիններից, պետական, հասարակական և այլ կազմակերպություններից ու միավորումներից, քաղաքացիներից, որոնք օրենքին համապատասխան մասնակցում են անվտանգության ապահովմանը:

Անվտանգության գործադիր ոլորտում գործող պետական մարմինները, ներառյալ՝ անվտանգության ապահովման ուժերն ու միջոցները, կազմում են Հայաստանի ռազմական անվտանգության ապահովման համակարգը:

Այսպիսով՝ Հայաստանի ռազմական անվտանգության ապահովման համակարգի հիմնական գործառույթների շարքը կարելի է դասել՝

– անվտանգության օբյեկտների կենսականորեն կարևոր շահերի դեմ ուղղված արտաքին ու ներքին սպառնալիքների բացահայտումն ու կանխատեսումը, դրանց կանխման ու չեզոքացման ուղղությամբ օպերատիվ ու երկարաժամկետ միջոցառումների համալիրի իրականացումը,

– ռազմական անվտանգության ապահովման ուժերի և միջոցների ստեղծումն ու պատրաստության վիճակում պահումը,

– ռազմական անվտանգության ապահովման ուժերի և միջոցների կառավարումը առօրեական պայմաններում և արտակարգ իրավիճակներում,

– արտակարգ իրավիճակներից տուժած տարածաշրջաններում ռազմական անվտանգության օբյեկտների բնականոն գործունեության վերականգնման ուղղությամբ միջոցառումների համակարգի իրականացումը,

– Հայաստանի սահմաններից դուրս ռազմական անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումներին մասնակցությունը՝ Հայաստանի Հանրապետության կնքած կամ ճանաչած միջազգային պայմանագրերին ու համաձայնագրերին համապատասխան:

Ռազմական անվտանգության ապահովման համակարգի կենտրոնական մակարդակին կարելի է դասել Հայաստանի Նախարարների խորհուրդը (Կառավարությունը), նախարարություններն ու գերատեսչությունները:

Ազգային, այդ թվում՝ ռազմական անվտանգության ապահովման պետական մարմինների ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Նախագահը: Նրան առընթեր բարձրագույն խորհրդատվական մարմինը Ազգային անվտանգության խորհուրդն է:

Հայաստանի Կառավարության և նրան ենթակա նախարարությունների ու գերատեսչությունների հիմնական խնդիրներ կարող են լինել՝

* В июне 2003 г. в Армении впервые были проведены учения ПРМ НАТО, в которых участвовали почти 400 войсковых подразделений из 19 различных стран НАТО и партнеров, а именно: из Армении, Австрии, Болгарии, Венгрии, Греции, Грузии, Италии, Канады, Литвы, Молдовы, Польши, России, Румынии, Словакии, Соединенного Королевства, Соединенных Штатов, Турции, Узбекистана и Бывшей Югославской Республики Македонии. Важно отметить, что Россия впервые–при содействии Армении–участвовала в военных учениях такого рода, представив офицерский состав и пехотное отделение, интегрированное в многонациональную силовую структуру учений. Важно также отметить, что учения ПРМ НАТО в Ереване, создали хорошую возможность и для армянских, и для турецких войск впервые вступить в сотрудничество на территории независимого армянского государства.
Целью этих учений в Армении являлось повышение эффективности сухопутных войск в полевых условиях путем совместных действий НАТО и партнеров-участников для улучшения взаимопонимания и интероперабельности, и эта цель была полностью достигнута.

[108] См. «Заявление Министра иностранных дел РА Вардана Осканяна на саммите Совета Евроатлантического партнерства». Стамбул, 29 июня 2004 г. (http://www.armeniaforeignministry.com/speeches/040629_vo_istanbul.html); *Justin Burke*. «Agency sees reapproachment between Armenia, NATO». «Armenia Daily Digest», «Eurasianet.org», 2005, 29 May (http://www.eurasianet.org/resource/armenia/hypermail/200404/0019.shtml).
«На прошлой неделе к НАТО присоединились семь новых членов, и армянское правительство ратифицировало многосторонний «Договор о статусе Сил» ПРМ (ДОСС ПРМ). Это совпадение можно считать символичным, особенно если учесть то обстоятельство, что и Ереван, и Брюссель подходят к ратификации абсолютно не как к обыкновенной формальности. Все же, если принять во внимание специфический характер отношений Армения–НАТО, то не будет сомнений, что, приняв решение присоединиться к ДОСС ПРМ, Ереван посылает определенный мессидж НАТО,

в) Отношения с ведущими странами

– Российская Федерация

Отношения Республики Армения с Российской Федерацией носят стратегический характер и важны своей значимостью для возможно максимального гарантирования безопасности Армении[109]. Эти многокомпонентные отношения вытекают из долгосрочных взаимных интересов Армении и России. Они включают все возможные сферы сотрудничества между двумя государствами и народами и регулируются почти 160 двусторонними договорами. Знаменательно, что все составляющие этого широкого круга сотрудничества находятся на высоком уровне и играют ведущую роль в деле обеспечения безопасности Армении. Достаточно отметить военную, торгово-экономическую, энергетическую, научную и другие сферы, в особенности, наметившийся в последнее время приток российского капитала в Армению[110].

В целом, с точки зрения интересов Армении армяно-российское военное сотрудничество решает следующие задачи:

- обеспечение военных и военно-технических нужд Вооруженных сил Армении;
- поддержание баланса сил в регионе.

Развитие армяно-российского военного сотрудничества осуществляется по трем основным направлениям:

- коалиционные группировки;
- объединенная система ПВО;
- сотрудничество в рамках ОДКБ.

который может быть интерпретирован следующим образом: отныне Армения категорически не отказывается начинать новый этап отношений с НАТО (как было опубликовано ранее), результатом чего однажды может стать заявка на присоединение к Альянсу». «ARMENIA AND NATO». «Research and Information Office». «Armenian Assembly of America», 2004, 17 February (http://www.aaainc.org/info/Armenia-NATO.pdf).

[109] См. «Министр иностранных дел РА В. Осканян принимает Министра иностранных дел С. Лаврова», 17 февраля 2005 г. (http://www.armeniaforeignministry.com/pr_05/050217_lavrov.html); *Sergei Blagov*. Kocharian's Moscow Visit Underscores Strengthening Armenian-Russian Security Cooperation. «EURASIA INSITE», 2003, 21 January (http://www.eurasianet.org/departments/insight/articles/eav012103.shtml); «Vladimir Putin Stresses Importance of Industrial Cooperation Between Russia and Armenia». «Pravda.Ru» (http://english.pravda.ru/cis/2001/09/15/15286.html); «FM Oskanian Meets With Russian FM Ivanov», 2003, 14 November (http://www.armeniaforeignministry.com/PR/PR290.html).

[110] См. «В повестке–комплементаризм и многовекторность оборонной политики», интервью с доктором политических наук, советником по военной политике Министра обороны РА Гайком Котанджяном. «Голос Армении», 16 ноября 2002 г.; *а также Александр Тихонов*. Друзья, прекрасен наш союз? «Красная звезда», 19 декабря 2002 г. (http://www.redstar.ru/2002/12/19_12/3_02.html).

Армяно-российское военное сотрудничество, в особенности, присутствие российской военной базы на территории Армении, нацелено на нейтрализацию военной угрозы, исходящей от Турции.

Кроме двустороннего формата, армяно-российские отношения не менее важны и в многостороннем формате. Примером могут служить объединенная система ПВО СНГ и совместное армяно-российское патрулирование границы. В целом, армяно-российский военный союз в системах региональной безопасности (как, например, ОДКБ) сегодня играет важную роль в сохранении военно-политического равновесия в Южно-Кавказском регионе и в международных отношениях.

Наряду со всем этим, армяно-российские стратегические отношения ни в коей мере не препятствуют развитию других векторов внешних отношений, в частности, в направлении Евроатлантической интеграции Армении. Наоборот, Россия также приняла путь европейского развития, а заметное сближение России и ЕС создает для Армении благоприятное поле для гармонизации этих обоих приоритетных направлений своей стратегии и для достижения желаемых результатов в своей внешней политике.

– Соединенные Штаты Америки

Развитие разностороннего сотрудничества с США имеет для Армении первостепенное значение в становлении демократической государственности, обеспечение стабильного и безопасного развития.

США–мировая держава. Со времени провозглашения независимости Армении США руководствовались политикой оказания государственной поддержки Республике Армения[111]. В армяно-американских отношениях в последние годы зафиксирован существенный прогресс. Армения включена в инициативу «Вызовы тысячелетия», которая обеспечит масштабное финансовое содействие и консалтинговую поддержку в ее развитии.

Параллельно с сотрудничеством в политической, экономической, культурной и других областях серьезное развитие получили армяно-американские оборонные отношения[112]. Сегодня этими программами по обеспечению военной безопасности охвачен ряд направлений[113]: осуществляются

[111] См. «US Government Assistance to Armenia. Activities/Programs by region and type». Embassy of the United States of America, Yerevan, Armenia (http://www.usa.am).

[112] См. «Armenia and USA sign Military agreement». «Pravda.RU». 2004, 26 April (http://newsfromrussia.com/world/2004/04/26/53642.html).

[113] «Такие программы безопасности в Армении, как «Экспортный контроль» и «Программа содействия приграничной безопасности», направлены на расширение возможностей Армении для предотвращения торговли и распространения оружия и других нелегальных товаров путем обеспечения оборудованием и переподготовки кадров служб таможенной и пограничной защиты Армении. Мы поддерживаем программы повышения безопасности ядерного реактора, оценки и противодействия

различные программы, в частности, «Внешнее военное финансирование», «Международное военное обучение и тренинг», программа «Совместная контактная группа» с Европейским командованием США, «Программа партнерства со штатами» (со штатом Канзас) и т. д.[114]

Следует отметить, что оборонное сотрудничество с США имеет для Вооруженных сил Армении не только военное значение, оно важно и в политическом аспекте, поскольку, способствуя повышению боеспособности Вооруженных сил Армении, играет важную роль в сохранении сбалансированности военной политики государств региона. Развитие сотрудничества Армении как в многостороннем формате в рамках НАТО, так и с европейскими странами в двустороннем формате в значительной мере обусловлено отношениями с США[115].

Существенную роль в армяно-американских отношениях играет армянская община США, которая придает этим отношениям особое значение. С начала блокады Армении со стороны Азербайджана и Турции армянская община в США приложила значительные усилия в правительственных кругах США по обеспечению содействия безопасности населения Армении и Нагорного Карабаха. Диаспора также содействует нейтрализации попыток нарушить сбалансированность региональной политики США в пользу Азербайджана. Эта роль имеет существенное значение и сегодня[116].

угрозе распространения радиоактивных веществ. Программы «Внешнего военного финансирования», «Международного военного образования и подготовки» нацелены на профессиональное военное образование, увеличение миротворческих возможностей армянских Вооруженных сил и модернизацию возможностей военной коммуникации. Эти программы поддерживают взаимодополняемость и региональную стабильность. США также выделяют гранты ученым научных центров по оружию посредством фонда «Гражданского исследования и развития»» (см. «Fact Sheet», «Bureau of European and Eurasian Affairs», U.S. Department of State. Washington, DC, 2004, 17 February (http://www.state.gov/p/eur/rls/fs/29484.htm)).

[114] См. «Armenia, USA discuss military cooperation». «Armenian Diaspora», 2004, 11 August (http://www.armeniandiaspora.com/index.php?do= printable&id=9057); *Emil Danielyan.* U.S. Officers Inspect Armenian Military. PfP News (http://www.armenialiberty.org/armeniareport/report/en/2005/05/EC4EFE09-47E5-412D-92C7-D39AF636A6FD.ASP).

[115] См. «Coalition Forces. Armenia: Military agreement on providing mutual services». «DARPA TIDES» Iraq Reconstruction Report, 2004, 29 April, № 179 (http://tides.carebridge.org/TIRR/D-TIRR179.htm).

[116] «США гордятся своими прочными связями с Арменией. После окончания Первой мировой войны и начиная с независимости Армении в 1991 году наша страна стремится к партнерству с Арменией, которое стимулирует демократию, сотрудничество в сфере безопасности и свободные рыночные отношения. Сегодня наше государство обязано найти мирное решение Карабахского конфликта и благодарно Армении за ее продолжительное сотрудничество в борьбе против терроризма. Путем взаимопонимания и доброй воли свободные нации могут содействовать построению более светлого

Исходя из приоритетов обеспечения своей национальной безопасности Армения продолжит стабильно развивать сотрудничество с США[117].

4. СТРАТЕГИЯ ВСЕАРМЯНСКОЙ ИНТЕГРАЦИИ

Национальной безопасности Республики Армения присуща особенность, характерная лишь для единичных стран,–это наличие Диаспоры[118].

Армянская диаспора, как это отмечалось выше, вдвое превышает население Армении и рассеяна по всему свету. В целом, она характеризуется интегрированностью в общественное устройство стран проживания, что имеет важное значение для укрепления связей Армении и Диаспоры и связей с теми государствами, в которых находятся общины Диаспоры.

Диаспора играет особую роль в деле обеспечения национальной безопасности Армении, ибо служит своеобразным мостом между Арменией и международным сообществом. Общеармянские организации в значительной степени способствуют международной интеграции Армении и продвижению в ней демократии[119].

Стратегия общеармянской интеграции–проблема и задача безопасности армянского народа. Она направлена на предотвращение утраты Диаспорой своей национальной и этнокультурной идентичности и ее ассимиляции, с одной стороны, и на сотрудничество с государством в осуществлении контроля над эмиграцией из Армении–с другой. Среди разных способов противодействия этим двум угрозам в качестве приоритетного механизма рассматривается институт «двойного гражданства»[120]. Общеармянская интеграция имеет также большое экономическое и культурное значение, поскольку поощряет туризм, сохранение и распространение культурных ценностей[121].

Тесно сотрудничая с многочисленными общеармянскими организациями Диаспоры, Армения хорошо понимает, что представители Диаспоры являются гражданами других государств. В этом отношении общеармянская интеграция и упрочение взаимоотношений Армении и Диаспоры непосредственно связаны с международной интеграцией республики, и сколь эффективна эта интеграция, столь разнообразны и прочны отношения с Диаспорой[122].

5. СТРАТЕГИЯ ОБОРОННЫХ РЕФОРМ

Военная безопасность играет особую роль в обеспечении национальной безопасности Армении. Южный Кавказ остается одним из наиболее нестабильных регионов мира. Он переживает бурный переходный процесс, когда страны региона для решения проблем безопасности прибегают преимущественно к использованию военного фактора. Это приводит к милитаризации стран и к гонке вооружений.

В такой милитаризованной обстановке перед Арменией возникают многочисленные угрозы военного характера, нейтрализация которых в большей степени предполагает наличие мощных и боеспособных вооруженных сил. Поэтому высшим приоритетом в обеспечении стабильного развития Армении становится обеспечение военной безопасности. В отличие от других приоритетов, преимущественно вытекающих из естественных интересов сохранения идентичности и обеспечения устойчивого развития, для Армении наличие мощных Вооруженных сил является вынужденным, навязанным извне приоритетом.

Основа военной безопасности Армении–боеспособные Вооруженные силы, постоянно готовые к нейтрализации военных угроз и гарантированному решению задач обеспечения военной безопасности[123]. Развитие и

будущего для мира. Наша страна пытается помочь Армении расширить свои стратегические отношения с США и нашими европейскими союзниками» (см. *Дж. Буш.* Выступления Президента США 24 апреля 2004 года в День памяти Геноцида армян (http://www.armenian-genocide.org/Affirmation.286/current_category.4/affirmation_detail.html)).

[117] Недавно назначенный посол США в Армении Джон Эванс 17 февраля 2005 года посетил Калифорнийский университет, где представил «Доклад об Армении, 2005 год» и провел беседу со студентами и преподавателями (http://www.international.ucla.edu/article.asp?parentid=21127).

[118] См. II главу данной монографии «Геостратегические аспекты Армянской диаспоры и армянского национального государства».

[119] С целью дальнейшего развития и углубления сотрудничества Армения–Диаспора 27–28 мая 2002 г. состоялась II конференция Армения–Диаспора (http://www.armeniadiaspora.com/conference2002/index.html).

[120] «На наше поколение возложена еще одна обязанность–объединение усилий всех армян и обеспечение активного участия армян Диаспоры в социальной, политической и экономической жизни нашей республики. Конституционное разрешение двойного гражданства также окажет содействие решению этой проблемы. Армения должна быть святой Родиной всех армян, и ее победа должна быть их победой, ее будущее–их будущим. Мы должны осознать, что нация, которая знает цену единству силы, никогда не может проиграть» (см. «Инаугурационная речь Президента Роберта Кочаряна на Специальном заседании Национального собрания 21 мая 2000 г.»).

[121] В направлении сотрудничества Армения–Диаспора работают несколько комиссий: «Организационные и структурные вопросы Армении–Диаспоры», «Политические вопросы и пропаганда», «Бизнес и экономическое развитие», «Образование, наука, культура», «Информация и медиа» (http://www.armeniadiaspora.com/).

[122] См. *Рубен Шугарян.* Глобализация в контексте внешней политики Армении: Армения на пути в Европу (http://www.armeniaforeignministry.com/speeches/031022shugarian_yervan.html).

[123] См. *Charles Fairbanks, Frederick Starr, Richard Nelson, Kenneth Weisbrode.* Strategic Assessment of Central Eurasia. Chapter: «Armenia». «The Atlantic Council of the United States», Central Asia, Caucasus Institute, «SAIS». Washington, PP. 58–61; *Emil Danielyan.* «U.S. Officers Inspect Armenian Military». «PfP News» (http://www.armenialiberty.org/armeniareport/report/en/2005/05/EC4EFE09-47E5-412D-92C7-D39AF636 A6FD.ASP). «В пятницу, после завершения беспрецедентной инспекции Вооруженных сил Армении, подтверждающей факт растущего сотрудничества между

совершенствование Вооруженных сил для приведения их в соответствие с новыми вызовами – процесс непрерывный и динамичный.

Самым эффективным путем обеспечения военной безопасности и укрепления боеготовности Вооруженных сил являются международная интеграция и целевые реформы. Однако в условиях постоянных военных угроз применение данной стратегии требует большой осторожности. Как международная интеграция, так и реформы должны служить созданию альтернативных возможностей для развития соответствующих XXI веку ресурсов военной безопасности.

Гарантией обеспечения военной безопасности посредством международного сотрудничества являются как армяно-российский военный союз на двусторонней основе и в рамках ОДКБ, так и развитие сотрудничества с США и со структурами НАТО[124].

Армения осуществляет последовательные оборонные реформы в евроатлантическом направлении в рамках «Процесса планирования и оценки» и «Плана действий индивидуального партнерства». В этом аспекте данные реформы будут носить системный характер и обеспечат модернизацию стандартов оборонной системы Армении, особенно в области оборонного планирования и управления. Что касается интеграции, то она сбалансирована, направлена на создание подразделений, в частности, сил по поддержанию мира, которые были бы интероперабельны с силами как НАТО, так и ОДКБ[125].

Ереваном и Вашингтоном в оборонной сфере, состоялась встреча группы американских офицеров с Министром обороны Сержем Саркисяном. Пресс-служба Саркисяна сообщила, что делегация США под руководством полковника Майкла Андерсена удовлетворена «оборонной оценкой» подразделений Армянской армии и благодарит армянских военных за их искренность и транспарентность. Полковник Андерсен заметил, что «Армянская армия хотя и относительно молода, но уже может многим гордиться»».

[124] См. «Online-Interview with Mr. Mher Shahgeldyan, Chairman, Committee on Defence, National Security and Internal Affairs of the National Assembly. «Caucasus Journalists Network», 2005, 18 April (http://www.caucasusjournalists.net/ENG/interview.asp?idinterview=50); *Emil Danielyan*. U.S. Officers Inspect Armenian Military. «PfP News» (http://www.armenialiberty.org/armeniareport/report/en/2005/05/EC4EFE09-47E5-412D-92C7-D39AF636A6FD.ASP); «U.S. Department, Foreign Military Training and DoD Engagement Activities of Interest: Joint Report to Congress». «Report Home Page», The Bureau of Political-Military Affairs, 2003, May. «Foreign Policy Objectives–Newly Independent States (NIS) Region, Armenia» (http://www.fas.org/asmp/campaigns/training/FMTR%202003/III_%20Foreign%20Policy%20Objectives%20--%20Newly%20Independent%20States%20(NIS)%20Region.htm); «Национальная безопасность: ориентиры и приоритеты», интервью с доктором политических наук Г. С. Котанджяном. «Голос Армении», 11 февраля 2003 г.

[125] «Заместитель Министра обороны РА Артур Агабекян 12 апреля объявил, что Армения планирует всеобъемлющую программу военных реформ. Говоря о Ереванской конференции по вопросу расширения роли Армении в рамках НАТО, он отметил, что план реформ будет соответствовать стандартам НАТО и отражать долгосрочные цели

Стратегия реформ, осуществляемых в рамках ОДКБ, нацелена на создание единых и эффективных механизмов нейтрализации угроз безопасности. Что касается интеграции, то лучшими тому примерами являются армяно-российская объединенная группировка, объединенная система ПВО и т.д.

Активизация связей на евроатлантическом направлении обусловлена расширением НАТО и ЕС, включением Южного Кавказа в Программу европейского соседства и признанием интеграции в евроатлантические институты в качестве приоритетного направления внешней политики Армении. Развитие сотрудничества в рамках ОДКБ (параллельно со стратегическим союзом с Россией) объясняется существенными изменениями, происходящими внутри этой организации и процессами создания реальных механизмов коллективного обеспечения безопасности государств–членов организации. Возможности уравновешенного развития политики безопасности в этих двух направлениях обусловлены наличием глобальных угроз, возникших перед этими двумя системами безопасности, что отодвигает на второй план имеющиеся между ними противоречия, заставляя их все более и более расширять рамки сотрудничества.

Следуя принципу комплементаризма в политике безопасности, Армения стремится создать атмосферу, основанную на взаимных общих интересах, что приводит к смягчению имеющихся определенных разногласий. В частности, активно участвуя в процессах военно-политической интеграции в рамках ОДКБ, Армения осуществляет стратегическое партнерство с Россией, что отнюдь не мешает ей развивать конструктивное сотрудничество и с НАТО. Сегодня осуществляется ряд оборонных программ с США и одновременно в сфере безопасности проводятся консультации с Ираном.

развития современных вооруженных сил, способных противодействовать «новым вызовам». Агабекян также удостоверил, что Министерство обороны склонно к «более активному участию гражданских лиц в оборонных вопросах» и достижению большего «демократического контроля» в Вооруженных силах» (см. «Armenian Deputy Defense Minister comments on Military Reform Plans». «RFE/RL Newsline», «HR-NET Hellenic Resources Network», 2005, 14 April (http://www.hri.org/news/balkans/rferl/2005/05-04-14.rferl.html#10); «Armenian official, NATO envoy discuss IPAP», «Arminfo», 2005, 25 February (http://www.armeniandiaspora.com/archive/21152.html); *John C. K. Daly*. Azerbaijan Military Reform and Armenian National Security Strategy. «PfP News» (http://www.pimswiki.org/index.php?title=PfP_News).

6. ЗАКЛЮЧЕНИЕ: ПРИОРИТЕТЫ СТРАТЕГИИ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ АРМЕНИИ

Руководствуясь интересами стабильного развития Армении, внешней и внутренней стратегией реформ и интеграции, можно обобщить те задачи и проблемы, которые в качестве приоритетов находятся сегодня в повестке обеспечения национальной безопасности. Вот эти приоритеты[126]:

в области внешней безопасности–формировать дружественные и сбалансированные отношения со всеми странами и международными организациями, осуществлять многостороннюю комплементарную политику с союзниками и партнерами; реализовывать оперативные и долгосрочные программы по предупреждению и нейтрализации внешних угроз с исключением возможности повторения геноцида в отношении армянского народа; продвигать интересы национальной безопасности Армении во всех международных организациях (в особенности–в рамках Минской группы ОБСЕ), занимающихся урегулированием Карабахского конфликта; упрочить военные возможности Армении, модернизировать Вооруженные силы; сотрудничать с отдельными государствами и международными организациями в борьбе с международным терроризмом и распространением оружия массового уничтожения; развивать многостороннее сотрудничество со структурами международной безопасности–ОДКБ и НАТО, а также с Россией и США–в двустороннем формате; преодолеть эмиграцию и упрочить сотрудничество Армении и Диаспоры через двойное гражданство и репатриацию; активно участвовать в программах региональной экономической интеграции; создать эффективную систему по противодействию дезинформации со стороны враждебных государств, направленной против жизненных и стратегических интересов Армении и на формирование негативного международного общественного мнения о ней;

[126] В этом исследовании для автора методологической основой послужили следующие армянские, американские, российские документы и материалы: «Конституция Республики Армения» (принятая 5 июля 1995 г.); «Интервью с Секретарем Совета национальной безопасности при Президенте Республики Армения, Министром обороны РА Сержем Саркисяном «Армения: вызовы и ответы»». «Еркир», 5 февраля 2005 г. (http://www.yerkir.am/eng/index.php?sub=interview&id=11); «A National Security Strategy for A New Century», 1997, May. «An Electronic Journal of the U.S. Department of State», 2002, December, Vol. 7, № 4 (http://clinton3.nara.gov/WH/EOP/NSC/Strategy/); «The National Security Strategy of the United States of America». 2002, 17 September (http://www.whitehouse.gov/nsc/nssall.html); *Chairman of the Joint Chiefs of Staff General Richard B. Myers*. The U.S. Military: A Global View of Peace and Security in the 21st Century. «An Electronic Journal of the U.S. Department of State», 2002, December, Vol. 7, № 4 (http://usinfo.state.gov/journals/itps/1202/ijpe/pj7-4myers-2.htm); «Концепция Национальной Безопасности Российской Федерации», утверждена Указом Президента Российской Федерации от 17 декабря 1997 г. № 1300, в редакции Указа Президента Российской Федерации от 10 января 2000 г. № 24 (http://www.iss.niiit.ru/doktrins/doktr01.htm); *Dr. Blau*. National Security Decision Making. Class 1, «From anecdotes to models». SNSEE 6940, NDU, Washington, DC, 2004; «New Challenges and New Tools for Defense Decisionmaking». «RAND», 2003.

в области внутренней безопасности–обеспечить физическую безопасность населения, территориальную целостность и суверенитет Республики Армения; преодолеть бедность, осуществлять стабильную экономическую политику социальной направленности; поощрять малый и средний бизнес, проводить активную инвестиционную политику в энергетике и в сфере наукоемкой промышленности; осуществлять научно-техническое обеспечение Республики Армения, обеспечить развитие передовых технологий; коренным образом улучшить экологическую обстановку в стране; разработать механизмы информационной безопасности; вести последовательную борьбу против подрывной деятельности иностранной шпионской агентуры и специальных служб.

В области внутренней безопасности важное значение придается демократизации и стабильному развитию: обеспечению личной безопасности человека и гражданина, их конституционных прав и свобод; совершенствованию механизмов государственного управления и местного самоуправления и законодательства; последовательной борьбе с коррупцией; укреплению правовой системы; обеспечению сбалансированных межэтнических отношений; обеспечению социально-политической стабильности общества; обеспечению равенства перед законом всех граждан Республики Армения, в том числе должностных лиц, государственных органов, политических партий, общественных и религиозных организаций.

ՀԵՂԻՆԱԿ՝
քաղաքական գիտությունների դոկտոր (ՌԴ),
հակաահաբեկչության գծով գիտական փորձագետ (ԱՄՆ)
գեներալ-մայոր Հ. Ս. ՔՈԹԱՆՋՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԵԱԿՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ՎԱՇԻՆԳՏՈՆ – ԵՐԵՎԱՆ
2004 – 2005

ԵՐԱԽՏԱՊԱՐՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ

Հեղինակն իր պարտքն է համարում գործընկերներին երախտիքի խոսք ասել այս աշխատության նախագծային տարբերակներում կատարված դիտողությունների և առաջարկությունների համար: Հեղինակը 2003–2004 թթ. ԱՄՆ-ի Պաշտպանության ազգային համալսարանում (ՊԱՀ) իր կատարած գիտական աշխատանքներին ժամանակ հատկացնելու և մենեջմենթներ անելու համար շնորհակալություն է հայտնում ՊԱՀ-ի իր ակադեմիական խորհրդատուներին՝ Ազգային անվտանգության դպրոցի (ԱԱԴ) գիտության գծով դեկան դոկտոր Ջեկ Քանգասին, Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի (ԱՌՀԻ) ավագ գիտաշխատողներ գնդապետ Էնն Մոյսանին և դոկտոր Յուջին Ռումերին, ԱԱԴ-ի տնօրեն դոկտոր Ջոզեֆ Դը Սատերին և ԱՌՀԻ-ի գիտական ռեֆերենտ տիկին Լիլ Քիֆիին:

Հեղինակը բարձր է գնահատում այն խորագետ մասնագիտական խորհրդատվությունները, որոնք բարեհաճությամբ տրամադրել է ԱՄՆ-ի արտաքին ծառայության նախկին աշխատող պրն. Էդվարդ Ալեքսանդրը, որն իր դիվանագիտական գործունեության ընթացքում մասնագիտացել է խորհրդային ու արևելաեվրոպական գործերում և որպես խորհրդական ծառայել է ԱՄՆ-ի Պետդեպարտամենտում, Հայաստանի արտաքին գործերի նախարարությունում և Վաշինգտոնում Հայաստանի դեսպանատանը:

ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

Հարավային Կովկասը դառնում է ամենադինամիկ տարածաշրջաններից մեկը, որն արտացոլում է Կենտրոնական Եվրասիայի հսկայական աշխարհառազմավարական տարածքում ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության հեռամետ շահերը: Սույն աշխատությամբ հեղինակը փորձում է հայ և ամերիկյան գիտնականներին առաջարկել որոշ գաղափարներ Հարավային Կովկասում անվտանգության համապարփակ ճարտարապետության ձևավորման, ինչպես նաև այդ տարածաշրջանում տնտեսական աճի ու ժողովրդավարության խթանման ասպարեզում Հայաստանի գործոնի հաշվառման կարևորության վերաբերյալ: Այս ուսումնասիրության մեջ հեղինակը նպատակ ունի արծարծել հայկական գործոնի որոշ առումներ՝ ԱՄՆ-ի քաղաքական կյանքին Հայոց սփյուռքի ակտիվ մասնակցության, ինչպես նաև Հարավային Կովկասում տարածաշրջանային անվտանգության ու ժողովրդավարության ամրապնդման գործում Հայաստանի Հանրապետության կարևորության հարցերը:

Այս աշխատությունը Հարավային Կովկասի տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության համատեքստում Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության հետազոտման և կիրառական մշակման

համադրման փորձ է: Որպես կիրառական արգասիք վերջերս մշակվել է կից ներկայացվող ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության ճեպագիրը[1]: Հայաստանի անվտանգության ռազմավարության մշակման գաղափարները և Հարավային Կովկասում անվտանգության ճարտարապետության վերակառուցումը կարող են հետաքրքրել պաշտպանական ու քաղաքական ծրագրերի մշակմամբ զբաղվող շրջաններին:

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տասնչորս տարի է անցել Հայաստանի Հանրապետության անկախության վերականգնման օրից: Արդյունքների ամբողջական գնահատման և հետրավորությունների, ակնկալիքների ու ձեռքբերումների համեմատության համար դա այնքան էլ երկար ժամանակահատված չէ: Նման հակիրճ ներկայացման մեջ գործնականում անհնար է արտացոլել Հարավային Կովկասում և հատկապես Հայաստանում տեղի ունեցող բարդ անցումային գործընթացների բոլոր կողմերը: Այնուամենայնիվ, մենք կփորձենք ամփոփ ձևով դիտարկել իրավիճակի դինամիկան, գնահատել հայ իրականությանը բնորոշ որոշ գծեր և առանձին պատմական զուգահեռներ տանել Կովկասյան տարածաշրջանի հարևան պետությունների հետ: Մենք կփորձենք տարածաշրջանի գլխավոր դերակատարների արտաքին քաղաքականության շրջանակներում գնահատել այս նորաթուխ ժողովրդավարությունների զարգացման դինամիկան: Այս աշխատության նպատակը Հայաստանում և Հարավային Կովկասում անվտանգության ճարտարապետության վերակառուցմանը վերաբերող գաղափարների քննարկումն է: Հուսով ենք, որ մեր կողմից արված որոշ առաջարկություններ կարող են արժանանալ այն մասնագետների ուշադրությանը, որոնք զբաղվում են այս տարածաշրջանին առնչվող ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության մշակմամբ:

Խորհրդային Միության փլուզումից հետո Հայաստանը հայտնվեց ավելի անբարենպաստ իրավիճակում, քան մյուս հետխորհրդային նորանկախ պետությունները: Կենտրոնացված էկոնոմիկայի քայքայման հետևանքով առաջացած պրոբլեմները, որոնք բնորոշ են բոլոր նորանկախ պետություններին, 1988 թ. երկրաշարժի, Ադրբեջանի հետ հակամարտության, ինչպես նաև տնտեսական շրջափակման ու փախստականների մեծ ներհոսքի պատճառով Հայաստանում ստացան ավելի սուր բնույթ: Նման պարագայում երկրի

[1] Տես *Հավելված*. «Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության ճեպագիր»», որը հիմք է ծառայել ՀՀ պաշտպանության նախարարի «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության ուղենիշները» զեկուցման մշակման համար:

ղեկավարությունը նախաձեռնեց տնտեսության մասնավորեցում և արմատական վերակառուցում:

ԱՄՆ-ը մինչև 1991 թ. վերջը պաշտոնապես ճանաչեց բոլոր նախկին խորհրդային հանրապետությունների, ներառյալ՝ Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի անկախությունը: Տարածված է այն կարծիքը, թե ԱՄՆ-ը չափազանց մեծ դեր է խաղացել առևտրի, անվտանգության և այլ հարաբերությունների ոլորտներում Ռուսաստանից այդ երկրների ունեցած կախվածությանը մասամբ վերջ դնելու և Արևմուտքի հետ նրանց կապերը զարգացնելու գործում, այդ թվում՝ նպաստել նրանց անդամակցությանը Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությանը (ԵԱՀԿ), Եվրամիության «Եվրահարևանություն» և ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրերին: ԱՄՆ-ը Հայաստանի հետ սերտ կապեր է հաստատել որպես նախկին սոցիալիստական աշխարհում ժողովրդավարացման խթանման ընդհանուր քաղաքականություն, ինչպես նաև՝ որպես արձագանք ամերիկահայության արտահայտած մտահոգությանը: Նախքան Վրաստանի Նախագահի պաշտոնից իր վերջին հրաժարականը՝ Էդուարդ Շևարդնաձեն ևս սերտ կապեր ուներ ԱՄՆ-ի հետ: 2005 թ. մայիսին ԱՄՆ-ի Նախագահ Ջորջ Բուշի այցելությունը Թբիլիսի և Վրաստանի ներկայիս Նախագահ Միխայիլ Սահակաշվիլու հետ նրա բանակցությունները ԱՄՆ-ի ու Վրաստանի համագործակցության սերտացման վկայությունն են: Ադրբեջանի նավթարդյունաբերության ոլորտում մասնավոր ներդրումների աճման, Բաքու–Ջեյհան խողովակաշարի կառուցման աշխատանքների մոտալուտ ավարտի հետևանքով ԱՄՆ-ն այնտեղ ևս ունեցավ կարևոր շահեր և ընդլայնեց իր մասնակցությունը Կասպյան տարածաշրջանում անվտանգության ապահովման գործին: Որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամ՝ ԱՄՆ-ը նաև ակտիվ ջանքեր է գործադրում տարածաշրջանում էթնիկական հակամարտությունների խաղաղ լուծման ուղղությամբ:

Ընդառաջելով Կոնգրեսում և այլուր հնչող կոչերին՝ ԱՄՆ-ի Կառավարությունը մշակեց նախկին Խորհրդային Միության կազմում եղած եվրասիական պետություններին օժանդակության քաղաքականություն: 1992 թ. սկզբին Նախագահ Ջորջ Բուշն առաջարկեց «Ազատությանն աջակցության ակտ», որը նույն թվականին ստացավ օրենքի ուժ, և, համաձայն «Օրենքների ժողովածուի» 102–511-րդ կետերի, եվրասիական պետություններին դրամական միջոցներ հատկացրեց մարդասիրական կարիքների, ժողովրդավարացման, շուկայական տնտեսության ստեղծման, առևտրի, ներդրումների համար և այլ նպատակներով: «Ազատությանն աջակցության ակտի» 907-րդ հոդվածը ԱՄՆ-ի Կառավարությանը կտրականապես արգելում էր օժանդակել Ադրբեջանի Կառավարությանը, քանի դեռ վերջինս չի դադարեցրել Հայաստանի շրջափակումը և նրա նկատմամբ ուժի այլ կիրառումներ: Տարիների

ընթացքում Ադրբեջանի վերաբերյալ այդ դրույթի կիրարկումը փոփոխվեց, և թույլ տրվեց անհրաժեշտ աջակցություն ցուցաբերել մարդասիրական օգնության և ժողովրդավարացման համար, զենքերի չտարածմանը նպատակաուղղված սահմանային անվտանգության ապահովման ու մաքսային օժանդակության և այլ նպատակներով: Պաշտպանական համագործակցության ոլորտում Ադրբեջանին օժանդակության վրա դրված օրենսդրական արգելքը հավասարակշռելու համար Ամերիկայի Կառավարությունը վարչական արգելք դրեց նաև Հայաստանի հետ պաշտպանական համագործակցության վրա:

2001 թ. դեկտեմբերին Կոնգրեսը հաստատեց 2002 թ. ֆինանսական տարվա արտաքին հատկացումները («Օրենքների ժողովածու», 107–115-րդ կետեր)՝ Նախագահին իրավունք տալով սառեցնելու 907-րդ հոդվածի կիրառումը, ինչը որոշակի պայմաններում ամեն տարի ենթակա է վերահաստատման: Նախագահ Բուշն այդ առաջարկությունները հաստատեց 2002 թ. հունվարի 25-ին և 2003 թ. հունվարի 17-ին:

Բուշի ներկայիս վարչակազմը, ելնելով ազգային անվտանգության նկատառումներից և հաշվի առնելով Ադրբեջանի նպաստը միջազգային ահաբեկչության դեմ պայքարին, Կոնգրեսին առաջարկեց վերացնել Ադրբեջանին օժանդակության վրա դրված արգելքը:

II. ՀԱՅՈՑ ՍՓՅՈՒՌՔԻ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՌՈՒՄՆԵՐԸ

Ցավոք, հայ ազգի նորագույն քաղաքական պատմության մեջ առավել նշանակային իրադարձությունը առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ նրա պատմական տարածքում տեղի ունեցած աղետալի աշխարհաքաղաքական փոփոխությունն էր: Այդ ժամանակահատվածում Օսմանյան Թուրքիայի վարչակարգը, շարունակելով Փոքր Ասիայում բնիկ հայերի էթնիկական զտումների անմարդկային քաղաքականությունը, որոշեց, որ բոնի կերպով տեղահանված հայերը չպետք է վերադառնան իրենց հայրենիք: Փրկվածները 1920-ական թվականներին ի վերջո հասկացան, որ բռնագաղթեցումները հայ ժողովրդին իր պատմական հայրենիքից ընդմիշտ արտաքսելու միայն նախապատրաստական էին[2]: Դրանք էին ռազմաքաղաքական իրադրության այն պատմա-

[2] Տես «Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանի ելույթը ազգերի համակենտրոնացման ճամբարների ազատագրման 60-ամյակին նվիրված 28-րդ հատուկ նիստում»: Նյու Յորք, 2005 թ. հունվարի 24, «Սփյուռքի լրատվական ծառայություն» (http://www.armeniaforeignministry.com/speeches/050124_vo_un.html):

կան առանձնահատկությունները, որոնք այսօր աշխարհով մեկ տարածված Հայոց սփյուռքի համար ստեղծեցին նոր աշխարհաքաղաքական ուրվանկար:

Հայոց սփյուռքի կազմակերպությունները տասնամյակներ շարունակ գործել են այն հույսով, որ Թուրքիայի ժամանակակից ժողովրդավարական հանրապետությունը հեռու կմնա Օսմանյան Կայսրության աղետալի օրինակից և կհետևի Գերմանիայի Դաշնային Հանրապետության դրվատելի փորձին, որը ճանաչական Գերմանիային դատապարտեց հրեաների Ողջակիզումն իրագործելու համար:

Հայաստանի Հանրապետությունում ապրող հայերը կազմում են աշխարհի ամբողջ հայության ընդամենը մեկ երրորդը[3]: Անկախ ազգային պետության ստեղծումից հետո Հայաստանի և Սփյուռքի միջև համագործակցությունը, որը նախկինում՝ խորհրդային վարչակարգի օրոք, թե՛ գաղափարապես, թե՛ քաղաքականապես սահմանափակված էր, դարձավ աշխարհի և նորանկախ հայկական պետության միջև քաղաքական, տնտեսական, մշակութային ու տեղեկատվական համագործակցության կարևոր աշխարհառազմավարական գործոններից մեկը:

Որպես միջազգային իրավունքի դաշտում գործող անկախ պետություն՝ Հայաստանի Հանրապետությունը կանգնեց նոր մարտահրավերների առաջ, որոնք անվերապահորեն և անմիջապես չընկալվեցին Սփյուռքի կողմից, քանի որ այսպիսի պատմական զարգացումը բավական անսպասելի էր: Հայ ազգի այս երկու հատվածներին միայն տասներեք տարի առաջ անսահմանափակ հնարավորություն տրվեց ինքնուրույնաբար որոշելու, թե ինչ փոխհարաբերություններ և որ ոլորտներում կլինեն իրենց համար առավել շահավետ: Թեև երկու հատվածներն էլ համաձայնեցված ջանքեր են գործադրում միմյանց ընդառաջ գալու համար, այդուհանդերձ, դեռ շատ անելիք կա: Քաղաքական ու սոցիալական ոլորտներում փոխհամաձայնեցված կերպով շարժվելու և գործելու ցանկությանը զուգընթաց ի հայտ են եկել տարբեր տեսակի բարոյական, հոգեբանական, պատմական ու սոցիալական հարցեր և ձգտումներ, որոնք նոր պայմաններում ձեռք են բերել կարևոր նշանակություն:

ԱՄՆ-ի հայկական համայնքը Սփյուռքի սոցիալապես առավել զարգացած տարրերից է և բաղկացած է մոտավորապես մեկ միլիոն ծագումով հայ ամերիկացիներից, որոնք պատկանում են Հայ առաքելական, Հայ կաթոլիկ և Հայ բողոքական եկեղեցիներին, ինչպես նաև ազգային այլ հասարակական կազմակերպությունների: Ընդհանուր առմամբ, ամբողջ աշխարհում համայնքային

[3] Տես «Армяне в мире». «Голос Армении», 22 августа 1996 г., № 92 (http://www.iatp.am/economics/migr/hayga-r97.html):

մակարդակում էթնիկական փոքրամասնությունների լոբբիզմը նրանց ինքնահաստատման գործուն մեխանիզմներից է:

Հայության շահերի պաշտպանության փորձը ցույց է տվել, որ խնդիրը դուրս է գալիս նեղ համայնքային շրջանակներից, որովհետև նպատակը շատ ավելի լայն է. իրականում այն ունի համազգային մասշտաբ: Միևնույն ժամանակ համաշխարհային հայության առանձին հատվածների միջև առկա փոխհարաբերություններում ձևավորվում է այն ըմբռնումը, որ ցանկացած նախաձեռնություն, անկախ այն բանից, թե որքան կարևոր է և ինչ պատասխանատվությամբ է ստանձնած, չպետք է վտանգի ԱՄՆ-ի, ինչպես նաև նորանկախ Հայաստանի Հանրապետության և այդտեղ բնակվող հայերի շահերը: Ընդհանուր առմամբ, ծրագրերը նպաստում են ամերիկահայության ավելի լայն մասնակցությանը ամերիկյան ժողովրդավարական գործընթացին և Հայաստանի քաղաքացիական ու տնտեսական զարգացմանը:

Ներկայումս Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունները Հայոց սփյուռքի ուշադրության կենտրոնում են. առանձին հայկական հասարակական կազմակերպություններ անընդհատ աշխատում են ԱՄՆ-ի Կոնգրեսի և Վաթչակազմի հետ: Այդ կազմակերպությունների բազմաթիվ նախաձեռնությունների շարքում կարող ենք նշել աջակցությունը հայկական հարցերի գծով կոնգրեսականների խմբի ստեղծմանը (2004 թ. ընդհանուր թվով ԱՄՆ-ի Կոնգրեսի 128 անդամ)[4]:

Հայաստանի կողմից խորհրդային միակուսակցական համակարգի սահմանափակումների թոթափման անցումային շրջանում Սփյուռքը դարձավ ազատականության և ժողովրդավարության արևմտյան մշակույթի ակտիվ տարածմանը նպաստող գործոն: Անկախության առաջին տարիներին ավանդական հայկական քաղաքական կուսակցությունները (Հայ Հեղափոխական Դաշնակցություն, Ռամկավար ազատական կուսակցություն և Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցություն) վերադարձան ու վերակազմավորվեցին Հայաստանում: Նրանք նոր շունչ հաղորդեցին ազգային ոգուն և փորձեցին ներմուծել ազատականություն ու ժողովրդավարական արժեքներ, ինչն այդ ժամանակ զգալի չափով հիմք տվեց և առիթ դարձավ քաղաքական ու քաղաքացիական միությունների ազատ «մրցակցության» համար: Սա նշանակալի երևույթ է, որը բացատրվում է նորահաղթ անկախությամբ և Հայաստանի Հանրապետությունում ժողովրդավարական սկզբունքների ու հիմնարար ազատությունների հետևողական առաջմղմամբ:

Հայոց սփյուռքը փաստացի գոյություն ունի որպես համաշխարհային էթնամշակութային-տեղեկատվական, գործարարական ցանց՝ բաղկացած

[4] Տես http://www.panarmenian.net/news/rus/?task=society&id=9782&date=2004-02-16:

մոտ տասը միլիոն քաղաքականապես ակտիվ, բարգավաճ, կիրթ և Ամերիկայի ու Եվրոպայի տնտեսական, ֆինանսական և քաղաքական կյանքին սերտորեն ինտեգրված մարդկանցից: Նա արդյունավետ օղակ է դարձել հայ-ամերիկյան, հայ-ֆրանսիական, հայ-ռուսական, հայ-արաբական, հայ-իրանական և այլ կապերի զարգացման, ինչպես նաև այս համեմատաբար փոքր, բայց դինամիկ ու լավ կազմակերպված աշխարհասփյուռ համայնքների ցանցի ընդհանուր աշխարհաքաղաքական շրջանակներում (Հարավային Կովկասի տարածաշրջանում և նրա սահմաններից դուրս) հօգուտ փոխադարձ ազգային ռազմավարական շահերի իրականացվող երկկողմ համագործակցության սերտացման գործում:

III. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԶԱՐԳԱՑՈՂ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

1. ԱՌԱՋԸՆԹԱՑ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1991 թ. մայիսի 20-ին կայացած ընտրություններում, որոնք Խորհրդային Միության պատմության մեջ մրցակցային հիմքի վրա անցկացված առաջին ժողովրդավարական ընտրություններն էին, Կոմունիստական կուսակցությունը պարտություն կրեց: Դա խթանի դեր կատարեց Հայաստանում բազմակուսակցական համակարգի հաստատման համար: Իշխանության եկավ Հայոց համազգային շարժումը (ՀՀՇ):

Նախորդ տարի՝ 1990 թ. օգոստոսի 23-ին, Գերագույն խորհրդի կողմից ընդունվել էր Հայաստանի անկախության հռչակագիրը, որով արդեն իսկ սկիզբ էր դրվել ժողովրդավարական բարեփոխումներին: Նորընտիր խորհրդարանը (ձևավորված Հայաստանի անկախության հռչակումից առաջ) անմիջապես սկսեց օրենսդրական հիմք ստեղծել հասարակության ժողովրդավարացման համար: «Սեփականության մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-185-Ն) և «Սեփականաշնորհման ֆոնդերի մասին» Կառավարության որոշումը (ընդունված, համապատասխանաբար, 1990 թ. հոկտեմբերի 31-ին և 1991 թ. դեկտեմբերի 13-ին) օրինական հիմք ապահովեցին պետական մենաշնորհից արտադրության միջոցների նկատմամբ տարբեր ձևերի սեփականության անցնելու համար: Բազմակարծությանն ու բազմակուսակցական համակարգին անցմանը սկիզբ դրվեց 1991 թ. փետրվարի 26-ին ընդունված «Հասարակական քաղաքական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով (Ն-0266-1): Խոսքի և տեղեկատվության ազատությունն ապահովվեց 1991 թ. հոկտեմբերի 8-ին ընդունված «Մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին» ՀՀ օրենքով (Ն-0420-1): Կրոնի ազատությունը պաշտպանելու համար 1991 թ. հունիսի 17-ին ընդունվեց «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների

մասին» ՀՀ օրենքը (Ն-0333-1)։ Այս և այլ օրենքներով հաստատված ժողովրդավարական իրավական նորմերը իրենց արտացոլումն ու զարգացումն ստացան 1995 թ. հուլիսի 5-ին ընդունված Սահմանադրության մեջ։ 1996 թ. մայիսի 14-ին Ազգային ժողովն ընդունեց «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-62)՝ դրանով իսկ օրինական հիմք ստեղծելով տարածքային կառավարման մարմինների ընտրությունների համար, որոնք տեղի ունեցան նույն տարվա նոյեմբերի 10-ին։ 1996 թ. նոյեմբերի 1-ին ուժի մեջ մտավ «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-82), որը մեծ ներդրում էր՝ նպատակաուղղված քաղաքացիական հասարակության կառուցմանը։

Ներկայումս Սահմանադրության հիմքում դրված ժողովրդավարական նորմերից և անցած տասնչորս տարիների ընթացքում ընդունված օրենքներից շատերը հետագա զարգացման կարիք ունեն։ Դա է հաստատում նաև Եվրախորհրդի անդամների կազմում Հայաստանի ընդգրկման մասին որոշումը, որն ընդունվել է Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) կողմից։ Այդ որոշումը Հայաստանին կոչ է անում ստանձնելու որոշակի պարտավորություններ, այդ թվում՝ միանալու Եվրոպական համաձայնագրերին, և հավատարիմ լինելու եվրոպական ժողովրդավարական չափորոշիչներին համապատասխանեցված ազգային օրենսդրությանը*։ Ներկայումս մշակվում են օրենքների նախագծեր, որոնք մղված են համահունչ լինելու եվրոպական ժողովրդավարությունների օրենքներին։ Գործընթացն արագացնելու համար ԵԽ մասնագետները տալիս են փորձագիտական կարծիքներ ու խորհուրդներ։ Սահմանադրական բարեփոխումների աշխատանքները, որոնք արդեն մի քանի տարի է, ինչ ընթացքի մեջ էին, մոտեցել են իրենց ավարտին, և սահմանադրական բարեփոխումների փաթեթը պատրաստ է Ազգային ժողովում քննարկմանը**։ Այդ ամենը, իր հերթին, մարդու իրավունքների պաշտպանության գլխավոր երաշխիքների թվում է։

1990 թ. օգոստոսի 23-ի Անկախության հռչակագրով Հայաստանը փաստորեն որդեգրեց նոր արժեհամակարգ, որն է՛լ ավելի մեծ է դարձնում ժողովրդավարության և մարդու իրավունքների սկզբունքների նկատմամբ նրա ստանձնած պարտավորությունները։ Անկախությունից հետո Հայաստանի

* Հայաստանի Հանրապետությունը 2001 թ. հունվարի 25-ին դարձավ Եվրոպայի խորհրդի (ԵԽ) անդամ։ Որպես քաղաքական մարմին՝ ԵԽ-ն նպաստում է Եվրոպայում քաղաքական կայունությանը, տնտեսական ու սոցիալական առաջընթացին, ժողովրդավարությանն ու մարդու իրավունքների պաշտպանությանը։ Միօրինակացված չափորոշիչներն ու մոտեցումները նպատակաուղղված են լուծելու նշված խնդիրները և այդ բնագավառում սպասվելու առաջընթաց։

** Սահմանադրական բարեփոխումները հանրաքվեով ընդունվել են 2005 թ. նոյեմբերի 27-ին։

Հանրապետությունը՝ որպես ինքնիշխան կազմավորում, ճանաչեց ու միացավ մարդու իրավունքներին վերաբերող հիմնական համաձայնագրերին և պայմանագրերին, ինչպես նաև ձեռնամուխ եղավ այս ոլորտում գործող ներքին օրենսդրության բարեփոխումներին։ Հետագայում մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները ամրագրվեցին Հայաստանի Հանրապետության Սահմանադրության երկրորդ գլխում։

Չնայած ընտրական օրենսդրության նշված բարենորոգմանը՝ 1995 թ., 1996 թ., 1998 թ. և, մասամբ, 2003 թ. կայացած նախագահական ու խորհրդարանական ընտրությունների ժամանակ և՛ տեղացի, և՛ միջազգային դիտորդների կողմից արձանագրվեցին օրենքի տարբեր խախտումներ։ Մարդու իրավունքները պաշտպանող շատ խմբեր ձերբակալությունները դատապարտեցին որպես քաղաքականապես շարժառիթավորված, թեև ՀՀ Կառավարությունը պնդեց, որ ձերբակալվածները մասնակցել են զանգվածային անկարգությունների։ ԵԱՀԿ և ԵԽԽՎ դիտորդները 2003 թ. ընտրարշավը համարեցին թերի և դրա հետ մեկտեղ հանգեցին այն եզրակացության, որ քվեատուփերի «համատարած լցոնման», ձայների հաշվման ժամանակ թափանցիկության պակասի և այլ «լուրջ» խախտումների պատճառով ընտրությունները չէին համապատասխանում ազատ ու արդար մրցակցության միջազգային չափանիշներին[5]։

Կարևոր է համեմատել Հայաստանում մարդու իրավունքների կարգավիճակը Հարավային Կովկասի հարևան երկրների հետ։ Մենք այս հարցի վերաբերյալ իրավիճակի համապարփակ գնահատման վստահելի աղբյուրներից ենք համարում ամերիկյան հանրահայտ «Ֆրիդոմ Հաուզ» *(Ազատության տուն)* հասարակական կազմակերպության թողարկած «Քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների ամենամյա զեկույցը»։ 1970-ականների սկզբից ի վեր այդ կազմակերպությունը աշխարհում մշտագնում է ազատությունը և պաշտպանում ժողովրդավարությունը*։ Հիմնվելով փորձագետների անկախ խմբի գնահատումների վրա՝ «Ֆրիդոմ Հաուզը» 2005 թ. Հայաստանն ու Վրաստանը ճանաչել է որպես մասամբ ազատ պետություններ, իսկ Ադրբեջանը՝ որպես ոչ ազատ պետություն[6]։

[5] Տես «Congressional Research Service (CRS) Report RS20812, Armenia Update» (http://www.globalsecurity.org/military/library/report/crs/43390.pdf)։

* Խաղաղության և ժողովրդավարության դեմ ուղղված սպառնալիքներով մտահոգված Էլեոնոր Ռուզվելտի և այլ ամերիկացիների կողմից ավելի քան 60 տարի առաջ ստեղծված «Ֆրիդոմ Հաուզն» այսօր աշխարհի այն երիտասարդ ժողովրդավարությունների պաշտպանության առաջատարն է, որոնք հաղթահարում են դիկտատուրայի և քաղաքական բռնաճնշումների ժառանգությունը։

[6] Տես «Freedom in the World 2005. Table of Independent Countries Comparative Measures of Freedom» (http://www.mediainfocenter.org/journalism/freedom_of_the_press/independent.asp)։

2. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱՑՈՒՄ. ՉԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն իրենց իշխանությունն իրականացնում են տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով: Այս մարմինների ձևավորումը, այն է՝ դրանց իրավասությունների, գործառույթների ու պարտականությունների հստակ սահմանազատումը, հիմք է ստեղծում զարգացող և բարգավաճող երկիր կառուցելու համար: Պետական իշխանության համակարգը Հայաստանի օրենսդրության, պետական կառավարման մարմինների ու հանրային ծառայության ոլորտի այն բաղկացուցիչ մասն է, որի միջոցով են իրականացվում պետության գլխավոր գործառույթները և լուծվում երկրի առջև ծառացող խնդիրները: Անկախ Հայաստանում պետական կառավարման համակարգը ներառում է գործադիր մարմինները. Հայաստանի Հանրապետության Կառավարությունը, որը բաղկացած է Վարչապետից և նախարարների կաբինետից, իրականացնում է գործադիր իշխանությունը: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համաձայն՝ ՀՀ Նախագահը, լինելով գործադիր իշխանության ղեկավարը, հանրապետության անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավորն է:

Մեր կարծիքով՝ Հայաստանում կառավարման համակարգի ներկայիս վիճակը շատ առումներով չի համապատասխանում այսօրվա պահանջներին և բարեփոխումների հրատապ կարիք ունի: Պետական կառավարման անարդյունավետությունը թույլ հաստատութենացված հետամբողջատիրական իշխանության հայտնի «հիվանդությունների» արդյունք է: Դրանցից են, մասնավորապես, գործունեության ուղիներ նախանշող պաշտոնական ռազմավարություն չլինելը, նաև տեղեկույթի ընդհանուր մատչելիության ապահովման և իշխանության օղակների միջև նրա փոխանակման համար անհրաժեշտ մեխանիզմների բացակայությունը:

Դեռ ավելին. իշխանության տարբեր մակարդակներում գործառույթների կրկնողականությունը և հրահանգների անհասկանալիությունը, հստակորեն տարբերակված նպատակներ և գերակայություններ չլինելը, անհիմն սահմանավորումն ու վարչարարությունը էապես նվազեցնում են պետական կառավարման արդյունավետությունը: Հաճախ հանրությունը չի գիտակցում պետական կառավարման տարբեր մակարդակներում ընդունված որոշումների նպատակն ու անհրաժեշտությունը: Դա իշխանությունների գործողությունների թափանցիկության պակասի և հասարակությանը նախօրոք իրենց ծրագրած քայլերի մասին չտեղեկացնելու հետևանք է: Ներկայումս արդյունավետ պետական կառավարման համակարգ ստեղծելու ռազմավարություն

գործնականում գոյություն չունի: Այդ ռազմավարությունը պետք է հիմք ստեղծի կառուցվածքային ու գործառութային բարեփոխումների և հասարակական ծառայությունների բարելավման համար: Այս համատեքստում շատ կարևոր է հաջողության հասնել սահմանադրական բարեփոխություններում՝ ստեղծելով Հայաստանի իրավաքաղաքական համակարգի համընդգրկուն ժողովրդավարացման հիմք: Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովը, անկողմնակալ կերպով համագործակցելով Հայաստանի խորհրդարանի և Սահմանադրական դատարանի հետ, Հայաստան–Եվրախորհուրդ հարաբերություններում հանդես է գալիս որպես վերոհիշյալ առանցքային բարեփոխումներին համապատասխանեցված ազգային օրենսդրական փաստաթղթերի մասնագիտական մշակման երաշխավոր[7]:

Շուկայական տնտեսության զարգացման, քաղաքական ու սոցիալական նոր ենթակառույցների հաստատման և Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայում, նախկին ԽՍՀՄ-ում (ներառյալ նաև Հայաստանը) նոր սոցիալական արժեքների ձևավորման գործընթացները նպաստավոր միջավայր ստեղծեցին կոռուպցիայի զարգացման համար: Ելնելով կոռուպցիայի լայն տարածվածությունից՝ պետք է ասենք, որ այն համաշխարհային պրակտիկայում գոյություն ունի անձնական, հաստատութենական և համակարգային մակարդակներում:

Ժխտախտաբար, կոռուպցիան մեր օրերում տարածում է ստացել կյանքի բոլոր ոլորտներում և բոլոր ձևերում, այսինքն՝ հղի է համակարգային դառնալու վտանգով: Միևնույն ժամանակ հետաքրքիր է ուսումնասիրել Կովկասյան պրասենյակի հաստատութենական բարեփոխումների ոչ պաշտոնական բաժնի ծրագրի շրջանակներում անցկացված հետազոտական հարցման արդյունքները. ըստ դրա՝ ներդրողները որոշել են, որ «Հայաստանում կոռուպցիայի մակարդակը ավելի ցածր է, քան ԱՊՀ այլ երկրներում, և այն համակարգային չէ: Կոռուպցիայի հին համակարգը վերացել է, իսկ նորը դեռ չի ձևավորվել»[8]:

Այնուամենայնիվ, ներդրողներն այս իրավիճակը սակավ նպաստավոր են համարում, քանի որ կոռուպցիան անկանխատեսելի է: Այլ աղբյուրներ, օրինակ, «Միջազգային թափանցիկություն»[9] կազմակերպությունը, համարում են, որ

[7] Տես «Venice Commission Discontent with RA Constitutional Amendments Draft», 30.05.2005 (http://www.panarmenian.net/news/eng/?task=society&id=13532&date=2005-05-30); CDL(2005)042 «Draft Amendments to the Constitution of the Republic of Armenia» (First Reading). «Recent Documents». European Commission for Democracy through Law (Venice Commission), Council of Europe, 26.05.2005 (http://www.venice.coe.int/docs/2005/CDL(2005)042-e.asp):

[8] Տես «Corruption as an Obstacle for the Economic Development of the Country. National Human Development Report». Caucasian Bureau of the Institutional Reforms of the Informal Sector (IRIS) (http://www.undp.am/publications/nhdr01/main.php?l=en&chapter=2&id=2_9):

[9] «Միջազգային թափանցիկությունը» միջազգային ոչ կառավարական կազմակերպություն է, որն զբաղվում է կոռուպցիայի դեմ պայքարով՝ քաղաքացիական հասարակությունը, գոր-

Հայաստանում կոռուպցիան շատ բարձր մակարդակի վրա է՝ 10-ից (վերին աստիճանի մաքուր) մինչև 0-ն (վերին աստիճանի կոռումպացված) սանդղակով տալով 2,5 գնահատականը: Հարավային Կովկասի տարածաշրջանի երկրներում տիրող իրավիճակն ավելի հստակորեն պատկերացնելու համար կարող ենք ներկայացնել գնահատման նույն սկզբունքով ստացված թվերը Ադրբեջանի (2,0) և Վրաստանի (2,4) համար[10]: Թեև Հայաստանում կոռուպցիայի մակարդակը բարձր է, այդուհանդերձ Հարավային Կովկասում այն ամենացածրն է:

Հասարակության ճնշման տակ Վրաստանի Նախագահ Էդուարդ Շևարդնաձեի վերջերս կայացած հրաժարականը շեշտեց վրաց ժողովրդի դժգոհության աստիճանը՝ կապված ամբողջ կառավարության և հասարակության մեջ կոռուպցիայի տարածման անհանդուրժելի մակարդակի հետ:

Վրաստանի նորընտիր Նախագահ Միխայիլ Սահակաշվիլին, 2004 թ. հունվարին «Միջազգային թափանցիկություն» կազմակերպության հրավերով ելույթ ունենալով Եվրոպայում, կոռուպցիան համարեց Վրաստանի առջև ծառացած ամենազորեղ մարտահրավերներից մեկը[11]: Վրաստանի ղեկավարության մեջ այս հեղափոխական փոփոխությունը՝ կոռումպացված առաջնորդի անարյուն հեռացումը, վերակենդանացրեց նորանկախ երկրների քաղաքական կյանքում և ազատ շուկայական տնտեսությունում իրական ժողովրդավարական առաջընթաց ապրելու հույսը: Բայց միևնույն ժամանակ Վրաստանի «Վարդերի հեղափոխությունը» Հարավային Կովկասում արթնացրեց անկայունության և բռնության վախը:

IV. ԿՈՎԿԱՍՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հարավային Կովկասում էթնիկական հակամարտությունները մի գործոն են, որը խոչընդոտում է տարածաշրջանում խաղաղության ու կայունության հաստատման և տնտեսական առաջընթացի գործընթացներին: Երկրները շարունակ բախվում են սպառազինության մրցավազքի և փախստականների ու

ծարաբությունը և կառավարությունները միավորելով մեկ միասնական համաշխարհային հզոր դաշինքում (http://www.transparency.org/about_ti/index.html):

[10] Տես «Global Corruption» (http://www.globalcorruptionreport.org/download/gcr2003/24_Data_and_research.pdf):

[11] Տես «Yahoo Nyheder, Danmark». «News». 2004, 29 January, Thursday (http://dk.news.yahoo.com/040129/33/30hh0.html); *Mikhail Saakashvili.* Five core principles for the world's reformers. «Financial Times», 2005, 26 May (http://news.ft.com/cms/s/b53dc192-cd83-11d9-aa26-00000e 2511c8.html):

տեղահանվածների կարիքների հետ կապված բյուջետային խնդիրների: Էթնիկական հակամարտությունների հետևանքներ են սահմանակից պետություններում դրանց տարածվելու վտանգը և տարածաշրջանի կամ նրա սահմաններից դուրս եղած պետությունների էներգետիկ ռեսուրսների, առևտրային-տրանսպորտային ցանցերի լիարժեք շահագործման սահմանափակությունը: Հարավային Կովկասում խաղաղության ու հարատև անկախության խթանմանն ուղղված ԱՄՆ-ի և միջազգային հանրության ջանքերը հանդիպում են երկյուղալի մարտահրավերների: Էթնիկական ու քաղաքացիական հակամարտությունների թվի, ինտենսիվության և տևականության առումով տարածաշրջանը եղել է նախկին Խորհրդային Միության առավել անկայուն մասերից մեկը: Երեք հանրապետություններում իշխող ազգությունները միմյանց նկատմամբ ունեն տարբեր հավակնումներ ու դժգոհություններ: Այս է հիմնական պատճառը, որ Հայաստանի և Ադրբեջանի միջև առկա տարաձայնությունները հանգեցրել են Ադրբեջանից էթնիկական հայերի զանգվածային արտագաղթի, և հակառակը: Ժողովրդավարության տարածաշրջանային դինամիկայի համընդհանուր պատկերը դիտելով՝ կարող ենք ասել, որ Հայաստանի, Ադրբեջանի ու Վրաստանի ազգ-պետությունները, ներկայումս գտնվելով հակամարտային վտանգի տակ, թերևսում են ժողովրդավարության զարգացման գործում, և պատճառը միայն բանակին ու ոստիկանությանը աջակցմանն ուղղված բյուջետային վերաբաշխումը չէ: Կարևորելով ազգային ռեսուրսների նպատակաուղղումը առավելապես անվտանգության կարիքների բավարարման համար՝ այս պետությունները սահմանափակում են իրենց ազգային կյանքի սոցիալական բազմազանությունը և դանդաղեցնում ժողովրդավարության ու ազատական տնտեսության հաստատութենացումը[12]:

Այս սահմանափակումները հիմնականում վնասում են իրավական, քաղաքական ու տնտեսական բարեփոխումների ընդհանուր գործընթացին՝ նվազեցնելով այդ բարեփոխումների ազգային և անդրազգային նշանակությունն ու ինտենսիվությունը, ինչի հետևանքով նվազում է դրանց սոցիալական արդյունավետությունը: Հարավային Կովկասի քաղաքական, վարչական ու տնտեսական կյանքում թափանցիկության պակասը, որն ուղեկցվում է կոռուպցիայով, քողարկված է այնպիսի սահմանափակումներով, որոնք արդարացվում են ազգային անվտանգության գերակա շահերով: Տարածաշրջանային ազգային քաղաքականության՝ հակամարտությունների առկայությամբ արդարացվող այսպիսի անվտանգայնացումը Հայաստանում, Ադրբեջանում ու

[12] Տես *Ambassador Harry Gilmore, Ambassador Richard Kauzlarich, Ambassador Kenneth Yalowitz.* Pay Attention to the South Caucasus. CSIS, 2002, January (http://www.csis.org/ruscura/caucasus/pubs/0201_sc.htm):

Վրաստանում նպաստում է իրական ժողովրդավարության արմատավորման ջանքերում որոշակի խոչընդոտների ձևավորմանը:

Եզրափակելով՝ կարող ենք ասել, որ Հարավային Կովկասի յուրաքանչյուր երկրում ժողովրդավարության իրական վիճակի մասին հստակ պատկերացումը և ժողովրդավարական զարգացման ռազմավարության բացակայությունը, նրանց տնտեսությունների և սոցիալական կյանքի անվտանգային կաշկանդվածությունը մեզ հնարավորություն են տալիս դրանք գնահատելու որպես «ցածր ինտենսիվությամբ ժողովրդավարություններ»[13]: Սա նշանակում է, որ անհրաժեշտ է հատուկ մոտեցում միջազգային ինտենսիվ ժողովրդավարական միջավայր ներգրավելու միջոցով այս երկրներում ժողովրդավարության և տնտեսության զարգացման արագացման նկատմամբ: Այս գործընթացը կարող է արդյունավետ լինել, եթե Հարավային Կովկասի տարածաշրջանային կայունության դինամիկ համատեքստում միահյուսված անվտանգային խնդիրները հետազոտվեն ու մշակվեն և՛ տարածաշրջանային, և՛ ազգային առանձնահատկությունների հաշվառմամբ:

V. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ. ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ

Նախ դիտարկենք Եվրաատլանտյան և ԱՊՀ երկրների թվին պատկանող հիմնական գործընկերների հետ անվտանգության ոլորտում Հայաստանի համագործակցության շրջանակներն ու դինամիկան: Այս համատեքստում ՆԱՏՕ-ի հետ Հայաստանի Հանրապետության համագործակցությունը հետապնդում է հեռամետ շահեր: Հայաստանի Զինված ուժերը 1994 թվականից մասնակցում են ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրին, այսինքն՝ ՆԱՏՕ-ն և Հարավային Կովկասի երեք երկրները համագործակցում են մի շարք հարցերում, ներառյալ՝ բարձր տեխնոլոգիաների և գիտության ոլորտները, անգլերեն և այլ օտար լեզուների ուսուցումը, ՆԱՏՕ-ի հաստատություններում ռազմական կրթությունը և քաղաքացիական արտակարգ իրավիճակների պլանավորումը: Հայաստանի համար օգտավետ են եղել արտակարգ իրավիճակների հաղթահարման ծրագրավորման քաղաքացիական աշխատանքները և ՆԱՏՕ-ի գիտական ծրագրերը: ՆԱՏՕ-ի կողմից ֆինանսավորվող նախագծերից մեկը, որը առանձնահատուկ կարևորություն ունի Հայաստանի համար, նպատակաուղղված է կապ ստեղծելու մի կողմից

[13] Տես *Steve Smith.* American Democracy Promotion. US Democracy Promotion: Critical Questions. Oxford, 2000, PP. 72–74:

Հայաստանի, մյուս կողմից՝ Իտալիայի, Հունաստանի և Մեծ Բրիտանիայի սեյսմոլոգիական հետազոտությունների ինստիտուտների տեղեկատվական համակարգերի միջև:

Հայաստանի Զինված ուժերը ակտիվացնում են իրենց մասնակցությունը «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում անցկացվող զորավարժություններին: Հայաստանի հատուկ նախանշանակման ուժերի ստորաբաժանումները Թբիլիսիում կայացած «Համատեղ լավագույն ջանք–2002» զորավարժության ժամանակ (2002 թ. հունիսի 17–28) համագործակցեցին ՆԱՏՕ-ի անդամ երկրների՝ ԱՄՆ-ի, Թուրքիայի, Կանադայի, Հունաստանի, Հունգարիայի և Մեծ Բրիտանիայի իրենց գործընկերների հետ: Այդ զորավարժության շրջանակներում Հայաստանի գործընկեր պետություններ էին նաև Ադրբեջանը, Ավստրիան, Բուլղարիան, Լիտվան, Մոլդովան, Ռումինիան, Վրաստանը և ՈՒկրաինան:

2003 թ. հունիսին Հայաստանն առաջին անգամ հյուրընկալեց ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում անցկացվող զորավարժությունը, որին մասնակցեց մոտ 400 հոգուց բաղկացած զորակազմ՝ ՆԱՏՕ-ի և այլ գործընկեր 19 երկրներից: Մասնակցում էին ԱՄՆ-ի, Ավստրիայի, Բուլղարիայի, Թուրքիայի, Իտալիայի, Լեհաստանի, Լիտվայի, Կանադայի, Հունաստանի, Հունգարիայի, Մակեդոնիայի նախկին Հարավսլավական Հանրապետության, Մեծ Բրիտանիայի, Մոլդովայի, Ռումինիայի, Ռուսաստանի, Սլովակիայի, Վրաստանի և ՈՒզբեկստանի զինծառայողները: Կարևոր է նշել, որ Ռուսաստանն առաջին անգամ էր բազմազգ ուժերի կազմին ինտեգրված իր շտաբային սպաներով ու ցամաքային զորախմբով մասնակցում Հայաստանի աջակցությամբ կազմակերպված այս տիպի զորավարժության[14]:

Կարևոր է նաև նշել, որ ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում իրականացվող զորավարժությունը, որը կազմակերպվել էր Երևանում, հայկական և թուրքական զորքերի համար լավ հնարավորություն ստեղծեց անկախ հայկական պետության հողում նախկինում իր նախադեպը չունեցող համագործակցության համար: Հայաստանում կայացած այս զորավարժության նպատակն էր մեծացնել ցամաքային ուժերի արդյունավետությունը՝ ՆԱՏՕ-ին և գործընկերներին մղելով միասին աշխատելու ավելի լավ փոխըմբռնման ու փոխգործողության հասնելու համար, և այս նպատակը լիովին իրականացվեց:

[14] Տես «NATO Exercise Takes Canadian, Russian Troops to Armenia». «Department of National Defence and the Canadian Forces (DND/CF)», 2003, 16 June (http://www.forces.gc.ca/site/newsroom/view_news_e.asp?id=1113):

2004 թ. Հայաստանը առաջին քայլն արեց ՆԱՏՕ-ի ղեկավարությամբ (հատկապես՝ Հունաստանի և ԱՄՆ-ի) միջազգային խաղաղապահական գործողություններին մասնակցելու ուղղությամբ: Պայմանագրային հիմունքով ծառայող 34 հայ զինծառայողներից բաղկացած դասակը հայկական խաղաղապահ հատուկ գումարտակի մասն է, որը ուսուցանվել, սպառազինվել և ֆինանսավորվել է Հունաստանի կողմից: Վերջերս այն անցել է Կոսովոյում տեղակայված հունական ցամաքազորային գումարտակի հրամանատարության ենթակայության տակ: Հայ զինծառայողները անցել են անգլերեն լեզվի ինտենսիվ դասընթացներ, որոնք հովանավորվում են Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի կողմից և ապահովված են հաղորդակցության ժամանակակից միջոցներով, ներառյալ՝ արբանյակային ալեհավաքները: Ըստ պայմանավորվածության՝ հունական կողմն զբաղվելու է նաև հայ զինծառայողների ապահովագրական հարցերով:

«Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում Հայաստանի պաշտպանության նախարարության անդամակցությունը ՆԱՏՕ-ի պաշտպանական ակադեմիաների և անվտանգության ուսումնասիրության ինստիտուտների Կոնսորցիումին պետք է համարվի ՆԱՏՕ-ի գործընկերների հետ մտավոր երկարատև համագործակցությանն ուղղված քայլերից (անդամակցությունը հաստատվեց 2004 թ. հունվարին)[15]:

1998 թ. Հայաստանի պաշտպանության նախարարությունն իր սպային նշանակեց Մոնսում Դաշինքի գործընկերության համակարգման բաժնում: Հայաստանի դեսպանը միաժամանակ գործում էր Բենիլյուքսի երկրներում և ՆԱՏՕ-ում, իսկ 2004 թ. Հայաստանը ՆԱՏՕ-ում դիվանագիտական առաքելություն ստեղծեց՝ ՆԱՏՕ-ի գործերի շտաբ-կայանում դեսպանի և ռազմական ներկայացուցչի մակարդակով:

2005 թ. Հայաստանը միացավ «Անհատական գործընկերության գործողությունների ծրագրին» (ԱԳԳԾ): Հայաստանի արտաքին գործերի և պաշտպանության նախարարները վերջերս (2005 թ. հունիսի 16-ին) Բրյուսելում, Հյուսիսատլանտյան կազմակերպության խորհրդի նիստում, որին մասնակցում էին ՆԱՏՕ-ի անդամ 26 պետությունների դեսպանները, Գլխավոր քարտուղարին հանձնեցին Հայաստանի ԱԳԳԾ-ն ներկայացնող փաստաթուղթը: Այն հետամուտ համագործակցություն է ապահովում պլանավորման, հայեցակարգերի մշակման ու ներդաշնակեցման գործընթացներում: Հայաստանի Կառավարության և ՆԱՏՕ-ի ղեկավարության այս ռազմավարական

[15] Տես «NATO Partnership for Peace Consortium of Defense Academies and Security Studies Institutes». Armenia (http://www.ndc.nato.int/outreach/pfp.html):

որոշումը համապատասխանում է ՆԱՏՕ-ի հետ գործընկեր երկրի համագործակցության հնարավոր ամենաբարձր մակարդակին[16]:

Հայաստանը նաև ԵԱՀԿ ակտիվ անդամ է: Այդ կազմակերպության մեջ մտնում են բոլոր եվրոպական երկրները, ինչպես նաև ԱՄՆ-ն ու Կանադան. ընդամենը 55 անդամ[17]: Նպատակ ունենալով ինտեգրվել մեծ Եվրոպային՝ Հայաստանը հանդես է գալիս որպես Եվրոպական խորհրդի անդամ: Այս անդամակցությունը Եվրամիության չափանիշներին Հայաստանի իրավաքաղաքական համակարգի համապատասխանեցման լրացուցիչ գործոն է: Հայաստանի պաշտոնական քաղաքականությունն ունի հետևյալ ուղղվածությունը՝ «հարաճուն ինտեգրում Եվրամիության մոդելներին ու ստանդարտներին»: Այժմ Հայաստանը, ինչպես նաև Ադրբեջանը և Վրաստանը համագործակցում են Եվրամիության հետ՝ միջնաժամկետ հեռանկարում նրան անդամակցելու ակնկալիքով[18]:

Հայ–ամերիկյան անվտանգային համագործակցությունը 1998 թվականից ընթանում է երկկողմ միջկառավարական «Անվտանգության երկխոսություն» ծրագրի քաղաքական հովանու ներքո: 2000 թ. հուլիսին ԱՄՆ-ի և Հայաստանի պաշտպանական գերատեսչությունների ղեկավարներն ստորագրեցին զանգվածային ոչնչացման զենքի տարածման դեմ պայքարի ոլորտում համագործակցելու մասին պայմանագիր:

Հայաստանի և Ամերիկայի զինված ուժերը 2002 թվականից համագործակցել են ոչ միայն ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում, այլև երկկողմ ձևաչափով: Հենց այդ ժամանակ է ստեղծվել պաշտպանական ոլորտում երկկողմ խորհրդատվությունների մեխանիզմը, որը ղեկավարում են ԱՄՆ-ի պաշտպանության քարտուղարի օգնականի տեղակալը և Հայաստանի պաշտպանության փոխնախարարը: «Արտաքին ռազմական ֆինանսավորում» (FMF), ինչպես նաև «Միջազգային ռազմական ուսուցում և վարժանք» (IMET) ծրագրերը գործարկվում են՝ մշակվելով և վերահսկվելով երկկողմ ռազմական համագործակցության միասնական գործընթացում:

Անցած տարի Պենտագոնի, ինչպես նաև ԱՄՆ-ի հայկական համայնքի աջակցությամբ հիմնադրվեց Հայաստանի մարդասիրական ականազերծման կենտրոնը: Հայ–ամերիկյան ռազմական համագործակցության նոր փուլ նշանավորեց Հայաստանի մասնակցությունը Իրաքում գործող դաշնադրային ուժերին: 2004 թ. դեկտեմբերի 24-ին Հայաստանի խորհրդարանը հաստատեց

[16] Տես «Armenian Foreign Minister Presents Action Plans to NATO». «Armenia Daily Digest», 2005, 17 June, Friday (http://www.eurasianet.org/resource/armenia/hypermail/200506/0032.shtml):

[17] Տես «OSCE Office in Yerevan» (http://www.osce.org/yerevan/):

[18] Տես «The EU's relations with Armenia» (http://europa.eu.int/comm/external_relations/armenia/intro/):

իր զորքերի տեղակայումը Իրաքում: Խորհրդարանի ընդունած օրինագծի համաձայն՝ Հայաստանի պաշտպանության նախարարությունը Իրաք ուղարկեց մեկ դասակ, որը ներառում էր հատուկ պատրաստված վարժրդներով համալրված 30 բեռնատար մեքենաների շարասյուն, ինչպես նաև սակրավորներ ու մարդասիրական բուժօգնություն ցուցաբերելու գործում մասնագիտացած բժիշկներ[19]:

Միևնույն ժամանակ Հայաստանն ստանձնել է Անկախ պետությունների համագործակցության և Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) անդամի պարտավորությունները՝ գործելով որպես Ռուսաստանի Դաշնության ռազմավարական գործընկեր:

Հայաստանի բազմաբնեռ կողմնորոշման մասին վկայող այս հատկանշական փաստերն ամփոփելիս որոշ փորձագետներ հետաքրքրվում են նման ուրույն աշխարհառազմավարական ուրվանկարի առանձնահատկություններով և նրա անվտանգային ու պաշտպանական կողմնորոշումների հավասարակշռվածությամբ: Օրինակ՝ Մոսկվայի որոշ վերլուծաբանների մտահոգում է այն փաստը, որ հավասարակշռված կերպով զարգանում է և՛ հայ–ռուսական, և՛ հայ–ամերիկյան, ինչպես նաև Հայաստան–ՀԱՊԿ և Հայաստան–ՆԱՏՕ («Գործընկերություն հանուն խաղաղության») համագործակցությունը*: Նման մտահոգություններ հնչում են նաև որոշ ամերիկացի փորձագետների կողմից: Այս անհանգստությունը, մեր կարծիքով, «սառը պատերազմի» հոգեբանության վերապրուկներից է:

Արձագանքելով այդ քննադատություններ՝ մենք մեր գործընկերներին արդեն պարզաբանել ենք, որ Ռուսաստանը, Հռոմում կայացած ՆԱՏՕ–Ռուսաստան գագաթնաժողովում Մշտական խորհրդի անդամ դառնալով և Մոսկվայում ՆԱՏՕ-ի գրասենյակ բացելով, ՆԱՏՕ-ի հետ զարգացնում է ավելի ինտենսիվ ու լայն համագործակցություն, քան Հայաստանը: Դա չի հակասում անվտանգության գծով Ռուսաստանի պարտավորություններին՝ կապված ՀԱՊԿ-ի իր գործընկերների և, հատկապես՝ Հայաստանի հետ:

Մեր կարծիքով՝ ԱՄՆ-ի և Ռուսաստանի ղեկավարների միջև ռազմավարական երկխոսությունը ամենալավ միջոցն է ոչ միայն ԱՄՆ-ի և Ռուսաստանի, այլև նրանց գործընկերների, այդ թվում՝ Հայաստանի, Ադրբեջանի ու Վրաստանի, անվտանգության ռազմավարական շահերի համակցման համար[20]:

[19] Տես «Non-US Forces in Iraq». 2004, 26 December (http://www.globalsecurity.org/military/ops/iraq_orbat_coalition_041226.htm):

* Մեջբերումն արված է «Նեզավիսիմայա գազետա» (ՌԴ) օրաթերթից, որը հայտնի է քաղաքական ուղղվածություն ունեցող իր հոդվածներով:

[20] Տես «Russia/U.S.: With Bush–Putin Summit Over». Radio «Free Europe» and Radio «Liberty», 2005, 25 February, Friday (http://www.rferl.org/featuresarticle/2005/2/414E34DD-E8E2-48AC-B3D0-B12B32FE2FD8.html):

Անվտանգության գործընկերության այս վերազգային համատեքստում Հայաստանը կարևորում է անվտանգության ու պաշտպանական բնագավառներում իր աջակցությունը հայ–ամերիկյան, հայ–ռուսական, ինչպես նաև Հայաստան–ՀԱՊԿ, Հայաստան–ՆԱՏՕ համագործակցության ներդաշնակեցմանը[21]: Այս ռազմավարական հավասարակշռության առաջնահերթությանն առանձնահատուկ կարևորությունը բացատրվում է նաև սփյուռքահայության գոյությամբ և Հայաստանի, ինչպես նաև իր բնակության երկրների (Ռուսաստան, ԱՄՆ, Ֆրանսիա և այլն) քաղաքական կյանքի վրա նրա ունեցած ակտիվ ազդեցությամբ:

Հայաստանի անվտանգության քաղաքականության այս միջազգային կոորդինատները պետք է դիտարկվեն տարածաշրջանային կայունության և Հարավային Կովկասի անվտանգության խնդիրների համատեքստում: Հաջորդ գլուխներում կքննարկենք տարածաշրջանում անվտանգության ճարտարապետության վերակառուցման որոշ սկզբունքներ և ուղիներ: Հետագայում տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության խնդիրների այսպիսի վերլուծական պարզաբանման արդյունքները հեղինակի կողմից առաջարկվելու են որպես Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության նախագծի մշակման գիտական հենք: Այդ նախագիծը ներկայացված է Հավելվածներում՝ որպես այս աշխատության մասնագիտացված կիրառական մաս:

VI. ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄ

1. ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ. ՏԵՍԼԱԿԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ[22]

Հարավային Կովկասի կայուն զարգացման համար բնական կլիներ անվտանգության ու դրան առնչվող խնդիրների նկատմամբ բազմավեկտոր մոտեցում ցուցաբերել, ինչը կապ կստեղծի տարածաշրջանում բոլոր հիմնական դերա-

[21] Տես «В повестке–комплементаризм и многовекторность оборонной политики», интервью с Г. С. Котанджяном. «Голос Армении», 16 ноября 2002 г.:

[22] Տես *Stuart E. Johnson, Martin C. Libicki, Gregory F. Treverton.* What is Architecture? «New Challenges, New Tools for Defense Decisionmaking». «RAND», 2003; *Joseph McMillan, Richard Sokolsky and Andrew Winner.* Toward a New Regional Security Architecture. «The Washington Quarterly», 2003, Summer, PP. 161–175:

կատարների՝ Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Թուրքիայի և Իրանի, ինչպես նաև ԵԱՀԿ, ԵԽ-ի, ԵՄ-ի, ՀԱՊԿ-ի, ՆԱՏՕ-ԵԱԳԽ և ՄԱՏՀ կազմակերպությունների միջև:

Աշխարհի այս հատվածում տարածաշրջանային անվտանգության ամրապնդումը չի պահանջում Եվրամիության կամ ՆԱՏՕ-ի կովկասյան տարբերակի շուտափույթ ստեղծում: Փոխարենը Հարավային Կովկասին անհրաժեշտ են կովկասյան բոլոր պետությունների և միջազգային կազմակերպությունների միջև փոխկապվածություն ապահովող, մասամբ համընկնող երկկողմ ու բազմակողմ հարաբերություններ, որոնք նպաստեն Կովկասի տնտեսական, հաղորդակցական, քաղաքական և ռազմական ինտեգրմանը ավելի մեծ Եվրոպային, ՀԱՊԿ-ին և Եվրասիական տնտեսական համագործակցությանը (ԵԱՏՀ), ինչպես նաև Եվրաատլանտյան գործընկերությանը: Ապագայում դրանց ցանցը՝ որպես ավելի լայն բազմակողմ գործընթացի լրացում, կօգնի ստեղծելու, օրինակ, Անդրկովկասյան տարածաշրջանային համաժողովի կամ Տարածաշրջանային միջխորհրդարանական ժողովի տիպի պաշտոնական կազմակերպություններ[23]: Բազմակողմ ձևաչափով տարածաշրջանային համագործակցության այս մոդելները բազմաթիվ են. որպես օրինակ կարող են ծառայել աշխարհի տարբեր մասերում գոյություն ունեցող կազմակերպությունները՝ սկսած Սկանդինավյան խորհրդից մինչև Հարավարևելյան Ասիայի երկրների ասոցիացիան:

Հարավային Կովկասի տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության ցանկացած մոդելի հաջողությունը, կամ ձախողումը, մեծապես կախված կլինի դրա նպատակաուղղվածությունից, կառուցվածքից, և այն բանից, թե ինչպիսի փոխազդման մեջ է այն գտնվելու տարածաշրջանային անվտանգության ոլորտի այլ համակարգերի ու մեխանիզմների հետ: Տարածաշրջանային անվտանգության մեջ դրական ներդրում ունենալու համար այդ ճարտարապետությունը պետք է կարողանա իրականացնել հետևյալ նպատակները.

- տարածաշրջանի բոլոր դերակատարների երկարատև խաղաղ համակեցության համար ապահովել փոխկապված անհատական, երկկողմ և հավաքական իրավաքաղաքական պայմանների անհրաժեշտ համակարգ (մի կողմից՝ Վրաստան և մյուս կողմից՝ Աբխազիա ու Հարավային Օսեթիա, ինչպես նաև մի կողմից՝ Ադրբեջան և մյուս կողմից՝ Հայաստան ու Լեռնային Ղարաբաղ),
- նպաստել անվտանգության խնդիրների շուրջ համագործակցության միջավայրի ձևավորմանը, ինչը կնվազեցնի տարածաշրջանում հակամարտող կողմերի միջև զինված բախումների վերսկսման կամ ծավալման հավանականությունը և նրանց հնարավորություն կտա համագործակցելու անդրազգային սպառնալիքների դեմ, ինչպիսին, օրինակ, միջազգային ահաբեկչությունն է,
- տարածաշրջանին հնարավորություն տալ խաղաղության և կայունության արմատավորման գործում ունենալու իր համաձայնեցված դերակատարությունը իր սահմաններից դուրս, ներառյալ՝ հարևան տարածքները, օրինակ, Ռուսաստանի տարածքները Հյուսիսային Կովկասում, Սև և Կասպից ծովերի ավազանները, Կենտրոնական Ասիան և Մերձավոր Արևելքը,
- երկարաժամկետ հեռանկարի հետ մեկտեղ ունենալ տարածաշրջանային հավաքական անվտանգության միասնական կառույց ստեղծելու ծրագիր, որի շնորհիվ Հարավային Կովկասի երկրներն ավելի իրատեսական հնարավորություն կստանան իրենց կարճաժամկետ ու միջնաժամկետ շահերը ապահովելու ավելի լայն՝ անդրազգային, անվտանգության կազմակերպություններին անդամակցությամբ ու փոխադարձ համագործակցությամբ հաստատված հուսալի տարածաշրջանային անվտանգության պայմաններում:

Ինչպես արդեն նշվել է, ամերիկյան ռազմագետ վերլուծաբաններն ու ռազմավարական ծրագրերի մշակողները նկատել են, որ այս՝ համեմատաբար փոքր, տարածաշրջանին (Հայաստան, Ադրբեջան ու Վրաստան) հատկացվող ուշադրությունը կարելի է բացատրել այն բացառիկ աշխարհառազմավարական դերով, որ նա կատարում է ենթակառուցվածքային ու տրանսպորտա-էներգետիկական միջանցքի միջոցով Եվրոպան և Կենտրոնական Ասիան միավորելու գործում[24]: Կասպյան ավազանում ու Կենտրոնական Ասիայում

[23] Տես «The South Caucasus Parliamentary Initiative». «Parliamentary News Release», 2003, 17 December, Wednesday (http://www.scottish.parliament.uk/nmCentre/news/news-03/gr03-001.htm):

[24] «Որոշ դիտորդներ համարում են, որ հետխորհրդային տարածաշրջանների շարքում Հարավային Կովկասը Դաշինքի համար ունեցած ռազմավարական կարևորությամբ Բալթյան պետություններից հետո երկրորդն է, քանի որ նրա տարածքը սահմանակից է անդամ պետություն Թուրքիային և Եվրոպայի բնական շարունակությունն է: Այն նաև ստեղծում է ռազմավարական նշանակություն ունեցող միջանցք, որը Հարավային Եվրոպան կապում է Կենտրոնական Ասիայի և Մերձավոր Արևելքի հետ: Նա կարող է օգտագործվել որպես Կասպյան տարածաշրջանի էներգետիկ ռեսուրսների փոխանցման միջոց, ինչը հավանաբար նշանակալից դեր կխաղա «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում Եվրոպայի էներգետիկ անվտանգության ապահովման գործում: Բացի այդ, հարավկովկասյան պետությունները՝ Հայաստանը, Ադրբեջանը և Վրաստանը, սերտ հարաբերություններ են ձևավորում Դաշինքի հետ: Այս զարգացումները տարածաշրջանի հետագա կայունության և համաշխարհային էներգետիկ շուկայի համար դրական կլինեն, եթե հաղթահարվի տարածաշրջանային անկայունությունը» (*James De Temple*. Military Engagement in the South Caucasus. 2001–2002, Autumn/Winter/JFQ (http://www.dtic.mil/doctrine/

ծավալված ռազմավարական մրցակցության շրջանակներում քաղաքական ու տնտեսական ազդեցություն ձեռք բերելու համար Կովկասը հավակնում է դառնալու կարևոր հանգուցակետ իր աշխարհագրական սահմաններից դուրս գտնվող տարածքներում միջազգային անվտանգության ապահովման գործում: Որոշ ռազմավարական գնահատումներ ցույց են տալիս, որ ամբողջ Կենտրոնական Եվրասիայի համար անդրտարածաշրջանային անվտանգությունը պայմանավորված է Կովկասում տիրող խաղաղությամբ և կայունությամբ, հատկապես Ռուսաստանին, Իրանին և Թուրքիային սահմանակից հարավային տարածաշրջանում[25]:

Այս ժամանակակից «Մետաքսի ճանապարհի» հուսալի և ապահով գործունեությունը հնարավոր կլինի միայն Հարավային Կովկասի բոլոր պետություններում երկարատև խաղաղության, կայուն ժողովրդավարական զարգացման ու համագործակցության պայմաններում: Հարավային Կովկասում առկա տարածաշրջանային կայունությունը խոցելի է և զգայուն է մի շարք գործոնների նկատմամբ, ինչպիսիք են քաղաքական, տնտեսական, ռազմական, ներքին, միջազգային, էթնիկական, կրոնական և տարածաշրջանի հարևան ժողովուրդների ու փոքրամասնությունների միջև թշնամական հարաբերությունների պատմական ժառանգության գործոնները: Հարավային Կովկասի երեք հարևան պետությունների համար առանձնապես զգայուն է նրանց անվտանգության միջազգային երաշխիքների հարցը:

Տարածաշրջանային անվտանգության ներկայիս ճարտարապետության բարդությունները հիմնականում կապված են տարածաշրջանի պետությունների համար ազգային անվտանգության արտաքին երաշխավորների որոնման նկատմամբ տարբեր մոտեցումների հետ: Հայտնի է, որ Աղրբեջանն ու Վրաստանը մտադիր են դառնալու ՆԱՏՕ-ի անդամ: Ի տարբերություն այդ երկրներից, Հայաստանն իր անվտանգության քաղաքականությունը հիմնում է փոխլրացման սկզբունքի վրա: Հայաստանը, լինելով ՀԱՊԿ-ի անդամ, նախընտրում է ՆԱՏՕ-ի հետ հարաբերություններ զարգացնել «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի «Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի» (ԱԳԳԾ) շրջանակներում[26]: Այս համատեքստում

jel/jfq_pubs/1429.pdf): ԱՄՆ-ի ռազմաօդային ուժերի փոխգնդապետ Ջեյմս Դր Թեմպլը Բոստոնի համալսարանին կից Հակամարտությունների, գաղափարախոսության և քաղաքականության ուսումնասիրությունների ինստիտուտի ազգային պաշտպանական հարցերով փորձագետ է և ՆԱՏՕ-ի շտաբի նախկին սպա):

[25] Տես «The Strategic Assessment of Central Eurasia». «Research Report published by CACI and the Atlantic Council of the US done at the request of the US Joint Chiefs of Staff». 2001, February, PP. 56–71:

[26] Տես «Rome Declaration on NATO–Russia Relations: a New Quality». «NATO–Russia Summit Meeting». «Declaration by Heads of State and Government of NATO Member States and the Russian

տարածաշրջանում խաղաղություն ու կայունություն հաստատելու և տնտեսական առաջընթաց ապահովելու համար միջազգային հանրությանը, որը ներկայացված է ԵԱՀԿ-ով և Եվրաատլանտյան գործընկերության խորհրդով (ԵԱԳԽ), նպատակահարմար է ստեղծել նոր՝ ավելի արդյունավետ, մեխանիզմներ, որոնք ներառեն Կենտրոնական Եվրասիայի բոլոր երկրները (Կենտրոնական Ասիա և Կովկաս):

Հարավային Կովկասի համար տարածաշրջանային անվտանգության համընդգրկուն ճարտարապետությունը, հիմնված լինելով գերազանցապես տարածաշրջանային ինտեգրման տնտեսական գերակայությունների վրա, արդյունավետ կերպով չի գործի, եթե հաշվի չառնվեն փոքրամասնություն կազմող համայնքների անվտանգության շահերը, որոնք ԽՍՀՄ փլուզման ժամանակ մտան նախկին մետրոպոլիաների հետ առճակատման մեջ[27]: Ինքնորոշման ժողովրդավարական մեխանիզմների կիրառմամբ այդ հակամարտությունների լուծումը սույն աշխատության մեջ ավելի մանրամասնորեն կքննարկվի ստորև:

2. ԿՈՎԿԱՍՈՒՄ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ԱԿՆԱՐԿ

Ինչպես արդեն նշվել է, Խորհրդային Միության փլուզման հետևանքով Կովկասը դարձավ միջպետական և ներպետական մի շարք լուրջ հակամարտությունների օջախ, ինչպիսիք են, օրինակ, Աբխազական, Ղարաբաղյան և Հարավօսեթական հակամարտությունները: Տարածաշրջանի էթնոքաղաքական շարժումները ազգամիջյան հարաբերությունների ոլորտում մշակել են արմատական քաղաքական-քարոզչական ճարտասանություն, իսկ հարավկովկասյան պետությունների տեսակետների տարբերությունը սովորաբար հիմնված է լինում Հարավային Կովկասից դուրս գտնվող պետությունների կամ քաղաքական ուժերի հետ նրանցից յուրաքանչյուրի մտերիմ հարաբերությունների, մշակութային կապերի կամ դաշինքի առկայության վրա: Հարավային Կովկասի պետությունները անվտանգային դաշինքներ ստեղծեցին տարածաշրջանային և ոչ տարածաշրջանային ուժերի հետ: Հարավային

Federation». Rome, 28 May; *Mikhail Margelov.* Season of Content at Summer Political Summits. «The St. Petersburg Times», 2003, 6 June, Friday, № 873:

[27] Տես *Viacheslav A. Chirikba.* The Georgian–Abkhazian Conflict: In Search of Ways Out (http://www.abkhazia-georgia.parliament.ge/Publications/Abkhaz/Chirikba.htm), *նաև՝ Dr. Hayk S. Kotanjian.* Ethnic Conflicts in Kosovo and Nagorno Karabakh in Comparative Perspective. «Center for Defense Information». Washington, DC, 1999 (http://www.cdi.org/issues/Europe/kotanjian.html), *նաև՝* (http://www.harvardbssp.org/files/2005/presentation/publications/KOTANJIAN_THE_SOUTH_CAUCASUS_DEVELOPING_ENG.pdf):

Կովկասում ստեղծված նոր պայմաններում առաջատար դեր պահպանելու համար Ռուսաստանն օգտվում է տարածաշրջանում իր ռազմական ներկայությունից, սակայն այդ դերը վերջերս թուլացել է՝ պայմանավորված Վրաստանից ռուսաստանյան զորակայանների ծրագրված դուրսբերմամբ, այդ հանրապետությունում հակառուսաստանյան տրամադրվածության ուժեղացմամբ, ինչպես նաև Հյուսիսային Կովկասում քաղաքական անկայունության պահպանվող սպառնալիքների առկայությամբ: Արևմտյան պետությունները տարածաշրջանում Ռուսաստանի ներկայությունը հակակշռելու ուղղությամբ քայլեր ձեռնարկելիս օգտագործում են իրենց տնտեսական ռեսուրսներն ու «ռազմական նոու հաուն»[28]:

Սակայն նույնիսկ տարածաշրջանում Ռուսաստանի և Արևմտյան ուժերի ներկայության նշանակալի աճման դեպքում դժվար է սպասել, որ արագորեն փոխվի այստեղ որպես իրավաքաղաքական, ռազմական ու հոգեբանական իրողություն արմատավորված սեցեսիոնիստական էթնիկական հակամարտությունների կառուցվածքը: Հարավային Կովկասում առկա նշված տարածաշրջանային ուժային հավասարակշռությունը և հակամարտային իրողությունները փակուղի են տանում տարածաշրջանային անվտանգության, տնտեսական զարգացման, ինչպես նաև ժողովրդավարության առաջմղման գործում ներգրավված բոլոր կողմերին[29]:

Համատարածաշրջանային տրանսպորտային ուղիների ստեղծման մասին միջկառավարական համաձայնագրերի իրացման գործում անբավարար առաջընթացը և Կովկասում տնտեսական շրջափակումների վերացման մերժումը լուրջ ազդեցություն են գործում տարածաշրջանի պետությունների և ոչ տարածաշրջանային դերակատարների շահերի վրա: Այս քաղաքականությունը կարելի է համարել սահմանափակ տնտեսական քաղաքականության ուղղակի հետևանք՝ պայմանավորված ազգային անվտանգության հիմայականների գիտակցմամբ: Հարավային Կովկասի ազգային տնտեսական ու քաղաքական ճարտարապետության այսպիսի «անվտանգայնացումը» միտում ունի տնտեսական ու քաղաքական ոչ պետական դերակատարների շահերը ենթարկելու տեղային պետական շահերին և բոլոր տեսակի բանակցությունները դարձնելու բարդ ու հիմնականում անարդյունավետ: Հեշտ չէ տարածաշրջանային միջպետական համագործակցության վերաբերյալ ընդունել

[28] Տես *Paul Starobin, Vladimir Mukhin.* Moscow Flexes Its Muscles: a new rivalry with the U.S. is emerging south of Russia. «Business Week», 2003, 30 June:

[29] Տես *James De Temple.* Military Engagement in the South Caucasus. 2001–2002, Autumn/Winter/JFQ (http://www.dtic.mil/doctrine/jel/jfq-pubs/1429.pdf); «The Concept of Stability within the framework of the OSCE». «South Caucasus: Regional and International Conflict Resolution». Geneva, 2001, June (http://www.hdcentre.org/Resources/Documents/South%20Caucasus.pdf):

փոխզիջումային որոշում, եթե վտանգված են ժողովուրդների ու երկրների անվտանգության շահերը, ներառյալ՝ Հարավային Կովկասի բնիկ ժողովուրդների կողմից «դե ֆակտո» կազմավորված էթնիկական համայնքների կամ պետությունների գոյատևման ապահովման շահերը:

Տարածաշրջանում առկա հակամարտությունների լուծման վերաբերյալ բանակցությունները պատասխան են պահանջում այն հարցին, թե ինչպես կարելի է տարածաշրջանի պետությունների խաղաղ գոյակցության պայմաններում հուսալի կերպով երաշխավորել Հարավային Կովկասում բնակվող էթնիկական խմբերի անվտանգությունը: Այստեղ և՛ էթնիկական փոքրամասնությունների, և՛ ազգային պետությունների անվտանգության գաղափարի վերաձևակերպման գործընթացն ու նրանց տնտեսական կյանքի ինտեգրումը կարող են իրականացվել, եթե մշակված լինի անվտանգային ճարտարապետության ստեղծմանը միտված տարածաշրջանային քաղաքականությունը:

3. ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԷԹՆԻԿԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՆԱԼԻՆ

Հարավային Կովկասում տարածաշրջանային հակամարտությունների լուծման խնդիրը բարդ է՝ պայմանավորված այդ ճգնաժամերի էության պարզման նկատմամբ հակամարտող կողմերի տրամագծորեն տարբեր մոտեցումներով. նրանք հակամարտության լուծման իրենց մոդելը կառուցում են տարբեր իրավաքաղաքական հիմքերի վրա:

Հարավային Կովկասի բոլոր երեք (Ղարաբաղյան, Աբխազական և Հարավօսեթական) հակամարտությունները ինքնորոշման հակամարտություններ են՝ ուղղված նախկին խորհրդային գաղութակալ հանրապետություններից անկախացմանը: Նրանք այդ հանրապետությունների անդամ են դարձել ուժի գործադրմամբ՝ 1920-ական թվականներին Ստալինի ղեկավարությամբ իրականացված կոմունիստական քաղաքական մեքենայությունների հետևանքով՝ այն ժամանակ, երբ նա Խորհրդային կառավարության ազգությունների գործերի ժողկոմ (նախարար) էր[30]:

[30] Տես *Thomas Buck.* Women, War and Displacement in Georgia. «Research & Reference Services Project». United States Agency for International Development, Center for Development Information & Evaluation. Document number: PN-ACF-180. 1999, 6 July; «Resolving conflict in the Caucasus». The Christian Science Monitor, «Letters», 2003, 28 May; «The Columbia Encyclopedia: Stalin Joseph Vissarionovich». 2001, Sixth Edition (http://www.bartleby.com/65/st/Stalin-J.html):

Ադրբեջանն ու Վրաստանը իրենց կազմից Աբխազիայի, Հարավային Օսեթիայի և Լեռնային Ղարաբաղի դուրս գալը նույնականացնում են ապստամբական գործողությունների հետ և որպես այդ տարածքների նախկին տերեր պահանջում են իրենց տիրապետության վերականգնում Վրաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության և Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության սահմաններում[31]: Աբխազիան, Հարավային Օսեթիան և Լեռնային Ղարաբաղը պնդում են, որ Վրաստանի և Ադրբեջանի զինված ուժերի ագրեսիան, որը ծավալվեց ի պատասխան ինքնորոշման հարցում նախկին ազգային ինքնավարությունների կողմից կամքի դրսևորման, իրենց հարկադրել է կազմակերպելու սեփական բնակչության ինքնապաշտպանություն և դաշնակիցների աջակցությամբ հետ մղելու վրացական և ադրբեջանական ուժերը:

Տարածաշրջանային կայունության ու անվտանգության տեսանկյունից հարևան երկրի «ոչ ազատ լինելը» ի հայտ է գալիս Արևելյան Անդրկովկասի բնիկ ժողովուրդների իրավունքների և ազատությունների նկատմամբ գաղութատիրական վերաբերմունքի ձևով, և առաջին հերթին՝ ժողովուրդների իրավահավասարության և ազատ արտաքին ու ներքին ինքնորոշման իրավունքի նկատմամբ: Ղարաբաղյան հարցի կարգավորման նկատմամբ հարևան երկրի իշխանությունների հակաժողովրդավարականությունը արտահայտվում է Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի միջև վարչաաստիճանակարգային հարաբերությունների օրինապատշաճ ժողովրդավարական դադարեցման փաստի ժխտմամբ[32]:

Այս քաղաքական և իրավական փաստի անտեսման հիմքում դրված է այն, որ Ադրբեջանը 1991 թ. իր անկախությունը պաշտոնապես հռչակեց հակաիրավական եղանակով՝ առանց ԽՍՀՄ կազմից դուրս գալու հարցով հանրաքվե անցկացնելու[33]: Որպես իրավախախտում է որակվում նաև այն փաստը, որ Ադրբեջանը իր անկախությունը հռչակեց՝ առանց բավարարելու ԼՂԻՄ-ի և հայերի ամփոփ բնակության մյուս շրջանների հայ բնակչության իրավունքը՝ ազատ և ինքնուրույն ընտրելու իր քաղաքական կարգավիճակը, ինչը «ԽՍՀՄ-ից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված

[31] Տես «Official Reception on behalf of President of Azerbaijan Ilham Aliyev in Honor of President of Georgia Mikhail Saakashvili». «Azertag», 2004, 5 March (http://www.azertag.com/index_en.html):

[32] Տես «Акт о результатах референдума о независимости Нагорно-Карабахской Республики». Нагорно-Карабахская Республика, Степанакерт, МИД, 10 декабря 1991 г. (http://www.nkr.am/rus/facts/referendum.html):

[33] Տես «Конституционный Акт «О государственной независимости Азербайджанской Республики», 18 октября 1991 г., № 19–20:

հարցերի լուծման կարգի մասին» ԽՍՀՄ գործող օրենքի խախտում էր[34]: Դրա փոխարեն, Ադրբեջանի Հանրապետությունը, ընդունելով Լեռնային Ղարաբաղի ինքնավարության վերացման մասին օրենսդրական ակտ, իրեն դրսևորեց որպես մետրոպոլիայի կողմից Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ազատ ինքնորոշման կամքի վրա գաղութարարական ճնշում գործադրող սուբյեկտ[35]: Լեռնային Ղարաբաղը, ի հակազդումն այդ հակաիրավական ակտի, գործող օրենքին և անմիջական ժողովրդավարության սկզբունքներին համապատասխան՝ հանրաքվեի միջոցով, դուրս եկավ Ադրբեջանական ԽՍՀ կազմից: Ադրբեջանի Հանրապետությունը, ի պատասխան ԼՂՀ ընտրնտիր իշխանությունների առաջարկությանը, այն է՝ սկսել խաղաղ բանակցություններ, 1992 թ. սկզբին սանձազերծեց գաղութարարական պատերազմ:

Պաշտոնական Բաքուն, ի հավելումն օրենսդրության այս խախտումների, 1991 թ. «Անկախության հռչակագրում» իրեն հայտարարելով Ադրբեջանի Ժողովրդավարական Հանրապետության իրավահաջորդը, ինքն իրեն զրկեց Լեռնային Ղարաբաղը իր կազմի մեջ մտցնելու իրավունքից, քանի որ վերջինս, ունենալով վիճելի տարածքի կարգավիճակ, չի մտել Ադրբեջանի Ժողովրդավարական Հանրապետության կազմի մեջ նրա գոյության ամբողջ ժամանակահատվածում՝ 1918–1920 թթ.[36]: Մինչ այդ Ղարաբաղը եղել էր Ռուսական Կայսրության, իսկ ավելի վաղ՝ Պարսկաստանի բաղադրիչ մասը, բայց՝ ոչ Ադրբեջանի, որը մինչև 1918 թ. որպես անկախ պետություն գոյություն չի ունեցել:

Ադրբեջանի Հանրապետության հակաժողովրդավարականության գաղութատիրական մեկ այլ հատկանիշ է նրա Սահմանադրության[37] անհամապատասխանությունը լիարժեք ազատության պայմաններում ինքնորոշվող բնակչության կամքի արտահայտման միջոցով իրենց ճակատագիրը ինքնուրույն տնօրինելու ժողովուրդների իրավունքի մասին միջազգային-իրավական նորմերի էությանը, ինչը ամրագրված է 1966 թ. Մարդու իրավունքների մասին

[34] Տես «Закон СССР «О порядке решения вопросов, связанных с выходом союзной республики из СССР» № 1410-1 от 3 апреля 1990 г.». Верховный Совет СССР (www.Bestpravo.ru/lussr/data01/text10973.htm):

[35] Տես «Закон АзР «Об упразднении НКАО АзР»», 26 ноября 1991 года. Ведомости ВС АзР, 1991, № 24:

[36] Տես «Journal». League of Nations, Geneva, № 17, P. 130. Среди доводов, лежащих в основе решения Лиги Наций о непризнании Азербайджанской Демократической Республики, отмечался факт «невозможности точного определения настоящих границ Азербайджана в связи с его территориальными спорами с соседями»:

[37] Տես «Конституция Азербайджанской Республики», глава II. «Основы Государства», глава III. «Основные права и свободы человека и гражданина» (http://www.azerbaijan.az/GeneralInfo/constitution01r.html):

միջազգային համաձայնագրերով և ՄԱԿ-ի կանոնադրությամբ[38]: Համաշխարհային պրակտիկան վկայում է, որ հենց այդ ճանապարհով՝ առանց մետրոպոլիայի միջամտության են իրացվել Բանգլադեշի, Էրիտրեայի, Արևելյան Թիմորի, Չեռնոգորիայի, իսկ այժմ նաև Կոսովոյի ժողովուրդների իրավունքները՝ ինքնորոշվելու հենց ինքնորոշվող ժողովուրդների, այլ ոչ թե նրանց նախկին մետրոպոլիաների՝ ի դեմս Պակիստանի, Եթովպիայի, Ինդոնեզիայի կամ Հարավսլավիա–Սերբիայի բնակչության շրջանում անցկացվող հանրաքվեներում ազատ կամաարտահայտման միջոցով:

Ադրբեջանը պնդում է, որ սա ոչ թե Ղարաբաղի հայ ժողովրդի ինքնորոշման խնդիր է, այլ Հայաստանի և Ադրբեջանի միջև տարածքային վեճ: Հակամարտող կողմերը միանգամայն տարբեր կերպ են գնահատում Հայաստանի Զինված ուժերի օգնությունը Ղարաբաղի հայությանը՝ Ադրբեջանի Զինված ուժերի ցամաքային և օդային հարձակումներին դիմակայելու համար, Ադրբեջանի պարտությունը և նրա ու Հայաստանի սահմանագծում անվտանգության գոտու ստեղծումը: Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը և Հայաստանի Հանրապետությունը Ադրբեջանի Հանրապետության կողմից սանձազերծված պատերազմի հետևանքները գնահատում են որպես Խորհրդային Ադրբեջանի կազմից օրինական ճանապարհով Լեռնային Ղարաբաղի դուրս գալուց հետո Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նկատմամբ Ադրբեջանի Հանրապետության ձեռնարկած գաղութարարական ագրեսիայի տրամաբանական արդյունք[39]: Բաքուն հակամարտությունը որակում է որպես Հայաստանի կողմից «ագրեսիա»՝ ուղղված Ադրբեջանի տարածքային ամբողջականության դեմ:

Երեք նոր պետությունները՝ Աբխազիան, Լեռնային Ղարաբաղը և Հարավային Օսեթիան, որոնք ավելի քան 12 տարի անկախ են, բայց դեռ չեն ճանաչվել նախկին խորհրդային գաղութարարների կողմից, նախաձեռնեցին իրենց ազգային պետությունների զարգացմանն ուղղված գործընթացներ և հասան որոշակի հաջողությունների: Այդ իրավաքաղաքական ձեռքբերումները լիովին ժխտվում են ինչպես Վրաստանի, այնպես էլ Ադրբեջանի կողմից:

[38] Տես «Международный пакт о гражданских и политических правах. Резолюция ГА ООН 2200 А(XXI) от 16 декабря 1966 г.». Центр ООН по правам человека: «Права человека: Сборник международных договоров»; «Международный пакт об экономических, социальных и культурных правах. Резолюция ГА ООН 2200 А (XXI) от 16 декабря 1966 г.». Центр ООН по правам человека. «Права человека: Сборник Международных договоров»:

[39] Տես *Dr. Hayk S. Kotanjian.* Ethnic Conflicts in Kosovo and Nagorno Karabakh in Comparative Perspective. «Center for Defense Information», Washington, DC, 1999 (http://www.cdi.org/issues/Europe/kotanjian.html), *հատ՝* http://www.harvard-bssp.org/files/2005/presentation/publications/KOTANJIAN_THE_SOUTH_CAUCASUS_DEVELOPING_ENG.pdf:

Դիտարկվող ժամանակահատվածում միջազգային հանրությունն անընդհատ փորձել է հարթել հակամարտող կողմերի միջև առկա հակասությունները: ԵԱՀԿ-ն և այլ միջազգային մարմիններ մասնակցել են բանակցությունների գործընթացին, սակայն, արձանագրելով որոշ համեստ նախնական արդյունքներ, ցավոք, պետք է նշենք, որ երեք հակամարտություններն էլ դեռ փակուղում են:

Կովկասյան տարածաշրջանի հակամարտող կողմերի դիրքորոշումների միջև եղած անդունդի վերացման ուղիներն ավելի լավ հասկանալու համար համառոտակի վերլուծենք Ղարաբաղի օրինակը: Այդ նկատառումով Ղարաբաղյան հակամարտությունը համեմատվում է Կոսովոյի հակամարտության հետ: Տվյալ համեմատական ուսումնասիրությունը կարող է հետաքրքրական լինել այն փորձագետների և քաղաքական գործիչների համար, որոնք փորձում են նմանություններ գտնել ներկայումս Հարավային Կովկասում առկա հակամարտային իրավիճակների և Կոսովոյում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի որոշումների լույսի ներքո ՄԱԿ-ի ու ԵԱՀԿ-ի կողմից Կոսովոյում ՄԱԿ-ի ժամանակավոր վարչական առաքելության ու ԵԱՀԿ-ի առաքելության միջոցով գործարկված ինքնորոշումային գործընթացների միջև[40]:

[40] Տես «S/RES/1244 (1999) «Կոսովոյում միջազգային քաղաքացիական և անվտանգության ներկայացուցչության տեղաբաշխման մասին» Անվտանգության խորհրդի որոշում 1244 (1999), 1999 թ. հունիսի 10, էջ 8»: Պարտեսկում է խնդրանք Գլխավոր քարտուղարին՝ միջազգային քաղաքացիական ներկայության իրականացումը վերահսկելու համար նշանակել հատուկ ներկայացուցիչ և անդամ պետություններին ու համապատասխան միջազգային կազմակերպություններին տալ լիազորություն՝ Կոսովոյում միջազգային անվտանգության ներկայացուցչությունը հաստատելու համար: Որոշվածել երկու ներկայացուցչությունների պարտականությունները, նաև հայտնել Կոսովոյի ճգնաժամի լուծման սկզբունքները՝ ընդունված 1999 թ. մայիսի 6-ին Փիտերսբերգում «Մեծ ութնյակի» արտաքին գործերի նախարարների կողմից: *Նաև՝* «S/RES/1239(1999). «Կոսովոյի փախստականներին և Կոսովոյից, Չեռնոգորիայի Հանրապետությունից և Հարավսլավիայի Դաշնային Հանրապետության այլ տարածքներից ներքին տեղահանվածներին աջակցության մասին». Անվտանգության խորհրդի որոշում 1239 (1999), 1999 թ. մայիսի 14, էջ 2: Բովանդակում է հանձնարարություն ՄԱԿ-ի փախստականների գծով հանձնակատարին, միջազգային մարդասիրական օգնությամբ զբաղվող այլ կազմակերպությունների և ուրիշներին՝ ռեսուրսներ հատկացնել փախստականներին և ներքին տեղահանվածներին մարդասիրական օգնություն ցույց տալու համար: Շեշտվում է, որ մարդասիրական իրադրությունը կշարունակի վատթարանալ, եթե ճգնաժամը չստանա քաղաքական լուծում՝ համաձայն Գերմանիայի, Իտալիայի, Կանադայի, Ճապոնիայի, Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի, Ռուսաստանի Դաշնության և Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարների 1999 թ. մայիսի 6-ին որդեգրած սկզբունքների (S/1999/516), և պահանջ է ներկայացվում բոլոր շահագրգռված կողմերին՝ աշխատել այս ուղղությամբ (http://www.unmikonline.org/misc/N9914375.pdf):

4. ԿՈՍՈՎՈՅԻ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ. ԱԴՐԲԵՋԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կոսովոյում հարյուր հազարավոր էթնիկ ալբանացիների բռնի տեղահանությունը Բալկանյան դրամայի ողբերգական դրվագներից մեկն է[41]: Թեև 1992 և 1993 թթ. տեղի ունեցած ադրբեջանական զինված հարձակումներից յուրաքանչյուրը Լեռնային Ղարաբաղում առաջացրեց մարդասիրական աղետ, որը մոտ 60 % հայկական բնակավայրերի հայաթափման և Ղարաբաղի մայրաքաղաք Ստեփանակերտի դաժան հրետակոծումների ու օդային հարվածների հետևանք էր, այնուամենայնիվ Ադրբեջանին չհաջողվեց իրականացնել Լեռնային Ղարաբաղի բնիկ հայերի զանգվածային տեղահանում, ինչը ակնհայտորեն տարբերվում է Կոսովոյի դեպքերից: Երբ Լեռնային Ղարաբաղի պաշտպանական ուժերը ազատագրեցին Ղարաբաղի այն տարածքները, որոնք գավթված էին ադրբեջանցի զինվորականների կողմից, հայ փախստականները վերադարձան իրենց տները՝ առանց արտասահմանի մարդասիրական զինված միջամտության:

Հետաքրքրական է, որ սերբական և ադրբեջանական կառավարությունները Կոսովոյի ալբանացիների և Ղարաբաղի հայերի դեմ ուղղված իրենց ազգայնամոլական խաչակրաց արշավանքներն սկսեցին գրեթե միաժամանակ՝ 1987 թ. կեսերին*: Այդ ժամանակ ադրբեջանցիները հանրապետության

Անվտանգության խորհրդի որոշում 1239 (1999), 1999 թ. մայիսի 14, էջ 2: Բովանդակում է հանձնարարություն ՄԱԿ-ի փախստականների գծով հանձնակատարին, միջազգային մարդասիրական օգնությամբ զբաղվող այլ կազմակերպությունների և ուրիշներին՝ ռեսուրսներ հատկացնել փախստականներին և ներքին տեղահանվածներին մարդասիրական օգնություն ցույց տալու համար: Շեշտվում է, որ մարդասիրական իրադրությունը կշարունակի վատթարանալ, եթե ճգնաժամը չստանա քաղաքական լուծում՝ համաձայն Գերմանիայի, Իտալիայի, Կանադայի, Ճապոնիայի, Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի, Ռուսաստանի Դաշնության և Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարների 1999 թ. մայիսի 6-ին որդեգրած սկզբունքների (S/1999/516), և պահանջ է ներկայացվում բոլոր շահագրգռված կողմերին՝ աշխատել այս ուղղությամբ (http://www.unmikonline.org/misc/N9914375.pdf):

[41] Տես «Ethnic Cleansing in Kosovo: an Accounting». «U.S. State Department Report», 1999, December (http://www.state.gov/www/global/human_rights/kosovoii/homepage.html):

* Արևելյան Անդրկովկասի բնիկների թյուրքացմանը միտված ուղեգիծը, ուղեկցվելով Հարավային Կովկասում եկվոր թյուրքերի պատմության մեջ նրանց պատմության ու մշակույթի ներառմամբ, ինչը կատարվում էր Կրեմլի համար ևմահարկվող պրոլետարական ինտերնացիոնալիզմի քողի ներքո, դարձավ Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի գաղտնի էթնոքաղաքականությունը: Այն առաջին հերթին իրականացվում էր՝ իրենց իսկական էթնիկական ծագման նույնականացումից հրապարակավ հրաժարվող թաթերին, թալիշներին, լեզգիներին, ավարներին, քրդերին մասնագիտական և սոցիալական առաջխաղացման համար գաղտնի կերպով արտոնություններ տրամադրելով: Այդ գործընթացի ղեկավարմանը, բացի թյուրքերից, հաճախ մասնակցում էին նաև էթնիկական փոքրամասնությունների այն ներկայացուցիչները, որոնք ներառված էին ընտրախավի կազմում: Նրանք ուռճացած ուրացողական ազգայնականության դիմաց որպես պարգև շնորհվող արտոնությունների ձեռքբերման, բարեհաջող կարիերայի և բարեկեցության սեփական օրինակով իրենց դեռ չթյուրքացած ցեղակիցներին ցուցադրել և ցուցադրում են ադրբեջանացման-թյուրքացման գերադասելիությունը:

Ի վնաս հարևան պետության բնիկ ժողովուրդների իրավահավասարության իրականացվող տիտղոսային ազգի գերակայության պաշտոնական քաղաքականությունը իր անդրադարձն է ստանում տարածաշրջանի ժողովուրդների գիտական պատմության նպատակաուղղված վերափոխմամբ՝ միտված նրանց ազգային ինքնության ադճատմանը, ինչպես նաև Արևելյան Անդրկովկասի մշակույթի պատմական զարգացման գործում բնիկների տեղի ու դերի նվազեցմանը: Պատմական նենգափոխումների քաղաքականության մեջ հատուկ տեղ է հատկացվում Լեռնային Ղարաբաղում և Հայաստանում բնիկ հայերի հազարամյա բնակման տարածքներին տիրելու՝ Ադրբեջանի պատմական իրավունքի հիմնավորումը: Ինչպես երևում է Գիտությունների ազգային ակադեմիայի հոբելյանական ժողովում Նախագահ Ալիևի զեկուցման տեքստից, նա 2005 թ. դեկտեմբերի 14-ին տվեց Արևելյան Անդրկովկասի պատմության նենգափոխման քաղաքական պատվեր (տես «Речь Президента Азербайджана Ильхама Алиева на торжественном собрании, посвященном 60-летию Национальной Академии наук» (14-12-2005 14:15) (http://www.president.az./print.php?item_id=20070810012543 5235&sec_id=11)):

Համատարած հատուկ բարոզչությամբ գիտական պատմության նենգափոխման պետական քաղաքականության հետևանքով ստեղծվում է Արևելյան Անդրկովկասի ժողովուրդների՝ իրականությանը լրիվ հակասող հակագիտական պատմություն, որը հորինվում է իշխանությունների ընդերքում:

Միջազգային ակադեմիական հանրությունը արդեն արձանագրում է հարևան պետության ղեկավարի քաղաքական պատվերի իրացման կոնկրետ փորձեր՝ հնացնելու Արևելյան Անդրկովկասի՝ Պարսկաստանին ենթակա տարածքում թյուրքերի պարփակ բնակման պատմությունը: Հարավային Կովկասում թյուրքերի 900-ամյա բնակման գիտական փաստը Բաքվի իշխանություններին ներկայանում է որպես անընդունելի չափով փոքր ժամանակահատված: Վեղծարարները փորձում են երկարաձգել այդ պատմությունը՝ այն տանելով 10 հազար տարով հետ, ընդհուպ մինչև այն ժամանակները, երբ բարի դարի Գոբուստանի նախամարդն ստեղծել էր միջին քարեդարյան նյութական արժեքներ: Անցյալի այս՝ վերևից պատվիրված, խեղաթյուրումները տոգորված են «Ադրբեջան» իրանական տեղանվան հետ կատարվող ձեռնածություններով՝ Պարսկաստանի անդրկովկասյան նախկին նահանգների նկատմամբ այդ տերմինի հակագիտական կիրառմամբ այն ժամանակաշրջանների համար, որոնք եղել են շատ ավելի վաղ, քան այդ տերմինին սկսել է քաղաքականապես կիրառվել Արևելյան Անդրկովկասում թյուրքերի բնակման տարածքի նկատմամբ: Հայտնի է, որ Ռուսական Կայսրության պաշտոնական փաստաթղթերում կովկասյան նահանգների թյուրքերը՝ որպես «ադրբեջանցիներ», և նրանց տարաբնակեցման տարածքը՝ որպես «Ադրբեջան», նույնպես հիշատակված չեն: Մի խոսքով՝ «ԽՍՀՄ-ը անկանխատեսելի անցյալ ունեցող երկիր է» հայտնի կատակը լիովին վերաբերում է Ադրբեջանին, որտեղ իշխանությունների պատվերով գրվում է տարածաշրջանի նոր պատմություն՝ նստակյաց բնիկ ժողովուրդների և եկվոր քոչվոր ցեղերի տեղի ու դերի արմատական փոփոխմամբ: Հենց այդ ձեռնածվական դիրքերից էլ Բաքվի իշխանությունները «ադրբեջանական ժողովրդի դեմ» կատարված հանցագործություններ են վերագրում հայերին նույնիսկ այն ժամանա-

հյուսիսարևմտյան մասում գտնվող հայաբնակ Չարդախլու գյուղում կազմակերպեցին հակահայկական բռնաճնշումներ, իսկ Հարավսլավիայում Սլոբոդան Միլոշևիչի կարգադրությամբ հրապարակվեց Սերբիայի արվեստների և գիտությունների ակադեմիայի տխրահռչակ հուշագիրը, որում, ինչպես ցույց տվեցին հետագա զարգացումները, նախանշվում էին Բալկաններում դժբախտությունների ուղեցույցները: Իրենց մարզը Խորհրդային Հայաստանի իրավաենթակայությանը հանձնելու խնդրանքով խորհրդային ղեկավարությանն ուղղված ղարաբաղահայերի դիմումներին Ադրբեջանը պատասխանեց 1988–1989 թթ. Սումգայիթում և Կիրովաբադում (այժմ՝ Գյանջա), իսկ ավելի ուշ՝ 1990 թ., Բաքվում կազմակերպված տեղաբնակ հայության դաժան ջարդերով[42]:

Անսպասելի չէր, որ, երբ Ղարաբաղի հայկական զինված ուժերը 1992 թ. նախաձեռնեցին գլխավոր հակահարձակումը՝ ադրբեջանական բանակի կողմից մարզը ավելի քան երկու տարի խեղդամահ անող շրջափակումը ճեղքելու նպատակով, նրանք շահագրգռված չէին համոզելու Լեռնային Ղարաբաղում և շրջակա տարածքներում խուճապի մատնված ադրբեջանցի քաղաքացիական բնակչությանը՝ չլքել իրենց բնակավայրերը: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ ադրբեջանական բնակչության արական հատվածը մասնակցել էր հայերի դեմ ձեռնարկված մարտական գործողություններին և, փաստորեն լինելով «կոմբատանտների» ընկերակցություն ու վախենալով վրեժխնդրությունից, ադրբեջանական զորքի հետ հեռացել էր Ղարաբաղից: Այնուամենայնիվ, ի հակադրություն Հարավսլավիայի ոստիկանության կողմից Կոսովոյի ալբանացիների ջարդերի, հայերի գրաված տարածքներից ադրբեջանցի խաղաղ բնակչության հեռացումը, առանձին սակավաթիվ դեպքերից բացի, ոչ թե Ղարաբաղի ղեկավարության կողմից կանխամտածված ծրագրի արդյունք էր, այլ իրենց հայ հարևանների դեմ զինյալ աշխարհազորայինների դերում գենք կիրառած ադրբեջանցի տղամարդկանց ընտանիքների զանգվածային փախուստի ինքնաբերական խուճապային արձագանք: Ղարաբաղում տեղի հայ բնակչությունը մոբիլիզացվեց ճնշող թվային գերազանցություն ունեցող ադրբեջանական բանակի հարձակումը հետ մղելու համար, և ի պատասխան ագրեսիայի՝ ծավալված գործողությունների ժամանակ չծրագրված կորուստ-

կաշրջաններում, երբ ներկայիս ադրբեջանցիների թյուրք նախնիները Կենտրոնական Ասիայից դեռ չէին էլ ներթափանցել Հարավային Կովկաս:

[42] Տես *Adrian Lyttelton, Agnes Heller, Alain Finkielkraut, Andre Gluecksmann, Benjamin L. Hooks, Charles Taylor, David Aaron, Emmanuel Levinas, Hans-Georg Gadamer, Hilary Putnam, Isaiah Berlin, Jacques Derrida, Jacques Poulain, Jerome J. Shestack, Juergen Habermas, Leszek Kolakowski, Luc Ferry, Paul Ricoeur, Reginald E. Zelnick, Reiner Wiehl, Richard Rorty, Vartan Gregorian, William M. Chace.* An Open Letter on anti-Armenian Pogroms in the Soviet Union (սա Ֆրանսիայում Հելսինկյան պայմանագրի վերահսկիչ կոմիտեի և Փարիզի Փիլհարմոնիայի միջազգային քոլեջի մտավորականների համատեղ նախաձեռնությունն էր): «The New York Review of Books», 1990, 27 September, Vol. 37, № 14 (http://www.nybooks.com/articles/3505):

ներ կրեց նաև հակառակորդի խաղաղ բնակչությունը, մինչդեռ դա կանխամտածված կերպով էր արվել Կոսովոյի ազատագրական բանակի կողմից:

Լեռնային Ղարաբաղում ակտիվ ռազմական գործողություններն ավարտվեցին 1994 թ. մայիսին՝ Ռուսաստանի միջնորդությամբ կնքված զինադադարով: Այդ ժամանակ Ղարաբաղի հայկական ուժերն իրենց հսկողության տակ էին առել Լեռնային Ղարաբաղի տարածքի մեծ մասը՝ բացառությամբ Մարտունու և Մարտակերտի շրջանների որոշ արևելյան հատվածների և հյուսիսում՝ ամբողջությամբ Շահումյանի շրջանի: Բացի այդ, նրանք, վերահսկողության տակ առնելով Քելբաջարի, Լաչինի, Քուրթալիի, Զանգելանի և Ջեբրայիլի շրջաններն ամբողջությամբ և տարածքներ Ֆիզուլու ու Աղդամի շրջաններից, մարզի շուրջն ստեղծեցին անվտանգության՝ «Գոլանի բարձունքների» տիպի մի յուրօրինակ գոտի: Սա կրճատեց ռազմաճակատի գիծը և Ղարաբաղի հայերին հնարավորություն տվեց իրենց հայրենիքը հաջողությամբ պաշտպանելու թվապես գերազանցող և ավելի լավ սպառազինված ադրբեջանական բանակի հետագա հնարավոր ներխուժումից:

4.1. ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ԱՋԴԱԿԻ ՄԽԱԼ ԸՄԲՌՆՈՒՄ

Կոսովոյում սերբական բռնաճնշումները դադարեցնելու նպատակով ՆԱՏՕ-ի արշավը մեծ արձագանք է ստացել Բալկաններից դուրս: Այժմ, երբ էթնիկական զտմանը նպատակաուղղված Ադրբեջանի գործողությունները ձախողվել են շնորհիվ Լեռնային Ղարաբաղի զինված ուժերի հակահարվածի, Բաքվում որոշ քաղաքական ուժեր փնտրում են արտաքին աջակցություն՝ փորձելով գտնել ՆԱՏՕ-ի նոր միջամտությունից օգտվելու միջոցներ: Նրանք հույս ունեն, որ Կասպից ծովի նավթի և գազի պաշարները, Բաքվի իշխանությունների կողմից ցուցադրական կողմնակցությունը դեպի արևելք ՆԱՏՕ-ի ծավալման այսօրվա նախաձեռնությանը և իրենց սերտ կապերը այդ կազմակերպության անդամ Թուրքիայի հետ վաղ թե ուշ կգայթակղեն ՆԱՏՕ-ին՝ Ղարաբաղյան հակամարտության մեջ ներգրավվելու ադրբեջանցիների կողմից: Մասամբ նույն կերպ Ադրբեջանը շահարկում էր Խորհրդային Միության կոմունիստական կուսակցության ադրբեջանամետ դիրքորոշումը Ղարաբաղյան հակամարտության սկզբնական շրջանում:

Մոսկվայում կենտրոնական իշխանության պահպանողական տարրերը հակաբռնապետական ղարաբաղյան շարժումը համարում էին վտանգավոր և կոմունիստական վարչակարգի սկզբունքների դեմ ուղղված: 1991 թ. Մոսկվայի և Բաքվի միջև ձևավորված համագործակցությունն իր այլասերված դրսևորումն ստացավ այսպես կոչված «Օղակ» օպերացիայի ձևով, մի ռազմաքաղաքական ձեռնարկման, որի նպատակն էր Հյուսիսային Արցախի բնիկ հայերի էթնիկական զտումը: Այս օպերացիան, որը համատեղ իրականացրին խորհրդային բանակի դեսանտայինները և Ադրբեջանի միլիցիայի հատուկ նախանշա-

նակման ուժերի՝ ՕՄՕՆ-ի պատժիչ ստորաբաժանումները, գոեհիկ փորձ էր՝ դարաբաղյան պրոբլեմը «լուծելու» ԽՍՀՄ փլուզմանն անմիջականորեն նախորդող ժամանակաշրջանում, երբ Կրեմլում հատկապես ուժեղ էր Միխայիլ Գորբաչովի դեմ գործող հակաժողովրդավարական ընդդիմությունը: «Օղակ» օպերացիայի իրական նպատակն էր անձնագրերի ստուգման քողի տակ հայերին դուրս քշել Լեռնային Ղարաբաղի քսանչորս ծայրամասային գյուղերից: Դա հանգեցրեց բռնությամբ ու մարդու իրավունքների պարբերական ոտնահարմամբ հարյուրավոր հայերի ձերբակալման ու կալանման, իրենց տներից հազարավոր հայ ընտանիքների տեղահանման: Այն բոլոր վայրերում, որտեղ կազմակերպվեց դիմադրություն, ինչպես, օրինակ, Գետաշենում (Չայքենդ), խորհրդային «հատուկ նախանշանակման ջոկատի» դեսանտայինների աջակցությամբ գործող ադրբեջանական ջոկատների անխնա կրակով սպանվեցին խաղաղ բնակիչներ:

Թվում է՝ Ադրբեջանը չցանկացավ հասկանալ այն արմատական տարբերությունը, որ գոյություն ունի ՆԱՏՕ-ի դաշնակցային ուժերի գործողությունների մարդասիրական բնույթի և Մոսկվայի՝ 1990-ական թվականների սկզբներին ղարաբաղյան ժողովրդավարական շարժման դեմ ուղղված բռնաճնշիչ գործողությունների միջև: Զարմանալի է նաև այդ առնչությամբ Բելգրադի և Բաքվի դիրքորոշումների նմանությունը, քանի որ երկուսն էլ ՆԱՏՕ-ն դիտում են որպես մի ուժի, որը պատրաստ է գրավելու աշխարհը: Տարբերությունն այն է, որ Բելգրադը խորապես անհանգստացած էր ՆԱՏՕ-ի գործողություններով, մինչդեռ Բաքուն փորձում է բարեկամանալ ՆԱՏՕ-ի հետ, որպեսզի տարածաշրջանի իր թշնամիներն ընդգրկվեն այն երկրների ցանկում, որոնք ապագայում պետք է «ահաբեկվեն» ՆԱՏՕ-ի կողմից: Բաքվի այն քաղաքական շրջանները, որոնք կողմ են Ղարաբաղի հայերի հետ նոր պատերազմի միջոցով դարաբաղյան հարցի ուժային լուծմանը, հուսով էին, որ երբ ՆԱՏՕ-ն ձեռնամուխ լինի Կովկասում խաղաղության պարտադրման կամ խաղաղապահության իրեն առաջարկվող օպերացիային, «անելանելիության» ռազմավարության տրամաբանությունը նրան կստիպի շատ արագ ներքաշվելու հակամարտության մեջ՝ ընդլայնելով իր գործողությունները, դրանք դարձնելով ինքնաբացատրելի և ինքնարդարացվելի, առանց հաշվի առնելու բարոյական, քաղաքական ու նյութական վնասները: Հավանական է, որ այդ ադրբեջանական օղակները ակնկալում էին, որ ՆԱՏՕ-ն Ադրբեջանին կօգնի Լեռնային Ղարաբաղից դուրս քշելու էթնիկ հայ բնակչությանը այն նույն ձևով, ինչպես 1991 թ. խորհրդային բանակը և ԽՍՀՄ ՆԳՆ-ն օգնում էին Ադրբեջանին էթնիկական զտման գործողություններում[43]:

[43] Տես *Caroline Cox and John Eibner.* Ethnic Cleansing in Progress, War in Nagorno Karabakh (http://www.nkrusa.org/nk_conflict/ethnic_cleansing_campaigns.shtml):

Թվում է՝ տարածաշրջանի երկրների բնեռացումը Հարավսլավիայի վրա ՆԱՏՕ-ի օդային հարձակումների ընթացքում մեկ այլ գործոն է, որն Ադրբեջանը ձգտում է օգտագործելու որպես Ղարաբաղի հայերի վրա ճնշման միջոց, գտնելու իր գոյատևման բանաձևը՝ բախտը կապելով Կովկասում արհեստականորեն վերակառուցված մի նոր «սառը պատերազմի» իրավիճակի հետ: Դրան հակառակ, Հայաստանն իր անվտանգության խնդիրները լուծում է՝ կիրառելով այսպես կոչված «փոխլրացման ռազմավարություն», այսինքն՝ ՆԱՏՕ-ի ու ՀԱՊԿ-ի, ինչպես նաև ԱՄՆ-ի ու Ռուսաստանի՝ որպես տարածաշրջանային անվտանգության նոր համագործակցային բանելակարգում իր գործընկերների հնարավոր մերձեցմանը նպաստելու քաղաքականություն:

Եթե Հարավսլավիային ՆԱՏՕ-ի հասցրած օդային հարվածներն ուղղակի պատասխան էին Կոսովոյում սերբական ոստիկանության ձեռնարկած պարբերական էթնիկական զտումների, որոնց կոդային անվանումն էր «Պայտ», ապա Լեռնային Ղարաբաղում պատերազմը պաշտոնապես ավարտվեց կրակի դադարեցման համաձայնագրի ստորագրմամբ, որը տեղի ունեցավ 1988 թ. սկսված հակամարտության 6-րդ տարում: Այսպիսով՝ առկա իրավիճակում այս գոտում չկա քաղաքացիական բնակչությանը ոչնչացումից փրկելու համար միջազգային մարդասիրական ռազմական ուժեր մտցնելու անհրաժեշտություն:

ԱՄՆ-ի պաշտոնյաները և ՆԱՏՕ-ի ներկայացուցիչները մերժեցին Ադրբեջանի նորագաղութարարների փորձերը՝ օգտագործելու Կոսովոյի ճգնաժամը: ՆԱՏՕ-ի արտաքին հարաբերությունների խորհրդի նիստում, որը կայացավ հունիսի 28-ին Նյու Յորքում, ԱՄՆ-ի պետքարտուղար Մադլեն Օլբրայտն ասաց. «Ոմանք հույս ունեն, իսկ ոմանք էլ վախենում են, որ դա (Կոսովոն.– *Հ. Ք.*) նախադեպ կդառնա ամբողջ աշխարհում ՆԱՏՕ-ի կողմից նմանատիպ միջամտությունների համար: Ես կցգուշացնեի, որ նման անհիմն հետևություն չարվի»[44]: Մադլեն Օլբրայտի դիրքորոշմանը հետագայում կողմ արտահայտվեց նաև ՆԱՏՕ-ի նախկին Գլխավոր քարտուղար Խավիեր Սոլանան, որը նույնպես դեմ արտահայտվեց Ղարաբաղյան հակամարտության մեջ ՆԱՏՕ-ի ներքաշմանը:

2001 թ. ԱՄՆ-ում տեղի ունեցած ահաբեկչական հարձակումներից հետո Ադրբեջանի նորագաղութարարական կառավարությունն սկսեց դիմել նոր խորամանկությունների: Նա փորձում է ամերիկյան հակաահաբեկչական ռազմավարությունը կիրառել ընդդեմ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակչության: Ադրբեջանցի քարոզիչները փորձում են Ղարաբաղը ներկա-

[44] EPF202 06/29/99. «Transcript: Albright Remarks to Council on Foreign Relations», 28 June (U.S. action in Kosovo is «unique», Secretary of State says) (2850), «USIS» Washington File, 1999, 28 June (http://canberra.usembassy.gov/hyper/WF990629/epf202.htm).

յացնել որպես այսպես կոչված «մոխրագույն գոտի», որն իբր ապաստան է տալիս հանցագործների և ահաբեկչական խմբերի[45]: Նպատակը նույնն է. ՆԱՏՕ-ի ուղղությամբ Ադրբեջանի առաջխաղացման կողմնակիցների շրջանում ապատեղեկույթ տարածելով՝ գայթակղել ԱՄՆ-ին և Դաշինքը՝ ներգրավվելու ընդդեմ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ծավալվելիք պատժիչ գործողություններում: Այս պարագայում տեղին է ԱՄՆ-ի Ազգային անվտանգության ռազմավարությունից մեջբերել հետևյալ հատվածը:

«Տարածաշրջանային հակամարտությունների լարվածության թուլացման համար համագործակցել այլոց հետ: Շահագրգռված պետությունները պետք է շարունակեն ակտիվորեն մասնակցել տարածաշրջանային կրիտիկական վեճերին՝ հակամարտության պայթյունավտանգ սրումից խուսափելու և մարդկային տառապանքը նվազեցնելու համար: Ծայրաստիճան կապակցված աշխարհում տարածաշրջանային ճգնաժամը կարող է լարվածություն ստեղծել մեր դաշինքներում, գերտերությունների միջև մրցակցություն բորբոքել և սարսափելի վիրավորանք հասցնել մարդկային արժանապատվությանը: Երբ ժայթքում է բռնություն, և պետությունները անկայուն վիճակում են հայտնվում, ԱՄՆ-ը պատրաստ է համագործակցելու բարեկամների ու գործընկերների հետ, մեղմելու տառապանքն ու վերականգնելու կայունությունը: Ոչ մի դոկտրին չի կարող կանխատեսել այն բոլոր հանգամանքները, որոնցում ԱՄՆ-ի գործողությունները՝ ուղղակի կամ անուղղակի, երաշխավորված լինեն: Մեր համընդհանուր գերակայություններն իրականացնելու համար մենք ունենք սահմանափակ քաղաքական, տնտեսական ու ռազմական ռեսուրսներ: ԱՄՆ-ը յուրաքանչյուր դեպքի կվերաբերվի՝ ելնելով հետևյալ ռազմավարական սկզբունքներից.

- ԱՄՆ-ը պետք է ժամանակ և ռեսուրսներ ներդրի այնպիսի միջազգային հարաբերություններ ու հաստատություններ կառուցելու համար, որոնք կօգնեն հաղթահարելու տեղական ճգնաժամերը՝ դրանց առաջացման դեպքում,
- ԱՄՆ-ը պետք է իրատեսական լինի իր կարողություններում, երբ օգնում է նրանց, ովքեր չեն ցանկանում կամ պատրաստ չեն իրենք իրենց օգնելու: Երբ և որտեղ մարդիկ պատրաստ կլինեն իրենց բաժինն անելու, մենք պատրաստ ենք վճռակամորեն գործելու»[46]:

[45] Տես *Azad Isadzade*. Sociopolitical and Cultural self-Identification Factor. «The South Caucasian Countries on the Road to Europe. On the Results of a Joint Conference of the Concord Center and the F. Ebert Foundation». Sevan, 2003, 23–27 June (http://www.ca-c.org/journal/eng-05-2003/16.hjaprimen.shtml):

[46] «U.S. National Security Strategy: Work with others to Defuse Regional Conflicts». US Department of State (http://www.state.gov/r/pa/ei/wh/c7889.htm).

Մեր տեսակետից՝ որպես այս գլխի տրամաբանական եզրափակում շատ տեղին և ժամանակին կլինի մեջբերել Նախագահ Ջորջ Բուշի հետևյալ միտքը ԱՄՆ-ի Ազգային անվտանգության ռազմավարության ներածականից (Գերմանիա, 2002 թ. մայիսի 23). «Մենք կառուցում ենք արդարության աշխարհ, հակառակ դեպքում մենք կապրենք բռնության աշխարհում: Մեր ընդհանուր պատասխանատվությունների մեծության առաջ մեր տարաձայնությունները այնքան փոքր են երևում»:

ԱՄՆ-ի Նախագահի այս համընդգրկուն գաղափարները հաստատում են այն միտքը, որ Հարավային Կովկասում, ներառյալ՝ Աբխազիայի, Լեռնային Ղարաբաղի և Հարավային Օսեթիայի հակամարտությունների գոտիները, տարածաշրջանային անվտանգության իրական դինամիկայի մշտազննման միջազգային համակարգի առկայությունը Հարավային Կովկասի տարածաշրջանում փխրուն կայունության ու անվտանգության արդարացի գնահատումների և դրանց պահպանման ուղղված հուսալի համագործակցային պատասխանատու ջանքերի երաշխիքներից մեկն է:

4.2. ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

Ժողովրդավարական զարգացումը և ինքնակառավարումը ժամանակակից քաղաքականության մշակման իրողություններ են և՛ Լեռնային Ղարաբաղում, և՛ Կոսովոյում: Լեռնային Ղարաբաղում այս գործընթացները տվյալ փուլում ավելի ցայտունորեն են արտահայտված: Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը (ԼՂՀ) ժողովրդավարական պետություն է, որը կիրառում է նախագահական հանրապետության եվրոպական մոդելը: Նախարարների կաբինետի 13 նախարարություններն ու գերատեսչությունները ղեկավարում է վարչապետը[47]: Ժողովուրդն օրենքին համապատասխան ընտրում է Նախագահ հինգ տարի ժամկետով: Միևնույն անձը չի կարող ընտրվել ավելի քան երկու ժամկետով: Նախագահի՝ որպես պետության և ժողովրդի անվտանգության երաշխավորի հիմնական պարտականությունն է արտաքին ու ռազմական քաղաքականությունների ձևավորումն ու իրականացումը, բոլոր պետական հաստատությունների բնականոն գործունեության ապահովումը:

Ազգային ժողովը հանրապետության բարձրագույն օրենսդիր ներկայացուցչական մարմինն է: Նախագահը վավերացնում է Ազգային ժողովի ընդունած օրենքները: Ազգային ժողովն իր պարտականությունները կատարում է «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի մասին» օրենքում ձևակերպված դրույթների համաձայն: Խորհրդարանի անդամներն ընտրվում են հինգ տարի ժամկետով: Վերջին խորհրդարանական ընտրությունները հա-

[47] Տես «Nagorno Karabakh Republic. Authorities: The President of the NKR, the Government of the NKR, the Parliament of the NKR (National Assembly)» (http://nkr.am/eng/gov/parl.htm):

ջողությամբ անցկացվեցին 2005 թ. հունիսին[48]: Մշտական խորհրդարանական հանձնաժողովները նախապատրաստում ու քննարկում են օրինագծեր և այլ հարցեր, որոնք գտնվում են Ազգային ժողովի իրավասությունների ոլորտում:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Պաշտպանության բանակը կայացած կանոնավոր ռազմական կազմակերպություն է, որն ակտիվ կերպով ներգրավված է Հարավային Կովկասում կրակի դադարեցման ու կայունության հաստատման գործում: Նրա արդի կարողություններն ու պատրաստվածությունը, ինչպես նաև միջազգային մարդասիրական կազմակերպությունների (հատկապես՝ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի) ներկայացուցիչների հետ համագործակցելու պատրաստակամությունը ճանաչված են ամերիկյան և միջազգային փորձագետների կողմից[49]:

Լեռնային Ղարաբաղի քաղաքական վարչակարգն ու անկախ դատական համակարգը գործում են օրենսդրի կողմից ժողովրդավարորեն (ժողովրդավարական ընթացակարգերի հիման վրա) մշակված օրենքների շրջանակներում (խորհրդարանն արդեն ընդունել է մոտ 200 օրենք, որոնք օրինական կարգով կարգավորում են պետական և քաղաքացիական կյանքի տարբեր կողմեր)[50]:

Ժողովրդավարական պետութենաշինության նմանատիպ գործընթաց Կոսովոյում ձեռնարկել է Միավորված ազգերի կազմակերպությունը: Կոսովոյում ՄԱԿ-ի հատուկ ներկայացուցչի առաջարկած բանաձևումներին համապատասխան հաստատվել է նաև ժամանակավոր ինքնակառավարման սահմանադրական շրջանակը:

[48] Տես «NKR Parliamentary election: Nagorno Karabakh Successfully Concluded Its Fourth Parliamentary Elections». «Permanent Mission of the Republic of Armenia to the United», 2005, 20 June (http://www.nkrusa.org/news/daily_news.php?id=82):

[49] «Հայաստանի բանակն ամենաուժեղն է Հարավային Կովկասում, իսկ առանձին ստորաբաժանումներ՝ նաև ԱՊՀ-ում, շնորհիվ ազգային ամուր կամքի, հրամանատարական փորձի և լավ սպառազինության: 2000 թվականի կեսերի տվյալների համաձայն՝ նրա զորակազմի թվաքանակը 44000 է», «20000–25000 հոգուց բաղկացած Ղարաբաղի բանակն էլ ավելի ամուր է, քան Հայաստանինը: Երկաթյա կարգապահությունը և ջերմեռանդ հայրենասիրությունը բնորոշում են Ղարաբաղի հայ բնակչությանը: Նրանք նաև ունեն ռազմական դարավոր ավանդույթներ. Ղարաբաղը Խորհրդային Միությանը տվել է երեք մարշալ, մարշալին համազոր մեկ ծովակալ և 30 գեներալ»: Մեջբերումներն արված են «Կենտրոնական Եվրասիայի ռազմավարական գնահատական» գիտահետազոտական զեկույցից: Այն հրատարակված է ԱՄՆ-ի CACI-ի և «Atlantic Council»-ի կողմից՝ ԱՄՆ-ի Շտաբների պետերի միավորված կոմիտեի խնդրանքով: 2001 թ. փետրվար, էջ 59, 60–61 (http://www.acus.org/docs/0101-Strategic_Assessment_Central_Eurasia.pdf):

[50] Տես «List of laws, adopted by the NKR National Assembly» (http://nkr.am/eng/gov/zakon.htm):

Այս համեմատական վերլուծությունն ապացուցում է, որ ինչպես Լեռնային Ղարաբաղում, այնպես էլ Կոսովոյում, թեև արտաքին միջամտության շնորհիվ, տեղի է ունենում շարունակական ժողովրդավարական զարգացում, որն իր հերթին հաստատուն հենասյուն է ժողովուրդների ինքնորոշման իրավունքը[51]:

5. ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԷԹՆԻԿԱԿԱՆ ԱՆՀԱՄԱՉԱՓՆՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄ. ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ (ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ)

Խորհրդային Միության փլուզումը հնարավորություն տվեց վերացնելու Ստալինի ամբողջատիրական քաղաքականության զոհերի՝ կախյալ էթնոքաղաքական գոյացությունների գաղութային ենթարկումը խորհրդային հանրապետություններին: Այդ քաղաքական գոյացությունների սեցեսիոնիստ առաջնորդները նշում են, որ ԽՍՀՄ փլուզման ընթացքում իրենց երկրները ապագաղութացել են, ուստի պետք է դիտվեն իբրև ինքնիշխան պետություններ: Հակառակ դրա, խորհրդային հանրապետությունների գաղութատեր–«տիտղոսային» ազգերը պատրաստ չեն համակերպվելու խորհրդային ժամանակաշրջանում իրենց պատկանող տարածքների նկատմամբ վերահսկողության կորստի հետ[52]:

Անկախացած քաղաքական գոյացությունների ուժային (հարկադիր) «վերամիավորման» վրա հիմնվող հանգուցալուծումը չի կարող արժանանալ նախկին խորհրդային հանրապետություններից անջատված էթնիկ ինքնավարությունների և նրանց անվտանգության տարածաշրջանային երաշխավորների աջակցությանը: Միևնույն ժամանակ, ենթադրվում է, որ Ռուսաստանը, Վրաստանը և Ադրբեջանը չեն համաձայնվի ճանաչել անջատված շրջանների լիակատար անկախությունը՝ առանց միջազգայնորեն դեկավարվող որոշակի ընթացակարգի, որը օրինականացներ անջատման քաղաքական, ժողովրդագրական ու բարոյական իրողությունները:

[51] Տես «Constitutional Framework for Provisional self-Government». US Office, Prishtina, Kosovo, UNMIK/REG/2001/9. 2001, 15 May (http://www.unmikonline.org/constframework.htm):

[52] Տես *Հ. Ս. Քոթանջյան*, Ղարաբաղյան հակամարտության լուծման առանձնահատկությունները (քաղաքագիտական փորձաքննություն): «Ղարաբաղ. հակամարտություն–համաձայնություն» պատմաքաղաքագիտական ժողովածու: «Հայկական բանակ», 1997:

Առավել հավանական է, որ Հարավային Կովկասում (Աբխազական, Ղարաբաղյան, Հարավօսեթական հակամարտություններ) բանակցությունների փակուղին կարող է հաղթահարված լինել Կովկասի երկրները միավորող նոր քաղաքական-իրավական ճարտարապետության հետևյալ այլընտրանքային պայմաններով[53]:

- արևմտյան տիպի բազմազգ ժողովրդավարությունների համադաշնություն՝ իբրև հակամարտության ազգային-էթնիկական կողմերի միջև բանակցությունների մեկնարկային հիմք[54],
- «ընդհանուր պետության»[55] ստեղծում, ինչը կհամապատասխանի ինչպես տարածքային ամբողջականության սկզբունքին, այնպես էլ ժողովուրդների ինքնորոշման իրավունքին, երաշխավորված անվտանգության պայմաններում կապահովի անջատված էթնիկ համայնքների հավասար կարգավիճակն ու օրենսդրորեն հավասար իրավունքները և ներքին ու արտաքին քաղաքականության մեջ համադաշնության քաղաքական-իրավական մասնակիցների միջև ոչ աստիճանակարգված հարաբերությունները,
- ժողովրդական հանրաքվեների անցկացում (ՄԱԿ-ի և ԵԱՀԿ-ի կողմից), որոնցով վերջնականապես կհաստատութեեացվեն Աբխազիայի, Հարավային Օսեթիայի և Լեռնային Ղարաբաղի կարգավիճակները:

Ղարաբաղի հակամարտության կարգավորման համար պատասխանատու ԵԱՀԿ Մինսկի խմբի դիրքորոշումը վկայում է, որ ԱՄՆ-ը, Ֆրանսիան և Ռուսաստանը ցանկանում են հասնել Ղարաբաղյան հակամարտության խաղաղ լուծմանը, որը հիմնված լինի փոխզիջումների վրա: Որո՞նք են այդ փոխզիջումները, և որո՞նց կարող է համաձայնվել հայկական կողմը:

Որպես սկզբունքային փոխզիջում հայության ազգային առաջնորդներն ընդունում են այն փաստը, որ Հայաստանը դեռևս պաշտոնապես չի ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, թեև այն հիմնադրվել է օրենքի պահանջներին համապատասխան և տարիներ ի վեր գոյություն ունի որպես անկախ, ժողովրդավարական ուղիով զարգացող պետություն: Դա կարող է դիտվել իբրև բարի կամքի արտահայտություն՝ միայն ուղղված Մինսկի խմբի գործողություններին աջակցությանը: Այս փոխզիջումը նաև ներդաշնակ է Եվրոպայի խորհրդի հունվարի 25-ի հմ. 1416 բանաձևին, ըստ որի՝ տարածաշրջանի (Լեռնային Ղարաբաղ) անջատումը կամ անկախացումը երկրից (Ադրբեջան) հնարավոր է միայն տարածաշրջանի ժողովրդի ժողովրդավարական համաձայնությանը կամ արտահայտմանը համապատասխան[56]:

Այս համատեքստում հետաքրքրություն է ներկայացնում ՆԱՏՕ-ի Խորհրդարանական վեհաժողովի Գերագույն խորհրդի նախագահ պարոն Պիեր Լելուշի առաջարկը: Համաձայն այդ առաջարկի՝ նպատակահարմար է Լեռնային Ղարաբաղի բնակչության ժողովրդավարական ինքնորոշման հարցը լուծելու նպատակով նրա համար կազմակերպել լրացուցիչ հանրաքվե[57]:

Հայաստանի երկրորդ սկզբունքային փոխզիջումը կարող է հիմնված լինել հենց այս առաջարկության վրա: Հայկական կողմը, շեշտելով 1991 թ. կայացած հանրաքվեի օրինապատշաճությունը, կարող է համաձայնվել հանրաքվեի կազմակերպմանը Լեռնային Ղարաբաղում և նախկին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի բնակիչներով բնակեցված ադրբեջանական շրջաններում, եթե դա արվի ՄԱԿ-ի և ԵԱՀԿ հովանու ներքո: Այս առումով կարող է ուսումնասիրվել և օգտագործվել Կոսովոյում ՄԱԿ-ի ժամանակավոր վարչակազմի փորձը[58]:

Կարևոր է հաշվի առնել նաև այն փաստը, որ Հայաստանը պաշտոնապես հայտարարում է, որ չի պատրաստվում Լեռնային Ղարաբաղը միացնել Հայաստանին: Սա բանալիական մեթոդաբանական հարց է Ղարաբաղյան հակամարտության ճիշտ նույնականացման համար. դա ոչ թե միավորական (իրեդենտիստական) բնույթի, այլ ինքնորոշման խնդիր է: Հետամուտ լինելով մեթոդաբանական ստանդարտներին՝ Հայաստանը կարող է հաստատել իր

[53] Տես *Marco Gestri and Ettore Greco.* Human Rights and Regional Co-operation in the Caucasus. The Role of Georgia (http://www.ciaonet.org/wps/gem01/gem01.pdf):

[54] Տես *Nanette Neuwahl.* Cyprus, Which Way? «Pursuit of a Confederal Solution in Europe». NYU School of Law, Jean Monet Center, 2000 (http://www.jeanmonnetprogram.org/papers/00/000401.html#TopOfPage):

[55] «Ընդհանուր պետության բանաձևը շարունակում է առանցքային մնալ Մինսկի խմբի հետագա բոլոր առաջարկներում, ներառյալ՝ 2001 թվականի սկզբին Ֆլորիդայում և Փարիզում ակտիվ խաղաղ բանակցությունների ընթացքում, ըստ եղած տեղեկությունների, որպես Ալիևի և Քոչարյանի կողմից ընդունելի համարված առաջարկներ» («A Look Back at Armenia since Ter-Petrosian». «Russia and Eurasia Review», 2002, 3 December, Vol. 1, Issue 13):

[56] Տես «Լսումներ Ազգային ժողովում: Ղարաբաղյան հակամարտություն: Ղարաբաղը չի եղել և չի պատրաստվում դառնալ Ադրբեջանի մասը» արտգործնախարար Վ. Օսկանյանի և պաշտպանության նախարար Մեր Սարգսյանի ներկայացումները: «Ազգային ժողովի ամսագիր», 2005 թ. ապրիլ, հմ. 4, էջ 10–14:

[57] Տես «Will Referendum Decide Karabakh's Fate?». Oskanian And Mammediarov Resume Bilateral Meetings. «AZG», «Armenian Daily», 12/01/2005, № 002 (http://www.azg.am/?lang=EN&num=2005011201):

[58] Տես «UNMIC-UN System in Action. United Nations Interim Administration in Kosovo» (http://www.unmikonline.org/unsystem.htm); «OSCE Mission in Kosovo. Elections» (http://www.osce.org/kosovo/13208.html):

դիրքորոշման լիակատար համապատասխանությունը Եվրախորհրդի հմ. 1416 բանաձևում ձևակերպված պահանջներին: Այս փաստը կարող է վճռորոշ ազդեցություն ունենալ հակամարտության լուծման այն վերջնական արդյունքների վրա, որոնցում արտացոլվեն Ղարաբաղի կարգավիճակի հաստատութենացման իրական հեռանկարները:

Նման հանրաքվեն՝ որպես Հարավային Կովկասում հակամարտության լուծման մոդել, կարող է պատշաճ գործիք դառնալ տարածաշրջանային հակամարտությունների բոլոր կողմերի քաղաքական վերնախավերի կայացրած որոշումների ընդունումն օրինականացնելու համար: Այն կարող է նաև Ադրբեջանի ու Վրաստանի վերնախավերի համար դառնալ իրենց «դեմքը պահպանելու» միջոց: Ինքնորոշման նմանօրինակ հանրաքվեն պետք է հաջորդվի հակամարտության ամբողջական լուծման ծրագրով՝ խաղաղության պայմանագրի ստորագրմամբ, պահվող տարածքների հանձնմամբ, իրենց տները փախստականների վերադարձով, շրջափակման ու էմբարգոյի դադարեցմամբ, միջազգային խաղաղապահ ուժերի կողմից մարդկանց անվտանգության ապահովմամբ և համաշխարհային տերությունների ու միջազգային կազմակերպությունների կողմից տրվող երաշխիքներով: Հակամարտությունների նմանօրինակ համընդգրկուն լուծման բանաձևը պետք է մշակեն այդ հակամարտությունների կողմերը՝ ՄԱԿ-ի ու ԵԱՀԿ օժանդակությամբ և նրանց երաշխիքների առկայության պայմաններով:

6. ՀԱՆՐԱՔՎԵՆ՝ ՈՐՊԵՍ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ԵՐԿԱՐԱՏԵՎ ԿԱՑՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Իրողությունն այն է, որ Ադրբեջանին դժվար թե հաջողվի Ղարաբաղի բնակչության մեծամասնություն կազմող հայությանը իր կամքը պարտադրել կա՛մ ևավթի արտահանումներով, կա՛մ առանց դրա, միջազգային ահաբեկիչների ներգրավմամբ[59], որոնց նա սովոր էր վարձելու, կամ այլ արտաքին աջակցությամբ: Նույն առումով քիչ հավանական է Հարավսլավիայի կողմից Կոսովոյի կլանումը: Այժմ անհրաժեշտ է գտնել առկա իրավիճակը պաշտոնապես հաստատութենացնելու խելամիտ ու միջազգայնորեն օրինական ճանապարհ, և Հարավսլավիայի ու Ադրբեջանի վերնախավերին տալ արդարանալու և իրենց բարի համբավը փրկելու հնարավորություն՝ հասարակությունները համոզելով, որ Հարավսլավիայի և Ադրբեջանի ներկայիս կազմում երկու նախկին ինքնավար պետությունների ուժային ընդգրկումը

[59] Տես «Непризнанные государства и международный терроризм». «Новая политика», 3 октября 2005 г.; «После прихода к власти в 1993 г. Гейдар Алиев стал привлекать афганских и чеченских боевиков к войне против Нагорного Карабаха» (http://www.novopol.ru/text3419.html#R1):

ցնորք է: Ինքնորոշման վերաբերյալ հանրաքվեները կծառայեն այդ նպատակին: Վրաստանն այլ դեպք է. Աբխազիայի և Հարավային Օսեթիայի հիմքերը շատ ավելի թույլ են: Աբխազիայի բնակչությունը հակամարտությունից առաջ մեծ մասամբ ուներ ցայտունորեն արտահայտված վրացամետ ուղղվածություն, քանի որ բաղկացած էր զգալի թվով էթնիկ վրացիներից: Կարելի է ենթադրել հեղինակավոր միջազգային կազմակերպությունների վերահսկողությամբ Աբխազիայի կարգավիճակի հաստատութենացման հարցով հանրաքվեի կազմակերպման հնարավորությունը, ընդսմին այդ հանրաքվեն պետք է անցկացվի նախկին Աբխազական ԻԽՍՀ բնակչության շրջանում, որը ներկայումս բնակվում է ինչպես Աբխազիայի սահմաններում, այնպես էլ դրանից դուրս՝ Վրաստանի տարածքում:

Եվ իրոք. իրավական տեսանկյունից Լեռնային Ղարաբաղի հարցը առավել առաջմղվածն է. ինքնորոշման հանրաքվեն արդեն անցկացվել է 1991 թ. դեկտեմբերի 10-ին՝ հաստատելով, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ձևավորվել է խորհրդային օրենսդրությանը համապատասխան: 1990 թ. ապրիլի 3-ի «ԽՍՀՄ-ից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» ԽՍՀՄ օրենքը ինքնավար կազմավորումներին և էթնիկ խմբերին իրավունք տվեց դուրս գալու միութենական հանրապետությունների կազմից և մնալու ԽՍՀՄ-ի կազմում, եթե տվյալ միութենական հանրապետությունը որոշել է դուրս գալ ԽՍՀՄ-ից: Նշված հանրաքվեն անցկացվել է նախքան ԽՍՀՄ պաշտոնական կազմալուծման հռչակագրի ընդունումը (1991 թ. դեկտեմբերի 21, Ալմա-Աթա): Սակայն, եթե լինի անհրաժեշտություն ԼՂՀ անկախության հաստատութենացման, ապա կարելի է ենթադրել նորից հանրաքվե անցկացնելու հնարավորությունը:

Լեռնային Ղարաբաղում անցկացված օրինապատշաճ հանրաքվեի շնորհիվ դարաբաղյան հարցը տարբերվում է հարավկովկասյան այլ տարածաշրջանային պրոբլեմներից: Ի տարբերություն Լեռնային Ղարաբաղից, Հարավային Օսեթիայի հանրաքվեն տեղի ունեցավ 1992 թ. հունվարին, իսկ Աբխազիայի հանրաքվեն կայացավ ավելի ուշ՝ 1999 թ.: Այս հանրաքվեներից ոչ մեկը չուներ միջազգայնորեն ճանաչված պետության իրավանորմատիվ ակտերով հաստատվող հիմք (Լեռնային Ղարաբաղի դեպքում դա ԽՍՀՄ գործող օրենսդրությունն էր)[60]:

[60] Տես «Աբխազիայի Հանրապետության պետական անկախության ակտ», Աբխազիայի Հանրապետության Նախագահ Վ. Արձինբա, Աբխազիայի Հանրապետության ժողովրդական համագումարի խոսնակ Ս. Ջինջոլիա, Աբխազիայի Հանրապետության ժողովրդական համագումարի պատգամավորներ: Սուխում, 1999 թ. հոկտեմբերի 12, *նաև՝* «Չներկայացված ազգերի և ժողովուրդների կազմակերպություններ: Աբխազիա» (http://www.unpo.org/news_detail.php?arg=03&par=705), «Հարավային Օսեթիայի պետակա-

Կոսովոյի ու Ղարաբաղի հակամարտությունների նույնականացման և միջազգային իրավական ու քաղաքական եղանակներով լուծման համեմատական վերլուծությունը ցույց է տալիս հակամարտող կողմերի միջև ինքնանկախ պետությունների կարգավիճակի հաստատութենացմամբ երկարատև խաղաղության ձեռքբերման գործում հանրաքվեով ընձեռվող ժողովրդավարական միջոցների գերադասելիությունը: Կոսովոյում ՄԱԿ-ի ժամանակավոր առաքելության և ԵԱՀԿ առաքելության փորձի համադրումը հաստատում է հակամարտության ձևափոխման այս ուղու՝ ՄԱԿ-ի և ԵԱՀԿ-ի կողմից երաշխավորված ինքնորոշումային իրավական և վարչական միջոցների կառուցողականությունը:

7. ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ ԵՎՐԱԱՏԼԱՆՏՅԱՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ. ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄ

Տարածաշրջանի պետությունների կառավարություններից ոչ մեկը դեռ մշակված տեսքով չի ներկայացրել տարածաշրջանային անվտանգության համաձայնագրի գաղափար[61]: Ինչ խոսք, դրա իրականացումը կախված կլինի տարածաշրջանում տեղի ունեցող այնպիսի բանակցությունների ընթացքից, ինչպիսիք են, օրինակ, Աբխազիայի, Լեռնային Ղարաբաղի և Հարավային Օսեթիայի քաղաքական կարգավիճակներին վերաբերող բանակցությունները: ՄԱԿ-ի և ԵԱՀԿ-ի կողմից ղեկավարվող ինքնորոշումային հանրաքվեների միջոցով այս հակամարտությունների լուծումը արմատական փոփոխություններ կառաջացնի Հարավային Կովկասի բոլոր հարևան պետությունների հարաբերություններում՝ տարածաշրջանում մեծացնելով նոր համագործակցության հնարավորությունները:

Կովկասում գործող որոշ արտատարածաշրջանային կազմակերպություններ և տարածաշրջանի անվտանգությանն առնչվող ծրագրերին դրանց մասնակցությունը ազդում են ազգային անվտանգության տարածաշրջանային ճարտարապետության վրա, որն ի դեպ ձևավորման ընթացքում է: Հարավային Կովկասում բոլոր առկա դերակատարների այն գործողությունները, որոնք առնչվում են անվտանգության պրոբլեմներին, կատարվում են ԵԱՀԿ և ԵԱԳՆ շրջանակներում, ինչպես, օրինակ, ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի ընդլայնումը:

նության ժամանակագրության հաստատում» (http://www.lawabovepower.org/en_chronic. html), *Թիմ Փոթիէր.* Լեռնային Ղարաբաղի, Աբխազիայի և Հարավային Օսեթիայի հակամարտությունները. իրավական գնահատական (http://karabakh-doc.azerall.info/ru/law/law031-2.php):

[61] Տես *Tiniko Khidasheli.* The Stability Pact for the Caucasus (http://www.socsci.uci.edu/istudies/peace/progs/pdfs/english7.htm):

Զարգացում են ապրում նաև երկկողմ կապերը: Ադրբեջանն ու Վրաստանը վերջերս կնքեցին անվտանգության ոլորտում համագործակցության համաձայնագիր[62]: Վրաստանի և Հայաստանի իշխանությունների միջև տեղի են ունենում Ջավախքի մարզի կայուն զարգացման ու անվտանգության պրոբլեմների շուրջ որոշ խորհրդատվություններ: Այդուհանդերձ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի միջև եռակողմ համագործակցություն չկա: Մի պատճառը Ադրբեջանի և Վրաստանի կազմից դուրս եկած մարզերի վերաբերյալ տեսակետների որոշակի տարբերությունների առկայությունն է: Երկրորդ պատճառը Եվրաատլանտյան հանրության հետ համագործակցության նկատմամբ մոտեցումներում եղած տարբերությունն է. Ադրբեջանն ու Վրաստանը ձգտում են դառնալու ՆԱՏՕ-ի անդամ, մինչդեռ Հայաստանն ունի ավելի համեստ մոտեցում՝ Եվրաատլանտյան անվտանգության ճարտարապետությանը ինտեգրվել ԱԳԳՇ և ԳՀԽ ծրագրերի միջոցով[63]:

Իրականում, ԱԳԳՇ և ԳՀԽ ծրագրերի միջոցով տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության կառուցումը շատ առավելություններ ունի: Այն գործուն միջոց է, որպեսզի Եվրասիայի երկրները ռազմավարական առումով մուտք գործեն ՆԱՏՕ-ի անվտանգության միջավայր, ընդսմին այդ դեպքում անցումային պրոբլեմները կարող են մեղմված լինել: Սկսած 1999 թվականից՝ ՆԱՏՕ-ի ընդլայնման դասերը հստակորեն լուսաբանում են այդ հարցը. կային խնդիրներ՝ կապված ընդլայնված ՆԱՏՕ-ում համաձայնեցված որոշումների կայացման[64], այդ երկրների զինված ուժերի սպառազինության և այլ տեխնիկական բաղադրիչների արդիականացման, համապատասխան ռազմական հաստատությունների իրավական հարցերի կարգավորման, ինչպես նաև ռազմական կրթության, վարժանքների, սոցիալական անվտանգության խնդիրների, պաշտոնաթողության, ֆինանսավորման և այլ հարցերի հետ: Մեր կարծիքով՝ «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագիրը, հատկապես, երբ կատարվում են որոշակի բարեփոխումներ, գործընկեր երկրներին հնարավորություն կտա աստիճանաբար ինտեգրվելու եվրաատլանտյան կառույցներին՝ առանց ցավալի կորուստների, որոնք առաջանում են ՆԱՏՕ-ին հապճեպ անդամակցելու դեպքում:

---

[62] Տես «Azerbaijan and Georgia mull pipeline security». «Azernews», 2002, № 14 (248) (http://www.bakupages.com/pubs/azernews/7937_en.php):

[63] Տես «Statement by the Minister of Foreign Affairs of the Republic of Armenia» (http://www.armeniaemb.org/News/Index.htm), *նաև՝* «Romania Pledges Support for Azerbaijan's Bid for NATO Membership». 2003, 8 April, Tuesday (http://www.eurasianet.org/resource/azerbaijan/hypermail/200304/0021.shtml):

[64] Տես *Jeffrey Simon.* Prepared Statement for Committee on Foreign Relations, United States Senate Hearing on NATO Enlargement. Institute for National Strategic Studies, National Defense University, 2003, 3 April:

ԱԳԳՀ և ԳՀԽ ծրագրերի զարգացման տրամաբանական շարունակություն կարող է դառնալ Եվրաատլանտյան գործընկերության խորհրդի համապարփակ արդիականացումը: ԵԱԳԽ այս փոխակերպումը կազդի հավաքական անվտանգության հիմնական հետխորհրդային կազմակերպության՝ ՀԱՊԿ-ի հետագա կառուցողական փոխակերպման և վերջինիս հետ գործընկերության զարգացման վրա:

2004 թ. ՆԱՏՕ-ի Ստամբուլյան գագաթնաժողովի ոգով թարմացված ԵԱԳԽ-ն կարող է ավելի ակտիվ դեր ունենալ հատկապես Հարավային Կովկասում՝ կարևորելով համատեղ անվտանգության ճարտարապետությունը և այն պահպանելով ի նպաստ անվտանգության ծրագրերում Հայաստանի, Ադրբեջանի ու Վրաստանի ներգրավման, ծրագրեր, որոնք ֆինանսավորվում են միայն նրանց համատեղ մասնակցության հստակ սահմանված պայմանով[65]:

ՄԱԿ-ի և ԵԱՀԿ-ի կողմից ղեկավարվող ու վերահսկվող ինքնորոշման հանրաքվեների միջոցով անկախացած մարզերի քաղաքական կարգավիճակի հաստատութենացման հարցի լուծումը իրական իրավաքաղաքական հիմք կդառնա Հարավային Կովկասի տարածաշրջանային նոր՝ ոչ գաղութային[66], ինտեգրման համար: Համագործակցության շրջանակներում ծավալվող անվտանգային երկխոսության հաստատութենացումը տարածաշրջանային տնտեսությունները կազատի անվտանգության ապահովման ծանր բեռից:

VII. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արևմտյան Եվրոպայում և աշխարհի մի շարք այլ տեղերում կիրառվող ընդհանուր բազմամակարդակ ինքնիշխանության հասկացությունը Հարավային Կովկասի քաղաքական վերնախավի կողմից դեռ համապատասխան ձևով չի ընկալվում: Խոսքով ժողովրդավարության ջատագովի դերում հանդես գալով՝ տարածաշրջանի երկրները դեռ գտնվում են կոնկրետ էթնիկական

[65] Տես «Center for Defense Information. NATO Issues. Press Briefing Growing Pains: The Debate on the Next Round of NATO Enlargement». 2002, 13 May (http://www.cdi.org/nato/nato-press-briefing-051302.cfm):

[66] Անհրաժեշտ է նշել այն փաստը, որ Ադրբեջանի և Վրաստանի ներկայիս Սահմանադրությունները չեն ներառում էթնիկական փոքրամասնությունների ինքնորոշման օրենսդրական նորմեր: Իրենց սահմանադրական օրենքներով այս պետությունները միանման են և նախկին խորհրդային ինքնավար հանրապետությունների՝ Աբխազիայի, Հարավային Օսեթիայի և Լեռնային Ղարաբաղի բնակչությանը գործնականում թույլ չեն տալիս բնակչության շրջանում հայտ ներկայացնելու՝ իր ներկայիս բնակության վայրերում ինքնորոշման հանրաքվեներ անցկացնելու վերաբերյալ: Տես «Վրաստանի Սահմանադրություն», գլուխ I, հոդված 2 (http://members.tripod.com/ggdavid/georgia/const8.htm), *նաև*՝ «Ադրբեջանական Հանրապետության Սահմանադրություն», գլուխ II «Պետության Հիմք», հոդվածներ 7 և 11 (http://www.constitutional-court-az.org/const-chapter2.htm):

տարածքի նկատմամբ «տիտղոսային ազգի» աստիճանակարգային գերիշխանության խորհրդային ավանդության ազդեցության տակ, ինչը շարունակական էթնիկական լարվածության պատճառ է հանդիսանում: Կարելի է պատկերացնել, թե որքան դժվար կլինի համաձայնեցվածփոխզիջումային ժողովրդավարական մոտեցում կիրառել Կովկասում, որտեղ դեռ առկա են կեղծ ժողովրդավարական տերմինաբանությամբ քողարկվող խորհրդային գաղութատիրական ճնշիչ մշակույթն ու կոռուպցիան: Այնուամենայնիվ, արդյունավետ տարածաշրջանային քաղաքականության նոր ճարտարապետության հեռանկարում տվյալ մոտեցումը կարող է իրականություն դառնալ բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ: Կոսովոյում ՄԱԿ-ի և ԵԱՀԿ ժամանակավոր առաքելությունների դասերի ու փորձի օգտագործմամբ կարելի է լուծել նաև Աբխազիայի, Հարավային Օսեթիայի և Լեռնային Ղարաբաղի հակամարտությունները: Դրա ճանապարհին է ինքնորոշման վերը նկարագրված հանրաքվեների անցկացումը:

Իհարկե, տարածաշրջանային ճարտարապետության ձևավորումը չի կարող իրականացվել միանգամից՝ մեկ ոստյունով: Փոխարենը կարելի է ակնկալել մի շարք պակաս հավակնոտ քայլեր՝ ուղղված ժամանակի ընթացքում տարածաշրջանային անվտանգության փաստացի հիմքերի ստեղծմանը: Ավելին, այդ վերջնական նպատակին հասնելու գործընթացը նախապես կպահանջի կենտրոնացում այն պրոբլեմների վրա, որոնց համընկնումը տարածաշրջանային պետությունների համար տրամաբանորեն ակնկալելի է, ինչպես, օրինակ, ապօրինի տարանցումների կանխումը, շրջակա միջավայրի պաշտպանությունը, աղետներին արձագանքումն ու փրկարար-որոնողական գործողությունները: Հայաստանի ու Վրաստանի, ինչպես նաև Վրաստանի ու Ադրբեջանի միջև որոշ երկկողմ առաջընթաց եղել է: Սակայն երկու հակամարտող երկրների՝ Հայաստանի և Ադրբեջանի միջև համագործակցություն չկա:

Որպես այս երեք հարևան պետությունների միջև հարաբերությունների մեկուսացածության բնորոշ օրինակ կարելի է բերել հակաահաբեկչական պայքարի ոլորտում ստեղծված իրավիճակը. բոլոր երեք երկրներն էլ ակտիվորեն ներգրավված են ամերիկյան հակաահաբեկչական ծրագրերում, սակայն հարավկովկասյան պետությունների միջև միջսահմանային համագործակցություն դեռևս չկա: Ահա թե ինչու տրամաբանական է թվում տարածաշրջանում հակաահաբեկչական պայքարի և թմրադեղերի ապօրինի տարանցման ու վաճառքի դեմ միջոցների համատեղ ձեռնարկումը: Այդ միջոցների շարքը կարելի է դասել տարածաշրջանի պետությունների իրավապահ իշխանությունների ու հատուկ ծառայությունների միջև աշխատանքային մակարդակով տեղի ունեցող շփումների զարգացումը:

Հնարավորության դեպքում այս գործընթացը կարելի է ընդլայնել՝ գործադրելով փոխադարձ վստահության ձևավորման այնպիսի միջոցներ, ինչպիսիք են ընդհանուր վաղօրոք ահազանգումը Ադրբեջանի և Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի հակամարտության կամ Վրաստանի և Աբխազական Հանրապետության ու Հարավային Օսեթիայի Հանրապետության հակամարտության ասպարեզում, զորավարժություններին փոխադարձաբար դիտորդներ ուղարկելը, հակամարտող կողմերի սահմանային միջադեպերի ռիսկի նվազեցման գործընթացների հաստատումը՝ ԵԱՀԿ, ՆԱՏՕ-ի ԳՀԽ, ինչպես նաև ԱՄՆ-ի և Ռուսաստանի ընդհանուր հովանավորությամբ և ակտիվ խթանմամբ:

Բազմակողմ տարածաշրջանային համագործակցության զարգացումը՝ որպես տնտեսական առաջընթացի, քաղաքական ու տնտեսական կայունացման և բարիդրացիական հարաբերությունների հաստատման հիմք, կարող է դառնալ կովկասյան տարածաշրջանի բոլոր նախաձեռնությունների գլխավոր նպատակը[67]: Հովանավոր կազմակերպությունները, ինչպիսիք են Եվրամիությունը, Համաշխարհային բանկը, Արտարժույթի միջազգային հիմնադրամը և Առևտրի համաշխարհային կազմակերպությունը, կարող են նպաստել կովկասյան երկրների ժողովրդական տնտեսության ազատականացմանը: Դրան հիմք կարող է ծառայել Սևծովյան տնտեսական համագործակցության շրջանակներում իրագործվող ներտարածաշրջանային համագործակցության երկկողմ ծրագրերի առաջնահերթ ֆինանսավորումը:

Կոնկրետ տնտեսական համագործակցության գործողությունները բազմազան են և ներառում են այն բոլոր խնդիրները, որոնք կարող են որևէ հետաքրքրություն ներկայացնել տարածաշրջանի երկրների համար: Սևծովյան երկրների տնտեսական համագործակցության շրջանակներում բազմազգ աշխատանքային խմբերի ակտիվ ֆինանսական աջակցությամբ բոլոր ազգային պետություններն ու նորաստեղծ էթնիկական կազմավորումները կարող են կազմակերպել քննարկումներ այնպիսի ոլորտներին առնչվող ընդհանուր տնտեսական շահերի վերաբերյալ, ինչպիսիք են, օրինակ, տեղեկատվության ու հեռահաղորդակցության, էներգետիկայի, տրանսպորտի ենթակառույցների, գյուղատնտեսության, քաղաքացիական պաշտպանության, արտագաղթի, փոքր ձեռնարկատիրության, վիճակագրական, վերապատրաստման և կրթության, գիտատեխնիկական, զբոսաշրջության, ֆինանսական, շրջակա միջավայրի պաշտպանության, կոռուպցիայի վերացման, ապօրինի տարանցումների և առևտրի, կազմակերպված հանցագործության և այլ ոլորտներ:

Ամփոփելով այս վերլուծությունը՝ կարող ենք ենթադրել, որ Կովկասում երկարատև խաղաղության ու կայունության, ինչպես նաև ամբողջ Կենտրոնա-

[67] Տես *Natella Akaba.* The Stability Pact for the Caucasus as a Model of Caucasian Integration (http://www.socsci.uci.edu/istudies/peace/progs/pdfs/english7.htm):

կան Եվրասիայի տարածաշրջանում ինտեգրման ծրագրերի իրականացմանը հիմնականում կարելի է հասնել Կովկասում ընդհանուր անվտանգության նոր ճարտարապետության զարգացմամբ: Դա կարող է ապահովված լինել առնվազն հետևյալ եռակողմ գործընթացների միջոցով:

- **Անվտանգության հայեցակարգի վերաձևակերպում և՛ էթնիկ խմբերի, և՛ նախկին խորհրդային գաղութակալ «տիտղոսային ազգերի» համար:** Ենթադրվում է, որ այս մոդելը պետք է ձևավորվի նախկին խորհրդային ինքնավարությունների՝ Աբխազիայի, Լեռնային Ղարաբաղի ու Հարավային Օսեթիայի բնակչության ինքնորոշման հարցով ՄԱԿ-ի և ԵԱՀԿ-ի կողմից անցկացվելիք հանրաքվեների միջոցով: Դա կապահովի Աբխազիայի, Հարավային Օսեթիայի և Լեռնային Ղարաբաղի, ինչպես նաև Վրաստանի և Ադրբեջանի փոխհարաբերություններում հետխորհրդային քաղաքական իրողությունների իրավականորեն հիմնավորված հաստատման ժողովրդավարական ձևաչափը:
- **Կովկասյան պետությունների ազգային անվտանգության առկա ռազմավարությունների ու քաղաքականությունների վերաձևակերպում՝** ԵԱՀԿ և ԵԱԳԽ-ՆԱՏՕ-ի, ինչպես նաև ՀԱՊԿ-ի տարածաշրջանային ծրագրերի շրջանակներում ինտենսիվ կերպով փոխգործելու և Հարավային Կովկասում առաջատար դերակատարների՝ ԱՄՆ-ի ու Ռուսաստանի ակտիվ մասնակցության անհրաժեշտության գիտակցմամբ: Այս լույսի ներքո Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության ուղենիշները, որ առաջ են քաշվել այս փաստաթղթում, կարող են համարվել ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում Հարավային Կովկասի տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության մշակման մեջ պրագմատիկ ներդրում կատարելու փորձ:
- **Կովկասյան պետությունների ժողովրդական տնտեսությունների համաձայնեցված ազատականացում ազգային անվտանգության շահերով պայմանավորված սահմանափակումից,** ինչը կարող է իրականացվել Սևծովյան երկրների տնտեսական համագործակցության շրջանակներում, Եվրամիության, Համաշխարհային բանկի, Արտարժույթի միջազգային հիմնադրամի և Առևտրի համաշխարհային կազմակերպության կողմից ֆինանսավորվող և ԵԱՀԿ ու ԵԱԳԽ հովանու ներքո իրագործվող ներտարածաշրջանային տնտեսական ծրագրերի խորացման միջոցով:

Ստորև որպես հավելված բերվող «Ազգային անվտանգության ռազմավարության ճեպագրում» հեղինակը Հարավային Կովկասի տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության վերակառուցման գծով կատարված այս ուսումնասիրության համատեքստում ներկայացնում է Հայաստանի անվտանգության հեռանկարների վերաբերյալ իր պատկերացումը:

VIII. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՃԵՊԱԳԻՐ (ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ)

1. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆԸ

20-րդ դարի վերջը նշանավորվեց գաղափարական առճակատման և «սառը պատերազմի» ավարտով: Որպես արդյունք՝ հնանում են միջազգային դաշինքների, առանձին պետությունների և տարբեր կազմակերպությունների անվտանգության մասին ավանդական պատկերացումները և հայացքները:

Վերջին տարիներին ի հայտ են եկել մի շարք երևույթներ, որոնք իբրև միջազգային հարաբերություններ ձևավորող գործոններ ներազդում են միջազգային անվտանգության կառույցների ու ռազմաքաղաքական ուժերի վրա: Այդ երևույթների վտանգավորությունը պայմանավորված է նրանց համընդգրկուն համաշխարհային բնույթով: Օրինակ՝ միջազգային ահաբեկչությունը, լինելով արդի միջազգային անվտանգության համար հիմնական սպառնալիք, ներազդում է անվտանգության պետական և միջազգային համակարգերի զարգացման, ընդլայնման ու վերակառուցման, և առաջին հերթին՝ ինտեգրման գործընթացների ինտենսիֆիկացման վրա:

Հայաստանի Հանրապետությունը գտնվում է մի տարածաշրջանում, որտեղ առկա են անցումային ժամանակաշրջանին բնորոշ բոլոր զարգացումները: Խորհրդային Միության փլուզումից հետո այստեղ ի հայտ եկան անվտանգության դեմ ուղղված և՛ ներտարածաշրջանային, և՛ արտատարածաշրջանային սպառնալիքներ: Եթե ներտարածաշրջանային սպառնալիքները առավելապես պայմանավորված էին ազգամիջյան հակամարտություններով, ապա արտատարածաշրջանային սպառնալիքները հետևանք էին մի քաղաքական վակուումի, որը փորձում էին լրացնել տարբեր շահեր ունեցող զանազան ուժեր: Լինելով Արևելքի և Արևմուտքի, Հյուսիսի և Հարավի, Եվրոպայի և Ասիայի, Ռուսաստանի, Միացյալ Նահանգների և Եվրամիության, ՆԱՏՕ-ի և ՀԱՊԿ-ի շահերի հանգուցակետ՝ հարավկովկասյան տարածաշրջանը կրում է այդ շահերի համադրման ու մրցակցության ազդեցությունը: Դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ անվտանգության ապահովման ոլորտն ու դրանում տեղի ունեցող գործընթացները էապես քաղաքականացած են և այս տարածաշրջանի երկրների համար ունեն առաջնահերթ նշանակություն:

Վերջին շրջանում Հարավային Կովկասում ծավալվող ռազմաքաղաքական գործընթացների ազդեցությունը էապես ուժգնացել է, ինչի հետևանքով տարածաշրջանում ակտիվացել է տարբեր շահագրգիռ ուժերի, գերտերությունների և անվտանգության համակարգերի գործունեությունը: Դա պայմանավորված է ահաբեկչության դեմ պայքարի համընդհանրացմամբ, Իրաքում ծավալված մարտական գործողություններով, ՆԱՏՕ-ի ու ԵՄ-ի ընդլայնմամբ և ԱՊՀ ու ՀԱՊԿ-ի շրջանակներում ընթացող ինտեգրմամբ:

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Հայաստանի ներկան գնահատելու և ապագան կառուցելու համար անհրաժեշտ է հստակ պատկերացում ունենալ ազգային անվտանգության հետևյալ հիմնադրույթների մասին[68].

–Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությունը Հայաստանի՝ որպես պետության և հայ հասարակության՝ որպես քաղաքացիական հասարակության անվտանգ գոյությունն է,

–Հայաստանի ազգային անվտանգության երաշխիքն է համընդհանուր ժողովրդավարական արժեքների՝ պետության, հասարակության և անհատի (իրենց հիմնարար իրավունքներով և ազատություններով հանդերձ) երաշխավորված պաշտպանության գործուն համակարգը,

–Հայաստանի ազգային անվտանգության ապահովումը պետության գոյության դեմ ուղղված սպառնալիքների գնահատումն է, դրանց կանխումն ու չեզոքացումը, ինչպես նաև նրա կայուն զարգացման երաշխավորումը,

–Հայաստանի ազգային անվտանգության դեմ ուղղված հիմնական սպառնալիքներն են՝ ժողովրդի ֆիզիկական գոյությանը, Հայաստանի տարածքային

[68] Տես «Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար, Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի «Հայաստան. մարտահրավերներ և պատասխաններ» հարցազրույցը» (http://www.yerkir.am/eng/index.php?sub=interview&id=11), *նաև*՝ «Հայաստանի Հանրապետության Նախագահ Ռոբերտ Քոչարյանի ելույթը Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի նստաշրջանում»: Ստրասբուրգ, 2004 թ. հունիսի 23 (http://news.president.am/arm/?sub=news&day=23&month=06&year=2004), «ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանյանի ելույթը ԵԱՀԿ նախարարների խորհրդի 12-րդ հանդիպմանը»: Սոֆիա, 2004 թ. դեկտեմբերի 7 (http://www.armeniaforeignministry.com/speeches/041206_vo_osce.html):

ամբողջականությանն ու անկախությանն սպառնացող, ինչպես նաև միջազգային ու տարածաշրջանային մեկուսացման վտանգները:

Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարությունը խարսխվելու է նշված սկզբունքների վրա[69]:

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ. ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի կայուն զարգացմանը խոչընդոտում են բազմաթիվ մարտահրավերներ և վտանգներ, որոնք իրավունքի գերակայության վրա հիմնված սոցիալական պետության կառուցման ճանապարհին սպառնում են նրա ազգային անվտանգությանը: Դրանք նաև խոչընդոտում են այն համընդհանուր ժողովրդավարական արժեքների պաշտպանությանը, որոնք կարող են ձեռք բերվել կայուն և շարունակական զարգացման միջոցով: Այդ սպառնալիքներն ու վտանգները դրսևորվում են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին հարաբերություններում: Դրանք առնչվում են մեր պետության զարգացմանը և ունեն համաչափ կամ անհամաչափ բնույթ[70]:

[69] Տես «Национальная безопасность: ориентиры и приоритеты», интервью с советником Министра обороны по политическим вопросам, доктором политологии Г. С. Котанджяном. «Голос Армении», 11 февраля 2003 г.:

[70] Հեղինակի տեսակետից արդի պայմաններին բնորոշ նոր անհամաչափ սպառնալիքներն այն սպառնալիքներն են, որոնք պետության անվտանգության դեմ ուղղված են ոչ թե մեկ այլ պետության (համաչափ սուբյեկտ), այլ այն սուբյեկտների կողմից, որոնք չունեն պետությանը բնորոշ հատկանիշներ և ունակ են գործելու իշխանությունների դեմ թե՛ երկրի ներսում, թե՛ երկրի սահմաններից դուրս: Անհամաչափ սպառնալիքները հանգեցնում են տեղային, տարածաշրջանային, արտատարածաշրջանային և միջազգային քաղաքական մակարդակներում հասարակական կազմակերպությունների (էթնիկական, էթնիկ-կրոնական, ահաբեկչական, ապստամբական և հանցագործ խմբավորումներ, շարժումներ, ցանցային կազմակերպություններ և այլն) և կանոնավոր կառավարական ուժերի (բանակ, անվտանգության հաստատություններ և այլն) միջև հակամարտության:
Մի շարք դեպքերում այս անհամաչափ սպառնալիքների իրական աղբյուրներն են թշնամական պետությունների կառույցները կամ միջկառավարական դաշինքները, որոնք կա՛մ աջակցում ու սնուցում են այդ սպառնալիքների իրացումը, կա՛մ էլ ոչ կառավարական կազմակերպության քողի տակ մասնակցում են դրանց իրականացմանը: Անհամաչափ սպառնալիքների տարբերակիչ հատկանիշն այն է, որ դրանց աղբյուրներն ու իրականացման ուղիները դրսևորվում են ավելի մեծ անորոշությամբ, ինչպես նաև այդ սպառնալիքներն ու դրանց հետևանքները ի հայտ են գալիս անկանխատեսելիորեն: Կործանարար բնական ու տեխնածին աղետները, որոնք ուղղված են պետության անվտանգության դեմ և ենթակա չեն կառավարարության կողմից վերահսկման, նույնպես կարող են դիտվել որպես անհամաչափ սպառնալիքներ:

Արտաքին համաչափ սպառնալիքներն են՝ ժողովրդի ֆիզիկական գոյության, պետության անկախության և տարածքային ամբողջականության նկատմամբ հնարավոր ոտնձգությունները, Լեռնային Ղարաբաղի ռազմակալման նպատակով Ադրբեջանի կողմից ռազմական գործողությունների վերսկսման ծրագիրը, Հայաստանի շրջափակումը, թշնամական պետությունների կողմից իրականացվելիք քաղաքական, տնտեսական ու հաղորդակցական մեկուսացումը և դրա հետևանքով Հայաստանի միջազգային դերի նվազումը, բարեկամական դաշինքների թուլացումը կամ քայքայումը, թշնամական ռազմաքաղաքական դաշինքների ստեղծումն ու ամրապնդումը: Սպառնալիք կարող են լինել Հայաստանի՝ կենսական ու ռազմավարական նշանակություն ունեցող շահերին վնասելու նպատակով թշնամական պետությունների կողմից նրա վերաբերյալ ապատեղեկույթի տարածման փորձը և միջազգային հանրության բացասական կարծիքի ձևավորումը:

Արտաքին անհամաչափ սպառնալիքներն են՝ Հայաստանի դեմ ոչ կանոնավոր ռազմական ուժի կիրառումը, Հայոց սփյուռքի դերի անկումը նրա ուծացման ու ինքնության կորստի պատճառով և համաշխարհային, այդ թվում՝ կիբեռ- և տեղեկութային, ահաբեկչությունը:

Ներքին համաչափ սպառնալիքներն են՝ իրավական սոցիալական պետության և քաղաքացիական հասարակության կայացման համար անհրաժեշտ օրենսդրական ու վարչահաստատութենական հատկանիշների ձևավորման ոչ բավարար որակն ու տեմպերը: Այս սպառնալիքների շարքում են նաև պետական համակարգի անկատարությունն ու ոչ լիարժեքությունը, արդյարադատության և ներքին անվտանգության կառույցների գործունեության անբավարար մակարդակը, ներքին հաղորդակցությունների խաթարումը և պետական տեղեկատվական հնարավորությունների անբավարարությունը:

Այսպիսով՝ սպառնալիքների անհամաչափությունը բնորոշվում է այն փաստով, որ պետության, կառավարական հաստատությունների կամ տվյալ ազգի քաղաքացիական հասարակության դեմ ուղղված սպառնալիքների աղբյուրները, ինչպես նաև դրանց իրագործման մեխանիզմներն ու ճանապարհները բնույթով ոչ կառավարական են: Անհամաչափ սպառնալիքների աղբյուրները և իրականացման մեխանիզմները կարող են ունենալ կա՛մ ներքին, կա՛մ արտաքին ծագում (տես «Հայաստան. մարտահրավերներ և պատասխաններ». հարցազրույց ՀՀ Նախագահին առընթեր Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար, ՀՀ Պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի հետ»: «Երկիր» (http://www.yerkir.am/eng/index.php?sub=interview&id=11)), *նաև՝ Colin S. Gray.* Thinking Asymmetrically in Times of Terror. «Parameters», 2002, Spring, PP. 5–14 (http://carlisle-www.army.mil/usawc/Parameters/02spring/gray.htm); *Vice Admiral Thomas R. Wilson,* Director, Defense Intelligence Agency. Global Threats and Challenges Through 2015. «Statement for the Record», Senate Armed Services Committee, 2000 (http://russia.shaps.hawaii.edu/security/us/wilson_2000.html):

Ներքին անհամաչափ սպառնալիքներն են՝ սոցիալական շերտավորման խորացումն ու աղքատությունը, կոռուպցիան, հասարակական հարաբերությունների հնարավոր քրեականացումը, պետական համակարգի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության գործում հասարակական կազմակերպությունների դերի նվազումը, իշխանությունների հանդեպ հանրության անվստահությունը, հասարակության ազդեցիկ խմբերի միջև անհանդուրժողության մթնոլորտի ձևավորումը և իշխանություններին անհեռազանության հնարավոր դրսևորումները, ժողովրդագրական բացասական միտումները և արտագաղթը, խոսքի ազատության պակասը, զանգվածային լրատվության միջոցների հնարավորությունների սահմանափակությունը, գիտական ու մշակութային ներուժի արտահոսքը, հոգևոր ու բարոյական արժեքներին հասցվող վնասը, բնական աղետները կամ միջավայրի վատթարացումը, ինչպես նաև մահաբեր համաճարակները:

3.1. Հայաստանի ներքին անվտանգության ռազմավարությունը

Հայաստանի ներքին անվտանգության ապահովումը պայմանավորված է առաջին հերթին ժողովրդավարական արժեքների արմատավորմամբ, պետության և հասարակության գոյության ու կենսագործունեության բոլոր բնագավառներում թափանցիկության ապահովմամբ: Գիտակցելով դրա անհրաժեշտությունը և երկրի համար անվտանգ ապագա կերտելու կարևորությունը՝ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է բարեփոխումների ռազմավարություն: Դրանք իրականացնելիս Հայաստանի Հանրապետությունն առաջնորդվում է իր ազգային-պետական շահերով: Այդ շահերը կնպաստեն միջազգային հանրության աջակցությամբ պետության և հասարակության ամրապնդմանն ու միջազգային ինտեգրմանը՝ ազգային ինքնության պահպանման պայմանով:

Ժողովրդավարական բարեփոխումների ռազմավարության նպատակը ներքին սպառնալիքների կանխումն է: Այն նախատեսում է ժողովրդավարական արժեքների արմատավորում պետության և հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտներում, ներառյալ նաև անվտանգության ոլորտը: Միևնույն ժամանակ ժողովրդավարական բարեփոխումները Հայաստանի ներքին ու արտաքին անվտանգության երաշխիքն են:

ա) Միջազգային ինտեգրում ժողովրդավարացման միջոցով

Հայաստանի ազգային-պետական կառուցման գերնպատակը ժողովրդավարացման միջոցով միջազգային ինտեգրումն է[71]: Դա է կայուն առաջընթացի, անվտանգ ապագայի կերտման բանալին և ազգային անվտանգության համար սպառնալիքների չեզոքացման արդյունավետ ճանապարհը:

Ժողովրդավարական բարեփոխումների ռազմավարությունը պահանջում է պետական գերատեսչությունների, բոլոր մակարդակների կառավարման մարմինների և հասարակության միասնական ու կառուցողական աշխատանք: Բարեփոխումների ձախողումը կդառնա անմիջական և համընդգրկուն սպառնալիք՝ ուղղված ազգային անվտանգության դեմ, քանի որ կարող է խոչընդոտել երկրի կայուն զարգացմանը: Եվ վերջապես, Հայաստանին կարող է սպառնալ այսպես կոչված «չկայացած պետություն» դառնալու վտանգը[72]:

Այսպիսով՝ ժողովրդավարական բարեփոխումների միջոցով Հայաստանի Հանրապետության կայուն զարգացման քաղաքականությունը համարվում է պետության այն ռազմավարությունը, որն ապահովում է ազգային անվտանգությունն ու կայուն զարգացումը, ըստ առաջնահերթությունների լուծում է պետության հիմնախնդիրները, այդ նպատակին հասնելու համար մշակում և իրականացնում է միասնական ծրագրեր:

բ) Օրենսդրական բարեփոխումներ

Անցումային շրջանում գտնվող այնպիսի երկրում, ինչպիսին Հայաստանն է, օրենսդրական բարեփոխումները առողջ և կայուն քաղաքացիական հասարակության կայացման նախապայմանն են, քանի որ դրանք կոչված են իրավունքի գերակայության ամրապնդմանը և օրենսդրորեն կարգավորելու են պետության, հասարակության ու անհատի կենսագործունեության բոլոր բնագավառները: Օրենսդրական բարեփոխումները նպաստում են ազգային ինքնության պահպանմանը և միջազգային ինտեգրման միջոցով երկրի կայուն ու շարունակական զարգացմանը[73]:

---

[71] Տես «Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովում Հայաստանի Հանրապետության Նախագահ Ռոբերտ Քոչարյանի ելույթը»: Ստրասբուրգ, 2004 թ. հունիսի 23 (http://www.armeniaforeignministry.com/speeches/040623_ president.html), *նաև՝* «Արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանի «Քաղաքական մարտահրավերներ և զարգացման հեռանկարներ» ելույթը Հարավային Կովկասի հարցերով համաժողովում»: Բեռլին, 2003 թ. նոյեմբերի 12 (http://www.armeniaforeignministry.com/speeches/031112vo_berlin.html):

[72] Տես «Failed and Collapsed States in the International System». The African Studies Centre, Leiden; The Transnational Institute, Amsterdam; The Center of Social Studies, Coimbra University; and The Peace Research Center–CIP-FUHEM, Madrid, 2003, December (http://www.globalpolicy.org/nations/sovereign/failed/2003/12failedcollapsedstates.pdf); *Daniel Thürer.* The «Failed State» and International Law. «International Review of the Red Cross», 1999, 31 December, № 836, PP. 731–761:

[73] «Հայաստանում կոռուպցիան արմատախիլ անելուն ուղղված անհետաձգելի միջոցառումների շարքին առաջին հերթին կդասեի դատահիրավական համակարգի բարեփոխումների խորացման անհրաժեշտությունը, հարկային և մաքսային մարմիններում վարչարարության կատարելագործումը, պետական ծառայության արդյունավետ համակարգի

Հայաստանում ժողովրդավարական արժեքները դեռ նոր են արմատավորվում, և ազգային պետությունը չի կարող միայնակ իրականացնել բոլոր բարեփոխումները: Կայացած ժողովրդավարական պետությունները (ԱՄՆ, Եվրամիության երկրներ) տասնամյակներ շարունակ տքնաջան աշխատել և, առաջնորդվելով «փորձի ու սխալի» մեթոդով, զարգացրել են իրենց ժողովրդավարությունը: Հայաստանը որդեգրել է այդ երկրների հետ սերտ համագործակցության քաղաքականություն: Հայաստանն իր օրենսդրական համակարգը այսօր ձևավորում է եվրոպական կառույցների (Եվրամիություն, Եվրախորհուրդ, ԵԱՀԿ) և առաջատար եվրոպական հաստատությունների, հատկապես՝ օրենքի միջոցով ժողովրդավարության եվրոպական հանձնաժողովի (Վենետիկյան կոմիտե)[74] աջակցությամբ: Հայաստանը խորհրդատվական անգնահատելի օժանդակություն է ստացել ԱՄՆ-ից և Ֆրանսիայից:

Հայաստանը հաստատակամ է օրենսդրական բարեփոխումների շարունակական առաջմղման գործում՝ համագործակցելով իր միջազգային գործընկերների հետ[75]:

գ) Հաստատութենական բարեփոխումներ

Հաստատութենական բարեփոխումները միտված են կառավարման հաստատությունների շինարարության համակարգմանը, դրանց թափանցիկ գործունեության ապահովմանը, կոռուպցիայի հաղթահարմանը, արդյունավետ հասարակական ժողովրդավարական վերահսկողության մեխանիզմների ստեղծմանը: Այդ նպատակով Հայաստանը միջազգային հանրության աջակ-

Ձևավորումը: Այսինքն՝ հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման գործում մեխանիզմների ստեղծումը:

Ընդհանուր կոռուպցիոն ռիսկերի կրճատման տեսանկյունից հատկապես կնշեի մրցակցային միջավայրի հաստատման կարևորությունը, կառավարության գործողությունների կանխատեսելիությունը, ընթացակարգերի պարզեցումը, դրանց թափանցիկությունն ու հասարակական վերահսկողությունը: Այսպիսին են այսօրվա մեր առաջնահերթություններն ու դրանց նպատակն է ապահովել Հայաստանում տնտեսական բարեփոխումների և ժողովրդավարացման գործընթացի անշրջելիությունը» (տես «Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովում Հայաստանի Հանրապետության Նախագահ Ռոբերտ Քոչարյանի ելույթը»: Ստրասբուրգ, 2004 թ. հունիսի 23 (http://www.armeniaforeignministry.com/speeches/040623_president.html)):

[74] Տես «Opinion no. 212/2002, European Commission For Democracy Through Law» (Venice Commission). «Conclusions of the Meeting of the Working Group on Legislative Reforms to be Carried Out in the Republic of Armenia before the Entry into Force of the Revised Constitution». Strasbourg, 2002, 11–12 July (http://www.venice.coe.int/docs/2002/CDL(2002)109-e.pdf):

[75] Տես *Mkrtych (Sos) Gimishyan.* Political and Constitutional Reform in Armenia (Reforms Process in Georgia, Armenia and Azerbaijan examined). IDEA, 2005, 30 March (http://www.idea.int/europe_cis/reform_05.cfm):

ցությամբ պետք է իրականացնի բազմաթիվ երկարաժամկետ ծրագրեր[76]: Դրանք ներառում են «Աղքատության հաղթահարման ռազմավարական» ծրագիրը, «Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների» ծրագիրը և այլն:

Հայաստանի համար առաջնահերթություններից պետք է լինեն հասարակական կազմակերպությունների միջոցով քաղաքացիական հասարակության զարգացումը և հասարակության միավորումը տնտեսական, քաղաքական ու սոցիալական առաջընթացը խթանող ազգային ծրագրերի շուրջը: Այս նպատակով Հայաստանը համագործակցում է տարբեր եվրոպական հասարակական կազմակերպությունների հետ և իրականացնում է մի շարք հասարակական կրթական-ուսուցողական ծրագրեր:

դ) Տնտեսական բարեփոխումներ

Հայաստանում տնտեսական բարեփոխումները նպատակաուղղված են շուկայական տնտեսության կառուցմանը, ազատ շուկայական հարաբերությունների հաստատմանը, փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանը, գործարարության ոլորտում ազատ ու արդար մրցակցության ապահովմանը, բարձր տեխնոլոգիաների և տնտեսության գիտատար ճյուղերի զարգացմանը, էներգիայի այլընտրանքային աղբյուրների ստեղծմանը և հաղորդակցության ուղիների հնարավորությունների ընդլայնմանը: Սակայն դրանք այսքանով չեն սահմանափակվում[77]: Տնտեսական բարեփոխումներ իրականացնելիս Հայաստանը պետք է կարևորի ներդրումների համար բարենպաստ միջավայրի ստեղծումը, խրախուսի կապիտալի ներհոսքը, մեծացնի արտահանման ծավալները, ինչպես նաև մշակի թափանցիկ մաքսային ու հարկային օրենսդրություն՝ Եվրոպայի տնտեսությանը Հայաստանի տնտեսության ինտեգրումն ապահովելու համար: Այդ քաղաքականության կարևոր բաղադրիչը տնտեսության մենաշնորհային-օլիգարխիական վերահսկման հաղթահարումն է:

[76] Տես «World Bank Supports Implementation of Poverty Reduction Strategy in Armenia». Washington, 2004, 18 November (http://www.worldbank.org.am/WBSITE/EXTERNAL/ COUNTRIES/ECAEXT/ARMENIAEXTN/0,,contentMDK:20284788~menuPK:301584~pagePK:141137~piPK:141127~theSitePK:301579,00.html); «Lessons from Armenia's Institutional and Governance Review: Armenia's experience with a new World Bank tool offers valuable guidance for similar efforts elsewhere». The World Bank, «Prem Notes», 2002, December (http://www1.worldbank.org/prem/PREMNotes/premnote76.pdf):

[77] Տես «European Economic Chamber to Contribute to Economic Reforms in Armenia». «Armenian News Network», «Groong», 2005, 22 May (http://www.network54.com/Forum/149359/thread/1116860670/1116860670/ArCNews+NewsLetter); *նաև՝* «New Armenian Economic Plan Targets Poverty». Eurasianet Organization, 2004, 29 June (http://www.aiprg.net/en/content/65/#new_armenian), «Հայերի դերը միջազգային հանրության մեջ: Լոս Անջելեսի Համաշխարհային հարաբերությունների խորհրդում ՀՀ Նախագահ Ռոբերտ Քոչարյանի ելույթը», 1998 թ. սեպտեմբերի 28 (http://www.lawac.org/speech/pre%20sept%2004%20speeches/kocharian.html):

ե) Սոցիալական բարեփոխումներ

Սոցիալական բարեփոխումները հիմնականում նպատակաուղղված են սոցիալական անվտանգության մեխանիզմների մշակմանը: Դրանք ներառում են սոցիալական և ապահովագրական ֆոնդերի ստեղծում, բնակչության սոցիալական վիճակի բարելավում, նոր աշխատատեղերի ստեղծում, սոցիալական արդարության հաստատում: Հայաստանի բնակչության բարգավաճմանը միտված ռազմավարական բարեփոխումների անհրաժեշտությունը հիմնվում է այն հանգամանքի վրա, որ պետության անվտանգությանը քաղաքացու նվիրվածությունն զգալիորեն կախված է նրա անձնական սոցիալական անվտանգության աստիճանից և կոռուպցիայի դեմ իշխանությունների պայքարի արդյունավետության նկատմամբ նրա ունեցած վստահությունից:

3.2. Հայաստանի արտաքին անվտանգության ռազմավարությունը

Միջազգային ինտեգրումն ու փոխլրացման սկզբունքով միջազգային հարաբերությունների զարգացումը Հայաստանի արտաքին անվտանգության ապահովման ռազմավարությունն է: Ներկայումս աշխարհում տեղի են ունենում ինտեգրման ինտենսիվ գործընթացներ, և առանձին պետություններ չեն կարող ապահովել իրենց ազգային անվտանգությունը՝ առաջնորդվելով միայն իրենց ներքին շահերով: Հայաստանի արտաքին անվտանգությունը կապված է այնպիսի միջազգային ռազմաքաղաքական և աշխարհաքաղաքական զարգացումների հետ, որոնք անմիջականորեն ազդում են Հայաստանի միջազգային ու տարածաշրջանային անվտանգության միջավայրի ձևավորման վրա: Հետևաբար, արտաքին անվտանգության դեմ ուղղված համաչափ և անհամաչափ սպառնալիքների չեզոքացումը հնարավոր է միջազգային ինտեգրման միջոցով[78]: Հայաստանն այդ քաղաքականությունը որդեգրել է տարածաշրջանային և միջազգային մակարդակներում:

[78] Տես «Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովում Հայաստանի Հանրապետության Նախագահ Ռոբերտ Քոչարյանի ելույթը»: Ստրասբուրգ, 2004 թ. հունիսի 23 (http://www.armeniaforeignministry.com/speeches/040623_president.html), *նաև՝ Հայաստանում ԱՄՆ-ի դեսպան Ջոն Էվանս*. ԱՄՆ-ի համագործակցությունը Հայաստանի հետ: «Երկիր», 2005 թ. մայիսի 9 (http://www.yerkir.am/eng/index.php?sub=interview&id=31), *նաև՝* «Հայաստանը կարևոր քայլեր է ձեռնարկում միջազգային ահաբեկչության դեմ պայքարում»: ՀՀ Ազգային ժողով, 2005 թ. մայիսի 13 (http://www.parliament.am/news.php?do=view&ID=1181&cat_id=2&day=13&month=05&year=2005&lang=eng), «Национальная безопасность: ориентиры и приоритеты», интервью с Г. С. Котанджяном; «The National Security Strategy of the United States of America», 2002, 17 September (http://www.whitehouse.gov/nsc/nssall.html); «Концепция Национальной Безопасности Российской Федерации» (утверждена Указом Президента Российской Федерации от 17 декабря 1997 г. № 1300, в редакции Указа Президента Российской Федерации от 10 января 2000 г. № 24 (http://www.iss.niiit.ru/doktrins/doktr01.htm)):

Ինտեգրման միջոցով արտաքին անվտանգության ապահովման ռազմավարությունը նպատակաուղղված է տարբեր խնդիրների լուծմանը, տարածաշրջանային ու միջազգային համաչափ և անհամաչափ սպառնալիքների նախականխմանն ու չեզոքացմանը: Տարբեր ոլորտներում Հայաստանի արտաքին անվտանգության ռազմավարության հիմնական առաջնահերթությունները են.

–պաշտպանական ոլորտ՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ, արդար ու ժողովրդավարական լուծում,

–տնտեսական ոլորտ՝ Հայաստանի տնտեսական մեկուսացման փորձերի չեզոքացում,

–քաղաքական ոլորտ՝ Հայաստանի և Հայոց սփյուռքի միջազգային դերի ու քաղաքական ազդեցության ևվազեցման սպառնալիքների նախականխում և Հայաստանի Հանրապետության միջազգային հեղինակության բարձրացում,

–տեղեկատվական ոլորտ՝ միջազգային հանրության ապահովում Հայաստանի մասին ճշմարիտ տեղեկությամբ, ապատեղեկության տարածման փորձերի կանխում և հաղթահարում:

Արդյունավետ ինտեգրման ռազմավարություն իրականացնելու համար Հայաստանն իր արտաքին քաղաքականության մեջ որդեգրել է փոխլրացման սկզբունքը[79]: Այդ քաղաքականության էությունը հարևան երկրների և ուժի տարբեր համաշխարհային կենտրոնների հետ հավասարակշռված ու բազմակողմանի հարաբերություններ ունենալն է: Փոխլրացման սկզբունքը չի նշանակում հավասարակշռության պահպանում ամեն գնով: Այն միտված է միջազգային հարաբերություններով ընձեռվող ինտեգրման հնարավորությունների արդյունավետ օգտագործմանը: Լինելով միջազգային հանրության մի մասը՝ Հայաստանը պետք է իր փոխլրացման քաղաքականությունը հիմնի ոչ թե հակասությունների, այլ առավելապես մոտեցումների ընդհանրությունների համադրման վրա:

3.2.1. Տարածաշրջանային մակարդակ

Տարածաշրջանային մակարդակում Հայաստանի ինտեգրման ռազմավարությունը նպատակաուղղված է այնպիսի մեխանիզմների ստեղծմանը, որոնք

[79] Տես «Նոր արտասահմանից դեպի նոր հարևանություն. Հարավային Կովկասը Եվրոպայի ճանապարհին: Սևծովյան համատեքստի որոշ ենթատեքստ» (Հայաստանի Հանրապետության փոխարտգործնախարար, ԱՄՆ-ում ՀՀ նախկին դեսպան Ռուբեն Շուգարյանի 2004 թ. հոկտեմբերի 22-ին Դետրոյտում կայացած ելույթից (http://www.armeniaforeignministry.com/news/inthenews/04shugarian.html)):

երկրին հնարավորություն տան չեզոքացնելու տարածաշրջանային սպառնալիքները: Հայաստանը պատրաստակամ է ձևավորելու տարածաշրջանային համագործակցության միջավայր, ստեղծելու անվտանգության համակարգ և կառուցողական հարաբերություններ հաստատելու հարևան երկրների հետ: Այսպիսով՝ հնարավոր է օրենքի շրջանակներում լուծել տարածաշրջանային հակամարտությունները, առաջին հերթին Ղարաբաղյան հիմնախնդիրը, և կանխել պատերազմի վերսկսման վտանգը: Անհրաժեշտ է նաև հաղթահարել Հարավային Կովկասում առկա բաժանարար գծերը և հակազդել այն ռազմաքաղաքական դաշինքներին, որոնք հակասում են Հայաստանի ազգային շահերին: Հայաստանի ռազմավարությունը պետք է նաև չեզոքացնի Հայաստանի դեմ ուղղված սպառնալիքները՝ դիմակայելով միջազգային անվտանգության որոշ համակարգերի և առանձին պետությունների այնպիսի քաղաքականություններին, որոնք կարող են Հայաստանը դուրս թողնել տարածաշրջանային ծրագրերից և տնտեսապես ու քաղաքականապես մեկուսացնել: Միայն տարածաշրջանային համագործակցության միջոցով է հնարավոր դիմակայել միջազգային ու տարածաշրջանային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքներին, հասնել տնտեսական, սոցիալական ու մշակութային զգալի առաջընթացի և ապահովել կայուն զարգացում[80]:

Հակասական և անկայուն տարածաշրջանային միջավայրում Հայաստանի համար սպառնալիքները բազմազան են: Դրանց դիմակայելու համար պահանջվում են հատուկ միջոցներ: Հետևաբար, առանձին երկրների հետ հարաբերություններ կառուցելիս անհրաժեշտ է հաշվի առնել դրանք:

ա) Հարաբերություններ Վրաստանի հետ

Հայ-վրացական հարաբերությունները Հայաստանի համար ունեն ռազմավարական կարևորություն, քանի որ դրանք առնչվում են անվտանգության մի շարք առաջնահերթ հիմնախնդիրների[81]:

Թուրքիայի և Ադրբեջանի կողմից իրականացվող շրջափակման պայմաններում Վրաստանը այն հիմնական երկիրն է, որի միջոցով տրանսպորտային կապ է ապահովվում Ռուսաստանի և Եվրոպայի հետ: Բացի այդ, իր աշխարհագրական դիրքի շնորհիվ Վրաստանը հանդես է գալիս որպես Հայաստանի, Թուրքիայի և Ադրբեջանի միջև տնտեսական ու առևտրային միջնորդ: Երկու երկրների միջև հարաբերություններին ռազմավարական բնույթ է հաղորդում նաև այն հանգամանքը, որ Վրաստանի մարզերում կա հայազգի բնակչություն, հատկապես՝ հայաբնակ Ջավախք (Սամցխե-Ջավախեթին):

Այս առումով Հայաստանի համար մտահոգության առիթ է Վրաստանում ներքաղաքական իրավիճակի ցանկացած ապակայունացում, որը կապված է էթնիկական անհանդուրժողության, Աբխազիայում և Հարավային Օսեթիայում հակամարտությունների, Ռուսաստանի և Վրաստանի միջև հարաբերությունների լարվածության հետ: Վրաստանի հայկական համայնքների դերի նվազումը, որը նրանց մասնագիտական ու սոցիալ-տնտեսական կառուցվածքի հետզարգացման հետևանք է, սպառնում է երկկողմ կապերի կայունությանը, քանի որ կարող է խարխլել այն միջէթնիկական միջավայրը, որը մի ժամանակ համախմբում էր այս երկու բարիդրացիական ժողովուրդներին:

Վրաստանի ներքաղաքական իրավիճակի ապակայունացումն սպառնում է արտաքին աշխարհի հետ Հայաստանի տնտեսական ու տրանսպորտային կապերին, իսկ էթնիկական անհանդուրժողությունը կարող է հարուցել հակահայկական տրամադրություններ, որոնք կխթանեն Ջավախքի հայերի արտագաղթը: ՈՒստի Հայաստանը մեծապես շահագրգռված է Վրաստանի կայունության, հաստատուն ու անվտանգ զարգացման մեջ: Սրանք են այն սկզբունքները, որոնցով առաջնորդվում է Հայաստանը Վրաստանի հետ ունեցած հարաբերություններում: Հայաստանն աջակցում է Վրաստանին՝ Ջավախքում սոցիալ-տնտեսական ծրագրերի իրականացման գործում:

Վրաց-թուրքական և վրաց-ադրբեջանական համատեղ տնտեսական, տրանսպորտային ու ռազմական ծրագրերը միտված են տարածաշրջանում հավասարակշռության խախտմանն ու Հայաստանի մեկուսացմանը: Այս առումով սպառնալից է Կարս–Ախալքալաք երկաթգծի կառուցման նախագիծը[82]: Դրա նպատակը հարավկովկասյան պետություններին Ռուսաստանի և Եվրոպայի հետ կապող ուղի բացելն է՝ Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի միջև երկաթգծի կառուցմամբ, ընդսմին՝ առանց Հայաստանի մասնակցության: Ռազմավարական տեսանկյունից այդ նախագծի իրականացումը նպատակաուղղված է գոյություն ունեցող, բայց Թուրքիայի կողմից արգելափակված Գյումրի–Կարս երկաթգծի դերի նվազեցմանը:

[80] Տես «Armenia's Foreign Relations in 2003». «A Summary», 2004, 14 January (http://www.armeniaforeignministry.com/speeches/040623_president.html); *նաև*՝ «Statement by Vartan Oskanian, Minister of Foreign Affairs of the Republic of Armenia at Chatham House». London, 2004, 16 April (http://www.armeniaforeignministry.com/htms/speeches/040416_vo_uk.html):

[81] Տես «Նախագահ Ռոբերտ Քոչարյանի պաշտոնական այցը Վրաստան», 2004 թ. հոկտեմբերի 22–24 (http://news.president.am/eng/?sub=official&id=124&from=0&year=2004), *նաև*՝ «Saakashvili Comments on the Armenian President's Visit» (http://www.armeniandiaspora.com/forum/showthread.php?t=22181); «National Security Concept Finalized, Civil Georgia». UNA, «Georgia Online Magazine», 2005, 15 May (http://www.civil.ge/eng/article.php?id=9887):

[82] Տես *Artyom Yerkanyan*. The new «Project of the Century» against Armenia: it is decided to create a consortium for implementing the construction works of Kars–Akhalkalaki railway. «PanARMENIAN Network» analytical department, 2005, 6 April (http://www.panarmenian.net/details/eng/?id=513&date=2005-04-06):

Հայաստանի տրանսպորտային մեկուսացման ուղղությամբ Թուրքիայի և Ադրբեջանի նախաձեռնած այս ծրագրերը միաժամանակ նաև արտացոլում են Վրաստանի ազգային անվտանգության շահերը: ՈՒստի Հայաստանը փորձում է հավասարակշռել դրանք՝ Վրաստանին առաջարկելով վերագործարկել Սուխում–Թբիլիսի երկաթգիծը, որը ռազմավարական նշանակություն ունի Հայաստանի համար: Իր տնտեսական-տրանսպորտային մեկուսացման սպառնալիքը չեզոքացնելու նպատակով Հայաստանը զուգահեռաբար փորձում է նաև բանակցություններ վարել Կարս–Գյումրի–Թբիլիսի երկաթգծի բացման շուրջ: Այս ծրագիրը տարածաշրջանային շրջափակումից դուրս գալու իրատեսական ուղիներից մեկն է, և Հայաստանը կշարունակի ջանքեր գործադրել այն իրականացնելու ուղղությամբ:

Հայ-վրացական հարաբերությունները նաև կարևոր են փոխադարձ շահերի տեսանկյունից, քանի որ երկու երկրների աշխարհագրական դիրքը հնարավորություն է տալիս առևտրատրանսպորտային համագործակցության միջոցով Հայաստանին կապ հաստատելու Ռուսաստանի ու Եվրոպայի հետ, և Վրաստանին՝ Իրանի ու Միջին Արևելքի հետ: Բացի այդ, և՛ Հայաստանը, և՛ Վրաստանը, ելնելով ազգային ու տարածաշրջանային անվտանգության շահերից, տարածաշրջանային հակամարտությունների խաղաղ լուծման կողմնակից են: Երկու երկրներն էլ ընտրել են եվրոպական ինտեգրման միջոցով զարգացման ճանապարհը, նույնիսկ եթե այդ նպատակին հասնելու ուղիները տարբեր լինեն:

Երկու երկրների միջև ռազմական համագործակցություն գործնականում գրեթե չկա, թեև երկու պետությունն էլ նշում են, որ հայ-վրացական ռազմական համագործակցությունը ռազմավարական տեսանկյունից նույնպես փոխշահավետ է: Հայաստանը քայլեր է ձեռնարկում այդ կապերն ավելի ակտիվացնելու ուղղությամբ: Հայաստանի Նախագահի՝ 2004 թ. Վրաստան կատարած այցի վերջում պաշտոնապես հայտարարվեց, որ ռազմադիվանագիտական հարաբերությունների ընդլայնման նպատակով սկզբունքորեն ձեռք է բերվել համաձայնություն երկու երկրներում ռազմական կցորդի գրասենյակ բացելու վերաբերյալ*:

Հայ-վրացական հարաբերությունները կարևոր են ոչ միայն երկու երկրների համար, այլև հարավկովկասյան տարածաշրջանում անվտանգության արդյունավետ ճարտարապետության տեսանկյունից: Այդ հարաբերությունները կա-

* Այս որոշումը Նախագահ Մ. Սահակաշվիլու կողմից հրապարակվեց Նախագահ Քոչարյանի Թբիլիսի կատարած այցի վերջում՝ 2004 թ. հոկտեմբերի 24-ի մամլո ասուլիսի ժամանակ:

րող են լինել Հարավային Կովկասում կայունության պահպանման կարևոր գործոն:

բ) Հարաբերություններ Իրանի հետ

Հայաստանի հարաբերությունները Իրանի հետ[83] կարևորվում են այն հանգամանքով, որ երկուսն էլ ցանկանում են տարածաշրջանում պահպանել ռազմաքաղաքական հավասարակշռություն ու կայունություն: Լինելով տնտեսական, ռազմական ու մշակութային մեծ ներուժ ունեցող և անկախ արտաքին քաղաքականություն վարող երկիր՝ Իրանը կարևոր դեր է խաղում տարածաշրջանում ռազմաքաղաքական իրադրության ձևավորման գործում և Թուրքիայի հետ մրցակցում է և՛ տնտեսական, և՛ քաղաքական ոլորտներում: Իրանի արտաքին քաղաքականության հայեցակարգում Թուրքիան, որը ՆԱՏՕ-ի անդամ է և Իսրայելի ու ԱՄՆ-ի դաշնակից, Իրանի ազգային անվտանգության համար սպառնալիք է ներկայացնում: Թուրք-իրանական մրցակցությունը հանդես է գալիս որպես տարածաշրջանային հավասարակշռության ապահովման գործոններից մեկը, և այս առումով հայ-իրանական համագործակցությունը միտված է թուրք-ադրբեջանական դաշինքի հակահայկական քաղաքականության չեզոքացմանը:

Իրանի հետ Հայաստանի հարաբերությունները հիմնականում կրում են տնտեսական և մշակութային բնույթ: Տնտեսական հարաբերությունների մեջ զգալի առաջընթաց է տեղի ունեցել հատկապես էներգետիկայի ոլորտում: Մշակվել և այժմ իրագործվում են մի շարք տնտեսական ու էներգետիկական ծրագրեր, որոնց շնորհիվ կստեղծվի էներգիայի այլընտրանքային ռեսուրս՝ Հայաստանի էներգետիկ անվտանգությունն ապահովելու նպատակով:

Հայաստանի կողմից Իրանը կարևորվում է որպես մի երկիր, որն ապահովում է ռազմավարական ելք դեպի Ասիա և Կենտրոնական Արևելք: Սա հատկապես կարևոր է տնտեսական և տրանսպորտային շրջափակման պայմաններում Հայաստանի մեկուսացումը չեզոքացնելու առումով: Իրանը նաև այլընտրանքային կապ է ապահովում Ռուսաստանի հետ: Բացի այդ, Իրանը Ղարաբաղյան հակամարտության գոտուն հարևան երկիր է, որը հակամարտության լուծման գործում որդեգրել է հավասարակշռված քաղաքականություն:

Իրանի վրա ազդելու Ադրբեջանի փորձերը սպառնալիք են Հայաստանի համար: Հատկապես, որ Իրանը, լինելով իսլամական երկիր և ստանձնելով

[83] Տես «Հայաստանի Նախագահ Ռոբերտ Քոչարյանի և Իրանի Նախագահ Մոհամադ Խաթամիի համատեղ մամլո ասուլիսը», 2005 թ. մայիսի 25 (http://news.president.am/eng/?sub=press&id=84&year=2004), *նաև*՝ «Azerbaijan's President in Iran». «Eurasia Daily Monitor», 2005, 3 February, Vol. 2, Issue 24 (http://www.jamestown.org/publications_details.php?volume_id=407&issue_id=3220&article_id=2369199):

իսլամական ժողովուրդների պաշտպանի դերը, իսլամական աշխարհում ունի զգալի ազդեցություն: Ադրբեջանը շահարկում է այս հանգամանքը՝ Ղարաբաղյան հակամարտությունը ներկայացնելով կրոնական լույսի ներքո, իր ճարտասանությունը համեմելով «մոտ մեկ միլիոն մուսուլման փախստականների» վերաբերյալ գռեհիկ բանսարկություններով: Բաքուն իրանա-ամերիկյան լարված հարաբերություններն օգտագործում է որպես երկու կողմի վրա էլ ճնշում գործադրելու միջոց: Իրանի հետ ռազմավարական բանակցությունների ընթացքում Ադրբեջանն սպառնում է աջակցել ԱՄՆ-ին՝ Իրանի հետ նրա հնարավոր պատերազմի դեպքում, և հակառակը, շրջվելով դեպի Իրան՝ Բաքուն շանտաժի է ենթարկում Վաշինգտոնին: Պատերազմի սպառնալիքը կարող է Իրանին ստիպել տեղի տալ Ադրբեջանի ճնշումներին և հրաժարվել իր հավասարակշռված դիրքից: Իսլամական կազմակերպությունները, հատկապես՝ Իսլամական Համաժողովը, որտեղ ընդունվել են հակահայկական որոշումներ, ստեղծել է այդ հավասարակշռությունը խախտելու նախադեպեր:

Հայաստանը փորձում է չեզոքացնել այդ սպառնալիքը՝ հավասարակշռված հարաբերություններ պահպանելով Իրանի հետ: Այդ նպատակով Հայաստանը ԱՄՆ-ի հետ իր համագործակցությունը չի ծառայեցնում ի վնաս Իրանի շահերի: Տվյալ համատեքստում Իրանի հետ քաղաքական և տնտեսական համագործակցությունը Հայաստանի քաղաքականության մի կարևոր մասն է, և այն նույնպես միտված է իսլամական աշխարհում Հայաստանի նկատմամբ բարեհաճ վերաբերմունքի ձևավորմանը:

Միևնույն ժամանակ Իրանի հետ տարածաշրջանային անվտանգության հարցերով մշտական խորհրդատվությունները Հայաստանի համար ավելի ընկալելի են դարձնում այդ երկիրը՝ միջազգային, այդ թվում՝ տարածաշրջանային, քաղաքականության ոլորտում Իրանի դիրքորոշումը գնահատելու առումով:

գ) Հարաբերություններ Թուրքիայի հետ

Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը մնում է տարածաշրջանի ամենահրատապ հարցերից մեկը: Այն ոչ միայն ներառում է պարզապես երկու պետությունների միջև հարաբերությունները, այլև անմիջականորեն ազդում է տարածաշրջանում կայունության ու անվտանգության ապահովման, ինչպես նաև տարածաշրջանային համագործակցության զարգացման վրա: Այս հանգամանքը կանխորոշում է մի շարք կարևոր գործընթացներ: Հայ-թուրքական հարաբերությունների լարված բնույթն ստեղծում է Հայաստանի ազգային անվտանգության դեմ ուղղված որոշակի սպառնալիքներ՝ խոչընդոտելով երկրի կայուն զարգացմանը:

Հայ-թուրքական հարաբերությունները բնորոշվում են հետևյալ հիմնախնդիրների առկայությամբ, որոնք սպառնալիք են Հայաստանի ազգային անվտանգության համար:

Առաջին. կարևոր խնդիր է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը[84]: Հայ-թուրքական հարաբերությունները հաճախ համեմատվում են մի այնպիսի մտացածին իրավիճակի հետ, երբ Իսրայելին մտահոգում է իր անվտանգությունը՝ կապված այն հանգամանքի հետ, որ իր սահմանակից Գերմանիան հրաժարվում է Ողջակիզման փաստի ճանաչումից: Ավելին. Թուրքիան ձեռնարկում է ցեղասպանության փաստի հերքման նպատակամղված անբարոյական արշավ: Հայաստանի վրա ճնշում գործադրելով՝ նա փորձում է աշխարհի բոլոր հայերին ստիպել դադարեցնել ցեղասպանության ճանաչմանն ուղղված իրենց ջանքերը, քանի որ կարծում է, թե Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը կարող է սպառնալիք լինել իր հեղինակության և տարածքային ամբողջականության համար: Ի լրումն դրա՝ նա այդ հարցի գոյությունն իսկ դիտում է որպես Եվրամիությանը իր ինտեգրման համար հնարավոր խոչընդոտ: Ահա թե ինչու է Թուրքիան, ննջագփռելով փաստերը, բուռն գործունեություն ծավալել միջազգային մասշտաբներով Եղեռնի պետական անվանարկման ուղղությամբ:

---

[84] Տես «Գերագույն ոճիր, գերագույն մարտահրավեր» (Հայոց ցեղասպանության 90-րդ տարելիցին նվիրված միջազգային համաժողովում ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանի եզրափակիչ խոսքը, 2005 թ. ապրիլի 21 (http://www.armeniaforeignministry.com/speeches/050421_vo_confrance.html)), *նաև*՝ «Վ. Օսկանյանի հայտարարությունը նացիստական համակենտրոնացման ճամբարներից ազատագրման 60-րդ տարելիցին նվիրված 28-րդ հատուկ հանդիպման ժամանակ»: Նյու Յորք, 2005 թ. հունվարի 24 (http://www.armeniaforeignministry.com/speeches/050124_vo_un.html), «Turkey Introduces Sanctions for Mentioning Armenian Genocide». «PanARMENIAN.Net», 2005, 27 May (http://www.panarmenian.net/news/eng/?task=world&id=13511&date=2005-05-27); «Chirac Appeases Armenians on Turkish EU Bid». «Turkish Weekly», 2005, 26 May (http://www.turkishweekly.net/news.php?id=11197); *Charles Tannock*. Turkey, Armenia, and the burden of memory. «Daily Times», 2005, 20 May (http://www.dailytimes.com.pk/default.asp?page=story_20-5-2005_pg3_4); «Turkish PM: We'll Retaliate against States that Recognize «Genocide»». «TNA Parliament Bureau». Ankara, «Turkish weekly», 2005, 19 May (http://www.turkishweekly.net/news.php?id=10553); «Peace plans with Armenia put on ice, for now». «Turkish Daily News», 2005, 18 May (http://www.turkishdailynews.com.tr/article.php?enewsid=13509); «Kocharian brings up «genocide» again». Ankara, «Turkish Daily News», 2005, 17 May (http://www.turkishdailynews.com.tr/article.php?enewsid=13409); «Kocharian Showed Yerevan's True Intentions». Latest wire from «AFP BY SEMIH IDIZ», «MILLIYET», «Turkish Digest», 2005, 17 May (http://www.turkishdigest.com/archive/2005_05_01_archive.html); *Գայանե Դանիելյան*. Թուրք գիտնականն օգտվում է հայկական արխիվներից օսմանյան պատմության մեջ հետազոտություններ կատարելու համար, 2005 թ. մայիսի 11 (http://www.armenialiberty.org/armeniareport/report/en/2005/05/2A616C16-7E2B-433C-A49B-2BD5C1D83278.asp), *Suleyman Kurt, Huseyin Akkas*. Ankara Moderate to Erdogan–Kocharian Meeting. 2005, June (http://www.todayszaman.com/tz-web/detaylar.do?load=detay&link=19223); «Switzerland to Arrest Turkish Prof. for Armenian Allegations». «Journal of Turkish Weekly», 2005, 3 May (http://www.turkishweekly.net/news.php?id=9415):

Բացի այդ, վերջին ժամանակներս Հայոց սփյուռքը որոշակի հաջողությունների է հասել. մի շարք պետություններ ևս ճանաչել են Հայոց ցեղասպանության փաստը: Հայաստանը Հայոց ցեղասպանության ճանաչումը դիտում է պատմական արդարության վերականգնման, Թուրքիայի կողմից իր անցյալի նորովի արժեքավորման համատեքստում, որպեսզի բացառվի հայ ժողովրդի հանդեպ ցեղասպանության կրկնության վտանգը: Հայաստանը գիտակցում է, որ ցեղասպանության ճանաչումը մի դժվարին գործընթաց է, որն անմիջականորեն կապված է Թուրքիայում ժողովրդավարական արժեքների հաստատման հետ[85]: ՈՒստի և Հայաստանը այս հարցի լուծումը տեսնում է Թուրքիայի եվրոպական ինտեգրման համատեքստում, որը նրա ժողովրդավարացման գործոնն է:

Երկրորդ. Թուրքիան ձգտում է ազդեցություն գործելու Ղարաբաղյան հակամարտության լուծման վրա՝ հօգուտ Ադրբեջանի[86]: Թուրքիան հասկանում է, որ Ղարաբաղյան հիմնախնդրի արդարացի լուծումը Հայաստանի անվտանգության ապահովման առաջնահերթություններից մեկն է: Խնդրի լուծումը հօգուտ Ադրբեջանի, ինչը ենթադրում է հայկական քաղաքակրթության վերացում իր ծագման ու զարգացման օջախներից մեկում՝ Լեռնային Ղարաբաղում, կհանգեցնի Հայաստանի միջազգային ու տարածաշրջանային դերի նվազմանը և սպառնալիք կդառնա հայ ժողովրդի հետագա գոյության համար: Այդ նպատակին հասնելու միտումով Թուրքիան լայնամասշտաբ ռազմական աջակցություն է ցուցաբերում Ադրբեջանին՝ փորձելով խախտել Ղարաբաղյան հակամարտության գոտում առկա ռազմական հավասարակշռությունը և ստեղծել ռազմական ճանապարհով հիմնախնդրի «լուծման» հեռանկարներ[87]:

Հայ-թուրքական հարաբերությունների լարվածությունը պայմանավորված է նաև այն փաստով, որ Թուրքիան իրականացնում է տարածաշրջանային նշանակություն ունեցող մի շարք տնտեսական ու տրանսպորտային ծրագրեր՝ առանց Հայաստանի մասնակցության: Բաքու–Ջեյհան նավթատարի ու Բաքու–Էրզրում գազատարի անցկացումը, Կարս–Ախալքալաք երկաթգծի կառուցումը և այլ նախագծեր ծառայում են հենց այդ նպատակին: Այս նախագծերը, իրականացվելով Թուրքիայի աջակցությամբ, նպատակաուղղված են Հայաստանի տնտեսական ու տրանսպորտային մեկուսացմանն ու տարածաշրջանում նրա դերի նվազեցմանը: Այդ քաղաքականությունը նաև խթանում է Հայաստանի նկատմամբ Ադրբեջանի թշնամանքը և դառնում վերջինիս ագրեսիվ ռազմամոլության ու ռանչիզմի քաղաքականության դրդապատճառներից մեկը[88]:

Այդ սպառնալիքների չեզոքացումը հնարավոր կլինի Հայաստանի նկատմամբ Թուրքիայի ոչ թշնամական վերաբերմունքի ձևավորման միջոցով: Միջազգային հարթությունն այս առումով կարող է էական դեր խաղալ. կարևորվում է հատկապես այնպիսի եվրոպական հաստատությունների միջնորդային դերը, ինչպիսիք են Եվրամիությունը, ՆԱՏՕ-ն, ԵԱՀԿ-ն, Եվրոպայի խորհուրդը, ՀԱՊԿ-ը, ինչպես նաև ԱՄՆ-ի ու ՌԴ դերը: Հայաստանի արտաքին անվտանգության ռազմավարությունը նպատակաուղղված է այդ գործադրվող ջանքերի ու Թուրքիայի վրա ազդեցությունների է՛լ ավելի ակտիվացմանը:

Պատահական չէ, որ Եվրամիությանը Թուրքիայի անդամակցության պայմաններից մեկը բոլոր հարևանների, հատկապես Հայաստանի հետ[89] հարաբերութ-

[85] Տես «EU Criticizes Turkey for Refusing to Host Conference on Armenian Genocide». Yerevan, «Arminfo», 2005, 27 May (http://www.arminfo.am/news.htm##3); *նաև՝* «Turkish universities postpone Armenian conference under pressure». Detroit, «Free Press», 2005, 25 May (http://www.armeniandiaspora.com/forum/showthread.php?t=27880):

[86] Տես «Լեռնային Ղարաբաղ. «Սպիտակ թուղթ»: Ազգային և միջազգային հետազոտությունների հայկական կենտրոն»: Ե., 1997 թ. մարտ, *նաև՝ Շահեն Ավագյան.* Լեռնային Ղարաբաղ. օրինական մոտեցումներ (http://www.armeniaforeignministry.com/fr/nk/legalaspects/legalaspect_full.pdf), «ԱԳ նախարար Վ. Օսկանյանի հայտարարությունը Մարդու իրավունքների ՄԱԿ-ի հանձնաժողովի 61-րդ նստաշրջանում», 2005 թ. մարտի 15 (http://www.armeniaforeignministry.am/speeches/050315_un_vo.html), *Suleyman Kurt.* Armenia Consents to Negotiate Without «Pre-Condition». 2005, 27 April (http://www.zaman.com/?bl=international&alt=&trh=20050427&hn=18898):

[87] Տես «ԼՂՀ արտգործնախարար Արման Մելիքյանի հարցազրույցը թուրքական «TRT1» հեռուստաընկերությանը»: ԼՂՀ, 2005 թ. ապրիլի 19 (http://nkr.am/eng/mid/press/press.htm):

[88] Տես *David E. Sanger.* There's Democracy, and There's an Oil Pipeline. «New York Times», 2005, 29 May (http://www.nytimes.com/2005/05/29/weekinreview/29sanger.html):

[89] Տես «Հասարակական կարծիքի հարցման արդյունքները («Հայ-թուրքական հարաբերություններ. նոր սերունդ, նոր մոտեցումներ» անցկացված Հասարակական երկխոսության և զարգացման կենտրոնի կողմից կազմակերպված Բաց համաժողովից առաջ)»: Ե., 2004 թ. նոյեմբեր (http://www.cpdd.am/publications_November.html):
Հասարակական երկխոսության և զարգացման կենտրոնը Երևանում անցկացրեց 100 հոգու հարցում (47 %-ը՝ կանայք, 53 %-ը՝ տղամարդիկ, ինչպես նաև՝ 28 %-ը՝ 16–25 տարեկան, 45 %-ը՝ 26–45 տարեկան, 13 %-ը՝ 45–60 տարեկան և 14 %-ը՝ 60 և ավելի տարեկան անձինք).
1. Ինչպե՞ս եք վերաբերվում հայ-թուրքական սահմանի բացմանը:
Դրական՝ 73 %, Բացասական՝ 19 %, Չեզոք՝ 8 %:
2. Կարո՞ղ է արդյոք հասարակական նախաձեռնությունն արդյունավետ լինել այս հարցում:
Այո՛, կարող է՝ 51 %, Այո՛, բայց ոչ այնքան՝ 35 %, Ո՛չ, բացարձակապես չի կարող՝ 14 %:
3. Ձեր առօրյա կյանքում դուք օգտագործո՞ւմ եք թուրքական ապրանքներ:
Հաճախ՝ 26 %, Երբեմն՝ 58 %, Երբեք՝ 16 %:
4. Կարո՞ղ են արդյոք հայ-թուրքական շփումներն արդյունավետ լինել տարածաշրջանային խնդիրների լուծման հարցում (օրինակ՝ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման, տրանսպորտային և այլն):
Իհարկե, կարող են՝ 29 %, Մասամբ՝ 53 %, Ո՛չ, չեն կարող՝ 18 %:
5. Կարո՞ղ է Հայաստանը լուծել իր տնտեսական խնդիրները առանց հարևանների, հատկապես՝ Թուրքիայի հետ կարգավորված հարաբերություններ ունենալու:
Այո՛, բայց դժվարությամբ՝ 57 %, Այո՛, անկասկած կարող է՝ 13 %, Ո՛չ, ոչ մի կերպ չի կարող՝ 30 %:

յունների կարգավորումն է: Այն փաստը, որ հարավկովկասյան տարածաշրջանն ընդգրկված է «Եվրոպական հարևանություն» ծրագրում, շեշտում է այս պարտադիր ու միաժամանակ բնական պահանջը: Եթե Եվրամիությունը տարածվի մինչև Թուրքիա, ապա վերջինս չի կարող փակ սահման ունենալ Հայաստանի հետ:

Եվրամիությանը Թուրքիայի անդամակցությունը չի հակասում Հայաստանի ազգային անվտանգության շահերին, քանի որ դա այդ երկրին կխրախուսի դառնալու ավելի կանխատեսելի: Եվրամիությանը անդամակցությամբ Թուրքիայում կհաստատվի ազատական ժողովրդավարություն, կփոխվեն նրա առաջնահերթությունները արտաքին քաղաքականության, տնտեսական զարգացման և մարդու իրավունքների ոլորտներում[90]:

Նկատի ունենալով Թուրքիայի և Ադրբեջանի հակահայկական համագործակցությունը՝ Հայաստանը պետք է կատարելագործի միջազգային ասպարեզում իր տեղեկատվական և իրազեկությունն ապահովող գործունեության որակը, մասնավորապես՝ հայ ժողովրդի պատմության ու նույնականության, Հայոց ցեղասպանության և Ղարաբաղյան հիմնախնդրի շուրջ թշնամական քարոզչության և ապատեղեկատվության կանխման կամ դրան հակազդման նպատակով:

դ) Հարաբերություններ Ադրբեջանի հետ

Հայ-ադրբեջանական հարաբերություններ չլինելու պատճառը չլուծված Ղարաբաղյան զինված հակամարտությունն է[91]: Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի դեմ Ադրբեջանի վարած քաղաքականությունը՝ Ղարաբաղյան

[90] Տես *V. Oskanian.* We see no connection between European Constitution and Turkey's Accession to EU. «PanARMENIAN Network», 2005, 24 May (http://www.panarmenian.net/news/eng/?task=society&id=13433&date=2005-05-24); *նաև*՝ «Turkey accession to EU fits Armenia interests». «PanARMENIAN Network», 2005, 19 April (http://www.turkishdigest.com/archive/2005_04_01_archive.html); *Keith Nuthall.* EU demands legal reform in Turkey. «Lawyer News», 2005, 16 May (http://www.thelawyer.com/lawyernews.html):

[91] Տես «Եվ Խորհրդարանական վեհաժողովում Հայաստանի Հանրապետության Նախագահ Ռոբերտ Քոչարյանի ելույթը»: Ստրասբուրգ, 2004 թ. հունիսի 23 (http://www.armeniaforeignministry.com/speeches/040623_president.html), *նաև*՝ «Address by Mr. Ilham Aliyev, Head of the Parliamentary Delegation of the Republic of Azerbaijan to the PACE on item «Europe's Fight Against Economic and Transnational Organized Crime»». Strasbourg, 2001, 23–27 April (http://www.azerbembassy.org.cn/eng/statements_1.html), «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. Նախագահ, խորհրդարան, կառավարություն: ԼՂՀ Ազգային ժողովի ընդունած օրենքների ցանկ՝ ԼՂՀ խորհրդարան» (http://nkr.am/eng/gov/zakon.htm), «ԼՂՀ արտգործնախարար Արման Մելիքյանի հարցազրույցը ԼՂՀ հանրային հեռուստա- և ռադիոընկերություններ», 2005 թ. մայիսի 22 (http://www.nkr.am/eng/news/index.htm):

հակամարտության առումով, ստեղծում է Հայաստանի ազգային անվտանգության դեմ ուղղված տարբեր համաչափ և անհամաչափ սպառնալիքներ:

Ադրբեջանի ռազմատենչ քաղաքականությունը, այն է՝ Հայաստանի նկատմամբ ռազմական գերակշռության ձեռքբերմամբ[92] Ղարաբաղյան հակամարտությունը էթնիկական զտումների միջոցով կարգավորելու անթաքույց նպատակը, անմիջական ռազմական սպառնալիք է և վտանգում է անվտանգության միջավայրի կայունությունը ամբողջ տարածաշրջանում: Բացի այդ, մշտական ռազմական սպառնալիքի առկայությունը խոչընդոտում է Հայաստանում պաշտպանական ոլորտի բարեփոխումների իրականացմանը և հանգեցնում սպառազինությունների մրցավազքի: Ավելին, Բաքուն պետության ղեկավարի գլխավորությամբ շարունակաբար ադրբեջանական ժողովրդի մեջ հայերի նկատմամբ ատելություն է սերմանում*: Այդ դիրքորոշումը պատշաճ չէ եվրոպական արժեքների համակարգին իր հավատարմությունը հռչակած

[92] Տես «U.S. Congress Armenian Caucus Co-chairs Call for U.S. Response to Azerbaijan's Aggression». Washington, DC. «Ամերիկայի հայկական համագումարը շնորհակալություն է հայտնել Կոնգրեսի հայկական հարցերի գծով խմբի համանախագահներ կոնգրեսականներ Ջո Նայնեբերգին (Հանրապետական կուսակցություն, Միչիգանի նահանգ) և Ֆրենկ Փալոունին (Ժողովրդավարական կուսակցություն, Նյու Ջերսի նահանգ)՝ Ադրբեջանի կողմից Հայաստանի հասցեին բազմիցս կրկնվող հանդուգն սպառնալիքների նկատմամբ իրենց վճռական դիրքորոշման և պետքարտուղար Քոլին Փաուելի առջև այդ «լուրջ հարցի» բարձրացման համար: ՈՒրբաթ օրը Փաուելին ուղղված համտեղ նամակում, որի պատճենները ուղարկվել են ազգային անվտանգության գծով խորհրդական Քոնդոլիզա Ռայսին և եվրասիական հակամարտությունների գծով հատուկ համադասող դեսպան Ստիվեն Մանին, կոնգրեսականներ Նայնեբերգը և Փալոունը հայտնում էին, որ մի ադրբեջանցի պետական պաշտոնյայի վերջերս արած՝ Հայաստանի բռնազավթման և «Կովկասից ամբողջ հայ բնակչության հեռացման» կոչին ԱՄՆ-ի արձագանքը լռությամբ չի կարելի «համարել սոսկ ճարտասանություն»: 2004, 25 August (http://www.armeniandiaspora.com/forum/showthread.php?threadid=8658), *նաև*՝ «Azerbaijan and Democracy. A watermelon revolution?» «The Economist print edition», 2005, 2 June (http://www.economist.com/World/europe/displayStory.cfm?story_id=4034088); *Igor Torbakov.* Baku seeks to break Karabakh deadlock. «Eurasia Daily Monitor», 2004, 13 August, Vol. 1, Issue 73 (http://www.jamestown.org/publications_details.php?volume_id=401&issue_id=3048&article_id=2368405):

* Վերջերս Ադրբեջանի որոշ շրջաններ երկրի իշխանությունների անմիջական ղեկավարությամբ փորձում են ստեղծել և տարածել «հայերի կողմից Ադրբեջանցիների նկատմամբ իրականացված ցեղասպանության» առասպելը՝ որպես հակակշիռ Օսմանյան Թուրքիայում 1915 թ. և Ադրբեջանում 1920-ական թվականներին (Շուշի), 1988 թ. (Սումգայիթ ու Կիրովաբադ) և 1990 թ. (Բաքու) իրականացված և փաստացի ապացուցված հայկական կոտորածների: 1998 թ. անգամ հրապարակվեց Ադրբեջանի Նախագահի «Ադրբեջանցիների ցեղասպանության մասին» հրամանագիրը (http://www.human.gov.az/?schife=etrafli&dil=ru&sid=MTMyMjMzMTA4MTMyNjE1Mw==): Այս առումով Ադրբեջանի իշխանությունները մեծ տեղ են հատկացնում «Խոջալուի իրադարձություններին», որոնց անկողմնակալ վերլուծությունը վկայում է, որ դա ոչ թե հայերի կողմից իրականացված դաժանություն էր, այլ Ադրբեջանում իշխանության համար մղվող պայքարի հետևանք:

երկրի համար և վկայում է, որ քաղաքական շահերին հետամուտ Ադրբեջանի իշխանությունների կողմից այդ սկզբունքների հայտարարումը քաղարկում է իրական քաղաքական նպատակները և կրում է զուտ դեկլարատիվ բնույթ: ՈՒԽստի և Հայաստանի ռազմական անվտանգության ապահովումը պահանջում է, որ նրա Զինված ուժերը մշտապես լինեն մարտական բարձր պատրաստականության վիճակում՝ սահմանների անձեռնմխելիությունը պաշտպանելու, ցանկացած ագրեսիայի արժանի հակահարված տալու համար:

ԵԱՀԿ Մինսկի խումբը՝ Ռուսաստանի Դաշնություն, ԱՄՆ[93] և Ֆրանսիա, որն ստանձնել է հակամարտող հայկական և ադրբեջանական կողմերի միջև բանակցություններ վարելու առաքելությունը, ստեղծել է հակամարտության լուծման միջնորդական և խորհրդատվական-բանակցային մեխանիզմ: Դրա կազմն արտացոլում է Կովկասում միջազգային շահերի հիմնական վեկտորները, և խմբի անդամ երկրներն էլ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական անդամներ են: ՈՒԽստի է դժվար է պատկերացնել ավելի պատշաճ միջնորդական ձևաչափ: Հայաստանը հիմնախնդրի լուծումը տեսնում է Մինսկի խմբի շրջանակներում փոխզիջումային և խաղաղ լուծման ճանապարհով՝ հիմնված Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության ֆիզիկական անվտանգության երաշխավորման պահանջի, Լեռնային Ղարաբաղի պետական կառույցների շարունակական զարգացման, ազատական ժողովրդավարության ու շուկայական տնտեսության սկզբունքներով տարածաշրջանի կայուն զարգացման ապահովման պայմանների վրա: Հայաստանի կողմից ընդունելի կլինեն միայն հետևյալ երեք սկզբունքների վրա խարսխվող լուծումները[94].

–Ադրբեջանին Լեռնային Ղարաբաղի ենթակայության անհնարինություն,

–Լեռնային Ղարաբաղի անկլավային գոյության անհնարինություն, Հայաստանի հետ ցամաքային սահմանի առկայություն, և համաշխարհային առաջադիմական տնտեսական ու քաղաքական գործընթացներում Լեռնային Ղարաբաղի ներգրավվածության միջազգային երաշխավորվածություն,

–պատերազմը չվերսկսվելու միջազգային հստակ երաշխիքների ապահովում, նույնպիսի երաշխիքներ են անհրաժեշտ նաև Լեռնային Ղարաբաղի բնակչության անվտանգության համար:

[93] Տես *General Charles Wald.* USA will increase efforts for settlement of conflict. «Azer Tag», 2005, 2 April (http://www.demaz.org/cgi-bin/e-cms/vis/vis.pl?s= 001&p=0055&n=000809&g):

[94] Տես ՀՀ Ազգային ժողովում արտգործնախարար Վարդան Օսկանյանի ելույթը «Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիր: Կարգավորման ուղիները» թեմայով խորհրդարանական լսումների ժամանակ, 2005 թ. մարտի 29 (http://www.armeniaforeignministry.com/speeches/050329_vo_ana_nk.html):

Բոլոր հնարավոր փոխզիջումները պետք է կատարվեն այդ երեք սկզբունքների հաշվառմամբ*:

Հայաստանի անվտանգության համար այլ լուրջ սպառնալիք են Ադրբեջանի կողմից իրականացվող Հայաստանի տնտեսական ու տրանսպորտային շրջափակումը և տարածաշրջանային էներգետիկական ու տնտեսական ծրագրերից իրեն դուրս թողնելու քաղաքականությունը[95]: Այդ քաղաքականությունը նպատակաուղղված է տարածաշրջանային զարգացման քողի տակ Հայաստանի տնտեսական մեկուսացմանը և ինտեգրման գործընթացների դանդաղեցմանը[96]:

Հայաստանը բազմիցս է հայտարարել, որ տարածաշրջանի զարգացման և Ղարաբաղյան հակամարտության լուծման միակ իրատեսական ուղին է համագործակցություն սկսելը՝ համատեղ տնտեսական ծրագրերի իրականացումը, այդ թվում նաև համագործակցությունը տրանսպորտի բնագավառում: Տնտեսական կապերի աստիճանական վերահաստատումը կարող է հիմք դառայել երկու հարևան ժողովուրդների միջև փոխվստահության մթնոլորտ ստեղծելու համար, ինչը հակամարտության կարգավորման գլխավոր նախադրյալներից մեկն է[97]:

* Ղարաբաղյան հարցի քաղաքական լուծման ժամանակ այս երեք սկզբունքների կիրառման առանձնահատկությունները կներկայացնենք ստորև՝ այդ հարցի հնարավոր լուծումներին առնչվող հատվածում:

[95] ԱՄՆ-ի Կոնգրեսը 1992 թ. արձագանքեց Ադրբեջանի կողմից Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի շրջափակմանը՝ ընդունելով «Ազատության օժանդակման ակտը (գրանցված օրինագիծ (ուղարկված Նախագահին)), մաս 907: Ադրբեջանին տրամադրվող օգնության սահմանափակում». ԱՄՆ-ի օգնությունը այս կամ ցանկացած այլ Ակտի շրջանակներում (ի տարբերություն այդ Ակտի V բաժնով օգնությունից) չի կարող տրամադրվել Ադրբեջանի կառավարությանը, քանի դեռ Նախագահը չի համոզվել և չի հայտնել Կոնգրեսին, որ Ադրբեջանի կառավարությունը ակնհայտ քայլեր է ձեռնարկում Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի շրջափակման և ուժի ակտիվ կիրառման մյուս բոլոր ձևերի վերացման ուղղությամբ: Այդ օրենքը դադարեց գործել Նախագահի 2002 թ. հրամանով:

[96] Տես «US Ambassador Considers Statement of Armenian Prime Minister as Groundless». «Today.Az, Politics», 2005, 28 May (http://www.today.az/news/politics/19460.html), *նաև՝ Հայաստանի Վարչապետ Անդրանիկ Մարգարյան*. Բաքու–Ջեյհան նավթատարի բացումը խախտում է տարածաշրջանային տնտեսական հավասարակշռությունը: Ե., 2006 թ. մայիսի 25 (http://www.arka.am/en/archive/n05/n2505/250506.html); «Russia to Help Build Iranian Railroad». Tehran, «RIA Novosti», 2005, 3 May (http://en.rian.ru/world/20050503/39789387.html); «Ceremony on the commissioning of Azerbaijan part of Baku–Tbilisi–Ceyhan main export pipeline named after Heydar Aliyev. Speech of the President of Azerbaijan Ilham Aliyev». Baku, «Azer Tag», 2005, 26 May (http://www.president.az/articles.php?item_id=20070814105442402&sec_id=15):

[97] Տես *Thomas de Waal.* Crossing the Line Reflections on the Nagorno Karabakh peace process. «Conciliation Resources». «Practitioners' Notes 3», 2001 (http://azer.com/aiweb/categories/karabakh/media/key_west_after/media_waall.html):

Ադրբեջանի իշխանությունները Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորումը կապում են Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հետ, այն էլ միայն այն պայմանով, որ այն լուծվի իրենց օգտին: Այս կոշտ դիրքորոշումը ոչ մի հեռանկար չունի: Ի վերջո, Հայաստանն ու Ադրբեջանը հարևաններ են, ներգրավված են բազմաթիվ միջազգային կազմակերպություններում՝ ԱՊՀ-ում, ՄԱԿ-ում ու ԵԱՀԿ-ում, ինչպես նաև ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրում, «Եվրոպական հարևանություն» ծրագրում, ունեն միմյանց հետ բարիդրացիական հարաբերություններ զարգացնելու վերաբերյալ բազմաթիվ միջազգային պարտավորություններ:

Տարածաշրջանային ինտեգրման գործընթացների զարգացման համեմատ միջազգային հանրությունը ավելի մեծ ակտիվություն է ցուցաբերում՝ օժանդակելով Հայաստանի և Ադրբեջանի միջև համագործակցության եզրեր գտնելու հարցում[98]: Այս ջանքերը հետագա ակտիվացման կարիք ունեն, և Ադրբեջանի վրա միջազգային հանրության կողմից գործադրվող ճնշումը կարող է աջակցել Հայաստանի տարածաշրջանային տնտեսական մեկուսացման կանխմանը:

3.2.2. Միջազգային մակարդակ

Արտաքին հարաբերությունների ոլորտում համագործակցության միջոցով միջազգային ինտեգրման ռազմավարությունը Հայաստանի անվտանգության ապահովման հիմնական ուղենիշն է: Դա ժողովրդավարական հաստատությունների և քաղաքացիական հասարակության կառուցման լավագույն ուղին է, քանի որ հնարավորություն է տալիս իրականացնելու միջազգային չափանիշներին համապատասխանող բարեփոխումներ և ստանալու միջազգային հանրության պատշաճ աջակցությունը: Հայաստանի անվտանգության մի շարք հարցեր գտնվում են միջազգային հարաբերությունների ոլորտում, մասնավորապես՝ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը գտնվում է ԵԱՀԿ շրջանակներում, բարեփոխումների և ժողովրդավարացման գործընթացը՝ Եվրախորհրդի և Եվրամիության շրջանակներում, իսկ ռազմական անվտանգության խնդիրները ԵԱՀԿ, ՀԱՊԿ-ի և ՆԱՏՕ-ի տիրույթում են: ՈՒստի Հայաստանն իր միջազգային ինտեգրման ռազմավարությունն իրականացնում է տարածաշրջանում իր շահերն արտացոլող անվտանգության տարբեր համակարգերի հետ հավասարակշռված սերտ համագործակցությամբ: Նա ներգրավված է տնտեսական և քաղաքական բնույթի բազմաթիվ ծրագրերում, ինչպիսիք են «Եվրոպական հարևանության» ծրագիրը Եվրամիության, «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագիրը ՆԱՏՕ-ի հետ և այլն:

[98] Տես «Azerbaijan: Turning over a New Leaf?». International Crisis Group, Europe Report № 156, 2004, 13 May (http://www.crisisgroup.org/home/index.cfm?id=2752&l=1):

Հայաստանն անդամակցում է մի շարք միջազգային ու տարածաշրջանային կազմակերպությունների, որոնք դավանում են համամարդկային սկզբունքներ, տեսակետներ և արժեքներ, և օգտվում է այդ կազմակերպությունների մյուս անդամների հետ միևնույն իրավունքներից ու կրում է համապատասխան պարտավորություններ: Միջազգային անվտանգության առումով Հայաստանն իրեն համարում է ոչ միայն միջազգային անվտանգության ռեսուրսների սպառող, այլև անվտանգության ապահովման ակտիվ մասնակից, աջակցում է միջազգային խաղաղապահական առաքելություններին և մասնակցում է ահաբեկչության դեմ միջազգային պայքարին, զանգվածային ոչնչացման զենքի չտարածմանն ուղղված նախաձեռնություններին և նման այլ գործողությունների: Հայաստանը վարում է հետխորհրդային տարածքում և Եվրոպական հանրությունում, ինչպես նաև միջազգային հարաբերությունների ոլորտում առաջատար դեր խաղացող առանձին պետությունների հետ ինտեգրման քաղաքականություն[99]:

ա) Ռազմավարությունը հետխորհրդային տարածքում. ԱՊՀ/ՀԱՊԿ

Անկախ պետությունների համագործակցության նպատակն էր լրացնել այն ռազմաքաղաքական ու տնտեսական վակուումը, որն առաջացել էր ԽՍՀՄ փլուզումից հետո: Այդ առումով ԱՊՀ-ն կառուցողական դեր խաղաց նախկին խորհրդային հանրապետությունների միջև տնտեսական, ռազմական ու քաղաքական կապերի լիակատար փլուզումը կանխելու գործում:

ԱՊՀ երկրների մեծ մասն ընտրեց եվրոպական զարգացման, ժողովրդավարության և բարեփոխումների ուղի: Այսօր այդ երկրները գտնվում են քաղաքական զարգացման համեմատելի մակարդակներում, ունեն տնտեսական, ռազմական և սոցիալական հետխորհրդային կերպափոխման միանման խնդիրներ, և նրանց միջև եղած տնտեսական ու մշակութային կապերը դեռ համեմատաբար ամուր են: Միջազգային հանրությունը ևս ԱՊՀ երկրների ինտեգրման գործընթացներում առաջադրում է նման խնդիրներ: Այս առումով ԱՊՀ շրջանակներում Հայաստանի համագործակցությունը բխում է անվտանգության հիմնախնդիրներից, քանի որ դրանք ընդհանուր են ԱՊՀ երկրների համար:

Հայաստանը ՀԱՊԿ-ը դիտում է որպես իր անվտանգության ապահովման ամենակարևոր բաղադրատարրերից մեկը[100], առաջին հերթին այն պատճա-

[99] Տես «Բալթիկ և Սևծովյան համագործակցության գագաթնաժողովում Նախագահ Ռոբերտ Քոչարյանի ելույթը», 1999 թ. սեպտեմբերի 11 (http://www.armeniaforeignministry.com/speeches/990911rk_bs.html):

[100] Տես «ՀՀ Նախագահ Ռոբերտ Քոչարյանը նիստից հետո մամլո ասուլիսին լրագրողներին հաղորդեց, որ ահաբեկչության, թմրադեղերի ապօրինի տարանցման, զանգվածային ոչնչացման զենքի տարածման դեմ պայքարում ՀԱՊԿ-ը կարող է գործել ՆԱՏՕ-ի հետ

ռով, որ այդ կազմակերպությունը նպաստում է ԱՊՀ շրջանակներում երկկողմ ռազմական կապերի զարգացմանը: ՀԱՊԿ-ի գործունեության արդյունավետությունը բխում է այն իրողությունից, որ այն զարգանում է երեք առանձին աշխարհառազմավարական ուղղություններով: Ինտեգրման ընդհանուր գործընթացներից բացի, յուրաքանչյուր ուղղություն զարգանում է՝ բխելով յուրահատուկ պրոբլեմների լուծման անհրաժեշտությունից: Այսօր Կովկասյան ուղղությունը իրականացվում է հայ-ռուսական ռազմական համագործակցության միջոցով և, հետևաբար, ավելի ու ավելի է կարևորվում և՛ Հայաստանի, և՛ ՀԱՊԿ-ի, և՛ Ռուսաստանի համար[101]:

Մասնավորապես՝ ՀԱՊԿ-ի ռազմական բաղադրյալի զարգացումը նպատակաուղղված է այնպիսի միջազգային սպառնալիքների չեզոքացմանը, ինչպիսիք են անդրազգային ահաբեկչությունը, թմրանյութերի ու զենքի տարանցումն ու ապօրինի վաճառքը, դրանց հակազդման արդյունավետ մեխանիզմների ստեղծմանը և այս ոլորտում տեղեկույթի փոխանակմանը: Դա կլուծեր Հայաստանի ռազմական անվտանգության մի շարք կենսականորեն կարևոր հարցեր:

բ) Եվրոպական ինտեգրում

Հայաստանն իր կայուն ու անվտանգ զարգացումը տեսնում է եվրաինտեգրման տնտեսական ու քաղաքական համատեքստում[102]: Եվրոպական հաստատությունների հետ հարաբերությունները Հայաստանի համար ունեն առաջնային կարևորություն: Զարգացման եվրոպական ուղու ընտրությունը պատահական չէ. այն համընկնում է հայ ժողովրդի եվրոպական խորարմատների (վաղ քրիստոնեական ընդհանուր արժեքներ, հարյուրամյակներ շարունակ չընդհատվող պատմամշակութային կապեր, հնդեվրոպական ընտանիքի լեզու, Եվրոպայում լայնորեն տարածված Սփյուռք և այլն) և եվրոպական աշխարհայացքի հետ: Միևնույն ժամանակ, եվրոպական հանրության լիարժեք անդամ դառնալու պաշտոնական պետական նպատակը պետք է ներառի ժամանակակից եվրոպական արժեքների տարածումը

համատեղ», *նաև՝ Sophie Mathiaut.* ...And Collective-Security Talks. «Eurasianet. Org», «Kazakhstan Daily Digest», 2005, 28 May (http://www.eurasianet.org/resource/kazakhstan/hypermail/200406/0054.shtml):

[101] Տես «В повестке–комплементаризм и многовекторность оборонной политики», интервью с доктором политических наук, советником по военной политике Министра обороны РА Гайком Котанджяном. «Голос Армении», 16 ноября 2002 г.:

[102] Տես *Ռուբեն Շուգարյան.* Գլոբալիզացիան Հայաստանի արտաքին քաղաքականության համատեքստում. Հայաստանը Եվրոպայի ճանապարհին: Ե., 2003 թ. հոկտեմբերի 21–22 (http://www.armeniaforeignministry.am/htms/speeches/shugarian_yervan_03.10.22.html):

կառավարության և հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտներում, այդ թվում՝ անվտանգության:

Այսօր Հայաստանը հակված է Եվրոպայի խորհրդի և Եվրամիության, ինչպես նաև ՆԱՏՕ-ի և ԵԱՀԿ-ի հետ արդյունավետ ու երկարաժամկետ համագործակցության, համակարգեր, որոնք ապահովում են համաեվրոպական անվտանգություն և կայուն ժողովրդավարական զարգացում:

–Եվրոպայի խորհուրդ

Հայաստանը Եվրոպայի խորհրդի անդամ է և ներգրավված է նրա հաստատություններում՝ Խորհրդարանական վեհաժողովում, Նախարարական կոմիտեում և այլն[103]: Եվրոպայի խորհրդի առջև ստանձնած իր պարտավորությունների կատարումը Հայաստանը համարում է բարեփոխումների ու ժողովրդավարական արժեքների ամրապնդման համար առաջնային: Հայաստանի անվտանգության վրա դրանց դրական ազդեցությունը շոշափելի է: Այնուամենայնիվ Ղարաբաղյան հակամարտության լուծման վերաբերյալ այս կազմակերպություններում տեղի ունեցած քննարկումների, ինչպես նաև սահմանադրական բարեփոխումների մասին Հայաստանի Ազգային ժողովում խորհրդարանական մասնագիտացված լսումների ժամանակ* պարզ դարձավ, որ Հայաստանի համագործակցությունը Եվրոպայի խորհրդի և նրա Խորհրդարանական վեհաժողովի հետ մինչ այժմ բավարար չի եղել: Նպատակահարմար կլիներ, որ Հայաստանն իր ազգային անվտանգության ռազմավարության մեջ ավելի շեշտված կերպով արտացոլեր Հարավային Կովկասի տարածաշրջանային անվտանգության միջավայրում Եվրոպայի խորհրդի դերի մեծացման իրողությունը:

–ԵԱՀԿ

Հայաստանի համար հատկապես կարևոր է ԵԱՀԿ-ն: Հայաստանի անվտանգության կարևորագույն հիմնախնդիրներից մեկը՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ լուծումը, իրականացվում է ԵԱՀԿ շրջանակներում:

[103] Տես «Եվրոխորհրդի Խորհրդարանական վեհաժողովում Հայաստանի Հանրապետության Նախագահ Ռոբերտ Քոչարյանի ելույթը»: Ստրասբուրգ, 2004 թ. հունիսի 23 (http://www.armeniaforeignministry.com/speeches/040623_president.html), *նաև՝* «ԵԽ Նախարարական հանձնաժողովի 113-րդ նստաշրջանում արտգործնախարար Վարդան Օսկանյանի ելույթը»: Քիշնև, 2003 թ. նոյեմբերի 6 (http://www.armeniaforeignministry.com/htms/speeches/v_o_kishinev_03.11.06.html), «Venice Commission: The Draft Armenian Constitution Needs Drastic Changes». Council of Europe, Strasbourg, 2005, 27 May (http://www.coe.int/NewsSearch/Default.asp?p=nwz&id=6575&lmLangue=1):

* Հայաստանի Ազգային ժողովում կայացած խորհրդարանական լսումներից հետո ՀՀ ազգային անվտանգության հայեցակարգի սկզբնական տեքստում կատարվել են համապատասխան լրացումներ:

Քանի որ ԵԱՀԿ դերի ամրապնդումն արտացոլում է Հայաստանի շահերը, նա պետք է շարունակի ակտիվ կերպով համագործակցել ԵԱՀԿ հաստատությունների հետ, մասնավորապես՝ իրականացնելով Եվրոպայում սովորական զինված ուժերի (ԵՍԶՈՒԻ) մասին պայմանագրի և Վիեննայի փաստաթղթի պահանջները: Ղարաբաղյան հակամարտության խաղաղ լուծման նպատակով ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում ընթացող համագործակցությունը բխում է Հայաստանի ռազմավարական շահերից: Հայաստանը կարևորում է ԵԱՀԿ գործունեությունը տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության ձևավորման ուղղությամբ:

–Եվրամիություն

Եվրամիության հետ Հայաստանի հարաբերությունները գնահատվում են Եվրաինտեգրման գործընթացի աշխարհառազմավարական մասշտաբների տեսանկյունից: Մասնավորապես՝ կարևոր է Եվրամիության ընդլայնման հետևանքով համաշխարհային քաղաքականության ու տնտեսության մեջ նրա ազդեցության մեծացումը: Հարավային Կովկասի ներգրավումը եվրաինտեգրման ծրագրերում նույնպես նշանակալից փաստ է: Եթե համաեվրոպական հաստատությունների զարգացումն ու ամրապնդումը կարելի է համարել եվրաինտեգրման ներքին քաղաքականություն, ապա արտաքին քաղաքականությունը բնորոշվում է նաև Հարավային Կովկասը ներառող Եվրոպական հարևանության ծրագրով[104]:

«Եվրոպական հարևանության» քաղաքականությունը Հայաստանի համար կարևոր է ոչ միայն տնտեսական ու պաշտպանական անվտանգության տեսանկյունից, այլև առավել ընդհանուր՝ հայեցակարգային, առումով: Այն միտված է ինտեգրման գործընթացների կայունացմանն ու փոխվստահության մթնոլորտի ձևավորմանը երկկողմ և տարածաշրջանային ձևաչափերում, ինչը ենթադրում է Հարավային Կովկասում գոյություն ունեցող, և հատկապես, երկու կողմից շրջափակման մեջ առնված Հայաստանի առջև ծառացած հիմնախնդիրների լուծումը:

[104] Թվով 60 հեղինակավոր քաղաքական գործիչներ, ակադեմիկոսներ հարավկովկասյան երեք երկրներում (Հայաստան, Ադրբեջան, Վրաստան) բարեփոխումների իրականացման և եվրոպական ինտեգրման հարցում նրանց հեռանկարների շուրջ բանավեճեր ունեցան մարտի 18–19-ը Թբիլիսիում կազմակերպված համաժողովի ընթացքում, որի հովանավորներն էին Ժողովրդավարության և ընտրական օժանդակության միջազգային ինստիտուտը (IDEA) և Խաղաղության, ժողովրդավարության և զարգացման կովկասյան ինստիտուտը (CIPDD), «Reform process in Georgia, Armenia and Azerbaijan examined». International Institute for Democracy and Electoral Assistance (IDEA) 2005, 30 March (http://www.idea.int/europe_cis/reform_05.cfm); *Sergey Minasian.* EU–Armenia Cooperation and the New European Neighborhood Policy. Tbilisi, 18–19 March (http://www.idea.int/europe_cis/upload/EU-Armenia cooperation-3.pdf):

Չպետք է մոռանալ, որ այսօր Հայաստանի անվտանգության հիմնական գործոնները գտնվում են եվրոպական ասպարեզում: Այդ գործոններն են՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծումը ԵԱՀԿ շրջանակներում, հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման, սահմանների բացման ու Հայոց ցեղասպանության ճանաչման հնարավորությունը՝ որպես, Եվրամիությանը անդամակցության ձգտող Թուրքիային ներկայացված ցանկություն-առաջարկություն:

Հայաստանի համար «Եվրոպական հարևանությունը» ունի նաև մեծ տնտեսական նշանակություն: Եվրամիությունը Հայաստանի խոշորագույն առևտրային գործընկերներից է: Նրա կողմից ձեռնարկված կարևոր քայլերը նպատակաուղղված են տարածաշրջանային համագործակցության եվրոպական մոդելի հաստատմանն ու բարեփոխումների իրականացմանը:

–ՆԱՏՕ

Հայաստան–ՆԱՏՕ հարաբերությունների հետևողական առաջընթացը կարող է վճռորոշ դեր ունենալ Հայաստանի անվտանգության համակարգի ապագայի համար: Հայաստանն ընտրել է զարգացման եվրոպական ուղին: Հետևաբար, եվրոպական անվտանգության հիմնական կազմակերպության՝ ՆԱՏՕ-ի հետ հարաբերությունները ձևավորվում են բնականորեն՝ զարգանալով եվրաինտեգրման գործընթացներին զուգահեռաբար:

Վերջին ժամանակներս Հայաստան–ՆԱՏՕ համագործակցությունը դառնում է առարկայական՝ բարձրանալով որակապես նոր մակարդակի: Դա հիմնված է ոչ միայն այդ հարաբերությունները զարգացնելու Հայաստանի ցանկության, այլև ՆԱՏՕ-ի նոր քաղաքականության ու որոշումների վրա[105]: ՆԱՏՕ-ն Հարավային Կովկասը ներառել է իր ռազմավարական շահերի գոտու մեջ և խորացված կերպով անհատական հարաբերություններ է զարգացնում գործընկեր պետությունների հետ: Մասնավորապես՝ «Պլանավորման և վերանայման գործընթացի» (ՊՎԳ) միջոցով մշակվել են Հայաստանի Հանրապետության «Գնահատման փաստաթուղթը» և «Գործընկերության նպատակների փաթեթը»[106], ընդամին համաձայնեցվել է գործընկերության 33 նպատակ: Դրանք միտված են ՆԱՏՕ-ի և Հայաստանի զինված ուժերի ստորաբաժանում-

[105] Տես «Final Communiqué. Ministerial Meeting of the North Atlantic Council held at NATO Headquarters». Brussels, 2004, 9 December (http://www.globalsecurity.org/military/library/news/2004/12/mil-041209-nato01.htm), *նաև՝ Robert A. Bradtke.* U.S. Initiatives at NATO's Istanbul Summit. Washington, DC, 2004, 16 June (http://www.state.gov/p/eur/rls/rm/33701.htm):

[106] Տես «Armenia and NATO». «Armenian Assembly of America», «Fact Sheet», «Research and Information Office». Washington, DC, 2004, 17 February (http://www.aaainc.org/info/Armenia-NATO.pdf):

ների միջև ներդաշնակ համագործակցության ու համատեղելիության զարգացմանը:

2004 թ. Հայաստանը միացավ նաև «Անհատական գործընկերության գործողությունների ծրագրին» (ԱԳԳԾ)[107]: ԱԳԳԾ «Ներկայացման փաստաթղթի» մշակումը ներկայումս ընթացքի մեջ է: Այս փաստաթղթով նախատեսվում է համագործակցություն պլանավորման, հայեցակարգերի մշակման ու ներդաշնակեցման գործընթացներում[108]:

Ինչ վերաբերում է «Գործընկերություն հանուն խաղաղության» (ԳՀԽ) ծրագրի լայն առումով իրականացմանը, ապա այստեղ առաջնահերթություն է տրվում

[107] Տես «Armenia's destination: Europe via the Baltics» (http://www.armeniaforeignministry.com/news/inthenews/041125_armenia_europe.html):

[108] Մի բարձրաստիճան հայ զինվորական պաշտոնյա այս շարաթ հրապարակեց Կառավարության մտադրությունը՝ կարևոր քայլեր գործադրելու մեկ տասնամյակ տևողությամբ ռազմական բարեփոխումների մշակման և իրագործման ուղղությամբ, ինչը պետք է արվի Հյուսիսատլանտյան դաշինքի խորհրդատվությամբ: Պաշտպանության նախարարի տեղակալ Արթուր Ազաբեկյանը, ելույթ ունենալով Անվտանգության ուսումնասիրությունների Ջորջ Մարշալի անվան կենտրոնի կողմից կազմակերպված երևանյան սեմինարում, նշեց, որ Մարշալի կենտրոնի փորձագետները օգնում են Հայաստանին մշակելու «Անհատական գործընկերության գործողությունների» ծրագիրը, որով ուրվագծվում են ՆԱՏՕ-ի հետ Հայաստանի համագործակցության շրջանակները, և որը պետք է վերջնական տեսքի բերվի մինչև հաջորդ ամսվա վերջը (տես «Armenia Announces Major Security Reform Plans». «Armenian Assembly of America». «Armenia This Week», 2005, 12 April (http://www.aaainc.org/ArTW/article.php?articleID=1913#)), *նաև*՝ «Online-Interview with Mr. Mher Shahgeldyan, Chairman, Standing Committee on Defence, National Security and Internal Affairs of the National Assembly». «Caucasus Journalists Network», 2005, 18 April (http://www.caucasusjournalists.net/ENG/interview.asp?idinterview=50):

Հարց՝ Ս. Մարտիրոսյան (Հայաստան). «Վերջերս մի հայտարարություն եղավ, որ մոտակա 10 տարիների ընթացքում Հայաստանն ամբողջովին նորացնելու է իր բանակը ԱԳԳԾ-ի շրջանակներում: Նշանակո՞ւմ է սա արդյոք, որ հայկական բանակը կվերափոխվի խորհրդայինից ՆԱՏՕ-ականի»:

Պատասխան՝ Մ. Շահգելդյան. «ԱԳԳԾ-ի շրջանակներում մշակվող նախագիծը, որը քննարկվեց երևանյան սեմինարում, նույնպես առնչվում է ռազմական զարգացումներին: Հայաստանի Զինված ուժերի հետագա զարգացման սկզբունքների առումով ծրագրի մասին հնարավոր կլինի խոսել միայն նրա ընդունումից հետո: Ես ուզում եմ նշել, որ Հայաստանի աշխարհառազմավարական դիրքը և Ղարաբաղյան հակամարտության լուծման գործընթացն իրենց ազդեցությունն են թողնում հայկական բանակի նորացման վրա: Սակայն մենք հաշվի ենք առնում այն փաստը, որ Հայաստանը մեծապես կարևորում է ԱԳԳԾ նախագիծը: ՆԱՏՕ-ի ներկայացուցիչները, Ջ. Մարշալի կենտրոնը և միջազգային փորձագետները ԱԳԳԾ մշակվող նախագիծը գնահատեցին որպես բավական իրատեսական»:

բուն ռազմական բնույթի համագործակցությանը, մասնավորապես՝ մասնակցությանը ՆԱՏՕ–ԳՀԽ զորավարժություններին*:

ՆԱՏՕ-ի հետ համագործակցության զարգացումը խթանում է նաև առանձին եվրոպական երկրների (Ռումաստան, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա և այլն) և ԱՄՆ-ի հետ երկկողմ կապերի ամրապնդումը, քանի որ այդ երկրների գերակշիռ մասը ՆԱՏՕ-ի անդամ է, և Հյուսիսատլանտյան դաշինքն է նպաստում Հայաստանի հետ նրանց համագործակցության զարգացմանը[109]:

* 2003 թ. հունիսին Հայաստանում առաջին անգամ անցկացվեցին ՆԱՏՕ–ԳՀԽ զորավարժությունները, որոնց մասնակցեցին ՆԱՏՕ-ի անդամ և գործընկեր 19 տարբեր երկրների՝ Ավստրիայի, Բուլղարիայի, Թուրքիայի, Իտալիայի, Լեհաստանի, Լիտվայի, Կանադայի, Հայաստանի, Ռումաստանի, Ռումգարիայի, Մակեդոնիայի նախկին Հարավսլավիայի Հանրապետության, Միացյալ Թագավորության, Միացյալ Նահանգների, Մոլդովայի, Ռուսիայի, Ռուսաստանի, Սլովակիայի, Վրաստանի, ՈՒԳբեկստանի մոտ 400 զինծառայողներ: Կարևոր է նշել, որ Ռուսաստանը Հայաստանի աջակցությամբ առաջին անգամ մասնակցեց այդ տեսակի զորավարժությունների՝ ներկայացնելով սպայական կազմ և հետնակային ջոկ, որն ինտեգրված էր զորավարժությունների բազմազգ ուժային կառույցում: Կարևոր է նաև նշել, որ Երևանում անցկացված ՆԱՏՕ–ԳՀԽ զորավարժությունները առաջին անգամ անկախ հայկական պետության տարածքում համագործակցելու լավ հնարավորություն ստեղծեցին թե՛ հայկական, թե՛ թուրքական զորքերի համար: Հայաստանում այդ զորավարժությունների անցկացման նպատակն էր ՆԱՏՕ-ի և գործընկեր մասնակիցների համատեղ գործողությունների միջոցով դաշտային պայմաններում ցամաքային զորքերի արդյունավետության մեծացումը, փոխըմբռնման և փոխգործելիության բարելավումը, և այդ նպատակը լիովին իրականացվեց:

[109] Տես «ՀՀ արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանի հայտարարությունը Եվրաատլանտյան գործընկերության խորհրդի գագաթնաժողովում»: Ստամբուլ, 2004 թ. հունիսի 29 (http://www.armeniaforeignministry.com/speeches/040629_vo_istanbul.html), *նաև*՝ *Justin Burke.* Agency Sees ReapproAchment Between Armenia and NATO. «Armenia Daily Digest», «Eurasianet.Org», 2005, 29 May (http://www.eurasianet.org/resource/armenia/hypermail/200404/0019.shtml): «Անցած շաբաթ ՆԱՏՕ-ին միացան յոթ նոր անդամ, իսկ Հայաստանի խորհրդարանը վավերացրեց բազմակողմ ԳՀԽ «Զորքերի կարգավիճակի մասին համաձայնագիր» (ԳՀԽ ԶԿՀ՝ PfP SOFA):

Այս համընկնումը կարելի է համարել խորհրդանշական, հատկապես՝ եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ և՛ Երևանը, և՛ Բրյուսելը համաձայնագրի վավերացմանը մոտենում են որպես բոլորովին էլ ոչ առօրեական ձեռնարկության: Այնուամենայնիվ, եթե հաշվի առնվի Հայաստան–ՆԱՏՕ հարաբերությունների առանձնահատուկ բնույթը, կասկած չի լինի, որ, ԳՀԽ ԶԿՀ-ին միանալու որոշում կայացնելով, Երևանը մի որոշակի ազդակ էր հղում ՆԱՏՕ-ին, ինչը կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ. Հայաստանն այլևս կտրականապես չի հրաժարվում ՆԱՏՕ-ի հետ հարաբերությունների նոր փուլ սկսելուց (ինչպես վաղ տպագրված էր), որի արդյունք մի օր կարող է դառնալ Դաշինքին միանալու հայտը»: «ARMENIA and NATO». «Research and Information Office». «Armenian Assembly of America», 2004, 17 February (http://www.aaainc.org/info/Armenia-NATO.pdf):

գ) Հարաբերություններ առաջատար երկրների հետ

– Ռուսաստանի Դաշնություն

Հայաստանի հարաբերությունները Ռուսաստանի Դաշնության հետ կրում են ռազմավարական բնույթ և իրենց նշանակությամբ կարևոր են Հայաստանի անվտանգության համար շոշափելի երաշխիքների ապահովման առումով[110]: Այս բազմակողմ հարաբերությունները բխում են Հայաստանի և Ռուսաստանի փոխադարձ հեռանկարային շահերից: Դրանք ներառում են երկու երկրների ու ժողովուրդների միջև համագործակցության բոլոր հնարավոր ոլորտները: Այդ հարաբերությունները կանոնավորվում են գրեթե 160 երկկողմ պայմանագրերով: Շատկանշական է, որ այս լայն համագործակցության բոլոր բաղկացուցիչները գտնվում են բարձր մակարդակի վրա և կարևոր դեր են խաղում Հայաստանի անվտանգության ապահովման գործում: Բավական է նշել թեկուզ ռազմական, առևտրատնտեսական, էներգետիկայի, գիտության և այլ ոլորտներ, հատկապես այն հանգամանքը, որ վերջին շրջանում աճում է ռուսաստանյան կապիտալի ներհոսքը Հայաստան[111]:

Հայաստանի շահերի տեսանկյունից հայ-ռուսական համագործակցությունը լուծում է հետևյալ խնդիրները.

– Հայաստանի Զինված ուժերի ռազմական և ռազմատեխնիկական կարիքների բավարարում,

– տարածաշրջանում ուժերի հաշվեկշռի պահպանում:

Հայ-ռուսական ռազմական համագործակցությունը զարգանում է երեք կարևոր ուղղություններով.

– դաշնադրային խմբավորումներ,

– հակաօդային պաշտպանության միացյալ համակարգ,

[110] Տես «Հայաստանի ԱԳ նախարար Վ. Օսկանյանն ընդունում է Ռուսաստանի ԱԳ նախարար Ս. Լավրովին», 2005 թ. փետրվարի 17 (http://www.armeniaforeignministry.com/pr_05/050217_lavrov.html), *Sergei Blagov.* Kocharian's Moscow Visit Underscores Strengthening Armenian-Russian Security Cooperation. «EURASIA INSITE», 2003, 21 January (http://www.eurasianet.org/departments/insight/articles/eav012103.shtml); «Vladimir Putin Stresses Importance of Industrial Cooperation Between Russia and Armenia». «Pravda.Ru» (http://english.pravda.ru/cis/2001/09/15/15286.html); «ԱԳ նախարար Օսկանյանը հանդիպում է Ռուսաստանի ԱԳ նախարար Իվանովի հետ», 2003 թ. նոյեմբերի 14 (http://www.armeniaforeignministry.com/PR/PR290.html):

[111] Տես «В повестке–комплементаризм и многовекторность оборонной политики», интервью с доктором политических наук, советником по военной политике Министра обороны РА Гайком Котанджяном. «Голос Армении», 16 ноября 2002 г.; *также: Александр Тихонов.* Друзья, прекрасен наш союз? «Красная звезда», 19 декабря 2002 г. (http://www.redstar.ru/2002/12/19_12/3_02.html):

– համագործակցություն ՀԱՊԿ-ի շրջանակներում:

Հայ-ռուսական ռազմական համագործակցությունը, հատկապես՝ Հայաստանում ռուսական զորակայանի առկայությունը, միտված է Թուրքիայի կողմից բխող ռազմական սպառնալիքի չեզոքացմանը:

Հայ-ռուսական հարաբերությունները, իրենց երկկողմ ձևաչափից բացի, ոչ պակաս կարևոր են բազմակողմ շրջանակում: Որպես օրինակ կարող են ծառայել ԱՊՀ հակաօդային պաշտպանության միացյալ համակարգը և սահմանի համատեղ հայ-ռուսական պարեկությունը: Ավելի լայն առումով՝ տարածաշրջանային անվտանգության համակարգերում (օրինակ՝ ՀԱՊԿ-ում), հայ-ռուսական ռազմական դաշինքը կարևոր դեր է կատարում հարավկովկասյան տարածաշրջանում և միջազգային հարաբերություններում ռազմաքաղաքական հավասարակշռության պահպանման գործում:

Չնայած այս փաստերին՝ հայ-ռուսական ռազմավարական հարաբերությունները ամենևին էլ չեն խոչընդոտում Հայաստանի արտաքին հարաբերությունների զարգացմանն այլ վեկտորներով ևս, օրինակ՝ եվրաատլանտյան ինտեգրման ուղղությամբ: Ընդհակառակը՝ Ռուսաստանը նույնպես ընտրել է զարգացման եվրոպական ուղին: Ռուսաստան–Եվրամիություն հարաբերությունների նկատելի բարելավումը Հայաստանի համար նպաստավոր պայմաններ է ստեղծում, որ նա իր ռազմավարության մեջ ներդաշնակեցնի այս երկու առաջնահերթ ուղղությունները և արտաքին քաղաքականության ոլորտում հասնի ցանկալի արդյունքների:

–Ամերիկայի Միացյալ Նահանգներ

ԱՄՆ-ի հետ բազմակողմ համագործակցության զարգացումը Հայաստանի համար ռազմավարական կարևորություն ունի ժողովրդավարական պետության կայացման, կայուն և անվտանգ զարգացման ապահովման առումով:

ԱՄՆ-ը համաշխարհային տերություն է: Հայաստանի անկախացումից ի վեր նա իրականացնում է Հայաստանի Հանրապետությանը կառավարական օժանդակություն ցուցաբերելու քաղաքականություն[112]: Հայ-ամերիկյան հարաբերությունները վերջին մի քանի տարում զգալի առաջընթաց են ապրել: Հայաստանը ներգրավված է «Հազարամյակի մարտահրավերներ» նախաձեռնության մեջ, որով կապահովվի նրա զարգացման համար մասշտաբային ֆինանսական և խորհրդատվական աջակցություն:

[112] Տես «US Government Assistance to Armenia. Activities/Programs by region and type». Embassy of the United States of America, Yerevan, Armenia (http://www.usa.am):

Քաղաքական, տնտեսական, մշակութային ոլորտներում և այլ բնույթի համագործակցությանը զուգընթաց զգալի առաջընթաց ունեն նաև հայ-ամերիկյան պաշտպանական հարաբերությունները[113]: Այսօր ռազմական անվտանգության ապահովմանն աջակցության ծրագրերը զարգանում են մի շարք ուղղություններով[114]: Իրականացվում են տարբեր ծրագրեր, մասնավորապես՝ «Արտաքին ռազմական ֆինանսավորում» (FMF), «Միջազգային ռազմական ուսուցում և վարժանք» (IMET) ծրագրերը, «Համատեղ կոնտակտային խումբ» ծրագիրը ԱՄՆ-ի եվրոպական հրամանատարության հետ, «Նահանգային գործընկերություն» ծրագիրը Կանզաս նահանգի հետ և մի շարք այլ ծրագրեր[115]:

Հարկ է ավելացնել, որ ԱՄՆ-ի հետ պաշտպանական համագործակցությունը Հայաստանի Զինված ուժերի համար կարևոր է ոչ միայն ռազմական առումով, այլև քաղաքական տեսանկյունից: Պատճառն այն է, որ այդ համագործակցությունը, նպաստելով Հայաստանի Զինված ուժերի մարտունակության բարձրացմանը, հանգուցային դեր է խաղում տարածաշրջանի պետությունների ռազմական քաղաքականության մեջ հավասարակշռության պահպանման առումով: Հայաստանի համագործակցության զարգացումն ինչպես բազմակողմ ձևաչափով ՆԱՏՕ-ի շրջանակներում, այնպես էլ եվրոպական երկրների

[113] Տես «Armenia and USA Sign Military Agreement». «Pravda.RU» (http://newsfromrussia.com/world/2004/04/26/53642.html):

[114] Հայաստանում անվտանգության ծրագրերը, ինչպիսիք են, օրինակ, «Արտահանման վերահսկում» և «Սահմանային անվտանգության օժանդակություն» ծրագրերը, նպատակաուղղված են մեծացնելու զենքի և այլ իրերի ապօրինի տարանցումն ու առևտուրը կանխելու ուղղությամբ Հայաստանի հնարավորությունները՝ Հայաստանի մաքսային և սահմանային պաշտպանության ծառայություններն ապահովելով սարքավորումներով և վերապատրաստելով նրանց կադրերը: Աջակցություն է ցուցաբերվում միջուկային ռեակտորի անվտանգության բարձրացման և ռադիոակտիվ նյութերի տարածման սպառնալիքի գնահատման ու հակազդման ծրագրին: «Արտաքին ռազմական ֆինանսավորում» և «Միջազգային ռազմական ուսուցում և վարժանք» միջազգային ծրագրերը նպատակաուղղված են պրոֆեսիոնալ ռազմական կրթությանը, Հայաստանի Զինված ուժերի՝ խաղաղապահական ունակությունների ամրապնդմանը, ռազմական հաղորդակցության հնարավորությունների նորացմանը: ԱՄՆ-ը նաև դրամաշնորհներ է տրամադրում գիտական կենտրոնների սպառազինության ոլորտի նախկին մասնագետներին կենսաքիմիական կողմնորոշման և Քաղաքագիտական հետազոտության ու զարգացման հիմնադրամների միջոցով (տես «Fact Sheet», «Bureau of European and Eurasian Affairs», U.S. Department of State. Washington, DC, 2004, 17 February (http://www.state.gov/p/eur/rls/fs/29484.htm):

[115] Տես «Armenia, USA discuss military cooperation». «Armenian Diaspora», 2004, 11 August (http://www.armeniandiaspora.com/index.php?do=printable&id=9057); *Emil Danielyan.* U.S. Officers Inspect Armenian Military. PfP News (http://www.armenialiberty.org/armeniareport/report/en/2005/05/EC4EFE09-47E5-412D-92C7-D39AF636A6FD.ASP):

հետ երկկողմ ձևաչափով զգալիորեն պայմանավորված է ԱՄՆ-ի հետ Հայաստանի հարաբերություններով[116]:

Հայ-ամերիկյան հարաբերություններում էական դեր է խաղում ամերիկահայ համայնքը, որը առանձնահատուկ կարևորություն է տալիս դրանց: Թուրքիայի և Ադրբեջանի կողմից Հայաստանի շրջափակումից ի վեր ամերիկահայ համայնքը ԱՄՆ-ի կառավարական շրջաններում մեծ ջանքեր է գործադրում Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի բնակչության անվտանգության աջակցություն ապահովելու համար: Սփյուռքը նաև նպաստում է ԱՄՆ-ի տարածաշրջանային քաղաքականության մեջ հավասարակշռությունը հօգուտ Ադրբեջանի խախտելու փորձերի չեզոքացմանը: Սփյուռքի դերն այսօր էլ էական է[117]:

Ելնելով իր ազգային անվտանգության ապահովման գերակայություններից՝ Հայաստանը կշարունակի իր կայուն համագործակցությունը ԱՄՆ-ի հետ[118]:

4. ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությունն ունի մի յուրահատկություն, որը բնորոշ է միայն եզակի երկրների. այն պայմանավորված է Հայոց սփյուռքի առկայությամբ[119]:

[116] Տես «Coalition Forces. Armenia: Military agreement on providing mutual services». «DARPA TIDES» Iraq Reconstruction Report, 2004, 29 April, № 179 (http://tides.carebridge.org/TIRR/D-TIRR179.htm):

[117] «ԱՄՆ-ը հպարտ է Հայաստանի հետ ունեցած իր ամուր կապերով: Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո և 1991 թ. Հայաստանի անկախացումից ի վեր մեր երկիրը հետամուտ է եղել Հայաստանի հետ գործընկերության, որը խթանում է ժողովրդավարությունը, անվտանգության համագործակցությունը և ազատ շուկան: Այսօր մեր պետությունը պարտավոր է գտնել Ղարաբաղյան հակամարտության խաղաղ լուծումը և երախտապարտ է Հայաստանին՝ ահաբեկչության դեմ պայքարում շարունակական համագործակցության համար: Ընթնման և բարի կամքի միջոցով ազատ պետությունները կարող են աշխարհի համար ավելի պայծառ ապագա կառուցել: Մեր երկիրը ցանկանում է օգնել Հայաստանին՝ ընդարձակելու իր ռազմավարական հարաբերությունները ԱՄՆ-ի և մեր եվրոպական դաշնակիցների հետ» (տես *Ջորջ Բուշ.* ԱՄՆ-ի Նախագահի 2004 թ. ապրիլի 24-ի ելույթը Հայերի հիշատակի օրվա կապակցությամբ (http://www.armenian-genocide.org/Affirmation.286/current_category.4/affirmation_detail.html):

[118] Հայաստանում ԱՄՆ-ի վերջերս նշանակված դեսպան Ջոն Էվանսը 2005 թ. փետրվարի 17-ին այցելել է Կալիֆոռնիայի համալսարան՝ ուսանողների, դասախոսների և հասարակության հետ «Զեկույց Հայաստանի մասին, 2005 թ.» թեմայով տեղեկատվական զրույց ունենալու համար (տես http://www.international.ucla.edu/article.asp?parentid=21127):

[119] Տես նույն աշխատության 2-րդ գլուխը՝ «Հայոց սփյուռքի և Հայկական ազգային պետության աշխարհառազմավարական առումները»:

Ինչպես արդեն նշվել է, Հայոց սփյուռքի թվաքանակը ավելի քան երկու անգամ գերազանցում է Հայաստանի բնակչությանը և ցրված է աշխարհով մեկ: Նա բնորոշվում է իր բնակության պետությունների սոցիալական կառուցվածքին ինտեգրվածությամբ: Սա կարևոր է ինչպես իր իսկ Սփյուռքի, այնպես էլ այն պետությունների հետ կապերի ամրապնդման համար, որտեղ կան հայկական համայնքներ:

Սփյուռքը հատուկ դեր ունի Հայաստանի ազգային անվտանգության ապահովման հարցում, քանի որ մի յուրօրինակ կամուրջ է Հայաստանի և միջազգային հանրության միջև: Համահայկական հաստատությունները մեծապես աջակցում են Հայաստանի միջազգային ինտեգրմանը և երկրների առաջընթացին ժողովրդավարության կերտման ուղով[120]:

Համահայկական ինտեգրման ռազմավարությունը հայ ժողովրդի անվտանգության պրոբլեմն ու խնդիրն է: Մի կողմից՝ այն նպատակաուղղված է կանխելու Սփյուռքի կողմից իր ազգային ու մշակութային ինքնության կորուստը և ուծացումը, մյուս կողմից՝ պետության հետ համագործակցությանը Հայաստանից արտագաղթի վերահսկման գործում: Ի թիվս այս երկու սպառնալիքներին դիմակայության տարբեր միջոցների որպես նախընտրելի մեխանիզմ դիտվում է, երկքաղաքացիության հաստատությունը[121]: Համահայկական ինտեգրումն ունի նաև մեծ տնտեսական ու մշակութային կարևորություն, քանի որ նպաստում է գբոսաշրջության զարգացմանը և մշակութային արժեքների պահպանմանն ու տարածմանը[122]:

Սերտորեն համագործակցելով Սփյուռքի բազմաթիվ համահայկական կազմակերպությունների հետ՝ Հայաստանը լիովին հաշվի է առնում այն, որ Սփյուռքի ներկայացուցիչները այլ պետությունների քաղաքացիներ են: Այս առումով համահայկական ինտեգրումը և Հայաստան–Սփյուռք հարաբերությունների ամրապնդումը անմիջականորեն կապված են Հայաստանի միջազգային ինտեգրման հետ: Որքան ավելի արդյունավետ լինի այդ ինտեգրումը, այնքան ամուր ու բազմազան կլինեն Սփյուռքի հետ հարաբերությունները[123]:

5. ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի ազգային անվտանգության մեջ առանձնահատուկ դեր է խաղում ռազմական անվտանգությունը: Հարավային Կովկասը շարունակում է մնալ աշխարհի առավել անկայուն տարածաշրջաններից մեկը: Տարածաշրջանը գտնվում է անհանգիստ անցումային շրջանում, երբ այստեղի երկրները անվտանգության խնդիրների լուծման համար գերազանցապես կիրառում են ռազմական գործոնը: Սա հանգեցնում է երկրների ռազմականացմանն ու սպառազինությունների մրցավազքի:

Նման ռազմականացված միջավայրում Հայաստանի համար առաջանում են բազմաթիվ ռազմական սպառնալիքներ, որոնց չեզոքացումը ենթադրում է հզոր ու մարտունակ զինված ուժերի առկայություն: Հետևաբար, ռազմական անվտանգության ապահովումը Հայաստանի կայուն զարգացման գերակա առաջնահերթությունն է: Ի տարբերություն այլ գերակայություններից, որոնք գերազանցապես բխում են նույնականության պահպանման ու կայուն զարգացման բնական շահերից, ժամանակակից հզոր բանակ ունենալու առաջնահերթությունը Հայաստանի համար արտաքինից պարտադրված գերակայություն է:

Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության ապահովման երաշխիքն են ռազմական սպառնալիքների չեզոքացմանը և ռազմական անվտանգության խնդիրների անվերապահ լուծմանը մշտապես պատրաստ մարտունակ զինված ուժերը[124]: Նրանց զարգացումն ու կատարելագործումը,

[120] Հայաստան–Սփյուռք համագործակցության հետագա զարգացման ու խորացման նպատակով 2002 թ. մայիսի 27–28-ը տեղի ունեցավ Հայաստան–Սփյուռք երկրորդ համաժողովը (http://www.armeniadiaspora.com/conference2002/index.html):

[121] «Մեր սերնդին բաժին է ընկել ևս մի պարտականություն, այն է՝ բոլոր հայերի ջանքերի միավորումը և Սփյուռքի հայության ակտիվ մասնակցության ապահովումը մեր հանրապետության սոցիալական, քաղաքական և տնտեսական կյանքին: Երկքաղաքացիության խնդրի սահմանադրական լուծումը նույնպես կնպաստի այդ հարցին: Հայաստանը պետք է լինի բոլոր հայերի սուրբ հայրենիքը, նրա հաղթանակը՝ բոլորի հաղթանակը, նրա ապագան՝ բոլորի ապագան: Մենք պետք է հասկանանք, որ այն ազգը, որը գիտի իր հավաքական ուժի արժեքը, երբեք չի կարող պարտվել» (տես «ՀՀ Ազգային ժողովում 2000 թ. մայիսի 21-ին Նախագահ Ռոբերտ Քոչարյանի խոսքը երդման արարողության ժամանակ»):

[122] Հայաստան–Սփյուռք համագործակցության ուղղությամբ աշխատում են մի շարք հանձնաժողովներ, որոնցից են՝ «Հայաստան–Սփյուռք կազմակերպական և կառուցվածքային հարցերով», «Քաղաքական և քարոզչության հարցերով», «Գործնարարության և տնտեսական զարգացման», «Կրթության, գիտության և մշակութային», «Մամուլի և տեղեկատվական հարցերով» հանձնաժողովները (http://www.armeniadiaspora.com):

[123] Տես *Ռուբեն Շուգարյան*. Գլոբալիզացիան Հայաստանի արտաքին գործերի համատեքստում. Հայաստանը Եվրոպայի միջազգային համաժողովի ճանապարհին (http://www.armeniaforeignministry.com/speeches/031022shugarian_yervan.html):

[124] Տես *Charles Fairbanks, Frederick Starr, Richard Nelson, Kenneth Weisbrode*. Strategic assessment of Central Eurasia. Chapter: «Armenia». «The Atlantic Council of the United States», Central Asia–Caucasus Institute, SAIS. Washington, PP. 58–61; *Emil Danielyan*. U.S. Officers Inspect Armenian Military. «PfP News» (http://www.armenialiberty.org/armeniareport/report/en/2005/05/EC4EFE09-47E5-412D-92C7-D39AF636A6FD.ASP): «Մի խումբ ամերիկացի սպաներ ուրբաթ օրը հանդիպում ունեցան Պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի հետ այն բանից հետո, երբ վերջացրեցին Հայաստանի Զինված ուժերում աննախադեպ տեսչական ստուգումը, որով շեշտվում է Երևանի և Վաշինգտոնի միջև ամող ռազմական համագործակցությունը: Ս. Սարգսյանի մամլո ծառայությունից հայտնեցին, որ գնդապետ Մայկլ Անդերսենի գլխա-

նոր մարտահրավերներին դիմակայելու կարողության ապահովումը շարունակական և դինամիկ գործընթացներ են:

Ռազմական անվտանգության ապահովման և Զինված ուժերի մարտունակության բարձրացման ամենաարդյունավետ ուղիներն են միջազգային ինտեգրումն ու համակարգված բարեփոխումները: Սակայն մշտական ռազմական սպառնալիքների գոյության պայմաններում այս ռազմավարության կիրառումը պահանջում է որոշակի զգուշավորություն: Ե՛վ միջազգային ինտեգրումը, և՛ բարեփոխումները պետք է ծառայեցվեն այլընտրանքային հնարավորությունների ստեղծմանը, որպեսզի ստեղծվեն ռազմական անվտանգության այնպիսի ռեսուրսներ, որոնք համապատասխանեն 21-րդ դարի մարտահրավերներին:

Միջազգային համագործակցության միջոցով ռազմական անվտանգության ապահովման երաշխիք են ինչպես հայ-ռուսական ռազմական դաշինքը երկկողմ ձևաչափով և ՀԱՊԿ-ի շրջանակներում, այնպես էլ ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի կառույցների հետ համագործակցության զարգացումը[125]:

Հայաստանն իր պաշտպանական ոլորտում Եվրաատլանտյան ուղղությամբ հետևողական բարեփոխումներ է իրականացնում «Պլանավորման և վերանայման գործընթացի» և «Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի» շրջանակներում: Այս առումով նշված բարեփոխումները կկրեն համակարգային բնույթ և կապահովեն Հայաստանի պաշտպանական համակարգի արդիականացումը, հատկապես պաշտպանական պլանավորման և կառավարման բնագավառներում: Ինչ վերաբերում է ինտեգրմանը, ապա այն հավասարակշռված է և միտված այնպիսի ստորաբաժանումների, մասնավորապես՝ խաղաղապահ ուժերի ստեղծմանը, որոնք ունակ լինեն փոխգործելու ինչպես ՆԱՏՕ-ի, այնպես էլ ՀԱՊԿ-ի ուժերի հետ[126]:

ՀԱՊԿ-ի շրջանակներում բարեփոխումների ռազմավարությունը միտված է անվտանգության դեմ ուղղված սպառնալիքների չեզոքացման ընդհանուր և արդյունավետ մեխանիզմների ստեղծմանը: Ինչ վերաբերում է ինտեգրմանը, ապա այդպիսի օրինակներ են հայ-ռուսական դաշնադրային միացյալ զորախումբը, հակաօդային պաշտպանության միացյալ համակարգը և այլն:

Եվրաատլանտյան ուղղությամբ շարունակաբար ակտիվացող կապերը պայմանավորված են ՆԱՏՕ-ի ու Եվրամիության ընդլայնմամբ, «Եվրոպական հարևանություն» ծրագրում Հարավային Կովկասի ներառմամբ և այն հանգամանքով, որ Եվրաատլանտյան հաստատություններին ինտեգրումը ճանաչվել է որպես Հայաստանի արտաքին քաղաքականության առաջնահերթություն: ՀԱՊԿ-ի շրջանակներում համագործակցության զարգացումը (Ռուսաստանի հետ ռազմավարական դաշինքին զուգահեռաբար), այնուամենայնիվ, կապված է այդ կազմակերպությունում տեղի ունեցող շոշափելի փոփոխությունների և նրա անդամ պետությունների կոլեկտիվ անվտանգության ապահովման իրական մեխանիզմների ստեղծման հետ: Այս երկու ուղղություններով անվտանգության քաղաքականության հավասարակշռված զարգացման հնարավորությունները կապված են նաև անվտանգության այդ երկու համակարգերի համընդհանուր սպառնալիքների առկայության հետ: Այս հանգամանքն ստիպում է նրանց ավելի ընդլայնել համագործակցության շրջանակները՝ հետին պլան մղելով ցանկացած տարածայնություն:

Հայաստանը, իր անվտանգության քաղաքականության մեջ հետևելով փոխլրացման սկզբունքին, փորձում է կառուցել փոխադարձ շահերի վրա հիմնվող ամբողջական համակարգ: Քանի որ կողմերն առաջնորդվում են ընդհանուր

վորած ամերիկյան պատվիրակությունը գոհ է հայկական զինվորական միավորումների «ռազմական գնահատումից» և հայկական զինվորականությանը շնորհակալություն է հայտնում «անկեղծության և թափանցիկության» համար: Գնդապետ Անդերսենը նկատեց, որ «չնայած հայկական բանակը համեմատաբար երիտասարդ է, այն արդեն հպարտանալու շատ բան ունի», ասվում էր զեկույցի մեջ»:

[125] Տես «Online-Interview with Mr. Mher Shahgeldyan, Chairman, Standing Committee on Defence, National Security and Internal Affairs of the National Assembly». «Caucasus Journalists Network», 2005, 18 April (http://www.caucasusjournalists.net/ENG/interview.asp?idinterview=50); *Emil Danielyan*. U.S. Officers Inspect Armenian Military. «PfP News» (http://www.armeniaLiberty.org/armeniareport/report/en/2005/05/EC4EFE09-47E5-412D-92C7-D39AF636A6FD.ASP); U.S. Department, Foreign Military Training and DoD Engagement Activities of Interest: Joint Report to Congress. «Report Home Page», The Bureau of Political-Military Affairs, 2003, May; «Foreign Policy Objectives–Newly Independent States (NIS) Region, Armenia» (http://www.fas.org/asmp/campaigns/training/FMTR%202003/III_Foreign%20Policy%20Objectives%20_%20Newly%20Independent%20States %20(NIS)%20Region.htm); «Национальная безопасность: ориентиры и приоритеты», интервью с доктором политических наук Г. С. Котанджяном. «Голос Армении», 11 февраля 2003 г.:

[126] «ՀՀ Պաշտպանության նախարարի տեղակալ Արթուր Աղաբեկյանը ապրիլի 12-ին հայտարարեց, որ Հայաստանը պլանավորում է ռազմական համընդգրկուն բարեփոխումների մի ծրագիր: Խոսելով ՆԱՏՕ-ի շրջանակներում Հայաստանի դերի ընդլայնման հարցով երևանյան համաժողովում՝ նա նշեց, որ բարեփոխումների ծրագիրը կլինի ՆԱՏՕ-ի չափանիշներին համապատասխանող և «նոր մարտահրավերներին» պատասխանելու ունակ ժամանակակից զինված ուժերի զարգացման երկարաժամկետ նպատակի արտացոլում: Դա կպահանջի տարիներ շարունակ գործադրել մեծ ջանքեր: Նա նաև հավաստեց, որ պաշտպանության նախարարությունը հակված է «պաշտպանական հարցերում քաղաքացիական տարրերի ավելի ակտիվ մասնակցության» և Զինված ուժերում ավելի մեծ չափով «ժողովրդավարական վերահսկողության» հասնելուն» (տես «Armenian Deputy Defense Minister comments on Military Reform Plans», «RFE/RL Newsline», «HR-NET Hellenic Resources Network», 2005, 14 April (http://www.hri.org/news/balkans/rferl/2005/05-04-14.rferl.html#10)); «Armenian official, NATO envoy discuss IPAP». «Arminfo», 2005, 25 February (http://www.armeniandiaspora.com/archive/21152.html); *John C. K. Daly*. Azerbaijan Military Reform and Armenian National Security Strategy. «PfP News» (http://www.pimswiki.org/index.php?title=PfP_News):

շահերով, գոյություն ունեցող որոշ հակասություններ մեղմվում են: Մասնավորապես՝ թեև Հայաստանն ակտիվորեն մասնակցում է ՀԱՊԿ-ի շրջանակներում ընթացող ռազմաքաղաքական ինտեգրմանը, նաև ծավալել է ռազմական գործընկերություն Ռուսաստանի հետ, սակայն դա ամենևին էլ չի խանգարում կառուցողական համագործակցություն զարգացնելու նաև ՆԱՏՕ-ի հետ: Այսօր Հայաստանը մի շարք պաշտպանական ծրագրեր է իրականացնում ԱՄՆ-ի հետ, սակայն միաժամանակ անվտանգության հարցերով խորհրդատվություններ է վարում Իրանի հետ:

6. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունը, առաջնորդվելով իր անվտանգության և կայուն զարգացման շահերով, միջազգային ինտեգրման ու ներքին բարեփոխումների ռազմավարությամբ, գերակա է համարում իր գործունեությունը հետևյալ ուղղություններով[127].

արտաքին անվտանգության ապահովման բնագավառում՝ կառուցել բազմերաշխիք ու հավասարակշռված հարաբերություններ բոլոր պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ, իրականացնել փոխլրացման բազմակողմ քաղաքականություն դաշնակիցների ու գործընկերների հետ, իրականացնել օպերատիվ և երկարաժամկետ ծրագրեր արտաքին վտանգների կանխարգելման ու չեզոքացման համար՝ բացառելով հայ ժողովրդի նկատմամբ ցեղասպանության կրկնման հնարավորությունը, Հայաստանի ազգային անվտանգության շահերն առաջադրել Ղարաբաղյան հակամարտության կարգավորմամբ զբաղվող բոլոր միջազգային կազմակերպություններում ու հատկապես ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում, ամրապնդել Հայաստանի ռազմական հնարավորությունները, արդիականացնել Զինված ուժերը, միջազգային ահաբեկչության և զանգվածային ոչնչացման զենքի տարածման դեմ պայքարի բնագավառում համագործակցել առանձին պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ, զարգացնել բազմակողմ համագործակցություն անվտանգության համակարգերի՝ ՀԱՊԿ-ի և ՆԱՏՕ-ի, ինչպես նաև երկկողմ հարաբերություններ՝ Ռուսաստանի և ԱՄՆ-ի հետ, հաղթահարել արտագաղթը և ամրապնդել Հայաստան–Սփյուռք համագործակցությունը երկքաղաքացիության և հայրենադարձության միջոցով, ակտիվորեն մասնակցել տարածաշրջանային տնտեսական ինտեգրման ծրագրերին, ստեղծել Հայաստանի կենսական ու ռազմավարական շահերի դեմ և Հայաստանի շուրջ միջազգային բացասական կարծիքի ձևավորմանն ուղղված ոչ բարեկամ պետությունների ապատեղեկատվությանը հակազդելու արդյունավետ համակարգ.

ներքին անվտանգության ապահովման բնագավառում՝ ապահովել Հայաստանի Հանրապետության բնակչության ֆիզիկական անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը և ինքնիշխանությունը, հաղթահարել աղքատությունը, իրականացնել կայուն և սոցիալական ուղղվածությամբ տնտեսական քաղաքականություն, խրախուսել մասր ու միջին գործարարությունը, ինչպես նաև էներգետիկայի և գիտատար արդյունաբերության ոլորտներում վարել ակտիվ ներդրումային քաղաքականություն, ապահովել Հայաստանի Հանրապետության գիտատեխնիկական առաջընթացը և բարձր տեխնոլոգիաների զարգացումը, երկրում արմատապես բարելավել բնապահպանական իրավիճակը, հետևողական պայքար մղել օտարերկրյա լրտեսական գործակալությունների, հատուկ ծառայությունների քայքայիչ գործունեության դեմ, մշակել և իրականացնել տեղեկատվական անվտանգության մեխանիզմներ:

Ներքին անվտանգության ոլորտում կարևորվում է ժողովրդավարացման, կայուն զարգացման ապահովման ասպարեզը՝ մարդու և քաղաքացու անձնական անվտանգության, նրա սահմանադրական իրավունքների և ազատությունների ապահովում, պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մեխանիզմների և օրենսդրության կատարելագործում, հետևողական պայքար կոռուպցիայի դեմ, իրավակարգի ամրապնդում, հավասարակշռված միջէթնիկական հարաբերությունների, հասարակության սոցիալ-քաղաքական կայունության ապահովում, օրենքի առջև ՀՀ բոլոր քաղաքացիների, այդ թվում՝ պաշտոնատար անձանց, պետական մարմինների, քաղաքական կուսակցությունների, հասարակական ու կրոնական կազմակերպությունների հավասարության ապահովում:

---

[127] Այս ուսումնասիրության մեջ հեղինակի համար մեթոդաբանական հիմք են ծառայել հետևյալ հայկական, ամերիկյան ու ռուսաստանյան փաստաթղթերն ու նյութերը. «Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը» (ընդունված 1995 թ. հուլիսի 5-ին), «ՀՀ Նախագահին առընթեր Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար, ՀՀ Պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի «Հայաստան. մարտահրավերներ և պատասխաններ» հարցազրույցը»: «Երկիր», 2005 թ. փետրվարի 5 (http://www.yerkir.am/eng/index.php?sub=interview&id=11); *նաև* ՝ «A National Security Strategy for a New Century» (1997, May). «An Electronic Journal of the U.S. Department of State», 2002, December, Vol. 7, № 4 (http://clinton3.nara.gov/WH/EOP/NSC/Strategy); «The National Security Strategy of the United States of America». 2002, 17 September (http://www.whitehouse.gov/nsc/nssall.html); *Chairman of the Joint Chiefs of Staff, General Richard B. Myers.* The U.S. Military: A Global View of Peace and Security in the 21st Century. «An Electronic Journal of the U.S. Department of State», 2002, December, Vol. 7, № 4 (http://usinfo.state.gov/journals/itps/1202/ijpe/pj7-4myers-2.htm); «Концепция Национальной Безопасности Российской Федерации» (утверждена Указом Президента Российской Федерации от 17 декабря 1997 г. № 1300, в редакции Указа Президента Российской Федерации от 10 января 2000 г. № 24 (http://www.iss.niiit.ru/doktrins/doktr01.htm)); *Dr. Blau.* National Security Decision Making. Class 1, «From anecdotes to models». SNSEE 6940, NDU, Washington, DC, 2004; «New Challenges and New Tools for Defense Decisionmaking», «RAND», 2003:

CREATING STRATEGICALLY ORIENTED INTERAGENCY ENVIRONMENT: SENIOR DEFENSE-SECURITY SCHOOL MODEL


(VISITING SCHOLARSHIP AT EURASIA SECURITY PROGRAM, HARVARD UNIVERSITY, USA, 1 OF MARCH–1 OF MAY, 2010)

ФОРМИРОВАНИЕ СТРАТЕГИЧЕСКИ ОРИЕНТИРОВАННОЙ МЕЖВЕДОМСТВЕННОЙ СРЕДЫ: МОДЕЛЬ ВЫСШЕЙ ОБОРОННО-БЕЗОПАСНОСТНОЙ ШКОЛЫ

(НАУЧНАЯ СТАЖИРОВКА В ПРОГРАММЕ ЕВРАЗИЙСКОЙ БЕЗОПАСНОСТИ ГАРВАРДСКОГО УНИВЕРСИТЕТА, США, 1 МАРТА–1 МАЯ 2010)

ՈԱԶՄԱՎԱՐՈՐԵՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՎԱԾ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ-ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ԴՊՐՈՑԻ ՄՈԴԵԼԸ

(ԳԻՏԱԿԱՆ ՍՏԱԺԱՎՈՐՈՒՄ ՀԱՐՎԱՐԴԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ, ԱՄՆ, 2010 Թ. ՄԱՐՏԻ 1–ՄԱՅԻՍԻ 1)



OVERVIEW

HARVARD KSG EASP SCHOLARSHIP GOAL AND IMPLEMENTATION

DEVELOPING DESTINATION AND MODEL (CONCEPT AND PROSPECTS OF ARMENIA'S NDU):

- GOALS AND STRUCTURE OF NDU
- ORGANIZATIONAL PLANNING OF NDU ESTABLISHMENT
- DEVELOPING INSTITUTE FOR STRATEGIC SECURITY EDUCATION (ISSE) AS A KEY FOR TRANSFORMING INSS TO NDU, MOD, ARMENIA:
  - GOALS OF ISSE
  - STRUCTURE OF ISSE
  - CURRICULA AND FACULTY PLANNING POLICY
  - ISSE POSTGRADUATE SCHOOL'S ACTIVITIES
  - ISSE SCHOOL OF DEFENSE SECURITY POLICY PROPOSED ACTIVITIES
  - ISSE'S PROPOSED PRODUCTS
  - ISSE'S EXPECTED OUTCOMES
- NDU MODEL'S IMPLEMENTATION ROAD MAP

HARVARD EASP SCHOLARSHIP GOAL AND IMPLEMENTATION

- FURTHERING AT THE HARVARD EASP THE EXPERIENCE OF DEVELOPING ARMENIAN INSS AT THE ALMA-MATER INSS, NDU – BY DEVELOPING EASP`S SISTER-LIKE ARMENIAN ORGANIZATION
- CONSULTING FROM EASP LEADERSHIP AND RESEARCHING THE HARVARD KSG EURASIA SECURITY PROGRAM'S EXPERIENCE
  - PARTICIPATING IN HARVARD EASP "US–RUSSIA" AND "BLACK SEA SECURITY" PROGRAMS
- DEVELOPING AND REVIEWING POWERPOINT PRESENTATION ON ESTABLISHING NDU (INSTITUTE FOR STRATEGIC SECURITY EDUCATION), MOD, ARMENIA

DEVELOPING PROSPECTS OF ARMENIA'S NATIONAL DEFENSE UNIVERSITY

NDU GOALS:

- PROVIDING NATIONAL STRATEGIC STUDIES
- CRAFTING FOR ARMENIA'S SECURITY COMMUNITY INTERAGENCY PROFESSIONAL ENVIRONMENT FOR BRINGING TOGETHER SENIOR MILITARY AND GOVERNMENT OFFICIALS TO DEVELOP MUTUAL, DEEP AND BROAD UNDERSTANDING OF DEFENSE SECURITY ISSUES AT THE NATIONAL LEVEL

ORGANIZATIONAL PLANNING OF NDU ESTABLISHMENT

- DEVELOPING NDU CONCEPT, BY LAW, LEGAL AMENDMENTS AND INSTITUTIONAL DECISIONS, BUDGET PLANNING AND STAFF MANNING
- NDU STRUCTURE
